ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925 — Tél. : PRO. 86-60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. PARIS 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամս. 1600

Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք : Հատը 12 ֆր.

ՈՒՐԲԱԹ
1
ՆՈԵՄԲԵՐ
VENDREDI
1er NOVEMBRE
1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8033 — 33e ANNEE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3834

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ԷՋՄԻԱԾԻՆ ԵՒ ԱՆԹԻԼԻԱՍ

—o—

Ժամանակ մը լուռ մնալէ ետք, Ամե-նայն Հայոց Կաթողիկոսը վերջերս սկսած է կրկին հետաքրքրուիլ Անթիլիասի գործերով :

Տարակոյս չկայ, որ Ամերիկահայ Ազգային Թեմին կիլիկիոյ կաթողիկոսու-թեան միանալն է, որ առիթ տուած է այս նոր չահագրգռութեան :

Մայր Աթոռը Սահակ Աբգ·ի տարա-գրութեամբ հետեւեալ հեռագիրը ուղղած է Պոլսոյ պատրիարք Գարեգին Աբգ·ին :

« Յայտնում ենք ի գիտութիւն թէ վե-հափառ Հայրապետը Հոկտեմբերի 22ին յատուկ կարեւոր հեռագիր է յղել Ան-թիլիաս» : (Մարմարա, 24 Հոկտ·) :

Հոկտեմբեր 13ի կիրակի օրը Էջմիածնի տաճարին մէջ մեծ չուքով ծօնուած է Վազգէն Ա·ի գահա-կալութեան երկրորդ տարեդարձը : Եկե-ղեցական արարողութիւններն ու խօս-ուած քարոզները ճայնասփռուած են :

Կաթողիկոսը իր քարոզին մէջ խօսելով «եկեղեցւոյ եւ ժողովուրդի միութեան » մասին եւ ակնարկելով Անթիլիասի դէպ-քերուն, ըսած է հետեւեալը .

«Այս տարի Փետրուար - Մարտի շըր-ջանին մեր ցանկութեամբ եւ օրհնու-թեամբ Հ· Բ· Ը· Միութեան յարգարժան նախագահը փորձ մը կատարեց այդ ուղ-ղութեամբ եւ մեր օրհնութիւնը առնելէ վերջ դիմեց Անթիլիաս : Մեծարուեցաւ : Մէկ ամիս յետոյ մեր թելադրանքով եւ օրհնութեամբ Պոլսոյ պատրիարք ամե-նապատիւ Գարեգին Արք· Խաչատուրեան երկու անգամ դիմեց Անթիլիասին եւ մեր-ժուեցաւ » :

Ու աւելցուցած է թէ «առանց յուսա-հատելու» վերսկսին գրեր է Պատրիարքին Յուլիսի վերջերը, որ չարունակէ իր ճիգերը եւ նոյնիսկ որոշ, յստակ առա-ջարկ մը ներկայացուցած է՝ յարգոյու-թեամբ պահպանելու համար «Հայաստան-եայց եկեղեցւոյ միութեան, սիրոյ ոստ-ուածահաճոյ եւ ազգաշէն գործը» :

Ուրեմն Վազգէն Ա· կը յայտնէ թէ Բարեգործականի նախագահ (այժմ հրա-ժարեալ) Ալէք Մանուկեանի եւ Գարեգին պատրիարքի միջոցաւ դիմած է Ջարեհ Ա·ի՝ համաձայնութեան եզր մը գտնելու, Էջմիածինն ու Անթիլիասը հաշտեցնելու համար :

Ի՞նչ է սակայն բուն իրականութիւնը :

Կիլիկիոյ կաթողիկոսը Պէյրութի Այգին (22 Հոկտ·) րըած յայտարարութեամբ կը ճշդէ թէ՝

Ալէք Մանուկեան 1957 Փետրուար 25ին «անձնապէս եւ ոչ թէ Հ· Բ· Ը· Միու-թեան նախագահի հանգամանքով, պա-տասխանած է իր 7 Նոյեմբեր 1956ի նա-մակին, որով Ջարեհ Ա· կը յիշեցնէր Բա-րեգործականի «Նուիրական յանձնառու-թիւնները եւ Կիլիկիոյ կաթողիկոսու-թեան ի նպաստ կատարուած զանազան կատակներու հարցը» : Մանուկեան իր նա-մակին մէջ ընաւ չէ յիշած Վազգէն Ա·ի անունը եւ ո՛չ մէկ ակնարկութիւն րըած է «Վեհափառին կողմէ եղած թելադրու-թեան մը մասին » :

Ու անձնապէս իր կողմէ առաջարկած է՝ ա· միացնել Կիլիկիոյ միաբանութիւ-նը, Տաղ Աբգ·ին տալով պատասխանա-տու պաշտօն մը իր կողքին , բ) լուծել ներկայ Ազգ· կեդր· վարչութիւնը եւ ընտրել նոր Ազգ· կեդր· վարչութիւն մը՝ ապագայ ընտրութեան համար չէզոք անձերէ բաղկացեալ, եւ գ) «Վերոյիշեալ կէտերը լուծելէ եւ 1956 Յունիսին գոյացած համաձայնութիւնը Կիլիկիոյ Աթոռի հինգ եպիսկոպոսներու միջեւ » :

Ջարեհ Ա· Մարտ 21ին պատասխանած է Մանուկեանի նամակին :

Գալով Գարեգին Աբգ·ի ձեռնարկնե-րուն, Կիլիկիոյ կաթողիկոսը կը բացա-յարէ թէ 19 Ապրիլ 1957 թուակիր նամակ մը հասած է Պոլսոյ պատրիարքէն՝ ուղ-ղուած «Բարձրաշնորհ Տ· Զարեհ Ս· Ե· պիսկ· Փայասլեանի», Անթիլիաս, «լի անճչդութիւններով, վերապրումներով եւ դրդութիւններով : Ակնյայտնի եւ բացո-րոշ ո՛չ մէկ ակնարկութիւն կայ Տ· Տ· Վազգէն Ա·ի թելադրութեան մասին» :

Ակներեւ է, որ պատրիարքը չէ ուղած Ջարեհ Ա·ի «կաթողիկոս»ի հանգամանքը ճանչնալ եւ նամակը ուղղած է Ջարեհ եպիսկոպոսին : Եւ որովհետեւ այս տիտ-ղոսով մէկը չկար Անթիլիասի մէջ , Գա-րեգին Աբգ·ի նամակն ալ բնականաբար առանց պատասխանի մնացած է :

Սակայն «անուղղակի ապրիլեան մը » Ջարեհ Ա·ի հասցէին ուղղած են Գարեգին պատրիարքին առաջարկութիւնները, ո-րոնք են՝

Ա) Ընտրութիւնը կը ճանչնանք օրինա-ւոր, բայց օծումը՝ ոչ :

Բ) Օրինականացնելու համար օծումն ալ, 1· Ջարեհ «ընտրեալ կաթողիկոս»ը պատշաճ ձեւով մը պէտք է դիմէ Ամե-նայն Հայոց կաթողիկոսին եւ խնդրէ ա-նոր հայրապետական օրհնութիւնը , վա-փաք ալ յայտնելով ուխտի երթալու Ս· Էջմիածին եւ անձամբ յայտնելու իր որ-դիական սէրն ու հաւատարմութիւնը Հանդէպ Մայր Աթոռին եւ անոր Գահա-կալին :

2· Ամենայն Հայոց կաթողիկոսը, իր օրհնութեան հետ անոր կը նուիրէ հայ-րապետական քօղ մը եւ կանքեռ մը, դու-ցէ նաեւ Ս· Գր· Լուսաւորչի չքանչանը, որոնք կը յանձնուին Ս· Էջմիածնի մէջ, եւ եթէ այս կարելի չըլլայ, երուսաղէմի մէջ, ուր հաւանաբար այցելէ նաեւ Վե-հը, կամ անոր կողմէ ուրիշ մէկը :

Երբորդ եւ չորրորդ պայմանները կը վերաբերին Վարչական ժողովին մէջ « հակառակորդ կողմի մարդոցմէ քանի մը հոգիներ» առնելուն, Միաբանութեան հեռացած անդամներու վերադարձին եւ Խաղ սրբազանին «Նախանդամ Միաբա-նութեան » տիտղոսը տրուելուն :

Կը տեսնուի որ Գահիրէի ծանօթ «ե-պիսկոպոսական ժողովին» մասնակցու-նը կը չարունակուի դեռ մեր բարձրաս-տիճան եկեղեցականներու մասնակցութեան մէջ :

Միակ յառաջդիմութիւնն այն է , որ մինչ Գահիրէի մէջ ընտրութիւնը « թերի եւ անբնդունելի» կը դանէին, հիմա ընտ-րութեան օրինաւորութիւնը կը ճանչ-ցան, բայց օծումը օրինաւոր չեն նկա-տեր :

Մոռնա՞նք որ ժամանակի ընթացքին ընդունին նաեւ օծումին ալ օրինաւորու-թիւնը՝ առանց նոր եւ աւելորդ արարո-ղութեանց եւ փակեն այս ալ վէճերը « ի փառս Աստուծոյ եւ Հայաստանեայց առաքելական Ս· Եկեղեցւոյ »:

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՅՏԱԳՆԱՊԻՆ ՎԵՑԵՐՈՐԴ ՄԱՐԴԸ ԿԱՅԵԱՒ

—o—

«ՏԸ ԿՈՒԼԸ ՄԻ ՄՈՌՆԱՔ» Կ'ԸՍԵՆ ԿՈՒԼԵԱՆՆԵՐԸ

Ամիսը լրացաւ եւ Ֆրանսան կառավա-րութիւն չունի : Զորեքշաբթի իրիկուն յայտնի եղաւ թէ արմատական Կայեաւ ընդունած է Նախագահին առաջարկը եւ պիտի փորձէ նոր դահլիճով մը ներկա-յանալ Ազգ· ժողովին, մինչեւ երեքշաբ-թի՝ իր տարեդարձին օրը :

Կայեաւ յայտարարած է, թէ եթէ Ան-կախները եւ Ընկերվարականները չմաս-նակցին, ինք ալ կը հրաժարի : Նպատակն է Ազէն Զախ (ընկերվարական) մեծա-մասնութիւն մը ապահովել եւ կազմել 12 հոգինոց կառավարութիւն մը :

Անկախները կ'ըսեն թէ «նպաստաւոր նախապայմաններ» մը ունին : Առանց դը-խաւոր մտահոգութիւնն է ընկերային հարցերը, եւ ամուր պիտի կենան իրենց դիրքին վրայ, եթէ նորէն առաջարկուի ընկերվարական կազմիչ, իրրեւ նախա-պար ընկերային հարցերու :

Անդին համախոհականները նոր նամակով մը, զոր զրած են Թորէզ եւ Տիւբլօ, կոչ կ'ընեն Ընկերվարականներուն ձախ գահ-լիճ մը կազմելու համար :

Առանց վճռաւոր մտահոգութիւնն է՝ Ալժերիան, որուն լուծումը թոյլ պիտի տայ լուծել նաեւ տնտեսական եւ ելմը-տական տաղնապը, համաձայն իրենց տե-սակէտին :

Մինչ Կայեաւ կը չարունակէ իր խոր-հրդակցութիւնները կուսակցական իրա-րակցութեանց հետ : Ընկերային Հանրա-պետականները կ'առաջարկեն որ Տը Կոլը կանչուի կազմելու համար Հանրային Փր-կութեան կառավարութիւն մը :

Կառավարական տաղնապը պէտք չէ մոռնալ տայ նաեւ թէ Ֆրանսայի յարա-բերութիւնները Հիւսիսային Ափրիկէի հետ միշտ լարուած են : Ինչպէս ծանօթ է, անցեալները սպաննուեցաւ Ալժերիա-

---

գի աշխատաւորներու սենատքայի նախա-գահ՝ Ահմէտ Պելհաճ :

Այս դէպքին վարչապետին Սենատքան որուն ձգտումները դէպի էմ – էն – Ա· են (Ալժերիական Ազգային Շարժում – Մե-սալի Համ) կ'որոշէ կրկին յարաբերու-թիւններ տեղծել Ֆրանսական սենատքա-ներուն հետ :

Նոյն ժամանակ վերջ գտան Թունուզի մէջ Ազգ· Ազատագրական Ճակատի աչ-խատանքները : Փակման առթիւ հրատա-րակուած գեկոյցին մէջ չարժման պարա-գլուխները անգամ մը եւս կը յիշեն թէ որեւէ բանակցութիւն կատարելու համար Ֆրանսայի հետ, նախապայման է՝ ճանչ-նալ Ալժերիոյ անկախութիւնը :

Յունուար մէկէն ի վեր Ֆրանսայի մէջ ապստամբներու ձեռքով սպաննուած են 550 Ալժերիացիներ եւ աւելի քան 2200 հոգի վիրաւորուած, քաղաքական նկա-տումներով :

ՄԱԿԻՆ եղած առաջարկը չ'ար գոհացներ կարծես ունի Մոսկուայի անցուդարձերուն հետ : Սուրիա կ'առաջարկէ , որ կազմը – ւելիք յանձնախումբին երկու անդամները ինք որոշէ, երկուքը՝ Անգարա, ու երե-քըն ալ՝ երկու երկիրներու համաձայ-նութեամբ : Դամասկոսի ներկայացուցի-չը կը պնդէ նոյնիսկ, որ անմիջապէս կազմուի այս յանձնախումբը :

Ճափոնի դեսպանը, իր կարգին առա-ջարկեց , որ փոխանակ յանձնախումբ մը կազմելու, քննիչի պաշտօնը վստահուի ՄԱԿի քարտուղար՝ Համմըրշոլտի : Այս տեսակէտին թիկունք կանգնեցան նաեւ Նորվեկիա, Քանատա, Սպանիա, Փերու, Փարակուէյ եւ Դանիա : Միացեալ Նա-հանգներն ալ նոյն կարծիքը ունին :

Հաւանական է որ երրորդ լուծում մըն ալ առաջարկուի :

Ինչ որ ուշադրութիւն գրաւեց ՄԱԿի մէջ, սուրիական առաջարկն էր՝ հարցը լուծել երկու երկիրներուն միջեւ : Հետե-ւաբար՝ եթէ կ'առնէ իր բողոքը, ընդդէմ Թուրքիոյ :

Պարզ՝ կը տեսնուի, թէ Սուրիա կը դանուի Խ· Միութեան հսկողութեան ներքեւ : Հրատարակուեցաւ նաեւ Դա-մասկոս – Մոսկուա համաձայնագրին պատճէնը· Խ· Միութեան Սուրիոյ կը բերէ մասնագիտական իր օժանդակու-թիւնը, կարգ մը մարզերու մէջ, ինչպէս՝ ծրագիր մը, օգտագործելու համար եփ-րատի ջուրը, ամբարտակ մը եւ էլեկտրա-կան կեդրոն մը Եփրատի վրայ, էլեկ-տրակեդրոն մը Եարմուք գետին վրայ, ուրիշ մը՝ Հոմսի լճակին վրայ ,եւն· :

Մինչ այս մինչ այն, երեսփոխանական ընտրութեանց վազորդայնին եւ Այնթա-պի դէպքերէն ետք, անկարգութիւնները կը չարունակուին Թուրքիոյ մէջ : Բանա-կը զործի լծուած է եւ իր հսկողութեան տակ առած երկիրը , յատկապէս՝ Այն-թապի շրջանը, որ սուրիական սահմանին մօտ է : Ամերիկացի սպաներ եւ զինուոր-ներ ալ կը գտնուին այդ շրջանին մէջ :

Պոլսոյ եւ Անգարայի փողոցներուն մէջ զինուորները խիստ հսկողութիւն կը կա-տարեն :

Հալբի կուսակցապետը՝ Իսմէթ Ինէօ-նիւ նամակներ ղրկած է Վարչապետ Մեն-տերէսի, դգուշացնելով զայն : Հալբեան – ները կը գատապարտեն Դեմոկրատները, որ ապօրէն կերպով աթոռներ չհած են :

Ցարդ, ընտրութեանց վերջնական ար-դիւնքը չէ հրատարակուած : Կառավա-րութիւնը կը խուսափի :

Կառավարութիւնը ժողով մը գումա-

(Շարունակութիւնը կարդալ .Դ· էջ)

ԹՈՒՐՔԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՀԱՑ ԵՐԵՍՓՈԽԱՆՆԵՐԸ

Թուրքիոյ ընտրութեանց դեմոկրատ կուսակցութեան երկու հայ թեկնածու-ները· — Տօքթ· Զաքար Դարվեր եւ Մկր-տիչ Շէլլէֆեան , երեսփոխան ընտրուե-ցան Պոլսոյ ցանկէն :

Վերջին արդիւնքը հետեւեալն է·— Դեմոկրատ՝ 424, Հալբ (Ինէօնիւ) 178, Հիւրիէթ՝ չորս, Միլլէթ չորս :

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Ամենայն Սրբոց տօնին առթիւ ՅԱՌԱՋ վաղը լոյս չի տեսներ :

Մեր յաջորդ թիւը՝ կիրակի, նուիր-ուածէ Հ· Յ· ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ :

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ ԿԸ ՏՕՆՈՒԻ ԱՅՍ ԿՐԻԱԿԻ ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

(Տես Դ· էջ)

ՄՈՍԿՈՒԱ Ի՛ՆՉՊԷՍ ԿԸ ԳՈՐԾԷ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ

Ո՞ւր պիտի յանգի Մ. Միութեան վերջին յարձակողականը Միջին Արեւելքի մէջ։

Այս հարցումը կը չարունակէ լրջօրէն պրպտեցնել քաղաքական աշխարհը, որ անձկութեամբ կը հետեւի Մոսկուայի քայլերուն։

Ինչպէս կը դրէինք մեր նախորդ յօդուածով (24 Հոկտեմբեր), Մ. Միութիւնը եկուր մըն է արաբական աշխարհին մէջ, եւ այս իսկ պատճառով չունի տակաւին ծրագրեալ եւ ճշդուած քաղաքականութիւն, պատմական, աշխարհագրական եւ մանաւանդ տնտեսական հիմերու վրայ հաստատուած։

Այսինքն, Ռուսիա քաղաքականութեան մը կը ձեռնարկէ ըստ կացութեան յեղաշրջումին։ Ան դիրք կը ճշդէ, կամ նոր քաղաքականութիւն մը կ'որդեգրէ, ըստ դէպքերու ընծայած առիթին, անշուշտ առաւելագոյն օգտուելով այդ դէպքերէն։

Մէկ խօսքով, Մ. Միութեան քաղաքական գործելակերպը վերջին տասը տարիներու ընթացքին եղած է շարժուն բաղաքականութիւն, որ ձեւ եւ մարմին կը փոխէ, օրուան պահանջներուն համաձայն։

Այսպէս, յիշենք միայն օրինակ մը։ 1948 Մայիս 15ին, երբ Պաղեստինի հարցը օրակարգի վրայ էր ՄԱԿի մէջ, Ռուսիա, ի զարմանս բոլորին, դիրք կը բռնէր արաբական աշխարհին դէմ, ու մեծապէս կը նպաստէր Իսրայէլի ստեղծման՝ քուէարկելով Պաղեստինի բաժանումը։

Հակառակ անոր, որ տակաւին երկու տարի առաջ, 1946 Ապրիլին, նոյն Ռուսիան, ջերմ պաշտպան կը հանդիսանար արաբական դատին ու մեծ ազմուկով կը պահանջէր Ֆրանսական եւ անգլիական զօրքերուն հեռացումը՝ Սուրիայէն ու Լիբանանէն։

Այս ուղղութեամբ, անոր քարոզչական մեքենան անդադար կը բանէր, անխնայ յարձակելով անգլեֆրանսական ծաւալապաշտութեան դէմ։ Ա.եւելն։

Մոսկուայի ձայնասփիւռը, անդադար, զգաստութեան կը հրաւիրէր արաբական աշխարհը, որպէսզի ան միահամուռ ցրուի Անգլիոյ եւ Մ. Նահանգներու դէմ, որոնք ձեռնարկած են հրէական պետութեան մը ստեղծման՝ Պաղեստինի մէջ։

Ինչպէս կը պարզուի, Մ. Միութեան արաբական քաղաքականութիւնը եղած է ու կը մնայ պատեհապաշտ՝ միշտ ենթակայ փոփոխման, համաձայն դէպքերու ընծայած պատեհութիւններուն։

Ան, մեծ ճկունութեամբ չհապաղած է Արեւմուտքի դժուարութիւնները, եւ ատիթ չէ փախցուցած արաբ ազգայնականութիւնը աւելի եւս զրգռելու նախկին պաղեստինեան դէմ։

Եւ ամէն անգամ, որ Արեւմուտքը վէճի մէջ է եղած արաբական երկրի մը հետ, ան, միշտ նեցուկ կանգնած է եւ կորովի պաշտպան հանդիսացած է այդ երկրին, եւ քաջալերած անոր ընդդիմութիւնը։

Որով, այն միակ հիմնական քաղաքականութիւնը, որուն հաւատարիմ կեր պով հետեւած է Մոսկուա, կարելի է ամփոփել հետեւեալ կէտին մէջ։

Աշխատիլ ամէն գնով եւ ամէն միջոցներով չէզոքացնել արեւմտեան ազդեցութիւնը Միջին Արեւելքի մէջ, եւ մեծ ակէս խախտել անոր տնտեսական դիրքերը։

Պէտք է ընդունիլ, որ Մ. Միութիւնը, յաջողութեամբ գլուխ հանելու համար իր այս քաղաքականութիւնը, կը պտնուի բացառիկ եւ առանձնաշնորհեալ դիրքի մը մէջ։

Որովհետեւ, Մ. Միութիւնը չունենալով տնտեսական եւ քարիւղի հիմնական քաղաքականութիւն Միջին Արեւելքի մէջ, պերճ է այդ քաղաքականութեան պարտադրած զանազան սեղմումներէն, զէթ՝ տնտեսական եւ բարոյական մարզին վրայ։

Որով, անոր զործելու եղանակը ազատ է, եւ կաշկանդուած չէ կարգ մը տեսակէտ կարեւոր դիրքերու պաշտպանութեան հոգերով։

Ան, ունի նաեւ իր հետ, հզօր դաշնակից մը, որ հաւատարիմ կը մնայ իրեն, զէթ՝ ներկայիս։

Այդ հզօր դաշնակիցը արաբ ազգայնականութիւնն է, որ այժմ ցցուած է Արեւմուտքի դէմ։ Նոր անկախութեան նոր տիրացած արաբական երկիրները, ոչ միայն կ'ուզեն ընդմիշտ թօթափել հոգատարութեան լուծը յիշեցնող ամէն կապ, այլեւ կը մերժեն մաս կազմել հաւաքական պաշտպանութեան չրջանային որեւէ ուխտի, որ կաշկանդէ իրենց գերիշխանութիւնը։

Մնաց, որ արեւմտեան աշխարհի հակընդդէմ եւ աննեղդաշնակ քաղաքականութիւնը, առհասարակ խուլ եւ սուր մրրկայարկութիւնը տնտեսական արդարարեր օտիներու տիրապետման համար, աւելի եւս կը զիւրացնեն Մոսկուայի դաւադիր աշխատանքները։

Չենք խօսիր այլ վէրքի մը մասին, որ անդուժելի զարճած է Իսրայէլի ծնունդով։ Արար աշխարհը, միշտ դատապարտած է Արեւմուտքը իբրեւ գլխաւոր պատասխանատուն Իսրայէլի ստեղծման։

Կարելի է տակաւին երկարել չարքը այլ յաւերու եւ հասնիլ Սուէզի արշաւանքին տխուր եւ աննպաստ հետեւանքներուն։

Այս բոլոր դժուարութիւնները, անշուշտ, արեւմուտքը դրած են աննպաստ դիրքի մը մէջ, բաղդատած Մ. Միութեան։

Եւ պէտք չէ զարմանալ եթէ լսենք, որ Մոսկուա մեծապէս օգտուելով այս կացութենէն, ընդգրկած է այնպիսի ուղղութիւն մը զազափարական դեռնի վրայ, որ բոլորովին հակապատկերն է եւրոպական իր քաղաքականութեան։

Ան, որոշ առենի մը համար, անշարժութեան դատապարտած է արար համայնական տարրերու գործունէութիւնը։

Սխալած չենք ըլլար, եթէ հաստատենք, որ Մոսկուա վերջին երկու տարիներու ընթացքին դրեթէ չէ քաջալերած համայնավարական, որեւէ ձեռնարկ։

Մէկ խօսքով, ան տեղ տեղ, եթէ ոչ ամենաճած, այլ՝ գոնէ չափաւորած է կարմիր տարրերու աշխուժութիւնը։

Թող տարօրինակ չթուի մեզ այս հաստատումը։

Ցենած չատ մը վաւերական տուեալներու վրայ, կրնանք պնդել թէ Մոսկուա կամովին հրաժարած է ուժ տալէ արար համայնավարներու խլրդային աշխատանքներուն, եւ զոհացած պանոնք պահելով թմբիրի մէջ։

Եւ այս՝ ոչ անոր համար, որ Ռուսիա մէկդի դրած է պատարագական թափանցումը, այլ պարզապէս այն պատճառով, որ ան նկատած է համայնավարական որեւէ ցցուն գործունէութիւն, առ այժմ անպատեհ եւ վնասակար իր արաբական քաղաքականութեան։

Վերջապէս, Ս. Միութիւնը կը ցգճի ներկայանալ արաբական աշխարհին, որպէս բոլորովին անշահախնդիր պետութիւն, որ ոչ միայն տնտեսական եւ բաղաքական նուաճումներ չի հետապնդեր, այլեւ չի ձեռնարկեր գաղափարական մխրճումներու։ Այլ խօսքով՝

Մոսկուա կը ձգտի իր այս ընթացքով, առաջին իսկ վայրկեանէն հերքել ամէն վերապրում, որ կասկածի ենթարկէ իր արաբասէր քաղաքականութեան անկեղծութիւնը։

Վերջապէս, Մ. Միութիւնը կ'ուզէ տեղ գտնել աւելի շատ սրտերու մէջ, քան թէ մտքերու։

Այս ուղղութեամբ կ'արժէ յիշել Միջին Արեւելքի արաբ համայնավարներու յայտնի պարագլուխ Խալէտ Պէքթաշի մէկ ճառը, արտասանուած Հոմսի մէջ, մաս նակի ընտրութիւններու առթիւ.—

«Արաբ համայնավար կուսակցութիւն գոյութիւն չունի։ Այլ կայ միայն սուրիական կուսակցութիւն մը, որ ամէն բանէ առաջ, Արաբ է եւ կը ձգտի մէկ ընդհպատակի։ Անկախութիւն։ Չկայ կատարեալ անկախութիւն, որեան ատեն, որ ձեռբազատուած չենք Արեւմուտքի տրուեստեսական կապերէն, որոնք կը կաշկանդեն մեր գերիշխանութիւնը։ Միութեան մէջ է միակ ուժը, եւ մենք կը ձուլուինք այդ միութեան մէջ»։

Այս խօսքերը չատոնց մարած են ականջներու մէջ, ընտրական պայքարի ժխորէն վերջ։

Թերեւս, չատերու ուշադրութիւնէն վրիպեցան։ Ուշադրութեան պիտի չառնենք նաեւ մենք, եթէ արտասանուած չըլլային պատասխանատու առաջնորդի մը կողմէ։

Բայց կարմիր առաջնորդին այս խիստ նշանակալից արտայայտութիւնը այնքան հարազատօրէն կը բնորոշէ Մոսկուայի ներկայ արաբական քաղաքականութիւնը, որ արժանի կը դտնեմ արձանագրել այստեղ։

Ցատակ է այլեւս, որ Մ. Միութիւնը կ'ուզէ իր հետ ունենալ արար ազգայնականութիւնը, երբ ան ցցուած է Արեւմուտքի դէմ։

Պիտի յաջողի՞։

Այս հարցումին պատասխանելու համար, կ'արժէ անդրադառնալ Մ. Միութեան տնտեսական քաղաքականութեան, արաբական երկիրներէն ներս։

Ինչպէս ըսինք քիչ առաջ, Մ. Միութեան տնտեսական քաղաքականութիւնը չունի տեւական եւ ծրագրեալ հանդամանք եւ կը մնայ առժամեայ։

Առժամեայ, որովհետեւ, Մ. Միութենէն հետամուտ չէ տնտեսական չահաւէտ պերքերու գրաւման։ Ան, մեծ ճկունութեամբ, վարած է տնտեսական բանակցութիւններ, պերճ քաղաքական պայմաններէ։ Այսպէս, եգիպտոսի յանձնառած մեծաքանակ զէնքերը պիտի վճարուին եգիպտական բամպակով։ Սուրիոյ յանձնուած զէնքերը եւ պատերազմական պիտոյքները զարձեալ պիտի վճարուին սուրիական բամպակով եւ ցորենով։

Նոյնպէս, այն տնտեսական օժանդակութիւնը, որ Մոսկուա ընծայած է Սուրիոյ, Օգոստոս հինգի համաձայնութեամբ, կատարուած է այնպիսի նպաստաւոր պայմաններով, զորս Արեւմուտք տակաւին չէր առաջարկած որեւէ երկրի։ Որով, այն բարոյական վարկը, որ Մոսկուա կուա կը չահէր արար ժողովրդական լայն զանգուածներու մօտ, զէնքերու առաքումով աւելի եւս կը զօրանար տնտեսական գործակցութեամբ, հրապուրելով առեւտրական դասը։ Արդիւնք մը, որուն համեմատաբար կուսակցութիւնը չէր կրնար հասնիլ ի դին վիթխարի, երկարատեւ եւ բազմածախս քարոզչութեամբ։ Արդիւնք մը, զոր Արեւմուտքը չէ յաջողած ձեռք ձգել երեք տասնեակ տարիներէ ի վեր։

Ինչո՞ւ։

Որովհետեւ Մոսկուա յաջողապէս իրագործած է քաղաքականութիւն մը, որ չատ համապատասխան է Արեւելքցի Արաբի նկարագրին եւ մտայնութեան։

Այսինքն, չատ խոստանալ, վճարել չատ եւ արագ։

Կասկածամիտ եւ խորամանկ Արեւելքցին միշտ այս լեզուէն հասկցած է։ Դժբախտաբար, Արեւմուտքը չատ դանդաղ չարժած է այս մարզին մէջ։ Ան չատ թանկագին օրեր եւ ամիսներ կորսնցուցած է իր խոստումներուն եւ ձեռնարկներուն իրագործման մէջ։ Այսպէս էր 1914էն առաջ եւ վերջ, երբ Գերմանիա յանկարծ կուգար ու կը հաստատուէր Օսմանեան կայսրութեան մէջ, Պոլսէն մինչեւ Պաղտատ։

Բայց թէ ու թափ առած ասիական ազգայնութեան սահմանները կանդ պիտի առնե՞ն Սուրիոյ սահմաններու վրայ։

Ռուսիա վահանուա՞ծ է այդ ազգայնականութեան դէմ, երբ իր սահմաններէն ներս, իրենց ազատագրման կը սպասեն միլիոնաւոր ժողովուրդներ։

ՆՇԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Սակայն անոնք, այս հոգեւորականները, հետեւողական կերպով աշխատանք տարին Բերիոյ Թեմին Գաւառական ժողովը լուծել տալու համար, ինչպէս ցոյց կուտայ մաս մը Խազ Աղբ-ի 1956ի օգոստոսի նիստերէն, որոնք մնացած էին աշխատասենեակի գրասեղանին վրայ։ Ա.հասիկ նմոյշներ այդ օգտագրութիւններէն, հարազատ ընդօրինակութեամբ բնագիրներու։

«11 Յունուար 1956

Այսօր կէսօրին մեզի եկաւ Շաւարշ Սրբազանը. առած տեղեկութեան համաձայն գործը ի նպաստ ՄԵԶԻ (ընդդիմութիւն) կ'ընթանայ։ Հետապնդումները կը չարունակուին»։

23 Յունուար 1956

Հալէպի մէջ բաղմահայեր խաղաղ ցոյց մը կազմակերպած են եւ հսկայ թափօրով գացած Մուհաֆըզին դուռը եւ պահանջած են Գաւառական Ժողովի նոր ընտրութիւն բողոքելով հին Գաւառական Ժողովի ապօրէն ըլլալուն»։

25 Յունուար 1956

Կէսօրէ յետոյ Դերենիկ Սրբազանը քաղաք գնաց քանի մը ազգայիններուն հետ տեսնուելու համար– յաջողութիւն իրեն։

Խորէն Սրբազան երբեք չարաչայ– տուիր Հալէպի ժողովրդական հսկայ ցոյցին մասին»։

26 Յունուար 1956

Զարեհ Սրբազան կրկին եկաւ Դամասկոսէն. չարունակ հոս ու հոն կը թափառի փախուստ տալով Հալէպէն. կիրակի օրուան ժողովրդական ցոյցը սարսափ պղտած է իր վրան ինքն ալ չի պիտեր թէ ինչ պիտի ըլլայ իր վիճակը ներկայ կացութեան առջեւ։ Ընողը կը դտնէ»։

30 Յունուար 1956

Իրիկուան մօտ Տեմիրճեանը եկաւ անցուդարձերու մասին տեղեկութիւններ տալու. երկար խօսեցանք ձեռք առնուելիք միջոցներու մասին. առ այժմ գործը լաւ կ'ընթանայ. աշխատանքը լուրջ մարդոց յանձնուած է»։

1 Փետրուար 1956

Շահէ վարդապետը, Հալէպէն երեւան գալէ անցնելէ յետոյ այս առաւօտ եկաւ վանք, մեզի յանձնեց Գիր մը, պատճէնը Գալոյ Սրբազան Պատրիարքին ղրկուած, կաթողիկոսական ընտրութեան մասին իր հեղինակաւոր կարծիքը առնելու համար»։

2 Փետրուար 1956

Հեռագիր երեւան գալէ հրաւիրեցինք ե– ղիշէ եւ Տիրան Սրբազանները խորհրդակցութեան»։

3 Փետրուար 1956

Հեռագիր Եպիսկոպոս Մամբրէ Սրբազանին որպէս զի հաճի քանի մը օրուան համար գալ Պէյրութ ստեղծուած տագնապալի կացութեան չուրջ խորհրդակցութեան համար»։

5 Փետրուար 1956

Առնուած տեղեկութեան համաձայն Սուրիոյ վարչապետ Սայիտ Ղազի հաստատած է Հալէպի Գաւառական Ժողովի օրինաւորութիւնը»։

13 Փետրուար 1956

Դիշերը 12 եպիսկոպոսներու ներկայութեան վէճը իր ծրագիրներու մասին լայն տեղեկութիւններ հաղորդելէ յետոյ կաթ. Ընտրութեան մասին Սրբազաններու կարծիքը առնելէ յետոյ որոշուեցաւ ընտրութիւնը յետաձգել մէկ շաբաթ (ընդդիմութեամբ մեզմէ. ՀԱՍԿ)։

14 Փետրուար 1956

Կաթողիկոսական Ընտրութեան պատրաստութեան ժողովի անդամները կէս օրէ առաջ եկան Կաթողիկոսարան։ Վէհափառ Վազգէն Հայրապետը իր հայրական խօսքը ըսելէ յետոյ սիրոյ եւ միութեան մասին իրենց հաղորդեց ընտրութեան մէկ չաբաթ յետաձգման մասին եպիսկոպոսներու յայտնած փափաքը այն օրուան հաւաքոյթին առանց դիւանի կազմութեան վերջ տալ. սակայն օրէնքով յետաձգման իրաւունքը մերն է ըսելով հակառակ վէհափառի կամքին (ընդդիմութեամբ մեզմէ ՀԱՍԿ) դիւանի կազմութենէն յետոյ իրենք որոշեցին ընտրութիւնը ութ օր յետաձգել»։

Տուինք, կարեւոր մասերը Խազ Աղբ– եպիսկոպոսի օրագրութենէն, մէկ կողմ թողլով օգերեւութաբանական ճըշ– դումները, բացարձակ անձնական տպաւորութիւններն ու խորհրդածութիւնները, ցոյց տալու համար թէ Ազգային Սահմանադրութեան եւ կազմակերպեալ Առաջնորդարանի մը փլուզումին համար աշխատող ընդդիմադիր կամապաշտները կը քաջալերուէին նաեւ բարձր հոգեւոր– բականութեան կողմէ, փոխանակ սաստիկ ենթարկուելու, արգիլուելու։

9 Հոկտեմբեր 1955էն մինչեւ Փետր. 1956, չորս ամիսներու աննպաստ աշխատանքին որպէս հետեւանք, առաջնորդարանէն ներս տիրող տագնապներէն, որոնք կը ձգտէին կաթողիկոսական ընտրութիւնն արգիլել, մասնաւորաբար Հալէպի Թեմը քայքայել եւ արտասահմանի մէջ բաւ մը ստեղծել։ Սուրիական կառավարութիւնը խորհրդանութեան, հարցապնդումներու եւ իրեն ներկայացուած փաստաթուղթերու դիմաց, առաւ հետեւեալ որոշումը, որ միանգամընդմիշտ պէտք էր լռեցնէր «ԿԱՄԲ» պարարտացել ուզող բոլոր դերասանները այս ազգային – եկեղեցական ողբերգութեան։

Խմբագրական ՀԱՍԿի

(6 Շար.)

ԿՅՈՒՆՔ

Գլ.

ԱՀՈՒԱՆ

Ուսուցչուհին ոչինչ չպատասխանեց : Միայն ձեռքը մեկնեց աղջկան, որ ուրախությունից ոտքի թռավ, ու երկուսով դուրս եկան : Ուսուցչուհին նստեց աթոռին, ու մտքերը նորից հավաքելով՝ սկսեց կարդալ :

Ամբողջ կեսօրին ուսուցչուհին չկարողացավ ոչ մի գործով զբաղվել : Ամեն րոպե նրա աչքերի առաջ կանգնում էր Ահուանի գեղեցիկ դեմքը, ու նրա ականջներում հնչում էր նրա քաղցր ձայնը : Ուսուցչուհին ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, թե ինչպես կարող է մի այդպիսի գեղեցիկ աղջիկ ծնվել այդ կեղտոտ ու գարշելի խրճիթներից մեկում : Նա չէր կարողանում հավատալ, որ Ահուանը իսկապես այդ խրճիթներից մեկի աղջիկն է : Նա ուզում էր ինքը գնալ Ահուանի տունը, տեսնել նրա մորը, հայրը, ու ամեն ինչ իմանալ : Բայց ուսուցչուհին գիտեր, որ այդ անելը հեշտ բան չէ, որովհետև Ահուանի հայրը, որ հարուստ մարդ է, ոչ մի կերպ չի համաձայնի, որ ուսուցչուհին գնա իրենց տունը : Ուսուցչուհին գիտեր, որ Ահուանի հայրը ատում է ամեն տեսակ ուսուցիչների, ու ամեն անգամ, երբ նրանցից մեկը գնում է իրենց տունը, նա վռնդում է նրան : Ուսուցչուհին գիտեր նաև, որ Ահուանի հայրը ատում է նաև ամեն տեսակ գրքեր, ու ամեն անգամ, երբ Ահուանը գրքեր է տանում տուն, նրա հայրը պատռում է գրքերը, ու Ահուանը ստիպված է լինում նորից գրքեր գնել

րեց, Դեմոկրատ Վարչապետ Մենտերէսի գլխաւորութեամբ, որմէ ետք Անգարայի ձայնասփիւռէն հաղորդուեցաւ իր աղ – ղարարութիւնը՝ ընդդիմադիրներուն ուղ – ղուած .— խռովարարական ամէն շար – ժում խստօրէն պիտի զսպուի ։

Այսուհանդերձ, դիւանագէտներուն կարծիքը այն է, որ Միջին Արեւելք խա – ղաղութեան ճամբուն վրայ կը գտնուի Մոսկուայի տեսակէտն ալ նոյնն է ։ Բայց, Լիբանանի Արտաքին Նախարար Մալիք, որ իր երկիրը կը ներկայացնէ ՄԱԿի մէջ, յայտարարեց, թէ Միջին Արեւելքը չէ խաղաղած եւ մօտ ատենէն միջազգային կարեւոր անցուդարձեր պիտի ըլլան ։

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՔՐԻՍԹԻԱՆ ՏԻՈՐԻ յուղարկաւորու – թեան ներկայ եղած են աւելի քան հինգ հազար հոգի ։ Մարմինը փոխադրուած է Վարի նահանգը ամփոփուելու համար ընտանեկան դամբարանը ։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ վարչապետը յայտա – րարեց թէ եօթանասուն հոգի ձերբակալ – ուած է հակակառավարական գործու – նէութեան վրայ ։ Անոնք Մուսատեղի կու – սակիցներն են եւ յարաբերութիւն ունին օտարներու հետ ։

ԵԳԻՊՏՈՍԻ մէջ յայտարարուեցաւ թէ Նոյեմբեր հինգէն սկսեալ Սուէզի ընկե – րութեան պաշտօնական լեզուն պիտի ըլ – լայ արաբերէնը ։

Խ. ՄԻՈՒԹԵԱՆ Արտաքին նախարարը կ'ըմպէ, որ Նիւ Եորքէն նաւով պիտի վերադառնայ իր երկիրը, տոմսը փոխե – լով օդանաւի մէջ տեղ մը ապահոված է ։

ԳԱՀԻՐԷԻ ձայնասփիւռը յայտարարեց թէ պատերազմը կը շարունակուի Օմանի մէջ եւ բրիտանական օդանաւերը կը ռմ – բակոծեն տակաւին ։

ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԷ ԱՄՍԱԳԻՐԸ

ՀԱՅ - ԲՈՅԺ

ԺՈՂ. ԱՄՍԱԹԵՐԹ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

խմբագիր՝ Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

Սեպտեմբեր – Հոկտեմբերի թիւը, 48 էջ ճոխ բովանդակութեամբ. —

Երջանկաբեր դեղերու մասին (Տոքթ. Շ. Այվազեան). — Երկու ուղեղ ունինք (Տոքթ. Լաննուա). — Նկարագիր չինել (Տոքթ. Արշակ Պօղոսեան). — Գոտի կա – պել (Շ. Նարդունի). — Հայաստան (Ն. Բարանսկի). — Բջջային դարմանում (Տոքթ. Լեւոն Գրիգորեան). — Դիպաղն – նութիւնը հին Հայաստանում (Ե. Մա – կարեան). — Ի՞նչ է հանճարը (Է. Վեռ – հառն). — Բորոտութիւն (Տոքթ. Գ. Սե – րոբեան). — Մաղոտ կիներու եւ աղջիկ – ներու մասին (Տոքթ. Ժաքմար). — Պնդե – րակութեան մասին (Տոքթ. Ա. Աչճեան). — Խաղող կերէք (Տոքթ. Յովհ. Մանուկ – եան). — Քանսէրը փոխանցի՞կ է թէ ժա – ռանգական (Տոքթ. Գ. Գալուստեան). — Ֆրանկախտը (Տոքթ. Պ. Միսաքեան). — Ծերութիւնը իբրեւ հիւանդութիւն (Տոքթ. Նաւասարդ). — Ծնեբեկ (Ց. Իշխանեան) ։

Բաժանորդագրութեան պայմանները. — Տարեկան 1000 Փր. Ֆրանսա, 1200 Փր. արտասահման ։ Դիմել Շ. Նարդունիի, «Յառաջ»ի հասցէով ։

ՊԱՏԱՐԱԳ ՁԱՅՆԱՍՓԻՒՌՈՎ

Այս կիրակի հանդիսաւոր Ս. Պատարագ պիտի մատուցուի Առնուվիլի Ս. Գրիգոր եկեղեցին եւ պիտի ձայնասփռուի Փարի Ինթէրէն, ժամը 8.45ին ։ Երգեցողութիւ – նը կը կատարէ տեղւոյն երգչախումբը ղեկավարութեամբ Պ. Վահրամ Տէվէ – ճեանի ։

ԱՅՑ ԴԷՊԻ ՓԷՐ ԼԱՇԷԶ

ՓԱՐԻԶ.— Հ. Յ. Դ. Նոր Սերունդի «Ահարոնեան» խումբը կ'այցելէ այս կի – րակի կէսօրէ վերջ ժամը 15.15ին, ըն – կերներ Ռուբէնի, Խատիսեանի, Շ. Մի – սաքեանի, Ա. Ահարոնեանի եւ Անդրա – նիկի շիրիմները ։

Կը հրաւիրուին խումբին բոլոր անդամ – ները եւ համակիրները ։ Հաւաքուիլ մէթ – րօ Կամպէթա, ժամը ճիշդ 15ին ։

ՄԱՐՍԷՅԼ.— Ահարոնեան ակումբի դը – րադարանի վարչութիւնը շնորհակալու – թեամբ ստացած է ընկեր Արամ Հիւսեանէ հազար ֆրանք ։

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ

ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

ԱՅՍ ԿԻՐԱԿԻ ԻՐԻԿՈՒՆ ԺԱՄԸ 20,30ԻՆ

Mutualitéի ՄԵԾ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ

24, RUE SAINT-VICTOR, MÉTRO : MAUBERT MUTUALITÉ

Կը նախագահէ՝ ԸՆԿԵՐ ԳԵՐԱՍԻՄ ԲԱԼԱՅԵԱՆ

Կը խօսին՝ ԸՆԿԵՐՆԵՐ

ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼ ԵՒ Վ. ԻՇԽԱՆԵԱՆ

— ինչպէս նաեւ Հ. Յ. Դ. Նոր Սերունդի ներկայացուցիչը —

— ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՃՈԽ ԲԱԺԻՆ —

Մասնակցութեամբ երգիչներ Քիւփէլեանի, Պօղոսեանի և Սերոբեանի ղեկավարութեամբ ԿԱՐՊԻՍ ԱՓՐԻԿԵԱՆի

Արտասանութիւն եւ կովկասեան պարեր Պանեէօ – Քաշանի պարախումբին կողմէ

«ՀԻՆ ԿՌԻՒԸ», մենախօսութիւն՝ ընկ. Ե. Գրիգորեանի կողմէ

ՄՈՒՏՔ 100 ՖՐԱՆՔ

ԿՐԸՆՈՊԼԻ ՄԷՋ

Կիրակի, Նոյեմբեր 3, ժամը 16ին ։ Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. Եօթ – նեղբայրեան կոմիտէին, Բիւ Ժէի սրահը ։

Կը նախագահէ ընկ. ՆՇԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ
Կը բանախօսէ ընկ. Ժ. ՄԻՐԻՃԵԱՆ

Գեղարուեստական խնամուած բաժին ։ Մեներգ Մարտիրոսեան քոյրերու կողմէ ։ Արտասանութիւն եւայլն ։
Մուտքը ազատ է ։

ՊՈՐՏՈՅԻ ՄԷՋ

Նոյեմբեր 3ին, կիրակի ժամը 15.30ին, Կղերականներու սրահը, 22 բիւ տէ Պա – հիւքիէ ։
Կը նախագահէ ընկ. Պ. ՔԷՆՏԷՐԵԱՆ
Կը խօսի ընկ. Հ. ԹԱՇՃԵԱՆ
Գեղարուեստական խնամուած բաժին ։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Ֆ. Կապ. Խաչի Վիէնի վարչութիւնս շնորհակալութեամբ ստացած է ընկերու – հի Տիկին Աղաւնի Բըլթոյեանէն հազար ֆրանք իր ապաքինման առթիւ ։

×

Լիոնի Եկեղեցաշէն Տիկնանց Միութիւ – նը շնորհակալութեամբ ստացաւ ձեռամբ Պ. Տ. Տօնապետեանի հինգ հազար փր. նուիրուած Ռոանէն Պ. Սարգիս Քէփէ – նէկեանի թատերախումբին կողմէ ։

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼՍԱՐԱՆ

Հերթական դասախօսութիւնը այս ե – րեքշաբթի իրիկուն ժամը 21ին Ռեժան սրճարանի առաջին յարկը, 70 բիւ Լա – ֆայէթ ։

Ֆրանսերէն կը խօսի՝
Փրօֆէսօր ՍԱՅԻՏ ՆԱՖԻՍԻ
(Թեհրանի համալսարանէն) ։

Նիւթ՝ «Հայերը եւ հայագիտութիւնը Պարսկաստանի մէջ» ։

Մուտքը ազատ է ։

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

ՄԱՐՍԷՅԼ.— Այրի Տիկին Թագուհի Գուլումեան եւ զաւակները կը ծանուցա – նեն թէ այս կիրակի առաւօտեան, Պոմոնի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան պաշտօն, իրենց ամուսնոյն եւ հօր հան – գուցեալ ԿԱՐԱՊԵՏ ԳՈՒԼՈՒՄԵԱՆԻ մահ – ուան քառասունքին առթիւ ։ Կը հրաւիր – ուին ողբացեալին յիշատակը յարգողնե – րը ։

Այս առթիւ հետեւեալ նուէրները կ'ը – նեն. — Փարիզի Միշակոյթի տան հազար ֆրանք ։ «Յառաջ»ին Երկու հազար Փր. ։

×

Այրի Տիկին Աղնիւ Փիլիկեան եւ ըն – տանեկան պարագաները կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն պիտի կա – տարուի իրենց ամուսնոյն եւ ազգակա – նին՝ ԲԱՐՍԵՂ ՓԻԼԻԿԵԱՆԻ (Շապին Գա – րահիսարցի) մահուան քառասունքին առ – թիւ, Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղե – ցին ։

Կը հրաւիրուին ողբացեալին յիշատակը յարգողները ։

Պ. Ա. Պապանազարեան կը ծանուցանէ իր կնոջ՝
ԼԻՍԻԱ ՊԱՊԱՆԱԶԱՐԵԱՆԻ
մահը, որ տեղի ունեցաւ Հոկտեմբեր 22 – ին ։ Թաղումը կատարուած է 28 Հոկ – տեմբերին եւ մարմինը ամփոփուած է Կոնարի գերեզմանատունը ։

ԺՈՂՈՎԻ ՀՐԱՒԷՐ

Ռոնի սու Պուայի Մշակութային եւ Ի – րերօգնութեան Միութեան Ընդհ. Ժողո – վը, այս շաբաթ գիշեր, ժամը 21ին, Քաֆէ տիւ Քոմէրսի վերնայարկը ։ Բոլոր անդամներու ներկայութիւնը անհրաժեշտ է, այս շատ կարեւոր ժողովին ։

Imprimé sur les presses du journal HARATCH
17, Rue Bleue, 17 — PARIS (9e)

ՊԱՏԱՐԱԳ

Ալֆորվիլի Ս. Պօղոս Պետրոս եկեղեց – ւոյ հոգաբարձութիւնը հանդիսաւոր Ս. Պատարագ եւ հոգեհանգստեան պաշտօն կը կատարէ այս կիրակի, ի յիշատակ Ալֆորվիլի եկեղեցւոյն բարերարներէն Պ. Գէորգ Պաքըրճեանի ընտանիքին հան – գուցեալ անդամներուն ։ Դիւան

ՄԱՐՍԷՅԼԻ
ԱՐԾԻՒ
ՄԱՐԶԱԿԱՆԻՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ
Սալոն տը Լ'Ալամպրա
340 Պուլվ. Շավ, ժամը 21էն մինչեւ լոյս
CLAUDE BESSET
Եւ իր նուագախումբը, իր մեներգող – ները, իր երգիչները ։
Երգեր, պարեր, սֆեջ, ժազ,
«Ռօք էն Ռօլ»

ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ

ՍԵԲԱՍՏԻՈՅ ՄՈՒՐԱՏ ՈՒՍՈՒՄՆԱՍԻ – ՐԱՑԻ Մարսիլիոյ ընդհ. անդամական ժո – ղովը այս կիրակի ժամը 3ին, 7 Պուլվ. տ'Աթէն (Պառ տիւ Կլոպ) ։ Նիւթ՝ համա – րատուութիւն նիւթական եւ բարոյական, ղեկուցում պատգ. ժողովի, վարչու – թեան ընտրութիւն ։

ՆՈՒԷՐ

ՄԱՐՍԷՅԼ.— Հ. Յ. Դ. Քրիստափոր ենթակոմիտէն իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ ընկեր Սուրէն Մելիք Մուշ – կամպարեանի եւ իր պարագաներուն, ի – րենց եղբօր եւ զաւկին՝ ողբացեալ Հրանդ Մելիք Մուշկամպարեանի կսկծալի մահ – ուան առթիւ ։

Կ'ՈՒԶՈՒԻ
Երիտասարդ տղայ մը 16–18 տարեկան ֆուրսի համար ։ Դիմել՝
KAZAZIAN FRÈRES
1, Rue des Jeuneurs, Paris 2e

ՄՈՒՐԱՏ ՌԱՖԱՅԷԼԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՄԻՈՒԹԻՒՆ
ՄԱՐՍԷՅԼ
ԵՂԱՆԱԿԻ
ԱՌԱՋԻՆ ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ
Շաբաթ, Նոյեմբեր 16, ժամը 22էն
մինչեւ առաւօտ
HOTEL SPLENDID

Ա. ԳՄԲԷԹԵԱՆԻ ԵՒ ԳՐԻԳՈՐ-ՎԱՀԱՆԻ
ԹԱՏԵՐԱԿԱՆ ՇՐՋԱՊՏՈՅՏԸ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ
ՎԻԷՆ.— Շաբաթ գիշեր, 2 Նոյեմբեր, Կաթոլիկներու սրահը,
Նախաձեռնութեամբ Վիէնի Հ. Մ. Ը. Մ.ին
ԼԻՈՆ.— Կիրակի ցերեկ, 3 Նոյեմբեր, Սթիւտիօ Բրէքի, 24 բիւ Տիւնուար
ՏԷՍԻՆ.— Կիրակի գիշեր 3 Նոյեմբեր, Հ. Յ. Դ. Տան մէջ
Նախաձեռնութեամբ Տէսինի Հայ Կրթական Միութեան
Առաջին անգամ ըլլալով շրջանին մէջ, ծանօթ դերասան Ա. ԳՄԲԷԹԵԱՆ
Կը խաղայ մասնակցութեամբ հեղինակին եւ տեղական բեմի լաւագոյն ուժերու
ԿԻՆՍ ԱՆՀԱՒԱՏԱՐԻՄ Է
Միծաղաշարժ կատակ. երեք արար ԳՐԻԳՈՐ ՎԱՀԱՆԻ

BAINS DE VAPEUR
4 bis, Rue de la Pierre-Levée — Paris - 11e
OBE. 12-51
MÉTRO : RÉPUBLIQUE, OBERKAMPF ET PARMENTIER
ԵՐԵՔ ՍՐԱՀ ՇՈԳԻԻ ԼՈԳԱՆՔԻ
(SUDATION ET FUMIGATION)
Մասաժ, Օֆսիժենօթերափի, ձեռքերու եւ ոտքերու խնամք (մանիւքիւր – փետիւքիւր) ֆուափիւր, սուէն տը պօթէ, փիսին ։

BAR - RESTAURANT
Բաց օրեր.—
ԿԻՆԵՐՈՒՆ
Ուրբաթ ժամը 11էն 23
Երկուշաբթի ժամը 11էն 23
Չորեքշաբթի ժամը 11էն 23
ԱՅՐԵՐՈՒՆ
Հինգշաբթի ժամը 17էն 23
Շաբաթ ժամը 9էն 23
Կիրակի ժամը 8էն12
ՀԱՅԵՐԷՆ ԿԸ ԽՕՍԻՆՔ

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925 — Tél. : PRO. 86-60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. PARIS 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամս. 1600

Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք: Հատը 12 ֆր.

ԿԻՐԱԿԻ 3 ՆՈԵՄԲԵՐ

DIMANCHE 3 NOVEMBRE 1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8034 — 33e ANNEE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3835

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ԱՐԹՈՒՆ ՊԱՇԱԿԸ

—o—

Տարին մէկ անգամ Հ. Ց. Դաշնակցութիւնը կը ներկայանայ հայ ժողովուրդին, որուն ծոցէն ծնած է, զլուխ զլխի խօսելու համար անոր հետ :

Քանի՛ կ'երկարին տարակրութեան տարիները, քանի՛ ամբաւակ կը մնան հայրենիքի դուռները, ա՛յնքան սերտիւ կը փարի սփիւռքի հայութիւնը այն մեծ կազմակերպութեան, որ իր ազգային, քաղաքական անվիճելի բաղձանքներուն հարազատ եւ իրական արտայայտիչն է, իր անկրաւուած արդար դատին միակ ու աննկուն պաշտպանը :

Վաթսունեւեօթը երկար տարիներու փառաւոր անցեալ մը ունի իր եռեւ Հ. Ց. Դաշնակցութիւնը :

Իր պատմութիւնը հայ ժողովուրդի ժամանակակից պատմութեան հետ կը նոյնանայ : Կարելի չէ զրել Հայոց Նորագոյն պատմութիւնը՝ առանց ամէն էջի վրայ յիշատակելու այն դերը, որ ի՛ր ճակատը է անկաշառ մտաւորականներու եւ անձնազոհ հերոսներու այս հոյակապ կազմակերպութեան :

Ժ. դարու մեր զրադէտ ու բանաստեղծ ահռելիները հայրենասիրական վէպերով ու բանաստեղծութիւններով ա՛յդ ու անկախ հայրենիքի զղափարին ներմուծողները հանդիսացան :

Արեւմտահայերի «Երկաթէ շերեփ» քաղցրացուց : Գերլինի վեհաժպտովի իր ընկերներէն Արջէն Եղսկ. Նարպէյ «Ո՛չ եղ – բարբ, ո՛չ, օտարներէն չկայ յոյս » պատգամեց :

Ցեղափոխութեան ճամբան յարդարուած էր :

Հ. Ց. Դաշնակցութիւնը հրապարակ իջաւ՝ իր զրօշակին վրայ արձանագրած «Մահ կամ ազատութիւն» : Ու հաւատարիմ այդ սկզբունքին՝ ազատութեան ճանապարհին վրայ նահաց իր անուանի եւ անանուն, զաղափարական, տղիտ մարտիկները :

Առաջնորդեց հայ ժողովուրդը՝ իր պատմութեան ամէնէն բախտորոշ օրերուն : 1918ի մայիսեան կռիւները պատճառեցին պաշտին վրայ, հայութեան բոլոր դասակարգերու մասնակցութեամբ, պատկումն եղաւ իր 28 տարիներու յեղափոխական գործունէութեան :

Ստեղծուեցաւ անկախ Հայաստանի հանրապետութիւնը : Աշխարհի քարտէսին վրայ կրկին արձանագրուեցաւ Հայաստան անունը՝ իբրեւ անկախ պետութիւն :

Բախտին անիւը չդիզեցաւ չուռուղ : Դարձանք զազթական, տարագիր, ցրուեցանք աշխարհի չորս հովերուն : Ապաստանեցանք եօթը ծովերու ափերուն : Նոր լոյն չինեցինք :

Բայց երբե՛ք չյուսահատեցանք : Ուրացան մեր դաւը : Զեռք երկարեցին պահճին : Ոտքի կանգնեցուցին զայն : Այսօր ալ իրարու հետ մրցումի ելած՝ կը դարպասեն անոր :

Դիւանագիտական սեղաններուն վրայ Հայկական Դատ չկայ այսօր : Աշխարհ ուրիշ ցաւեր ունի հիմա :

Նոր Դատեր, նոր կնճռոտ խնդիրներ կը զրաւեցնեն աշխարհի քաղաքագէտները :

Ու կը շարունակուի ջիղերու պաղ պատերազմը, որ ի վերջոյ օր մը անխուսափելի կերպով պիտի յանգի տաք պատերազմի :

Աշխարհի այս անհանգարտ ու խառնակ վիճակին մէջ, Հ. Ց. Դաշնակցութիւնը՝ իբրեւ արձուն պահակը Հայկական Դատին, իբրեւ նախանձախնդիր պաշտպանը հայ ժողովուրդի անկորնչելի, արդար իրաւունքներուն՝ աշխուրջ կը հետեւի դէպքերու ընթացքին :

Արդէպի անհանգիստ չզայ հայ ժողովուրդը, երբ հնչէ վերադարձի ժամը :

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՍՈՒՐԻԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԸ ՎԵՐՋԱՑԱՒ

—o—

ՄՈՍԿՈՒԱՅԻ ԽԱՂԱՂԱՍԻՐԱԿԱՆ ՄԱՐԶԱՆԻՇՆԵՐԸ

—o—

Արեւմտեան գիւանագիտական շրջանակները կը յայտնեն, թէ Մոսկուա կը պատրաստուի «խաղաղութեան» նոր կոչ մը ընել, ապատ աշխարհին մէջ իր ազդեցութիւնը զօրացնելու նպատակով :

Խորհրդային այս ռազմամարտութիւնը կապ ունի Դեկտեմբերին Փարիզի մէջ գումարուելիք Ատլանտեան Ուխտի ժողովին հետ : Կրեմլին կ'աշխատի կարծիք ները պատրաստել՝ ի նպաստ իրեն, յատկապէս ուռուցիկ կերպով ցոյց տալով իր յառաջդիմութիւնը միջերկրային հրը ձիգներու մարզին մէջ : Միւս կողմէ, կ'աւելցնեն Ս. Միութեան կառավարութիւնը, Արուէշեւ խաղաղասիրութեան փառը տուաւ արդէն, անձամբ ներկայ ըլլալով Թրքական դեսպանատան հացկերոյթին եւ շնորհաւորելով Թուրքիոյ ազգ. ժողը : Սակայն, յառաջիկայ օրերու ընթացքին աւելի յստակ տեսնելի պիտի ըլլան Ս. Միութեան առնելիք քայլերը, խաղաղութեան մարզին մէջ :

Սակայն, այս «խաղաղութեան» իրրեւ դլխաւոր փաստ կը նշուի սուրիական հարցը, որ տագնապի մը բնոյթը չունի այլեւս ՄԱԿի առջեւ :

Նո՛յն արագութեամբ՝ ինչպէս հրապարակ էր նետուած, սուրիական տագնապը մեղմացաւ ու դրեթէ զոյութիւն չունի այլեւս :

Ինչպէս դրած էինք, Սուրիա կ'առաջարկէ Ս. Միութեան հողինոց յանձնախումբ մը կազմել, իսկ Արեւմտեաններու տեսակէտը էր Համբրջոյթին վստահիլ քննիչի պաշտօնը :

Ինտոնեզիոյ ներկայացուցիչը առաջարկեց, որ երկու տեսակէտներն ալ մերժուին : Երկու օր յաջորդաբար խորհրդակցութիւններ եղան այս առաջարկէն առաք· ՄԱԿի բոլոր անդամներն ալ համաձայն պտնուեցան եւ առանց քուէարկութեան՝ տագնապը լուծուեցաւ : Հիմա, Սուրիա առաջին գծին վրայ կը պտնուի այն մարդոց՝ որոնք կը յայտնեն թէ Ան դրա ոչ մէկ տարակարծութիւն ունի Դամասկոսի կառավարութեան հետ :

Ո՛չ մէկ կասկած՝ որ այս կառակերպութիւնը բեմադրուած էր, մարդոց ուշադրութիւնը կեդրոնացնելու համար ռուսեւսուրիական համաձայնութեան վրայ :

ՄԱԿի ընդհանուր քարտուղար՝ Համմըրշոլտ տեսակցութիւն մը ունեցաւ Թուրքիոյ եւ Սուրիոյ ներկայացուցիչներուն հետ եւ այս ձեւով հարցը լուծուեցաւ :

Ուրեմն՝ այսուհետեւ Թրքական եւ սուրիական տագնապ զոյութիւն չունի, ցնորականութիւն :

Թուրքիոյ եւ Սուրիոյ ներկայացուցիչները ժողով մը զումարեցին, քննելու համար միջադէպերուն վերջ մը դնելու կարելիութիւնները : Սուրիացիները յայտնեցին թէ անպատասխանատու մարդիկ իրենց սահմանը մտած եւ անկարգութիւններ ըրած էին· Թուրքերը խոստացան քննութիւն մը բանալ այդ ուղղութեամբ :

× *Դամասկոսի թերթերէն մէկը լրջօրէն կը զրէ, թէ Ս. Միութիւն կը պայքարի որ Սուրիոյ մէջ համաձայնավարութիւն հաստատուի, մինչ Միացեալ Նահանգները կ'աշխատէին որ ան իյնար համաձայնավարներու ցանցին մէջ··· :*

ԿԻՐԱԿԻԻ ԻՐԻԿՈՆ ԲՈԼՈՐԴ MUTUALITÉի ՍՐԱՀԸ

ԼՍԵԼՈՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ

(ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՏԵՍ Դ· ԷՋ)



ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ծնած ազատատենչ հայ ժողովուրդի դարաւոր երկունքէն ու տառապանքէն, իբրեւ հարազատ արտայայտիչը ազգային իղձերուն եւ քաղաքական պահանջներուն, Հ. Ց. Դաշնակցութիւնը՝ ամէն տարի արժանավայել հանդիսութեամբ տօնելով իր « Օր »ը, առիթ կ'ընծայէ ի սփիւռս աշխարհի ցրուած հայութեան՝

Երկիւղածութեամբ եւ երախտագիտութեամբ ոգեկոչելու անցեալի դիւցազնական մարտնչումները ու հերոսական մաքառումները, որոնք հպարտութեամբ կը լեցնեն մեր հոգիները, պանծացնելու անմոռաց յիշատակը բոլոր անոնց, որոնք զոհուեցան հայրենիքի ազատութեան նամբուն վրայ,

Հայ ժողովուրդին անգամ մը եւս յիշեցնելու մեր բիւրաւոր նահատակներուն սրբազան կտակը եւ զօտեպնդելու զայն ապագայ լաւագոյն օրերու յոյսով,

Անսասան հաւատք եւ անընկճելի կորով ներշնչելու օտար աստղերու տակ ծնած ու հասակ նետած նոր սերունդի երիտասարդներուն, որպէսզի անդրդուելի կամքով շարունակեն մեր անմահ ռահվիրաներուն եւ իրենց հայրենակարօտ հայրերուն կէս ձգած գործը :

« Դաշնակցութեան Օր »ը ո՛չ միայն նուիրական յիշատակի Օր է, այլ սրբազան Ուխտի Օր, ամրակուռ հաւատքի եւ սրտայոյզ Ներշնչումի Օր՝ անվհատ դիմագրաւելու համար ներկայ դժնդակ օրերը եւ ինքնավստահ քայլերով դիմելու դէպի հայութեան լուսաւոր ապագան :

Սփիւռքի խաւար իրականութեան մէջ լուսաւոր ջահ մըն է Հ. Ց. Դաշնակցութիւնը, որուն ուղղուած են ազատատենչ հայութեան աչքերը, փարոս մը՝ որ հայրենաբաղձ տարագիրներուն ցոյց կուտայ շիտակ նամբան :

Ծանր երկունքի մէջ է դարձեալ աշխարհ : Մռայլ է պղտոր՝ քաղաքական հորիզոնը : Սեւ, մութ ամպեր կը մթագնեն երկինքը՝ մօտալուտ փոթորիկի մը սպառնալիքը ցցելով խաղաղութեան ծարաւի մարդկութեան աչքին :

Հայութեան պատմական հայրենիքին մեծագոյն մասը տարիներէ ի վեր դատարկուած՝ թշուառ ու անտէր՝ կը մնայ « ոտնակոխ մեր թշնամեաց » :

Աշխարհի ամէն կողմը մեզի բախտակից բազմաթիւ անազատ, ճնշուած ու կեղեքուած մեծ ու փոքր ազգեր լուռ կը տառապին՝ անզօր կատաղութեամբ՝ սպասելով այն երջանիկ օրուան, երբ պիտի հնչէ իրենց ազատագրութեան ժամը :

Հ. Ց. Դաշնակցութիւնը, ինչպէս 67 տարիներէ ի վեր, այսուհետեւ եւս՝ աւելի քան երբեք հաւատաւոր ու յուսալից՝ պիտի շարունակէ կանգնիլ հայ ժողովուրդի կողքին, բարձր բռնած ազատութեան ու անկախութեան խորհրդանշան եռագոյն դրօշակն ու իր նուիրական զինանշանը՝ անսայթաք առաջնորդելու համար զայն դէպի իր վսեմ իտէալին — Միացեալ եւ Անկախ Հայաստանի իրականացումը :

Կեցցէ՛ Հայ Ազգը :

Կեցցէ՛ Հ. Ց. Դաշնակցութիւնը :

Հ. Ց. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈ

բականութեան էջերը եւ սրբեցէք անոնցմէ Դաշնակցութեան դրոշմը, եթէ կըրնաք, անանուն, ժողովրդական երգերէն սկսած մինչեւ մեր օրերու երիտասարդ գրականութիւնը: Բայց չօշափելու համար կերպով մը Դաշնակցութեան բերած յեղաշրջումը՝ նկատի առէք հրապարակագրութիւնը, որ դարձաւ անճանաչելի, իբր խորք ու արտայայտութիւն, արեւելեան ու արեւմտեան Հայութեան համար: Ուր «Հիւսիսափայլ»էն մինչեւ «Մշակ» երկարող հրապարակագրութիւնը, իբր լեզու ու գաղափարական, ո՛ւր «Դրօշակ»ով սկսած ու «Յառաջ»ով ու «Ալիք»ով, «Զանգ»ով ու «Հորիզոն»ով շարունակուած հրապարակագրութիւնը: Աւելին, յիշեցէք Պոլսոյ թերթերուն հրապարակագրութիւնը, «Բիւզանդիոն»ով գլխաւորուած եւ յիշեցէք «Ազատամարտ»ը, իր նոր, յստակ ու յեղաշրջող գաղափարներով եւ առոյգ ոգիով, յիշեցէք «Ազատամարտ»ի ժամանակակից, այսօրուան գաղափարակից օրկանները Եգիպտոսէն Եւրոպա ու Ամերիկա, եւ դիտեցէք անոր դէմ մակաղած թերթերուն անհուն ողբերգութիւնը:

Յիշե՞նք նաեւ այս բոլորին հետ ու այս բոլորէնվեր՝ հայ կրթութիւնը, ազգային ոգիով ու գաղափարական շունչով: Գուրգուրանքի առարկայ հայ դպրոցը, որ հայութեան դարբնոցը եղած է: Սերունդներու պատրաստութիւնը հայ դպրոցէն սկսած է եւ անոր համար ալ Դաշնակցութիւնը, իր ծնունդէն իսկ, քաջալերած է զայն, յաճախ իր լաւագոյն ուժերը տրամադրելով անոր: Ո՞վ պիտի չափէր հայ ուսուցիչին բերած անհուն նպաստը հայ ազատագրութեան մեծ գործին, ըլլա՛յ սերունդներու պատրաստութեամբ, ըլլա՛յ իր իսկ արիւնը տալով: Դաշնակցութիւնը կրնայ հպարտ ըլլալ, որ այս մարզին մէջ ալ ձեռնպահ չէ եղած եւ հայ դպրոցին տուած է բազմաթիւ փայլուն դէմքեր, մինչ հարիւրաւորներու, կրնանք ըսել հազարաւորներու ալ ներշնչած է առողջ ու ազգային ոգի, զոհաբերութեան ու բարձր գաղափարականութեան խոր ըղձացում:

Այս համոզումով գործած է Դաշնակցութիւնը: ԳՈՒՐԳԷՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ

◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆

... Ո՛չ մի բռնութիւն, ո՛չ մի հալածանք, ո՛չ մի սահման չէ կարող բաժանել մի ժողովուրդ, եթէ նա՝ տոգորուած ընդհանուր շահերի գիտակցութեամբ՝ ունի նաեւ կռուելու անսասան վճռականութիւն եւ կապուած, միացած է դարերով սնուած ու պահպանուած ընդհանուր բընազդների ու զգացմունքների առողջ զարկերակով:

ՔՐԻՍՏԱՓՈՐ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
Ա. ՄԱՆԻՖԵՍՏԸ

Հայեր. — Այսօր Հայոց հարցը նոր շրջանի մէջ է մտնում: Դարերից ի վեր ստրուկ Թրքահայաստանը ազատութիւն է պահանջում:

Հայը որ դեռ երէկ չլինելը ծռած Եւրոպայից օգնութիւն էր աղերսում, այսօր համոզուելով որ օտարի վրայ դրած յոյսը ցնորք է, վճռել է իր ձեռքով պաշտպանել իր իրաւունքը, իր կայքը, պատիւը ընտանիքը...

Դարերով ճնշուել է հայ ժողովուրդը Թուրք բռնապետների լծի տակ: Դարերի ընթացքում ցանել է, բայց պտուղը երբեք չի վայելել աւազակ տիրողը յափշտակել է:

Դարերի ընթացքում անարգել են նրա սրբութիւնները, բայց Հայը կրել է այս բոլորը, կրել է համբերութեամբ, շարունակելով ոռոգել հայրենի հողը իր քրտինքով...: Դարերի ընթացքում Հայը կարծել թէ կամեցաւ ազատութիւն ձեռք բերել կուլտուրական ճանապարհով: Քաղաքակիրթ Եւրոպան խոստացաւ վերջ տալ, Թուրքերի բարբարոսութիւններին Հայաստանում:

Սակայն, անցան տարիները տարիների յետեւից եւ Հայերի դրութիւնը իրենց հայրենիքում ոչ թէ միայն չլաւացաւ, այլ աւելի ծանրացաւ եւ այժմ աւելի անտանելի, դժոխային է դարձել: Հայի պէս համբերող ազգն անգամ անկարող է շարունակել իր գոյութիւնը այդպիսի երկրում:

Բայց համբերութիւնն ալ ունի իր սահմանը: Դաղաթնակէտին հասցրած հալածանքները վերջապէս սթափեցրին Հային. այսօր նա վճռել է կամ մեռնել կամ ազատուել: Եւ ահա Երզրումը եւ ապա Պոլիսը անկրկիւղ բողոքում են անիրաւութիւնների դէմ: Հայը այլեւս չի խնդրում, այլ պահանջում է զէնքը ձեռին:

Սուլթանը սարսափահար է, Թուրք կառավարութիւնը գլուխը կորցրել է:

Այսօր Եւրոպան իր առաջ տեսնում է մի ամբողջ ժողովուրդ, մի ամբողջ ազգ, որ սկսել է պաշտպանել իր մարդկային իրաւունքները:

Այդ ժողովուրդը հասկացել է, որ իր ուժը իր մէջ է, երէկուան ստրուկ համբերող Հայաստանցին այսօր յեղափոխական է դարձել:

Հայոց հարցի վճռի յետաձգելը այլեւս անկարելի է: Այսպիսի մի պատմական ճգնաժամի միջոցին, առաջին հարցը որ պէտք է զբաղեցնէ ամէն մի լուրջ հայրենասէրի — ա՛յդ բոլոր յեղափոխականների միութեան եւ դաշնակցութեան հարցն է:

Այդ յեղափոխական գաղափարի դրօշակիրն է «Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւնը» որ սրանով դիմում է բոլոր Հայերին եւ հրաւիրում է կանգնել մի դրօշակի տակ:

«Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւնը» թէեւ նոր է հանդէս գալիս իբրեւ կազմակերպութիւն, բայց նա վաղուց գործող խմբերի միութիւնն է, խմբերի, որոնք նոյն ինքն հայ ժողովրդի ձգտումների ծնունդ են: «Դաշնակցութիւնը» ձգտելու է միացնել բոլոր ուժերը, կապելով իր հետ բոլոր կեդրոնները: Նպատակ դնելով Թուրքաց Հայաստանի քաղաքական եւ տնտեսական ազատութիւնը, «Դաշնակցութիւնը» մտել է այն կռուի մէջ, որ սկսել է ինքը ժողովուրդը Տաճկաց կառավարութեան դէմ, ուխտելով մինչեւ արեան վերջին կաթիլը կռուել հայրենիքի ազատութեան համար:

Միանանք ամէնքս ժողովրդի հետ որ բարձրացրել է ազատութեան դրօշակը: Նա ով երես կը դարձնէ ժողովրդից եւ չի հետեւիլ նրան նա այդ ժողովրդի հակառակորդն է թշնամու դէմ:

Ուրեմն, եղբայրներ միանանք յանուն սուրբ գործի ընդհանուր թշնամու դէմ:

Եւ դուք երիտասարդներ, միշտ եւ ամէն տեղ վսեմ գաղափարների պաշտպաններ միացէք ժողովրդի հետ:

Եւ դուք ալեզարդ ծերունիներ օրհնեցէք ձեր որդոց եւ օգնեցէք նոցա ձեր բազմամեայ փորձառութեամբ:

Եւ դուք, հարուստներ, բաց արէք ձեր քսակները, զէնք հայթայթելու ժողովրդին, որ նա կարող լինի պաշտպանել իր կուրծքը որ բաց է արել թշնամու դէմ:

Եւ դու, հայ կին, ոգի ներշնչիր գործի մէջ:

Եւ դու, հայ հոգեւորական, օրհնիր ազատութեան զինուորներին...

Սպասելու ժամանակ չէ...

Համախմբուենք, Հայեր եւ քաջութեամբ առաջ տանենք հայրենիքի ազատութեան սուրբ գործը:

1890 Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Պէտք է հպարտ ըլլալ, որ Դաշնակցութեան նման կազմակերպութեան մը անդամներն ենք:

(Իր վերջին խօսքերը) ԴՐՕ

◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻ՜ՒՆ...

Անուն խորհրդաւոր ու հմայիչ, որ կրցեր է, վաթսուն եւ եօթը տարիներէ ի վեր իրեն կապել հայութեան հոծ զանգուածը պատկառանք ներշնչել:

Ո՞ւր է սակայն խորհուրդը Դաշնակցութեան, ո՞ւր է անոր հմայքը:

Ո՞ւր փնտռել գաղտնիքը այն իրականութեան որ փոթորկալից երկար տարիներու արհաւիրքներու մէջէն անցած՝ այսօր նոյնքան զօրաւոր է եւ կենսունակ որքան երէկ:

Բանտ, կախաղան, աքսոր, արիւն ինչպէս նաեւ անհամար նահատակներ տալէ յետոյ, այժմ ան կանգուն է տակաւին, հպարտ, առիւծի նման ու միշտ պատնէշին վրայ:

Որովհետեւ Դաշնակցութիւնը հարազատ ծնունդն է հայութեան նոյնացած անոր էութեան հետ, մասնակից՝ անոր տառապանքներուն ու ցաւերուն:

Ան, իր արիւնը երբեք չէ սակարկած, ինկած է քաջաբար զէնքը ձեռքին, ու ճակատը թշնամիին, արեւի տակ խաղաղ կեանք մը ապահովելու համար Հայոց աշխարհին:

Հ. Յ. Դաշնակցութիւնն էր որ վեց հարիւր տարիներու ստրկութեան տակ տառապող ժողովուրդին գիտակցութիւն եւ հաւատք ներշնչեց եւ տուաւ ազատ եւ ինքնիշխան ապրելու իրաւունք:

Դարձեալ Դաշնակցութիւնն է որ մինչեւ այսօր ալ, գուրգուրանք ու պաշտամունք ցոյց կուտայ հայութեան բոլոր նուիրական սրբութեանց՝ լեզուին, պատմութեան, աւանդութեան եւ մանաւանդ անոր գոյութեան եւ հանդիստին: Նուիրում եւ զոհաբերութիւն է Դաշնակցութիւնը:

Մէկ խօսքով, հայութիւն եւ դաշնակցութիւն անքակտելիօրէն նոյնացած են իրարու հետ, մին՝ մարմինն է, միւսը՝ սիրտը, որքան ատեն կ'ապրի մարմինը, պիտի գործէ սիրը, ու որքան զօրաւոր ըլլայ սիրտը, այնքան առողջ եւ կենսունակ պիտի ըլլայ մարմինը:

Հետեւաբար որքան ատեն որ գոյութիւն ունի Հայոց ժողովուրդը, այնքան ատեն պիտի ապրի Դաշնակցութիւնը:

Գ. ՋԳՈՒՔՃԵԱՆ

◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆

Ֆետայի՛...

Այս մէկ բառը պատռեց դարերի խաւարը ու հիմից փոխեց մեր կեանքի պատկերը: ՎԱՀԱՆ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆

ԳԱՂԱՓԱՐԻ ՃԱՄԲՈՎ

Հայրենիքը, եթէ՛ աշխարհագրական տարածութիւն է՝ հող ու ջուր, ծառ ու ծաղիկ, տեսանելի իրականութիւն, նա է նաեւ հոգեկան իմացականութիւն, գաղափարական ներշնչում: Մարդկային պատմութիւնը է փաստօրէն պատմութիւնը հայրենիքների, նրանց յարատեւման կամ նուաճումի:

Այն ազգերը, որոնք կարողացել են հայրենիքի յաւիտենական գաղափարով ապրել, կարողացել են յարատեւել, ըստեղծագործել, մեծագործել: Բոլոր նըրանք որոնք անտեսել են Հայրենիքը, յանուն անձնական երջանկութեան կորել են պատմութեան թատերաբեմից եւ իրենց երկիրը դարձել է հող նուաճման:

Հայրենիքը պէտք է ապրել, զգալ, ներշնչուել: Բաւական չէ ֆիզիքապէս պատրաստ լինել հայրենիքը պաշտպանելու, դա ժամանակաւոր կիսամիջոց է, անհրաժեշտ է հայրենիքը ապրել հոգիով, երազել, գաղափարօրէն տառապել նրա երջանկութեան համար: Հոգեկան աշխարհը աւելի յարատեւ ու կայուն է, քան իրական կեանքը:

Գաղափարները ծնունդ՝ հոգեկան տըւայտանքի, դառնում են մտասեւեռում ու առաջնորդում սերունդները դէպի շարունակական մարտնչում, պայքար յանուն մնայունի, յաւիտենականի:

Ժամանակաւոր պարտութիւնները, հողից զրկուելը, կարճատեւ անյաջողութիւններ են միայն: Հայրենիքը հոգեպէս ապրող ժողովուրդները յաղթահարում պայքարից յետոյ, նորից տէր են դառնում իրենց երկրին:

Հայութեան պետական վերելքին յաճախ յաջորդել են պարտութիւններ, նըւաճումներ օտարների կողմից, սակայն մեր հայրենիքը դարձել է մոխրակոյտ թշնամիների դարերի մասյլ նուաճումները մեր հայրենի հողերի, լքումի են մատնել դաւաճանները, սակայն գաղափարական նուիրուած սերունդները, լաւագոյն հատուածը ժողովուրդի, մնալով հոգեպէս աննուաճ, Մարաթոնի ջահը կրող ախոյեանի պէս, իրենց վսեմ աւանդութիւնները փոխանցել են յաջորդներին: Մամիկոնեանները, Ռուբինեանները, Խրիմեանները, Իսրայէլ Օրիները, Արծրունիները, Րաֆֆիները հոյակապ օղակներն են հայութեան գաղափարական — իրար յաջորդող սերունդների: Հայութեան նրանք կարողացել են ներարկել հայրենիքի գոյութեան յաւիտենական գաղափարը: 19րդ դարը եղել է գաղափարների պայքարի եւ նուաճումի դար մեր ժողովուրդի համար:

Նորաստեղծ յեղափոխական կազմակերպութիւնները, առաջին հերթին Հ. Յ. Դաշնակցութիւնը, կարողացել են միաւորել մեր ժողովուրդը մէկ գաղափարի շուրջ, տեսնելու ազատ ու անկախ հայրենիք: Դաշնակցութիւնը՝ Մամիկոնեան շունչով թրծուած, կարողացել է հարիւր հազարաւոր Վարդաններ հրապարակ հանել, կռուելու համար հայրենիքի ազատութեան եւ յարատեւման համար:

Նրա հոյակապ խոյանքի շնորհիւ վերածնուել, վերակենդանացել է դերի Հայաստանը: Դաշնակցութեան գաղափարները խոր արմատներ են ձգել թէ երկրում, թէ արտասահման: Հայաստանի ազատութեան գաղափարը այսօր, շնորհիւ Դաշնակցութեան յարատեւ պայքարի, դարձել է սրբութիւն սրբոց մեր ժողովուրդի խոշոր մեծամասնութեան համար: Հոգեպէս նա ապրում է Հայաստանի ազատութեան եւ անկախութեան գաղափարով, իսկ այդ գրաւական է յաջողութեան: Գաղափարական սերունդների եւ Դաշնակցութեան ցանկութիւնները պիտի իրականանան եւ նրանք կ'իրականանան:

ՀԱՅԱՍՏԱՆՑԻ

◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆

Երիտասարդութի՛ւնը — գաղափարական շարժումներու եւ բոլոր ոխքոտ ձեռնարկներու յառաջապահ դրօշակակիրը:

Երիտասարդութի՛ւնը — խանդավառութեան եւ հերոսական անձնազոհութեան, յոյսի, հաւատի եւ բոլոր ազնիւ կիրքերու մարմնացումը:

Երիտասարդութի՛ւնը — բռնակալական զնտանններու եւ կախաղաններու մշտնջենաւոր ողջակէզը, ազատութեան հրդեհի յաւիտենական վառեկանիւթը ...

Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

Ողջո՛յն այն թանկագին փաղանգին որ անխնայ սպառ դրաւ իր միտքն ու սիրտը, շնչասպառ իյնալով ազատութեան եամբուն վրայ:

Եւ համբոյր այն անհամար եւ անանուն քաջերուն որ Դաշնակցութեան դրօշին տակ, կամ Դաշնակցութենէն առաջ, կամ անոր հետ զուգընթաց, կամ ուրիշ դրօշի տակ, կռուեցան մինչեւ վերջին շունչը, ազատութեան եւ հայրենիքի կարօտով:

ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆

ԱՄԵՆԱՅՆ ՍՐԲՈՑ
ՄԵՌԵԼՆԵՐՈՒ ԴԱՍԸ

Ամենայն Սրբոց տօնն է, յիշատակներու եւ ցաւերու մելամաղձոտ իր թափօրով.— Սիրելի դէմքեր՝ որոնք մոռցուած էին գուցէ, առօրեայ դժուարութեանց եւ մըտահոգութեանց ընթացքին: (Մեռելները կ'ապրին եւ, ինչպէս կ'ըսէր Համլէթ, մեռած՝ երկու ամիսէ ի վեր, եւ չմոռցուած տակաւին... մինչ, մեծ մարդիկ կը վերապրին): Այսօր, սիրելի դէմքեր կը տեսնուին կրկին, քիչ մը ջնջուած, ինչպէս ընտանեկան այն լուսանկարները՝ որոնք դեղնած են:

Աւանդութեանց անտառին մէջ, ուր հսկայ կաղնիներ կան, Ամենայն Սրբոց «տօնը» չէ կորսնցուցած անգա՛մ իր մէկ տերեւը, ինչպէս այդ ծառերը՝ ցուրտ սառերի մէջ: Անոնք իրենց արմատները կը մխրճեն ժամանակին ու անջրպետին մէջ, սակայն մօտ են մեր սրտին: Որովհետեւ, բոլոր երկիրներու եւ բոլոր ժամանակներու մարդերը յարգած են իրենց մեռելները: Սուրբ պարտականութիւն, հանդէպ անոնց՝ որոնք կեանք տուին մեզի: Քիչեր կը խուսափին անկէ: Աւելկա եղանակ մըն է նաեւ, որու միջոցաւ մեր անկեղծութիւնը ցոյց կուտանք մեռելներու հանդէպ, որոնց շառաւիղներն ենք: Այնպէս ենք մենք՝ ինչպէս էին անոնք. նոյն պարտականութիւնները ունինք: Հակառակ հովերուն եւ հովմերուն պէտք է շարունակենք անոնց գործը: Պէտք է աշխատինք վանել ատելութեան զգացումը, որ պատճառն է բոլոր դըժբախտութիւններուն:

Այստեղ կը դանուին քանի մը կէտերը մեռելներու տուած դասին: Կ'արժէ լսել զանոնք:

ՕՏԷԹ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

"ԱԼԺ. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՃԱԿԱՏ"Ի ԱՆԴԱՄՆԵՐ ԿԸ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԻՆ ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

Ոստիկանութիւնը ձերբակալեց Ալժ. Ազատագրական Ճակատի անդամները առջի իրիկուն 20րդ Թաղամասի պանդոկի մը մէջ։

Պետական գանձը ծանր վիճակի մէջ է: Արտաքին եւ ներքին պարտքեր նեղ կացութիւն մը ստեղծած են: Անհրաժեշտ է անմիջական միջոցներ ձեռք առնել՝ ուրեւէ պայմանաժամին վճարելու համար պարտքերը՝ առանց վտանգելու Ֆրանքը:

Այս վերջինը կառավարական երկարատեւ տագնապի օրերուն մեծ վտանգ անցուց սակարանին մէջ: Ոսկին եւ օտար դրամները յանկարծական բարձրացում կրեցին: Պահ մը «ինֆլասիոն»ի սպառնալիքը ցցուեցաւ ժողովուրդի սարսափահար աչքերուն առջեւ :

Նոր կառավարութեան կազմութիւնով այդ վտանգը անհետացաւ եւ սակարանը վերագտաւ իր հանդարտութիւնը: Ամերիկայի, Անգլիոյ, Զուիցերիոյ եւ օտար ուրիշ սակարաններու մէջ եւս Ֆելիքս Կայեարի երիտասարդներու դահլիճը գոհունակութեամբ ողջունուեցաւ :

Այն հանգամանքը, որ Ազգային Ժողովի հանրապետական բոլոր խմբակցութիւնները մաս կը կազմեն նոր կառավարութեան, մեծ յոյսեր կը ներշնչէ այս վերջինի տեւականութեան մասին: Երկար ատենէ ի վեր առաջին անգամն է, որ խորհրդարանի մեծամասնութիւնը կազմող կուսակցութիւնները կը մտնեն դահլիճին մէջ: Դուրսը կը մնան համայնավարներն ու փուժատականները :

Ելմտական տագնապը փարատելու համար Ֆելիքս Կայեար ստիպողաբար նոր փոխառութիւն մը պիտի պահանջէ Պանք տը Ֆրանսէն: Եւ որովհետեւ փոխառուած դրամը հիմնական դարման չի կրնար բերել կացութեան, պիտի դիմէ դասական միջոցին: Այսինքն նոր տուրքեր պիտի ստեղծէ եւ կամ յաւելում պիտի կատարէ գոյութիւն ունեցող տուրքերուն վրայ :

Միւս կողմէ նաեւ Վարչապետը պիտի հետապնդէ իրեն սիրելի աւելի արմատական միջոց մը, այն է խնայողութիւն պարտադրել պետական ելմտացոյցին զանազան գլուխներուն վրայ :

Այսպէս գիներու բարձրացումին հետեւանքով գործաւորներն ու պաշտօնեաները ամսականի յաւելում պիտի պահանջեն եւ պիտի ստեղծուի կախարդական շրջանակ մը, որմէ դուրս ելլել անկարելի պիտի ըլլայ :

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԽՐՈՒՇՉԵՒ Կ'ՈՒԶԷ ԽՕՍԻԼ ԱՐԵՒՄՈՒՏՔԻ ՀԵՏ

Հոկտեմբերեան յեղափոխութեան քառասուներորդ տարեդարձին տօնակատարութիւնը մեծ շուքով սկսաւ կատարուիլ Մոսկուայի մէջ: Ներկայ էին արբանեակ բոլոր երկիրներու ներկայացուցիչները, ինչպէս՝ Մաօ Ցէ Թունկ (Համայնավար Չինաստան), Քատար (Հունգարիա), Իւլպրիխ (... մանիա), Թորէզ (Ֆրանսա), Թոլիաթթի (Իտալիա) եւն.:

Առաջին օրը ամբողջութեամբ տրամադրուած էր Խրուշչեւի, որ մօտ չորս ժամ տեւող ճառ մը խօսեցաւ, մեծագոյնը՝ վերջին երկու տարուան ընթացքին: Ճառը կ'ընդգրկէր գլխաւոր չորս կէտեր:

1.— Ապաստալինացման մասին խօսելով, Խրուշչեւ յստակօրէն ճշդեց այն սահմանները՝ որոնց մէջ պիտի կատարուին աշխատանքները :

2.— «Դրամատիրական աշխարհին» ազդարարեց, որ չսպասէ թէ խորհրդային վարչակարգը կրնայ բարեփոխուիլ՝ դէպի ազատական ժողովրդավարութիւն մը :

3.— Համայնավար կուսակցութեան ընդհանուր քարտուղարը խօսեցաւ միաժամանակ Սպուտնիկի եւ միջազգային քաղաքականութեան վրայ անոր գործած ազդեցութեան մասին.— Պետութիւն մը, բաւ ան յառկայէս, որ առաջինն է այսպիսի արդիւնքներու հասնող՝ պէտք չէ ծանրացնէ պաղ պատերազմի մթնոլորտը, կամ սաստկացնէ սպառազինման արշաւը:

4.— Վերջապէս, Խրուշչեւ առաջարկեց որ բոլոր երկիրներու «գագաթ»ներու համագումար մը ըլլայ: Գաղափարը նոր չէ անշուշտ, բայց այս պարագային՝ կապ ունի Ատլանտեան Ուխտի ժողովին հետ, որ տեղի պիտի ունենայ Փարիզի մէջ:

Եթէ բոլոր երկիրները, յայտարարեց Խրուշչեւ, եւ ամէնէն առաջ Խ. Միութիւն եւ Միացեալ Նահանգներ՝ իբրեւ գլխաւոր ուժեր, կարողանային գործակցիլ բոլոր մարդերու մէջ եւ յառկայէս՝ գինաթափութեան տեսակէտէն, խաղաղութեան հաւանականութիւնները աւելի շատ կըրնան ըլլալ :

Խրուշչեւ իր երկարապատում ճառին ընթացքին մասնաւոր նորութիւն մը չըրաւ: Խօսեցաւ ժողովի մը կամ ժողովներու մասին, չեչտեց համայնավար վարչակարգին «բարիք»ները, խօսեցաւ իր Սպուտնիկներուն մասին, որոնք կը դառնան երկրին շուրջ, սպասելով որ ամերիկեան Սպուտնիկներ ալ տեսնուին եւ բարեկամական ընկերակցութիւն մը կազմեն: Նման ընկերակցութիւնները աւելի լաւ են, քան սպառազինումը, աւելցուց ան:

Խրուշչեւ յարձակումներ գործեց Միացեալ Նահանգներու վրայ, որոնք Իսրայէլի եւ Թուրքիոյ դաշնակից են եւ կը վարեն գաղթատիրական քաղաքականութիւն: Անձնապէս հարուածեց Ամերիկայի Արտաքին նախարարը.— Աշխարհը պահելով պատերազմի վիհին եզերքը ,ինչպէս կ'ըսէ Տըլըս, աշխարհակալները կը փորձեն պայմաններ ստեղծել՝ ի նպաստ իրենց :

Խրուշչեւի այս յայտարարութեանց հետ, խորհրդային մամուլը արձագանգ կը հանդիսանայ նաեւ այլ ղեկավարներու յայտարարութեանց: Պատերազմի նոր նախարար մարեշալ Մալինովսկի զգուշացուցած է աշխարհակալ շրջանակները՝ որ կը ծանրացնեն միջազգային լարուած կացութիւնը: Մալինովսկի կ'աւելցնէ, թէ խորհրդային ուժերը ներկայիս զինուած են ամէնէն արդիական զէնքերով :

Գերագոյն Խորհուրդին առջեւ, Լեհաստանի ներկայացուցիչ Կոմուլքա յայտարարեց, թէ Լեհաստան կը յառաջդիմէ ընկերվարութեան ճամբուն վրայ՝ պայքարի կլիմայի մը մէջ: Լեհաստանի համայնավար կուսակցութեան ընդհանուր քարտուղարը աւելցուց՝ թէ հակառակ գոյութիւն ունեցող դժուարութիւններուն, իրենք պիտի շարունակեն ընթանալ Լենինի ուղիով ...:

Համայնավար Չինաստանի Նախագահ Մաօ Ցէ Թունկ, Գերագոյն Խորհուրդի մէջ խօսք առնելով յայտնեց, թէ դրամատիրութիւնը կորսնցուցած է իր գերակայութիւնը: Ընկերվարութիւնը պիտի գրաւէ դրամատիրութեան տեղը, համաձայն՝ մարդկութեան կամքին: Ցեղափոխութիւնը պիտի ըլլայ, ուշ կամ կանուխ, եւ պիտի պսակուի յաջողութեամբ :

ԱՅԶԸՆՀԱՈՒԸՐԻ ԿԱՐԵՒՈՐ ՃԱՌԸ

Հինգշաբթի օր, Միացեալ Նահանգներու Նախագահ Այզընհաուըր հեռատեսիլէն (թէլէվիզիոն) ճառ մը խօսեցաւ «Գիտութիւն եւ ապահովութիւն» նիւթին շուրջ: Սպիտակ Տունը կը հաղորդէ, թէ Նախագահը կարեւոր ճառ մը պիտի արտասանէ Նոյեմբեր 13ին, պատասխանելով խորհրդային քարոզիչներուն: Շրջան ընող զրոյցներուն համաձայն՝ նոյն օրը պիտի արձակուի նաեւ ամերիկեան արուեստական առաջին արբանեակը :

Այս լուրը պաշտօնապէս չէ հաստատուած: Ամերիկացի գիտնականները կը սպասեն, որ փորձը յաջողութեամբ պսակուի :

Գալով Խրուշչեւի առաջարկին՝ բոլոր երկիրներու «գագաթ»ներու համագումար մը, ամերիկեան պատասխանատու շրջանակներուն կարծիքը այն է, թէ Խ. Միութեան համայնավար կուսակցութեան ընդհանուր քարտուղարը ժամանակը ընտրած է.— որպէսզի արդիւնք տայ՝ նման ժողով մը նախօրօք պէտք է պատրաստուի :

Միացեալ Նահանգներու Արտաքին նախարարութիւնը պիտի քննէ Խրուշչեւի ճառը, պաշտօնական պատասխան մը տալէ առաջ:

Սպիտակ Տան մէջ շրջան ընող զրոյցներուն համաձայն, Նախագահ Այզընհաուըր իր ճառին մէջ խստօրէն պիտի պատասխանէ Խրուշչեւի, միաժամանակ զգաստութեան հրաւիրելով գայն: Ինչպէս ծանօթ է, վերջերս խորհրդային ղեկավարները չափազանցուած ձեւով ներկայացուցին երկու ուժերը, իրենց մեղադրանքներուն եւ յաւակնութեանց մէջ մինչեւ իսկ ծայրայեղութեան երթալով :

Անգլիոյ մէջ վերապահութիւն կայ Խրուշչեւի յայտարարութեանց մասին, մինչ Գերմանիոյ մէջ, ծանօթ է արդէն, որ Վարչապետ Ադենաուըր նոր համագումարի մը կողմնակից չէ :

× Սպիտակ Տան բանբերը յայտարարեց, թէ Նախագահ Այզընհաուըր Դեկտեմբերի կիսուն Փարիզի մէջ գումարուելիք համագումարին մասնակցելէ ետք Լոնտոն պիտի չերթայ :

Բայց սակայն, Այզընհաուըր Անգլիա պիտի երթայ, անկախ Դեկտեմբերի ընթացքին իր ունենալիք ճամբորդութենէն, յառկայէս այցելութիւն մը տալու համար Էլիզապէթ Թագուհիին: Ճամբորդութեան թուականը ցարդ որոշուած չէ :

Օրը Օրին

ԿԸ ՓՆՏՌՈՒԷՐ՝ ՖԵԼԻՔՍ ԿԱՅԵԱՌ

—o—

« Զմեռնային կառավարութիւն » մը կազմելու իր ծրագրին մէջ ձախողած՝ առտուան ժամը երեքին Կի Մոլէ տուն կը վերադառնար: Առանց ժամանակ կորսնցնելու, Հանրապետութեան Նախագահը Էլիզէի դիւանապետին պաշտօն կը յանձնէ, որ Ֆելիքս Կայեառը գտնէ եւ բերէ:

Խե՛ղճ դիւանապետ. չարչարանքը սկըսած էր:

Հազարումէկ դժուարութիւններով կը գտնուի հասցէ մը. ոստիկանի մը ընկերակցութեամբ դիւանապետը կ'երթայ: Դուռը կը բախէ: Տիկին մը.

— Ներողութիւն, Տիկին, կրնայի՞ք ըսել, թէ ո՞րն է Կայեառի յարկաբաժինը:

— Այս ժամուն մարդ չեն արթնցներ. ի՞նչ կ'ուզէք Կայեառէն :

Տիկնոջ կը հասկցնեն, որ Նախագահ Քոթին դրկած է զիրենք. վերջապէս...

— Այն ատեն ուրիշ տեղ փնտռեցէք. հինգ տարիէ ի վեր հոս չի բնակիր :

Պատուիրակութիւնը ձեռնունայն կը վերադառնայ նախագահական պալատ: Քոթի սուրճ պատրաստել տուած էր :

Հանր. Նախագահը.— Ո՞ւր է.

Դիւանապետը.— Չկայ. չգտանք:

Վերջապէս, դիւանապետին կը հասկըցնեն որ Կայեառը պէտք է գտնել :

Մարդը, իր կեանքին մէջ նման փորձանքի չէր հանդիպած :

Պետական խինճաշարժ մը կը սկսի դառնալ Փարիզի փողոցներուն մէջ... Վարչապետ մը փնտռելով :

Ելմտական նախարարը ամուսնութենէն ի վեր չէր յայտնած իր նոր բնակարանը: Կ'արթնցնեն իր նախարարութեան դիւանապետը եւ հասցէն կ'ուզեն :

Չկայ :

Կը գտնեն հեռաձայնի թիւ մը: Չի պատասխաներ :

Մինչ, պետական խինճաշարժը կը դառնար Փարիզի մէջ:

Գործի լծուած էր ամէն մարդ: Վերջապէս՝ հասցէ մը. *Ավընիւ Ֆօշ*:

Երկար շունչ մը կ'առնէ դիւանապետը: Առտուան ժամը 4.40ին վարչապետացուն գտնուած էր եւ հարկ չէր մնացած թերթերուն մէջ յայտարարել՝ կը փնտռուի.. Ֆելիքս Կայեառ :

×

Շաբաթ մը վերջ:

Երեքշաբթի, Նոյեմբեր 5, ուշ գիշերին, վարչապետացու Կայեառ դարձած վարչապետ, նախագահական պալատ կ'երթայ, հաղորդելու համար իր յաղթանակը :

36 օրուան տագնապէ մը վերջ Ֆրանսա կ'ունենար իր կառավարութիւնը, նոյն օրը կը շնորհաւորէին Ֆելիքս Կայեառի 38րդ տարեդարձը :

Հանրապետութեան Նախագահը բան մը գիտէր անշուշտ, երբ մինչեւ առաւօտ Փարիզի փողոցները տակնուվրայ ընել տուած էր՝ երիտասարդ Կայեառը գտնելու համար :

Սուրճն ալ պարապ տեղ պատրաստել տուած չէր ...: Կը փնտռուէր «Կայեառ» մը ինչպէս կ'ըսեն Ֆրանսացիները, գտնուած էր վարչապետ մը:

ԱՐՄԵՆԱԿ

ՍՈՒՐԻՈՅ Արտաքին փոխ նախարար Քալաս դատապարտեց Թուրքիան եւ մինչեւ Դեկտեմբեր 15 պայմանաժամ տուաւ Անգարայի կառավարութեան, որ իր ուժերը հեռացնէ սահմանէն, հակառակ պարագային՝ Դամասկոս իր բողոքը պիտի նորոգէ ՄԱԿի մէջ:

ՌՈՒՍ ՀԱՄԱԽՈՀՆԵՐԸ

(Բ. եւ վերջին մաս)

Յեղափոխութիւնը բնականաբար նախ պիտի լուծէ համայնավար կուսակցութիւնը եւ ոստիկանական, զսպիչ եւ այլ բոլոր կազմակերպութիւնները՝ որոնք անոր տիրապետութիւնը ապահովելու պաշտօնն ունէին։

Տեղական ինքնավար մարմիններ պիտի ստեղծուին, որոնք յեղափոխութեան ընթացքին իսկ ձեռք պիտի առնեն տեղական վարչութիւնները, մինչեւ որ կեդրոնական իշխանութեան մը կազմութիւնը ամբողջուի եւ մինչեւ որ պայմանները ներեն ընդհանուր եւ ազատ քուէարկութեամբ օրէնսդիր ժողով մը հաստատել։ Քաղաքական, տնտեսական եւ բարոյական բոլոր ազատութիւնները պիտի վերահաստատուին։

Այս ազատութիւններուն ծրագրուած վերականգնումին առթիւ ժողովին մէջ յայտարարուած է թէ ժողովուրդը, քառասուն տարի համայնավար դրութեան տակ ապրած ըլլալուն, յատկօրէն չի ըմբռներ այլազան կուսակցութիւններու գոյութեան առաւելութիւնը եւ կը կարծէ թէ բազմաթիւ հոսանքներ ունենալը կը տկարացնէ երկիրը։

Հարկ է պարզել եւ բացատրել ժողովուրդին, կ'ըսէ ժողովը, որ քանի մը կուսակցութիւններու գոյութիւնը անհրաժեշտ է երկրին զարգացման համար եւ ընդհակառակն, միակ կուսակցութեան մը դրութիւնը եւ իշխանութեան կեդրոնացումը անոր ձեռքին մէջ՝ կը տկարացնէ, կը քամէ երկիրը։

Համախոհները ըստ երեւոյթին կը գիտակցին որ համայնավար իշխանութեան տապալումէն վերջ, բարդ կացութեան մը եւ լուրջ հարցերու առջեւ պիտի գտնուին։ Այդ պատճառաւ անշուշտ չեն ուզեր այժմէն պայմանաւորուիլ եւ շատ զգաստ եւ շրջահայեաց են ապագայ տնտեսութեան իրենց առաջադրութիւնները պարզելու մէջ։

Այսպէս, գիւղացիները իրենք է որ պիտի ընտրութիւն մը կատարեն հողերու անձնական թէ հաւաքական արդիւնաբերութեան ձեւերուն մէջ։

Նմանապէս առեւտուրը, եթէ երբեմն կրնայ անհատական ձեռնարկ ըլլալ, շատ պարագաներու մէջ կրնայ նաեւ սպառողական համագործակցականներու վերապահուիլ։

Նոյնպէս երկրին ներկայի վարչական բաժանումները պիտի պահուին եւ, իրենց իսկ բացատրութեամբ, «ամէն բան ծայրէն պիտի չսկսի»։

Ինչպէս կը տեսնուի առաձգական ծրագիր մըն է պարզուածը, որուն տակ յայտնօրէն կը նշմարուի 1917ի յեղափոխութեան սկզբնական շրջանի դաժան ու դժուարին օրերու վերակենդանացման հեռանկարով ժողովուրդը չխրտչեցնելու մտահոգութիւնը։

Բայց ի վերջոյ այս բոլոր առաջադրութիւնները, հեռանկարները եւ ապագայի ծրագիրները որո՞ւն համար են։ Միայն Ռուսաստանին եւ բուն ռուս ժողովուրդի՞ն կը վերաբերին թէ ամբողջ Խորհրդային Միութեան եւ Միութեան բաղկացուցիչ միւս ազգութիւններուն եւ երկիրներուն։ Այս պարագան է որ առաւելապէս կը շահագրգռէ մեզ։

Բարեբախտաբար այս հարցին նկատմամբ նուազ պղտոր եւ անորոշ են Համախոհները եւ հարցումին պատասխանը կու տան շարժման ղեկավարներէն երկուքը։

Նախ՝ Զուեթլանի, երբ կը յայտարարէ թէ նոր Ռուսաստանը պիտի վերադարձնէ իրենց ազատութիւնն եւ անկախութիւնը ներկայի արբանեակ երկիրներուն. Բայց շատ սերտկապերպիտի պահենքանոնցիհետ կ'աւելցնէ ան։ Ու այդ համախոհները իւրաքանչիւր երկրի իշխանութենէն գերիվեր հեղինակութեամբ կազմակերպութիւն մը կը նախատեսեն, արեւելեան Եւրոպայի համար։

Երկրորդը՝ Ստոլիբին, որ արտաքին քաղաքականութեան տեղեկաբերն էր Ֆրանքֆորթի ժողովին, աւելի յստակ եւ բացորոշ է իր յայտարարութիւններուն մէջ։

Միջանկեալ ըսենք որ Ստոլիբին անունը ծանօթ է ռուսեւճապոնական պատերազմին յաջորդող յեղափոխութեան փորձը արեան մէջ զսպող զօրավարին հռչակով։ Զօրավար Ստոլիբին Քիեւի մէջ ցարին ներկայութեան սպաննուեցաւ անիշխանական ուսանողի մը կողմէ եւ կարծողներ կան որ ցարական գաղտնի ոստիկանական կազմակերպութիւնը, հռչակաւոր Օխրանան անմասն չէր այդ սպանութեան մէջ։ Հաւանաբար զօրավարին շառաւիղներէն է մեր տեղեկաբերը։

Դառնալով նիւթին, ուրեմն Ստոլիբին եւս համաձայն է արբանեակ երկիրներուն վերադարձնելու անոնց բռնաբարուած ազատութիւնն եւ անկախութիւնը եւ կը գոհանայ հասարակաց շահերուն պաշտպանութեան լծուած կազմակերպութեամբ մը, ըսելով. «եթէ Գերմանիոյ եւ Ֆրանսայի պէս զօրաւոր պետութիւններ կը միանան Լիւքսէմպուրկի պէս փոքր եւ տկար իշխանութեան մը հետ, ապա Ռուսաստանն ալ նոյնքան բարոյական իրաւունքն ունի, խաղաղ խղճով եւ հաւասարէ հաւասար սկզբունքին հիման վրայ արեւմտեան Եւրոպայի Միութեան նման միութիւն մը կազմելու արեւելեան Եւրոպայի համար։

Այս կը վերաբերի, ինչպէս ըսինք, երկրորդ համաշխարհային պատերազմէն վերջ կարմրած արբանեակ երկիրներուն միայն։

Հապա միւսնե՞րը, անոնք որ քառասուն տարիէ ի վեր նոյնքան բռնութեամբ եւ զէնքի զօրութեամբ կարմրած են եւ կամայ թէ ակամայ մաս կը կազմեն Խորհրդային Միութեան։

Պատասխանին համար դարձեալ դիմենք Ստոլիբինի։ «Ռուսաստանի իւրաքանչիւր ժողովուրդ, լիակատար իրաւունքով իր տեղը պիտի ունենայ ռուսական դաշնակցային պետութեան մէջ»։

Հետեւաբար, այդ ժողովուրդներուն ազատութիւնն եւ անկախութիւնը վերադարձնելու հարց չկայ Համախոհներուն համար, այլ կայ միայն ռուսական պետութեան եւ տիրապետութեան հարց մը։

Խորհրդային Միութեան մաս կազմող երկիրները կամայ թէ ակամայ պիտի մնան Միութեան մէջ, այդ միութիւնը խորհրդային ըլլայ թէ ոչ, բաւ է որ ռուսական ըլլայ։

Այս արդէն յստակօրէն կը մատնէ Համախոհներու ձգտումներն ու մտայնութիւնը եւ շատ ալ յուսադրիչ չէ ապագային համար։

Ռուս Համախոհները չեն միտիր Ռուսաստանի նախկին կայսերական կարգը վերականգնելու, բայց ըստ երեւոյթին հրաժարելու միտք ալ չունին ռուսական կայսերապաշտութենէն՝ որ կարմիր ըլլայ թէ ճերմակ, չի դադրիր կայսերապաշտութիւն ըլլալէ միշտ ի շահ եւ ի փառս Ռուսաստանի։

ԲԱԲԳԷՆ ԳԱՎԷՋ

ՏԱՐՕՆԻ ՊԱՏՄԱԳԻՐՔԸ

Ինչպէս ժամանակին արձագանգ եղաւ «Յառաջ»ը, Տարօն – Տուրուբերանի Հայր. Միութեան Ամերիկայի կեդր. Մարմնի նախաձեռնութեամբ, խաւարէն լոյս աշխարհ եկաւ Տարօնի Պատմագիրքը, որ կ'ընդգրկէ երկու հարիւր տարուան Հայոց եւ մանաւանդ Տարօնի պատմութիւն։

Այդ աշխատանքին, լծուած էին Տարօնի ծոցէն ծնած Տոքթ. Ա. Ալիխանեան, Սմբատ Շահնազարեան եւ գրագէտ Կարօ Սասունի։

Խմբագրութիւնը ինկած է Կարօ Սասունիին։ Ըստ փրօֆէսէօր Ադոնցի դիտողութեան, թէ «Տարօնի ժամանակակից պատմագիրքը կրնայ գրել Կ. Սասունին»։

Ու Կ. Սասունի, Յոբ. Երանելիի համբերութեամբ, տարաւ այդ դժուարին եւ պատասխանատու աշխատանքը։ Գիրքը գրել, հետամտել, պրպտել զանազան աղբիւրներ, ու խաւարէն լոյս բերել անյայտութեան մէջ թաղուած պատմութեան թանկագին գանձեր։ Սրբագրել ու դասաւորել իրեն հասած ձեռագիրը։ Տեղին համապատասխան զետեղել նկարներն ու քարտէսները։ Տոկաց ու համբերեց, հակառակ իր հասած տարիքի։ Սակայն, անդին կայ հոգեկան սրտառուչ գոհունակութիւն մը, երբ պատմութիւնը, խաւարէն լոյս կուգայ ու աշխատանքը կը գնահատուի հանրութեան կողմէ։

Գնահատելի է Տարօնի պատմագիրքը, իր մաքրութեամբ եւ համապատասխան դասաւորումով։ Մեզի կը մնայ արժեցնել զայն, որ մեր երազ աշխարհի պատմութիւնն է, որու կսկիծը անմար կը մնայ վերը ապրող Տարօնցիներուն սրտին մէջ։ Մի մոռնաք նաեւ մեր նախահայրերու հայրենասիրութիւնը եւ անոր համար տարած ու զոհաբերած ազգօգուտ աշխատանքը։ Եւ ուրախ ենք որ պատմութիւնը արձանագրած է թէ «բարեմիտ եւ սրտաբուխ նկարագրի տէր է Տարօնի Հայութիւնը» (Կամսի Խոնարհ Հերոսներէն)։ Ուրեմն ընդունինք այդ պատիւը եւ պարծանքով վերյիշենք մեր նախնիքներէն մեզի աւանդ՝ բարեմիտ նկարագրի տէր ըլլալու պարագան։

Անհրաժեշտ պարտք մըն է արժեցնել Հայր. Միութեան ձեռնարկած գործին։ Ամէն Տարօնցի իր սեղանին վրայ անհրաժեշտաբար պէտք է ունենայ Տարօնի պատմագիրքը, ինչպէս բրած են մեր խոնարհ խուերը ․—

Տարօնցի այրի տիկին մը, տէր երկու որբերու, զուրգուրանքով կը գնէ Տարօնի պատմագիրքը։ Ուրիշ մը թոյլ կուտայ ըսելու տիկնոջ.— Այդ գիրքը ոչ դուն, ոչ ալ աղջիկներդ կրնաք կարդալ ու հասկնալ, կ'արժէ՞ր այդ ծախքը։

Ահա ստացած պատասխանը.— Ես այդ գիրքը, կը պահեմ Արծուաբեր Աւետարանի նման, չուչփաններու մէջ, իբրեւ մասունք իմ հայրենիքէս։ Անոր մէջ ամփոփուած կը գտնեմ Տարօն աշխարհը իր գիւղումներով, մարտական փառահեղ պատմութիւններով եւ ազատութեան համար ինկած հայրենասէր նահատակներով։ Այն Տարօնցին որ իր սեղանի վրայ Տարօնի պատմագիրք չունի, արժանի չէ Տարօնցի կոչուելու։

Սիրելի հայրենակիցներ, այրի կնոջ վայր հեռու մեզմէ, բոլոր սրտով եւ ամբողջ էութեամբ, թեւ ու թիկունք դառնանք Հայր. Միութեան, եւ քաջալերենք իր ձեռնարկը որ մերն է։ Ձեռքէ ձեռք խլենք Տարօնի Պատմագիրքը, որպէսզի երես ունենանք պահանջելու որ գիրքին մէջ բաց մնացած ազատագրական շարժման մասնակցող հին եւ նոր նահատակուած հերոսներու կենսագրութիւնը 4 – 5 հարիւր էջէ բաղկացած հատորով մը լոյս աշխարհ բերէ, իբրեւ նոր լուսապսակ մը։

ՄԱՐԳԱՐ ԲԱՐԽԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

•

Նկատի կ'առնուէին անոնց ծնողներուն ըմբռնումները, դպրոցները, ուր ստացած էին իրենց նախակրթութիւնը, զիրենք յանձնարարող անձերու կեցուածքը ազգային խնդիրներու մէջ, եւայլն։ «Կողմ»երու ստեղծումը Դպրեվանքէն ներս, եւ որոշ «կողմ»ի մը վայելած նիւթական եւ բարոյական անվերապահ պաշտպանութիւնը, Դպրեվանքը վերածած էին քաղաքական մարզարանի մը, ուր ծայրայեղութիւններ եւ ընդհարումներ դարձած էին սովորական ընթացիկ երեւոյթներ։ Աշակերտական որոշ խմբակցութիւն մը որոշած էր, ըստ վկայութեան նոյն շրջանի ուսանողներէն մէկուն, Դպրեվանքի ամբողջ շէնքը օդը հանել, եթէ ուսուցման կերպի եւ ուղղութեան փոփոխութիւն մը ի յայտ գար Դպրեվանքէն ներս։ 1950ի սկզբնաւորութեան, ուսանողներու միջեւ պատահած աննշան եւ մանկական դէպք մը, առիթ եղած էր որ կեղծ «Հայրենասէր» ուսանողներէն ոմանք դիմեն ատրճանակի գործածութեան. միջադէպ, որ ժամանակին չհրապարակուեցաւ եւ իր սաղմին մէջ խեղդուեցաւ Կաթողիկոսարանի Դրան Եպիսկոպոս Տ. Խորէն Ս.ի Երուսաղէմէ վերադարձէն յետոյ, ուր գացած էր Ծննդեան արարողութիւններուն նախագահելու համար։

Մի քանի այս մանրամասնութիւնները կուտանք, որպէս զի Հայ հաւատացեալ ժողովուրդը փոքր ի շատէ տեղեակ մնայ իրականութեանց եւ Կիլիկեան Միաբանութեան անդամներէն ոմանց նախատրամադրութեանց ծանօթանայ։ Ծանօթանան նաեւ այն բոլոր ազգասէր եւ բարեմիտ ազգայիններն ու կազմակերպութիւնները որոնք լիաբուռն եւ յօժարակամ կը մասնակցէին Դպրեվանքի ծախսերուն, մղուած շողշողուն խօսքերէ ու նկարներէ, եւ չէին անդրադառնար կատարուած աղէտին եւ ակամայ, մասնակից կը դառնային ծանր պատասխանատուութեան։

Կը փակենք, նաեւ այս կսկծալի էջը, յաջորդիւ բացատրելու համար Կիլիկիոյ Կաթողիկոսական ընտրութեան երրորդ եւ ճակատագրական յետաձգումը։

14 Հոկտեմբեր, 1955...

Կիլիկիոյ Կաթողիկոսութեան վերջին քսանամեակի ճակատագրական Թուականը, որ «վերջնական եւ անյետաձգելի» որոշում մը կը նշանակէր կաթողիկոսական ընտրութեան համար, եւ որ դարձակէտ մը եղաւ արտասահմանի Հայ ազգային – եկեղեցական կեանքին մէջ։ Անխտիր, բոլորի աչքերը սեւեռած են այդ Թուականին եւ մեծ յոյսեր կապուած՝ այդ կախարդական օրուան։ Հեւք կայ բոլորի հոգւոյն մէջ, անօրինակ մէկ ըսպասում եւ յուսադրութիւններ «կողմ»երու համար, ընտրութեան կատարման, կամ նոր յետաձգումի մը կապակցութեամբ։ Ինչպէս մեր նախորդ խմբագրականներու մէջ յիշեցինք, Կաթողիկոսական Տեղապահը, ընտրութեան Թուականին ճշդումէն ու յայտարարութենէն ի վեր, իր գրաւոր եւ բերանացի յայտարարութիւններով շեշտը կը դնէր այդ Թուականի «վերջնական եւ անյետաձգելի» ըլլալուն վրայ։ Միւս կողմէ, սակայն, ընդդիմադիրներու յախտանքը եւ դաւերը նոր թափ կը ստանային եւ կասկածի մթնոլորտ մը ստեղծած էին ամենուրեք։

Բերիոյ Թեմին Ազգային Իշխանութեան դէմ կատարուած ցոյցը, ազդանշան՝ ապագային ուժերու քանդիչ աշխատանքներուն զրահաւորման, օրն, (9 Հոկտեմբեր 1955) հեռախօսով թէ հեռագրաւ ծանուցուած էր Կաթողիկոսական Տեղապահին։ Ու, Ն. Սրբազնութիւն Տեղապահը, առանց սպասելու Բերիոյ Թեմին Առաջնորդին եւ Ազգային Իշխանութեանց տեղեկագրութեան, եւ առանց որեւէ արտայայտութեան մը Կաթողիկոսական Թեմերէն մէկուն մէջ կատարուած անկարգութեանց մասին, պատգամաւորներուն կը փութացնէր կաթողիկոսական ընտրութեան ԵՐՐՈՐԴ ՅԵՏԱՁԳՈՒՄԸ ծանուցանող հեռագիրը, 9 Հոկտեմբեր 1955, Կիրակի ժամը 2ին (կ. վ.)։ Եւ, ընթացիկ հոգեբանութեամբ մը, խուսափելու համար անմիջական հետապնդումէ, Տեղապահ կը հեռանար Անթիլիասէն, երթալու եւ հանգստանալու համար Պհամտուն, իր ազգականներուն մօտ ...։ Ու, նախ քան Պհամտուն երթալը «հանգստանալու համար», պատգամաւորներուն կ'ուղղէր հետեւեալ շրջաբերական գիրը, միաժամանակ ստորագրելով, ուրիշներու կողմէ պատրաստուած «կոչ» մը.

Թիւ 4504 Անթիլիաս 9 Հոկտ. 1955

Թեմերու բոլոր պատգամաւորներուն,

Յարգելի Տիարք,

Համաձայն մամուլի մէջ հրատարակուած հաղորդագրութեան, հարկադրուած ենք (ընդգծումը մեզմէ. ՀԱՍԿ) յետաձգելու Հոկտեմբեր 14ի համար որոշուած կաթողիկոսական ընտրութեան ժողովը։

Հայրական օրհնութեամբ
Խադ Արքեպիսկոպոս
Կաթողիկոսական Տեղապահ
Մեծի Տանն Կիլիկիոյ

(10 Շար.)

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀԱՍԿԻ

— Ա՛հ, ձիթիր այդ «սատանայի բուր-ման»։

Ես չգիտեի, թե ձիթենու ոսկրերն էլ այդքան հոտում էին։

— «Ոչ միայն մեռելի օրհնության վեհությունն է ներշնչում ինձ այդ ծառը ...» խոհեմությամբ ձեռքը թափ տվեց Ներսես։

Ես չհասկացա նրա վերջին խոսքերը, միայն հետևեցի նրա հայացքին, որ ուղղված էր դեպի ձիթենին։

— Շատ հետաքրքիր մարդ է, ասաց ինքնիրեն, ինչպես որ ինքն էր ասել ինձ։

Ներսես ձիթենու ոսկրերի մասին ինձ ասել էր, որ նրանք ունեն հատկություն հանգստացնելու մարդու նյարդերը։ Ես ուզում էի հարցնել, թե ինչպես է նա գիտեցել այդ, բայց չհարցրի։ Ինձ թվաց, որ նա ինքն էլ չգիտի։

Ներսես ինձ ծանոթացրեց իր ընկերների հետ, որոնք ինձ ընդունեցին սառնությամբ։ Ես նրանց մեջ ոչ մի ծանոթ դեմք չգտա։ Ներսես ինձ ասել էր, որ նրանք ամենքն էլ գրականության հետ կապ ունեցող մարդիկ են։ Ես ուզում էի ծանոթանալ նրանց հետ, որպեսզի հետո ինձ համար հեշտ լինի նրանց հետ խոսել։

Ներսես իր ծանոթացրած մարդկանց մեջ, ինձ ցույց տալով մի ուրիշ երիտասարդի, ասաց.

— Սա էլ Ներսես Ալեքսանյանն է, որ ինձ ասել է, թե դուք ձեր վեպի համար նյութ եք հավաքում։

Ես ուզում էի ասել, որ ինձ ոչ մի վեպ գրելու միտք չկա, բայց Ներսես ինձ չթողեց խոսել։

— Ներսես ասել է ինձ, որ դուք ձեր վեպի համար նյութ եք հավաքում, ասաց նա։ Ես ձեզ կարող եմ մի հետաքրքիր նյութ տալ։ Ես ինքս ականատես եմ եղել մի դեպքի, որ ինձ թվում է, թե կարող է ձեզ համար հետաքրքրական լինել։

Ես ուզում էի ասել, որ ինձ ոչ մի նյութ պետք չէ, բայց նա ինձ չթողեց խոսել։

— Ես

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՊԷՅՐՈՒԹԻ Ֆրանսական դեսպանատան դէմ, Բշ. օր յարձակում մը գործուած է, ձախողութեան մատնուելով: Երեք ան – ձեր՝ երբ մուտք կը գործէին դեսպանա – տունէն, իրենց առջեւ գտան ոստիկան – զօրաց ջոկատ մը եւ փախուստի դիմեցին, իրենց ետին ձգելով 16 ռումբեր (?) : Ձերբակալութիւններ եղած են ու փըն – տռտուքները կը շարունակուին :

ՊԷՅՐՈՒԹԻ «Արազէտ» շաբաթաթեր – թին տէրը սպաննուած գտնուած է դաշտի մը մէջ:

ԱՄՄԱՆԻ ձայնասփիւռը բուռն յարձա – կումներ գործեց Եգիպտոսի վրայ, որ գլուած է արաբական գատին. Յորդանա– նի մէջ, բաւ խօսնակը, փաստեր կան, որ Եգիպտոս գաղտնի բանակցութիններ ունի Իսրայէլի հետ :

ՍՊՈՒՏՆԻԿԻ շան առողջական վիճակը վատթարացած է: Մոսկուայէն կը հա – ղորդեն, թէ սրտին բաբախումները նը – ւազած են եւ գրալի է որ անասունը ռատկելու վրայ է: Ամէն պարագայի մէջ պաշտօնապէս հաղորդուեցաւ, թէ շունը զոհուած պէտք է նկատել :

ԲՐԻՍԹՈԼԻ մէջ ջախջախուեցաւ, անգ– լիական օդանաւ մը. 15 զոհ կայ:

Խ. ՄԻՈՒԹԵԱՆ բնակչութեան թիւն է՝ 205 միլիոն հոգի, իսկ Միացեալ Նա – հանգներու՝ 172 միլիոն :

ՖՐԱՆՍԱՅԻ բոլոր դրամատուները, Նոյեմբեր 11ին փակ պիտի մնան, Զինա– դադարի տարեդարձին առիթով :

ՊԻԻՇ ՏԻԻ ՌՈՆԻ մէջ բեռնատար կառք մը հրանիւթի շտեմարանի մը բախելով ահռելի հրդեհի մը պատճառ դարձած է: Շտեմարանը կը պարունակէր հինգ մի – լիոն լիտր հրանիւթ: Շարժավարին մար– մինը կարելի չէ եղած գտնել: Բազմաթիւ վիրաւորներ կան :

ԼԻԲԱՆԱՆԻ Հանրապետութեան Նախա– գահին եղբօր դէմ մահափորձ մը կատար– ուած է ձախողութեան մատնուելով: Բազմաթիւ ձերբակալութիւններ եղած են:

ՆՈՒԷՐ

Տէր եւ Տիկին Պ. Փաքսեան հինգ հա– զար Ֆր. կը նուիրեն Ազգատախնամին, երկու հազար Ֆր. Մշակոյթի Տան եւ 500 ֆրանք «Յառաջ»ին, իրենց զաւկին գին – ուորութենէ ողջամբ վերադառնալուն առ– թիւ: Ստանալ ««Յառաջ»էն :

×

Այրի Տիկին Թագուհի Տէօքմէճեան իր ամուսնոյն յիշատակին հազար Ֆր. կը նուիրէ Կարմիր Խաչին, ընդհ. Մեռելո– ցին առթիւ:

Ստանալ «Յառաջ»էն :

ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՄՍԱԹԵՐԹ

(Օրգան՝ Հ. Յ. Դ. Նոր Սերունդի)

Լոյս տեսած է Հոկտ.ի թիւը (10), ճոխ բովանդակութեամբ, պատկե– րազարդ :

Հայերէն եւ ֆրանսերէն :

Ձեռքէ՝ հատը 50 ֆրանք :

Տարեկան բաժնեգին՝ 450 ֆրանք:

Ստանալու համար դիմել՝

M. K. PAPAZIAN

25, Rue Martial-Boudet, Chaville - S. et O.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ի գիտութիւն Մարսիլահայ հասարա – կութեան կը ծանուցանենք թէ՝ Պոմոնի Թաղ. Խորհրդոյ եւ Դպրաց Դասու կար – գադրութեամբ, այս կիրակի, կէսօրէ վերջ ժամը 3ին կազմակերպուած է ուխ– տագնացութիւն մը, հոգելոյս առաջնորդ Տէր Գրիգորիս Ս. Եպիսկ. Պալագեանի գերեզմանին վրայ հոգեհանգստեան պաշ– տօն մը կատարելու համար: Այս առթիւ կը հրաւիրենք հայ ժողովուրդը, ներկայ գտնուիլ եւ յարգանքի բաժինը բերել այս չինարար Սրբազանի յիշատակին:

Հաւաքոյթի վայր նշանակուած է Սէն Փիէր գերեզմանատան մեծ դրան առջեւ ժամը երեքին :

ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՊՈՄՈՆԻ

Imprimé sur les presses du journal HARATCH

17, Rue Bleue, 17 — PARIS (9e)

Օր. ՆՈՒՆԻԿ ՏՕՆԻԿԵԱՆ

Պ. ԿԱՐԱՊԵՏ ԳՈՆՍԹԱՆԵԱՆ

Նշանուած

Պանեէօ, 2 Նոյեմբեր — Սէն Մոռիս

× Այս առթիւ Պ. Առաքել Թաթուլեան կը նուիրէ երկու հազար Ֆր. Պանեէօ Բաշանի գպրոցին:

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Կրօնական Ընկերակցութիւնը կը ծա – նուցանէ որ այս կիրակի Կաթ. պատուի– րակ՝

ՍԵՐՈՎԲԷ ԵՊԻՍԿ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

պիտի նախագահէ արարողութեանց եւ քարոզէ:

Կը մասնակցի երկսեռ երգչախումբը :

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Ֆ. Կ. Խաչի Մարսէյլի մասնաճիւղը իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ ընկե– րուհի Այրի Տիկին Մելիք Մուշկամպար – եանի եւ իր պարագաներուն, իրենց զաւ– կին եւ եղբօր ողբացեալ Հրանդ Մելիք Մուշկամպարեանի գաղն կորուստին առ– թիւ:

× Նոյնպէս ընկերուհի Տէր եւ Տիկին Տէր Գէորգեաններուն իրենց հօրեղբօր որդւոյն Յովհ. Սարաֆեանի կսկծալի մահուան առթիւ (Իտալիա):

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կապոյտ Խաչի Մարսէյլ քաղաքի վար– չութիւնը շնորհակալութեամբ ստացած է ընկերուհի Գէորգեանէ հազար Ֆր., իր հօրեղբօր որդւոյն Յովհ. Սարաֆեանի կսկծալի մահուան առթիւ :

×

Լիոնի Եկեղեցաշէն Յանձնախումբը շը– նորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուէրները, ի նպաստ Լիոնի եկեղեցւոյ շինութեան :

Պ.Պ. Մարտիրոս Մուրատեանէ 100.000 ֆրանք, Սահակեան 50.000, Ֆէլլահեան եղբարք 30.000, Եթերեան եղբարք 25.000 Ֆր., Արթիւր Մասլաքեան 25.000, Օր. Տէրվիշեան քոյրեր քսան հազար, Պ. Մի: քայէլ Խաչատուրեան տասը հազար, Պ. Պ. Կարպիս Քէլէկեան տասը հազար, Խաչիկ Շահպազեան տասը հազար, Զէ – քիեան, Պալեօզեան Մկրտիչ, Էնֆիէ – ճեան,, Գապտերեան Մաթիօ, Քիւրքճեան հինգ հազարական ֆրանք, Գառնիկ Պա – պիկեան երեք հազար, Ջաւէն Ստեփան – եան երկու հազար ֆրանք :

ԼԻՈՆԻ նոր եկեղեցւոյ խաչի կնքահայ– րութեան արժանացաւ Պ. Քաջազն Յով – հաննէսեան հարիւր հազար ֆրանքի նը – ւիրատուութեամբ : Այս առթիւ Տիկին Իսկուհի Փափազեան նուիրեց յիսուն հա– զար ֆրանք, Պորտոյէն Տիկին Տիգրանու– հի Դաւիթեան՝ հինգ հազար, Մարսէյլէն Պ. Տատուր Աստուածատուրեան երկու հազար : Լիոնի Եկեղեցաշէն Յանձնա – խումբը մասնաւոր շնորհակալութիւն կը յայտնէ Մարսէյլի ծանօթ վաճառական – ներէն Պ. Յակոբ Փափազեանի որ միշտ սիրայօժար մասնակցած է իր նուիրա – տուութիւններով Լիոնի եկեղեցւոյ շինու– թեան: Այս առթիւ ալ հինգ հազար նը – ւիրատուութենէ զատ եկած անձնապէս օր մը աշխատած է եկեղեցւոյ շանթիէի վրայ:

ԱԶԳ. ՄԻՈՒԹԻՒՆ

ԳՆՈՒՄ ԵՒ ՎԱՃԱՌՈՒՄ

Ցարկաբաժին, խանութ, հող, շէնք, ընդունելութիւն եւ խոր – հուրդներ՝ Հայու մը կողմէ

ԱՄԷՆ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

AGENCE LEVET

9, Boulevard des Italiens, PARIS 2e

Téléphone : RIC. 36-75

Կ'ՈՒԶՈՒԻ

Société France-Cameroun

24. RUE D'ENGHIEN, PARIS

Կը փնտռէ հայ երիտասարդ մը ամու – րի, ազատ զինուորական պարտականու – թենէ եւ պատրաստուած: Դիմել$ գրա – ւոր կամ անձնապէս :

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ

ԱՎԻՆԵՈՆԻ ՄԷՋ

Կազմակերպութեամբ Հ. Յ. Դ. Մու – րատ խումբին:

Կը տօնուի այս կիրակի, երեկոյեան ժամը 9ին, Բիւտպի Պար, Լա Փոնթէ :

Կը բանախօսէ ընկ. Ժ. ՄԻՐԻՃԵԱՆ

Գեղարուեստական բաժին, մասնակցու– թեամբ Հ. Յ. Դ. Նոր Սերունդի (Մար – սէյլ):

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Տէր եւ Տիկին Արա Պարթեւեան կը ծա– նուցանեն թէ այս կիրակի, Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ մէջ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի ի յիշատակ իրենց հօր Սիմոն Երամեանի, ինչպէս նաեւ Տի– կին Նեկտար Երամեանի եւ Տիկին Անժէլ Գապաքըրճեանի յիշատակին :

Բարեկամներ կը հրաւիրուին ներկայ գտնուիլ :

ՑՈՒՇԱՏԵՏՐ

ՄԱՐՍԷՅԼ.— Հ. Յ. Դ. Պոմոնի «Ձա – ւարեան» ենթակոմիտէի վարչութիւնը ընդհ. ընկերական ժողովի կը հրաւիրէ ենթակոմիտէի եւ «Յառաջ» խումբի բո – լոր ընկեր եւ ընկերուհիները : Այս Շա – բաթ երեկոյ ժամը 9ին, սովորական հաւաքատեղին: Օրակարգ՝ Ա. Ներկայա– ցում, Բ. Գրագարան ընթերցարան եւն.: Պարտաւորիչ ներկայութիւն :

ՓԱՐԻԶ.— Ֆ. Կ. Խաչի մասնաճիւղի ընդհ. ժողովը այս Շաբաթ կէս օրէ վերջ ժամը 4ին, Քաֆէ Րէժանի մէջ :

Բոլոր ընկերուհիներու ներկայութիւնը անհրաժեշտ է: Խիստ կարեւոր օրակարգ. — Պարահանդէսի հարցը:

ԴԵԿՏԵՄԲԵՐ 15ԻՆ

« ՍԻՓԱՆ – ԿՈՄԻՏԱՍ»Ի

ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ՝

SALONS DES AMBASSADEURS

BOXE - ԱՅՍ ԿԻՐԱԿԻ ԺԱՄԸ 15ԻՆ

"CENTRAL SPORTING CLUB"

57, FBG. SAINT DENIS - MÉTRO : STRASBOURG ST. DENIS

ԹՈՒՐՔԻՈՅ ԱԽՈՅԵԱՆ ԿԱՐՊԻՍ ԶԱՔԱՐԵԱՆ

ԸՆԴԴԷՄ ՊՐԱԶԻԼ ՔԵԹԱՆԻԻ

ԿԱՐՊԻՍ ԶԱՔԱՐԵԱՆի միակ մրցումը Փարիզի մէջ, Պրազիլիա մեկնումէն առաջ

ՈՐԲԵՐՈՒ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԱՐՄՆԻ - ՓԱՐԻԶԱՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆ

ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՆՑԻԿ ՑԵՐԵԿՈՅԹԸ

ՆՈՅ. 24ԻՆ, ԺԱՄԸ 16էն 24 — Կոանտ Օթէլի շքեղ սրահներուն մէջ

ՍԱՎԱ ՆԷԱԿՈՒՅԻ հունգարական նուագախումբը եւ հաճելի անակնկալներ

Կը խնդրուի ապահովել սեղանները հեռաձայնելով ՓԱՍԻ 64.90

Մուտք 500 ֆրանք

ՄԵԾ ԵՐԵԿՈՅԹ - ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՇԱՒԻԼԻ ԵՐԻՏ. ԵԿԵՂԵՑԱՇԷՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ ԿՈՂՄԷ

Բարձր հովանաւորութեամբ Հայր. Պատուիրակ Տ. ՍԵՐՈՎԲԷ Եպիսկ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

Կիրակի, 10 Նոյեմբեր, ժամը ճիշդ 4ին, մինչեւ կէս գիշեր, Շաւիլի քաղաքապե – տարանի սրահին մէջ :

Ցուցադրութիւն գեղեցիկ եւ գունաւոր ֆիլմ մը Շաւիլի եկեղեցիին շինութեան մինչեւ աւարտումը :

ՄԵԾ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ Երիտ. յանձնախումբի կողմէ

Շէյքսփիրէն (հայերէն թարգմանուած) — «ԸՆՏԵԼԱՑՈՒԱԾ ՄԵԳԵՐԱՆ »—

8ին եւրոպական պարեր գեղավարութեամբ

Orchestre Typique DON MORERTO

Ճոխ պիւֆէ — Սալ տէ Ֆէթ Րիւ Սթալինկրատ : — Մուտք 300 ֆր.

Օթօպիւս 171 թիւ Փոն տը Սեվրէն իջ – նել Փիւի Սան վէն :

BAINS DE VAPEUR

4 bis, Rue de la Pierre-Levée — Paris - 11e

OBE. 12-51

MÉTRO : RÉPUBLIQUE, OBERKAMPF ET PARMENTIER

ԵՐԵՔ ՍՐԱՀ ՇՈԳԻԻ ԼՈԳԱՆՔԻ

(SUDATION ET FUMIGATION)

Մասաժ, Օքսիժենօթերափի, ձեռքերու եւ ոտքերու խնամք (մանիւքիւր – փետիւքիւր) քուաֆիւր, սուէն տը պօթէ, փիսին:

BAR - RESTAURANT

Բաց օրեր.—

ԿԻՆԵՐՈՒՆ	ԱՅՐԵՐՈՒՆ
Ուրբաթ ժամը 11էն 23	Հինգշաբթի ժամը 17էն 23
Երկուշաբթի ժամը 11էն 23	Շաբաթ ժամը 9էն 23
Չորեքշաբթի ժամը 11էն 23	Կիրակի ժամը 8էն12

ՀԱՅԵՐԷՆ ԿԸ ԽՕՍԻՆՔ

Décoration — Agencement de Magasin

ANCIENS ÉTABLISSEMENTS

J. PAICHOUX et E. THION

149, RUE NATIONALE, PARIS 13E — TÉL. : GOB. 19 52

SERRURERIE D'ART ET DE BATIMENT

Tous Travaux de Fer Forgé

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925 — Tél. : PRO. 86-60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. PARIS 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամս. 1600

Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք: Հատը 12 ֆր.

ՇԱԲԱԹ 9 ՆՈՅԵՄԲԵՐ

SAMEDI 9 NOVEMBRE 1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8039 — 33e ANNEE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3840

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ԽԱՂԱՂ ՀԱՄԱԿԵՑՈՒԹԻՒՆ

Քառասնամեակի տօնակատարութիւնը լիովին օգտագործուեցաւ Կրեմլինի ամենազօր վարիչներուն կողմէ՝ ներքին եւ արտաքին ճակատներու վրայ փառաբանելու համար խորհրդային վարչաձեւին բարիքները :

Խրուշչեւի երկարապատում ճառը անգամ մը եւս եկաւ հաստատելու թէ ո՛չ մէկ բան փոխուած է բոլշեւիկներու մտայնութեան մէջ: Եւ յոյսեր ալ չկան, որ փոխուի մօտիկ ապագային :

Ընդհանուր օրէնք է, որ հանդիսաւոր տօնակատարութեանց առթիւ պետութեանց վարիչները «ընդհանուր ներում» կը շնորհեն աքսորեալներու եւ բանտարկեալներու: Բռնակալներու ամէնէն դաժանին՝ սուլթան Ապտիւլ Համիտին անգամ իր գահակալութեան տարեդարձին առթիւ նման «շնորհ»ներ կ'ընէր ո՛չ միայն քրէական յանցանքով դատապարտուածներուն, այլ երբեմն նոյնիսկ քաղաքական բանտարկեալներուն :

Կը սպասէինք, որ խորհրդային կառավարութիւնը Հոկտեմբերեան յեղափոխութեան քառասնամեակին առթիւ ներում շնորհէր տարիներէ ի վեր բանտերու եւ աքսորավայրերու մէջ տառապող եւ տաժանակիր աշխատանքներու ենթակայ հարիւր հազարաւոր մարդոց: Ազատատենչ մարդկութիւնը կ'ակնկալէր, որ Մոսկուայի իշխանաւորները ընկերվարութեան տարրական սկզբունքները սկսէին գործադրել Խորհրդային Միութեան տասնեւհինգ հանրապետութեանց եւ ութ արբանեակ երկիրներուն մէջ: Մամուլի, հաւաքոյթի, խօսքի, գաղափարի եւ երթեւեկի ազատութիւն շնորհէին հարիւր միլիոնաւոր մարդոց, խորտակէին վերջապէս զանոնք կաշկանդող շղթաները :

Քառասուն տարին բաւական չեղա՞ւ ամրապնդելու «պրոլետարիատի դիկտատուրա»ն: Ա՛լ ի՞նչ բանէ կը վախնան՝ ժողովրդավար վարչաձեւ հաստատելու համար :

Խրուշչեւ իր ճառին մէջ շեշտը կը դնէ «խաղաղ համակեցութեան» վրայ, որ «անխուսափելի է»: Կը թելադրէ վերջ տալ ուժի քաղաքականութեան եւ «վճռել բոլոր խնդիրները լուծել բանակցութիւններով»: Անմիջապէս վերջ կ'աւելցնէ սակայն թէ «կապիտալիզմն ու համայնավարութիւնը անհաշտելի են»:

Առիթէն օգտուելով գովքը կ'ընէ Սպուտնիկներուն, որոնք «խաղաղութեան արբանեակներ» են :

Կը մոռնայ սակայն, որ մինչ այս վերջինները անջրպետին մէջ ազատ թռիչք ունին եւ ենթակայ չեն որեւէ կաշկանդումի, «արբանեակ» երկիրներու սահմաններուն մէջ հարիւր միլիոնաւոր մարդիկ ամենադաժան պայմաններու տակ կ'ապրին, զուրկ գաղափարի եւ արտայայտութեան ազատ թռիչքէ :

Խրուշչեւ կը թելադրէ, որ ընկերվարական եւ դրամատիրական երկիրներու վարիչ գլուխները անյապաղ խորհրդաժողով գումարեն՝ իրարու հակոտնեայ քաղաքական երկու դրութեանց միջեւ «համակեցութիւն» առեղծելու, եւ պատերազմը՝ իբրեւ միջազգային խնդիրները լուծելու մեթոտ՝ դատապարտելու համար :

Առաջին անգամ չէ, որ նման առաջարկ կը ներկայացնեն Մոսկուայի վարիչները: Ո՛չ ոք կը հաւատայ իրենց անկեղծութեան: Գերագոյն Խորհուրդի երեսփոխանները հետեւելով Խրուշչեւի, չորեքշաբթի օր քուէարկեցին կոչ մը՝ ուղղուած աշխարհի բոլոր ժողովուրդներուն, հրաւիրելով զանոնք որ պայքարին «խաղաղութեան» համար :

Տարիներէ ի վեր «խաղաղութիւն» կը քարոզեն բոլշեւիկները, Սթոքհոլմի ծանօթ կոչէն եւ Հանրագրութիւններէն սկսեալ մինչեւ Փիքասոյի խաղաղութեան աղաւնին :

Քառասնամեակը եւ Սպուտնիկներու յաղթական թռիչքը նոր պատեհութիւն մը կ'ընծայեն իրենց՝ անգամ մը եւս մարդկութեան առջեւ երեւնալու համար իբրեւ խաղաղութեան աւետաբեր հրեշտակներ :

Սակայն աշխարհ չի կրնար երբեք խաղաղութիւն գտնել, քանի՛ մարդկային տարրական իրաւունքներէ եւ ազատութիւններէ զուրկ կ'ապրին «պրոլետարական բռնապետութեան» ենթակայ երկիրներու ժողովուրդները :

«Խաղաղ համակեցութեան» առաջին պայմանը ազատութիւնն է :

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԻՊՔԵՐԸ

"ԱՐԵՒՄՈՒՏՔԸ ԱՒԵԼԻ ԶՕՐԱՒՈՐ Է"

ԿԸՍԷ ԱՅԶԸՆՀԱՈՒԸՐ

ՅԱՏՈՒԿ ԳՐԱՍԵՆԵԱԿ ՄԸ՝ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Ինչպէս գրած էինք, Եր. օր Նախագահ Այզընհաուըր ճառ մը արտասանեց, որ հեռասփռուեցաւ ձայնասփիւռէն ու հեռատեսիլէն (թէլէվիզիոն): Նախագահը յայտարարեց, թէ գիտական հետազօտութեանց յատուկ գրասենեակ մը հիմնուած էր, որուն վարիչ նշանակուած է Տոքթ. Քիլեան: Այզընհաուըր ըսաւ, թէ Քիլեան գիտական նոր յայտնագիւտ մը գործադրութեան պիտի դնէր եւ անոր վարած բաժանմունքը, այսուհետեւ, պատերազմական հարցերու մէջ նոյն հեղինակութիւնը պիտի ունենայ, ինչպէս՝ Պատերազմական Նախարարութիւնը :

Գիտական բոլոր յայտնագիւտները պիտի կեդրոնանան մէկ մարդու ձեռքին տակ, որ պիտի ղեկավարէ այդ բոլորը :

Այզընհաուըր յայտնեց նաեւ, թէ Խորհրդարանին պիտի դիմէ, որպէսզի քուէարկուի օրէնք մը, բարեկամ երկիրներու հետ մասնագիտական յարաբերութիւնները կանոնաւորելու եւ օրինական հիմունքի վրայ դնելու համար: Եթէ Քոնկրէսը վաւերացնէ այս առաջարկը, Ատլանտեան Ուխտի ժողովին մէջ պիտի առեղծուի վարիչ մարմին մը որ պիտի ստանձնէ յատկապէս գիտական փնտռտուքներ կատարելու պարտականութիւնը: Նոյն հարցը պիտի քննուի նաեւ այլ կազմակերպութեանց մէջ:

Խօսելով խորհրդային երկու արբանեակներուն մասին, Նախագահը ըսաւ թէ այդ գործին իրենց մասնակցութիւնը բերած բոլոր գիտնականները շնորհաւորութեան արժանի են: Արբանեակները առաւելապէս պատերազմական իմաստ ունին հիմա, ու առաջին երկուքը ո՛չ մէկ վտանգ կը ներկայացնեն ժողովուրդներու ապահովութեան :

Նախագահ Այզընհաուըր Միացեալ Նահանգներու եւ Խ. Միութեան զինուորական ուժին մասին խօսելով, մասնաւորապէս ըսաւ. — Շփում ունեցայ զինուորական գիտական շրջանակներուն հետ, որոնք կը հաստատեն, թէ հակառակ անոր որ Խ. Միութիւն յառաջդիմած է արբանեակներու մասնագիտութեան մէջ, ազատ աշխարհին զինուորական ուժը շատ աւելի մեծ է համայնավար երկիրներու ներկայացուցած ուժէն :

Ամերիկեան ջրածին ռումբերու պահեստը այնքան մեծ է, որ յարձակումի մը պարագային, արագօրէն եւ մեր ուզած կէտերուն վրայ կրնանք արձակել զանոնք, միաժամանակ դարձեալ ունենալով պահեստի ռումբեր (ջրածին): Մեր գիտնականները ապահովցուցին զիս, թէ ջրածին ռումբերու մարզին մէջ, քանակով թէ որակով Խ. Միութիւն Ամերիկայէն շատ ետ կը մնայ :

Մենք փորձերով ալ ցոյց տուինք, ըսաւ Նախագահը, թէ մեր միջերկրային հրթիռները ի վիճակի են ծանր ռումբեր կրելու, մինչեւ 5600 քիլոմեթր բարձրութեան վրայ: Սակայն մենք խաղաղութեան կը միտինք եւ կ'առաջարկեմ, որ Մոսկուան ընդունի ՄԱԿի մէջ եղած զինաթափութեան առաջարկութիւնները :

× Լրագրողներու կողմէ հարցապնդուելով, Ամերիկայի Արտաքին նախարար Տըլըս խանդավառութիւն ցոյց չտուաւ Խրուշչեւի Արեւելք – Արեւմուտք ժողովի մը առաջարկին հանդէպ: Տըլըս ըսաւ, թէ Խրուշչեւի առաջարկները շատ են ... :

Միւս կողմէ, Ուաշինկթընէն պաշտօնապէս կը հաղորդուի, թէ Միացեալ Նահանգներ չեն ընդունած Խրուշչեւի համաժողովի մը առաջարկը :

ԼԵՆԻՆ ԿԸ ԽՕՍԻ ԿԱՐՄԻՐ ՀՐԱՊԱՐԱԿԻՆ ՎՐԱՅ...

ԽՐՈՒՇՉԵՒ ԳԻՆՈՎՆԱԼՈՎ «ՄԱՐՍԷՅԵԷԶ»Ը ԿԵՐԳԷ

Հոկտեմբերեան յեղափոխութեան 40րդ տարեդարձը հետզհետէ աւելի մեծ փայլ կը ստանայ Մոսկուայի մէջ: Եր. օր, առաւօտուն Լենին խօսեցաւ Խ. Միութեան ժողովուրդներուն՝ ձայնագրուած ժապաւէնով մը, որ Կարմիր Հրապարակէն հեռասփռուեցաւ երկրին բոլոր կողմերը: «Խորհրդային պետութեան հիմնադիր»ը խօսք առաւ «ի՞նչ է խորհրդային վարչակարգը» նիւթին շուրջ: Լենին տակաւին կ'իշխէ կարմիր հրապարակին վրայ, հսկայ իր արձանով :

Պատերազմական նախարար Մալինովսկի խօսք առնելով խորհրդային վարչակարգին ձեռք ձգած յաջողութիւններուն հաշուեկշիռը ըրաւ, եւ առաջին հերթին շեշտը դրաւ միջերկրային հրթիռներու եւ Սպուտնիկներուն վրայ :

Երեք օր յաջորդաբար ժողովրդական պարահանդէսները պիտի շարունակուին, յատկապէս որոշուած 36 վայրերու մէջ :

Հինգշաբթի գիշեր, ժամը իննէն ետք, Մոսկուայի փողոցներուն մէջ հրավառութիւն եղաւ, մինչ Կրեմլինի մէջ ընդունելութիւն մը կը սկսէր, Խրուշչեւի եւ

(Շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՏԽՐՈՒՆԻ - ԹԱԴԷ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Ցաւով կ'իմանանք որ Միացեալ Նահանգներու մէջ Հոկտեմբեր 19ին մեռած է ընկեր Թադէոս Պետրոսեան: Ողբացեալը շուրջ 75 տարեկան, բնիկ Ղարաբաղցի էր եւ երկար տարիներ ուսուցիչ եղած է Կովկասի եւ Ռումանիոյ մէջ: Աշխատակից՝ «Հայրենիք»ի, իր յուշերով ու իր յօդուածներով վառ կը պահէր Դաշնակցութեան գաղափարականութիւնը :

Յուղարկաւորութիւնը տեղի ունեցած է Հոկտեմբեր 24ին Ուոթըրթաունի Ս. Ստեփաննոս եկեղեցին :

ՍԱԿԱՐԱՆ (Նոյ. 7) — Զոյլ ոսկի 543 հազար (539.000), Նափոլէոն 3960 (3950), զուից. 3780 (3758), անգլ. 4730 (4790), քսան տոլարնոց 19.080 (18.960), Թղթադրամ (զուգահեռական շուկայ) սթերլին 1225, տոլար 469, զուից. 112.50, պելժ. 9.10, լիր 0.72, փեսեթա 8:

Օրը Օրին

ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԲԱՐԻՔՆԵՐԸ...

Ինչո՞ւ միայն խօսիլ «չարիքներուն» մասին՝ երբ այնքան շօշափելի, հինչուն բարիքներ ալ ունի պատերազմը: Անշուշտ վերջանալէն յետոյ, երբ մարդիկ կը խորհին յաջորդին մասին, եւ ոգի ի բոին կ'աշխատին կազմակերպել զայն, աւելի կատարեալ, աւելի աւերիչ եւ կործանաբար :

Բայց պիտի խօսէինք «բարիքներուն» մասին: Անշուշտ կը յիշէք երբ 1918ին վերջացաւ առաջին համաշխարհայինը, Մեծերը իրար եկան եւ կազմեցին Ազգերու Դաշնակցութիւն մը, միլիառներ ծախսեցին — մեր դրպանէն անշուշտ — եւ շքեղ պալատ մը շինուեցաւ Լեմանի ափին: Տարիներ տեւեց շինութիւնը, կահաւորումը, մատենադարանի կազմութիւնը եւն., եւն.: Եւ օրին մէկը չուեցին ժընեվէն, սպասեակներու, պահապաններուն եւ «թուրիստներուն» ձգելով ամէն բան: Ես ալ հիացումով դիտած եմ զայն իր գեղածիծաղ պարտէզներէն մինչեւ լուսաշող ջահերը եւ մնացեալը եւ ուզած եմ գիտնալ թէ այդ Ազգերու պալատը ինչ բարիք բերած է պատերազմէն վերջ տառապող մարդկութեան: Ապեբախտ չըլլանք, նախ քանի մը հարիւր հոգիի ամսական մը ապահովուած է փակուելէն վերջն իսկ: Ասիկա առաջինն էր :

Հիմա գանք երկրորդին, «Ազգերու ժողովին» ի նոր աշխարհ: Անշուշտ հոն եւս պալատ մը կառուցուած է եւ կահաւորուած արդիական բոլոր յարմարութիւններով ամերիկեան ճոխութեամբ: Նախագահ, փոխ – նախագահ, քարտուղարներ, յանձնախումբեր, հոս – հոն ղրկուած ներկայացուցիչներ եւ ինչե՛ր ինչե՛ր :

Միտք չունիմ հաշուական մանրամասնութեանց մէջ մտնելու, որպէսզի խելքս չկորսնցնեմ :

Բայց իր կազմութեան օրէն տեսած գործը վերջապէս պէտք է հետաքրքրէ անոր ծախքերը հոգացողներս:

Թուեմ :

Աշխարհի մէկ անկիւնը հրացան մը կը պայթի — չըլլալիք բան չէ — պէտք է անմիջապէս ստուգել որ այդ հրացանին զինակը ի՞նչ ծագում ունի:

Որոշում. —

«Պատուիրակութիւն մը ղրկել անմիջապէս դէպքին վայրը»:

Տեղ մը յեղափոխութիւն կը ծագի, արիւն կը հոսի, մինչեւ արիւնը չորնայ ժամանակ կայ թէեւ, բայց բանաձեւ մը քուէարկելու է զոնէ: Զինաթափութի՞ւն ... յատուկ յանձնախումբ չկա՞յ որ իրենց ղրկուած է այդ ոչինչ գործը ... իսկ պետութեան մը բողոքը կամ խընդրանքը, հարկ չկայ անմիջապէս օրակարգ անցնելու, կրնայ տէրը գզջալ եւ ետ առնել :

Իսկ վերջին բարիքը ?...

Այդ ալ երկրորդ սպուտնիկին կը պարտինք: Լայքային, փոքրիկ շնիկին կեանքը վտանգուած է ... Ո՞ւր է ՄԱԿը, «հոս եմ» կը պատասխանէ վեց շուներու տողանցքով մը իրենց վիզէն կախուած բողոքի կամ խնդրանքի վերտառութիւններով «մենք ձեր բարեկամներն ենք ...» ու շունը փրկուած է արդէն ՄԱԿին շնորհիւ ...

Առանց «բարիքներ» չե՞ն, եթէ Ազգերու ժողովը չըլլար այդ հարիւրաւոր մարդիկ բանուորական նպաստ պիտի ըստանային լաւագոյն պարագային :

Մեծ բարիք մըն ալ աս է... ՆՈՃԻ

ՀԻՒԼԷԱԿԱՆ ՊԱՆԴԱՆ

Հոկտեմբերի սկիզբը Վիէննայի մէջ տեղի ունեցաւ Միջազգային հիւլէական հանդումարը, «մասնակցութեամբ վաթսուն պատուիրակութիւններու, որոնց մէջ կային երկու հազար ութ հարիւր պէտուններ, մասնագէտներ, տնտեսական եւ քաղաքական հարցերու փորձագէտներ։ Համագումարին նպատակն էր, քննել հիւլէական ուժի խաղաղ գործածութեան խնդիրները, հիւլէական ուժի բաշխումը զանազան երկիրներու տէրութիւն համաձայն։ Պաղ պատերազմի պայքարին մէջ, մեծերու հակամարտութեան մէջ միջազգային համագործակցութիւն մը մխիթարական էր։

1956 Հոկտեմբեր 23ին ընդունուեցաւ «Հիւլէական Ուժի Միջազգային Գործակալութիւն»ի մը հաստատումը Վիէննայի մէջ նայի մէջ ութսուն երկու պզտիկ պետութիւններ։ Երեք տարիներու դիւանագիտական բանակցութիւններէ ետք, կարելի եղաւ ապահովել նաեւ Խ. Միութեան մասնակցութիւնը։ Տասն եւ ութ պզտիկներու ներկայացուցիչներէ կազմուած Ցանձնախումբ մը յաջողեցաւ կազմակերպել համագումարը։

Հիւլէական պանդան ուրանիում ունեցող երկիրներէ պիտի առնայ քանակ մը նիւթը, ծանր ջուր եւ պիտի բաշխէ այն երկիրներուն, որոնք զուրկ են հիւլէական արտադրութենէ։ Մ. Նահանգները առաջին ատիթով արամադրած են հինգ թոն ուրանիում եւ պիտի հայթայթեն այնքան մինչեւ 1960, որքան որ միւս երկիրները արամադրեն։

Պանքայի վարչութիւնը պիտի ուսում նասիրէ երկիրներու պէտքերը, բնութէնէն նպաստաւորուած երկիրներու արտադրութիւնները, աւելցնել ուժի աղբիւրները, նկատի առնելով որ հսկայական քանակութեամբ կայ հանքածուխ, քարիւղ, էլեկտրականութեան։ Մասնագէտները կը յայտնեն, թէ քանըհինգ տարուան մէջ ճարտարարուեստական երկիրներ աւելի հանքածուխ սպառած են հսկայական քանակութեամբ, քան մարդկութիւնը հանքածուխի գործածութենէն մինչեւ 1925։ Վերջին պատերազմի ընթացքին սպառած է տասնեւութ միլիառ թոն հանքածուխի համարժէք ուժ։ Մարդկութիւնը կ'աճի, ճարտարարուեստը կը զարգանայ, կեանցաղի մակարդակը կը բարձրանայ, պէտքերը կը բազմանան, արտադրութեան միջոցներն ալ աւելնալու են։

Հիւլէական պանքայի կազմակերպութիւնը կը նկատուի Միացեալ Ազգերու մէջ բաժանումը, քանի որ կը մասնակցին ութսուներկու ազգեր։ Կազմակերպութիւնն ունի երեք խումբեր, հիւլէական պետութիւններու, Ամերիկայի, Անգլիոյ, Խ. Միութեան, Ֆրանսայի, Բանասայի, ուրանիումի հանքեր ունեցող երկիրներու, Պելժիա եւ Զեխոսլովաքիա, ուրանիումէ զուրկ երկիրներու, որոնք մեծամասնութիւն կը կազմեն։

Համագումարի բացումին Ամերիկայի ներկայացուցիչ Ծոլական Սթրաուս յայտարարեց, թէ Ամերիկայի ժողովուրդը կը սպասէ, որ համագումարը մտնի նոր պատմութեան մէջ ամէնէն կարեւոր հանդրուանն ըլլայ եւ հպարտ է որ տեղի կ'ունենայ նախագահ Այզընհաուըրի նախաձեռնութեամբ։ Մելինաուր մարդիկ կը սպասեն, որ Վիէննայի համագումարը բարեկամական, համագործակցութեան ոգին զօրէ խաղաղութեան եւ յառաջդիմութեան համար։ Բնական էր որ ներկաները խանդավառօրէն ծափահարէին Ծոլական յայտարարութիւնը, պահ մը մոռնալով դիւանագիտական պայքարները, Մերձ. Արեւելքի տագնապը։ Ծափահարութիւնները կրկնուեցան, երբ Փորթուկալի ներկայացուցիչը յայտարարեց, թէ իր կառավարութիւնն ալ կազմակերպութեան արամադրութեան տակ կը դնէ հարիւր թոն ուրանիում։ Հանք, որ կը համապատասխանէ եօթը հարիւր քիլօ ուրանիում։

Ընտրուեցաւ քսան երեք անդամներէ բաղկացած վարչութիւն մը, որ իր կարգին ընտրեց ընդհանուր տնօրէն մը, յանձին ամերիկացի Սթերլին Քոլի, նկատի առնելով ձեռնհասութիւնը, աշխատելու կարողութիւնը, ուղղամտութիւնը։ Կոր. Հրդ. պատուիրակը դիտել տուաւ որ լաւագոյնը պիտի ըլլար, որ չկղզի երկրի մը ներկայացուցիչը ընտրուէր եւ տակայն համագործակցութիւնը պահելու համար, չէր ընդդիմանար ընտրութեան։

Ընդհանուր տնօրէնը սրտի հրաւիրուեցաւ, բուռն ծափահարութիւններու մէջ առաջնորդուեցաւ ամպիոն, կատարելու համար հանդիսաւոր երդումը.

«Ընդհանուր տնօրէնութեան պաշտօնը ստանձնելու րոպէին, կ'երդնում հանդիսաւորապէս կատարել պաշտօնս ուղղամտութեամբ եւ խղճմտութեամբ, առաջնորդուելով միմիայն կազմակերպութեան շահերու գիտակցութեամբ, առանց խնդրելու, առանց ընդունելու որեւէ կառավարութեան, հրահանգները»։

Երդումէն ետք Քոլ յայտարարեց, թէ նուիրուելու համար ամբողջովին իր նոր պաշտօնին, կը հրաժարի երեսփոխանու թենէ եւ այլ պաշտօններէ։ Պանքայի առաջին վարիչը քսանըհինգ տարիէ ի վեր անգամ էր Ամերիկայի Երեսփ. ժողովին։

Ութսուն երկու դրօշներ կը ծածանէին Վիէննայի Քոնգերթհաուզի վրայ, նշան համագործակցութեան եւ բարեկամութեան։ Կարգացուեցան պատգամներ, կոչեր. «Ազատեցէք մեզ հիւլէական ռումբերու վտանգէն, խնայեցէք մարդկութեան, զուք որ հաւաքուած էք մարզկութեան կեանքը բարելաւելու մտահոգութեամբ»։ Ճափոնցի քաղաքական մարդիկ, զերման պիտուններ հիւլէական վտանգը ցոյց տուին եւ հրաւիրեցին պատասխանատուները վերջ տալու փորձերուն, օրէնքէ դուրս հռչակելու ռումբերու գործածութիւնը։

Պատուիրակ մըն ալ ներկայացուց հրկայական ծախքերը հիւլէական ռումբի պատրաստութեան համար, կազմածներու հաստատումին համար։ Ծախսուած գումարով կարելի էր բարելաւել երկրի բոլ նակէտութեան կենցաղը, եթէ խաղաղասիրական նպատակներու համար պատրաստուէր հիւլէական ուժը։ Ֆրանսացի բնագէտ Անտրէ Ֆիլիպիան յայտնեց, թէ Ֆրանսա ծախսած է 150 միլիառ ֆրանք եւ պիտի ծախսէ երեք հարիւր միլիառ ալ հնգամեայ ծրագիրը իրագործելու համար։ Ամերիկացի մասնագէտներ թիւեր ներկայացուցին, որոնք գլխու պտոյտ կը պատճառեն։

Պանքան պիտի կանայ ապահովել բոլոր երեք տարիներու ընթացքին ուրանիումի պէտքերը։ Ուրանիումի հանքերու մասին տեղեկութիւններ կը պահուին գաղտնի։ Ամերիկա, Անգլիա, Պելժիա, Զեխոսլովաքիա, Գանատա, Ֆրանսա, Պորթուկալ, Հարաւ. Աֆրիկա, Ռոտեզիա, Պրազիլ, Ինտոնեզիա, Հնդկաստան, Ճափոն, Նորվեգիա, Սպանիա, Պորթուկալ, Ռուսիա, Չինաստան, Պուլկարիա, Հունգարիա, Ռումանիա, Չեխոսլովաքիա, Լեհաստան, Արեւելեան Գերմանիա, Ալպանիա, Ֆինլանտա, Սուէտ, Նորվեգիա, Տանիմարք, Իսլանտա, Իռլանտա, Իսրայէլ, Իտալիա, Աւստրիա, Հոլանտա, Պելժիա, Լիպանան, Սուրիա, Իրան, Թուրքիա, Յունաստան, Եգիպտոս, Լիպիա, Մարոկ, Թունիս, Ալճերիա, Ֆրանսական Արեւմտեան Աֆրիկա, Պելճական Գոնկօ, Ռոտեզիա, Նիասալանտ, Հարաւ. Աֆրիկա, Պրազիլ, Արժանթին, Չիլի, Պոլիվիա, Պարակուա, Ուրուկուա, Մեքսիկա, Գուատեմալա, Գոստա Ռիկա, Նիկարակուա, Հոնտուրաս, Սալվատոր, Գուպա, Հայիթի, Տոմինիկան Հանրապետութիւն, Վենեսուէլա, Գոլոմպիա, Էքուատոր, Պերու

ԿՅՈՒՆՔ

ՅԱՂՈՒՏ ՎԱՀՍՈՅՈՎ

Գ.

— Ես ոչ մի բան չեմ ուզում, ոչ մի բան չեմ ուզում, — ասում էր Մելսենը, — ես միայն ուզում եմ, որ ինձ թողնեն ապրել այնպես, ինչպես ես եմ ուզում, ինչպես ես սովոր եմ ապրել, ինչպես ես ապրել եմ ամբողջ կյանքում, ինչպես ես ապրելու եմ մինչև իմ մահը, ինչպես ես ապրելու եմ մինչև իմ մահը, ինչպես ես ապրելու եմ մինչև իմ մահը

խորհրդային այլ ղեկավարներու մաս – նակցութեամբ :

Խրուշչեւ այնտեղ սկսաւ երգել «Մար – սէյեզ»ը, բոլոր ներկաները հետեւեցան իր օրինակին : Բաւական խմած էր եւ հա – կառակ սովորութեան, խորհրդային ղե – կավարներու եւ այլ դիւանագէտներու յատկացուած սրահը ձգելով, Խրուշչեւ խառնուեցաւ միւս մարդոց մէջ, անոնց ձեռքերը սեղմելով եւ զուարճախօսու – թիւններ ընելով ... :

Մանեչալ Վորոշիլովն ալ խօսք առնե – լով, յիշեց իրենց Սպուտնիկներուն ներ – կայացուցած արժէքը, չմոռնալով որ ի – րենք խաղաղութեան համախոհներ են :

—o—

ՆՈՐ ՎԱՐՁԱՊԵՏԻՆ ԾՐԱԳԻՐՆԵՐԸ

Ինչպէս յայտնի էր վարչապետ Կայեառ առաջին առթիւ ստիպուեցաւ փոխառու – թիւն մը ընել Ֆրանսայի Դրամատունէն : 250 միլիառի փոխառութեան մը իրա – ւունք տրուեցաւ իրեն առջի օր խորհըր – դարանին (Ազգ · Ժողովին Հանրապետու – թեան Խորհուրդ) կողմէ :

Ասկէ զատ Կայեառ բացառիկ իրաւա – սութիւններ կը պահանջէ Ազգ · Ժողովէն, տնտեսական հարցերու համար :

Հակառակ տրուած հաւաստիքներուն, արդէն իսկ յայտնի է որ ապրանքներու գիները պիտի բարձրանան : Կայ եւ ելեկ – տրականութիւն հարիւրէն երկու յաւե – լում, տնական զործիքներ (մենաժէ) 2էն չորս առ հարիւր, ածուխ 16 առ հարիւր, կաշի եւ մորթ տասնէն քսան առ հարիւր, խոզի միս երեսունէն վաթսուն ֆրանք, հաղուստեղէն երեքէն 13 առ հարիւր :

Նոյն ժամանակ Ֆելիքս Կայեառ կը քննէ նոր տուրքերու խնդիրը :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԻՆԿՐԻՏ ՊԵՐԿՄԱՆ եւ Ռոպերթօ Ռօ – սելլինի պաշտօնապէս հաղորդեցին իրենց բաժանումը առջի օր Հռոմի մէջ : Զոյգը ունի երեք զաւակ, յանձնուած՝ Ինկրիտ Պերկմանի խնամքին, պայմանաւ որ Ռոսելլինի ամսական 600 ·000 լիր վճա – րէ : Տղաքը մինչեւ 18 տարեկան իտալա – կան վարժարան պիտի յաճախեն :

ՄԱԿի մէջ Ալժերիոյ հարցին քննութիւնը յետաձգուեցաւ :

ՊԱՆՔ ՏԸ ՖՐԱՆՍԸ այս տարուան ըն – թացքին 680 միլիառ ֆրանք տրամադրեց կառավարութեան : 80 միլիառ՝ Մոլէի դահլիճին (1957 Մայիս), 350 միլիառ՝ Պուրժէս Մոնուրիի (1957 Յունիս) եւ 250 միլիառ ալ՝ Կայեառի :

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏԱՆ

ՎԻԷՆ · — Վասպուրականի Հայր · Մի – ութիւնը երկու հազար ֆրանք կը նուիրէ Մշակոյթի տան, փոխան ծաղկեպսակի Արշակ Աբրահամեանի մահուան առթիւ (Տէսին) : (Ստանալ «Յառաջ»էն) :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Տէր եւ Տիկին Արա Պարթեւեան կը ծա – նուցանեն թէ այս կիրակի, Ս · Յովհ · Մկրտիչ եկեղեցւոյ մէջ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի ի յիշատակ իրենց հօր Սիմոն Երամեանի, ինչպէս նաեւ Տի – կին Նեկտար Երամեանի եւ Տիկին Անժէլ Գասպարեանի յիշատակին :

Բարեկամներ կը հրաւիրուին ներկայ գտնուիլ :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Նիսի եւ շրջականներու Հայաստանեայց Առաքելական Կրօն · Ընկերակցութեան ընդհ · ժողովը 17 Նոյեմբեր, Կիրակի կէս օրէ վերջ, ժամը 15·30ին, Մատէնի Եկե – ղեցւոյ դպրոցին սրահը :

Օրակարգ · — Ա) Զեկոյց եւ հաշուե – տուութիւն, Բ) Հաշուեքննիչ Մարմնի ընտրութիւն, Գ) Վարչական ընտրու – թիւն նոր շրջանի համար :

Կրօն · Ընկերակցութեան վարչութիւնը կը հրաւիրէ իր բոլոր անդամ – անդա – մուհիները ներկայ գտնուելու սոյն ընդ – հանուր ժողովին :

Ի դիմաց Կրօն · Ընկերակցութեան
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԾԱՆՕԹ · — Անոնք որոնք կը փափաքին անդամ արձանագրուիլ եւ քուէարկելու իրաւունք ունենալ, կրնան Կիրակի օրե – րը բանկալը արձանագրուիլ եւ կամ ժո – ղովին օրը :

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԽՆՋՈՅՔ

«ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐ»ՈՒԱՅ ԱՌԹԻՒ

ՍԱՐՍԷԼԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ · Յ · Դ · «Վար – դան» ենթակոմիտէի եւ մասնակցու – թեամբ Կապոյտ Խաչի մասնաճիւղին եւ Նոր Սերունդի խումբին :

ՆՈՅԵՄԲԵՐ 17ԻՆ

ԻՍԻԻ ՄԷՋ

ՆՈՅԵՄԲԵՐ 17ԻՆ

Մանրամասնութիւնները յաջորդով :

Ժամկոչեան եղբայրներ (Լիոն), Յով – հաննէս Հայթայեան (Ամերիկա), Այրի Տիկին Վերոնիքա Այնաւորեան (Ամերի – կա), Տէր եւ Տիկին Մանուկ Հայթայեան (Սէնթ Էթիէն), Տէր եւ Տիկին Գեղամ Ստեփանեան եւ զաւակները (Վալանս), Պ · Պօղոս Գալուստեան եւ զաւակները (Լիոն), Այրի Տիկին Եղսա Ժամկոչեան եւ զաւակները (Մարսէյլ), Տէր եւ Տիկին Եղիա Սահակեան եւ զաւակները (Կար – տան) սրտի խոր կսկիծով կը ծանուցանեն իրենց մօր, քրոջ, հօրաքրոջ, զարմու – հիին, ներոջ եւ ազգականին՝

ՄԱՐԳԱՐԻՏ ԺԱՄԿՈՉԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ չորեքշաբթի, Նոյեմբեր վեցին, ժամը 20ին :

Յուղարկաւորութիւնը պիտի կատար – ուի, այսօր՝ շաբաթ, ժամը 10·15ին, Լիոնի Հայոց եկեղեցին, 69 րիւ Լուի Պը – լան, ուրկէ մարմինը պիտի փոխադրուի Քրուա Ռուսի գերեզմանատունը :

Մասնաւոր մահազդ չստացողներէն կը խնդրուի ներկայս իբր այդ նկատել :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

×Սէն Ժերոմի (Մարսէյլ) Թաղ · Խոր – հուրդը, Թաղեցի Այրի Տիկին Նարդուհի Համալեանի տխուր մահուան առթիւ, խորին շնորհակալութեամբ ստացած է փոխան ծաղկեպսակի հետեւեալ նուէր – ները, ի նպաստ Թաղիս եկեղեցւոյ պայ – ծառութեան : Պ · Աստուր Համալեանէ երկու հազար ֆրանք, Պ · Յովհաննէս Զուրիկեանէ 1500, Տիկին Մարիամ Սու – վաղեանէ, Պ · Պ · Սուրէն Մխաղեանէ, Կարապետ Քաչեանէ, Պետրոս Զինիչեա – նէ, Նշան Թումիկեանէ, Տէր եւ Տիկին Պետրոս Ալոյեանէ հազարական ֆրանք, իսկ Պ · Պ · Յարութիւն Նիկողոսեանէ, Լե – ւոն Թումիկեանէ, Լուի Թումիկեանէ, Մինաս Պօղոսեանէ, Պօղոս Պօղոսեանէ, Սարգիս Պօղոսեանէ (Սէն Ժիւսթ), Լեւոն Ապաճեանէ, Համբար Քաչեանէ 500ական ֆրանք :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Լիոնի Եկեղեցասէր Երիտ · Միութիւնը, Լիոնի եկեղեցւոյ շինութեան ի նպաստ պարահանդէս մը կազմակերպած է, Դեկ – տեմբեր մէկին, ժամը 16էն մինչեւ կէս գիշեր, Թէք տ'Օրի Շալէ տիւ Փարքի շը – քեղ սրահներուն մէջ : Այժմէն իսկ բոլոր հայ գեղարուեստասէրները եւ բարեսէր – ները կը հրաւիրուին ապահովել իրենց սեղանները :

× Կը խնդրուի Լիոնի եւ շրջաններու բոլոր ազգային կազմակերպութիւններէն այս թուականը նկատի ունենալ :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ի գիտութիւն Մարսիլահայ հասարա – կութեան կը ծանուցանենք թէ՝ Պոմոնի Թաղ · Խորհրդոյ եւ Դպրաց Դասու կար – գադրութեամբ, այս կիրակի, կէսօրէ վերջ ժամը 3ին կազմակերպուած է ուխ – տագնացութիւն մը, Հոգելոյս առաջնորդ Տէր Գրիգորիս Ս · Եպիսկ · Պալաքեանի գերեզմանին վրայ հոգեհանգստեան պաշ – տօն մը կատարելու համար : Այս առթիւ կը հրաւիրենք հայ ժողովուրդը, ներկայ գտնուիլ եւ յարգանքի բաժինը բերել այս շինարար Սրբազանի յիշատակին :

Հաւաքոյթի վայր նշանակուած է Սէն Փիէր գերեզմանատան մեծ դրան առջեւ ժամը երեքին :

ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՊՈՄՈՆԻ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ

ԱՎԻՆԵՈՆԻ ՄԷՋ

Կազմակերպութեամբ Հ · Յ · Դ · Մու – րատ խումբին :

Կը տօնուի այս կիրակի, երեկոյեան ժամը 9ին, Բիւտպի Պար, Լա Փոնթէ :

Կը բանախօսէ ընկ · Ժ · ՄԻՐԻՃԵԱՆ

Գեղարուեստական բաժին, մասնակցու – թեամբ Հ · Յ · Դ · Նոր Սերունդի (Մար – սէյլ) :

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Սէն Ժերոմի Թաղ · Խորհուրդս, իր խո – րին ցաւակցութիւնները կը յայտնէ Տէր եւ Տիկին Աստուր Համալեանի, իր զա – ւակներուն, եւ մօտաւոր պարագաներուն, իրենց մօր, մեծ մօր եւ ազգականին, Այ – րի Տիկին Նարդուհի Համալեանի տխուր մահուան առթիւ :

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԱՑՐ ԵԿԵՂԵՑԻ

Կրօնական Ընկերակցութիւնը կը ծա – նուցանէ որ այս կիրակի Կաթ · պատարա – գը՝

ՍԵՐՈՎԲԷ ԵՊԻՍԿ · ՄԱՆՈՒԿԵԱՆ

պիտի նախագահէ արարողութեանց եւ քարոզէ :

Կը մասնակցի երկսեռ երգչախումբը :

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՓԱՐԻԶ · — Հ · Յ · Դ · «Փոթորիկ» խում – բին ժողովը, այս հինգշաբթի, ժամը 9ին, 17, րիւ Պլէօ :

ՄԱՐՍԷՅԼ · — Հ · Յ · Դ · Պոմոնի «Զա – ւարեան» ենթակոմիտէի վարչութիւնը ընդհ · ընկերական ժողովի կը հրաւիրէ ենթակոմիտէի եւ «Յառաջ» խումբի բո – լոր ընկեր եւ ընկերուհիները : Այս Շա – բաթ երեկոյ ժամը 9ին, սովորական հաւաքատեղին : Օրակարգ՝ Ա · Ներկայա – ցում, Բ · Գրադարան ընթերցարան եւն · : Պարտաւորիչ ներկայութիւն :

ՓԱՐԻԶ · — Ֆ · Կ · Խաչի մասնաճիւղի ընդհ · ժողովը այս Շաբաթ կէս օրէ վերջ ժամը 4ին, Քաֆէ Բէժանի մէջ :

Բոլոր ընկերուհիներու ներկայութիւնը անհրաժեշտ է : Խիստ կարեւոր օրակարգ · — Պարահանդէսի հարցը :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Մարսէյլի Ամասիոյ Հայր · Միութեան տարեկան պարահանդէսը, մեծ պատ – րաստութեամբ 7 Դեկտեմբերին, շաբաթ գիշեր, Ալհամպրայի շքեղ սրահներուն մէջ :

Imprimé sur les presses du journal HARATCH
—— 17, Rue Bleue, 17 — PARIS (9e) ——

BOXE - ԱՅՍ ԿԻՐԱԿԻ ԺԱՄԸ 15ԻՆ

"CENTRAL SPORTING CLUB"

57, FBG. SAINT DENIS - MÉTRO : STRASBOURG ST. DENIS

ԹՈՒՐՔԻՈՅ ԱԽՈՅԵԱՆ ԿԱՐՊԻՍ ՉԱՔԱՐԵԱՆ

ԸՆԴԴԷՄ ՊՐԱԶԻԼ ՔԵԹԱՆԻԻ

ԿԱՐՊԻՍ ՉԱՔԱՐԵԱՆի միակ մրցումը Փարիզի մէջ, Պրազիլիա մեկնումէն առաջ

ՄԵԾ ԵՐԵԿՈՅԹ - ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՇԱՒԻԼԻ ԵՐԻՏ · ԵԿԵՂԵՑԱՇԷՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ ԿՈՂՄԷ

Բարձր հովանաւորութեամբ Հայր · Պատրիարք Տ · ՍԵՐՈՎԲԷ եպիսկ · ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

Կիրակի, 10 Նոյեմբեր, ժամը ճիշդ 4ին, մինչեւ կէս գիշեր, Շաւիլի քաղաքապե – տարանի սրահին մէջ :

Յուցադրութիւն գեղեցիկ եւ գունաւոր ֆիլմ մը Շաւիլի եկեղեցիին շինութեան մինչեւ աւարտումը :

ՄԵԾ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ Երիտ · յանձնախումբի կողմէ

Շէյքսփիրէն (հայերէն թարգմանուած) — «ԸՆՏԵԼԱՑՈՒԱԾ ՄԵԳԵՐԱՆ »—

8էն եւրոպական պարեր ղեկավարութեամբ

Orchestre Typique DON MORERTO

Ճոխ պիւֆէ Սալ տէ Ֆէթ Րիւ Սթալինկրատ : Մուտք 300 ֆր ·

Օթօպիւս 171 թիւ Փոն տը Սեվրէն իջ – նել Փիւի Սան վէն :

ԱԼՖՈՐՎԻԼԻ ՀԱՅ ՄԱՐԶԱԿԱՆԻ

ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

16 Նոյեմբեր, Շաբաթ գիշեր ժամը 9էն մինչեւ լոյս

Քաղաքապետարանի սրահին մէջ Րիւ Վօլթէր

avec BORIS et son célèbre Orchestre Typique

Հայկական եւ ընտանեկան մթնոլորտ Գեղարուեստական խնամուած բաժին

ՄՈՒՏՔ 400 ՖՐԱՆՔ

Հիմնադիր–Տնօրէն ԳՐԻԳՈՐ ԹԵԽԱՆԵԱՆ

ՃԱՇԱՐԱՆ ԵԱՐ

Ֆրանսական – հայկական եւ կովկաս – եան ընտիր կերակուրներ

4, RUE ROBERT - ETIENNE
(Rue Marbeuf) PARIS - 8e

TÉL. : BAL. 31-21

ՇԱՆ ԶԷԼԻԶԷԻ ՍՐՏԻՆ ՎՐԱՅ

Métro : F. D. Roosevelt

Հաճելի մթնոլորտ

Առաջնակարգ կովկասեան խորոված – ներ, «շաշլիք», «քարսքի»

Bar Américain



ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925 — Tél. : PRO. 86-60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. PARIS 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամս. 1600

Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք : Հատը 12 ֆր.

ԿԻՐԱԿԻ 10 ՆՈՅԵՄԲԵՐ

DIMANCHE 10 NOVEMBRE 1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8040 — 33e ANNEE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3841

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Յիսուն տարի առաջ, 1907 Նոյեմբեր 11ին (հին տոմարով Հոկտեմբեր 29ին) Էջմիածնի մէջ իր աչքերը յաւիտենութեան կը փակէր Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա. Խրիմեան՝ Հայոց Հայրիկը : Ութսունեւօթը տարեկան էր :

Շատ քիչ մահկանացուներու է տրուած ապրիլ կեանք մը ա՛յնքան փոթորկալից ու բեղմնաւոր՝ որքան եղաւ Վասպուրականի արծիւինը :

Ծնած պատմական Հայաստանի սրտին՝ Վանի մէջ, հօրմէն որբացած՝ երբ հազիւ աչքերը բացած էր կեանքին, Խրիմեան կոչուած էր Հայոց ժամանակակից պատմութեան մէջ կատարելու դեր մը, որ անմոռանալի ու յաւէտ յիշատակելի պիտի մնայ :

Զբօսնելով Աղթամարի, Լիմի եւ Կտուցի անապատներուն մէջ ստացած նախնական կրթութիւնով, անիկա իր ուսման ծարաւը յագեցնելու համար գնաց Պոլիս, արեւմտահայութեան լոյսի փարոսին :

Տարի մը վերջ վերադառնալով Վան, ամուսնացաւ եւ ունեցաւ աղջիկ մը :

Սակայն ընտանեկան շրջանակը նեղ կու գար երիտասարդ Մկրտիչին, որուն հայրենարաղձ հոգին կ՚ընդվզէր աւելի լայն հորիզոններ : Իր երկու աշակերտներուն հետ ուխտագնացութիւն մը կատարեց դէպի Արարատ, Շիրակ ու Գողթան, այցելեց Անիի աւերակները եւ Հայաստանի նշանաւոր յիշատակարանները :

Այս ճամբորդութենէ վերադարձին է, որ գրեց Հրաւիրակ Արարատեան տապաշխարհ հայրենաշունչ բանաստեղծութիւնը, որ լոյս տեսաւ 1850ին Պոլիս՝ իր բարերար Յով. Այվազեանցի ծախքով :

Որքան հայրենասէր նոյնքան կրօնասէր՝ երիտասարդ ուսուցիչը 1850ին այցելեց Երուսաղէմ եւ սուրբ վայրերը եւ 1851ին հրատարակեց Իրաւիրակ երկրին աւետեացը՝ Պալեան Ամիրայի մեկենասութեամբ :

Այս երկու բանաստեղծութիւններուն շնորհիւ Խրիմեան շուտով ծանօթ դէմք մը դարձաւ Թուրքիոյ մայրաքաղաքին մէջ եւ 1852ին Տատեան Յով. Ամիրայի կարգադրութեամբ գնաց Սիս, Կիլիկիոյ մայրավանքին մէջ դպրանոց մը բանալու նպատակով :

Յաջորդ տարին վերադարձաւ Վան, ուր մայրը, կինը ու աղջիկը մեռած էին արդէն :

Բոլորովին կտրուած աշխարհիկ կեանքէ՝ 1854 Փետրուար 14ին Աղթամարի մէջ ձեռնադրուեցաւ վարդապետ՝ իբրեւ միաբան Վարագայ վանքին :

Այնուհետեւ իր կեանքը ամբողջովին նուիրեց ազգին, մանաւանդ գաւառի տառապող հայութեան, որուն հանդէպ պաշտամունք ունէր :

1855ին զինքը կրկին կը գտնենք Պոլիս, իբրեւ քարոզիչ Սկիւտարի Ս. Խաչ եկեղեցիին ու հոն կը սկսի հրատարակել Արծուի Վասպուրականի ամսաթերթը : Յաջորդ տարին Վան կը վերադառնայ՝ իբրեւ վանահայր Վարագայ վանքին : Հոն կը հիմնէ դպրոց՝ գիւղական վարժապետներ պատրաստելու ու տպարան՝ Արծուի Վասպուրականին համար :

Րաֆֆի, որ 1857ին Վարագայ վանքին մէջ այցելած է Խրիմեանին, կ՚ըսէ թէ՝ « ո՛չ մի անձնում չէի տեսած այդպիսիկան հոգին այնպէս կենդանի, որպէս այդ արժանապատիւ կրօնաւորի մէջ » :

Շատ երիտասարդ էր, հազիւ 35 տարեկան, երբ հայ ժողովուրդը իրեն տուաւ Հայրիկ տիտղոսը :

Եօթը տարի (1862 – 69) վարեց Տարօնի առաջնորդութիւնը եւ Ս. Կարապետի մէջ հրատարակեց Արծուիկ Տարօնոյ թերթը : Չորս տարի (1869 – 1873) բազմեցաւ Պոլսոյ պատրիարքական աթոռին վրայ :

Գաւառի հարստահարութիւնները իր օրով բուռն արձագանգ գտան Պոլսոյ Ազգային ժողովին մէջ : Ինք մարմնացումն էր գաւառի նահատակեալ ժողովուրդին : Հայկական Դատի աննկուն ախոյեանը :

Պերլինի վեհաժողովին առջեւ ինքն էր Թրքահայութեան պահանջատէրը : Ձեռնունայն վերադարձաւ, սակայն երկաթէ շերեփ քարոզեց մայր եկեղեցւոյ բեմէն :

Յեղափոխական կուսակցութիւնները կազմուեցան՝ երկաթէ շերեփով ձեռք բերելու համար Հայաստանի անկախութիւնը, քանի որ ո՛չ մէկ յոյս կար օտարներէն :

Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուեցաւ 1892 Մայիս 5ին՝ երբ 72 տարեկան էր արդէն : 1903ին կուրծք տուաւ ցարական ոտնձգութեանց դէմ եւ յաջողեցաւ փրկել Էջմիածինը :

Համեստ, գաւառացի ուսուցիչի աստիճանէն բարձրացաւ մինչեւ Գրիգոր Լուսաւորիչի գահը : Դարձաւ Հայոց անմահելի «Հայրիկ»ը : Իբրեւ մաքուր, անբասիր ու անկաշառ եկեղեցական՝ սիրուեցաւ բոլորէն : Իբրեւ խիզախ ու յանդուգն հայրենասէր՝ անվախ պաշտպանեց հայութեան անկորնչելի իրաւունքները սուլթաններու եւ ցարերու ոտնձգութեանց դէմ :

Իր կեանքը ինչպէս մահուանէն, այսօր եւս ներշնչումի անսպառ աղբիւր մըն է պատառտենչ հայութեան համար :

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԱՄԵՐԻԿԱ ՊԻՏԻ ԱՐՁԱԿԷ ԻՐ ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԱՐԲԱՆԵԱԿԸ

ԱՅԶԸՆՀԱՈՒԸՐԻ ՃԱՌԻՆ ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐԸ

Ինչպէս գրած էինք, Նախագահ Այզընհաուըր ճառ մը արտասանեց, առաւելապէս ծանրանալով գիտութեան եւ ամերիկացի ժողովուրդին ապահովութեան վրայ : Ըստ երեւոյթին, Նախագահին խօսքերը լաւ տպաւորութիւն ձգած են : Ամերիկեան շրջանակները ներկայիս կը սպասեն Այզընհաուըրի նախատեսած արդիւնքներուն : Ինչպէս ծանօթ է, գիտական աշխատանքները հիմնովին բարեփոխուեցան, կեդրոնաձիգ գործունէութեան ուղեգիծի մը հետեւելու համար : Յատկապէս ստեղծուած գրասենեակին տնօրէնութիւնը յանձնուեցաւ Տօքթ. Քիլեանի, գիտնականներու հաւանութեամբ : Քիլեան անմիջապէս կը ձեռնարկէ իր պաշտօնին :

Այս ուղղութեամբ, ամերիկեան քաղաքական շրջանակներուն կարծիքը ընդհանրապէս լաւ է : Ծերակուտական Ճոնսըն կը սպասէր որ Նախագահին յայտարարը աւելի առաջ հրապարակ դրուէր, մինչ Սթիվենսըն գոհ է, որ նախագահը կ՚առաջարկէ գործակցիլ Դաշնակիցներուն հետ՝ գիտական մարզին մէջ : Երեսփոխաններու եւ ծերակուտականներու կարծիքը այն է, թէ Այզընհաուըր ի վիճակի է հարկ եղած միջոցները ձեռք առնելու՝ ներկայացած կացութեան առջեւ :

Կարգ մը շրջանակներ կը յայտնեն, թէ գիտական գաղտնիքները դաշնակիցներուն հաղորդելով հանդերձ, Ամերիկա իրեն պիտի պահէ որոշ գաղտնիքներ :

Միւս կողմէ, ամերիկեան բանակը հրահանգ ստացաւ՝ օգտագործելու համար միջերկրային «Արամազդ» հրթիռը, արուեստական արբանեակ մը արձակելու համար :

(Շարունակութիւնը կարդալ .Դ. էջ)

ԱՆԳԼԻԱ ՄԵՐԺԵՑ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ

Անգլիոյ Արտ. Նախարարը Ալլըն Լլոյտ «զապաթ»ներու համաժողով մը ընելու խորհրդային առաջարկը մերժեց, յայտարարելով թէ ներկայ պայմաններուն մէջ այդ ժողովը միայն ձախողութեան կրնար դատապարտուիլ :

Լոյտ ճշդեց, թէ Անգլիա խորքին մէջ համաձայն է նման խորհրդաժողովի մը գաղափարին, պայմանով որ նախապատրաստական աշխատանքներ ըլլան, այլապէս՝ ժամանակի կորուստ պիտի ըլլայ :

Ընդհանրապէս, Աշխատաւորներու պաշտօնաթերթը կը գրէ, թէ Արեւմուտքը պէտք է ընդունի Խրուշչեւի առաջարկը :

× Նուկոսլաւիոյ Արտաքին Նախարարութեան բանբերը յայտարարեց, թէ Պելկրատ միշտ համաձայն եղած է սեւտական մարզոց համաժողովի մը գաղափարին, նկատելով որ այդ ձեւով կարելի է միջազգային լարուած կացութիւնը մեղմացնել եւ բարդ հարցերը լուծել : Հետեւաբար՝ Թիթօ համաձայն է Խրուշչեւի առաջարկին :

× Բրիտանական Արդիւնաբերութեան նախարարութիւնը հաղորդագրութիւն մը հրատարակեց, որ կը յայտնէ թէ անգլիական ջրածնի ռումբի մը փորձը կատարուած է Խաղաղականին բացերը :

ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ ՆԱՒԱՏՈՐՄԻՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ՝ ՊԷՅՐՈՒԹԻ ՄԷՋ

Ամերիկեան Վեցերորդ Նաւատորմին պատկանող երեք ռազմանաւեր հասան Պէյրութ, ուր պիտի մնան տասը օր : Նաւատորմին հրամանատարը՝ Ծովակալ Պրաուն, տեսակցութիւններ պիտի ունենայ Լիբանանի քաղաքական դէմքերուն հետ :

Դամասկոսի թերթերէն մէկը կը գրէ.— Պրաունի յանկարծական այցելութիւնը ուժի ցուցադրութիւն մըն է, որ կոչուած է առաջքն առնելու Յորդանանի մէջ ծագելիք յեղափոխութեան :

Միւս կողմէ «Քանպերա» ռազմանաւը հասաւ Պոլիս, ուր պիտի մնայ մինչեւ Նոյեմբեր 19 :

× Լիբանանի մէջ վերջերս բազմաթիւ միջադէպեր պատահեցան : Ահաբեկիչները փորձեցին Խորհրդարանը օդը հանել՝ ձախողութեան մատնուելով : Ջերմակալուած են վաթսուն հոգիներ, որոնց տասնըչորսը՝ սուրիացի : Ինչպէս ծանօթ է, վերջին ամիսներուն Լիբանանի եւ Յորդանանի մէջ կատարուեցան խափանարարական բազմաթիւ արարքներ, որոնք պատճառ դարձան միայն երկու հոգիի վիրաւորման :

× Դամասկոսի ձայնասփիւռը հաղորդեց, թէ թրքական ռմբարտակ մը կրակ բացաւ սուրիական ճաքարա գիւղին վրայ, որ կը գտնուի սահմանագլուխին մօտ : Ոչ մէկ պատճառ կար՝ որ Թուրքերը նման միջոցի մը դիմէին : Ներքին ապահովութեան ուժերն ու գիւղին բնակչութիւնը պէնքի դիմեցին, տեսնելով որ Թուրք զինուորները կրակը դադրեցնեն : Այս մասին Թուրքերը ոչ մէկ բացատրութիւն տուին : Հակառակ անոր որ դիմադարը տեւած է մօտ մէկ ժամ, ցարդ չըյայտարարուեցաւ թէ քանի՞ զոհ կայ : Ձայնասփիւռը աւելցուց, թէ թրքական վեց օդանաւեր թռիչք կատարեցին սուրիական հողամասին վրայ :

× Դամասկոսի մէջ սկսաւ ասիական ու ափրիկեան 25 երկիրներու պատուիրակներու համաժողով մը, որ պիտի տեւէ մինչեւ Նոյեմբեր տասը :

× Սուրիոյ Հանրապետութեան Նախագահ Քուաթլի յայտարարեց, թէ իրենց բողոքը միշտ կը պահեն Թուրքիոյ նկատմամբ, այնքան ատեն որ թրքական բանակները չեն հեռացած սահմանէն :

× Իսրայէլի եւ Սուրիոյ սահմանագլուխին վրայ ծանր միջադէպեր պատահեցան. 40 վայրկեան տեւող կռիւ մը եղաւ : Զոհերուն թիւը ծանօթ չէ :

× Յորդանանի գիւղերուն եւ քաղաքներուն մէջ հակաեգիպտական բազմաթիւ ցոյցեր եղան, բողոքելու համար Սուրիոյ եւ Եգիպտոսի հակայորդանանեան քարոզչութեանց դէմ : Ինչպէս ծանօթ է, վերջերս Գահիրէի եւ Ամմանի ձայնասփիւռները զիրար կը դատապարտէին, Իսրայէլի հետ գործակցելու մեղադրանքով :

Օրէ Օրին

ԲԱՆՏԱՐԿԵԱԼ ՊԻՏԻ ՉՄՆԱՐ...

Վա՛ռ լոյսերու մէջ կը ծփայ Մոսկուան՝ հոկտեմբերեան յեղափոխութեան քառասնամեակին առիթով :

Հրավառութի՛ւն, զինուորական շքերթ, զինաքրո՛ւնք կրեմլինի մէջ...

Ներոնի օրերը յիշեցնող այս ճոխութեանց ետին, ի՛նչ կ՚ընէ ժողովուրդը .

— Զլսեցի՞ր. ընկեր Խրուշչեւը ժողովուրդին մասին ալ մտածեր է :

— Ժողովուրդի՞ն մասին :

— Հապա՛, ի՞նչ կը կարծէիր : Հոկտեմբերեան յեղափոխութեան տարեդարձին առիթով Նախագահից Խորհուրդը (Պրեզիտիում) ներում կը շնորհէ մինչեւ երեք տարուան բանտարկեալներուն, իսկ մեծ յանցաւորներուն պատիժը կէս առ կէս կը զեղչէ :

— Ուրեմն ...

— Սպասէ՛, դեռ չվերջացաւ. բանտարկեալ յղի կիները կամ ութ տարեկանէն վար զաւակ ունեցող մայրերը, ինչպէս նաեւ վաթսունը անց մարդերը, յիսունհինգը անց պառաւները եւ 16 տարեկանէն վար... բանտարկեալները առանց ձգձգումի ազատ պիտի արձակուին :

— Ըսել է Խ. Միութեան մէջ յղի կիներ եւ 16 տարեկանէն վար պատանիներ, եւ ինչո՞ւ չէ, մանուկնե՞ր ալ բանտարկուած են :

— Վերջապէս... բայց ... ազատ պիտի արձակուին, եղբա՛յր, այս ուրախ լուրին մէջ ալ անպայման տխուր բա՞ն մը պիտի գտնէք :

— Քա՛ւ լիցի, ես միշտ ուրախ կ՚ըլլամ երբ բանտերու դռները բացուին... Խ. Միութեան մէջ :

— Այդպէս պէտք է ըլլալ :

— Սա՛ ձեւով, քանի որ Նախագահից խորհուրդին պաշտօնական հրամանագիրն է ան, այսօր բանտարկեալ չէ մնացած Խ. Միութեան մէջ :

— Անշուշտ, այդ հրամանագիրը ի զօրու չէ քաղաքական բանտարկեալներու համար ...

— Հա՛, ըսել . այդպէ՛ս... ուրեմն ըսէ՛, թէ այդ հրամանագիրը երբե՛ք ի զօրու չէ խորհրդայ. բանտարկեալներուն համար, քանի որ Կարմիր բանտերուն յաւիտենակա՞ն բնակիչները քաղաքական յանցաւորներ են միայն :

ԱՐՄԵՆԱԿ

ՁԻՆԱԴԱԴԱՐԻ տօնին առթիւ Յառաջ լոյս չի տեսներ երեքշաբթի : Մեր յաջորդ թիւը՝ Չորեքշաբթի :

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ ՀԵՏ

ԽՄԲ. — Հայաստանի ծանօթ բանաստեղծներէն Վաղարշակ Նորենց, վերի խորագրին տակ հրատարակած է յատուած մը իր յուշերէն: Ստորեւ՝ կարգ մը քաղուածքներ:

Եթէ չեմ սխալւում, 1922 թ. ամառը Եղիշէ Չարենցը Երեւանից եկաւ Թիֆլիս՝ Մոսկուա մեկնելու համար: Այդ ժամանակ էլ Վահան Տէրեանի անուան «Հայաստանը» (Հայ արուեստի տուն) Նրա հետ ինձ ծանօթացրեց Գարեգին Լեւոնեանը: Կարճահասակ, ուղղեկական թաշակը գլխին, վառ կարմիր վերնաշապիկով, ոլորուն ծոպաւոր գօտի կապած՝ նա իմ վրայ թողեց արտակարգ տպաւորութիւն: Նրա անուան հմայքը, որոշ չափով, կարծես մշուշուեց այդ տարօրինակ արտաքինի թողած տպաւորութիւնից: Բանաստեղծի իրական դէմքն էլ չէր ներդաշնակում իմ երեւակայութեան մէջ կազմուած մտապատկերին: «Չարենց-Նամէ» ում հօր դէմքը նկարագրող երկու տողը չատ ճիշդ տուել են նաեւ իր՝ Չարենցի դիմանկարը.

«Նրա դէմքը՝ արծաթէ ափսէ,
Վրան քիթը՝ կեռ մի դանակ ...»:

Այդ «արծաթէ ափսէ, դէմքը, «կեռ դանակ» քթով, փոքր, սակայն արտակարգ աչխուժով լի աչքերով դէմքը չատ էր տպաւորիչ եւ առինքնող:

×

Չարենցի գլխով մեծ փորձութիւններ անցան: «Իրերի դժբախտ բերումով» նա ընկաւ Երեւանի ուղղիչ տունը: Այդ դժբախտութիւնից անմիջապէս յետոյ տեղի ունեցաւ աւելի մեծը, վախճանուեց բանաստեղծի կինը, Արփիկը, բարձր առաքինութիւնների տէր մի կին, որ անձնուրաց սիրով սիրում էր Չարենցին եւ կախարդող ազդեցութիւն ունէր նրա վրայ: Չարենցն էլ, չնայած իր բուռն խառնուածքին եւ երիտասարդական «դժուութիւններին», չատ էր կապուած նրան եւ սիրում էր խոր ու հոգեւին: Այդ երկու ծանր դժբախտութիւնները հոգեպէս ընկճեցին նրան, եւ նա սկսեց անզոր ու հանգիստ որոնել...

Երեւանի ուղղիչ տնից դուրս գալուց յետոյ նա լոյս ընծայեց իր հռչակաւոր «Ռուբայաթ»ը, մի նոր փայլուն էջ, մի նոր ժանր իր բազմահարուստ ստեղծագործութեան մէջ: Դրանից յետոյ էր, որ մի չաբաթով Տփլիսէ՛ն եկաւ հանգստանալու: Մի ամբողջ չաբաթ միասին էինք: Իմ պաչտօնական աչխատանքից ազատ ժամերին մենք թափառում էինք Դիլիջանի չրջակայ անտառներում եւ զրուցում գրականութեան մասին: Նա ինձ կարդաց իր մի անտիպ պոեմը՝ «Տէ փրոֆոնիս» խորագրով: Այդ պոեման իր մտայղացմամբ եւ ծանր խոհականութեամբ ընկճող տպաւորութիւն գործեց ինձ վրայ... Չարենցի ստեղծագործութեան մէջ ապրում էր ինչ որ փառաւոր մահական մտածութեան պէս մի բան: Երկու մեծ փորձութիւնները արտայայտուել էին պոնում բանաստեղծի ստեղծագործութիւնների մէջ: Պոեմի ընթերցումից յետոյ, ես ընկճուած, լուռ սպասում էի...

— Դաժան բան է կեանքը, չէ՞, — խօսեց նա լռութիւնը, — ո՞վ գիտէ, թէ իրեն ինչ անակնկալներ են սպասում կեանքում... խելքից — մտքից դուրս բաներ... դու դեռ չատ ջահել ես ...

Ես նրան առարկեցի, որ թէպէտեւ «չատ ջահել» եմ, իմ կեանքում էլ չատ դաժան անակնկալներ են եղել, միթէ՞ նրան յայտնի չէ իմ մանկութիւնը:

— Ա՛յդ մանկութեանդ օրերին է եղել: Քո հասակի բերումով դու ամբողջ խորութեամբ, սրտով ու մտքով չես վերապրել կորուստի ցաւը, չես գիտակցել դժբախտութիւնը... Երբ գլխի ես ընկել, թէ ինչ է կատարուել, ամէն ինչ արդէն եղել է աղօտացա՛ծ, մեղմացա՛ծ, չատ բան էլ մոռացուած ...

Այդ ուղղութեամբ երկարած զրոյցից ես եկայ այն տխուր եզրակացութեան, որ նրա վիշտը դեռ անամոք էր եւ երկար ժամանակ չէր ապաքինելու:

Ես նրան ծանօթացրի իմ սիրած աղջկան, ապագայ կնոջս՝ Մարգոյի հետ, եւ մի քանի անգամ միասին պտոյտ արեցինք անտառում:

— Բանաստեղծների հետ եօլա գնալը դժուար է, հա՛, նրանք չատ դժուութիւններ են անում, չէ՞ք, — ասաց նա Մարգոյի մի պտոյտի ժամանակ:

— Նորենցը դժուութիւններ չի անում, — պատասխանեց ընկերուհիս:

— Այսօր չի անում, վա՛ղը կ՚անի, նայած թէ ինչպէս կը դաստիարակէք գործը.. Դուք չթուլացնէք սանձը, — առարկեց Չարենցը ծիծաղելով:

— Ես նրան չեմ սանձում:

— Է՛, որ այդպէս է, վա՛յ ձեզ... եւ եւ բանի՛ Նորենցին:

Մօտաւորապէս երկու տարի յետոյ կեանքն ինձ ցոյց տուեց իրօք որ մի «դաժան անակնկալ»: Մահացաւ իմ Մարգոն՝ ինձ յանձնելով անփարատ մորմոքի: Ես այդ ժամանակ ամբողջ խորութեամբ ըմբռնեցի Չարենցի խօսքերի իմաստը: Չարենցն այդ ժամանակ ապրում էր Լենինգրադում եւ գրում էր «Էպիքական լուսաբաց»ի անմահ էջերը: Լենինգրադից վերադառնալով, նա լոյս ընծայեց այն «Էպիքական լուսաբացում» հետքն անգամ չկար այն մռայլ տրամադրութեան, որ նա արտայայտել էր «Տէ փրոֆոնիս»-ում: Չարենցի ստեղծագործութեան մէջ սկսուել էր խաղաղ, պայծառ մի լուսաբաց: Այդ գիրքը աննման սփոփանք եղաւ ինձ համար: Դրա անմիջական արձագանքը եղաւ իմ «Պայքար» խորագրով բանաստեղծութիւնը՝ «ընկերուհուս, մանկահասակ Մարգոյի մահուան առթիւ, նամակ՝ գրուած Եղիշէ Չարենցին, «Էպիքական լուսաբաց»ը կարդալուց յետոյ»:

Երբ նա կարդաց այդ բանաստեղծութիւնը՝ գգուեց, տխրեց մի պահ, ապա ասաց, — «Յիշում եմ... չատ լաւ աղջիկ էր քո Մարգոն ...»:

— Քո Արփիկի պէս, — պատասխանեցի ես ու երկուսով տխուր լռեցինք:

Դիլիջանում չմնաց ոչ մի բան, որ ինձ պահէր այնտեղ: Ես տեղափոխուեցի Երեւան: Չարենցն էլ Երեւանում էր, աչխատում էր Պետհրատում, որպէս գեղարուեստական բաժնի վարիչ: Հիմա արդէն հանդիպումները ամենօրեայ էին:

Չարենցը չատ էր սիրում հրատարակչական գործը եւ ահագին ուժ ու ժամանակ էր նուիրում դրան: Խորհրդային գրականութիւնը բուռն վերելքի մէջ էր. գրականութեան երիտասարդ սերունդը հասունանում էր եւ առնականանում. նախախորհրդային սերունդը ընդհուպ մօտեցել էր արդիականութեանը: Պետական Հրատարակչութիւնը լայն թափ տալով խորհրդային գրողների երկերի հրատարակութեանը, միաժամանակ սկսել էր հրատարակել մեր դասական գրողների ստեղծագործութիւններն ու թարգմանական գրականութիւն: Չարենցը ջերմ սիրով եւ օրինակելի բարեխղճութեամբ նուիրուած էր այդ գործին: Նա չատ մեծ ջանք էր գործադրում, որ հրատարակուող գիրքը արտաքուստ էլ՝ տպագրութեամբ, ձեւաւորումով լինի գրաւիչ եւ գեղեցիկ:

— Ա՛յ տղայ, — մի անգամ ասաց նա, — դու պատկերացնո՞ւմ ես մի գեղեցիկ կին՝ փնթի հագնուած, բշտէ գիրքն էլ էդ պէսի բան է ...

Նրա ջանքերի չնորհիւ Պետհրատում չատ նուազեց «փնթի հագնուած» հրատարակութիւնների քանակը:

Չարենցն առաջինն էր, որ առաջ քաչեց արեւմտահայ գրականութեան հրատարակութեան հարցը: Նրա համար «արեւելահայ գրականութիւն» եւ «արեւմտահայ գրականութիւն» տարազները պայմանական հասկացողութիւններ էին: Նա նոյնպիսի խանդավառութեամբ էր սիրում Մեծարենցին, որքան եւ Տէրեանին, Վարուժանի բանաստեղծութիւնը համարում էր հայրենի գրականութեան փառքերից մէկը, Սիամանթոյի արուեստը համարում էր անհասանելի կատարելութիւն, մեծ վարպետ էր համարում Վ. Թէքէեանին... իր գմայլանքի պահերին նա արտասանում էր այդ սիրած բանաստեղծներից հատուածներ եւ բացականչում, — ա՛յ թէ ինչպէս են գրել ...

ՎԱՂԱՐՇԱԿ ՆՈՐԵՆՑ

> (Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆԻՆ)
>
> Չեմ հաւատում ես քո մահուան,
> Չես մահացել դու, Վարպետ,
> Արեւի պէս յաւերժական՝
> Միշտ լինելու ես մեզ հետ:
>
> Միշտ ւնալու ես աշխարհում,
> Չի լինելու երգիդ վերջ,
> Երգելու ես ամէն դարում,
> Ամէն սիրող սրտի մէջ:
>
> ԳԵՂԱՄ ՍԱՐԵԱՆ

ԾԻՍԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

ՀԵՂԻՆԱԿ ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ

Տպ. Անթիլիաս, 1957

—o—

Օրմանեանի այս գործը, որ հրատարակուած է Ս. Փրկչի հիւանդանոցին ընդարձակ Օրացոյցին մէջ 1905–1908 տարիներու ընթացքին, հրապարակ կ՚ելլէ այժմ մէկ հատորով (298 էջ), Անթիլիասի կաթողիկոսարանին տպարանէն: Կը բաղկանայ երեք մասէ.—

1.— Բացատրութիւն եկեղեցական տօներու, այբուբենական կարգով, (Այլակերպութիւն, Անառակի Կիրակի, Անուանակոչութիւն, Աշխարհամատրան Կիրակի, Առաջաւորաց Կիրակի, Աստուածայայտնութիւն, եւայլն):

2.— Նկարագրութիւն եկեղեցական առարկաներու, զգեստ, սպաս, միշտ այբուբենական կարգով, (Աթոռ, Ակն խաչի, Ադամի կամ Ադամածեւ տափ, Ամպհոն, Ամպհովանի, եւայլն):

3.— Բացատրութիւն եկեղեցական արարողութեանց, ըստ իրենց աւանդական կարգին, երկու գլուխ միայն (Գիշերի ժամ, Ի գէժս, Հայր մեր, Տէր եթէ, եւ եւս օրհնութիւն, Տէր զի բազում, եւն.):

Օրմանեան այս գործը պատրաստած է պարբերաքական գրագումներու միջոցին, մինչ այն չըմեղանքով թէ նպատակ չունէր «հնագիտական եւ քննադատական աշխատութիւն մը» տալու, «այլ չոկ առձեռն տեղեկութիւններ»:

×

Կը սխալի այն որ, հետեւցնելով Օրմանեանի գործին նուիրուած այս գրութենէն, կ՚ենթադրէ թէ կը ձեռնարկեմ գրական քննադատութեան: Մինչ մերժեր էլ ու կը մերժեմ գրական քննադատութիւն կատարել, հակառակ Օշականի կրկնակի թելադրանքներուն, մոռցած նոյնիսկ երիտասարդութեանս մեղքերը: Հիմա, ես այն համոզումն ունիմ թէ յիմարութիւն է արչաւանքի ելլել ծանր հրետանիով, երբ տարբեր ռազմավարութիւն կը պահանջեն ժամանակները: Մեր գրական ածուին մէջ՝ աւերներ միայն կրնայ գործել, ոչ միայն ծանր հրետանին, այլ եւ սաստիկ քամին, լեռնային բարձունքներէն թարմ եւ մաքուր օդ բերելու գնով՝ տապալելով նորածիլ ընձիւղներն ու բողբոջները: Այժմ հայ մատենագրութիւնը մանկատածութեան դասերու պէտք ունի, գուրգուրանքի, քաջալերանքի, նաեւ գովասանքի:

Ահա թէ ինչո՛ւ սխա՛լ է տեսակէտը.
— կամ հանճար, կամ ոչինչ:

Երբեմն կենսական անհրաժեշտութիւն կը դառնան միջակութիւնները, ինչպէս պարարտանիւթը՝ վաւեր վարդեր բանալու համար պարտէզներու մէջ: Զմոռնալ նաեւ թէ միջակութիւններն են, որ ժողովուրդը կը պատրաստեն սպասելու հրաչքին, հանճարին, յայտնութեան:

Բայց մանկատածութիւնն ալ ... կը չամ մըն է, ինչ փոյթ թէ ողիմպեան հրպարութիւն մը մերժէ սմանց դրագիլ հատուակ աչխատանքներով, զորս կրնան կատարել Մարկոսն ու Կիրակոսը, նոյնիսկ մանկատածութեամբ:

Ես գէմ չեմ միջակութեանց, ընդհակառակն կ՚ընդունիմ թէ հայկական ժամանակը կը պահանջէ քաջալերել միջակութիւնները եւ մթերանոց գրկել ծանր հրետանին: Ափսո՜ս, ընդունակ չեմ մանկատածութիւն կատարելու: Ատով միայն կը բացատրուի մերժումս գրական քննադատութիւն կատարելու:

Տարբեր ծննդոց մը ունի, սակայն, Օրմանեանի գործին նուիրուած այս գրութիւնը:

×

Օրմանեանով կը զբաղիմ ժամանակէ մը ի վեր:

Հետաքրքրութիւնը, որ ստեղծուած է իր անձին չուրջ, միթ մը չինած է չատերու մտքին մէջ: Այսպէս է որ ծաւալ է առած իր անունը եւ ծանրութիւն ստացած իր հմտութիւնը: Կը զարմանաս, սակայն, երբ քննես մօտէն, — կը նմանի մեծ կնկան մը, որ նահապետական ընտանիքի մը տուած ծանօթութիւններով հարուստ՝ կը մատնէ ինքնագոհ եւ անձնավստահ հեղինակութեան մը յաւակնութիւնները: Երբեմն ալ՝ մեծ երախայի մը, որ համարձակութիւնը կը չփոթէ իմաստութեան հետ:

Հաչուառու է իր Հայոց եկեղեցին, — քանիցս տպագրուած՝ ոչ անչուչտ այն պատճառաբանութեամբ թէ սպառած է, այլ որովհետեւ Օրմանեան անունը հրաւէր մըն է: Հեղինակը կը կրկնէ ծանօթ չըմեղանքը՝ եթէ գործը չէ կրցած ստանալ դասագիրքէ մը աւելի ծանրութիւն: Արդ, Հայոց եկեղեցիին մասին խոր թիւրիմացութիւններ են ստեղծուած եւրոպական մատենագրութեան մէջ, — պարզելու համար այդ թիւրիմացութեանց դէմ, հարթելու համար զանազան աժան մերապրումներ, պէտք էր կանգնիլ ծանր կչռող գիրքով մը, (սկզբնաբար ֆրանսերէն գրուած է), վերլուծելով հին ու նոր հեղինակութեանց տեսակէտները, Որոգինէսի կամ Օգոստինոսի դեգեւումները, Կղեմէս Աղեքսանդրացիին կամ Կիւրեղ Երուսաղէմացիին խարխափումները, վերջապէս այն ամբողջ ժառանգը(*), որ կը կազմէ քրիստոնէութեան վարդապետութիւն: Պէտք է խոստովանիլ թէ Հայոց եկեղեցին աղքատ է վարդապետական մատենագրութեամբ, այնքան որ կը չփոթուի մշակոյթ չունեցող ժողովուրդներու, մանաւանդ ժողովուրդներու եկեղեցիներուն հետ: Օրմանեանի համար Հայոց եկեղեցին, կարծես, վարչական կազմն է միայն կամ եկեղեցիին ձեւը եւ սպասները: Ուստի, կը սահի կ՚անցնի վարդապետական հարցերուն վրայէն, կ՚առատուէ ու կը թռչկոտէ, անուչի կը կայլէ կրօնափիլիսոփայական վէճերը, աւելորդ կը գտնէ բարակ մաղել քրիստոնէական փիլիսոփայութեան կարծրութիւնները: Օրմանեան ծանրաչունչ ուսումնասիրութեանց մարդը չէ:

Նոյնքան հաչուառու է իր Ազգապատումը: Հայոց եկեղեցական պատմութիւնը, զոր խմբագրած է առանց դոյզն ինքնատիպութեան, այլ միայն հետեւելով Չամչեանի գիրքին: Մէկը միւսին կցել ու չարայարել ինչ ծանօթութիւն որ կու տայ պատմիչ մը, մատենագիր մը կամ վաւերաթուղթ մը: Արտակարգ համբերութեամբ՝ կարգադրած է ձեռագիր կամ տպուած ամէն վկայութիւն, կատարեալ միամտութեամբ՝ հաւաքած է ամէն ծանօթութիւն կամ մանրամասնութիւն, երբեմն քուրջ ու քրքիջ, բայց մինչ հաստատելով թէ քննական ոգին երբեք յաճախած չէ իր միտքը: Բացառիկ յիչողութեան մը հետ, իբրեւ մտային հարստութիւն՝ կը ցուցադրէ տրամաբանութեան խարխլած գործիք մը, — հաւաքարանութեան (սիլլոժիսմ) ծանօթ կաչկանդը, զոր հիները կը գործածէին քանի մը եղբօր հաստատելու համար Աստուծոյ գոյութիւնը, ինչպէս ուրիչ մը՝ Նախիչեւանի գոյութեան ... սուտը: Իր բոլոր թերութիւններուն հետ, սակայն, — արդար ըլլանք, — Օրմանեան ցոյց կու տայ Հայու տաք ու բարբախուն սիրտ մը:

Այժմ հրապարակի վրայ՝ իր Ծիսական Բառարանը, — գրուած՝ առանց յաւնութեան, ափլափոյ, վարկպարագի, ոտքի վրայ, պանիր-հաց ուտելու ձեւով մը:

Քննենք աւելի մօտէն, աւելի խորէն:

Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

(*) Հիացող մը Օգոստինոսի, Կիւրեղ Աղեքսանդրացիի եւ Որոգինէսի վրայ, հակասութիւնները, պաշտպանելու համար Հայոց եկեղեցիին վարդապետական դիրքը:

Տ Ա Ղ Ե Ր Գ

ՀԱՅԿԱԿԱՆ ՆԵՐՇՆՉՈՒՄՈՎ

(Գործ Մարսէլ Տըլանուայի)

Անցեալ տարի, «Միսական երաժշտութեան» նուիրուած իր մէկ փորձին ընթացքին, Լիտիա Կարին ուշադրութեանս յանձնեց պրակ մը զոր հրատարակած էր «Բոփէ տիւ Միտ»ը, — «Նարեկ եւ հայկական հին բանաստեղծութիւնը», եւ որուն հեղինակը Լիւք Անտրէ Մարսէլ, նոյն միջոցին, կ'աշխատակցէր մեզի հին երգերու երաժշտական վերամշակման մէջ:

Անմիջապէս տարուեցայ, ոչ միայն, հայ միսթիք բանաստեղծին դեղօններուն բացառիկ գեղեցկութենէն — եւ զգալով որ թարգմանութիւնը կը պահէր անոնց աւիշը, — այլ եւ անոնց բանաստեղծական գոյնին տարօրինակ «արդիականութենէն», որ ինը դարու վրայէն կը հասնէր արեւմուտք:

Մեզի, Արեւմուտքցիներուս համար, ԺԱրդ դարը, ահուսարսափի, եւ Յայտնութեան վիշերուան դարն է: Ընդհակառակն ԺԱ. դարու Հայուն համար եւ անոր հոգեկան հօր՝ Նարեկին համար, Ոսկեդարն է, երկու աղէտներու միջեւ, Աշոտ Ողորմածի օրով «Անի, սրբազան մայրաքաղաքը, կը գրէ Լիւք Անտրէ Մարսէլ, կը բոցավառի հազարումէկ եկեղեցիներով եւ պալատներով... բանաստեղծները կրկին խօսք կ'առնեն, մատենագիրները կրկին կը սկսին խորապէս պրպտել յունական եւ ասորական գրականութիւնները»:

Ասոր համար ալ, վարդապետ խորհրդապաշտութեանց, բանաստեղծ, վանական Նարեկացիին պատմութիւնը պիտի մնայ միշտ ներքին, իր իսկ բառերով՝ «ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ»:

Անշուշտ, հայկական Փոլքլորը ինծի նրման Ֆրանսացի, նոյնիսկ Իլ տը Ֆրանսացի երաժիշտի մը գործը չէ, որքան ալ չփում ունեցած ըլլամ անոր հետ, «Նագան»(*) անունով երգիս մէջ: Նարեկացիի գեղօնները, առանց միջին ճամբայի, այսօրուան ստեղծագործութիւն մըն են, այսօրուան երաժշտական լեզուով: Որովհետեւ կը կարծեմ թէ այս նախնական գրութիւններուն նշանակութիւնը գլած անցած է «արեւելականութեն»է անդին, նոյնիսկ իրենց ժամանակէն անդին: Ուրեմն ընտրեցի չորս կտորներ, զոր սեղմեցի գործիական երաժշտութեան ամէնէն խիստ տարազին մէջ, որ գոյութիւն ունի. — մէկ ձայն՝ լարային քառեակով:

Եւ որովհետեւ կարելի չէ անվնաս դրպչիլ այս սրբազան տաղերուն, կրնայ պատահիլ որ գրածս, մտածումս, նոր ուղղութիւն մը առած ըլլան, կեանքի այն

(1) « Suite à chanter », Marcel Belannoy, Ed. Max Eschig, 48 Rue de Rome.

ՄԻՏՔ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

ՍԱՐԳԻՍ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ ՀՆԴԿԱԿԱՆ ՈՐՄԱՆԿԱՐՆԵՐՈՒ ԵՐՐՈՐԴ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ

(Յատուկ թղթակցութիւն «Յառաջ»ի)

ՄԻԼԱՆ. — Իտալիոյ Մշակութային հաստատութիւնները իրարու ձեռք կը խլեն Սարգիս Խաչատուրեանի հնդկական որմանկարներու վերարտադրութիւնները, գեղարուեստասէր հանրութեան ներկայացնելով զանոնք, գնահատանքով մը, որ պատիւ կը բերէ Հայերուս:

Հռոմէն ու Վենետիկէն վերջ, ահա նաեւ Միլանի չքեղ դահլիճներէն մէկը կը բանայ իր դռները՝ ցուցադրելու այս չնաշխարհիկ կտորները, թիւով չորրջ յիսուն:

Ցուցահանդէսը կազմակերպուած է Միջին ու Հեռաւոր Արեւելքի ուսումնասիրութեան նուիրուած նոյն հաստատութեան Լոմպարտական մասնաճիւղին կողմէ, որուն արդիւնաւոր նախագահն է Փրոֆ. Սքալիզի:

«Վիա Մերավիլլի» վրայ, Ցամիլիա չրջանին՝ երբ արուեստագէտն կը պահանջուի նորոգել մորթը:

Այս վիճակին մէջ, նոր տաղս տակաւին անտիպ, ձօնեցի մեկնող երգչուհիին, ներշնչողին որուն մօրը նախնիկներուն ծննդավայրը Նարեկացիին ծննդավայրն է. — Վանայ լճի ափերը:

Ջայնասփիւռը ուզեց այս գործին նուիրել էմիսիոն մը (*): «Սենեակի երաժշտութեան բարեկամները» յաջորդ եղանակին համար առին իրենց յայտագրին մէջ: Բայց այն ընդունելութիւնը զոր, անցեալ տարի, Փուաթիէ քաղաքին Ժէօնէս միւզիքալներուն առջեւ, գտան Լիտիա Կարինի երգահանդէսները նուիրուած այս գործիս, առիթ տուին որ Նարեկացիի գեղօններուն ունկնդրութեան նախապատւութիւնը տամ Փուաթիէի նման հրաշալի անցեալ մը ունեցող համալսարանական կեդրոնին: Այսպէս Հոկտեմբեր 23ին, ես ինքս ներկայացուցի եւ բացատրեցի գործը, նոյն օրուան մէջ երկու ուսանողական սրահներու մէջ: Յայտագիրը նուիրուած էր Օննէկէրի եւ իմ գործերուս: Շնորհիւ Լիտիա Կարինի յուզիչ եւ անբիծ երգեցողութեան եւ Լովենկիւթի քառեակին, որուն լարերուն մէջ թաթախուած էր իր հարուստ ձայնը, ուրախութիւնն ունեցայ զգալու թէ ժամանակներու խորքէն եկած պատգամ մը կ'ընդունուէր յստակօրէն արդի երաժշտութեան մը թեւերուն վրայ թրթռալով:

MARCEL DELANNOY

(*) Կիրակի 3 Նոյ. ժամը 20ին:

Մենեկինոյի չքնաղ պալատին որմերը զարդարուած են Սարգիս Խաչատուրեանի այս յիսուն նկարներով: Ցուցահանդէսը կը բացուի 22 Հոկտեմբեր, երեկոյեան ժամը 5: Ներկայ են բարձրաստիճան անձնաւորութիւններ, պետական ներկայացուցիչներ, գեղարուեստասիրական ընկերութիւններու նախագահներ, մինչեւ իսկ չին եւ ճափոն արուեստի մասնագէտներ: Յատկապէս այս վերջինները կը գրաւեն մեր ուշադրութիւնը. կը մօտենանք անոնց. հիանալի իտալերէն կը խօսին. եւ մեծ հիացումով կը խօսին Խաչատուրեանի այս նկարներուն մասին:

Ու մինչ իրենք ալ իրենց կարգին հարցումներ կ'ուղղեն եւ բացատրութիւններ կը խնդրեն Տիկին Խաչատուրեանէն — որ ներկայ է եւ ամէն գոհունակութիւն յանձն առած՝ աւելի եւս արժէքաւորելու իր պատուական ամուսնին գործերը: Կարծէք անոր ոգին է որ կը թրթռայ ու կը չրջի հոս ու հոն, անձամբ տալու բացատրութիւններ, մանաւանդ այն գոհունակութիւններուն մասին, որոնց շնորհիւ միայն ի լոյս եկած են այս գլուխ գործոցները. մինչ անոնց իրականները կը գտնուին հազարաւոր մղոններ հեռու, ծուարած, մութ ու խոնաւ հազարամեայ քարայրներուն մէջ Աճանտայի, Բագի, Պոլոննարուվայի կամ Բադամիի:

Հրաշք մըն է ինքնին թէ ինչպէս կարողացեր է Սարգիս Խաչատուրեան վերարտադրել զանոնք: Մանրամասն տեղեկատուութիւնները տես՝ Յառաջ, 11 Օգոստոս, էջ 3:

«Հրաշալի յարութիւն մըն է այս, կը յայտէր Ջինացի փրօֆէսէօրներէն մէկը, Պուտտայական արուեստին անմահութիւնը յաւերժացնող»:

Հայ գաղութէն բազմաթիւ ներկայացուցիչներ փութացեր էին ցուցահանդէսը. եւ այս կրկին ուրախութիւն էր Տիկին Խաչատուրեանի, որ նկարէ նկար կ'առաջնորդէր հիւրերը: Վենետիկէն մասնաւոր հրաւէրով ներկայ էր «Բազմավէպ»ի խմբագիրը:

Իտալական հեռատեսիլը նոյն գիշեր ուան իր յայտագրին մէջ ներմուծեր էր օրուան նորութեան մասին կարգ մը բացատրութիւններ, ցուցադրելով լաւագոյն կտորները հայ արուեստագէտին:

Խորենացիին յիշատակած փոքր ածուին մէկ չնաշխարհիկ ծաղիկն է արդարեւ մեր Սարգիսը, որուն աքանչելի բոյրն ու երփներանգ խորհուրդն եկած էին վայելելու, բազմաթիւ օտարազգի արուեստագէտներ:

Ու մենք Հայերս, ի հարկէ, արդար հպարտութեամբ կը նայինք այն բոլորին, որոնք միջազգային փառքերով կը պանծացնեն մեր անունը:

Հ. Ն.

ՉՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ ՉԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ:

ԵՐԲ ԿԸ ՏԽՐԵՍ

Երբ կը տխրես, ինձ մօտ արի,
Գանձըս ծով է այս տարի.
Ես քեզ կուտամ ոսկի յոյսեր
Եւ թաւուտներ անտառի,

Ես քեզ կուտամ մարգեր կանաչ,
Աղբիւրների լոյս կարկաչ,
Մանուկների ժպիտն անմեռ.
Կարմիր վարդեր ու կակաչ:

Երբ կը տխրես, ինձ մօտ արի,
Հուրըս ոչ ոք չի մարի,
Ես քեզ կուտամ հոգու կրակ
Եւ դրօշակ պայքարի:

ՍԱՐՄԷՆ

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

ԽՄԲ. — «Էքիտ Սովիէթիք» (Փարիզ), բացառիկ թիւ մը հրատարակած է հոկտեմբերեան յեղափոխութեան առիթով, կը քաղենք Արամ Խաչատուրեանին յատկացուած տողերը:

Խորհրդային երաժշտութեան մէկ էջը բանալով, որուն գլուխը կը գտնուի Արամ Խաչատուրեանի անունը, կը փոխադրուինք ձայներու աշխարհ մը, որ բոլորովին տարբեր է Փրոքովիեւի եւ Շոսթաքովիչի ստեղծագործութիւններէն: Ահաւասիկ խորհրդային երաժշտութեան ուրիշ մէկ ձգտումը, նոր ուղի մը, որուն կը հետեւին բազմաթիւ երաժշտագէտներ, յատկապէս՝ Կովկասեան երկիրներու մէջ:

Արամ Խաչատուրեան, հայ, օգտագործեց կովկասեան ժողովուրդներու երաժշտութիւնը մեղեդիներու, կշռոյթի եւ երանգի ամբողջ հարստութիւնները, որ չա՛տ լաւ կը ճանչնայ իր մանկութենէն ի վեր: Միաժամանակ ան ազդուած է ռուսական երաժշտութենէն: Սակայն, նոր դարաշրջանի երգահան մը ըլլալով, եւ ունենալով արեւելեան ծագում՝ իր երաժշտութեան մէջ դրաւ բոլորովին անձնական դրոշմ, արտակարգ եւ յանդուգն:

Խաչատուրեանի արուեստը լաւատես է, հակադրութիւններով լեցուն, նոյնքա՛ն հարուստ մեղեդիներով՝ որքան կշռոյթով, ճոխ երանգներով եւ կը յիշեցնէ իր հայրենակիցներուն, Հայերու ձեռքով բանուած գորգերը: Բաւական է յիշատակել «Գայեանէ» պարախաղին շլացուցիչ երաժշտութիւնը, որ համաշխարհային արժէք ունի: Նմանապէս՝ դաշնակի եւ ջութակի քոնչերթոները, ուր կը տիրապետէ ժողովրդական երգերու եւ պարերու ճարտարութիւնը. ինչպէս՝ իր երկրորդ Համանուագը, խիստ ու յուզիչ:

Շոսթաքովիչ եւ Խաչատուրեան կը պատկանին երաժշտագէտներու այն սերունդին՝ որ իր գործունէութեան սկսաւ 1920էն ետք: Անոնցմէ շատեր չրջանաւարտ են Նիքոլայ Միասքովսկիի դպրոցէն, որուն աշակերտն էր Խաչատուրեան:

Կ Ա Յ Ծ Ե Ր

ԺԵ.

ՈՐՍՈՐԴԻ ՏՆԱԿԸ

— Ֆարհատ ջան, դո՞ւն ես, քո հոգուն մատաղ, բացականչեց նա ինձ գրկելով, եւ ուրախութեան արտասուքը ցօղուեցաւ ալեխառն մօրուքի վրայ. — Տղաս, Աստուծոյ աչքը վրադ լինի, որքան մեծացել ես դու... ինչ չնորհալի տղայ ես դարձել...: — Կարօ, ո՞րտեղից գտար դըրան: Ես չէի ճանաչելու եթէ Մարօն չասէր:

Կարօն կարճ կերպով պատմեց, թէ որտեղ եւ ինչ դրութեան մէջ գտաւ ինձ: Որսորդը սկսեց ծիծաղել:

— Ես այդ սպասում էի, որ դու կը փախչես այն անպիտանի մօտից, ասաց նա, — բայց ափսոս, որ երկար մնացիր այն «դժոխքի» մէջ:

Դժոխք կոչում էր որսորդը տէր Թօդիկի դպրոցին: Այդ խօսքը կրկին յիշեցրեց ինձ վաղեմի տանջանքները, որ առժամանակ մոռացութեան էի տուել:

Գեղեցիկ Մարօն հեռուից նայում էր հօր գգուանքին, կարծես, նա էլ ուզում էր մօտենալ ինձ, կարծես, նրա փակուած շրթունքի մէջ պահուած էին ինձ համար մի քանի քաղցրիկ խօսքեր. — «Ես էլ ուրախ եմ, Ֆարհատ, շատ ուրախ, քեզ տեսնելու համար...»: Բայց ոչ, հայ աղջկայ ամօթխածութիւնը երկաթի փականք էր դրել նրա լեզուին, եւ այս խօսքերը կարդում էի նրա, ուրախութիւնից պայծառացած երեսի վրայ:

Որսորդը սկսեց այնուհետեւ հարցնել մօրս մասին, քոյրերիս մասին, թէ որպէս ապրում են նրանք, ինչ վիճակի մէջ են գտնւում, ով է հոգ տանում նրանց անբախտութեանը: Բաջալերեց ինձ, թէ ես կարող էի օգնել նրանց, մխիթարել մօրս եւ մտածել քոյրերիս բախտաւորութեան մասին: Նա աւելացրեց, թէ շատ ուրախ է, տեսնելով, որ ես ընկել եմ Կարոյի հասարակութեան մէջ, եւ թէ այդ ընկերութիւնը կարող էր օգտաւէտ փոխճանի հասցնել ինձ: Յետոյ նա դարձաւ դէպի Մարօն.

— Դու ինչո՞ւ մօտ չես գալիս, չես հարցնում Մարիամի, Մագթաղի մասին. չէ՞ որ նրանք քո հին քոյրիկներն էին. ամէն օր մէկ մէկու ծամեր էիք փետտում, մէկ մէկու երես էիք ծուատում, էլի բարիշում էիք: Այդպէս չէ՞, իմ կատուիկ, մոռացել ե՞ս, հա:

Ես յիշեցի այն գիշերը, այն ձմեռնային սարսափելի գիշերը, երբ մրրիկը դըրսում կատաղաբար մռնչում էր եւ ձիւնը առատօրէն մաղւում էր երկնքից: Մենք նստած էինք գերեզմանի պէս ցուրտ խրճիթի մէջ: Մայրս կարում էր, ես վառարանի մօտ քրքրում էի հանգած կրակը: Մարիամը եւ Մագթաղը քնած էին: Աչտանակի վրայ խեղճ սպառուած ճրագը պլպլում էր, որպէս մի շնչաւոր, որ հոգեվարքի մէջ է գտնւում: Յանկարծ դուռ նման ներս վազեց Մարօն, ճարպիկ, աշխուժով լի մի երեխայ, որի անմեղ չարութիւններն անդամ սիրելի էին մեզ: Ես յիշեցի, թէ որպէս քարշ ընկած մօրս պարանոցէն, յիմար — յիմար շատախօսում էր նա եւ տաք — տաք համբուրում էր մօրս երեսը: Նա ուրախանում էր, որ ձիւն է գալիս, եւ մի առանձին երեխայական ոգեւորութեամբ ասում էր, վաղ — առաւօտեան կը վազվզէ նրա մէջ: Ես յիշեցի, թէ որպէս նա յարձակուեցաւ քընած Մարիամի վրայ, իր փոքրիկ ճանկերով բռնեց նրա կոկորդից, եւ կրկին կայծակի արագութեամբ դուրս փախաւ մեր խրճիթից:

Կրկին տեսնում էի այն կեանքով լի, վայրենի երեխային, այժմ հասուն, վայելուչ կազմուածքով, կանգնած էր իմ առջեւ որպէս մի լեռնային հրեշտակ: Նոյն հրեղէն աչքերը եւ այժմ փայլում էին լի գեղեցիկ վրդովմունքով, նոյն սեւուկ երեսը իր գիւղական ժպիտով եւ այժմ կախարդիչ էր:

Ջնայելով հօր խօսքերին, Մարօն չմօտեցաւ ինձ. միայն ծիծաղեց եւ սենեակից դուրս գնաց, հիւրերի համար մի նոր բան բերելու: Ամօթխածութիւնը աւելի իմ կողմի՞ց էր, թէ նրա կողմի՞ց, — չեմ յիշում, միայն երկուսիս լեզուն էլ պապանձուած էր: Ես չգիտէի, ինչ խօսել նըրա հետ, դրա համար շատ ուրախացայ, երբ Մարօն իր հեռանալով դուրս բերեց ինձ իմ նեղ դրութիւնից: Ես այն ժամանակ միայն զգացի իմ անշնորհքութիւնը, թէ ո՞ր աստիճան անկիրթ էի, թէ որքան կոշտ և կոպիտ պատրաստել էր ինձ դըպրոցը:

Տղերքն հաւաքուեցան ընթրիքի սեղանի չուրջը: Ափօն նոյնպէս նստեց մեզ մօտ: Մարօն սպասաւորութիւն էր անում, անդադար ուտելիքներ եւ ըմպելիքներ ներս բերելով եւ դուրս տանելով: Երեւում էր, տանուտէրը առաջուց գիտէր իր հիւրերի գալուստը եւ կանխապէս պատրաստութիւններ էր տեսել նրանց համար: Գիւղական ամէն տեսակ բարիքներից, ինչ որ կարող է մատակարարել երկրագործի եւ խաշնարածի տնտեսութիւնը, գտանւում էր սեղանի վրայ:

ՐԱՖՖԻ

(Շար.)

Ասիկա կապ չունի ամերիկեան նաւա–տորմին ծրագրին հետ, որ կը նախատե–սէ Դեկտեմբերին փորձ մը կատարել եւ Մարտին արձակել կատարեալ արբանեակ մը՝ գիտական գործիքներով լեցուն :

Ամերիկեան արուեստական առաջին արբանեակը պիտի արձակուի «Արա–մազդ» հրթիռին միջոցաւ : Մինչեւ Նա–հանգները ներկայիս ունին միջերկրային 36 տեսակ հրթիռներ. «Արմազդ»ի տարո–ղութիւնն է՝ 5·600 քիլոմեթր (Խորհրդ–դային՝ 1500 քմ.) :

Գիտական արշաւ մը սկսած է ներկայիս Ամերիկայի մէջ : Առաջին նախատիպ Տրլըս պիտի ունենայ պիտոն խորհրդա–տու մը. այս ծրագիրը նախատեսուած է նաեւ զանազան երկիրներու ամերիկեան դեսպաններուն համար :

Ցրանական չրջանակները խանգարա–ռութեամբ ընդունեցան Նախագահ Այզին–հաուըրի տեսակէտը՝ զործակցութիւն դաշնակիցներուն հետ, գիտական փըն–տուքներու մարդին մէջ : Կը կարծուի թէ այս հարցը Ատլանտեան Ուխտի ժո–ղովին օրակարգի գլխաւոր նիւթը պիտի ըլլայ :

Նոյն խանգարատութիւնը կը տիրէ նա–եւ Արեւմտեան Գերմանիոյ պաշտօնական չրջանակներուն մէջ, նկատելով որ այս զործակցութիւնը առիթ մը պիտի ըլլայ, որպէսզի Արեւմուտքը աւելի զօրանայ գիտութեան մէջ :

Մոսկուայի ձայնասփիւռը Այզընհաուը–րի ճառին մասին խօսելով ըսաւ թէ ան գիտէ որ. Ս. Միութեան ունեցած դէն–քերն ու հրթիռները լուրջ վնասներ կրնան հասցնել Ամերիկայի ... :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՀԻՄ. ԱՓՐԻԿԵՅԻՆԵՐՈՒ փարիզի մէջ կատարած ահաբեկչութեանց վերջ մը տալու համար, Ներքին նախարար Պուր–ժէս – Մոնուրի ապահովութեան ուժերը հաւաքելով կացութիւնը քննեց եւ յատուկ որոշումներ տուաւ՝ ահաբեկիչներու գոր–ծունէութիւնը արդիլելու համար :

ՄՈՍԿՈՒԱ. վերջերս ո՛չ մէկ խօսք կ'ընէ Սպուտնիկի չնիկին մասին, մինչ դերման դիտուն մը յայտարարեց, թէ երկու օրէ ի վեր չնիկին սրտին բաբախումները չեն լսուիր :

ԼՈՆՏՈՆԻ մէջ չրջան ընող զրոյցներու համաձայն, մօտ ատենէն Կայեռ–Մաք–միլըն հանդիպում մը պիտի ըլլայ, հա–ւանաբար՝ անգլիական մայրաքաղաքին մէջ :

ՈՒՈՇԻՆԿԹՐԼԻ խորհրդային դեսպան–ատան մէջ տեղի ունեցած հացկերոյթի մը ընթացքին ցուցարարները բողոքի բաց–դանչութիւններ արձակեցին. կը կրէին պաստառներ, որոնց վրայ կարելի էր կարդալ. — «Համայնավարութեան քա–ռասնամեակը կը տօնէք՝ քառասուն մի–լիոն զոհերու վրայ », «ձեր վոտքան ա–րիւնով ներկուած է» եւն. : Բողոքի նոյ–նիսկ ցոյց մը եղաւ Նիւ Եորքի ՄԱԿի խորհրդային պատուիրակութեան կեդրո–նին առջեւ :

ՄՈՍԿՈՒԱՅԻ մէջ զանազան երկիրներու համայնավար ղեկավարներու համագու–մար մը պիտի ըլլայ :

ՓԱՐԻԶԻ Օփերային նախկին տնօրէնը, Գեղարուեստից Ակադեմիայի անդամ ժագ Ռուչէ մեռաւ Փարիզի մէջ : Ծնած էր 1862ին :

ԱԼԺԵՐԻՈՅ նախարար Լաքոստ վերա–քննեց Հիմնական Օրէնքը. յատուկիկայ չարթու մէջ պիտի մեկնի Ալժերիա :

ՄՈՍԿՈՒԱՅԻ մէջ աշխատաւորներու մէթինկ մը եղած է, ուր խօսք առնող օ–տար համայնավարներուն առաջինը եղած է Մորիս Թորէզ :

ՅԵՐԵԿՈՅԹ – ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Կազմակերպուած Սեվրանի կայ. Խա–չի մատնահիւղին կողմէ :

Կիրակի 24 Նոյեմբերը, ժամը 15էն 23, «ՄԱՄԻՍ»ի չքեղ սրահին մէջ, 87 Ավընիւ տը Լիվրի, Սեվրան :

Հայկական եւ եւրոպական պարեր, ա–նակնկալներ, ՍԹԷՍԷԼի նուագախում–բին մասնակցութեամբ :

Օթօպիւս՝ 147 էկլիզ տը Փանթէն, կար տիւ Նոր, ժամը 14 եւ 15 :

Imprimé sur les presses du journal HARATCH
17, Rue Bleue, 17 — PARIS (9e)

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԽՆԴՈՅՔ

«ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐ»ՈՒԱՑ ԱՌԹԻԻ

ՍԱՐՍԷԼԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ. Ց. Դ. «Վար–դան» ենթակամիւէի եւ մասնակցու–թեամբ կապոյտ Խաչի մասնաճիւղին եւ Նոր Սերունդի խումբին :

ՆՈՅԵՄԲԵՐ 17ԻՆ

ԻՍԻԻ ՄԷՋ

ՆՈՅԵՄԲԵՐ 17ԻՆ

Մանրամասնութիւնները յայտրդով :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Տէր եւ Տիկին Սիմոն Համալեան (Ամե–րիկա), Տէր եւ Տիկին Առաուր Համալ–եան (Մարսէյլ), Տէր եւ Տիկին Սուրէն Մխալեան (Մարսէյլ), Տէր եւ Տիկին Յովհաննէս Զուրիկեան (Մարսէյլ), չը–նորհակալութիւն կը յայտնեն իրենց բո–լոր ազգականներուն, բարեկամներուն եւ զրացիներուն, որոնք իրենց ներկայու–թեամբ, հեռագիրներով, նամակներով եւ փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւն–ներով իրենց վերջին յարգանքը բերին, իրենց սիրելի մօր եւ զոգանչ մօր Այրի Տիկին ՆԱՐԴՈՒՀԻ ՀԱՄԱԼԵԱՆի (ծնեալ Մելաչեան : Արաբկիրցի) տխուր մահ–ուան առթիւ, որ պատահեցաւ Հոկտեմ–բեր 23ին :

ԿԸ ՓՆՏՌՒԻ

Վարձու տուն մը կամ յարկաբաժին մը ընտանիքի մը համար :

Տեղեկացնել Յառաջի վարչութեան :

Կ'ՈՒԶՈՒԻՆ

Տունը աշխատող զործաւորուհիները Շըմիզիէի համար : Կը յանձնենք Փարիզի չրջակայքը (մինչեւ 50 քիլոմեթր) :

Դիմել՝

TAVITIAN, 40, Rue de Flore. Alfortville
ENT. 35-17

կամ Փարիզի հասցէին՝

19, Bd. Saint-Denis

×

Երիտասարդ տղայ մը 16–18 տարեկան fուրսի համար : Դիմել՝

KAZAZIAN FRÈRES
1, Rue des Jeuneurs, Paris 2·

×

Սթենօ – տաքթիլօ օրիորդ մը 18 – 19 տարեկան, աշխատասէր, լաւ վճարում : Դիմել՝

ALICE LÉVON
5, Rue d'Artois, Paris - 8·

ՅԵՐԵԿՈՅԹ ՎԻՆԻ ՄԷՋ

Վինի Նոր Սերունդը կազմակերպած է ցերեկոյթ պարահանդէս մը, Կիրակի, (17 Նոյեմբեր) կէսօրէ վերջ ժամը 3ին :

Կը հրաւիրուին Վալանսի, Սէնթ Էթիէ–նի, Սէն Շամոնի, Լիոնի, Տէսինի Նոր Սերնդականները եւ համակիրները :

Հաճելի մթնոլորտ :

ՑՈՒՇԱՏԵՏՐ

ՓԱՐԻԶ.— Հ.Ց.Դ. «Փոթորիկ» խում–բին ժողովը, այս հինգշաբթի, ժամը 9ին, 17, բիւ Պէօ :

ՓԱՐԻԶ.— Ց. Կ. Խաչի մասնաճիւղի ընդհ. ժողովը այս Շաբաթ կէս օրէ վերջ ժամը 4ին, Քաֆէ Րէժանի մէջ :

Բոլոր ընկերուհիներու ներկայութիւնը անհրաժեշտ է : Խիստ կարեւոր օրակարգ. — Պարահանդէսի հարցը :

BOXE - ԱՅՍ ԿԻՐԱԿԻ ԺԱՄԸ 15Ի Ն

"CENTRAL SPORTING CLUB"
57, FBG. SAINT DENIS - MÉTRO : STRASBOURG ST. DENIS

ԹՈՒՐՔԻՈՅ ԱԽՈՅԵԱՆ ԿԱՐՊԻՍ ԶԱՓԱՐԵԱՆ
ԸՆԴԴԷՄ ՊՐԱԶԻՄ ՔԵԹԱՆԻԻ
ԿԱՐՊԻՍ ԶԱՓԱՐԵԱՆի միակ մրցումը Փարիզի մէջ, Պրազիլիա մեկնումէն առաջ

ՄՈՒՐԱՏ ՌԱՓԱՑԷԼԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՄԻՈՒԹԻՒՆ
ՄԱՐՍԷՅԼ
ԵԳԱՆԱԿԻ
ԱՌԱՋԻՆ ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ
Շաբաթ, Նոյեմբեր 16, ժամը 22էն միինչեւ առաւօտ
HOTEL SPLENDID
Grande Attraction... Surprise
ՏՈՄՍԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ՝
Ա. ՇԵՀԻԿԵԱՆի՝ 1, Bd, d'Athènes CO. 33-80 Ա. ԼՔՍԷՐՃԵԱՆի՝ 40, La Canebière CO. 30-88

BAINS DE VAPEUR
4 bis, Rue de la Pierre-Levée — Paris - 11·
OBE. 12-51
MÉTRO : RÉPUBLIQUE, OBERKAMPF ET PARMENTIER
ԵՐԵՔ ՍՐԱՀ ՇՈԳԻԻ ԼՈԳԱՆՔԻ
(SUDATION ET FUMIGATION)
Մասաժ, Օքսիժենօթերափի, ձեռքերու եւ ոտքերու խնամք (մանիւիւր – փետիւիւր) fուաֆիւր, սուէն տը պօթէ, փիսին :

BAR - RESTAURANT

Բաց օրեր.—
ԿԻՆԵՐՈՒՆ
Ուրբաթ ժամը 11էն 23
Երկուշաբթի ժամը 11էն 23
Չարեքշաբթի ժամը 11էն 23
ԱՅՐԵՐՈՒՆ
Հինգշաբթի ժամը 17էն 23
Շաբաթ ժամը 9էն 23
Կիրակի ժամը 8էն12
ՀԱՅԵՐԷՆ ԿԸ ԽՕՍԻՆՔ

ԾՐԱՐՆԵՐ ԿԸ ՂՐԿՈՒԻՆ ԱՆԴԼԻՈՅ ՃԱՄԲՈՎ ԴԷՊԻ Խ. ՄԻՈՒԹԻՒՆ, ՄԷՋՆ ԸԼԼԱԼՈՎ ՊԱԼԹԵԱՆ ԵՐԿԻՐՆԵՐԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ
Մասնաւոր արտօնութիւնը որ տրուած է մեզի ֆրանսական կառավարութեան կողմէ, մեզի թոյլ կուտայ պատասխանելու մեր բազմաթիւ յանախորդներուն որոնք կը փափաքին ծրարներ ղրկել Հայաստան
ՏՕՆԵՐԸ ԿԸ ՄՕՏԵՆԱՆ
ՄՏԱԾԵՑԷՔ ՁԵՐ ԱԶԳԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԵՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ
Իրենց մեծ հաճոյք պատճառած կ'ըլլաք ղրկելով, հիմակուընէ, մեր ստեղծած վեցնմոյշ–ծրարներէն մէկը, որոնք պատ–րաստուած են մեծ խնամքով : Մեր բոլոր ապրանքները վստահօրէն անգլիական են :

ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ ԾՐԱՐ – 20·000 ՖՐԱՆՔ
Վերարկու–կերպաս 2 մեթր 75
Հագուստի կերպաս 2 մեթր 75
աստառ 4 մեթր
2 զոյգ ճայլըն զուլպայ
2 fոմֆինէզոն ճայլըն
2 վարտիք ճայլըն

ԱՅՐ ՄԱՐԴՈՑ ՀԱՄԱՐ – 20·000 ՖՐԱՆՔ
3 մեթր կերպաս հագուստի
3 մեթր փոփլինի չապիկի համար
1 ներքին ճերմակեղէն (մայօ տը fոր եւ մէկ էնթերլոf (վարտիկ)
2 զոյգ բուրդէ գուլպայ
1 զոյգ պոfս կօշիկ

ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ – 30·000 ՖՐԱՆՔ
2 մ. 75 բուրդէ թաւիշ վերարկուի համար
3 մեթր աստառ
2 մ. 75 զուտ բուրդէ կերպաս հագուստի համար
1 բուրդէ fառտիկան
1 զոյգ ճայլըն զուլպայ
1 չալ բուրդէ (110×110)
6 թաշկինակ

ԱՅՐ ՄԱՐԴՈՑ ՀԱՄԱՐ – 30·000 ՖՐԱՆՔ
3 մեթր կերպաս զղեստի համար
3 մեթր աստառ
1 զուտ բուրդէ փուլ–օվըր
1 զոյգ կօշիկ պոfս
1 ներքնազգեստ (մայօ տը fոր եւ էնթերլոf)
3 մեթր փոփլինի չապիկի
1 զոյգ բուրդէ զուլպայ

ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ – 40·000 ՖՐԱՆՔ
2 մ. 75 թաւիշ բուրդ վերարկուի համար
2 մ. 75 զուտ բուրդ թայէօրի համար
5 մեթր աստառ
1 fառտիկան զուտ բուրդ
1 փլէտ էֆոսէ 160×160
2 զոյգ ճայլըն զուլպայ
1 բուրդէ չալ 110×110

ԱՅՐ ՄԱՐԴՈՑ ՀԱՄԱՐ – 40·000 ՖՐԱՆՔ
3 մեթր կերպաս Փենիէհագուստի համար
2 մ. 75 զուտ բուրդէ կերպաս փարտը–սիւի համար
5 մեթր աստառ սաթէն
1 փուլօվէր զուտ բուրդ
1 զոյգ զուլպայ զուտ բուրդ

ՇԱՏ ՈՒՇԱԴՐԱՆԱՍԻՐՈՒԱԾ ԳԻՆԵՐ որոնց մէջ՝ մաfս, ապահովագրութիւն, առաքման ծախքեր եւ ամէն տուրք
— ՍՏԱՑՈՂԸ ՎՃԱՐԵԼԻՔ ՉՈՒՆԻ —
Կարելիութիւն կայ ձեր ընտրութեամբ ծրարներ կազմել մեր ցուցակին ապրանքներով՝ ԺԱՄԱՑՈՑՑ, ԴԵՂ, ՁԵՐՄԱԿԵՂԷՆ ամէն տեսակի ՀԱԳՈՒՍՏԵՂԷՆ եւ ՀԻՒՍՈՒՄԲԵՂԷՆ
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՑՈՒՑԱԿ՝ ՁՐԻ
SICOMEX
MÉTRO MADELEINE OU CONCORDE
20, RUE ROYALE, PARIS 8·
TÉL : OPE. 67-77
C. C. P. PARIS 11964-43

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925 — Tél. : PRO. 86-60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. PARIS 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամս. 1600

Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք: Հատը 12 ֆր.

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
13
ՆՈՑԵՄԲԵՐ
MERCREDI
13 NOVEMBRE
1957

33ՐԴ ՏԱՐԻ— ԹԻՒ 8041 — 33e ANNEE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3842

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՖՐԱՆՍԱՑԻ ՆԵՐՔԻՆ ՀՈԳԵՐԸ

ԵԼՄՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Ինչպէս պրած էինք Ֆելիքս Կայեաի դահլիճը առաջին առթիւ ելմտական եւ տնտեսական ծանր կացութեան մը առջեւ դանուելու: Վարչապետը երկու հարիւր միլիառի պիւտճէ մը ապահովելու համար որոշած է 104 միլիառի նոր տուրքեր գնել եւ հարիւր միլիառի խնայողութիւն ընել:

104 միլիառի տուրքերը պիտի բաշխուին հետեւեալ ձեւով :—

Հարիւրէն քանի ժամանակաւոր տուրք մը այն յաւելեալ հասոյթներուն վրայ որ բարոյական կամ ֆիզիքական անձերը պիտի ընեն 1957ի չորրորդին, բախտաւոր 1956ի (Թաֆս փրօֆոր – սիոնել): Ասկէ կը սպասուի 9 միլիառ :

Հարիւրէն երկուքի տուրք մը ընկերութիւններու պահեստներուն վրայ, բացի այն հաստատութիւններէն որոնք աւելցուցած են իրենց արտադրութիւնները : Ասկէ կը սպասուի 27 միլիառ :

12էն 18 առ հարիւր բարձրացում տուրքերուն (թաֆս սիւր լա վալէօր ա – ժուրէ) այն ապրանքներուն վրայ որոնք առվորական սպառումին մաս չեն կազմեր :

12էն 18 առ հարիւր տուրք փրեսթա – սիոն տը սերվիսի: Միչա բացառիկ պայմաններ տալով այն ճիւղերուն որոնց արտադրութիւնները բարդաւաճման մէջ են :

Այս երկուքէն կը սպասուի 36 միլիառ:

Տասը առ հարիւր յաւելում դրօշմա – թուղթի իրաւունքներուն վրայ: Այսպէս կառքերու fառթ կրիզը 1320 ֆրանք պիտի արժէ: Կառք վարելու իրաւունքը 1540 ֆր. անձապիրը 3135 ֆրանք, որի իրաւունքը 860 ֆրանք (պետութեան բաժինը) այսինքն ութսուն ֆրանքի յաւելում : (Հասոյթ չորս միլիառ) :

Ընդհանուր ծախքերուն (ֆրէ ժեներօ) մէջ կարելի պիտի չըլլայ պետերել ընդունելութեանց եւ ճաշերու ծախքերը առեւտրական կամ ճարտարարուեստական հասոյթները պատրաստուած ժամանակ : Ասկէ կը սպասուի երեք միլիառ :

Ընկերութիւններու պահեստներուն վրայ տուրք, քուէարկուած անցեալ Յունիսին: Հասոյթ 25 միլիառ :

Ներկայիս ոչ մէկ նոր տուրք կառքերու, վառելանիւթի, ծխախոտի, խոպի միսի եւ գինիի վրայ :

Իրրեւ առաջին հետեւանք Դեկտեմբեր մէկին աւելի սուղ պիտի վճարենք հետեւեալ ապրանքները. — Թատիօ, հեռատեսիլի դործիք, նկարի դործիք, մոթօ եւ ufուքէր, չաքարեղէն, խմիչք (ափերի – թիֆ) ոչ անհրաժեշտ ուտելիքներ, սիներմա, պանթոկ, սաւրիչ, վոխադրութիւն:

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ՀԻՒՍ. ԱՓՐԻԿԷի ՄԷՋ

Շատ դէպքեր պատահած են կլիմակի օր Քամէրունի մէջ: 3 մեռեալ, հինդ վիրաւոր կը հաչուեն, մինչ 46 տանիկներ կրակի որուած են :

Խիստ միջոցներ ձեռք առած է վարչակարդ՝ Մըպիտա առաջքն առնելու համար նման խռովութիւններու :

Ալժերիոյ մէջ կացութիւնը աւելի հանդարտ կ'երեւի : Ըմբոստները դոր – ծունէութիւն յոյց կուտան Մայր Երկրին մէջ :

Նախարար Լաքոստ ճառ մը խօսեցաւ Նոյեմբեր 11ին Ալժէի մէջ, պինադադարի տարեդարձը ոգեկոչելով: Ֆրանի մը յոյս ցոյց եղան այս առթիւ նախարարին դէմ բայց անհետեւանք մնացին: Նախարարը նոյն օրը վերադարձաւ Փարիզ, խորհրդակցելու համար վարչապետին հետ Ալժերիոյ հիմնական օրէնքին մասին :

Հաւանական կը թուի նաեւ թէ Թունուզի նախադահը՝ Պուրկիպա Ռապաթ երթայ տեսնուելու համար Մարոքի թագաւորին հետ :

Անդին Գահիրէի մէջ «Ազատագրական Ազդային Ճակատը» անընդունելի որակեց Պուրկիպայի առաջարկները, որ կ'առա – ջարկէր առանց նախապայմանի բանակցիլ Ֆրանսայի հետ :

Երեքշաբթի օր կայեաի դահլիճը կը ներկայանայ Ազդ. ժողովին առջեւ նպատելու համար այն բացառիկ իրաւասութիւնները զոր ունէր արդէն նախորդ դահլիճը մայր երկրին եւ Ալժերիոյ մէջ:

Ասկէ վերջն է որ կայեաե պիտի քուէարկել տայ իր ելմտական ծրագիրները եւ նոր տուրքերը: Հաւանական կը թուի նաեւ թէ այս առթիւ վարչապետը վստահութեան քուէ պահանջէ:

Ասկէ վերջ ուրիչ հարց մը պիտի դայ Ազդ. ժողովին առջեւ, Ալժերիոյ հիմնական օրէնքը:

ՋԻՆԱԴԱԴԱՐԻ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Ինչպէս ամէն տարի, այս տարի ալ Փարիզի մէջ բացառիկ չուքով տօնուեցաւ 1918ի յաղթանակին տարեդարձը : Փա – րիզի մէջ բանակը տղանգեց Շան զ'Էլի – զէի վրայ: Ներկայ էր Հանրապետութեան նախագահը որ տղանգէն վերջ չնորհա – ւորական ուղերձ մը դրկեց պատերազմական նախարարին :

Գաւառի մէջ ալ Պորտոյէն մինչեւ Լիոն տեղի ունեցած են յիշատակի ցոյցեր եւ տղանգներ :

Այդ մը տեղի ունեցած է նաեւ Լա Ռոշ Սիւ Եոն Քլեմանսոյի գերեզմանին վրայ:

ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔ

ԵԳԻՊՏՈՍ ԿԸ ՅԱՐՁԱԿԻ ՅՈՐԴԱՆԱՆԻ ՎՐԱՑ

ՀԻՆԳ ՀԱՐԻՒՐ ՀՈԳԻ ԱՐՏԱՔՍՈՒԱԾ ԼԻԲԱՆԱՆԷՆ

Ինչպէս դրած էինք, Եգիպտոսի եւ Յորդանանի ձայնասփիւռները վերջերս սկսած են բուռն յարձակումներ գործել իրարու վրայ: Զիրար կը դատապարտեն՝ այլազան մեղադրանքներով :

Բչ. օր, Գահիրէի թերթերը վերսկսան իրենց յարձակումներուն՝ Ամմանի կառավարութեան եւ Հիւսէյն թագաւորին դէմ, միաժամանակ յայտնելով, թէ խռովութիւններ ծագած են Յորդանանի մէջ:

Եգիպտական «Ալ Ահրամ» թերթը, յայտարարելէ ետք, թէ ցարդ իշխող խաղաղութիւնը ժամանակամիջոց մըն էր պատրաստութեան համար, կ'աւելցնէ թէ ժողովրդական բողոքի ցոյցեր կատարուած են Յորդանանի մէջ: Միւս կողմէ, « Ալ Շաաբ» թերթը կը մեղադրէ Հիւսէյն արքան, որ թոյլ տուած է աչխարհականներուն՝ որպէս դի միջամտութ ըլլան արաբական հարցերուն: Վերահաստին ակնարկելով, թերթը կ'ըսէ թէ ան վերջ մը տուած է Յորդանանի ազդայնական վարչակարգին եւ առիթ մը ընծայած է Ամերիկայի, որ դատադրութիւն սարքէ Սուրիոյ դէմ: Աւելի առաջ երթալով, եդիպտական մամուլը կը դրէ. — Հիւսէյն համաձայնութիւն կնքեց Իսրայէլի հետ, Սքոփիւս լեռը ծախեց եւ Գալիլեան ձդեց Իսրայէլի:

« Ալ Կումհուրիա» կը դրէ թէ ապրեր – գական ճակատագիր մը կը սպասէ Հիւ – սէյնի: Պատիժի ժամը կը մօտենայ : Գահիրէի ձայնասփիւռը, որ երբեք չի դադրեցնէր իր յարձակումները, հաղորդեց թէ յորդանանեան կառավարութիւնը որոշած է յարիլ Պաղտատի Ուխտին եւ ընդունիլ Այզընհաուըրի վարդապետութիւնը :

Զայնակցելով Եգիպտոսի, Սուրիան ալ մեղադրեց Յորդանանը թէ ինքնին ծրագրած է Իրաքի հետ միանալ :

Ամմանի ռատիոն ալ պատասխանեց թէ Եգիպտոսի եւ Սուրիոյ ռատիոները ամէն օր կը հրապարակեն ստութիւններ Յորդանանի մասին :

Ամերիկա ալ միջամտեց հարցին մէջ եւ Ֆոսթըր Տալլըս յայտնեց թէ Միացեալ Նահանգները կը հետեւին Յորդանանի կացութեան զարգացման :

Ամերիկա կը կարծէ թէ Եգիպտոսի եւ Սուրիոյ ռատիոները կը ստեղծեն ներքին եւ արտաքին լարուածութիւն մը Յորդանանի մէջ:

Ամերիկա կը կարծէ թէ Եգիպտոսի եւ Սուրիոյ ռատիոները կը ստեղծեն ներքին եւ արտաքին լարուածութիւն մը Յորդանանի մէջ:

Օր ը Օր Թ ը

« ՅԱՐԳՈՒԱԾ ԱՆԴԱՄԸ »

Օգոստոս 9ին, 62 տարեկան այրի մը, գերեզմանատուն գացած էր՝ կարգի դնելու եւ ջրելու համար իր ամուսնոյն հոդաթումբը եզերող ածուն :

Յանկարծ, 18 տարեկան բարիծադիկ մը, Բապըրք Ուիլսըն, յարձակեցաւ սրտաւոր կնոջ վրայ եւ ծառի մը ճիւղը ամուր գլխուն իջեցնելէ ետք, թոցուց աւերք 27 տպաբը եւ կծիկը դրաւ :

Այրին ոստիկանատուն վազեց :Քանի մը օր ետք, բարակները բռնեցին բարիծադիկին օձիքէն : Դժբախտ կինը վկայութիւն տուաւ ու պատմեց անցուդարձը, իսկ ապուշ պատանին նախ խոստովանեցաւ, յետոյ ուրացաւ իրեն վերագրուած մեղքը.

— Ե՞ս գործեր եմ այդ ոճիրը ... Շատ կը սխալիք ...

...աջի օր, տեղի ունեցաւ դատաստարութիւնը : Դատաւորը ափ ի բերան մնաց, երբ երդուեալները, երկար բանակ խորհրդակցութենէ մը ետք, յայտարարեցին թէ բարի – ծադիկը յանցաւոր չէր :

Դատաւորը հարցուց իրենց.

— Այս տիկնոջ պատմութեան չէ՞ք հաւատար ...

— Ո՛չ, պատասխանեցին երդուեալներ – ը :

— Ինչո՞ւ չէք հաւատար ... Տղան խոստովանութե՞ան ալ չէք հաւատար ..

— Ո՛չ, որովհետեւ այս պատմութեան մէջ մութ կէտեր կան ...

Դատաւորը փրփրեցաւ, կարմրեցաւ, կատղեցաւ եւ պոռաց.

— Երեսուն տարիէ ի վեր դատաւոր եմ, բայց ասկէ աւելի խայտառակ վճիռ լսած չէի ...

×

Կարծեմ, պարոն դատաւորին յայտարարութիւնը կտորիկ մը սխալ է եւ իր բարկութիւնն ալ կտորիկ մը անտեղի :

Երբ մէկը դատաւոր է երեսուն տարիէ ի վեր, կը նշանակէ որ տարիքը եօթանասունի սահմաններէն շատ ալ հեռու չէ :

Լա՛ւ: Եօթանասուն տարեկան մէկը — ամէն մեդիս վրայ ալ դատաւոր — չի կրնար չլսած ըլլալ տասն անգամ, հազար անգամ աւելի խայտառակ վճիռ մը, որ 1923ին անպարտ կ'արձակէր «Միացեալ Ազգերու յարգուած անդամը » եւ — եթէ չեմ սխալիր — «մութ կէտեր» կը գտնէր հայ ժողովուրդին ներկայացուցած պատմութեան մէջ :

Այդ «յարգուած անդամը » — ո՛չ թէ ծառի մը ճիւղը իջեցուց մէկ կամ երկու, այրիներու գլխուն, այլ կտոր կտոր ըրաւ Քրիստոնեայ ժողովուրդ մը :

Այս «յարգուած անդամ»ն էր որ Տրա – պիզոնի առջեւ, իր *մայոնեզները* լեցուց Հայոց ազգին երիտասարդները ու ծովափէն բանի մը փարսախ անդին, ջուրը նետեց զանոնք :

Այս «յարգուած անդամ»ն էր որ մէկ գիշերուան մէջ, մաբրեց հաշիւը՝ Հայոյ ազգին մտաւորական ընտրանիին:

Այս «յարգուած անդամ»ն էր որ...

×

— Երեսուն տարիէ ի վեր դատաւոր եմ, բայց ասկէ աւելի խայտառակ վճիռ լսած չէի ...

Իսկ մենք, յարգելի պարոն դատաւոր, երեսուն դար տեսած ժողովուրդ ենք, բայց 1923ի բարոյական ոճիրէն աւելի խայտառակ ոճիր տեսած չէինք :

Ոճիր մը, որ երեսուն տարիէ ի վեր կը շարունակուի: Ոճիր մը, որ պաշտօնապէս յայտարարել կուտայ՝ մեծ ժողովուրդի մը .

— Թուրքիան Միացեալ Ազգերու յարգուած անդամը ...

Իսկ մեր բերանն ալ կը դնէ անխուսափելի պատասխանը .

— Միջազգային կազմակերպութիւնը կ'ենթադրենք կը վարկաբեկէ, աթոռ տալ ոճրագործներու ամէնէն մեծին, ամէնէն զզուելիին : *ԵՒՐՈՊԱՑԻ*

կատարեց բողոքի ցոյցեր: Դամասկոսի մէջ պաղեստինեան եւ սուրիական դպրոցներու աշակերտները դասադուլ հռչակեցին եւ կազմակերպեցին զանազան ցոյցեր, բողոքելու համար Պաղեստինի հարցին մէջ Յորդանանի կազմակերպած դատավարութեան դէմ :

Համալսարանի ուսանողներն ալ միացած են ցուցարարներուն, տողանցելով մայրաքաղաքին գլխաւոր պողոտաներէն եւ հակայորդանանեան բացագանչութիւններ արձակելով: Ցուցարարները Յորհրդարանին առջեւ հասած են՝ ազատ – գակելով.— Հիւսէյն, աչխարհակալներու պաշտպանը: Յորհրդարանի Նախագահ սպասաւորը: Յորհրդարանի նախագահը հորանի գիմաւորած է գիրենք, յայտարարելով.— Պաղեստինեան հարցը կենսական խնդիր մըն է բոլոր Արաբներուն համար: Հորանի աւելցուցած է, թէ արաբական քաղաքականութիւնը պիտի կարենայ յաղթանակել ու վերստանալ Պաղեստինը եւ այն ձեռքը որ խաղաղութիւն պիտի կնքէ Իսրայէլի հետ՝ պիտի պատժուի :

Բաց ասոր, սուրիական Յորհրդարանը կիրակիին երկուշաբթի լուսնալու դիշերը ժողով մը դումարեց՝ յատկապէս քննելու համար սահմանադլուխին վրայ համաձայնագրութիւնը զոր Եգիպտոսի նախագահ Նասըր Սէրաջ եւ Սուրիոյ արտաքին նախարար Սապրի Քուալի ստորագրած էին Եգիպտոսի մայրաքաղաքին մէջ :

Ժողովը չարունակած է Բչ. օր կէսօրէ վերջ՝ նոյն հարցին շուրջ : օր կէսօրէ վերջ՝ նոյն հարցին շուրջ : Քննարկման բաները մը յայտարարեց, Զինուորական բաները մը յայտարարեց, թէ թուրք պինուորներու զգալի շարժում մը կայ՝ դէպի սահմանագլուխ եւ սուրիական ուժերը հարկ եղած նախապատրաստութիւնները տեսած են, հաւանական յարձակումի մը առաջքն առնելու համար :

Դամասկոսի ձայնասփիւռը հաղորդեց, թէ նոր միջադէպեր պատահած են Քրքան սահմանին վրայ ու երեք օդանաւեր Քուէյէ կատարած՝ Լաթաքիոյ վրայէն :

Միւս կողմէ, եդիպտոսի Քրքական եւ սուրիական դեսպանները երկար խորհրդակցութիւն մը ունեցան Գահիրէի մէջ : Առաջին անգամն է, որ Թուրքեւսուրիական տաղնապէն ի վեր երկու դեսպանները հանդիպում ունեցան իրարու հետ :

× Վերջին երկու օրերու ընթացքին, Լիբանանի մէջ ձերբակալուած են հինդ հարիւր Սուրիացի, Յորդանանցի եւ Պաղեստինցի չարագործներ. քննութիւն մը բանալով Ներքին ապահովութեան խորհուրդը հաստատած է անոնց հակալիբանանեան գործունէութիւնը եւ անմիջապէս արտաքսած երկրէն :

Երէկ առաւօտուն Լիբանան մտնող օտարականներուն վրայ խիստ հսկողութիւն մը սկսաւ կատարուիլ: Ինչպէս ծանօթ է, յարդ ամէն օտարական ազատօրէն կրնար մուտք գործել Լիբանան: Այսու հետեւ, մանրամասն տեղեկութիւններ պիտի առնուին գրօսաշրջիկներու մասին:

× Եդիպտոսի պատերազմական նախարար Ամեր, որ Մոսկուա գացած էր, ընդունուած է Միկոյեանի կողմէ, որուն հետ երկար խօսակցութիւն մը ունեցած է երկու երկիրներու յարաբերութեան շուրջ :

(Լուրերու շար.ը կարդալ Դ. էջ)

ԻՆՉՊԷՍ ԿԸ ԳՐԵՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ա.

Հոկտեմբերեան Յեղափոխութեան քառասնամեակի առթիւ Մոսկուայի պաշտօնաթերթերը հրատարակեցին բազմաթիւ յօդուածներ, նուիրուած զանազան հանրապետութիւններուն :

« Պրաւտա »ի Սեպտեմբեր 18ի համարին ընդարձակ տեղ էր յատկացուած « Հայկական Ռեսպուբլիկա »ին՝ լուսանկարներով. վերջիններէն՝ Երեւանի Լենինեան հրապարակը, Ցակոբ Կոչոյեանի « Բերքի Տօն » նկարը, Աւետիք Իսահակեանը, չորքն ունենալով Գիտութեանց կառոյցի նախագահ Վիկտոր Համբարձումեանը, եռաժիչտ Յարութիւնեանը, դերասանուհի Վաղարշեանը, նկարիչներ Սարեան ու Զարդարեանը եւ երգչուհի Սոնա Զանդարեանը. ապա բիւրականի աստղադիտարանը, Ղափանի հանքագործները, խաղողաքաղը կոլխոզում եւ այլն :

Յօդուածներ ունին Վ. Համբարձումեան, Գարեգին Սեւունց, Նորա Ազամեան, Ա. Սարգսեան, ճարտարապետներ Աբգարեան եւ Ազաթաբեան, Ֆրանսիայից հայրենադարձ եւ այժմ Գիտութեանց կառոյցի անդամ բժիշկ Մկրտիչ Տէր Կարապետեան եւ Հայաստանի Կոմկուսի առաջին քարտուղար Ս. Թովմասեան :

Կանգ ենք առնում սրա վրայ, որովհետեւ Ս. Թովմասեան Մ. Հայաստանի ամենապատասխանատու պաշտօնեան է :

Կարդացինք ուրիշ խորհրդային հանրապետութիւններին նուիրուած համարները. ոչ մէկում չտեսանք այնպիսի առարաժոյն, կատարեալ, անհերքելի ու յիմար յարձակում իրենց ազգային քարոզական հոսանքների դէմ, որպիսին նա Թոյլ է տուել իրեն :

Բայց անհանդուրժելին ու սարսափելին Ս. Թովմասեանի Հ. Յ. Դաշնակցութիւնը հահոյելն ու զրպարտելը չէ, այլ Զաքարիայի պապանձումը Հայոց պատմութեան ահաւոր երեւոյթի՝ Ջարդի ու տեղահանութեան եւ հայրենի հողերի լինն տասնեակներուն հայ ժողովուրդը պատասխանատու հանելու համար :

Ահաւասիկ Ս. Թովմասեանի ամբաստանագիրը :

« Հոկտեմբերեան Յեղափոխութեան յաղթանակի տարիներուն Հայաստանի բանուորներն ու գիւղացիները կոմկուսի առաջնորդութեամբ կրկին վճռական պայքարի մէջ մտան Թշնամու (այսինքն Դաշնակցութեան) հետ եւ կարճ բանակի օգնութեամբ (պէտք է որ Ս. Թովմասեանը երեք անգամ ընդգծէր վերջին երեք բառերի տակ), 1920 թուի Նոյեմբեր 29ին միանգամ ընդմիշտ ոչնչացրին դաշնակ ազգայնական եւ հակահեղափոխական ուժերի եւ հաստատեցին Խորհրդային Իշխանութիւն : Լենինի հեռագրով շնորհաւորեց « կայսերապաշտների ճնշումից ազատագրուած աշխատաւոր Խորհրդային Հայաստանը » :

Այսպէս են տալիս պատմութիւնը, երբ խիղճն ու ամօթը բացարձակապէս բացակայում են : Եւ թուում է թէ հասարը ծիծաղեցնելու համար է, որ նոյն « Պրաւտա »յում Սեպտեմբեր քանիին Խ. Մ. Գիտութեանց Կաճառի անդամ Ֆեդոսէեւը գրում է. « Անցեալում ճնշուած ժողովուրդների մարդիկ Խորհրդ. Իշխանութեան տակ գտան մարդկային արժանապատուութիւն եւ իսկապէս զարձան անհատներ » : Եթէ այդպէս լինէր Ս. Թովմասեանն այդքան չէր կեղծել :

Ամենայն Հայոց Կաթողիկոս : Եւ պատրաստուած ժողովը ձգելով հեռացան կարեւոր թիւով ներկայացուցիչներ, որոնք պատրաստութեամբ եւ պատասխանատուութեամբ, դեռ եւս նոյնքան բարձր արժէք կը ներկայացնէին որքան մը նացող մեծամասնութիւնը :

Ըրինք այս հպանցիկ խորհրդածութիւնները, ցոյց տալու համար թէ Կաթողիկոսական Տեղապահը, 1955ին, իր փասիւրական եւ վտանգաւոր քայլով, կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը եւ Հայոց եկեղեցին կը հարուածէր մեծապէս, առնոյց ճակատագիրը յանձնելով « ժողովրդային բոլոր խաւերուն » :

Ինչպէս վերեւ յիշեցինք, 14 Հոկտեմբեր 1955, Ուրբաթ օրը, Կիլիկիոյ Կաթողիկոսական ընտրութեան համար « վերջնական եւ անյետադարձելի » թուականը, եթէ իսկական դարձակէտ մը, որովհետեւ Տեղապահ Պատ. Արքեպիսկոպոս, նոյն այդ թուականին հրաժարեցաւ իր պաշտօնէն, զգալով թէ, այլեւս, իր պաշտօնավարութեան չրջանին կարելի չէր, ուեւէ ձեւով, կատարել Մեծի Տանն Կիլիկիոյ նոր Գահակալի ընտրութիւնը :

ՀՐԱՀԱՐՈՒՄ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԻ

1955 Հոկտեմբեր 9, Կիրակիէն մինչեւ 23 Հոկտեմբեր Կիրակիի ժամանակամիջոցը, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ենթակայ Հայութեան համար, ներքին զարթնումներու եւ իսկական տագնապի օրեր եղան : Հալէպի Գաւառական Ժողովին դէմ սարքուած զաւերը եւ այդ ուղղութեամբ կատարուած լրագրային չարուճարկական գրգռութիւնները, առեղծած էին ջղայնութեան եւ անհանգստութեան վիճակ մը, բոլորին մէջ : Կաթողիկոսական ընտրութեան ԵՐՐՈՐԴ ՅԵՏԱԶՈՒՄԸն ու Հալէպի Գաւառականին օրինականութեան դէմ կատարուելու վրայ եղող ոչ – օրինական միջամտութիւնները անհամի ուրախութիւն կը պատճառէին ընդդիմադիր « համապաշտ »ներուն, որոնք յաղթանակ չափարել սկսած էին ամենուրեք : Ազգային – եկեղեցական կեանքէն ներս, ու Ազգային Սահմանադրութեան դէմ պեսական միջամտութիւն հրաւիրողներուն ախտաժէտ երեւակայութեան առջեւ կը բացուէր օրէնքը միանգամընդմիշտ լուծ տեսնելու հեռանկար մը : Ոչ-բոլշեւիկ պիտանք թէ այդ չրջանին կը ծրագրուէր, նաեւ, ու հաւանաբար առաջին թելադրութեան մը որպէս հետեւանք, նշանակուի ներկայացուցչական ժողովով մը կատարել կաթողիկոսական ընտրութիւն եւ Ազգը դնել կատարուած իրողութեան մը առջեւ :

Խմբագրական ՀԱՍԿԻ

(12 Շար.)

ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿԻՆ

ՍԵՒՆ ՈՒ ՁԵՐՄԱՆԸ

ՄՄԲ.— Խորհրդային յեղափոխութեան 40րդ տարեդարձին առթիւ փրաւնական թերթերը սիւնակներ կը նուիրեն ոչ միայն Մոսկուայի կարմիր հրապարակին վրայ կատարուած տողանցքներուն եւ խօսուած ճառերուն այլ եւ բախտատակները կ'ընեն այդ 40 տարուան ընթացքին Խորհրդ. Միութեան ձեռք բերած յաջողութեանց եւ իր ժողովուրդին ըրած աւլուր զոհողութեանց :

Այսպէս *Փարի Փրէս* էջ մը մանրամասնութեանց կարգին հետեւեալ ամփոփ եւ խտացած եզրակացութիւնը կը հրատարակէ հետեւեալ խորագրով ·—

« Փարաւոններու եգիպտասէն ի վեր ոչ մէկ ժողովուրդ այսքան սուղ վճարած է իր յաղթանակները : »

1917 Նոյեմբեր վեցին Քրոնչթատի նաւաստիները զրահ տուին Սէն Փեթերսպուրկի ձմեռնային պալատին վրայ :

Քառասուն տարի վերջ Խորհրդ. Միութիւնը կը տօնէ այդ տարեդարձը ժողովրդական ցոյցերով՝ որոնց զլուխն է Մոսկուայի կարմիր հրապարակին վրայ տուող երկրորդ արբանեակին արձակումը : Այս քառասուն տարիներու ընթացքին կատարուած է ամէնէն զժուար եւ ամէնէն տարօրինակ փորձը ներկայ բոլոր ժամանակներու :

Հին Ռուսաստանը իր սահմանները տարածեց եւ ամբողջ երկիրներ տուաւ իր հպատակութեան տակ : Իր բանակը Պերլին է եւ էլպայի եզերքներուն տարած ուած : Ցարերու ամէնէն փառամոլ երազները իրականացած են : Իր բնակչութեան հարիւրին 7ը անգրագէտ էր, այսօր չքեղ համալսարաններէն դուրս կ'ելլեն անթիւ ճարտարագէտներ, ինչպէս որ եւ է երկրի համալսարաններէն : Իր ճարտարուեստը աշխարհի երկրորդն է, իսկ զինուորական ուժը ահաւոր :

Ահա այն բոլոր յառաջդիմութիւնները զոր կը ներկայացնեն Մոսկուայի կարմիր հրապարակին վրայ : Բայց պիտի չըսեն անշուշտ թէ ի՞նչ գին վճարեցին այս տեսանելի յառաջդիմութիւններուն համար :

Այն կարգ ու սարքը որ պիտի արդիւնէր մարդուն չհագարծումը ուրիշ մարդու մը կողմէ ամենափոքր չափով մը չտուաւ անհրաժեշտ նիւթական հանգստաւէտ պայմանները աշխատաւորին, առանց որ – րուն ամէնէն մեծ խոստումները կը մնան ապարդիւն խօսքեր միայն :

47 միլիոն խորհրդային զիւղացիութիւնը կ'արտադրէ այնքան որքան 7 միլիոն ամերիկացի զիւղացին : Իր հացահատիկը անհրաժեշտէն հարիւրին քանի պակաս է, միսը եւ կաթը հարիւրէն երեսուն կը պակսին իր երկու հարիւր միլիոն բնակչութեան տարբական պէտքը զոհացնելու համար :

Հակառակ յաջորդական հինգամեակներու իր ճարտարագործութիւնը ամերիկեան պողպատի արտադրութեան կէսն է միայն, իսկ Ամերիկան ամէն կարգի արտադրութիւններու 45րդը միայն ունի այսօր Խորհրդային Միութիւնը : Իր զոր ծարաններէն հինգ հարիւր հազար կառք միայն դուրս կ'ելլէ, Ամերիկայի ութ միլիոնին, եւ Ֆրանսայի 800·000ին դէմ :

Եւ այս կառքերուն ամէնէն պարզը կը ներկայացնէ որակաւոր բանուորի մը ամսական վաստակին տասնըվեց անգամը :

Առակի կարգ անցած « կարագ թէ թըզնօթ » ասացուածքը որեւէ տեղ այնքան ի զօրու չէ եղած որքան այստեղ :

Եթէ ամերիկեան արտադրութեանց երկու երրորդը սպառողներուն համար է, խորհրդային կէսը զրահատակ կառքերու յատկացուած է որոնք կը տողանցեն բոլոր քաղաքներու մէջ, ինչպէս իրենց հպարտութիւնը եղող օդանաւերը, անդրերկրային հրթիռները եւ արուեստական արբանեակները որոնք խորհրդային իշխանութեան փառքը կը կազմեն :

Որքան արիւն եւ արցունք հոսած են « վաղուանին յոյսով » չատ յաճախ երգուած, եւ որ սակայն հեռու է իրականանալէ : Ցեղափոխութեան միլիոնաւոր զոհերուն յաջորդեցին հարիւր հազարաւոր տեղերուն հաստատուած գիւղացիներ, կեդրոնացման կայաններու զոհեր, արիւնալի մաքրագործումներ որոնք Ստալիններու հետքերուն վրայ կը քալեն :

Երբեք այսքան ողջակէզ, չէ պահանջուած մարդկութենէն, հին պատմական դարերէն ասդին : Քառասուն տարուան ընթացքին ամբողջ ժողովուրդ մը զլուխ ծռեց աշխատանքին առանց որեւէ ուրախութիւն եւ հաճոյք քալելու անկէ :

Մոսկուայի փառայեղ տօնակատարութիւնները, ճարտարարուեստի յառաջդիմութիւնը, զինուորական ուժը, դիւանագիտական յաջողութիւնները, դիտական աննախընթաց արդիւնքները, քառասուներորդ տարեդարձին առթիւ տպուած չը – քանչանին մէկ կողմն են միայն :

Միւս կողմը՝ ամբողջ սերունդներուն զոհողութեան, ապահովութեան, եւ ամէն մարդու անկին հարստութիւնը եղող հաւասարութեան մը գինն է արձակուած :

Ոչ ոք եւ ոչ ոք աշխարհում, երկաթեայ վարագոյրի այս կողմ կամ այն, կարող է տարակուսանքի մէջ ընկնել — հայ ազգին եւ հայրենիքին անբաժանելի հարուածներ են տուել ուղղակի կամ անուղղակի, դաւադրօրէն կամ բացէ ի բաց ռուսական կառավարութիւնները Պետրոս Ա.ից սկսած մինչեւ Լենին – Ստալին : Նրանք միշտ անպիտացել են Հայաստանի զօրութիւնն իբրեւ հայ ժողովրդին պատկանող հող եւ Տաճիկ բռնակալների դէմ մղած մեր պայքարը համարել են ըմբոստացում ռուսական շահերի դէմ :

ՀԱՅԿ ՍԱՐԳՍԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

•

Տեղապահ Սրբազանը անպիտանալ կը ձեւացնէր այն բոլոր մտածողութիւններն ու հոսանքները, որոնք համայն ազգը կը յուզէին տասը տարիներէ ի վեր, ու կը յուզեն տակաւին : Կաթողիկոսական ընտրութեան փափուկ եւ նուրբ գործը, պատասխանատու եկեղեցականի մը կողմէ կը յանձնուէր « ժողովրդային բոլոր խաւերուն » զնահատութեան եւ լուծման : Հայաստանեայց եկեղեցւոյ եւ Հայ ժողովրդի բովանդակ պատմութեան ընթացքին, ե՞րբ, եւ ո՞ւր, Հոգեւոր Պետի մը ընտրութիւնը կատարուած էր « ժողովրդային բոլոր խաւերուն ընդունելի ձեւով » մը : Ակնարկուած այդ հաւաքականութեան մաս կը կազմէին, անշուշտ, այլազանութիւնները եւս, որոնք մամուլով եւ բեմով հայ ժողովուրդը պառակտելու, Հայոց եկեղեցին տկարացնելու կ'աշխատին, եւ որոնց տիկիններէն ամանք, ծննդեամբ՝ անմիւռոն, ու ամուսնութեամբ՝ այլազան, կաթողիկոսարանին Մայր Տաճարը պղծողներու ռահվիրանեը կը դառնային : Պաշտօնական այս ծայրութիւնը, իգուն արամաբանութեամբ եւ փխրուն փաստարկութիւններով կ'ուզէր պարարել անյագելի փառասիրութիւնը օրուան Տեղապահին, որու հերոսական անցեալի եւ կոտորածներու մասին, հակառակ որ Արութինով էր կոչուում : Իսկ այսօր, երբ թէ Խրուչչեւեան ուելի ազատօրէն արտայայտուելու պայմաններում, առաջին քարտուղարը վատաբար փախչում է մեր մշտամօրմոք ցաւը լուսաբանելու պարտականութիւնից եւ յարձակում « Դաշնակների » վրայ :

Ս. Թովմասեան զրում է սեւով ճերմակի վրայ : « Հոկտեմբերեան Յեղափոխութեան յաղթանակի լուրը Հայաստանի բանուորներն ու գիւղացիները ընդունեցին մեծ ոգեւորութեամբ : Բայց ազգայնական — դաշնակցական կուսակցութիւնների — դաշնակների, մենշեւիկների եւ մուսաւաթիստների զաւաճանական գործի եւ արեւմտեան կայսերապաշտների միջամտութեան պատճառով՝ Խորհրդային իշխանութիւնն ուելի ուշ մտաւ Անդրկովկաս :

« Պատերազմից հիւծուած Հայաստանն ընկաւ քաղքենական ազգայնական գաշ – նակների արիւնոտ թաթերի մէջ. նրանք ծախեցին երկիրը նախ զերմանա–թրքական յարձակարներին : Ապա անդլեամերիկեան աշխարհակալներին : Հայաստանում սիրում էր վայրենի քամահանդէս : Հայ ժողովրդի գլխին կախուեց ֆիզիքական բնաջնջման վտանգը :

« 1920 թուի Մայիսին, մեծամասնութիւնը կազմակերպութիւնների զեկավարութեամբ, Հայաստանի բանուորներն ու գիւղացիները ապստամբեցին եւ առեղծեցին Խորհրդային Իշխանութիւն. բայց հայ ժողովրդի թշնամի գաշնակները, կայսերապաշտների օգնութեամբ, ապստամբութիւնը խեղդեցին արեան մէջ :

Հայ աշխատաւոր ժողովրդի այդ ողբերգական օրերին բանուորներն ու գիւղացիները կոմկուսի առաջնորդութեամբ կրկին վճռական պայքարի մէջ մտան Թշնամու (այսինքն Դաշնակցութեան) հետ եւ կարճ բանակի օգնութեամբ (պէտք է որ Ս. Թովմասեանը երեք անգամ ընդգծէր վերջին երեք բառերի տակ), 1920 թուի Նոյեմբեր 29ին միանգամ ընդմիշտ ոչնչացրին դաշնակ ազգայնական եւ հակահեղափոխական ուժերի եւ հաստատեցին Խորհրդային Իշխանութիւն : Լենինի հեռագրով շնորհաւորեց « կայսերապաշտների ճնշումից ազատագրուած աշխատաւոր Խորհրդային Հայաստանը » :

Այսպէս են տալիս պատմութիւնը, երբ խիղճն ու ամօթը բացարձակապէս բացակայում են : Եւ թուում է թէ հասարը ծիծաղեցնելու համար է, որ նոյն « Պրաւտա »յում Սեպտեմբեր քանիին Խ. Մ. Գիտութեանց Կաճառի անդամ Ֆեդոսէեւը զրում է. « Անցեալում ճնշուած ժողովուրդների մարդիկ Խորհրդ. Իշխանութեան տակ գտան մարդկային արժանապատուութիւն եւ իսկապէս զարձան անհատներ » : Եթէ այդպէս լինէր Ս. Թովմասեանն այդքան չէր կեղծել :

Մի բան են « ԿԱԹՈՂԻԿՈՍՆԱՆ ԻՐ ԱՑՍ ԱՆԳԱՄ », ամէն գնով, եւ որ կարծէք « ժողովրդային բոլոր խաւերուն » ըսել կ'ուզէր կամ պիտ կ'ընարէք, կամ ընտրութիւն ընել չեմ տար » :

ՀԱՄԿ չի փափաքիր, առ այժմ, քննութեան առնել, թէ հեռաւոր կամ մօտաւոր անցեալին, կաթողիկոսական ընտրութիւնը Կիլիկեան Աթոռի թէ էջմիածնայ մէջ, կատարուա՞ծ է այն հիմունքներով, զորս Պատ. Արքեպիսկոպոս նախապայման կը դնէր Պատրիարքական Ժողովը ի նիստ հրաւիրելու համար : Տակաւին թարմ են մտքերու մէջ, օրինակի համար, երջանկայիշատակ Գէորգ Ե. Կաթողիկոսի ընտրութեան հանդամանքները : 1911ին Ս. Էջմիածնի մէջ կարելի էր ընտրութիւն կատարել, զերծ՝ ամէն տեսակի կաշկանդումէ եւ պարտադրութենէ : Այդ օրէնքն ալ, կային երկու պաշտօնական թեկնածուներ, իրենց պաշտպաններով Պատրիարքական Ժողովին մէջ : Երկու այդ թեկնածուներուն ի նպաստ, մամուլի մէջ ծայրահեղ պայքար տարուեցաւ, դաշտիարարանութիւններ եւ տեսակէտներ իրար բախեցան, անձնական նախատինքներ ի յայտ եկան բուռն եղանակով մը, սակայն եւ ոչ ոք մտքէն անցուց, թէ կաթողիկոսական ընտրութիւնը պէտք է կատարուի « ժողովրդային բոլոր խաւերուն ընդունելի ձեւով » մը, որպէսզի ընտրեալ կաթողիկոսը զառնայ մեր բանին « ԿԱԹՈՂԻԿՈՍՆԱՆ ԻՐ ԱՑՍ ԱՆԳԱՄ », ամէն գնով, եւ որ կարծէք « ժողովրդային բոլոր խաւերուն » ըսել կ'ուզէր կամ պիտ կ'ընարէք, կամ ընտրութիւն ընել չեմ տար » :

ՀԱՄԿ չի փափաքիր, առ այժմ, քննութեան առնել, թէ հեռաւոր կամ մօտաւոր անցեալին, կաթողիկոսական ընտրութիւնը Կիլիկեան Աթոռի թէ էջմիածնայ մէջ, կատարուա՞ծ է այն հիմունքներով, զորս Պատ. Արքեպիսկոպոս նախապայման կը դնէր Պատրիարքական Ժողովը ի նիստ հրաւիրելու համար : Տակաւին թարմ են մտքերու մէջ, օրինակի համար, երջանկայիշատակ Գէորգ Ե. Կաթողիկոսի ընտրութեան հանդամանքները : 1911ին Ս. Էջմիածնի մէջ կարելի էր ընտրութիւն կատարել, զերծ՝ ամէն տեսակի կաշկանդումէ եւ պարտադրութենէ : Այդ օրէնքն ալ, կային երկու պաշտօնական թեկնածուներ, իրենց պաշտպաններով Պատրիարքական Ժողովին մէջ : Երկու այդ թեկնածուներուն ի նպաստ, մամուլի մէջ ծայրահեղ պայքար տարուեցաւ, դաշտիարարանութիւններ եւ տեսակէտներ իրար բախեցան, անձնական նախատինքներ ի յայտ եկան բուռն եղանակով մը, սակայն եւ ոչ ոք մտքէն անցուց, թէ կաթողիկոսական ընտրութիւնը պէտք է կատարուի « ժողովրդային բոլոր խաւերուն ընդունելի ձեւով » մը, որպէսզի ընտրեալ կաթողիկոսը զառնայ

ԿՈՂՄՆՏՍ ԿԻՍԼԱԼԵԿԻՑԻ ՀԱՍՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ

ՄՄՏ.— «Գաղտնի կիսլաեկցիա հարցերի» գրախնդրատուի (Լիտվոս) տատցած հետեւյալ զեկույցը, նույնպես հետաքրքրական է հետեւյալ տեղեկությունների համար.

Գաղտնի կիսլաեկցիան հարցերի մեծ մասը վերաբերում է ռազմական գործերին։ Ինչպես հայտնի է, Լիտվան ունի 20 հազար հոգանոց բանակ, որի համար տարեկան ծախսվում է 80 միլիոն լիտ։ Ռազմական գործերի նախարարությունը ամեն տարի ստանում է նոր զենքեր, զինամթերք, զրահամեքենաներ, ինչպես նաև ռազմական նշանակության այլ իրեր։ Ռազմական գործերի նախարարությունը ամեն տարի պատվերներ է անում Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի և Չեխոսլովակիայի զենքի գործարանատերերին։ Ռազմական գործերի նախարարությունը ամեն տարի ստանում է նոր զենքեր, զինամթերք, զրահամեքենաներ և այլ ռազմական նշանակության իրեր

ՍՊՈՒՏՆԻԿԸ ԵՒ ՇՈՒՆԸ

ՓՈՐԹՈՒԿԱԼՑԻ ԳԻՏՈՒՆ ՄԸ ԿԸ ՀԵՐՔԷ ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԱՐԲԱՆԵԱԿՆԵՐՈՒ ԳՈՅՈՒԹԻՒՆԸ

Մոսկուայէն հասած լուրերուն համաձայն, Խ. Միութիւնը պիտի արձակէ իր երրորդ Սպուտնիկը. կարմիրները յոյս ունին, որ այս անգամ լուսին պիտի երթան :

Մինչ այս մինչ այն, միջազգային մամուլը զբաղած է արբանեակին շունով :

Իտալիոյ Համայնավար կուսակցութեան պաշտօնաթերթին Մոսկուայի թղթակիցը կը յայտնէ, թէ շունը թունաւորուած է. — Լայքան երկիր պիտի չվերադառնայ : Շնիկը քնացած է զօրաւոր թմրեցուցիչի մը շնորհիւ, որ կը գտնուէր իր ուտելիքին վերջին մասին մէջ. թմրեցուցիչը դրուած էր, որպէսզի անասունը չտառապի :

Մոսկուայի պաշտօնական շրջանակները լուռ կը մնան շան մասին : Թերթերու մէջ, հինգշաբթիէն ի վեր միայն ոտանաւորներ կը հրատարակուին ի փառս Սպուտնիկի : Արդարեւ, խորհրդային թերթերը գիտական ոչ մէկ յօդուած հրատարակեցին արուեստական արբանեակին մասին :

Գիտուն մը՝ Աքսալեյին կը յայտնէ թէ շունը մեռած է եւ կարելի չէ զայն երկիր վերադարձնել, մինչ մառեշալ Բուլգանին կը յայտարարէր, թէ ինք լուր չունէր շան ճակատագիրէն :

× Լոնտոնի կիրակնօրեայ թերթերէն « Տը Փիփըլ» հաստատած է 50.000 սթերլինի նուէր մը (60 միլիոն ֆրանք) առաջին մարդուն՝ որ պիտի երթայ լուսին եւ վերադառնայ :

× Լիզպոնի օդանաւային գիտութեանց եւ բարձրագոյն մասնագիտութեանց հաստատութեան տնօրէնը՝ Փրոֆէսէօր Վարելա Սիտ յայտարարեց. — արուեստական արբանեակներ գոյութիւն չունին եւ աշխարհ խորհրդային քարոզչութեան մը զոհն է՝ հաւատալով անոնց : Միացեալ Նահանգներ շատ աւելի առաջ են այս մարզին մէջ : Խ. Միութիւնը «սպուտնիկ»ի պատմութիւն մը հնարեց՝ ազդեցութիւն գործելու նպատակով : Յարգ գիտական պատասխանատու ոչ մէկ կազմակերպութիւն հաստատեց այս լուրը, մինչ մարդիկ սկսան տեսնել բազմաթիւ բաներ՝ որ կը թռչին ... :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԻՏԱԼԻՈՅ Հանրապետութեան Նախագահ Կրոնքի Անգարա հասաւ, ուր չորս օր պաշտօնական հիւր պիտի ըլլայ Թըրքական իշխանութեանց :

ԵԳԻՊՏՈՍԻ Արտաքին Նախարար Ֆաուզի հասաւ Մատրիտ, ուր պիտի մնայ մէկ շաբաթ՝ խորհրդակցութիւններ ունենալով սպանիական իշխանութեանց հետ :

ԳԱՀԻՐԷԻ ձայնասփիւռին համաձայն, ծինեւի ֆրանսական ու եգիպտական ստուերակութիւնները համաձայն գտնուած են գլխաւոր կէտերուն մէջ :

ՄՈՍԿՈՒԱՅԻ երիտասարդական փառատօնին մասնակցած իրաքցի 97 տղաք ու աղջիկներ ձերբակալուած են՝ իրենց երկիրը վերադառնալէ անմիջապէս վերջ : Անոնցմէ շատեր կեղծ անցագիրներ օգտագործած էին :

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ կը յայտարարեն, թէ ամերիկեան արուեստական առաջին արբանեակը պիտի արձակուի Դեկտեմբերի մէջ :

ԴԵԿՏԵՄԲԵՐ 15ԻՆ

« ՍԻՓԱՆ – ԿՈՄԻՏԱՍ»ի
ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ՝

SALONS DES AMBASSADEURS

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԼՍԱՐԱՆ

Հերթական դասախօսութիւնը այս շաբաթ երեքշաբթի գիշեր ժամը 21ին, Քաոէ սըրահին մէջ : Կը խօսի Պ. ԱՇՈՏ ԻՍԱՀԱԿԵԱՆ, նիւթ՝ «Հայերու եւ օտարներու պայքարը մեր մէջ» : Կը խնդրուի ըլլալ ճշդապահ :

Imprimé sur les presses du Journal HARATCH
17, Rue Bleue, 17 — PARIS (9e)

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԽՆՋՈՅՔ

«ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐ»ՈՒԱՅ ԱՌԹԻՒ

ԱՐՆՈՒՎԻԼԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. «Վարդան» ենթակոմիտէի եւ մասնակցութեամբ Կապոյտ Խաչի մասնաճիւղին եւ Նոր Սերունդի խումբին :

ՆՈՅԵՄԲԵՐ 24ԻՆ

ԻՍԻԻ ՄԷՋ

ՆՈՅԵՄԲԵՐ 17ԻՆ

Մանրամասնութիւնները յաջորդով :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Ֆ. Կ. Խաչի Տէսինի Ազգային վարժարանի Կրթ. Մարմինս շնորհակալութեամբ ստացած է տեղւոյս Հ. Մ. Ը. Մ.ի վարչութենէն հազար ֆրանք դըրամ, փոխան ծաղկեպսակի Պ. Նազար Ազիկեանի ողբացեալ տիկնոջ կսկծալի մահուան առթիւ : Նոյն առթիւ ցաւակցութիւններ՝ Պ. Նազարին ու իր ընտանեկան պարագաներուն :

ՆՈՒԷՐ

Այրի Տիկին Նարդուհի Համալեանի մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի հետեւեալ նուէրները եղած են Արաբկիրի Հայր. Միութեան :

Տէր եւ Տիկին Ս. Համալեան չորս հազար ֆրանք, Տէր եւ Տիկին Ա. Համալեան երեք հազար, Այրի Տիկին Մարիամ Սուվալեան երկու հազար, Պ. Սարգիս Թերեան, Տէր եւ Տիկին Սուրէն Մխալեան, Տէր եւ Տիկին Տ. Եկաւեան, Տէր եւ Տիկին Կարապետ Եկաւեան, Տէր եւ Տիկ. Տիգրան Թումիկեան, Տէր եւ Տիկին Ալեքսանտր Հացագործեան, Տէր եւ Տիկին Մինաս Պեխլուեան, Տէր եւ Տիկին Մարտիրոս Էժաէհարեան, Տէր եւ Տիկին Բարգէն Էժաէհարեան, Տէր եւ Տիկին Կ. Թաջեան, Տէր եւ Տիկին Պ. Ջինիճեան, Տէր եւ Տիկին Մ. Պօղոսեան, Տէր եւ Տիկին Ն. Թումիկեան հազարական ֆրանք, Տէր եւ Տիկին Ղազար Օտապաշեան երեք հազար, Տէր եւ Տիկին Յովհ. Զուրիկեան 1500, Տէր եւ Տիկին Յակոբ Փափազեան, Տէր եւ Տիկին Մ– Օտապաշեան երկու հազարական, Տէր եւ Տիկին Պ. Պօղոսեան, Հ. Քաջեան, Ս. Պօղոսեան 500ական :

× Իսկ նոյն առթիւ Ս. Ժերոմի եկեղեցիին նոյնպէս եղած են հետեւեալ նուէրները, Տէր եւ Տիկին Ա. Համալեան երկու հազար, Այրի Տիկին Մ. Սուվալեան, Տէր եւ Տիկին Ս. Մխալեան, Տէր եւ Տիկին Կ. Թաջեան, Տէր եւ Տիկին Պ. Ջինիճեան, Տէր եւ Տիկին Ն. Թումիկեան հազարական ֆրանք, Տէր եւ Տիկին Յ. Նիկողոսեան, Հ. Թաջեան, Լ. Յովհ. Զուրիկեան 1500, Տէր եւ Տիկին Թումիկեան, Մ. Պօղոսեան, Պօղոս Պօղոսեան եւ Սարգիս Պօղոսեան 500ական :



Նոր կատարելագործում կօշիկի կրունկներու պատրաստութեան մէջ

Առաջին հայ հաստատութիւնը որ յաջողած է մաթիէռ փլասթիքի եւ ալիւմինիոմի միացումով շինել անբէկ (էնքասապլը) եւ ճկուն կօշիկի կրունկներ ամէն բարձրութեամբ :

Դիմել՝

VAN-PLAST
(Վ Ա Ն Լ Ե Ա Ն)
7, RUE GODOT DE MAUROY
Tél. : OPE. 01-08
Առաւօտները հեռաձայնել՝ TAI 33-38

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ

ՍԷՆ ՇԱՄՈՆԻ ՄԷՋ

Այս կիրակի կէսօրէ վերջ, ժամը 15ին, Սալ Ժան տ'Արքի մէջ :

Գեղարուեստական բաժին, երգ, խմբերգ, արտասանութիւն :

Մուտքը ազատ է :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

ՄԱՐՍԷՅԼ. — Այրի Տիկին Համեստուհի Միլտոնեան, Տէր եւ Տիկին Սեպուհ Միլտոնեան, Տէր եւ Տիկին Ջաւէն Միլտոնեան, Տէր եւ Տիկին Փառնակ Յակոբեան, կը ծանուցանեն թէ այս կիրակի ժամը 11ին, Պոմոնի Ս. Մեսրոպ եկեղեցւոյ մէջ տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան պաշտօն եւ պատարագ իրենց ամուսնոյն, հօր, աներհօր Բենիկ Միլտոնեանի մահուան տարելիցին առթիւ : Կը հրաւիրուին հանգուցեալին յիշատակը յարգողները :

ՑԵՐԵԿՈՅԹ ՎԻԷՆԻ ՄԷՋ

Վիէնի Նոր Սերունդը կազմակերպած է ցերեկոյթ պարահանդէս մը, Կիրակի, (17 Նոյեմբեր) կէսօրէ վերջ ժամը 3ին :

Կը հրաւիրուին Վալանսի, Սէնթ Էթիէնի, Սէն Շամոնի, Լիոնի, Տէսինի Նոր Սերնդականները եւ համակիրները :

Հաճելի մթնոլորտ :

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԲԱՑԱՌԻԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ «ՇԱՆԹ» ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԻ ԿՈՂՄԷ

23 Նոյեմբեր, շաբաթ երեկոյ ժամը 9ին, Պոմոնի Սահակ – Մեսրոպ սրահին մէջ :

Կը ներկայացուի ԳՐԻԳՈՐ ՎԱՀԱՆի

ԲԱԽՏԻՆ ԱՆԻՒԸ (3 արար)

Ղեկավարութեամբ Գ. ՔԷՆՏԻՐԵԱՆԻ

Ի նպաստ գրադարանին ֆոնտին :

Կը մասնակցին Մակի Իշխանեան, Շաքէ Սէրէնկիւլեան, Գր. Քէնտիրեան, Գր. Թիւթէլեան, Ժ. Միրիճեան, Յովհ. Տէրվարդանեան, Աւետիս Եօթնեղբայրեան :

Տոմսակները ստանալ ընկեր Գ. Եօթնեղբայրեանէ եւ Յ. Գօճակէօզեանէ :

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻՆ

Տէր եւ Տիկին Մ. Կարապետեան (Լիոն), փոխան ծաղկեպսակի երկու հազար ֆր. կը նուիրեն Կարմիր Խաչի Ֆէյանվիլիէի օգնութեան կայանին Այրի Տիկին Գ. Վտարանդիի մահուան առթիւ :

Ստանալ «Յառաջ»էն :

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՓԱՐԻԶ. — Հ.Յ. Դ. «Փոթորիկ» խումբին ժողովը, այս հինգշաբթի, ժամը 9ին, 17, բիւ Պլէօ :

ՎԱԼԱՆՍ. — Կապ. Խաչի ընդհ. անդամական ժողովը այս կիրակի ժամը 2.30ին,, Պ. Արսէն Տէր Սարգիսեանի գերձակատան մէջ : Ընկերուհիներու ներկայութիւնը պարտաւորիչ է :

ՍԻՓԱՆ ԿՈՄԻՏԱՍ

Երգչախումբին փորձերը վերսկսած են եւ տեղի կ'ունենան ամէն երեքշաբթի գիշեր, ժամը 8.30էն 10ը, Ազգ. Տան թատերասրահը, 32 բիւ տը Թրէվիզ : Նոր անդամները կ'արձանագրուին տեղւոյն վրայ, փորձերուն ընթացքին :

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՏՈՒՆ

SOCIÉTÉ ANONYME
Դրամագլուխ՝ 8.000.000
Siège Social : 32, Rue de Trévise, Paris

Avis de Convocation

Բաժնետէրերը կը հրաւիրուին վարչական խորհուրդին կողմէ հերթական ընդհանուր ժողովի, երկուշաբթի 18 Նոյեմբեր, 1957, ժամը՝ 17ին, կեդրոնատեղին՝ Փարիզ, 32 բիւ տը Թրէվիզ, զբաղելու համար օրակարգի հետեւեալ նիւթերով. — Վարչական խորհուրդին եւ հաշուեքննիչին զեկոյցը 1952ի տարեշրջանին համար :

— Հաշիւներու վաւերացում :
— Հրաժարում եւ ի հարկին նշանակում վարչութեան անդամներու :
— Հաշուեքննիչի նշանակում :
— Զանազան հարցեր :

Ի դիմաց
Վարչական խորհուրդի՝
ՍԱՐԱՖԵԱՆ

Article paru aux affiches parisiennes les mercredi 23 et jeudi 24 Oct. 1957.

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

Վարձու տուն մը կամ յարկաբաժին մը ընտանիքի մը համար :

Տեղեկանալ Յառաջի վարչութեան :

Կ'ՈՒԶՈՒԻ

Société France-Cameroun
24. RUE D'ENGHIEN, PARIS

Կը փնտռէ հայ երիտասարդ մը ամուրի, ազատ զինուորական պարտականութենէ եւ պատրաստուած : Դիմել$ գրաւոր կամ անձնապէս :

ՄՈՒՐԱՏ ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՄԻՈՒԹԻՒՆ
Մ Ա Ր Ս Է Յ Լ
Ե Ղ Ա Ն Ա Կ Ի
ԱՌԱՋԻՆ ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ
Շաբաթ, Նոյեմբեր 16, ժամը 22էն մինչեւ առաւօտ
HOTEL SPLENDID
Grande Attraction... Surprise
ՏՈՄՍԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ՝
Ա. ՇԵԽԻԿԵԱՆԻ՝ 1, Bd, d'Athènes CO. 33-80 Ս. ԷՔՍԷՐՃԵԱՆԻ՝ 40, La Canebiére CO. 30-88

ՈՐԲԵՐՈՒ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԱՐՄՆԻ - ՓԱՐԻԶԱՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆ

ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՆՑԻԿ ՑԵՐԵԿՈՅԹԸ

ՆՈՅ. 24ԻՆ, ԺԱՄԸ 16էն 24 Կոտեմ Օբէլի շէնք սրահներուն մէջ

ՍԱՎԱ ՆԷԱԿՈՒՅԻ հռչակաւոր նուագախումբը եւ հաճելի անակնկալներ

Կը խնդրուի ապահովել սեղանները հեռաձայնելով ՓԱՍԻ 64.90

Մուտք 500 ֆրանք

Décoration — Agencement de Magasin
ANCIENS ÉTABLISSEMENTS
J. PAICHOUX et E. THION
149, RUE NATIONALE, PARIS 13e TÉL : GOB. 19 52
SERRURERIE D'ART ET DE BATIMENT
Tous Travaux de Fer Forgé

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925 Tél. : PRO. 86-60

R. C. Seine 57 A 2731 C. C. P. PARIS 15069 82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամս. 1600

Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք: Հատը 12 ֆր.

ՀԻՆԳՇԱԲԹԻ 14 ՆՈՅԵՄԲԵՐ

JEUDI 14 NOVEMBRE 1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8042 33e ANNEE Fondateur : SCHAVARCH MISSAKIAN ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3843

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՆՈՐ ԴԱՀԼԻՃԻՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԸ

Իր նախարարական յայտարարութեան մէջ Ֆելիքս Կայեար շեշտը կը դնէր Ալժերիոյ հարցին վրայ: Ու կ՚առաջադրէր առաջին հերթին Խորհրդարանին ներկայացնել հիմնական – օրէնք մը, որ ապահովէ Ալժերիոյ բոլոր համայնքներուն համակեցութիւնը եւ մարդոց իրաւունքներուն հաւասարութիւնը: Կ՚ըսէր թէ երեք տարուան կռիւները չեն տկարացուցած Ֆրանսայի վճռական կեցուածքը: Ու կոչ կ՚ուղղէր ապստամբութեան պետերուն, որ վերջ տան զինեալ դիմադրութեան:

Մինչ այդ, կառավարութիւնը արդէն Խորհրդարանէն պահանջեց երկարաձգել իր նախորդին տրուած լիազօրութիւնը՝ Ալժերիոյ եւ մայր երկրին մէջ ահաբեկչական շարժումները զսպելու մասին: Հիմնական – օրէնքը ուրբաթ օր պիտի դրուի օրակարգին վրայ:

Վարչապետը երկրորդ կարեւոր հարցը կը նկատէր ելմտական տագնապը, որ ա՛յնքան մտահոգիչ դարձած էր վերջերս: Ուստի նոր դահլիճը իր օրակարգի գլխաւոր խնդիրը դարձուց զայն: Ու առաջին գործն եղաւ 250 միլիառ ֆրանք պահանջել Պանք տը Ֆրանսէն:

Այս օժանդակութիւնը անյետաձգելի պահանջ մը դարձած էր: Կառավարութիւնը պարտաւոր էր Նոյեմբեր 15ին 50 միլիառ ֆրանք վերադարձնել Պետական Դրամատան՝ անցեալ Յունիսին փոխ առնուած երեք հարիւր միլիառին վրայ: Ի վիճակի չըլլալով հատուցանելու զայն, երեք ամիսէն վճարելի նոր պարտամուրհակ մը տրուեցաւ Պանք տը Ֆրանսի, որ միաժամանակ երկու հարիւր միլիառ ֆրանքի թարմ գումար դրաւ կառավարութեան տրամադրութեան տակ:

Այս գումարը հազիւ մինչեւ տարեգլուխ պիտի բաւէ՝ վճարելու համար պետական պաշտօնեաններու ամսաթոշակները եւ հոգալու ընթացիկ ծախքերուն:

Անհրաժեշտ է Դեկտեմբեր 31էն առաջ քուէարկել 1958ի ելմտացոյցը՝ խուսափելու համար նոր տագնապէ մը:

Պանք տը Ֆրանսի կանխավճարը կիսադարման մըն է միայն եւ հիմնական լուծում մը չի բերեր տագնապին:

Արմատական դարման կարելի է այն ատեն միայն, երբ հասոյթներն ու ծախքերը կը հաւասարակշռուին:

Սակայն իրերու ներկայ դրութեան մէջ, — մանաւանդ երբ օրական երկու միլիառ կը ծախսուի Ալժերիոյ համար — անհասանելի երազ մըն է հաւասարակշռութիւնը:

1958ի ելմտացոյցին ծախքերու բաժինը պիտի ըլլայ առաւելագոյն 5300 միլիառ ֆրանք, ըստ դահլիճի որոշման: Բայց կը նախատեսուի 800 միլիառ: Խորհրդարանէն պիտի պահանջուի հարիւր միլիառի խնայողութիւն մը: Սակայն ատիկա բաւական չէ:

Ի՞նչ ընել ուրեմն: Ամէնէն դիւրին եւ ապահով միջոցն է նոր տուրքեր հաստատել: Այդ որոշումն է, որ յանգեցաւ կառավարութիւնը, յուսալով 104 միլիառ յաւելեալ հասոյթ ապահովել: Իր ծրագիրը այսօր կը ներկայացնէ ազգային ժողովին, որմէ մասնաւոր լիազօրութիւն պիտի պահանջէ՝ ելմտական – տնտեսական տագնապը փարատելու համար:

Ինչպէս գրեցինք արդէն, ծրագրուած է առաջին ատեն յաւելումներ կատարել զբօսատուրքերու, անձագրերու, ինքնաշարժի արտօնագրերու եւն. վրայ: Դեկտեմբեր մէկէն սկսեալ հարիւրին 5 պիտի աւելնան պերճանքի առարկաներու, մեքենաներու, պանդոկներու, ճաշարաններու, շարժանկարի սրահներու եւ այլ հաստատութեանց ու առարկաներու վրայ դրուած տուրքերը: Իսկ յունուար մէկէն սկսեալ զանազան տուրքեր պիտի հաստատուին առեւտրական ընկերութեանց վրայ:

Խորհրդարանին ներկայացուած կառավարական ծրագիրը կը տրամադրէ՝ 1· Ծախքերու կրճատում, 2· Նոր տուրքերու հաստատում, 3· Արտածումներու յաւելում եւ 4· Գիներու կայունացում:

Դիւրին պիտի չըլլայ ազգային ժողովին ընդունիլ տալ այս ծրագիրը: Բուռն վիճաբանութիւններ կը նախատեսուին:

Երկուշաբթի օրուընէ սկսեալ յաւելում կատարուեցաւ մսեղէնի, ինչպէս նաեւ ածուխի գիներուն վրայ: Դեկտեմբերէն պիտի աւելնան սուրճի, բրինձի, պանիրի, բանջարեղէնի, հագուստեղէնի (բուրդ, բամպակ եւն.) եւ այլ կենսական առարկաներու գիները:

Կառավարութիւնը մեծ զոհողութիւններ կը պահանջէ ժողովուրդէն՝ փարատելու համար ելմտական տագնապը:

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔ

ԱՄԵՐԻԿԱ - ՍՈՒՐԻԱ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ԲԱՐԵԼԱՒՈՒԻՆ

Թրքական սահմանին վրայ՝ սուրիական բանակը ամէն անակնկալի դէմ պատրաստ ըլլալու հրահանգ ստացաւ: Դամասկոսի Արտաքին Նախարարութիւնը յայտարարեց, թէ սահմանագլուխի չորս կէտերուն վրայ համախմբուած են մեծ թիւով թուրք զինուորներ: Թրքական բանակը լուրջ ռազմափորձեր կը կատարէ այդ շրջանին մէջ:

Հալէպի հիւսիսային կողմը գտնուող Պալ – էլ – Հաւան կեդրոնի մը վերածուած է, ուր կը խմբուին թրքական զինուորներ, ռազմակառքեր, եւայլն:

Յարդ՝ ոչ մէկ նոր միջադէպ:

Կարգ մը աղբիւրներու համաձայն, Թուրքիա «ուժի այս ցուցադրութեան» կը դիմէ, զգուշացնելով Սուրիան, որ չմիջամտէ Յորդանանի հարցերուն, կամ զէնք չղրկէ Հիւսէյն Թագաւորին դէմ:

Սուրիոյ պաշտօնական շրջանակները կը յայտարարեն, թէ Յորդանանի ներքին գործերուն խառնուելու նպատակ չունին:

Մինչ, եգիպտական ձայնասփիւռը հետզհետէ աւելի կը զօրացնէ իր յարձակումները Յորդանանի դէմ: Գահիրէի մամուլն ու ձայնասփիւռը Յորդանանի ժողովուրդը կը դրդեն՝ որ յեղափոխութեան դիմէ եւ սպաննէ Հիւսէյն արքան:

«Արաբներու Ձայնը» սկսաւ ծանր յարձակումներ գործել, յատկապէս՝ Հիւսէյնի դէմ: Ներկայիս իրենց գրամադլուխը դարձած են Պաղեստինցի գաղթականները: Գահիրէ կը դրդէ զանոնք՝ որ այլեւս ձերբազատուին Թագաւորէն, «մատնիչ՝ ինչպէս իր մեծ հայրը՝ Ապտալլա»ն: Այս վերջինը սպաննուած էր 1954ին:

Իր կարգին, Հիւսէյն կ՚աշխատի դիմագրաւել այս յարձակումները: Նամակով մը, որ բազմաթիւ անգամներ կարդացուեցաւ Ամմանի ձայնասփիւռէն, կը դատապարտէ Եգիպտոսը, որ կը կառավարուի համայնավարութեան ծախուած կարգ մը անձերու կողմէ, որոնք ազգայնականութիւն կը խաղան՝ իշխանութեան գլուխ մնալու համար:

Հակառակ այս բոլորին, կը սպասուի որ կարեւոր միջադէպեր պատահին Յորդանանի մէջ:

Միւս կողմէ, Եգիպտոս սկսաւ զօրացնել Սինայի իր խարիսխները:

Վերջին շաբթուան ընթացքին հետեւակներու զօրագունդ մը եւ ռուսական հրետաններ հասան Էլ – Արիշ, ուր կը սպասուին նաեւ վեց հարիւր «Ֆետային»-ներ:

Կազայի շրջանը պիտի ղրկուի նաեւ Պաղեստինցիներու զօրագունդ մը, որ զինուորժութեան փորձեր կատարած ու կազմակերպուած է Եգիպտոսի մէջ:

Մինչ այս մինչ այն, Սուրիա կը մեղմացնէր իր դիրքը եւ Արտաքին Նախարար Պիթար Բչ. օր կը յայտարարէր, թէ սիրով պիտի ընդունէին ամերիկեան կառավարութեան ներկայացուցիչը· ան կրնար Սուրիա երթալ ու տեսնել թէ Դամասկոս ոչ մէկ հակառակութիւն ունի Միացեալ Նահանգներու հանդէպ եւ կ՚ուզէ վերսկսիլ դիւանագիտական յարաբերութեանց:

Ամերիկա ընդ առաջ կ՚երթայ այս փափաքին եւ հակառակ անոր որ գիտական մարզին մէջ հարուածային աշխատանքի լծուելու ծրագիր մը պատրաստեց, Ուաշինկթըն միշտ կը մտածէ ռուսական թափանցումը արգիլել Միջին Արեւելքի մէջ:

ՄԱԿի մէջ այս ուղղութեամբ ամերիկացի եւ սուրիացի դիւանագէտներուն միջեւ սերտ յարաբերութիւններ սկսան եւ տեղեկագիրներ փոխանակուեցան կառավարութեանց միջեւ:

Սուրիոյ Արտաքին նախարարը, որ անցեալ շաբաթ Նիւ Եորքէն իր երկիրը վերադարձաւ, երկար տեսակցութիւն մը ունեցած էր ամերիկեան Արտաքին նախարարութեան Միջին Արեւելքի հարցերու պատասխանատուին հետ: Պիթար յայտարարեց, թէ Ամերիկա դացած էր յատկապէս այս հարցին շուրջ բանակցութիւններ վարելու համար:

Միացեալ Նահանգներ առանց հերքելու լուրը, յայտարարեցին թէ երկու երկիրներու փոխադարձ շահերուն շուրջ կարծիքներու փոխանակութիւն մը եղած էր··

Դիւանագիտական շրջանակներու կարծիքը այն է, թէ Միացեալ Նահանգներ համաձայնած են յարաբերութեանց վերսկսիլ, պայմանով որ Յորդանանի դէմ դիրք չառնէ: Արդարեւ, Հիւսէյն Թագաւորի փոքրիկ երկիրը կը մտահոգէ Ամե–

(Շարունակութիւնը կարդալ ·Դ· էջ)

ԱՄԵՐԻԿԱ ՊԱՏՐԱՍՏ Է ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՅԱՐՁԱԿՈՒՄԻ ՄԸ ԴԷՄ

Ամերիկեան օդային ուժերու հրամանատարը՝ զօրավար Փովըրս Փարիզի մէջ տուաւ մամուլի ասուլիս մը, յայտարարելով թէ աշխարհի զանազան շրջաններուն մէջ խարսխած հիւլէական ու ջրածնային ռմբարձակ օդանաւները պատրաստ են թռիչք առնելու՝ խորհրդային յարձակումի մը յայտարարութենէն 15 վայրկեան վերջ:

Զօրավարը, որ իր ասուլիսը տուաւ Ատլանտեան Ուխտի շրջանակին մէջ, ճշդեց թէ ամէն անակնկալի դէմ պատրաստ ըլլալու այս հրահանգը տրուած էր Հոկտեմբեր մէկին եւ ի զօրու է մինչեւ այսօր:

Փովըրս յատկապէս ըսաւ. — Օդանաւները պատրաստ են՝ ջրածին ռումբերով լեցուն: Հարկ եղած պարագային, օդանաւերուն թիւը անմիջապէս կրնանք աւելցնել:

Ամերիկեան օդային ուժերու հրամանատարը աւելցուց, թէ ճիշդ չեն այն զրոյցները՝ որոնց համաձայն Ռուսերը իրենց հրթիռներով կրնան փճացնել ամերիկեան խարիսխները եւ այս պարագան ո՛չ ոք աւելի լաւ գիտէ՝ քան Խրուշչեւ:

Բաց աստի, ըստ զօրավարը, ամէն վայրկեան երկինքի վրայ ամերիկեան օդանաւներ կը շրջին եւ պէտք է գիտնալ, թէ անոնք նետ կամ նիզակ չեն պտըտցներ իրենց հետ:

Օրէ Օրին

« ՏԽՐՈՒՆԻ ... »

Ըստ երեւոյթին, կ՚ապրինք յեղաշրջումներու դարուն մէջ: Յեղաշրջումներ՝ որոնք ցոյց կուտան մարդուն մեծութիւնը եւ, ինչո՞ւ չէ, փոքրութիւնը ···:

Շատ խօսուեցաւ խորհրդային արուեստական արբանեակներուն մասին: Ե՛ւս աւելի՝ անդրմոլորակային առաջին ճամբորդ՝ Լայքայի մասին, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ շուն մը: Մեր գիտցած շունը՝ որ կը տեսնենք փողոցին մէջ կամ տունը:

Անշուշտ վտանգուած էր անասունին կեանքը: Յարդ, յստակ չէ նաեւ, թէ ի՞նչ եղած է· ո՞ղջ է թէ սատկած:

Այսքանը բաւական էր, որպէսզի մարդկութիւնը ձայն բարձրացնէր, ի լուր աշխարհի: Ճափոնէն մինչեւ Անգլիա եւ Ամերիկա, կենդանիներու պաշտպան ընկերութիւնները ձայն բարձրացուցին, բողոքելու համար Խ· Միութեան «հրէշային» արարքին դէմ: Այդ «հրէշային» արարքը ուրիշ բան չէր, եթէ ոչ շուն մը սատկեցնելու··· արարքը:

Մարդոց լուրջն ու անլուրջը իրար խառնուած շան մը պաշտպանութիւնը ստանձնեցին:

Մինչ խորհրդային շունե՛րն անգամ այնքան աղմուկ կը ստեղծեն իրենց շուրջ, անդին, տարրալուծարաններու մէջ օրական հազարաւոր անգլիական կամ ամերիկեան շուներ կը մորթուին՝ բժշկական կամ այլ քննութեանց համար: Միայն շունե՛ր ըլլային··· Անգլիոյ եւ Ճափոնի կենդանիներու պաշտպան ընկերութեանց նախագահներն ու անդամները օրական քանի՞ անգամ միս կ՚ուտեն···

Կ՚երեւի, «կենդանի» ըլլալով միայն շուն կը հասկնան անոնք, ա՛ն ալ՝ խորհրդային շուն:

Անցնի՛նք:

Շատ ժամանակ չէ անցած: Հազիւ քառասուն տարի առաջ, մարդակերպ շուներ աւելի քան միլիոն մը Հայ դրած նաքա – դանէ սպունգներու վրայ՝ կը քշէին դէպի անապատի մը անհունը, ո՛չ թէ գիտական՝ այլ զուարճութեան փորձեր կատարելու համար: Կիներ ու երախաներ սպաննուեցան ամէնէն անարգ ձեւով: Ժողովուրդ մը ամբողջ պատմութեան յանձնելու թրքական յայտարարութիւն մը չշարժեց անգամ խիղճը քրիստոնեայ մարդկութեան:

Եւ այսօր, նո՛յն այդ քրիստոնեայ մարդկութիւնը շան մը պաշտպանութիւնը ստանձնած է եւ հարահրոց կը բարձրացնէ, իր քինախնդրութեան մէջ մոռնալով որ ծիծաղելի կը դառնայ:

Աւելի քառասուներկու տարի առաջ ալ ազգեր կային, պետութիւններ կային եւ Ազգերու ժողով կար: Ո՛չ մէկ ժողովուրդ մտածեց քանի մը Հայ հաւաքել եւ ժողովին ներկայացնել, իբրեւ բողոքի նշան:

Մինչդեռ, վեց շուներու հրաման տրուած է, որ մուտք գործեն ՄԱԿէն եւ բողոքեն իրենց մէկ «ազգակից»ին հանդէպ կատարուած «արարք»ին դէմ:

Մինչ հայկական սպանդին ի տես լուռ կը մնային մեծ թերթերը, այսօր սիւնակնե՛ր կը լեցնեն Լայքայի մասին··· Դիւցազներգական ոճով: Սեւ շրջանակի մէջ «տխրունի» մը հրատարակելով Լոնտոնի մեծագոյն թերթերէն «Տէյլի Միրըր» ի՜նչ լեզու կը գործածէ շան մը սատկին համար: Կարդացէ՛ք·— «Ո՛չ մէկ բանտ, ո՛չ մէկ խցիկ, կը գրէ անգլիացի խմբագիրը, չեն հաւասարած Լայքայի բանտին: Պզտիկ սիրտ մը, որ կը բաբախէր, երկու լուսաւոր աչքեր, փոքրիկ մարմին մը ողջ առողջ թաղուեցան երկինքին մէջ: Կը խնդրուի ոսկոր չղրկել··»:

Ողբա՛մ զքեզ մե՛ծ··· Ալպիոն:

ԱՐՄԵՆԱԿ

ԻՆՉՊԷՍ ԿԸ ԳՐԵՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(Բ. եւ վերջին մաս)

« Հայաստանի աշխատաւորները սկսեցին իրենց նոր կեանքը չափազանց դժուարին պայմաններում: Աշխատաւորների ուժերը տկար էին աւերուած տնտեսութիւնն արագ վերականգնելու համար: Խ. Հայաստանը պէտք ունէր օգնութեան: Այդ օգնութիւնը նրան հասաւ: Խորհրդ. իշխանութեան հաստատուելուց տառացիօրէն երկու շաբաթ յետոյ Ռուսաստ. Խորհրդային Ընկերվարական Հանրապետութեան Աշխատանքի եւ Պաշտպանութեան Կոմիտէն, Վ. Ի. Լենինի նախաձեռնութեամբ, քննեց Հայաստանին ֆինանսական օգնութիւն անելու հարցը: Այդ նպատակով նա երեք միլիոն ռուբլի յատկացրեց Խ. Հայաստանին:

Խորհրդ. Ռուսաստանը բազմաթիւ անգամներ նիւթական օժանդակութիւն է հասցրել Խորհրդ. Հայաստանի աշխատաւորներին ուղարկելով այնտեղ ամբողջ կառախմբեր առաջին անհրաժեշտութեան ապրանքների, հրանիւթերի, դեղօրայքի եւայլն: Իվանովեան (Իվանօվօ — Վօզնեսէնսկ քաղաքի. Հ. Ս.) կտաւագործ բանւորները նուէր արին հայ եղբայրներին կտաւագործարանի ամբողջ սարքաւորումը »:

Ահա ձեզ մի հրաշք: Երեք միլիոն ռուբլի գրպաններում, հայ ժողկոմները, « տառացիօրէն երկու շաբաթ խորհրդայնացումից յետոյ» սկսում են վայրենաբար թալանել հայ բանւորին ու գիւղացուն: Զինուած խմբերով խուժում են համեստ բնակարանները, մառաններն ու խրճիթները ու թողնում ամէն ինչ — ցորեն, իւղ, պանիր, սպիտակեղէն եւայլն մինչեւ լուցկիի թուփը: Գոմերից դուրս են հանում եզ ու ոչխար ու քշում դէպի զօրանոցները: Իմ տնից տարան պնակ, դանակ, պատառաքաղ, կրամաֆօն, գրքեր, որոնց մէջ քառասուն հատորնոց Փրօք — Հաուզի հանրագիտական բառարանը, սեղան, աթոռ եւայլն: Երեք միլիոնից դէթ մէկ մէկ ռուբլի տայիք բռնագրաւուած իրերի ու անասունների համար :

Եթէ դուք կառախմբերով ապրանք ու մթերք էիք ստանում, ինչու չափիկներս թօցրիք եւ հարեւանիս երեխաների արցունքին չխղճալով իւղամանը չալակներդ առիք ու անհետացաք: Եթէ դուք Ռուսաստանից այդպիսի մեծ հարստութիւն թափեցիք փոքրիկ Հայաստանում, ինչու յուսահատ, անելի մատնուած 1921 թուի Փետրուար 18ին ժողովուրդը մի մարդու պէս ըմբոստացաւ Ցեղկոմի դէմ : Ս. Թովմասեան լռում է այդ մասին: 1921 թիւն առանց Փետրուար ամսի է եղել նրա համար :

Ասում են թէ խորհրդային կարգերը փոխուել են դէպի լաւը. ժողովուրդն ըսկսել է շունչ քաշել: Ո՞վ չի երազել, յուսացել ու հաւատացել, թէ այս կամ այն արտակարգ դիպուածից յետոյ — Ստալինի ու Բերիայի մահ, Ժընեւի խորհրդաժողով, 20րդ Համագումար Խ. Մ. Կոմկուսի, հակաստալինեան մերկացումներ, խմբական ղեկավարութեան հաստատում, անհատապաշտութեան ժխտում, հաստատապէս Մոլոթովի ու Կագանովիչի վտարում եւ այլն — տարրական մարդկայնութիւնն ու ազատասիրութիւնը կը յաղթանակեն այնտեղ :

Բայց աւաղ խորհրդային վարչաձեւն ըստ էութեան միշտ նոյնն է: Իր գերագոյն նպատակին՝ համաշխարհային տիրապետութեան հասնելու համար նա կանգ չի առնում միջոցների ընտրութեան առջեւ: Բարի է ու չար, կիրթ ու վայրենի, բարեկամ ու թշնամի, ատող ու սիրաշահող, փոքր ազգերի անկախութեան պաշտպան ու խորտակող: Խորհրդային ակնոցները նոյն մարդուն մէկ կարմիր են ցոյց տալիս, մէկ սեւ, նայած թէ նա իրենց ցանցումն է, թէ դուրսը:

Եուկոսլաւ ժողովրդի պետը օձ էր, թիւնաւոր կարիճ, դաւաճան, այսօր «հերոս ընկեր Փրօզ — Տիտօ»: Երբ Ֆրանսայի վարչապետ Գ. Կի Մոլէն Մոսկուա այցելեց, կաշուից դուրս եկան նրա համակրութիւնը որսալու — մտերմիկ խօսակցութիւններ, ճաշեր, կենացներ: Իբրեւ պատուասիրութեան արտակարգ ցոյց, Բոլշոյին ստիպեց Անաստասին (Միկոյեան) լեզգինկա պարել նրա առջեւ: Բայց երբ նոյն Կի Մոլէն Ուաշինկթըն էր, «Պրաւտա»յում նրան «Լաքէ» անուանեցին, որը «կասկէտը» ձեռքին, վիզը ծուռ, սպասում է Այզընհաուրի նախասենեակում «պատառնի կանչին »:

Երբ անտարբերութիւնից մի կողմն ես դնում, սարսափում ես այսօրուայ խորհրդային համայնավարներից: Հեռու անցեալում ես ճանաչել եմ Մոսկուայի շատ մեծամասնականների, մի քանի ամիս գործակցել նրանց հետ — Բուխարինի, Նոգինի, Պոդբելսկի, Սկւորցով — Ստեփանով, Ուսիեւիչ, Ա. Տէր Աւագեան եւայլն: Նրանք մարդ էին:

Ստալին բոլորի գլուխը կերաւ, թրծեց նոր տեսակի մեծամասնականներ, երրորդ սեռի արարածներ, որոնց բառարանն անըմբռնելի է մեզ համար: Դրանցից մէկն է Ս. Թովմասեան, խեղաթիւրող, վարկաբեկող, ազնուութիւնը ոտնահարող: Հայ ստալինականները բախտաւոր են պատկանել միակ խորհրդային ժողովրդին, որի բացառիկ պայմանները թոյլ են տալիս ունենալ զօրաւոր յեղափոխական կազմակերպութիւն — «դաշնակ»ի վրայ յարձակումը ցայտուն կերպով յայտ են բերում Թովմասեանների ապազգայնացման ուղղափառութիւնը յաչս Մոսկուայի :

ՀԱՅԿ ՍԱՐԳՍԵԱՆ

ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԱՐԲԱՆԵԱԿԸ

Հոկտեմբեր չորսին արձակուած խորհրդային արուեստական արբանեակը՝ «Սպուտնիկ»ը մեծ հետաքրքրութիւն արթնցուց ամբողջ աշխարհին մէջ: Մանաւանդ անակնկալ մը եղաւ մասնաւորապէս Միացեալ Նահանգներուն համար: Այդ «մանուկ-լուսինը» անսպառ նիւթ հայթայթեց պարբերականներուն, օրաթերթերուն ու ձայնասփիւռին, որոնք իրար հետ մրցումի ելան նորութիւններ հաղորդելու համար :

Այժմ Սպուտնիկը լռած է այլեւս : Իր սլիփ, պլիփ դադրած արձակելէ՝ ընդմիշտ : Սակայն ինք կը շարունակէ երկրիս շրջանը ընել կանոնաւոր կերպով առանց յոգնութեան :

Գիտական պատմութեան մէջ յիշատակելի անուն մը պիտի մնայ Սպուտնիկը, որ իր տեւողութեամբ գլեց անցաւ բոլոր նախատեսութիւնները: Ռուսերը նախապէս կ'ենթադրէին թէ երկուշաբթուայ կեանք մը պիտի ունենար ան: Սակայն այժմ կը յուսան թէ երկու հարիւր օր դիմանայ: Անշուշտ ոչ ոք կարող է այս մասին ճշգրիտ տեղեկութիւն մը տալ անոր :

Սպուտնիկին շուրջ տեղեկութիւններ տրուեցան նաեւ «Յառաջ»ի մէջ, որով շատ պիտի չծանրանամ անոր մասին:

Սպուտնիկի յաղթանակով խորհրդային գիտութիւնը բարոյական մեծ հարուած մը հասցուց Միացեալ Նահանգներուն : Որովհետեւ 1955 Յուլիս 29ին էր որ այդ մեծ երկրին նախագահը կը յայտարարէր համայն աշխարհին թէ ծրագրած են շինել արուեստական արբանեակներ որոնց արձակումը պիտի կատարուի 1957ին: Այս յայտարարութիւնը ռումբի մը պայթիւնին տպաւորութիւնը գործած էր Անգլիոյ մէջ: Մինչեւ ուրիշ երկիրներու մէջ անոր հակազդեցութիւնը նուազ ցուցական եղած էր: Իսկ Խորհրդային Միութիւնը լռութիւն պահած էր: Ահա այժմ կը խօսէ լռութիւնը՝ լռիկ մնջիկ աշխատելէ ետք :

Ինչ որ ալ ըսուի անոր կ'իյնայ առաջին արուեստական արբանեակը արձակած ըլլալու պատիւը:

Անշուշտ արուեստական արբանեակներ արձակելու կամ դէպի լուսին եւ այլ մոլորակներ երթեւեկելու միտքը նոր չէ : Եթէ մէկդի ձգենք Ճոնաթան Սուիֆթի « Կիւլլիվերի ճամբորդութիւնները », կամ Ժիւլ Վեռնի մարգարէական ստեղծագործութիւնները՝ որոնք հետզհետէ իրողութիւն կը դառնան, գիտական գետնի վրայ օդանաւորդութեան ռահվիրաներ Լինօֆիլթի, Բէնթօն, Արչաէտոն, ալ — դունելով վերոյիշեալ վիպագիրներու գիտական տրամաբանական նախատեսութիւնները, 1907էն սկսեալ հետաքրքրուեցան անդրերկրային ճամբորդութեանց եւ թռչող կզզիներու (արուեստական արբանեակ) հարցերով: 1911ին Տօքթ. Գինկն էր որ առաջնութիւն մը ձեռք կը բերէր բազմայարկ հրթիռի մը շինութեան համար, մթնոլորտային վերին խաւերը հետախուզելու առաջադրութեամբ: 1920ին ռուս տարրարան Ցիոլքովսքին է որ առաջին անգամ ըլլալով կը գործածէ արուեստական արբանեակ բացատրութիւնը, եւ մանրամասն ծրագիր մը կը ներկայացնէ թռչող կզզիի մը շինութեան համար: Այդ կզզին պիտի ըլլար բնակելի, ջերմանոցային մշակութեան հնարաւորութիւններով, արուեստական ձգողութեամբ եւ կեանքի պայմաններ ստեղծող բազմազան մեքենաներով ու կազմածներով օժտուած: 1929ին, երկու Գերմանացիներ՝ Հերման Օպերթ եւ Փոթօքնիք, այս վերջինը Նորտունկ կեղծանունով ծանօթ, ներկայացուցին երկու ծրագիրներ: Երկուքն ալ կ'առաջարկէին, ինչպէս ռուս գիտունը, բնակելի հսկայ զանգուածներ, ինքնաբաւ թռչող կզզիներ, որոնք իրենց պիտանիուժը պիտի քաղէին արեւուն ճառագայթներէն՝ յատուկ հայելիներու միջոցաւ : Այս զանգուածեղ շինութիւնները պիտի ծառայէին իբրեւ գիտական աշխատանոցներ՝ միջմոլորակային պարապութեան մէջ: Մանաւանդ Նորտունկի արբանեակը պիտի բաղկանար երեք բաժանումներէ՝ դիտարան մը, մեքենաներու բաժին մը եւ բնակելի երեսուն մեթր տրամագծով անիւ մը, որ ինքն իր վրայ պիտի թաւալէր երկվայրկեանը մէկ շրջան ընելով, իրեն յատուկ ձգողական ուժը հայթայթելու համար : Այս ծրագիրներուն իրագործումը անշուշտ կը պահանջէր նիւթական լայն միջոցներ եւ այդ ժամանակի ուժական նիւթերով այդ զանգուածին դէպի երկինք արձակումը եւ անոր պահանջուած արագութիւնը տալու համար անհրաժեշտ կը նկատուէր միլիոնաւոր թոն վառելանիւթ:

Աւելորդ է ըսել որ եթէ այդ ծրագիրները աւելի համեստ ըլլային փոքր արբանեակներ միայն արձակելու, անշուշտ այն ատեն ալ իրագործելի կը դառնային բազմայարկ հրթիռներու դրութեամբ : Կը բաւէր որ արբանեակին հաղորդուէր երկվայրկեանը 7,8 քիլոմեթրի արագութիւն մը (ժամական 28 հազար քիլոմեթր) : Այս արագութիւնը կը հաւասարակշռէ երկրիս ձգողական եւ արբանեակին կեդրոնախոյս ուժերը, որով արբանեակը որոշ բարձրութեան մը վրայ (400 քմ.) երկրիս շուրջը կը դառնայ, այնքան ատեն որ կը պահէ վերոյիշեալ արագութիւնը : Էսնօ — Փելթէի այս արագութիւնը նախա—

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Թերթերէ ոմանց մէջ յայտնի ակնարկութիւններ սկսած էին արդէն, Լիբանանի Թեմին Գաւառական Ժողովոյ ալ «ապօրինութեան» մասին. ժողով, որուն չէին կրցած մաս կազմել «կամապաշտ»ները, ընտրութեանց մասնակցելու պարագային չարաչար պարտուած ըլլալով, կամ ջախջախում մը նախատեսելով, այդ ընտրութիւններու « ի յառաջագունէ » ապօրինութիւնը յայտարարելով եւ չմասնակցելով: Կիլիկեան Թեմերու ամէնէն « օրինաւոր» ժողովը կը մնար, «կամապաշտ»ներու տեսակէտով, Դամասկոսի Գաւառականը, որուն անօրինի ընտրութեանց ինչ ձեւով կատարուած ըլլալը, 1949ին, ծանօթ էր բոլորին, հակառակ անոր որ ամբողջ վեց տարի (1949 — 1955), լրացուցիչ ոչ մէկ ընտրութիւն կատարուած էր թեմին մէջ:

Ղրկելէ յետոյ նոր, եւ երրորդ յետաձգումի հեռագիրն ու ստորագրելէ ետքը իր անունով պատրաստուած «յայտարարութիւն»ը, Խադ Արքեպիսկոպոս կը քաշուէր Պհամտուն եւ կը խուսափէր ընդունելէ Լիբանանի Թեմին Առաջնորդն ու Ազգային Իշխանութեանց պաշտօնական ներկայացուցիչները, որոնք սովորական տեսակցութեան մը համար ժամադրութիւն կ'ուզէին իրմէ: Անիմանալի այս խուսափումին որպէս հետեւանք, Լիբանանի Թեմին Առաջնորդ Գերշ. Տ. Խորէն Ս. Եպիսկոպոս եւ քաղաքական Ժողովի անդամները իրենց հրաժարականները կը ներկայացնէին Թեմին Գաւառական Ժողովին, 12 Հոկտեմբեր 1955ին: Պատմական այդ փաստաթուղթէն կ'արտագրենք հետեւեալ պարբերութիւնները ցոյց տալու համար, թէ Տեղապահ Խադ Արքեպիսկոպոս ինչպէս կը վարուէր Թեմի մը Ազգային Իշխանութեանց եւ Առաջնորդ Եպիսկոպոսին հետ :

« ... Յետ երկար խորհրդակցութեան, նկատի ունենալով ներկայացուած խնդրոյն կենսական կարեւորութիւնը եւ կացութեան բացառիկ փափկութիւնը, Քաղաքական Ժողովս որոշեց իր լրիւ կազմով անյապաղ հանդիպում մը ունենալ Տեղապահ Սրբազանին հետ :

Ժողովի վերջաւորութեան եւ ժողովականներու իսկ ներկայութեան, Առաջնորդ Սրբազանը հեռաձայնով սովորական ունկնդրութիւն մը խնդրեց Տեղապահ Սրբազանէն նոյն օրուան երեկոյեան ժամը վեցին համար: Նորին Սրբազնութիւնը դիւանապետին միջոցաւ պատասխանեց թէ զբաղած է եւ չի կրնար ընդունիլ Ժողովի անդամները յիշեալ ժամուն: Ասոր վրայ Առաջնորդ Սրբազանը յաջորդ օրուան համար խնդրեց ունկնդրութիւն մը՝ նկատի ունենալով խնդրոյն ծանրակշիռ հանգամանքը. դարձեալ դիւանապետին միջոցաւ Տեղապահ Սրբազանը յայտնեց թէ ինք յետագային լուր պիտի տար թէ երբ պիտի Ժողովի կազմը ընդունէր :

Կաթողիկոսական ընտրութեան յետաձգման հետեւանքով ստեղծուած այս սուր տագնապին հանդէպ Տեղապահ Սրբազանին անլուրջ վերաբերմունքը եւ վարչութեան հետ հանդիպում ունենալէ խուսափումը խիստ անիմանալի եւ անբացատրելի կը թուի մեզի: Բայց համբերութեամբ սպասեցինք մինչեւ 12 Հոկտեմբեր 1955, կէսօրէ վերջ ժամը 6: Ոեւէ ժամադրութիւն չտրուեցաւ մեզի. սակայն ամենաստոյգ կերպով տեղեկացանք եւ հաստատեցինք, թէ Տեղապահ Սրբազանը երբ կը մերժէր նախորդ երեկոյ ժամադրութիւն տալ մեզի, ոչ մէկ զբաղում ունէր, այլ հանդիպումէն խուսափելու պատրուակով վանքը կը ձգէր եւ խաղաղ խղճով կ'երթար Պհամտուն իր ազգականներուն քով :

Արտակարգօրէն փափուկ այս կացութեան մէջ, երբ կաթողիկոսական ընտրութեան այս երրորդ յետաձգումով խնդրոյ առարկայ կը դառնայ գաղութիս ներքին կեանքին փոթորկումը իր աղէտալի հետեւանքներով, ինչպէս նաեւ Կիլիկիոյ պատմական Աթոռին ներկայ եւ ապագայ գոյութեան վտանգումը, եւ երբ Քաղաքական Ժողովս խղճի պարտք կը նկատէ հանդիպում ունենալ Տեղապահ Սրբազանին հետ որպէս գլխաւոր եւ միակ պատասխանատու եւ գերակատար անձնաւորութեան՝ զարմանալի անպատասխանատուութեամբ մը Տեղապահ Սրբազանը կը մերժէ մեզ ընդունիլ :

Տեղապահ Սրբազանին հետ մեր ունենալիք տեսակցութեան միակ նպատակն էր աւելի մօտէն տեղեկանալ այն պատճառներուն եւ կաթողիկոսական ընտրութեան յառաջ բերելիք «աղէտին եւ ողբերգութեան» մասին, որոնց նախատեսումով Սրբազանը յետաձգած էր ընտրութիւնը: Եւ նոյն ատեն խորհրդակցիլ՝ առաջքն առնելու համար, այս անգամ, կաթողիկոսական ընտրութեան յետաձգման առթիւ պատահելիք հաւանական եւ աւելի անախորժ դէպքերու, որոնք կրնային վրդովել թեմական մեր ազգային կեանքը :

Խմբագրական ՀԱՍԿԻ

(13 Տար.)

ԿՅՑԵՔ

Ա.

ՈՐՍՈՒ ՏՂԱՅՈՒ

Իսկ նոքա ասացին ցնորեալ է նա, ընդէ՞ր լսէք զնա։ Ասացին ոմանք, թէ դեւ ունի նա եւ ցնորեալ է, ընդէ՞ր զնա լսէք։ Այլք ասէին, թէ ոչ են բանք դիւահարի. միթէ դեւ կարէ՞ աչս կուրաց բանալ։ Եւ կամէր անցանել նոցանից։ Եւ գտեալ զնա Յիսուս՝ ասէ ցնա, թէ դու հաւատա՞ս ի Որդի մարդոյ։ Պատասխանի ետ նմա նա եւ ասէ, թէ ո՞վ է, Տէր, զի հաւատասցեմ ի նա։ Եւ ասէ ցնա Յիսուս, թէ տեսեր զնա, եւ որ խօսի ընդ քեզ՝ նա է։ Եւ նա ասէ, թէ հաւատացի, Տէր։ Եւ երկիր եղեալ նմա՝ երկրպագանէր նմա։ Եւ ասէ Յիսուս, թէ ես յաշխարհս դատաստանի եկի, զի որ ոչ տեսանեն՝ տեսցեն, եւ որ տեսանեն՝ կուրասցին։ Լուան յայնոցանէ փարիսեցիքն, որ էին ընդ նմա, եւ ասեն ցնա, թէ միթէ եւ մեք կուրք եմք։ Ասէ նոցա Յիսուս, թէ եթէ կուրք էիք, ոչ էր ձեզ մեղք. այլ արդ ասէք, թէ տեսանեմք, ուստի մեղքն ձեր կան։

(Յովհ. Թ, 1-41)

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹԵՐԹՈՂԻ

Ա.

Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն։ Նա էր ի սկզբանէ առ Աստուած։ Ամենայն ինչ նովաւ եղեւ, եւ առանց նորա ոչինչ եղեւ, որ եղեւ։ Նովաւ կեանք էր, եւ կեանքն էր լոյս մարդկան։ Եւ լոյսն խաւարի մէջ կը փայլի, եւ խաւարը չընկալաւ զայն։ Մարդ մը կար՝ Աստուծմէ առաքուած, անոր անունը Յովհաննէս էր։ Նա վկայութեան եկաւ, որպէսզի վկայէ լոյսին համար, որպէսզի բոլորը անոր միջոցով հաւատան։ Ինք լոյսը չէր, հապա՝ լոյսին համար վկայելու եկաւ։ Ճշմարիտ լոյսը, որ կը լուսաւորէ ամէն մարդ, աշխարհ կու գար։ Աշխարհի մէջ էր, եւ աշխարհը անոր միջոցով եղաւ, բայց աշխարհը չճանչցաւ զինք։ Իր սեփականութեան եկաւ, բայց իրենները չընդունեցին զինք։ Բայց անոնք որ ընդունեցին զինք, անոնց՝ որ անոր անունին կը հաւատան, իշխանութիւն տուաւ Աստուծոյ զաւակներ ըլլալու։ Անոնք որ ո՛չ արեան, ո՛չ մարմնի կամքով, ո՛չ ալ մարդու կամքով, հապա Աստուծմէ ծնած են։

Եւ Բանը մարմին եղաւ եւ մեր մէջ բնակեցաւ, եւ անոր փառքը տեսանք, փառք՝ որ միածին Որդիին վայելքն է Հօրմէ, շնորհքով եւ ճշմարտութեամբ լեցուն։ Յովհաննէս անոր վկայեց եւ բարձր ձայնով աղաղակեց՝ ըսելով. «Ասիկա անոր մասին էի ըսած, որ ետեւէս եկող մը՝ որ ինծմէ առաջ եղած է, քանի որ ինծմէ առաջ կար»։ Եւ անոր լիութենէն բոլորս ալ ստացանք շնորհքի վրայ շնորհք։ Որովհետեւ Օրէնքը Մովսէսի միջոցով տրուեցաւ, շնորհքն ու ճշմարտութիւնը Յիսուս Քրիստոսի միջոցով եղան։ Աստուծոյ մասին ոեւէ մէկը երբեք չէ տեսած. միածին Որդին՝ որ Հօր գիրկն է, անոր մասին պատմեց մեզի։

Յովհաննէսի վկայութիւնը

Երբ հրեայ իշխանները Երուսաղէմէն քահանաներ եւ ղեւտացիներ ղրկեցին Յովհաննէսի մօտ, որպէսզի հարցնեն անոր, թէ ո՞վ է ինքը, ան խոստովանեցաւ եւ չուրացաւ, այլ խոստովանեցաւ. «Ես Քրիստոսը չեմ»։ Անոնք հարցուցին անոր. «Ուրեմն ի՞նչ. Եղիա՞ն ես դուն»։ Ան ըսաւ. «Չեմ»։ «Մարգարէն ես դուն»։ Ան պատասխանեց. «Ոչ»։ Ուստի ըսին անոր. «Ո՞վ ես դուն, որպէսզի պատասխան մը տանք մեզ ղրկողներուն։ Ի՞նչ կ՚ըսես քու մասին»։ Ան ըսաւ. «Ես անապատին մէջ աղաղակող մէկուն ձայնն եմ՝ որ կ՚ըսէ. «Ուղղեցէք Տիրոջ ճանապարհը», ինչպէս ըսաւ մարգարէ Եսայի»։ Ղրկուածները փարիսեցիներէն էին։ Անոնք հարցուցին անոր եւ ըսին. «Եթէ Քրիստոսը չես, Եղիան չես, մարգարէն ալ չես, ուրեմն ինչո՞ւ կը մկրտես»։ Յովհաննէս պատասխանեց անոնց. «Ես ջրով կը մկրտեմ, բայց ձեր մէջ կայ մէկը՝ զոր դուք չեք ճանչնար։ Ան է որ ետեւէս եկող մը՝ որ ինծմէ առաջ եղած է, եւ որուն կօշիկի կապը արձակելու արժանի չեմ ես»։ Այս բաները տեղի ունեցան Բեթանիայի մէջ, Յորդանանի միւս կողմը, ուր Յովհաննէս կը մկրտէր։

Յիսուս Գառնուկը Աստուծոյ

Յաջորդ օրը Յովհաննէս տեսաւ Յիսուսը իր քովը գալիս եւ ըսաւ. «Ահա Աստուծոյ Գառնուկը, որ կը վերցնէ աշխարհի մեղքը։ Ասիկա անոր մասին է որ ես ըսի. «Ետեւէս եկող մը կայ՝ որ ինծմէ առաջ եղած է, որովհետեւ ինծմէ առաջ կար»։ Ես չէի ճանչնար զայն, բայց անոր համար եկայ որ մկրտելով Իսրայէլին յայտնի դարձնեմ»։ Յովհաննէս նաեւ վկայեց ըսելով. «Հոգին աղաւնիի պէս երկինքէն իջնելը տեսայ եւ անոր վրայ հանգչեցաւ։ Ես չէի ճանչնար զայն, բայց ինծի ղրկողը՝ որ ջրով կը մկրտէ, ինծի ըսաւ. «Ուր որ տեսնես Հոգին իջնելով եւ անոր վրայ հանգչելով՝ ան է որ Սուրբ Հոգիով պիտի մկրտէ»։ Ես տեսայ եւ վկայեցի, որ ան Աստուծոյ Որդին է»։

Առաջին աշակերտները

Յաջորդ օրը Յովհաննէս նորէն կանգնած էր իր երկու աշակերտներուն հետ, եւ երբ տեսաւ Յիսուսը որ կը քալէր, ըսաւ. «Ահա Աստուծոյ Գառնուկը»։ Երկու աշակերտները, որոնք կը լսէին զայն խօսիլ, հետեւեցան Յիսուսին։ Յիսուս դարձաւ եւ տեսնելով որ հետեւողներ ունի, հարցուց անոնց. «Ի՞նչ կ՚ուզէք»։ Անոնք ըսին անոր. «Ռաբբի (որ կը նշանակէ՝ Վարդապետ), ո՞ւր կը բնակիս»։ Ան ըսաւ անոնց. «Եկէք եւ տեսէք»։ Գացին եւ տեսան ուր կը բնակէր, եւ այդ օրը անոր հետ մնացին։ Ժամը մօտաւորապէս տասն էր։ Անդրէաս՝ Սիմոն Պետրոսի եղբայրը, անոնցմէ մէկն էր որ լսելով Յովհաննէսը՝ հետեւեցաւ Յիսուսին։ Անդրէաս նախ գտաւ իր եղբայրը՝ Սիմոնը, եւ ըսաւ անոր. «Մեսիան գտանք»։ (Մեսիան կը նշանակէ՝ Քրիստոս)։ Անդրէաս Սիմոնը տարաւ Յիսուսին։ Յիսուս նայեցաւ անոր եւ ըսաւ. «Դուն Յովհաննէսի որդի Սիմոնն ես, բայց Կեփաս պիտի կոչուիս»։ (Կեփաս կը նշանակէ՝ Պետրոս)։

Յաջորդ օրը Յիսուս կամեցաւ Գալիլեա երթալ։ Գտաւ Փիլիպպոսը եւ ըսաւ անոր. «Հետեւէ՛ ինծի»։ Փիլիպպոս Բեթսայիդայէն էր, Անդրէասի եւ Պետրոսի քաղաքէն։ Փիլիպպոս գտաւ Նաթանայէլը եւ ըսաւ անոր. «Մովսէսի Օրէնքին մէջ եւ մարգարէները գրած են զոր որ գտանք՝ Յիսուսը Նազովրեցիին՝ Յովսէփի որդին»։ Նաթանայէլ ըսաւ անոր. «Կարելի՞ է որ Նազովրէթէն բարի բան մը ելլէ»։ Փիլիպպոս ըսաւ անոր. «Եկո՛ւր եւ տես»։ Յիսուս տեսաւ Նաթանայէլը որ իր քովը կու գար, եւ անոր մասին ըսաւ. «Ահա՛ իսկական Իսրայէլացի մը, որուն մէջ նենգութիւն չկայ»։ Նաթանայէլ ըսաւ անոր. «Ինչպէ՞ս կրնաս զիս ճանչնալ»։ Յիսուս պատասխանեց եւ ըսաւ անոր. «Նախքան Փիլիպպոսը քեզ կանչելը, երբ տակաւին թզենիին տակ էիր, տեսայ զքեզ»։ Նաթանայէլ պատասխանեց եւ ըսաւ անոր. «Վարդապե՛տ, դուն Աստուծոյ Որդին ես, դուն Իսրայէլի թագաւորն ես»։ Յիսուս պատասխանեց եւ ըսաւ անոր. «Որովհետեւ ըսի քեզի, թէ թզենիին տակ տեսայ զքեզ, կը հաւատա՞ս. աւելի մեծ բաներ պիտի տեսնես քան զայս»։ Եւ ըսաւ անոր. «Ճշմարիտ, ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, պիտի տեսնէք երկինքը բացուած եւ Աստուծոյ հրեշտակները կը բարձրանան եւ կ՚իջնեն Մարդու Որդիին վրայ»։

Յիսուս Երուսաղէմի մէջ

Երկու օր ետք Գալիլեայի Կանա քաղաքին մէջ հարսանիք մը եղաւ, եւ Յիսուսի մայրը հոն էր։ Յիսուս եւ իր աշակերտները հրաւիրուեցան հարսանիքին։ Գինին սպառելով՝ Յիսուսի մայրը ըսաւ անոր. «Գինի չունին»։ Յիսուս պատասխանեց. «Ի՞նչ ընելիք ունիմ քեզի հետ, կին։ Իմ ժամս դեռ չէ եկած»։ Անոր մայրը ըսաւ ծառաներուն. «Ինչ որ ձեզի ըսէ, ըրէք»։ Հոն քարէ վեց ջրհորներ կային, որոնք հրեաներուն մաքրութեան սովորութեան համաձայն կը գործածուէին։ Ամէն մէկուն մէջ երկու կամ երեք չափ ջուր կը տեղաւորուէր։ Յիսուս ըսաւ անոնց. «Լեցուցէ՛ք ջրհորները ջուրով»։ Անոնք մինչեւ բերանները լեցուցին զանոնք։ Ապա ըսաւ անոնց. «Հիմա քաշեցէ՛ք եւ տարէ՛ք խնամակալապետին»։ Անոնք տարին։ Խնամակալապետը համտեսեց ջուրը որ գինի դարձած էր։ Չգիտնալով թէ ուրկէ կու գար, բայց ծառաները որոնք ջուրը քաշած էին գիտէին, խնամակալապետը կանչեց փեսան եւ ըսաւ անոր. «Ամէն մարդ նախ լաւ գինին կը դնէ սեղան, եւ երբ հիւրերը գինովցած են՝ վատ գինին կը դնէ։ Դուն լաւ գինին մինչեւ հիմա պահած ես»։ Յիսուս այս առաջին նշանը ըրաւ Գալիլեայի Կանա քաղաքին մէջ։ Ան իր փառքը յայտնեց, եւ աշակերտները հաւատացին անոր։

Յիսուս Երուսաղէմի մէջ

Յետոյ ան եւ իր մայրը, իր եղբայրները եւ աշակերտները Կափառնայում իջեւանեցան, բայց հոն քանի մը օրէն ետք մեկնեցան։ Հրեաներուն Զատկի տօնը մօտ էր, եւ Յիսուս Երուսաղէմ ելաւ։ Տաճարին մէջ գտաւ ոչխարներ, եզներ եւ աղաւնիներ վաճառողները, ինչպէս նաեւ դրամափոխները իրենց սեղաններուն առջեւ նստած։ Ինք պատրաստեց պարան մը եւ բոլորը դուրս վռնտեց տաճարէն, ոչխարներն ու եզները նոյնպէս, դրամափոխներուն դրամը ցրուեց գետին եւ սեղանները գլխիվայր շուռ տուաւ։ Աղաւնի վաճառողներուն ըսաւ. «Տարէ՛ք ասոնք հոստէ։ Հայրիկիս տունը առեւտրի տուն մի՛ դարձնէք»։ Աշակերտները յիշեցին թէ գրուած է. «Քու տանդ նուիրումը զիս պիտի կլանէ»։ Հրեաները ըսին անոր. «Ի՞նչ նշան կը ցուցնես մեզի, որ այս բաները կ՚ընես»։ Յիսուս պատասխանեց անոնց. «Քակեցէ՛ք այս տաճարը, եւ երեք օրուան մէջ զայն պիտի վերաշինեմ»։ Հրեաները ըսին. «Քառասունվեց տարի տեւեց այս տաճարին շինութիւնը, եւ դուն երեք օրուան մէջ պիտի վերաշինե՞ս զայն»։ Բայց ան իր մարմնին տաճարը կը նկատէր։ Երբ մեռելներէն յարութիւն առաւ, աշակերտները յիշեցին որ ըսած էր այս բանը, եւ հաւատացին Գրոց եւ Յիսուսի խօսքերուն։

Զատկի տօնին Երուսաղէմի մէջ Յիսուս շատերու հաւատացած էր, տեսնելով անոր ընելիք հրաշքները։ Բայց Յիսուս ինքզինքը չէր յանձներ անոնց, որովհետեւ ան կը ճանչնար զամենքը։ Ան պէտք չունէր որ մարդ վկայէ մարդուն մասին, որովհետեւ ինք գիտէր թէ մարդուն մէջ ինչ կայ։

Նիկոդեմոս

Գ.

Փարիսեցիներէն մէկը կար, որուն անունը Նիկոդեմոս էր, հրեաներու իշխան մը։ Ան գիշերով եկաւ Յիսուսի մօտ եւ ըսաւ անոր. «Ռաբբի, գիտենք որ Աստուծմէ եկած վարդապետ մը ես, որովհետեւ ոեւէ մէկը չի կրնար այն նշանները ընել, զորս դուն կ՚ընես, եթէ Աստուած անոր հետ չըլլայ»։ Յիսուս պատասխանեց եւ ըսաւ անոր. «Ճշմարիտ, ճշմարիտ կ՚ըսեմ քեզի, որ եթէ մարդ մը նորէն չծնանի՝ չի կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը»։ Նիկոդեմոս ըսաւ անոր. «Ինչպէ՞ս կրնայ մարդ ծերանալէ ետք ծնիլ։ Կրնա՞յ երկրորդ անգամ մայրիկին արգանդը մտնել եւ ծնիլ»։ Յիսուս պատասխանեց. «Ճշմարիտ, ճշմարիտ կ՚ըսեմ քեզի, որ եթէ մարդ մը ջուրէ եւ Հոգիէ չծնանի՝ չի կրնար մտնել Աստուծոյ արքայութիւնը։ Ինչ որ մարմնէն ծնած է՝ մարմին է, եւ ինչ որ Հոգիէն ծնած է՝ հոգի է։ Զարմանալի մի՛ եղիր որ ըսի քեզի, թէ պէտք է որ նորէն ծնանիս։ Հովը ուր որ կ՚ուզէ կը փչէ, եւ դուն անոր ձայնը կը լսես, բայց չգիտես թէ ուրկէ կու գայ եւ ուր կ՚երթայ։ Ամէն մարդ որ Հոգիէն ծնած է՝ այդպէս է»։ Նիկոդեմոս պատասխանեց եւ ըսաւ անոր. «Ինչպէ՞ս կրնան այս բաները ըլլալ»։ Յիսուս պատասխանեց եւ ըսաւ անոր. «Դուն Իսրայէլի վարդապետն ես, եւ այս բաները չե՞ս գիտեր։ Ճշմարիտ, ճշմարիտ կ՚ըսեմ քեզի, որ մենք կը խօսինք այն բանին համար զոր գիտենք եւ կը վկայենք այն բանին համար զոր տեսանք, բայց դուք մեր վկայութիւնը չեք ընդունիր։ Եթէ ես երկրաւոր բաներ ըսելով չեք հաւատար, ինչպէ՞ս պիտի հաւատաք եթէ երկնաւոր բաներ ըսեմ ձեզի։ Եւ ոչ ոք երկինք բարձրացաւ, բացի երկինքէն իջած Մարդու Որդիէն, որ երկինքի մէջ է։ Եւ ինչպէս Մովսէս անապատին մէջ օձը վերցուց, նոյնպէս Մարդու Որդին ալ պէտք է վերցուի, որպէսզի ամէն ոք որ անոր կը հաւատայ՝ յաւիտենական կեանք ունենայ։

Աստուած այնքա՛ն սիրեց աշխարհը, որ իր միածին Որդին տուաւ, որպէսզի ամէն ոք որ անոր կը հաւատայ՝ չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ։ Աստուած իր Որդին աշխարհ չղրկեց, որպէսզի աշխարհը դատապարտէ, հապա որպէսզի աշխարհը անոր միջոցով փրկուի։ Ան որ անոր կը հաւատայ՝ չի դատապարտուիր, բայց ան որ չի հաւատար՝ արդէն դատապարտուած է, որովհետեւ չհաւատաց Աստուծոյ միածին Որդիին անունին։ Եւ դատաստանը այս է, որ լոյսը աշխարհ եկաւ, բայց մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին, որովհետեւ անոնց գործերը չար էին։ Ամէն ոք որ չար բաներ կ՚ընէ՝ լոյսը կ՚ատէ եւ չի գար լոյսին, որպէսզի անոր գործերը չդատապարտուին։ Բայց ան որ ճշմարտութիւնը կը գործէ՝ կու գայ լոյսին, որպէսզի անոր գործերը յայտնի դառնան, որովհետեւ Աստուծոյ մէջ կատարուած են։

Յովհաննէս եւ Յիսուս

Յետոյ Յիսուս եւ իր աշակերտները Հրէաստանի երկրին եկան, եւ հոն անոնց հետ կը մնար եւ կը մկրտէր։ Յովհաննէս ալ Սաղիմի մօտ Ենովն կը մկրտէր, որովհետեւ հոն շատ ջուր կար։ Մարդիկ կու գային եւ կը մկրտուէին, որովհետեւ Յովհաննէս դեռ բանտարկուած չէր։ Յովհաննէսի աշակերտներէն մէկը հրեաներուն հետ մաքրութեան սովորութեան մասին վիճաբանութեան մէջ էր։ Անոնք եկան Յովհաննէսի եւ ըսին անոր. «Վարդապե՛տ, անոր մասին որ Յորդանանի միւս կողմը քեզի հետ էր, եւ որուն մասին դուն վկայեցիր, ահա կը մկրտէ, եւ բոլորը անոր կու գան»։ Յովհաննէս պատասխանեց եւ ըսաւ. «Մարդ բան մը չի կրնար ստանալ, եթէ երկինքէն չտրուի իրեն։ Դուք ինքներդ վկայ էք ինծի համար, որ ըսի, թէ ես Քրիստոսը չեմ, հապա՝ անոր առջեւէն ղրկուած եմ։ Հարսնացուն փեսան է, բայց փեսային բարեկամը որ կեցած է եւ կը լսէ զայն, մեծ ուրախութեամբ կ՚ուրախանայ փեսային ձայնին համար։ Ուրեմն իմ ուրախութիւնս լրացաւ։ Անոր պէտք է որ աճի, իսկ ես պակսիմ։ Ան որ վերէն կու գայ՝ բոլորէն վեր է։ Ան որ երկրէն է՝ երկրայինն է եւ երկրայինի մասին կը խօսի։ Ան որ երկինքէն կու գայ՝ բոլորէն վեր է։ Ինչ որ տեսաւ եւ լսեց՝ անոր կը վկայէ, բայց անոր վկայութիւնը չեն ընդունիր։ Ան որ անոր վկայութիւնը կ՚ընդունի՝ կը հաստատէ թէ Աստուած ճշմարիտ է։ Որովհետեւ Աստուծոյ ղրկածը Աստուծոյ խօսքերը կը խօսի, որովհետեւ Աստուած Հոգին չափով չի տար։ Հայրը կը սիրէ Որդին եւ ամէն բան անոր ձեռքը տուած է։ Ան որ Որդիին կը հաւատայ՝ յաւիտենական կեանք ունի, բայց ան որ չի հնազանդիր Որդիին՝ կեանքը չի տեսնիր, հապա Աստուծոյ բարկութիւնը կը մնայ անոր վրայ։

Յիսուս եւ սամարացի կինը

Երբ Տէրը գիտցաւ թէ փարիսեցիները լսած էին թէ Յիսուս աշակերտներ կ՚ընէ եւ կը մկրտէ աւելի շատ մարդիկ քան Յովհաննէս (թէեւ Յիսուս ինքը չէր մկրտեր, հապա՝ իր աշակերտները), Հրէաստանը թողուց եւ նորէն Գալիլեա գնաց։ Սամարիայի միջով պիտի անցնէր։ Եկաւ Սամարիայի Սիւքար կոչուած քաղաքին, որ Յակոբ իր որդի Յովսէփին տուած հողամասին մօտ էր։ Հոն Յակոբի ջրհորը կար։ Յիսուս ճամբորդութենէն յոգնած՝ նստած էր ջրհորին վրայ։ Ժամը մօտաւորապէս վեցն էր։ Սամարացի կին մը եկաւ ջուր քաշելու։ Յիսուս ըսաւ անոր. «Ինծի խմելու տուր»։ Աշակերտները քաղաքը գացած էին կերակուր գնելու։ Սամարացի կինը ըսաւ անոր. «Ինչպէ՞ս դուն հրեայ ես՝ ինծմէ ջուր կը խնդրես, որ սամարացի կին եմ»։ (Հրեաները սամարացիներուն հետ չեն գործեր)։ Յիսուս պատասխանեց եւ ըսաւ անոր. «Եթէ գիտնայիր Աստուծոյ պարգեւը եւ թէ ո՞վ է որ քեզի կ՚ըսէ. «Ինծի խմելու տուր», դուն անկէ պիտի խնդրէիր եւ ան քեզի կենդանի ջուր պիտի տար»։ Կինը ըսաւ անոր. «Տէ՛ր, ջուր քաշելու բան չունիս, եւ ջրհորը խոր է։ Ուրկէ՞ կ՚ունենաս կենդանի ջուրը։ Մեծ ես դուն մեր հայր Յակոբէն, որ մեզի այս ջրհորը տուաւ, եւ ինք անկէ կը խմէր, իր որդիները եւ անասունները»։ Յիսուս պատասխանեց եւ ըսաւ անոր. «Ամէն ոք որ այս ջուրէն կը խմէ՝ նորէն պիտի ծարաւնայ։ Բայց ան որ ինծմէ տրուած ջուրէն կը խմէ՝ յաւիտեան պիտի չծարաւնայ։ Ինծմէ տրուած ջուրը անոր մէջ աղբիւր պիտի ըլլայ, որ յաւիտենական կեանքի պիտի բղխի»։ Կինը ըսաւ անոր. «Տէ՛ր, այդ ջուրը ինծի տուր, որպէսզի ծարաւնալ չունենամ եւ ջուր քաշելու ալ չգամ»։ Յիսուս ըսաւ անոր. «Գնա՛ ամուսինդ կանչէ եւ հոս եկո՛ւր»։ Կինը պատասխանեց եւ ըսաւ. «Ամուսին չունիմ»։ Յիսուս ըսաւ անոր. «Ճշմարիտ ըսիր թէ ամուսին չունիս, որովհետեւ հինգ ամուսին ունեցար, եւ այժմ ունեցածդ ամուսինդ չէ։ Ասոր մէջ ճշմարիտ ըսիր»։ Կինը ըսաւ անոր. «Տէ՛ր, կը տեսնեմ որ մարգարէ ես դուն։ Մեր հայրերը այս լերան վրայ երկրպագեցին, բայց դուք կ՚ըսէք թէ Երուսաղէմ է այն տեղը ուր երկրպագութիւն պէտք է մատուցանել»։ Յիսուս ըսաւ անոր. «Կինը՛, հաւատա ինծի, որ ժամանակ կու գայ, երբ ո՛չ այս լերան վրայ եւ ո՛չ Երուսաղէմ Հօր պիտի երկրպագէք։ Դուք չգիտէք թէ ինչի կ՚երկրպագէք, մենք գիտենք թէ ինչի կ՚երկրպագենք, որովհետեւ փրկութիւնը հրեաներէն է։ Բայց ժամանակ կու գայ, եւ հիմա է, երբ իսկական երկրպագուները պիտի երկրպագեն Հօր Հոգիով եւ ճշմարտութեամբ, որովհետեւ Հայրը այդպիսիները կը փնտռէ իր երկրպագուները ըլլալու։ Աստուած Հոգի է, եւ անոր երկրպագուները Հոգիով եւ ճշմարտութեամբ պէտք է երկրպագեն»։ Կինը ըսաւ անոր. «Գիտեմ թէ Մեսիան կու գայ (որ կը նշանակէ՝ Քրիստոս)։ Երբ ան գայ՝ բոլոր բաները մեզի պիտի հաղորդէ»։ Յիսուս ըսաւ անոր. «Ես որ քեզի հետ կը խօսիմ՝ ան եմ»։

Յիսուս եւ իր աշակերտները

Այդ պահուն աշակերտները եկան, եւ զարմացան որ Յիսուս կին մը հետ կը խօսէր։ Բայց ոչ ոք ըսաւ. «Ի՞նչ կ՚ուզես»։ Կամ՝ «Ինչո՞ւ անոր հետ կը խօսիս»։ Կինը իր ջրհորը թողուց, քաղաքը գնաց եւ ըսաւ մարդոց. «Եկէ՛ք տեսէք մարդ մը որ ինծի ըսաւ ամէն ինչ որ ըրած եմ։ Միթէ ան Քրիստոսը չէ՞»։ Մարդիկ քաղաքէն դուրս ելան եւ անոր գացին։

Աշակերտները կը խնդրէին Յիսուսէն եւ կ՚ըսէին. «Ռաբբի, կե՛ր»։ Ան ըսաւ անոնց. «Ես ձեզի չունիմ ուտելու կերակուր մը, զոր դուք չեք ճանչնար»։ Աշակերտները ըսին իրարու. «Միթէ ոեւէ մէկը անոր ուտելու բան մը բերաւ»։ Յիսուս ըսաւ անոնց. «Իմ կերակուրս է կամքը Հօրը որ զիս ղրկեց, եւ գործը անոր աւարտել։ Չե՞ք ըսեր դուք թէ չորս ամիս ետք հունձքը կու գայ։ Ահա՛ կ՚ըսեմ ձեզի, աչքերնիդ վերցուցէ՛ք եւ արտերը նայեցէ՛ք, որ հունձքի համար սպիտակած են։ Հնձողը վարձք կ՚առնէ եւ պտուղ կը հաւաքէ յաւիտենական կեանքի համար, որպէսզի սերմնացանն ու հնձողը միասին ուրախանան։ Որովհետեւ այս առածը ճշմարիտ է, թէ ուրիշ մէկը կը սերմնացանէ, ուրիշ մէկը կը հնձէ։ Ես ձեզ ղրկեցի հնձելու այն բանին համար որ դուք չաշխատեցաք։ Ուրիշներ աշխատեցան, եւ դուք անոնց աշխատանքին մտաք»։

Շատ սամարացիներ հաւատացին Յիսուսի

Այդ քաղաքին շատ սամարացիներ հաւատացին Յիսուսի, որովհետեւ կինը վկայեց ըսելով. «Ինծի ըսաւ ամէն ինչ որ ըրած եմ»։ Երբ սամարացիները եկան անոր մօտ, խնդրեցին որ անոնց հետ մնայ։ Ան հոն երկու օր մնաց։ Շատ աւելի հաւատացին անոր խօսքին պատճառով։ Կինը ըսաւ. «Այլեւս քու խօսքիդ համար չենք հաւատար, որովհետեւ մենք ինքներս լսեցինք եւ գիտենք թէ այս մարդը իսկապէս աշխարհի Փրկիչն է»։

Յիսուս Գալիլեայի մէջ

Երկու օր ետք Յիսուս հոնկէ մեկնեցաւ եւ Գալիլեա գնաց։ Ինքը վկայեց թէ մարգարէն պատիւ չունի իր հայրենի երկրին մէջ։ Երբ Գալիլեա եկաւ, գալիլեացիները ընդունեցին զայն, որովհետեւ տեսած էին անոր ըրած բոլոր բաները Երուսաղէմի մէջ տօնին ատեն, որովհետեւ անոնք ալ տօնին գացած էին։

Կանայ հարսանիքը

Յիսուս նորէն եկաւ Կանա Գալիլեայի, ուր ջուրը գինի դարձուց։ Կափառնայում քաղաքին մէջ թագաւորական պաշտօնեայ մը կար, որուն որդին հիւանդ էր։ Երբ լսեց թէ Յիսուս Հրէաստանէն Գալիլեա եկած է, գնաց անոր մօտ եւ խնդրեց որ իջնէ եւ իր որդին բժշկէ, որովհետեւ մահամերձ էր։ Յիսուս ըսաւ անոր. «Եթէ նշաններ եւ հրաշքներ չտեսնէք՝ չէք հաւատար»։ Թագաւորական պաշտօնեան ըսաւ անոր. «Տէ՛ր, իջի՛ր նախքան որ մանուկս մեռնի»։ Յիսուս ըսաւ անոր. «Գնա՛, որդիդ ողջ է»։ Մարդը հաւատաց Յիսուսի ըսածին եւ գնաց։ Երբ ճամբան էր, ծառաները դիմաւորեցին զայն եւ ըսին անոր. «Որդիդ ողջ է»։ Ան հարցուց անոնց թէ ե՞րբ սկսաւ լաւնալ։ Ըսին անոր. «Երէկ ժամը եօթնին տենդը զայն թողուց»։ Հայրը գիտցաւ թէ հենց այդ ժամուն Յիսուս ըսած էր անոր. «Որդիդ ողջ է»։ Ինքն ալ հաւատաց եւ իր ամբողջ տունը։ Յիսուս այս երկրորդ նշանը ըրաւ Գալիլեայի մէջ, երբ Հրէաստանէն Գալիլեա եկաւ։

Բեթեսդա

Յետոյ հրեաներուն տօնը եղաւ, եւ Յիսուս Երուսաղէմ գնաց։ Երուսաղէմի մէջ ոչխարի դարպասին մօտ հինգ սիւներով աւազան մը կայ, որ եբրայերէնով Բեթեսդա կը կոչուի։ Այդ սիւներուն վրայ պառկած էին հիւանդներու, կոյրերու, կաղերու եւ ձեռքերը չորցածներու մեծ բազմութիւն մը։ Հոն կար մարդ մը որ երեսունութ տարի հիւանդ էր։ Յիսուս տեսաւ զայն պառկած եւ գիտնալով թէ երկար ատենէ ի վեր հիւանդ է, ըսաւ անոր. «Կ՚ուզե՞ս առողջանալ»։ Հիւանդը պատասխանեց. «Տէ՛ր, մարդ չունիմ որ ջուրը խռովելուն ատեն զիս աւազանին մէջ դնէ։ Երբ ես գամ՝ ուրիշ մը արդէն իջած կ՚ըլլայ»։ Յիսուս ըսաւ անոր. «Ոտքի՛ ելիր, մահիճդ առ եւ քալէ՛»։ Մարդը անմիջապէս առողջացաւ, մահիճը առաւ եւ քալեց։ Այդ օրը շաբաթ էր։ Հրեաները ըսին բժշկուած մարդուն. «Շաբաթ է այսօր, եւ չի կրնար օրէնքը ոտքի ելլել եւ մահիճդ առնել»։ Ան պատասխանեց անոնց. «Ինծի ըսաւ. «Ոտքի՛ ելիր եւ քալէ՛»։ Հրեաները հարցուցին անոր. «Ո՞վ է այն մարդը որ ըսաւ քեզի. «Մահիճդ առ եւ քալէ՛»։ Բայց բժշկուած մարդը չգիտէր թէ ո՞վ է ան, որովհետեւ Յիսուս ամբոխին մէջ քաշուած էր։ Յետոյ Յիսուս տաճարին մէջ գտաւ զայն եւ ըսաւ անոր. «Ահա՛ առողջացար։ Այլեւս մի՛ մեղանչեր, որպէսզի աւելի վատ բան մը չպատահի քեզի»։ Մարդը գնաց եւ հրեաներուն ըսաւ թէ Յիսուս է անոր բժշկողը։

Յիսուս եւ Հայրը

Հրեաները հալածանք սկսան Յիսուսի դէմ, որովհետեւ շաբաթ օրը այդ բաները կ՚ընէր։ Յիսուս պատասխանեց անոնց. «Հայրս մինչեւ հիմա կը գործէ, եւ ես ալ կը գործեմ»։ Այդ պատճառով հրեաները աւելի կը փնտռէին սպաննել զայն, որովհետեւ ոչ միայն շաբաթ օրը կը խախտէր, հապա նաեւ Աստուած իր Հայրը կոչելով՝ ինքզինքը Աստուծոյ հաւասար կ՚ընէր։ Յիսուս պատասխանեց եւ ըսաւ անոնց. «Ճշմարիտ, ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, որ Որդին ինքնուրոյն բան մը չի կրնար ընել, եթէ չտեսնէ Հայրը որ կ՚ընէ։ Որովհետեւ ինչ որ ան կ՚ընէ՝ Որդին ալ նոյնը կ՚ընէ։ Հայրը կը սիրէ Որդին եւ ամէն բան անոր ցոյց կու տայ որ ինք կ՚ընէ։ Եւ աւելի մեծ գործեր պիտի ցուցնէ անոր, որպէսզի դուք զարմանաք։ Որովհետեւ ինչպէս Հայրը կը յարուցանէ մեռելները եւ կը կենդանացնէ, նոյնպէս Որդին ալ կենդանացնել կու տայ ում որ կ՚ուզէ։ Հայրը ոչ ոքի կը դատապարտէ, հապա դատաստանը ամբողջութեամբ Որդիին յանձնեց, որպէսզի բոլորը Որդին պատուեն ինչպէս կը պատուեն Հայրը։ Ան որ չի պատուեր Որդին՝ չի պատուեր զայն որ զինք ղրկեց։ Ճշմարիտ, ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, որ ան որ իմ խօսքերս կը լսէ եւ կը հաւատայ զիս ղրկողին՝ յաւիտենական կեանք ունի եւ դատապարտութեան չի գար, հապա մահէն կեանքի անցած է։ Ճշմարիտ, ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, որ ժամանակ կու գայ, եւ հիմա է, երբ մեռելները պիտի լսեն Աստուծոյ Որդիին ձայնը, եւ անոնք որ լսեն՝ պիտի կենդանանան։ Որովհետեւ ինչպէս Հայրը իր մէջ կեանք ունի, նոյնպէս Որդիին տուաւ որ իր մէջ կեանք ունենայ։ Եւ իրաւունք տուաւ անոր դատաստան ընել, որովհետեւ Մարդու Որդին է։ Զարմանալի մի՛ եղէք այս բանին համար, որովհետեւ ժամանակ կու գայ, երբ բոլոր անոնք որ յուշարձաններուն մէջ են՝ անոր ձայնը պիտի լսեն եւ դուրս պիտի գան։ Անոնք որ բարի գործեր ըրին՝ կեանքի յարութեան համար, իսկ անոնք որ չար գործեր ըրին՝ դատապարտութեան համար։ Ես ինքնուրոյն բան մը չեմ կրնար ընել։ Ինչպէս կը լսեմ՝ այնպէս կը դատեմ, եւ իմ դատաստանս արդար է, որովհետեւ իմ կամքս չեմ փնտռեր, հապա՝ զիս ղրկողին կամքը։

Եթէ ես ինքս վկայ ըլլամ ինծի համար, վկայութիւնս ճշմարիտ չէ։ Ուրիշ մէկը կայ որ վկայ է ինծի համար, եւ գիտեմ թէ ճշմարիտ է այն վկայութիւնը զոր ան կու տայ ինծի համար։ Դուք Յովհաննէսի մօտ ղրկեցիք, եւ ան ճշմարտութեան վկայեց։ Ես մարդէ վկայութիւն չեմ ընդունիր, բայց այս բաները կ՚ըսեմ որպէսզի դուք փրկուիք։ Ան լապտեր մը էր որ կը վառէր եւ կը լուս

րկան: ԴաՀիրէ եւ Դամասկոս բուռն յարձակումներ կը գործեն Ամմանի վրայ, աշխատելով որ խռովութիւններ ծագին այնտեղ :

Վերջերս Սուրիա դադրեցուց իր յարձակումները Յորդանանի վրայ, մինչ Եգիպտոս Հետզհետէ աւելի կը սաստկացնէ իր քննադատութիւնները, յայտարարելով թէ Վեհապետին կեանքը այլեւս վտանգի տակ է :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՖՐԱՆՍԱՅԻ երկրորդական վարժարաններու ուսուցիչները 48 ժամուան գործադուլ մը Հռչակեցին, որ սկսաւ Գշ. օր : Գործադուլին Հետեւեցան բոլոր դասատուները, որոնք դժգոհ են իրենց պայմաններէն :

ԻՍՐԱՅԷԼԻ մէջ Նոյեմբեր 17ին կը բացուի ֆրանսերէն լեզուով դրող լրագրողներու ընկերակցութեան Հինգերորդ Համագումարը, որուն մասնակցելու Համար Ֆրանսայէն ու Քանատայէն Հրաւիրուած է վաթսուն Հոգի :

ՖՐԱՆՍԱՅԻ Արտաքին նախարար Փինօ յառաջիկայ չարաթ օր պիտի մեկնի Նիւ Եորք, ղեկավարելու Համար ֆրանսական պատուիրակութիւնը՝ ՄԱԿի մէջ: Կը կարծուի թէ Փինօ առիթէն օգտուելով Ուաշինկթըն պիտի կարենայ երթալ, Արտաքին նախարար Տըլլըսի Հետ տեսակցութիւն մը ունենալու Համար :

ՄՈՍԿՈՒԱՅԻ մէջ միջազգային Համայնավար պատուիրակութեանց ղեկավարները գաղտնի ժողով մը ունեցան Գշ. օր:

ՉԵԽՈՍԼՈՎԱՔԻՈՅ Հանրապետութեան Նախագահ Զափոթոքի, որ կը տառապէր սրտէն, աՀջի օր մեռաւ Փրակայի մէջ :

ՄՈՍԿՈՒԱՅԻ ռուսեւգերման խորՀրդակցութիւնները պիտի վերսկսին այս չաբթու: Ինչպէս ծանօթ է, այս խորՀրդակցութեանց գլխաւոր կէտն է Խ. Միութեան մէջ գտնուող Գերմանացիներու Հայրենադարձը :

ՈՒՈՇԻՆԿԹԸՆԻ մէջ Նախագահ Այզըն–Հաուըր ընդունեցաւ Անգլիոյ աշխատաւորական պարագլուխ Գեւանը, որ յայտնեց թէ Արեւմուտքը պէտք է ընդունի Խրուշչեւ առաջարկը եւ բոլոր երկիրներու «գագաթ»ներու ժողով մը գումարէ :

ՄՈՍԿՈՒԱՅԻ ձայնասփիւռը յայտարարեց թէ ամերիկեան Վեցերորդ Նաւատորմը նոր դաւադրութիւններ կը պատրաստէ Միջին Արեւելքի մէջ :

ՊԱԼ – ՏԸՆՔԵՐՔ չոգեկառքը երկուշաբթիէն երեքշաբթի լուսնալու գիշերը արկած մը ունեցաւ, որուն Հետեւանքով չորս Հոգի վիրաւորուեցաւ:

ՓԱՐԻԶԻ մէջ ձերբակալուեցան Ալժերիոյ Ազատագր. Ճակատին 186 անդամները, որոնք պիտի փոխադրուին Ալժէ, ուր տեղի պիտի ունենայ իրենց դատավարութիւնը :

ՍԱԿԱՐԱՆ (Նոյ. 12).— Զոյլ ոսկի 549 Հազար (549.000), նափոլէոն 4000 (4010), զուից. 3850 (3810), անգլ. 4800 (4780), քսան տոլարնոց 19.360 (19.240), թղթադրամ (անպաչտօն) սթերլին 1225 (1235), տոլար 469 (470), զուից. 111.75 (113.259), պելժ. 9.15 (9.15), լիր 0.73 (0.73):

〰〰〰〰〰〰〰〰〰〰〰〰

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Մարսէյլի Ամասիոյ Հայր. Միութեան տարեկան պարաՀանդէսը, մեծ պատրաստութեամբ 7 Դեկտեմբերին, չաբաթ գիշեր, ԱլՀամպրայի շքեղ սրաՀներուն մէջ :

ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՄՍԱԹԵՐԹ

(Օրգան՝ Հ. Յ. Դ. Նոր Սերունդի)

Լոյս տեսած է Հոկտ.ի թիւը (10), ճոխ բովանդակութեամբ, պատկերազարդ :

Հայերէն եւ ֆրանսերէն :

Զեռքէ՝ Հատը 50 ֆրանք :

Տարեկան բաժնեգին՝ 450 ֆրանք :

Ստանալու Համար դիմել՝

M. K. PAPAZIAN

25, Rue Martial-Boudet, Chaville - S. et O.

Օր. ՍՈՒԼԹԱՆ ՔԷՍՏԷԿԵԱՆ

Պ. ԺԱՆ – ՎԱՐՈՒԺԱՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Նշանուած

Լանոէ, 19 Նոյ. 1957 Մարսէյլ

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԽՆՋՈՅՔ

«ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐ»ՈՒԱՆ ԱՌԹԻՒ

ԱՐՆՈՒՎԻԼԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. «Վարդան» ենթակոմիտէի եւ մասնակցութեամբ Կապոյտ Խաչի մասնաճիւղին եւ Նոր Սերունդի խումբին :

ՆՈՅԵՄԲԵՐ 24ԻՆ

ժամը 5էն 11, եկեղեցիին սրահը :

Գեղարուեստական բաժնին կը մասնակցի Թարխտ՝ ԳԱՐԵԳԻՆ :

Ճոխ պիւֆէ : Ծախքերու մասնակցութիւն :

×

ԻՍԻԻ ՄԷՋ

Այս կիրակի ժամը 16ին, Խրիմեան սրաՀին մէջ, նախաձեռնութեամբ «Զաւարեան» կոմիտէին :

Կը նախագահէ ընկ. ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ :

Կը խօսի՝ ընկ. ԽԱԶԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆ

Գեղարուեստական բաժնին կը մասնակցին՝ Տիկին Շաքէ Գայայճեան, Օր. Ս. Շահինեան, Օր. Շաքէ Պէնկեան, Տիկին Ալիս Փափազեան, Պ. Պ. Ս. Պօղոսեան, Ա. Սերոբեան, Մ. Գարակէօզեան :

×

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ

ՍԷՆ ՇԱՄՈՆԻ ՄԷՋ

Այս կիրակի կէսօրէ վերջ, ժամը 15ին, Սալ ժան տ'Արքի մէջ:

Կը խօսի ընկ. Վ. ԻՇԽԱՆԵԱՆ

Գեղարուեստական բաժին, երգ, խմբերգ, արտասանութիւն :

Մուտքը ազատ է :

ՑԵՐԵԿՈՅԹ ՎԻԷՆԻ ՄԷՋ

Վիէնի Նոր Սերունդը կազմակերպած է ցերեկոյթ պարաՀանդէս մը, կիրակի, (17 Նոյեմբեր) կէսօրէ վերջ ժամը 3ին:

Կը Հրաւիրուին Վալանսի, Սէնթ էթիէնի, Սէն Շամոնի, Լիոնի, Տէսինի Նոր Սերնդականները եւ Համակիրները :

Հաճելի մթնոլորտ :

Դ Ե Կ Տ Ե Մ Բ Ե Ր 1 5 Ի Ն

« ՍԻՓԱՆ – ԿՈՄԻՏԱՍ»Ի

ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ՝

SALONS DES AMBASSADEURS

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԲԱՑԱՌԻԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

«ՇԱՆԹ» ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԻ ԿՈՂՄԷ

23 Նոյեմբեր, չաբաթ երեկոյ ժամը 9ին, Պոմոնի ՍաՀակ – Մեսրոպ սրաՀին մէջ :

Կը ներկայացուի ԳՐԻԳՈՐ ՎԱՀԱՆԻ

ԲԱԽՏԻՆ ԱՆԻՒԸ (3 արար)

Ղեկավարութեամբ Գ. ՔԷՆՏԻՐԵԱՆԻ

Ի նպաստ գրադարանին ֆոնտին :

Կը մասնակցին Մակի Իշխանեան, Շաքէ Սէրէնկիւլեան, Գր. Քէնտիրեան, Գր. Թիւրքէլեան, Ժ. Միրիճեան, Յովհ. Տէրվարդանեան, Աւետիս Եօթնեղբայրեան:

Տոմսակները ստանալ ընկեր Գ. Եօթնեղբայրեանէ եւ Յ. Գօճակէօզեանէ :

ՑԵՐԵԿՈՅԹ – ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Կազմակերպուած Սեւրանի Կապ. Խաչի մասնաճիւղին կողմէ :

Կիրակի 24 Նոյեմբեր, ժամը 15էն 23, «ՄԱՍԻՍ»ի շքեղ սրաՀին մէջ, 87 Ավընիւ տը Լիվրի, Սեվրան:

Հայկական եւ եւրոպական պարեր, անակնկալներ, ՍԹԷՍԷԼի նուագախումբին մասնակցութեամբ :

Օթօպիւս՝ 147 էկլիզ տը Փանթէն, կար տիւ Նոր, ժամը 14 եւ 15:

ԿՕՇԿԱԿԱՐ ԿՈՒԶՈՒԻՆ

Տունը աշխատող գործաւորուՀիներ Շըմիզիէի Համար: Կը յանձնենք Փարիզի շրջակայքը (մինչեւ 50 քիլոմեթր) :

Դիմել՝

TAVITIAN, 40, Rue de Flore. Alfortville

ENT. 35-17

Կամ Փարիզի Հասցէին՝

19, Bd. Saint-Denis

Imprimé sur les presses du journal HARATCH

— 17, Rue Bleue, 17 — PARIS (9e) —

ԱՆԳԱՄ ՄԸ ԵՒՍ

Քանիցս մեր կրկնած դիմումներուն եւ ղրկած մանտաներուն Հակառակ՝ տակաւին ունինք բաժանորդներ, որոնք կարգադրած չեն իրենց տակաւ Հաշիւները :

Վարչութիւնս ի վիճակի չէ ապառիկ թերթ ղրկելու : Տեղական որեւէ թերթ կարելի չէ ապառիկ ստանալ :

Ամսագլխուն՝ պէտք է փակուին տակաւ բոլոր Հաշիւները :

Տպարանի փոխադրութեան առթիւ թերթիս վարչութիւնը կը գտնուի բացառիկ եւ ծանր ծախքերու առջեւ եւ ամէն ջանք կը փորձէ թերթին գինը չբարձրացնելու Համար : Մեր բաժանորդներէն կը խնդրուի, այս պայմաններուն մէջ մանաւանդ, դժուարութիւններ չտալ :

Մեր կանխայայտ շնորՀակալութիւնները բոլոր անոնց որոնք իրենց կանոնաւոր վճարումներով յարդ ապաՀոված են թերթիս Հրատարակութիւնը :

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

ՄԱՐՍԷՅԼ.— Այրի Տիկին ՀամեստուՀի Միլտոնեան, Տէր եւ Տիկին ՍեպուՀ Միլտոնեան, Տէր եւ Տիկին Զաւէն Միլտոնեան, Տէր եւ Տիկին Փառնակ Յակոբեան, կը ծանուցանեն թէ այս կիրակի ժամը 11ին, Պոմոնի Ս. Մեսրոպ եկեղեցւոյ մէջ տեղի պիտի ունենայ ՀոգեՀանգստեան պաշտօն եւ պատարագ իրենց ամուսնոյն, Հօր, աներՀօր Բենիկ Միլտոնեանի մաՀուան տարելիցին առթիւ: Կը Հրաւիրուին Հանգուցեալին յիշատակը յարգողները :

ԾԱԽՈՒ Է

Նոր շինուած շքեղ փավիյօն մը, երեք սենեակ խոՀանոց, մառան եւ կառատուն, ջերմութիւն, Փարիզէն 15 քիլոմեթր, պարտէզ (փրիմ) եւ 25 տարի տուրքէ զուրկ : Գին՝ կանխիկ Հինգ միլիոն : Դիմել՝ Թէլլալեան՝

19, Chemin Noisiul, TORCY - S. et M.

Մանրամասնութեանց Համար կարելի է Հեռաձայնել՝ TRU. 78 – 34:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՓԱՐԻԶ.— Հ. Յ. Դ. «Փոթորիկ» խումբին ժողովը, այս Հինգշաբթի, ժամը 9ին, 17, րիւ Պլէօ:

ՎԱԼԱՆՍ.— Կապ. Խաչի ընդՀ. անդամական ժողովը այս կիրակի ժամը 2.30ին, Պ. Արսէն Տէր Սարգիսեանի դերձակատան մէջ: ԸնկերուՀիներու ներկայութիւնը պարտաւորիչ է :

ԹՈՔԱՏԻ Հայր. Միութեան ընդՀ. ժողովը այս կիրակի կէսօրէ վերջ ժամը 4ին, սովորական վայրը :

ՌՈՆԻ ՍՈՒ ՊՈՒԱՅԻ Մշակութային եւ Իրազօղութեան ընդՀ. ժողովը այս չաբաթ ժամը 9ին Քափէ տը Քոմէրսի սրաՀը :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Նիսի եւ շրջականներու Հայաստանեայց Առաքելական Կրօն. Ընկերակցութեան ընդՀ. ժողովը 17 Նոյեմբեր, կիրակի կէսօրէ վերջ, ժամը 15.30ին, Մասէնի Եկեղեցւոյ դպրոցին սրաՀը :

Օրակարգ.— Ա) Զեկոյց եւ Հաշուետուութիւն, Բ) Հաշուեքննիչ Մարմնի ընտրութիւն, Գ) Վարչական ընտրութիւն նոր շրջանի Համար :

Կրօն. Ընկերակցութեան վարչութիւնը կը Հրաւիրէ իր բոլոր անդամ – անդամուՀիները ներկայ գտնուելու սոյն ընդՀանուր ժողովին :

Ի դիմաց Կրօն. Ընկերակցութեան

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԾԱՆՕԹ.— Անոնք որոնք կը փափաքին անդամ արձանագրուիլ եւ քուէարկելու իրաւունք ունենալ, կրնան կիրակի օրերը բանկալը արձանագրուիլ եւ կամ ժողովին օրը :

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

Կը փնտռուի Լեւոն Տէր Գրիգորեան, (Հայաստանէն), Հօրը անունը Գեղամ, մօրը՝ Վարսենիկ: 1918ին Երզրումէն անցած է: Կը խնդրուի տեղեկացնել Տիկին Ասլանեանի Սիրթէ Վիսկօս 3806, Էշիրօլ, (Իզէռ):

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

Վարձու տուն մը կամ յարկաբաժին մը ընտանիքի մը Համար :

Տեղեկացնել Յառաջի վարչութեան :

ՄՈՒՐԱՏ ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՄԻՈՒԹԻՒՆ

Մ Ա Ր Ս Է Յ Լ

Ե Ղ Ա Ն Ա Կ Ի

ԱՌԱՋԻՆ ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

Շաբաթ, Նոյեմբեր 16, ժամը 22էն մինչեւ առաւօտ

HOTEL SPLENDID

Grande Attraction... Surprise

ՏՈՄՍԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ՝

Ա. ՇԵԽԻԿԵԱՆԻ՝ 1, Bd, d'Athènes CO. 33-80 Ս. ԷՔՍԷՐՃԵԱՆԻ՝ 40, La Canebiére CO. 30-88

ԱԼՖՈՐՎԻԼԻ ՀԱՅ ՄԱՐԶԱԿԱՆԻ

ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

16 Նոյեմբեր, Շաբաթ գիշեր ժամը 9էն մինչեւ լոյս

Քաղաքապետարանի սրահին մէջ Րիւ Վօլթէր

avec BORIS et son célèbre Orchestre Typique

Հայկական եւ ընտանեկան մթնոլորտ

Գեղարուեստական խնամուած բաժին

ՄՈՒՏՔ 400 ՖՐԱՆՔ

BAINS DE VAPEUR

4 bis, Rue de la Pierre-Levée — Paris - 11·

OBE. 12-51

MÉTRO : RÉPUBLIQUE, OBERKAMPF ET PARMENTIER

Ե Ր Ե Ք Ս Ր Ա Հ Շ Ո Գ Ի Ի Լ Ո Գ Ա Ն Ք Ի

(SUDATION ET FUMIGATION)

Մասաժ, Օքսիժենօթերափի, ձեռքերու եւ ոտքերու խնամք (մանիւքիւր – փետիւքիւր) քուափիւր, սուէն տը պօրէ, փիսին:

BAR - RESTAURANT

Բաց օրեր.—

ԿԻՆԵՐՈՒՆ	ԱՅՐԵՐՈՒՆ
Ուրբաթ ժամը 11էն 23	Հինգշաբթի ժամը 17էն 23
Երկուշաբթի ժամը 11էն 23	Շաբաթ ժամը 9էն 23
Չորեքշաբթի ժամը 11էն 23	Կիրակի ժամը 8էն 12

ՀԱՅԵՐԷՆ ԿԸ ԽՕՍԻՆՔ

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925 — Tél. : PRO. 86-60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. PARIS 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամս. 1600

Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք: Հատը 12 ֆր.

ՈՒՐԲԱԹ
15
ՆՈԵՄԲԵՐ
VENDREDI
15 NOVEMBRE
1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8043 — 33e ANNEE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3844

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՏԱԳՆԱՊԻՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

—o—

Եվմտական տաղնապը կը չարունակէ պրպտեցնել պետական չրջանակներն ու հանրային կարծիքը միանգամայն :

Կառավարութիւնը իրրեւ պատասխան – նատու Ֆրանսայի եւմտութեան հատատ – կութեան, ծրագիրներ կ'որոճայ հա – տկոցի նոր պրկիւններ ճարելու եւ հա – կիւռատր միլիառներու հասնող բացը պո – կելու համար :

Իսկ հանրային կարծիքը յուզուած է՝ տեսնելով որ մէկ կողմէ ամէնօրեայ ապ – րուստի անհրաժեչտ առարկաներու գի – ները չարունակ կը բարձրանան, միւս կողմէ տուրքերը կ'աւելնան : Իսկ ամէնէն կարեւորը՝ Ֆրանքի գնման կարողութիւ – նը հետզհետէ կը նուազի :

Ներկայ տաղնապը ծանր կը կշռէ անոր համար, որ կրկնակ երեսներով կը ներ – կայանայ : Նախ՝ Ֆրանսայի ներածումնե – րը անհամեմատ աւելցած են քան արտա – ծումները : Այդ պատճառով ալ իր արտա – քին առեւտուրի դործունէութիւնները մեծ բաց մը կ'արձանագրեն : Այդ բացը պէտք է վճարուի օտար դրամով (տրվիզ) : Եկրորդ՝ բաց ունի նաեւ պետական եւ – մտացոյցը :

Առաջին տեսակի բացը իր նուազագոյ – նին իջեցնելու համար նախորդ կառավա – րութիւնը սեղմումներու ենթարկեց նե – րածումները, միաժամանակ հարիւրին քան համեմատութեամբ տուրք մը հա – տուտից արտասահմանէն գնուած ապ – րանքներուն վրայ :

Սկիզբը կարգ մը անհրաժեչտ նախա – նձեռներ զերծ կացուցուած էին այս տուր – քէն, սակայն քանի մը ամսուան փորձը ցոյց տուաւ թէ չատ մը զեղծումներ դոր – ծուած էին : Կարգ մը գործարանատէրեր օգտուելով ներկայացած առիթէն, իրենց պէտքէն աւելի ապսպրանք տուած էին ու փոխարժէքը հատուցանելու համար պե – տական գանձէն տոլար գնած էին 350 Ֆրանքի հաչուով, փոխան 420ի (հարիւ – րին քան յաւելումով) : Կառավարութիւ – նը վերջ տուաւ այդ բացատութեանց եւ ներկայիս բոլոր ներածողները պարտաւոր են տոլարը գնել 420 Ֆրանքէն :

Իրականին մէջ այս կարգադրութիւնը կը նչանակէ Ֆրանքին արժեզրկումը հա – րիւրին քան համեմատութեամբ :

Ֆրանսա ինքնաբաւ երկիր մը չէ : Պար – տաւոր է իր անտեսութեան եւ ճարտա – րարուեստին համար անհրաժեչտ բազ – մաթիւ նիւթեր գնել արտասահմանէն : Ազատագրութենէն ի վեր այս երկիրը մեծ զարկ տուած է չինարարութեան, ար – դիական նոր գործարաններ բացած է եւ ամէն օր նոր յառաջդիմութիւններ կ'ար – ձանագրէ ճարտարարուեստի մարդին մէջ :

Տնտեսական Խորհուրդի տեղեկագրին համաձայն, որ լոյս տեսաւ պաչտօնա – թերթի 23 Օգոստոս 1957ի թիւին մէջ, մինչ 1955ին Ֆրանսա իր արտածումներու հաչուոյն օտար երկիրներէ պահանջատէր էր 407 միլիոն տոլար, 1956ին ներածում – ներու դլուխէն պարտական կը մնար 835 միլիոն տոլար : Այս բացը աւելցած է 1957ի եօթը ամիսներու ընթացքին : Այ – սինքն մինչեւ այն օրը (Օգոստոս 11), երբ կառավարութիւնը սեղմումներու են – թարկեց ներածումները :

1950 – 51ին նման ծանր տաղնապ մը անցուցած էր Ֆրանսա, որ օտար երկիր – ներու կը պարտէր 1·058 միլիոն տոլար : Պետական եվմտագոյցն ալ կարեւոր բաց մը կը ներկայացնէր. աչխատավարձե – րու եւ դիներու ծայրայեղ բարձրացումը մը ահռելի կացութիւն մը ստեղծած էր : Խոհար Ֆորի կառավարութիւնը այն ա – տեն տաղնապը փարատելու համար նոյն դասական միջոցներուն դիմած էր, այ – սինքն մէկ կողմէ արմատական սեղմում –

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԿԱՅԵԱՌ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՌՋԵՒ

—o—

ԵՎՄՏԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ ՄԵՐԺԵՑ ՆՈՐ ՏՈՒՐՔԵՐՈՒՆ ՄԷԿ ՄԱՍԸ

Շարաթ մը անցաւ այն օրէն, երբ կայ – ևառ վարչապետ ընտրուեցաւ, սակայն դահլիճին վստահութիւն յայտնած մե – ծամասնութեան մէջ տակաւին ըսի – ը – սաններ կան : Ֆելիքս Կայեառ լուրջ դժ – ուարութիւններու առջեւ կը դտնուի : Եվ – մտական յանձնախումբը Դէ· օր ժողով մը դումարեց : Վիճաբանութիւնները չա – տով քաղաքական բնոյթ ստացան : Ան – կախ երեսփոխան Քուրան յայտնեց, թէ նոր ծախքերը կարելի պիտի չըլլայ գան – ձել 1958 – 1961ի ընթացքին : Տուրքերու քաչաբկութիւնը յետաձդուեցաւ իրիկ – ուան եւ մինչ այդ Ընկերվարականներն ու Ժողովրդական Շարժումի ներկայացու – ցիչները խորհրդակցեցան՝ դիրք մը ճշդելու համար Քուրանի ծրագրին հան – դէպ :

Միւս կողմէ, Լէնար կը յայտարարէր, թէ խորհրդարանական իմրակցութեանց ներկայացուցիչներուն հանդիպումը ան – հրաժեչտութիւն դարձած է ներկայիս :— եթէ պարագայ մը գոյութիւն ունի՝ երբ կլոր Սեղանը անհրաժեչտ է, հիմա կը դտնուինք այդ կացութեան առջեւ, ըսաւ ան :

Ժողովի ընթացքին համաձնավարները նոր ծրագիր մը սեղան բերին.— «Դրա – մատիրական ընկերութիւններուն եւ քան միլիոնէ աւելի հարստութիւն ունեցողնե – րուն վրայ տուրքեր դնել՝ որոնք հետ – զհետէ աւելնան :» Առաջարկը անմիջապէս մերժուեցաւ 29ի դէմ 11 (համաձնավար) ձայնով եւ չորս ձեռնպահութեամբ :

Այնուհետեւ յանձնախումբը քննեց այն օրէնքը (Ա· յօդուած, Ա· մաս) որ 1958ի ընթացքին ընդհանուր պիւտճէն կը նա – խատեսէ վեց հարիւր միլիառ Ֆրանք :

Երկարօրէն քննուեցաւ նոյն յօդուածին Բ· մասը, որ 1958ի ծախքերը կը սահմա – նափակէ 5·300 միլիառ Ֆրանքի մէջ, որոչելով միաժամանակ՝ որ նոր յատ – կումներու ամէն առաջարկ պիտի մեր – ժուի :

(Շարունակութիւնը կարդալ Դ· էջ)

ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՆՈՐ ԿՆՃԻՌԸ - ՅՈՐԴԱՆԱՆ

ՀԻՒՍԷՅՆ ԽՆԴՐԱԾ ԷՐ ՅՐԴ ՆԱԽԱՏՈՐՄԻՆ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԳՐԷ ԵԳԻՊՏԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

Միջին Արեւելքի տաղնապին կեդրոնը Սուրիայէն փոխադրուեցաւ Յորդանան : Այնպէս կը թուի, թէ յորդանանեան տաղնապը արուեստականօրէն ուռուցիկ երեւոյթ մը առացած է, ինչպէս էր պա – րագան Թուրքիա-Սուրիական վէճերուն : Սակայն, եթէ նոյնիսկ արուեստական ըլ – լայ այս տաղնապը՝ մեծ վտանգ մը կը ներկայացնէ Միջին Արեւելքի մէջ :

Եգիպտական մեղադրանքները կը ծան – րանան յատկապէս Հիւսէյն թագաւորի եւ Պէն Կուրիոնի «պատնի տեսակցութեան» վրայ, որ քանիցս հերքուեցաւ վեհապե – տին կողմէ : Այս ձեւով, Եգիպտոս կ'աչ – խատի երիտասարդ թագաւորին դէմ հա – նել 378·000 պղեստինցի գաղթական – ները :

Գահիրէի ձայնափիւռին տղարա – րութիւնները մտահոգիչ են. Եգիպտացիք կ'ըսեն թէ Հիւսէյն պիտի ոսպաննուի : Թագաւորին մեծ հայրը՝ Ապտալա, ըս – պաննուած էր 1951 Յուլիս 20ին : Երիտա – սարդ արքան կրնայ նոյն ճակատագրին ենթարկուիլ :

Եթէ Հիւսէյն սպաննուի կամ մեկու – սացուի՝ նր վէրք մը պիտի բացի Միջին Արեւելքի մէջ եւ Ցրդանան պիտի խախտի արաբական երկիրներու հաւասարակչռութիւնը :

Եգիպտական մամուլը նոյն սաստկու – թեամբ կը չարունակէ իր յարձակումները երիտասարդ Թագաւորին վրայ : «Ալ Ահ – րամ» թերթը մինչեւ իսկ կ'ըսէ, թէ ան քան միլիոն տոլար ստացած է Միացեալ Նահանգներէն՝ արաբական երկիրներու միջեւ անհամաձայնութիւն ստեղծելու համար :

«Ալ Կումհուրիա» կը պրէ թէ երեք մի – լիոն տոլար ծախսուած է Թագաւորին պահակազօրքը զօրացնելու համար : Նոյն թերթին մէջ, Նիւ Եորքի Թրթակիցը կը յայտնէ թէ Հիւսէյն անձնական նամակ մը դրած է Այզընհաուըրի, խնդրելով ան – կէ որ 6րդ նաւատորմը Միջերկրական դրկուի, Եգիպտացիներու եւ Սուրիացի – ներու կողմէ պատրաստուող յեղափո – խութեան մը դէմ դինքը պաչտպանելու համար :

Հիւսէյն մամուլի ասուլիս մը տալով յայտարարեց, թէ Եգիպտոսի եւ Սուրիոյ դեկավարները միջազգային համաձնավա – րութեան գործիքներն են, որ կ'աչխատին համաձնակար վարչակարգ հաստատել նաեւ Յորդանանի մէջ, սակայն, աւել – յուց ան, Յորդանանի ժողովուրդն ու բանակը, կառավարութեան հետ պիտի պաչտպանեն իրենց անկախութիւնը : Երկրին մէջ խաղաղութիւն կը տիրէ :

Վեհապետը միաժամանակ յայտարա – րեց, թէ Եգիպտոսի եւ Սուրիոյ հետ Յորդանանի ստորագրած միասնականու – թեան դաչնագիրը այլեւս անարժէք թուղթի կտոր մըն էր, քանի որ պաղ պատերազմի մէջ այդ երկու երկիրները կանդնեցան Խ· Միութեան կողքին :

Յորդանան նոր դէնքեր պիտի ստանայ Միացեալ Նահանգներէն, ինչպէս կը նա – խատեսէր երկու երկիրներու միջեւ կրն – քուած պինուորական համաձայնութիւնը, եղբակացուց թագաւորը :

× Իր դահակալութեան չորրորդ տա – րեդարձին առթիւ Սէուտ Թագաւոր Ռիատի մէջ ճառ մը խօսելով դատապար – տեց սիոնականութիւնը, որ իր ճանկերը մխրճած է արաբական Պաղեստինին մէջ : Արաբիոյ վեհապետը խիստ բառեր դոր – ծածեց Հրեաներուն դէմ :

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀԵՌԱԳԻՐԸ և ԱՆԹԻԼԻԱՍԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

ՆՄԲ.— Անցած շաբաթ երկու խմբա – գրականով անդրադարձած էինք Ամենայն Հայոց Կաթողիկոսին հեռագրին :

Ստորեւ կը հրատարակենք այդ հեռա – գիրը, ինչպէս նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատասխանը՝ իրրեւ նիւթ՝ պատմութեան համար :

23 Հոկտեմբերին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարան Հասաւ Ս· Էջմիածնոյ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն· Ս· Օ· Տ· Տ· Վազգէն Ա·ի 22 Հոկտ· 1957 թուակիր մէկ հեռագիրը, հետեւեալ հասցէով եւ բովանդակութեամբ :

« Կաթողիկոսարան Հայոց, Անթիլիաս Պէյրութ ,

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսու – թեան Աթոռակալ Տ· Զարէհ Եպիսկոպո – սին,

Մենք, Վազգէն Առաջին , Կաթողիկոս Ամենայն Հայոց, տեղեկացած ըլլալով Հոկտեմբերի սկզբի մամուլի հաղորդում – ներէն Ձեր որոչումի մասին Ամերիկահայ Էջմիածնական Թեմի շրջք մը եկեղեցիներ Կիլիկեան Աթոռի իշխանութեան ներքեւ առնելու, մեր վրդովումը եւ վիշտը կը յայտնենք այս աննախընթաց ոտնձգու – թեան եւ պատմականօրէն ստեղծած կա – ռոյներու եւ իրաւասութեանց սահման – ներու խախտման համար : Ցանուն Հա – յաստանեայց Եկեղեցւոյ Մայր Աթոռ Ս· Էջմիածնի եւ հայ հաւատացեալ ժողո – վուրդի, այսու վճռապէս կը հրաւիրենք Ձեզ յետս կոչել Ձեր այդ որոչումը, ի սէր Աստծոյ եւ Ազգի :

Հետեւողական մեր խաղաղասիրական եւ միասնութեան ոգիին եւ վերջ տալու համար ներքին անխմաստ հերձումներուն եւ աղդակործան պառակտումներուն, միաժամանակ վերստին կ'առաջարկենք Ձեզ անյապաղ կերպով բանակցութիւններ սկսիլ որեւէ տեղ, վերականդնելու համար հոգեւոր միութիւնը եւ խաղաղութիւնը, մեր նախնեաց լոյս հաւատքով եւ դարե – րու հերոսական մաքառումներով ստեղ – ծուած ու պահպանուած մեր Սուրբ եկե – ղեցւոյ :

Կը սիրենք յուսալ որ Ձեր դրական պա – տասխանը պիտի ստանանք յառաջիկայ տասնեւհինդ օրերու ընթացքին

ՎԱԶԳԷՆ Ա·
Կաթողիկոս Ամենայն Հայոց

Վերոյիչեալ հեռագրին տրուեցաւ հե – տեւեալ պատասխանը·

« Ն· Ս· Օ· Տ· Տ· Վազգէն Ա· Կաթո – ղիկոս Ամենայն Հայոց, Էջմիածին, Երե – ւան

Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ուղղուած Ձեր Սրբութեան 22 Հոկտեմբերի հեռա – գիրը ստացուած է : Կը յայտնենք թէ Կի – լիկիոյ Կաթողիկոսութեան Եպիսկոպոսա – կան Դասուն մէջ Զաւէն կամ Զարեհ ա – նունով Եպիսկոպոս գոյութիւն չունի : Կիլիկեան Աթոռը եղած է եւ կը մնայ նախանձախնդիր՝ Հայ Եկեղեցւոյ եւ ժո – ղովուրդին միութեան եւ համերաչխու – թեան :

Խոնարհ աղօթակից
Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դրան
Եպիսկոպոս Արտակ Եպիսկոպոս

ԴԻՒԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ
2 Նոյեմբեր 1957, Անթիլիաս

ԲԱՁԳԻԱՌՆԵՑԻ ՄԱՐՏԻՐՈՍ

Ցաւով կ'իմանանք թէ Թեհրանի մէջ իր մահկանացուն կնքած է Բաչկիառնեցի Մարտիրոսը :

Ողբացեալը ծանօթ է իրրեւ յեղափո – խական եւ կարեւոր դէր կատարած է մեր ազատագրական չարժման պայքարին մէջ (1918) եւ 1921ի Փետրուարեան ապըս – տամբութեան մէջ :

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

Գիտութիւնը հանուրաբար կը մեծցնէ մեզ, թէ՛ իբրեւ ազգ, թէ՛ իբրեւ անհատ: Բայց հայագիտութիւնը միայն կրնայ ապրեցնել մեզ, իբրեւ Հայ:

Եթէ ճիշդ է մեր այս հաստատումը, — եւ կը կարծենք, թէ ճիշդ է, — ապա ուրեմն պարզ է մեր եզրակացութիւնը. մեծնալու համար մենք գիտուններու պէտք ունինք, իսկ ապրելու համար պէտք ունինք հայագէտներու:

Կրնայինք այստեղ վերջացնել մեր խօսքը, առանց կողմնակի, թերեւս նաեւ անհարկի խորհրդածութիւններու: Սակայն, գիտակից՝ այն իրողութեան, թէ ճշմարտութիւններն ալ, նոյնիսկ բացարձակ ճշմարտութիւնները բացատրութեան կը կարօտին յաճախ՝ լաւապէս ըմբռնելու եւ ըմբռնելի դարձնելու համար զանոնք, աւելորդ չենք համարիր հանրային կարծիքի բարեհաճ ուշադրութիւնը հրաւիրել մէկ երկու կարեւոր կէտերու վրայ:

Առաջին. — Լեզուի եւ ոգիի մեր աւանդութիւնները պահելու համար, — չենք ըսեր՝ զարգացնելու, այլ լոկ պահելու համար, — ամէնէն առաջ մեզի պէտք են այդ աւանդութիւններու ծանօթ ու հաղորդ անձինք: Մեր մասին խօսելով՝ մենք այս «անձինք»ը կը կոչենք ՀԱՅԱԳԷՏՆԵՐ:

Գիտնականը, մինչեւ իսկ համաշխարհային չափանիշով գիտնականը, առաւել մըն է ինք իրեն, իր ժողովուրդին եւ համայն մարդկութեան համար: Իբրեւ օրինակ առնենք, առ այժմ, Այնշթայնը միայն: Այս մեծ գիտնականը իր ազգին պատկանելէ առաջ կը պատկանի մարդկութեան: Զաւակ մը ան իր ցեղէն ժառանգեց իր մեծ հանճարը, բայց իր ցեղին չվերադարձուց զայն, այլ վերադարձուց հանուր մարդկութեան:

Օրինակ մը առնենք նաեւ մեր անցեալէն ու պատմութենէն:

Մեծն Տիգրան, իբրեւ աշխարհակալ միապետ, մեծցուց մեր ժողովուրդը, ինչպէս հայրենիքն ալ: Բայց Սուրբ Մեսրոպը, Սուրբ Սահակը եւ միւս Սուրբե՛րը միայն կրցան ապրեցնել մեզ:

Նափոլէոն կ'ըսէր. — Կը նախընտրեմ ունենալ նապաստակներէ բաղկացած բանակ մը, որուն առաջնորդը առիւծ մըն է, քան առիւծներէ կազմուած բանակ մը, որուն ղեկավարը նապաստակ մըն է:

Մեր ժողովուրդը նապաստակներէ բաղկացած «բանակ» մը չէր անշուշտ, բայց մենք յաղթեցինք բոլոր ճակատներուն վրայ եւ շահեցանք գերագոյն, վճռական ճակատամարտը, որովհետեւ մեր առաջնորդները «առիւծ» էին եւ ոչ «նապաստակ»:

Չենք ըսեր՝ քաղաքական, այլ կ'ըսենք՝ մշակոյթի ռազմաճակատին վրայ մենք պէտք ունինք, ամէնէն շատ եւ ամէնէն առաջ պէտք ունինք ՀԱՅԱԳԷՏՆԵՐՈՒ:

«Կարեւորը լեզուն չէ, ոգին է» բառերը վտանգին տակն են վրայ տալու թէ՛ լեզուն եւ թէ ոգին:

Մեր խօսքը աւելի համոզիչ եւ աւելի հասկնալի դարձնելու համար, պահ մը ենթադրենք, թէ մեր վարժարաններուն եւ ճեմարաններուն մէջ մեր զաւակները դաստիարակելու, հա՛յօրէն դաստիարակելու կոչուած անձինքը աշխարհի մեծագոյն գիտնականներն են, աշխարհի մեծագոյն արուեստագէտներն են:

Վստահօրէն կրնանք ըսել, թէ բոլոր այդ կրթարանները կրնան մեծ գիտնականներ եւ մեծ արուեստագէտներ պատրաստել, բայց չեն կրնար Հայեր ու հայագէտներ պատրաստել մանաւանդ:

Իսկ ի՞նչ է մեր ուզածը, գիտուննե՞ր. ո՛չ. արուեստագէ՞տներ. ո՛չ, այլ Հայեր, բայց մանաւանդ հայագէտներ:

Երկրորդ. — Հայ դպրոցը, Հայ. Եկեղեցին, հայ մշակոյթը հարկատու են հայ լեզուին: Հայ դպրոցը հայ լեզուով միայն կանգուն է, այլապէս կը դադրի հայ դպրոց ըլլալէ՝ դառնալու համար պարզ դպրոց: Հայ. Եկեղեցին նոյնպէս կանգուն է շնորհիւ հայ լեզուին: Աստուծոյ հետ մենք կրնանք ուրիշ լեզուով ալ խօսիլ. բայց մեր Աստծուն հետ կը խօսինք միայն մեր լեզուով: Հակառակ պարագային՝ Հայ. Եկեղեցին կը դադրի Հայաստանեայց ըլլալէ եւ կը դառնայ սոսկ եկեղեցի:

Նոյնն է պարագան նաեւ հայ գրականութեան եւ առհասարակ հայ մշակոյթին: Օտար լեզուով հայ գրականութիւն ո՛չ կը ստեղծուի, ո՛չ կը պահուի: Հայ լեզուով գրուածը միայն կը պատկանի հայ գրականութեան եւ կը մտնէ մեր ցեղային գանձարանին մէջ:

Հայ գիրքը, հայ թերթը, հայ ակումբը, հայ մարզարանը, հայկ. միութիւնները հոգեկան խարիսխներ են մեզի համար մանաւանդ Գաղթաշխարհի մէջ, ուր կը պակսի գլխաւոր ու հիմնական խարիսխը՝ հողը:

Օտար լեզուով գիրք ու թերթ, օտար ակումբներ, մարզարաններ եւ միութիւններ շա՜տ, աւելի՛ ճոխ, աւելի՛ հարուստ, աւելի՛ գերազանց, քան մերինները: Բոլորը միասին, իրարու վրայ գումարուած եւ իրարմով բազմապատկուած, մէկ հատիկ հայ գիրք չեն արժեր հայկական չափանիշով:

Եթէ մենք այս հարցերուն մօտենանք եւ զանոնք քննենք չէզոք գիտակնոցով, անտեսելու աստիճան հայկականութեան գիծը գիրքերուն ու թերթերուն, ակումբներուն ու մարզարաններուն մէջ, այն ատեն կամայ կամ ակամայ պէտք է ընդունինք, թէ հայ անունով ժողովուրդի մը եւ հայ անունով հայրենիքի մը գոյութիւնը... գոյութեան իմաստ չունի:

Մենք դեռ հեռու ենք այն դարէն, ուր «մէկ հօտ, մէկ հովիւ»ի վարդապետութիւնը պիտի սկսի կիրարկուիլ եւ ուր այլեւս ազգեր պիտի չըլլան, այլ միայն մարդեր պիտի ըլլան:

Երրորդ. — Այս ճշմարտութիւնները չընդունիլ, կը նշանակէ ժխտել ազգութեան գաղափարը: Ապազգային բոլշեւիկներն իսկ ամբողջէն կառչած են ազգայնականութեան հիմնատարրին եւ խստօրէն ազգայնական են իբրեւ ռուս, խստօրէն ապազգային ըլլալով հանդերձ իբրեւ համայնավար:

Փոքր ազգերը երկու անգամ, երեք անգամ աւելի ազգայնական պէտք է ըլլան, քան մեծերը, որոնք իրենց իրաւունքները պաշտպանելու աւելի լայն միջոցներ եւ աւելի ընդարձակ հնարաւորութիւններ ունին:

Մեր դարուն նշանաբանն է ԱԶԳԱՅՆԱՆԱԼ եւ ԱԶԳԱՅՆԱՑՆԵԼ:

Մեզի համար մանաւանդ այս նշանաբանը փրկութեան լաստ մըն է:

Արդ՝ ի՞նչ պէտք է ընենք այս լաստը ամուր խարիսխի մը վերածելու համար:

Չենք կրնար մեր այս հարցումին պատասխանել պարզ ձեւով: Ատոր համար հարկ պիտի ըլլար հատոր մը գրել, փոխանակ խմբագրական մը եւ կամ կարճ յօդուած մը գրելու:

Պիտի ըսենք միայն. — Հայագէտներ պատրաստենք:

Ո՞վ պիտի պատրաստէ մեր ուզած, մեր փնտռած, մոմի լոյսով փնտռած այս հայագէտները:

Մեր նախակրթարաննե՞րը. ո՛չ:

Մեր ճեմարաննե՞րը. ո՛չ: —

Մեր միութիւննե՞րը. բնա՛ւ ոչ:

Կրթական ծրագիրները հիմա այնքան բազմաճիւղ են ու բազմայարկ, որ հայագիտութիւնը ուզած չուզած իր տեղը զիջած է օտար լեզուներուն, օտար գիտութեանց, օտար դպրութեանց եւ օտար դաստիարակութեան:

«Համազգային»ի Փալանճեան ճեմարանը մէկ – երկու տարի փորձեց հայագիտական դասընթացք մը հաստատել ճեմարանին կից, բայց ոչ ամբողջովին ճեմարանին կապուած:

Եթէ չենք սխալիր՝ այս փորձը ձախողեցաւ: Եւ, պատերազմիկներու չգոյութեան հետեւանքով, պատերազմը վերջ գտաւ...

Կը կարծենք, թէ գոյութիւն ունեցող վարժարանները, իրենց ընդունած ծրագիրներուն իսկ բերումով, չեն կրնար հայագիտական դասընթացք մը հաստատել եւ պահել:

Ուրեմն — հայագիտական դասընթացքը — առանձին գործ է, բոլորովին անկախ՝ գոյութիւն ունեցող վարժարաններու ծրագիրէն եւ նպատակէն:

Հարկ է ուրեմն մտածել զուտ հայագիտական դասընթացքի մը մասին մեր գաղութներէն մէկուն կամ միւսին մէջ, նախընտրաբար Պէյրութի հայահոծ գաղութին մէջ:

Այս դասընթացքը պիտի ունենայ իր առանձին կազմակերպութիւնը, ելեւմտացոյցը, ուսուցչական կազմը եւ խնամակալ մարմինը:

Առեւտրական ձեռնարկ մը պիտի չըլլայ դասընթացքը, շահ ու դէնի բաժիններով:

Մեր ընելիքը պիտի ըլլայ տարին գոնէ երկու – երեք հայագէտներ պատրաստել: Եւ այս երկու – երեք հոգին յանձն պիտի առնեն, իրենց ամբողջ կեանքի ընթացքին, նուիրուիլ հայ մշակոյթին եւ հանրային գործի:

խմբագրական՝ ՅՈՒՍԱԲԵՐԻ

ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ԱՐԲԱՆԵԱԿԸ

(Բ. եւ վերջին մաս)

Այժմ տեսնենք ամերիկեան, գերմանական թէ ռուսական ծրագիրները արբանեակներու արձակման մասին: Տեսական գետնի վրայ բոլոր ծրագիրներուն սկզբունքը բազմայարկ հրթիռներու դրութիւնն է: Ճշմարտութիւն է որ երկու հսկաներն ալ օգտուած են գերման թէ այլ ազգի գիտուններու եւ մասնագէտներու գործակցութենէն:

Միացեալ Նահանգները ունէին քանի մը ծրագիրներ: Սինկըրի ծրագիրը կը նախատեսէր արբանեակը արձակել երկրէն չորս հարիւր քիլոմեթր հեռաւորութեան մը վրայ որ դերծ պիտի ըլլար մթնոլորտի թանձր խաւերուն ճնշումին ու յարուցած խոչընդոտներէն: Իսկ Ֆոն Պրաուն, Վ2ի հնարիչը, կ'առաջարկէ արբանեակին ծիրը գետեղել միայն հարիւր քիլոմեթրի վրայ: Այս արբանեակին կեանքը շատ կարճ պիտի ըլլար մթնոլորտին վերին խաւերուն շատ մօտ ըլլալով: Էնկէլ կը ծրագրէր 560 եւ 1670 քիլոմեթրի բարձրութեանց վրայ: Հազար քիլոմեթրէն վեր՝ արբանեակներու կեանքը կը նախատեսուէր քանի մը ամիսներու տեւողութեամբ: Ամերիկացիք ունէին նաեւ 36 հազար քիլոմեթրի հեռաւորութեան վրայ արբանեակի արձակման ծրագիր մը: Այդ արբանեակը երկրէն դիտելով անշարժ պիտի երեւէր, երկրիս շուրջ իր կատարած շրջանին տեւողութիւնը համապատասխանելով երկրիս ինքն իր վրայ կատարած թաւալման տեւողութեան (24 ժամ): Պայմանաւ որ արբանեակին ծիրը գտնուի հասարակածին վրայ ու իր շարժումը կատարուի երկրագունդի թաւալման ուղղութեամբ:

Ամերիկացիք կը նախատեսեն նաեւ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Թեմական Առաջնորդին եւ Ազգային Վարչութեան հանդէպ Կաթողիկոսական Տեղապահին ցոյց տուած այս վիրաւորական եւ անիրաւ վերաբերումին համար խորապէս վրդովուած եւ ժողովուրդին ու պատմութեան առջեւ պատասխանատու չմնալու մտահոգութեամբ, Պատկ. Գաւառական Ժողովիդ կը ներկայացնենք մեր հաւաքական հրաժարականը, խնդրելով որ Պատկ. Գաւառականդ կացութեան համապատասխան կարգի միջոցառումներու դիմէ բարձր պահելու համար Ազգային Իշխանութեան արժանապատուութիւնն ու հեղինակութիւնը, ինչպէս նաեւ փութացնելու կաթողիկոսական ընտրութիւնը, մեր օրէնքներու սահմանին մէջ:

ՀՐԱԺԱՐԵԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Ռուբէն Մավիսագալեան՝ ատենապետ
Ներսէս Ներսէսեան՝ Բ. ատենապետ
Տքթ. Ա. Պաղտասարեան՝ Ատենադպիր
Յակոբ Թերճանեան, Օննիկ Չէրքէզեան, Պօղոս Նաճարեան՝ խորհրդականներ:

Հրաժարեալ Առաջնորդ
ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

12 Հոկտեմբեր, 1955

Կեանքի պայմանները փոխուած են : Հիւլէական դարուն մէջ կ'ապրինք : Հիմակուան երիտասարդները քիչ աչխատանքով չատ ու չուտ դրամ չահելու հետամուտ են : Ուսուցչութեան եւ հանրային գործունէութեան ասպարէզները չեն հետաքրքրեր զիրենք :

Շատ քիչ են «կոչեցեալ»ները :

Ուսուցչական ասպարէզի , թերթի խմբագրութեան կամ հանրային գործի նուիրուելու զոհողութիւնը յանձն առնողները հետզհետէ պակսեցան 35 տարիէ ի վեր եւ դեռ պիտի պակսին այսուհետեւ :

Եթէ Մերձաւոր Արեւելքի մեր հայրենակիցները կը դանդաղին ուսուցչի եւ հանրային գործիչի պակասէն, հապա՞ մենք՝ արեւմուտքի համայնակուլ երկիրներուն մէջ ապրողներս ի՞նչ պէտք է ընենք, կամ ի՞նչ պէտք է չընենք :

Մեր յաւը աւելի մեծ է :

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

տածզեց իր օժանդակութիւնը :

Վարչապետը չիշեց, թէ այն տուն Թունուզ դիմաց բազմաթիւ երկիրներու , որոնց մէջ պելժիական եւ իտալական կառավարութիւնները մեծ ուժգնութեամբ մը զէնք տալ , այս ձեւով ոչ միայն իրենց բարեկամութիւնը ցոյց տուին՝ Ֆրանսայի հանդէպ , այլ, իրենց ոզջախոհութիւնը այս հարցին մէջ :

Այդ միջոցին էր, որ ծայր կուտար Ֆրանսայի կառավարական տագնապը , աւելի քան հինգ չաբաթ տեւողութեամբ, Ֆրանսան դնելով որեւէ խորհրդակցութեան անկարելիութեան առջեւ :

Ներկայ կառավարութեան կազմութենէն անմիջապէս վերջ, ըսաւ կայեաս, լսեցինք թէ անգլիական ու ամերիկեան կառավարութիւնները համաձայնած էին զէնք տալ Թունուզի՝ եթէ մինչեւ Նոյեմբեր 12 Ֆրանսա չկատարէր այդ դործը :

Այս պայմաններուն մէջ՝ Ֆրանսական կառավարութիւնը մերժեց միանալ Անգլիոյ եւ Ամերիկայի, միասնաբար զէնք ու ռազմանիւթ տալու համար Թունուզի քանի որ Արաշխիքները չկային ապագային համար :

Եզրակացնելէ առաջ, Վարչապետը յայտարարեց, թէ ծանր կացութիւն մը ըստեղծուած է անգլիամերիկեան որոչումին հետեւանքով : Ատլանտեան Ուխտի ճրագրոզուածը կը նախատեսէ թէ Ալժերիա Ֆրանսական հողամաս մըն է եւ որեւէ սպառնալիք՝ անոր դէմ, ինքնաբերաբար դաշնակից երկիրները պիտի միացնէր Ֆրանսայի :

Ծանօթ է, որ Դեկտեմբերի կէսուն Ատլանտեան Ուխտի ժողովը պիտի ըլլայ Փարիզի մէջ , Նախագահ Այզընհաուըրի մասնակցութեամբ : Մինչեւ այդ թուականը եթէ յատակ լուծում մը չգտնուի՝ դժուարութիւններ կրնան ծագիլ : Ֆրանսա մինչեւ իսկ պիտի հետամայ ժողովէն , նկատելով որ դաշնակիցներու մէջեւ կրնքած համաձայնութիւնները չեն յարդուիր :

Ուրբաթ օր, Ատլանտեան Ուխտի անդամ երկիրներու պատուիրակներու ժողովին մէջ, Ֆրանսացիները բողոքելով Թունուզի յանձնած զէնքերուն դէմ՝ Շնեթէրի դլխաւորութեամբ հեռացան ժողովէն :

Ատլանտեան Ուխտի ընդհանուր քարտուղար Սփաք աչխատեցաւ որ Ֆրանսական պատուիրակութիւնը վերադառնայ ժողով, սակայն ի դուր : Թէեւ Ֆրանսացիներու մեկնումը անակնկալ մը չէր : Ժողովը չարունակուեցաւ եւ Սփաք ցաւ յայտնեց Ֆրանսական պատուիրակութեան բռնած ցուցական դիրքին համար , մինչ ծերակուտական ձէքսըն կը յայտնէր, թէ մեկնիլ՝ ամէն ինչ կարզադրել չի նշանակեր :

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՉԻՆՔԵՐ՝ ԹՈՒՆՈՒԶԻ

Թունուզի Նախագահը՝ Պուրկիպա չաբաթական մամուլի իր ասուլիսը մասնաւորապէս յատկացուց զէնքերու հարցին : Ամերիկա խուլ պիտի չմնայ մէկ անարդարութեանց դէմ, ըսաւ Պուրկիպա : Այնուհետեւ Թունուզի Նախագահը պատմականը ըրաւ Ֆրանսայի հետ տեղծուած անհասկացողութեան, չեչտելով թէ՝ փարիզ զէնք տալու համար անըն – դունելի պայմաններ կը դնէր : Գալով այն որոչումին, թէ Ֆրանսա պիտի հեռանար

(Շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

—o—

Հազար ու մէկ վերբ ես տեսել ,
Էլի՛ կը տեսնես ,
Հազար խալխի ձեռբ ես տեսել ,
Էլի՛ կը տեսնես :
Աչնան բաղած արտի նման՝ հազա՛ր զոհերի
Ջհաւաբած բերբ ես տեսել ,
Էլի՛ կը տեսնես :
Գլխուդ չոր բամուն տուած պանդուխտի նման
Հազար տարուայ հերկ ես տեսել ,
Էլի՛ կը տեսնես :
Նարեկացի, Շնորհալի, Նաղաշ Յովնա – թան ,
Ինչբան հանճար, խելբ ես տեսել ,
Էլի՛ կը տեսնես :
Քո Զարեհցի լեզու տուող ,
Երկիր Հայաստան ,
Հազար ու մէկ ե՛րգ ես տեսել ,
Էլի՛ կը տեսնես :

Ե. ՉԱՐԵՆՑ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՅՈՐԴԱՆԱՆԻ մէջ կացութիւնը պղտոր է միչտ. իսրայէլեան պրէսիրներու համաձայն՝ մահափորձ մը կատարուած է ըստ պայակոյտի հրամանատարին դէմ, ձախողութեան մատնուելով :

ԴԱՄԱՍԿՈՍի համաձայն, նոր միջադէպեր պատահած են Սուրիոյ եւ Իսրայէլի սահմանագլուխին վրայ : Հրեաները յարձակում գործած են ու եա մղած : Ոչ մէկ զոհ կայ : Սուրիա բողոքագիր մը ներկայացուց զինադադարի յանձնախումբին :

ՍՈՒԷՋի ջրանցքէն առաջին անդամ լրլալով Ֆրանսական երեք ռազմանաւեր անցան՝ Թունուզ երթալու համար :

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ մէջ ձերբակալուած խորհրդային լրտես Ապէլ 30 տարուան բանտարկութեան պատասպար – տուեցաւ :

Ի. ՄԻՈՒԹԵԱՆ մէջ տակաւին կը գտնուի ութ հազար քաղաքական բանտարկեալ, յայտարարեց ազատ արձակուած Գերմանացի մը :

ՊԷՅՐՈՒԹի մէջ երեսփոխանի մը տան մօտերը ռումբ մը պայթած է : Ձերբակալուած է մօտ վաթսուն հոգի, մեծ թիւով Սուրիացիներ իրենց երկիրը դրկուած են :

ԻՏԱԼԻՈՅ Հանրապետութեան Նախագահ Կրոնքի Հոմ վերադառնալով, յայտարարեց թէ Անգարայի մէջ իր ունեցած խորհրդակցութիւնները չատ կարեւոր էին Եւրոպայի եւ Ատլանտեան Ուխտի միասնականութեան համար :

ՀՈՒՆԳԱՐԻՈՅ մէջ վերահաստատուած են բանուորական դատարանները, յայտարարեց Փեչտայի ճայնասփիւռը :

ՄՈՍԿՈՒԱՅԻ մէջ ներկայիս տեղի կ'ունենայ զանազան երկիրներու համայնավար կուսակցութեան պարագլուխներու համագումար մը, Խրուչչեւի մասնակցութեամբ :

ՄՈՍԿՈՒԱՅԻ ճայնասփիւռը կը յայտնէ, թէ Լայքան սատկած է եւ տակաւին կարելի չէ եղած Սպուտնիկը երկիր վերադարձնել, ինչ որ կը յուսային :

ԼՈՆՏՈՆԻՆ կը հաղորդուի թէ մառեչալ Մոնկոմըրի պիտի հրաժարի Ատլանտեան Ուխտին հրամանատարութենէն, իր 70րդ տարեդարձին առիթով :

ԱՆԳԼԻԱԿԱՆ օդանաւ մը, որ Լիզպոնա կ'երթար, չաթսչախուած է Ուայթ կղզիին վրայ : 8 օդաչուներուն հետ, կային չորս ճամբորդներ, զոհերուն թիւը ծանօթ չէ :

ԱՅՆ – ՊԵՍԵՄի մէջ (Ալժերիա) սահմանադիծի մը ձեռնարկում մը նետած է, որուն հետեւանքով եօթը հոգի մեռած եւ 13 ուրիչներ վիրաւորած են, բոլորն ալ՝ մահմետական :

L'HAMEÇON

Քանի մը օրէ ի վեր Փրանսայի մեր պաշտօնակիցը՝ «Քոմպա» սկսած է հրատարակել իբրեւ թերթօն Վահէ Քաչայի վերջին վէպը՝ «Կարթը» (1)։

Վահէ Քաչան ծանօթ է մեր ընթերցողներուն «կիրակնօրեայ կճառներ» եւ «Ակն ընդ Ական» վէպերով, որոնց առթիւ խօսած ենք նաեւ իր անվիճելի տաղանդին մասին։ Առլէն Փափազեանն ալ վերջերս երկու յօդուածով, մէկը՝ նուիրուած Ակն ընդ Ականի ժապաւէնին, միւսը տեսակցութիւն մը հեղինակին հետ, արդէն իսկ մտերմութիւն մը ստեղծեց Քաչայի եւ «Յառաջ»ի ընթերցողներուն միջեւ։

Մեր բարեկամին վերջին վէպն ալ հայերէնով պիտի հրատարակուի մօտերս «Անդաստան»ի մատենաշարին մէջ, թարգմանութեամբ Առլէն Փափազեանի։

Զինուորականներու խղճի պայքարն է, զոր վերլուծած է Քաչան այս անգամ «Լ'Ամբսոն» վէպին մէջ։ Նաւու մը մէջ սպաներ գերի մը ունին, զոր պէտք է սպաննեն մինչեւ նաւահանգիստ հասնիլը։

Երեք ընկերներ են՝ Պերլեան, Ֆելսքի եւ Վոսպէ։ Առանցմէ մէկը պէտք է ունենայ այդ քաջութիւնը, բայց ոչ ոք կրնայ իր խղճին առջեւ ունենալ այդ վատութիւնը։ Ինչո՞ւ պիտի սպաննեն, (բսենք նաեւ որ ընթերցողն ալ այս հարցումը կուտայ...)։ Կ'ապրին միասին, մտերմացած են, թէեւ նոյն լեզուն չեն խօսիր, բայց ան ալ մարդ է, թերեւս ամուսնացած, թերեւս հայր։

Այս հոգեկան տառապանքն է, զոր կը նկարագրէ հեղինակը խիստ եւ կարճ նախադասութիւններով, կտրուկ ոճով մը, առանց աւելորդաբանութիւններու, առանց փրազէոլոժիի։ Կրնանք անվարան ըսել թէ ոճը հարազատ թարգմանն է պատմութեան։ Նման պատմութիւն մը միայն նման լեզուով մը կրնար գրուիլ։ Լեզու մը որ ունի օրագիրի մը պարզութիւնը եւ պարզութիւնը կարեւորագոյն առաքինութիւններէն է եթէ ոչ կարեւորագոյնը։

Թէ ի՞նչ լուծման պիտի յանգին սպաները, ձգենք ընթերցողներուն հետաքրքրութեան, քանի որ առիթը պիտի տրուի իրենց գիրքը կարդալու հայերէն։ Խօսինք միայն հեղինակին տաղանդին մասին․։

Քաչա գրագէտ է։ Այս երրորդ վէպով կը հաստատէ թէ վիպագրութիւնը պահանջ մըն է իրեն համար, ոչ թէ արհեստ մը։ Եթէ ըսենք որ այս երրորդ վէպին մէջ ալ մեզ խրաչեցնողը նիւթին անրնականութիւնն է, եթէ ոչ անհաւանականութիւնը, առով սակայն չենք ուզեր երբեք ժխտել հեղինակին ստեղծագործական արժէքը։

Շահեկանը արդէն նիւթը չէ այնքան, գրականութեան մէջ, որքան այդ նիւթին առւն տուած խորհրդածութիւնները կամ հոգեկան եւ մարդկային խնդիրները։ Այս է կարեւորը եւ Քաչայի այս վէպին մէջ ալ կարեւորը՝ Մարդն է իր և ընկերութեան ստեղծած խնդիրներուն առջեւ։

Քաչայի բոլոր տիպարները հետաքրքրական են, յաճախ ալ համակրելի։ Գրբագէտը մեզի կը դնէ այս անգամ ալ հարցերու առջեւ, որոնք միշտ կը տանջեն մարդկային խիղճը եւ Քաչայի եղբակացութիւններն ալ ցոյց կուտան թէ ինք իրապէս հեղինակ մըն է, քաջածանօթ մարդուն հոգիին եւ խղճին, եւ պատրանքով չապրիր։ Այսօրուան կեանքը արդէն թոյլ չիտար որ կաթիլ մը եբաղ գնենք մեր օրուան հացին մէջ, ատոր համար է որ Քաչայի հերոսները ինչպէս Քաչան ինք ալ շատ մօտ են մեզի։

ԱՐՓԻԿ ՄԻՍԱՔԵԱՆ

1) Ed. Plon,

ԵՐԳԻՉՆ ՈՒ ԵՐԳԸ

Լայնափէշ սքեմով մարդը թեթեւաքայլ անցնում է հինաւուրց եկեղեցու բակից ու մտնում հանդիպակաց դպրոցը։ Սքեմի թանձր սեւութեան մէջ աչքի է ընկնում օսլայած, ձիւնաթոյր օձիքը, որ գրկում է նրա մոմագոյն պարանոցը։ Խոշոր, խաղաղ աչքեր ունի նա, թաւ յօնքեր, լայն ճակատ, եւ պայծառ դէմքը վերջաւորւում է կարճ մօրուքով։

— Կոմիտա՛սը, Կոմիտա՛սը եկա՛ւ...

Ցուցիչ մի շշունջ է անցնում լսարաններով մէկ։

Արեւով ողողուած լսարանին շէնքը նոր երանգներով, նոր բովանդակութեամբ է լցւում։ Կախարդական մի ոյժ է մտել նրա պատերից ներս, նուաճել պատանի հոգիները, յոյզերի ու երազանքների մի ամբողջ աշխարհ բացել նրանց առաջ..

Իսկ ի՞նչ է ուշանում պարապմունքների սկիզբը աւետող զանգը։ Ցատկապէս այսօր, ինչո՞ւ է ուշանում...

Անհամբեր են աշակերտները։

Դանդաղ, չա՜տ դանդաղ են անցնում րոպէները։

Վերջապէս զօղանջում է զանգը։

Միջանցքից ոտնաձայն է լսւում, ծանօթ, սրտերը յուզող ոտնաձայն, որ հետզհետէ մօտենում, ուժեղանում է։ Պատանեկան խռհուն հայեացքները ձըգւում են մուտքի դրանը եւ մի պահ մեխւում այնտեղ։

Դասարանի սեմին՝ աշխոյժ ու հանդիսաւոր երեւում է երգի դասատուն՝ Կոմիտասը։ Խոր լռութեան մէջ թրթռում է նրա բարի, սիրալիր ողջոյնը, ժպտում են նրա խոշոր, երազուն աչքերը, Հայոց երգի թովչանքով է լցւում դասարանը։ Կոմիտասը լուռ կանգնած՝ զօրովանքով լի հայեացքն ուղղում է դասարանին։

Լուսամուտի ապակիները թրթռելով սլանում է ծիծեռնակը՝ լսարանից ներս թողնելով ազատ երգի մի պատառիկ։

Երգեցողութեան ժամը նուիրական ժամ է աշակերտների համար, երբ կարօտի, սիրոյ, աշխատանքի, պանդխտութեան ու հայրենաբաղձութեան զգացմունքները գարնանային հեղեղի նման յորդում, ալեկոծում են պատանի հոգիները...

Շաբաթը մի անգամ երգի ուսուցիչը յայտնւում է ծովափնեայ այս քաղաքի ուսումնարանում՝ երգի հետ բերելով հայրենի բնաշխարհի քաղցր, արբեցնող բուրմունքը...

Ուսուցիչն ահա անթեք կանգնած, մի պահ զննում, ասես կլանում է իրեն բեւեռուած քառասուն զոյգ աչքերը՝ պոլսեցի, սասունցի, մշեցի, ակնցի պատանիների քառասուն զոյգ սեւաթոյր, շողշողուն աչքերը, եւ ոգեւորուած թափահարում ձեռքին բռնած կամերտոնը, արագ որսում ձայնը։ Ու թախծոտ կարկաչում է Հայոց երգը։

— Կռո՛ւնկ ջան, կռո՛ւնկ ջան, գարուն է․

Ա՜խ, սիրտս արուն է...

Կերկերում է ուսուցչի թախծալի ձայնը։

Երգը գրաւում, կախարդում է աշակերտներին, Հայոց մեծ վշտով պարուրւում քառասուն զոյգ սեւ աչեր։

Քիչ յետոյ ամբողջ դասարանն է երգում սրտայոյզ երգը։

Լսում է երգիչը, եւ մի պայծառութիւն է թեւածում նրա լայն, անխռով ճակատին ու բարի դէմքին...

Երգիչը չի թողնում, որ երկար թախծեն իր սիրելի սաները։ Նորից զնգում է կամերտոնը, եւ այս անգամ բերկրալի կարկաչում է գեղջկական երգը․

Արեւ բռւվրռով ելաւ,
Իմ չինարի եարը,
Մեր բանը կռռռով ելաւ,
Դարտիմաճ եարը...

Մէկը միւսին են յաջորդում ժողովրդի սրտից բխած երգերը՝ օտար հողում պատանիների առաջ պարզելով հայրենի լեռնաշխարհի համայնապատկերները՝ աբեւափառ անդաստաններ, անդնդախոր ձորեր, մրգառատ այգիներ, դմբուխտավառ լեռնահովիտներ, ձիւնափառ գագաթներ, ալ ու ալվան հագած, կարմիր լալա դառած գեղջուկ աղջիկներ, որոնք եարի ճամբայ են պահում կարօտով, գութանը հաց տանող հարսներ, որոնք հաւքերին խնդրում են հով անել արտում քնած եարին...

Կարկաչում է հայրենի երգը եւ պատանիները հոգու աչքերով տեսնում են չինական մարդկանց, որոնք հերկում են հողը, արտը ցորեն ցանում, դարտը հեռը թաղում, որոնք սերմանում են կեանքի սերմերը...

Նոր տրամադրութիւններ, պայծառ յոյզեր են համակում աշակերտներին։ Եւ նրանք ցանկանում են, որ վերջ չունենան գեղջկական այս խաղաղացող, կենսալի երգերը...

Բայց յանկարծ հնչում է զանգը։

Ինչո՞ւ է այդքան շուտ հնչում։

Ե՞րբ անցաւ դասաժամը։

Երգի ուսուցիչն անբաւականութիւն, դժգոհութիւն է կարդում աշակերտների տխրած դէմքերին, մեղմ ժպտում, կկոցում խոշոր, բարութեամբ եւ խանդաղատանքով լի աչքերը, ապա նրանց հետ ուրախ կատակներ անելով՝ թողնում, հեռանում է դասարանից՝ իր հետ տանելով նրանց նուիրական սէրը։

Հեռու հայրենիքից՝ ինչպիսի՜ լաւ սերունդ է աճում հայրենիքի ու մարդկութեան համար, եւ Հայոց երգը նպաստում է դրան...

Երջանի՜կ է մեր երգիչը։

×

Հազար իմը հարիւր տասնըհինգ...
Ապրիլ...
Տխուր զօղանջում է եկեղեցու զանգը,

ԾԻՍԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

ՀԵՂԻՆԱԿ՝
ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊ. ՕՐՄԱՆԵԱՆ

Բ.

Ծիսական բառարանը ուսումնական աշխատանք մըն է, որ կը հետաքրքրէ ոչ միայն հայ «հաւատացեալը», նոյնիսկ այն որ կ'ուզէ «առձեռն տեղեկութիւններ» ստանալ, այլեւ հայ մտաւորականը, այն որ կ'ուզէ ճոխացնել իր ծանօթութիւնները մեր եկեղեցիին մասին՝ պատմական ու լեզուական տեսակէտով։

Ատոր համար ալ, կ'արժէր, տպագրութեան յանձնելէ առաջ, վերամշակել՝ սրբագրելով, լրացնելով, թարմացնելով, վերջապէս տալով, ինչպէս կ'ըսեն, նոր տպագրութիւն մը «յաւելեալ եւ ճոխացեալ»։

Արդ, այս երկրորդ տպագրութիւնը, Օրմանեանի ձեռքէն ելած ձեւովը, թերեւս կրնայ արժանանալ «եկեղեցասէր անձերու» հետաքրքրութեան, բայց կը նսեմացնէ Օրմանեանի եկեղեցագիտական համբաւը։

«Առձեռն տեղեկութիւններ» միայն տալը շատ կը յիշեցնէ «այս ժողովուրդին այսքանն ալ շատ է» խօսքը, որ յատուկ է մեր մտաւորականներէն ոմանց, պատրուակ՝ ծածկելու համար իրենց մաքի աղքատութիւնը, աշխատանքի անընդունակութիւնը կամ աթոռ մաշեցնելու անկարողութիւնը։ Եւ յետոյ Օրմանեան չի կրնար ծովի պատկեր տալ... ջուրի կաթիլներ շարելով քով քովի։

Հայերէն լեզուն Օրմանեանի տկար կողմն է,— ամէն մարդ գիտէ։ Իսկ ստուգաբանութեան մէջ՝ թերի սահմանումներու մեղքը պէտք է վերագրել հռետորական այն մշուշին, որ յատուկ է խօսքի առուն առաւելապէս գործածող մարդոց, որոնք կը գլորեն բառերը՝ ստուգաբանութեան յորձանքէն տարուած, ճիշդ ինչպէս կը գլորին խիճերը, ջուրերու աճման ժամանակ, պղտորելով առուն։

Նման գործ մը գլուխ հանելու համար հեղինակէն կը պահանջուի, այսօր, ճշդել եկեղեցական տօներու եւ առարկաներու լատիներէն կամ փրանսերէն համապատասխան անունները, կատարել բառերուն կամ տարազներուն ստուգաբանութիւնը, որոնել տօներուն կամ առարկաներուն պատմական ծագումը, համայնագիտական տեսութեամբ մը՝ ներկայացնել հեթանոսական աւանդութեանց եւ հայկական կամ այլազգական եկեղեցիներու ծիսակատարութեանց տարբերութիւնները, յարաբերութիւնները եւ կապերը։ Այլապէս մեր եկեղեցին միշտ կը մնայ չհասկցուած, ու նշաւակ օտարներու աժան քննադատութեանց ու մեկնաբանութեանց(*)։

(*) Նախորդ յօդուածիս տակ՝ ծանօթութեան մէջէն ինկած էին երկու տողեր, անհասկնալի դարձնելով պարբերութիւնը։ Կը կրկնեմ.— Հիացող մը Օգոստինոսի, Կղեմէս Աղեքսանդրացիի, Որոգինէսի մեծութեանց վրայ, ինծի դժուար չէ այս մատենագիրներուն եւ մտաւորական նոյն հասակով Եկեղեցւոյ այլ Հայերու ժառանգութեանց մէջ ցոյց տալ անհեթեթութիւններ եւ հակասութիւններ, պարի հրաւիրելով զիրենք երկաբնակութեան, եուտիքէականութեան, երրորդութեան, *ուխտ*ի կամ *խոստմ*ան տեսութեանց լպրծուն տախտակներուն վրայ, ծիծաղելով ընդդէմ անոնց՝ որոնք հերձուած կը համարին հայ եկեղեցին։ Հայ եկեղեցիին լաւագոյն պաշտպանողականը... յարձակողականին մէջ է։

Իբրեւ եզրակացութիւն, թերի եւ անգոհացուցիչ գտնելով Օրմանեանի Ծիսական Բառարանը, ահաւասիկ այստեղ քանի մը մասնակի քննադատութիւններ.—

ԲՇԽՈՒՆ.— Դատատակ, եկեղեցական սպասները բռնելու յատուկ, այս պատճառով՝ բռնիչ ալ կոչուած։ Ըստ Օրմանեանի՝ կը ստուգաբանի «բաշխօն»։ Սրբագրել,— բշխուն, ծագումով՝ պարսկերէն, կը նշանակէ սփռոց։ (Այս վերջին բառը, սփռոց, որ երկու անգամ գրուած է սփփռոց, էջ 187 եւ 296, ունի նաեւ սփռիչ գրչական ձեւը,— արդ, սփռիչ բառը, ճիշդ է թէ մաս չի կազմեր Ծիսական Բառարանին, հետաքրքրական է անոնց համար՝ որոնք կը գրադին պատմական բառագիտութեամբ։ Բառին ամենահին գործածութիւնը կը գտնենք Աստուածաշունչ Մատեանին մէջ, Գիրք Ելից, ԻԶ, 17 եւ ԼԶ. 22, ուր աշխարհաբարը կը թարգմանէ ... «ալուցիկ ծայր»։ Սփռիչ, հին առումով, կը նշանակէ փականքի արու ձեւ մը, փրանսերէն բրնոն, իգական ձեւը՝ հայերէն թուրծ, փրանսերէն մոռթէզ)։

ԴԱՂՄԱՏԱԿԱՆ.— Ըստ Օրմանեանի՝ սարկաւագներու յատուկ շապիկ, որ, «ձեռնադրութեան Մաշտոցին մէջ, թարգմանուած է հանդերձ հօլանի սարկաւագի»։ Այստեղ շփոթութիւն մը կայ, զոր պէտք է պարզել,— դաղմատականը լայնաթեւ պատմուճան մըն է, բոլորովին սպիտակ, զոր Հռովմայեցիները փոխ առած էին Դաղմատացիներէն եւ զայն կը գործածէին ոչ միայն կայսրերը, այլ եւ եպիսկոպոսները Գ. դարուն։ Հայերէն ունինք համանիշ մը, թակալակ, բառ մը որ գործածուած է Զահկեցիներու Մաշտոցին մէջ, ծագումով պարսկերէն, ապահովաբար Քոնեցիի խումբին նուէրը Սիւնեաց աշխարհէն։ Ընդհակառակն թեւատ պատմուճանը կը կոչուի կոզոր (ծագումով՝ լատիներէն), զոր ոմանք հոմանիշ կուտան փիլոնին,— այս հագուստը յատուկ էր աբեղաներուն ու սարկաւագներուն։ Պէտք է խոստովանիլ թէ դարէ դար ձեւ փոխած են հագուստները եւ անունը։

ԳՈՐՓՈՒՐԱՅ.— Բառը, ծագումով լատիներէն, թարգմանուած նաեւ «մարմնական» փոխանակ գրելու «մարմնական» (fորփորալ), կը նշանակէ քառակուսի ճերմակ կտաւ մը, որու վրայ կը դրուի սկիհը, ի հարկին նաեւ նշխարը, ըստ լատինական ծէսին։ Օրմանեան գիտել կուտայ թէ հայ եկեղեցին նշխար չի դներ գորփուրային վրայ, այլ միայն մաղզմային վրայ։ Դարձեալ, կտաւը, որու վրայ սկիհ կը դնէ հայ եկեղեցին, կը կոչուի չուչփայ, բառը ծագումով ասորերէն։

Զախջախեան, ինչպէս Օրմանեան, տարբերութիւն կը դնեն այս երկու կտաւներուն միջեւ, որոնք կը դրուին սկիհին տակ։ Ընդհակառակն, Զահկեցիները կը գրեն. «Շուչփայքն, որ են գորփորայքն»։

Այստեղ հետաքրքրականը, բառագիտական նրբութենէն աւելի, աստուածաբանական եւ եկեղեցագիտական այն հանճարե՜ղ տեսութիւնն է, որով մեր երջանիկ եւ իմաստուն նախահայրերը կրնան եղեր, առանց երբեք սխալելու, հասկնալ թէ նշխարը գորփուրայի՞ վրայ կը դրուի թէ չուչփայի, եւ ... կռիւ ընել տասնըկ կրօնական նո՜ւրբ բաներու համար, ի վերջոյ՝ կտաւի մը համար որու անունն է միայն տարբեր։ Պատի՜ւ Օրմանեանի, որ, ասկէ յիսուն տարի առաջ տակաւին, կրնար լուծել աստուածաբանական այսքան խրթնութիւն եւ աւանդել մեզի, պատրաստելու համար մեզ... կաթողիկէներէն։

Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

(Մնացեալը յաջորդով)

ԿՅՑԵՔ

ԳՋ.

ՄԻՀԱՅԼՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

— Ալեքսի՞ս ի՞նչպիսի հասկ է ուտում, ասում էին ընկերները ինձ : Ես չգիտեի , ինչ պատասխանեի : Ես ոչ մի անգամ հասկ չէի կերել : Ինչպե՞ս կարելի է հասկ ուտել , ասում էի ես : Ինձ թվում էր , որ հասկը ինչ-որ ծանր բան է , որ ատամների արանքում կրճտում է , ինչպես քար : Ես չգիտեի , որ հասկը ուտում են հում վիճակում , ինչպես ընկույզ : Ես կարծում էի , որ հասկը պետք է եփել , ինչպես ոսպ կամ լոբի

Ատլանտեան Ուխտէն, Թուրքիա բաւ, թէ ասիկա ցոյց կուտայ որ Ֆրանսա կը փափաքի դեռ հսկողութիւն կատարել Թունուզի վրայ:

Գլխաւոր կէտը՝ Թուրքիայի առումով (?)... Գլխաւոր կէտը՝ Թուրքիայի ասուլիսին մէջ, եգիպտական զէնքերու հարցն է: Եգիպտոս զէնք ուզած էր տալ, բաւ ան, եւ Թունուզի կողմէ անբարեկամական արտայայտութիւն մը պիտի ըլլար մերժել այդ առաջարկը: Նախագահը յայտարարեց, թէ մօտ ատենէն եգիպտական զէնքեր ալ պիտի հասնին Թունուզ: Եզրակացնելով, Պուրկիպա փափաք յայտնեց, որ Ֆրանսա վերջապէս կը հասկնայ թէ անկախութիւնը միայն երեւոյթ չէ, ան պարտականութիւններ ալ ունի, որոնք պէտք է կատարէ:

Հակառակ անոր, որ եգիպտական զէնքերու հարցը բաւական տարակարծութեան առեղծեց, կարծիքներու տարբերութիւններ կան գրեթէ բոլոր ճակատներու վրայ:

Անկախ երեսփոխան Ռէնօ ներկայ տագնապը Ֆրանսացիներու միջեւ ստեղծուած անհամաձայնութիւններու մէջ չի գտներ միայն, այլ՝ սխալ տեղեկութեանց մէջ: Իրականութիւն է, որ Թունուզ բաւարար զէնք չունի իր կամքը պարտադրելու համար եւ զէնքի կը սպասէր, բաւ ան:

«Լը Մոնտ» իր խմբագրականին մէջ ողբ չափով իրաւունք կուտայ Թունուզի եւ կը մեղադրէ Ֆրանսան, որ Մարոքին զէնք տալով՝ մերժեց օգնել Պուրկիպայի: Ֆելլաղաններրը Թունուզի սահմանը կ'անցնին ազատօրէն ու երկիրը ի վիճակի չէ զանոնք զսպելու: Լոնտոնի «Տէյլի Մէյլ» թերթը կը գրէ թէ ասիկա Խրուշչեւի յաղթանակն է...: Մինչ «Տէյլի Թելեկրաֆ» ցաւ կը յայտնէ որ Անգլիա նախընտրեց Թունուզի բարեկամութիւնը՝ քան Ֆրանսայի:

Մոսկուայի ձայնասփիւռը լուրը յայտնելով, այս պարագան ապացոյց մը կընկատէ, որ Ատլանտեան Ուխտը խախուտ հիմեր ունի:

Անգլիական զէնքերէն ետք, երէկ առաւօտ երկու օդանաւներ ամերիկեան զէնքեր տարին Թունուզ:

Լոնտոնի ֆրանսական դեսպանը Փարիզ եկաւ՝ խորհրդակցութեան համար:

ՎՍՏԱՀՈՒԹԵԱՆ ՔՈՒԷ՝ ԵՐԵՔՇԱԲԹԻ

Շաբաթ առտու ժամը 6ին Վարչապետ Կայեառ վստահութեան քուէ պահանջեց Ազգ. Ժողովէն՝ ելմտական ծրագիրներուն համար:

Ելմտական յանձնախումբը բաւական վիճաբանութեանց դուռ բացած էր անցեալ իրիկուն առաջարկուած 104 միլիառի նոր տուրքերուն առթիւ, եւ մերժած՝ մէկ մասը (25 միլիառ) 79ի ինչընելով:

Թունուզի տրուած զէնքերուն անդրադառնալէ ետք Վարչապետը կրկին օրակարգի նիւթ կը դարձնէր ելմտական հարցերը:

Ամբողջ գիշերը վիճաբանելէ ետք Կայեառ կրցաւ համաձայնութեան բերել Անկախները եւ Ընկերվարականները 101 միլիառ տուրքին վրայ:

Այս ծրագիրներու ամբողջութեան համար Վարչապետը բացառիկ իրաւասութիւններ կ'ուզէ եւ այդ պատճառով վստահութեան քուէ ուզեց շաբաթ առտու, բայց քուէարկութիւնը մնաց երեքշաբթի:

―――o―――

ՍԱԿԱՐԱՆ (Նոյ. 15).— Զոյլ ոսկի 577.000 (590.000), Նափոլէոն 4260, զուից. 4130, անգլ. 5110, քսան տոլարնոց 20.720, Թղթադրամ (զուգահեռական շուկայ) սթերլին 1280, տոլար 487, զուից. 116, պելժ. 9.25, լիր 0.78, փեսեթա 8.20:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼՍԱՐԱՆ

Հերթական դասախօսութիւնը այս երեքշաբթի ժամը 21ին, Ռեժան սրճարանին առաջին յարկը:

Դասախօս՝ Պ. ԿԱՐԱՊԵՏ ՓՈԼԱՏԵԱՆ

Նիւթ՝ Եղիշէ Չարենց (ծննդեան վաթսունամեակին առթիւ):

Չարենցէն կ'արտասանէ Օր. Ժիւլիէթ Աւետիսեան:

Մուտքը ազատ է:

Imprimé sur les presses du journal HARATCH
17, Rue Bleue, 17 — PARIS (9e)

Օր. ԼԻՏԻ ՊԻՉԱՔՃԵԱՆ
ԵԴՈՒԱՐԴ ՊԱՍՄԱՃԵԱՆ
Ամուսնացած
3 Օգոստոս, 1957 Պանեօ

ԴԵԿՏԵՄԲԵՐ 15ԻՆ

« ՍԻՓԱՆ - ԿՈՄԻՏԱՍ »Ի
ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ՝
SALONS DES AMBASSADEURS

ՑԵՏԱԶԳՈՒԱԾ Է.— ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ որ տեղի պիտի ունենար այս կիրակի ՍԷՆ ՇԱՄՈՆԻ մէջ:

ՊՈՄՈՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Ֆ. Կ. Խաչի մասնաճիւղին վարժարանը վերաբացուած է արդէն Հոկտեմբերի բակիրէն ի վեր, ուսուցչութեամբ Պ. Վահրամ Կ. Պապուխեանի:

Արձանագրութիւնները տեղի կ'ունենան Ս. Սահակ - Մեսրոպ սրահին մէջ:

Կը հրաւիրենք Պոմոնի յարգ. ծնողները որ չարունակեն վառ պահել իրենց սէրը հանդէպ Կապ. Խաչի կրթարանին ուր մեր զաւակները կը ստանան Ազգ. ոգի եւ հայերէնի բաւականաչափ պաշար:

Ֆ. Կ. Խաչի Պոմոնի մասնաճիւղի
Վարչութիւն

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԼՍԱՐԱՆ

Հերթական դասախօսութիւնը այս չորեքշաբթի իրիկուն, ժամը 21ին, Քառէ սրճարանին վերնայարկը: Կը խօսի՝ ԿԱՐԱՊԵՏ ՓՈԼԱՏԵԱՆ:

Նիւթ՝ «Հայ բանաստեղծութիւնը «Քայլէ տու Սիւտ»ի մէջ:

Մուտքը ազատ է:

ՆՈՒԷՐ

Այրի Տիկին Գ. Վարդանդիի մահուան առթիւ Մոնթրէօյի հայրենակիցներու կողմէ հաւաքուած 8500 ֆրանքէն 4800ը յատկացուած է ծաղկեպսակի, իսկ մնացեալ 3700 ֆրանքը յատկացուած է Կապոյտ Խաչի Օգափ. կայանի շէնքին:

Կ'ՈՒԶՈՒԻՆ

Société France-Cameroun
24. RUE D'ENGHIEN, PARIS

Կը փնտռէ հայ երիտասարդ մը ամուրի, ազատ զինուորական պարտականութենէ եւ պատրաստուած: Դիմել$ գրաւոր կամ անձնապէս:



Նոր կատարելագործում կօշիկի կրունկներու պատրաստութեան մէջ

Առաջին հայ հաստատութիւնը որ յաջողած է մաքիէռ փլասթիքի եւ ալիւմինիոմի միացումով շինել անբէկ (էնքասսապլը) եւ ճկուն կօշիկի կրունկներ ամէն բարձրութեամբ:

Դիմել՝

VAN-PLAST
(ՎԱՆԼԵԱՆ)
7, RUE GODOT DE MAUROY
Tél.: OPE. 01-08
Առաւօտները հեռաձայնել՝ TAI 33-38

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԽՆՋՈՅՔ

«ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐ»ՈՒԱՆ ԱՌԹԻՒ

ԱՆԻԷՌԻ մէջ, Նոյեմբեր 24ին, Ընկերվարականներու սրահը, մանրամասնութիւնները յաջորդով:

ՑՈՒՇԱՏԵՏՐ

ԱՆԻԷՌ - ՊՈՒԱ ՔՈԼՈՄՊԻ Հ. Յ. Դ. «Արամ» ենթակոմիտէի եւ «Շաւարշ Միսաքեան» խումբի ժողովը այս չորեքշաբթի իրիկուն ժամը 21ին, ընկերվարականներու սրահը, Ավընիւ - տ'Արժանթէօյ: Կարեւոր օրակարգ:

"ԱՆԴԱՍՏԱՆ"Ի ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՆԵՐԸ

Այս Հինգշաբթի, երեկոյ ժամը 9ին Սոսիէթէ Սավանթի թիւ 1 նոր սրահին մէջ, 28 Րիւ Սերփանթ (Մեթրօ Սէն - Միշէլ)

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

Կը խօսին՝
Արդի հայ գրականութեան հարցերուն մասին

ՄԱՐՍԷԼ ՏԸԼԱՆՈՒԱ, ԼՈՒՔ - ԱՆՏՐԷ ՄԱՐՍԷԼ, ՎԱՀԷ ՔԱՉԱ, Կ. ՓՈԼԱՏԵԱՆ եւ ԲԻՒԶԱՆԴ ԹՕՓԱԼԵԱՆ:

Գեղարուեստական բաժին, որուն կը մասնակցին

ԼԻՏԻԱ ԿԱՐԻՆ (ԻԶՔԱԼԱՅԵԱՆ)

ԱՐՏԱՇԷՍ ԳՄԲԷԹԵԱՆ, ՆՈՒԲՀԱՆ ՄԱՐԳԱՐԵԱՆ, ԳՐԻԳՈՐ ՄԵԼԻՔԵԱՆ

Մուտք ազատ է:

ՈՐԲԵՐՈՒ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԱՐՄՆԻ - ՓԱՐԻԶԱՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆ

ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՆՑԻԿ ՑԵՐԵԿՈՅԹԸ

ՆՈՅ. 24ԻՆ, ԺԱՄԸ 16էն 24 — Կոսմոս Օթէլի շքեղ սրահներուն մէջ

ՍԱՎԱ ՆԷԱԿՈՒՑԻ հանդարական նուագախումբը եւ հաճելի անակնկալներ

Կը խնդրուի ապահովել սեղանները հեռաձայնելով ՓԱՍԻ 64.90

Մուտք 500 փրանք

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

1958Ի "ԳՈՅԱՄԱՐՏ" ՕՐԱՑՈՅՑ-ԱԼՊՈՄԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Յ. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ՄԱՐՍԷՅԼԻ ՇՐՋԱՆԻ

ԸՆՏԻՐ ԹՈՒՂԹՈՎ 14 ՄԵԾԱԴԻՐ ԷՋԵՐ

Շքեղ նկարներ, մեծ մասը անտիպ: Գրական եւ պատմական նիւթերով նոխ բովանդակութիւն

— ԳԵՂԱԶԱՐԴ ԵՒ ԳՈՒՆԱՒՈՐ ԿՈՂՔ —

Բացառիկ խնամքով եւ ճաշակով պատրաստուած այս օրացոյց-ալպոմը պիտի կազմէ զարդը՝ ամէն հայ տան:

Այժմէն ապահովեցէք ձեր օրինակը

Փարիզի համար դիմել՝ LIBRAIRIE H. SAMUELIAN, 51, Rue Monsieur-le-rince, PARIS - 6e

Հիմնադիր-Տնօրէն ԳՐԻԳՈՐ ԹԵՒԱՆԵԱՆ

ՃԱՇԱՐԱՆ ԵԱՐ

Ֆրանսական - հայկական եւ կովկասեան ընտիր կերակուրներ

4, RUE ROBERT-ETIENNE
(Rue Marbeuf) PARIS - 8e
TÉL.: BAL. 31-21
ՇԱՆ ԶԷԼԻԶԷԻ ՍՐՏԻՆ ՎՐԱՅ
Métro: F. D. Roosevelt

Հաճելի մթնոլորտ

Առաջնակարգ կովկասեան խորոված-ներ, «շաշլիք», «քարսքի»

Bar Américain



BAINS DE VAPEUR

4 bis, Rue de la Pierre-Levée — Paris - 11e
OBE. 12-51
MÉTRO: RÉPUBLIQUE, OBERKAMPF ET PARMENTIER

ԵՐԵՔ ՍՐԱՀ ՇՈԳԻԻ ԼՈԳԱՆՔԻ
(SUDATION ET FUMIGATION)

Մասաժ, Օքսիժենօթերափի, ձեռքերու եւ ոտքերու խնամք (մանիքիւր - փետիքիւր) քուաֆիւր, սուէն տը պօթէ, փիսին:

BAR-RESTAURANT

Բաց օրեր.—

ԿԻՆԵՐՈՒՆ		ԱՅՐԵՐՈՒՆ	
Ուրբաթ	ժամը 11էն 23	Հինգշաբթի	ժամը 17էն 23
Երկուշաբթի	ժամը 11էն 23	Շաբաթ	ժամը 9էն 23
Չորեքշաբթի	ժամը 11էն 23	Կիրակի	ժամը 8էն12

ՀԱՅԵՐԷՆ ԿԸ ԽՕՍԻՆՔ

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925 — Tél. : PRO. 86-60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. PARIS 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամս. 1600

Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք : Հատը 12 ֆր.

ԵՐԵՔՇԱԲԹԻ
19
ՆՈԵՄԲԵՐ
MARDI
19 NOVEMBRE
1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8046 — 33e ANNEE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3847

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՆԵՐՔԻՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ՀՈԳԵՐ

—o—

Ան պահուն իրր Ֆրանսա բազմաթիւ ներքին հոգերով ծանրաբեռնուած՝ կ՚ե – րտայն ճիրկը կը փոքձ կարդի գնելու համար իր առանին գործերը, Ալտանեան Ուխտի իր դիւաւոր երկու դաշնակիցները նոր տապնագ մը սահմծելին՝ զինք հայ – թալթելով Թունուզի :

Ֆելիքս Կայեաոի կառավարութիւնը հարիւր իչխանութեան գլուխ անցած՝ պարտաւորուած է բուռն պայքար մղել ներքին եւ արտաքին ճակատներուն վրայ :

Ազդային Ժողովը այսօր պիտի ճչդէ իր դիրքը երմտական ծրագրին հանդէպ, ո – րուն համար վստահութեան հարց դրած է Վարչապետը :

Իսկ արտաքին նախարար Քրիսթիան Փինօ Ուշինկթընի մէջ Ֆոսթըր Տըլլըսի հետ պիտի առնակցի քաղաքական ընթա – ցիկ հարցերու եւ մասնաւորապէս Թու – նուզի խնդրին մասին :

Ներքին ճակատին վրայ երմտական տապնագը ապիտալի անդրադարձում մը ունեցաւ անցած չարաթ Սակարանին վր – րայ, ուր ձոյլ ոսկին նոյեմբեր 14ին մէկ օրէն միւսը 35·000 ֆրանքի, իսկ թղթա – դրամ տոլարը 31 ֆրանքի բարձրացում արձանագրեցին : Անուշա չահագիտու – թիւնը մեծ բաժին ունէր այս անօրինակ երեւոյթին մէջ, քանի որ յաջորդ օրն իսկ կացութիւնը որոշ չափով չտկուեցաւ : Ճատկանշական է սակայն, որ Ֆրանսա – կան դրամին մասին անվստահութեամբ – նորոգ մը առեղծուած է այս կամ այն ձեւով :

Գինիերու առաքճանական բարձրացումը նոյնպէս սկսած է մտահոգիչ դառնալ : Գործաւորները ու ամսականաւոր պաշ – տօնեաները զժգոհութեան նշաններ ցոյց կուտան դարձեալ եւ պարբերական գոր – ծադուլներ կը սարքեն՝ յաւելում պա – հանջելու համար :

Մինչ այդ՝ Ալժերիոյ հարցը կը մնայ առկախ, ծանրացնելով կառավարութեան մտահոգութիւնները :

Բայց աւելի ծանրակչիռ է մեծ դաշնա – կիցներու ճակատին վրայ առաջ եկած ճեղքը :

Մինչ Մօրհրդային Միութիւնը իր եր – կաթեայ թաթերուն մէջ առած արբանեակ պետութիւնները՝ միացեալ ճակատ մը կը ներկայացնէ եւ Սպուտնիկներու յաղթա – կան թռիչքէն ի վեր կը յոխորտայ եւ կը սպառնայ Խրուչչեւի բերնով, սպրդի Ատլանտեան Ուխտի պետութիւնները ար – տաքին քաղաքականութեան մէջ կը դոր – ծէն համաձայն իրենց սեփական չահե – րուն :

Տարի մը առաջ, Սուէզի արշաւանքին առեն Ֆրանսա եւ Անգլիա իրենց դէմ պատն Միացեալ Նահանգները եւ անոնց – ուսնակ Նահանջ մը ունեցան՝ բացի րա – րսյական ազդեցութենէն նիւթական ահա – պին վնասներու ենթարկուելով : Այդ խնդրին մէջ Ուշինկթըն իւղ քսեց Մոս – կուայի հոգին, սիրաչահելու համար ա – րաբական աշխարհը, որ ա՛նքան հա – րուստ է քարիւղի հանքերով :

Այս անգամ Անգլիա բաժնուելով Սուէ – զի իր դաշնակիցէն, ճակատ կազմեց Ա. – մերիկայի հետ՝ ի հեճուկս Ֆրանսայի զինք հայթայթելով Թունուզի, որ հա – կառակ իր անկախութեան, տակաւին քա – ղաքական, զինուորական եւ անտեսական բազմաթիւ կապեր ունի այս երկրին հետ : Ֆրանսան է, որ նախաձեռնարկ եղած էր Թունուզեան բանակը օժտելու արդիական զինքերով : Ու եթէ ընդհատուած էր զին – քի հայթայթումը, պատճառը նախարա – զական տապնագն էր, որ հինգ չարաթ տեւեց :

Մ. Նահանգներն ու Անգլիա կը փոր – ձէն չքմեղանալ՝ յայտնելով, որ եթէ ի – րենք զինք չտային՝ Պուրկիպա պիտի դի – մէր խորհրդային խմբակին, ինչպէս ըրեր էին Եգիպտոս ու Սուրիա :

Ժամանակին, համաչխարհային առա – ջին պատերազմի վաղորդայնին, գնուե – ցան դաշնակիցները, որ առատ զինք հայ – թալթեցին իրենց նախկին թշնամիին՝ Թուրքիոյ եւ ատքի կանչնեցուցին զայն՝ իրրեւ թէ թոյլ չտալու համար, որ անի – կա բոլշեւիկներու գիրկը իյնայ :

Արդիւնքն այն եղաւ, որ Կիլիկիան պարպուեցաւ սակայն Դաշնակցութիւնը չկրցան արդիլել, որ Մուսթաֆա Քեմալ չչահագործէ նաեւ Մոսկուան՝ ոսկի, զէնք եւ ռազմամթերք ստանալով անկէ՝ ճզմելու համար նորագոյս Հայաստանի Հանրապետութիւնը եւ ծով թափելու հա – մար հեղինակային բանակը :

Բոլշեւիկներու սարսափին վրայ հիմ – նուած քաղաքականութիւնը քառասուն տարիէ ի վեր ա՛չ մէկ դրական արդիւնք տուած է : Դաշնակիցներու միացեալ ա – մուր ճակատը լաւագոյն դրաւականն է աշխարհի խաղաղութեան համար :

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՓԻՆՕ-ՏԸԼԼԷՍ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

—o—

ԹՈՒՆՈՒԶԻ ՅԱՆԶՆՈՒԱԾ ԱՆԳԼԵԱՄԵ – ՐԻԿԵԱՆ ԶԷՆՔԵՐՈՒ ՀԱՐՑԸ

Արտաքին նախարար Փինօ, կիրակի պա – չեր Օրլէան մեկնեցաւ Նիւ Եորք, ուր պիտի դեկավարէ ՄԱԿի Ֆրանսական պատուիրակութիւնը՝ Ալժերիոյ հարցին վիճաբանութեանց ընթացքին :

Օդանաւ բարձրանալէ առաջ, Արտաքին նախարարը յայտարարեց, թէ Միացեալ Նահանգներու մէջ Տըլլըսի պիտի բացատ – րէ Ֆրանսական կառավարութեան մտա – հոգութիւնը՝ Թունուզի յանձնուած անգլ – եամերիկեան զէնքերուն համար : Բնական է, ըսաւ Փինօ, որ հարցը պիտի չծանրացնեմ, այլ, ընդհակառակն, պիտի աշխատիմ բարելաւել կացութիւնը, մեր դաշնակիցներուն պատճ դժբախտ քայլէն ետք : Ֆրանքեամերիկեան անհամաձայ – նութիւնը խնդրոյ առարկայ կը դարձնէ Ատլանտեան Ուխտին զօրութիւնն ու զօ – րացումը :

Արտաքին նախարարը, որ մեկնելէ ա – ռաջ տեսակցութիւն մըն ալ ունեցած էր վարչապետին հետ, Ալժերիոյ մասին խօ – սելով յատկապէս ըսաւ. — ՄԱԿի մէջ ընդարձակ բացատրութիւններ պիտի տանք Ալժերիոյ մասին, նկատելով որ ան զուտ Ֆրանսական հարց մըն է սչ մէկ պարապայի մէջ կրնայ «միջազգայնա – նալ» : Այս առիթով ակնարկ է ապրա – տամբներուն ժխտական դիրքը, մանա – ւանդ՝ վերջին չարաթներու ընթացքին :

Քաղաքական շրջանակներն ու մամուլը բացառիկ կարեւորութիւն մը կ՚ընծայեն Փինոյի այս ճամբորդութեան, որ կոչ – ուած է տապնագը մեղմացնել՝ Թունուզի յանձնուած զէնքերուն վերջ : Արտ. Նա – խարարը տեսակցութիւն մը պիտի ունե – նայ Տըլլըսի հետ, մանրամասնօրէն քննե – լու համար տապնագին ետեն տեղի ունե – ցած դէպքերը : Երկու Արտաքին նախարար – ներու հանդիպումը տեղի կ՚ունենայ այ – սօր, երեքշաբթի, Ուշինկթընի մէջ : Ինչպէս յայտնի է, Թունուզեան կառավարութիւնը ծա – նօթ չէ եւ պիտի երկարի այնքան ատեն, որ հարցը չէ լուծուած : Փինօ լուսարա – նութիւններ պիտի ուղէ Հիւսիսատլան Ա – րեւելքի չուրջ Միացեալ Նահանգներու որ – դեգրելիք դիրքին մասին եւ մասնաւորա – պէս Ալժերիոյ մասին հարցումներ պիտի ուղղէ :

Ուշինկթընէն եւ Լոնտոնէն հասած տե – դեկութիւններու վրայ հիմնուելով, Փինօ

ՄԱՌԵՇԱԼ ԲԱՂՐԱՄԵԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—o—

Մոսկուայի պելժիական դեսպանատան մէջ տեղի ունեցած ընդունելութեան ա – ռիթով, Ա. Միութեան եւ Ամերիկայի յա – րաբերութեանց մասին խօսելով, մառե – շալ Բաղրամեան բաւած է թէ այդ յարա – բերութիւնները այնքան լաւ չէին՝ որքան պատերազմի ընթացքին : Եթէ Նախագահ Այզընհաուըր Մոսկուա այցելէր՝ լաւ պի – տի բլլար եւ լաւ ընդունելութիւն մը պի – տի ընէինք իրեն, աւելցուցած է մառե – շալը : Հարկ է բարելաւել Ա. Միութեան եւ Միացեալ Նահանգներու յարաբերու – թիւնները, բայց ինչպէ՞ս ընել, երբ ա – նոնցմէ մէկը իր ձեռքին մէջ քար կը պա – հէ :

Լրագրող մը հարց տուած է, թէ ի՞նչ է իր կարծիքը Թունուզի յանձնուած զէնք – ուն մասին :

— Կ՚անդիտանամ :

Ուրիշ մը անկախ պետութեանց զէնք հայթայթելու մասին Ա. Միութեան յայ – տարարութիւնը յիշելով բացատրութիւն – ներ ուզած է :

— Անիկա հարց մըն է, որ ինծի չի վե – րաբերիր, աւելցուցած է Բաղրամեան :

Ա. Միութեան երմտական նախարար Զվերեվի հարց տրուեցաւ, թէ Սպուտնի – կի չինութիւնը քանի՞ տոլար արժած է, նկատելով որ Ամերիկան քան միլիոն տոլար ծախսած էր հելլէական իր առա – ջին ռաքեթը չինելու համար :

Սպուտնիկին չինութիւնը շատ աւելի պակաս արժեց : Եթէ աւելի բլլար՝ ես դէմ պիտի բլլայի այդ ծրագիրին, բաած է երմտական նախարարը : Այսուհան – դերձ, առաջին Սպուտնիկը երկրորդէն ա – ւելի սուղ արժեց :

հարց պիտի տայ, թէ ճի՛շդ է արդեօք այն գրոյցը, որուն համաձայն Ամերիկա Ալժերիոյ խնդրին մէջ «համայնական պատասխանատուութիւն» մը կը փնտռէ : Այդ պարագային, կը յիշատակուի Ատ – լանտեան Ուխտի վեցերորդ յօդուածը, որ Ալժերիան կը նկատէ Ֆրանսական հոգա – մատ : Հրատապ հարցեր՝ որոնց բացա – տրութիւնը պիտի ուզէ Փինօ Ամերիկայէն եւ Անգլիայէն :

ԺՈՐԺ ՊԻՏՈՅԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ինչպէս ծանօթ է, Թունուզի յանձնուած անգլեամերիկեան զէնքերու հարցը մը – տահոգեց Ֆրանսան : Այս առիթով, նախ – կին Վարչապետ եւ Արտաքին նախարար Ժորժ Պիտօ կարդ մը յայտարարութիւն – ներ րրած է. — Թունուզի յանձնած զէն – քերը, ըստ երեւոյթին, խորհրդանչական բնոյթ ունի : Եթէ այդպէս բլլայ՝ Պուր – կիպայի ատացածը կարեւորութիւն չի ներկայացներ. — Կարեւորը երեւոյթն է :

Ատլանտեան Ուխտին համար լաւ պիտի չբլլար, եթէ հարցին տրուի երկրորդա – կան կարեւորութիւն եւ կարդադրուի քա – նի մը տաք խօսքերով :

Պիտօ յիշեց եւս, թէ Ֆրանսա ան – խախտելիօրէն կապուած է Ատլանտեան Ուխտին, խնդրոյ առարկայ կը դարձնէ անոր գոյութիւնը, եթէ տապնագը չա – րունակուի. մենք չենք կրնար դաշնակից բլլալ Եւրոպայի մէջ, կ՚աւելցնէ նախկին Վարչապետը : Ինչպէս կը տեսնուի սա – կայն, Պիտօն ալ կը սպասէ Տըլլս – Փի – նօ հանդիպումի արդիւնքին, նկատելով որ տակաւին յստակ չէ այն պարագան, թէ ինչո՛ւ յանձնուեցան անգլեամերիկ – եան զէնքերը՝ Թունուզի : Ատլանտեան

(Շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՕՐ ԸՍ ՕՐԻՆ

60·000ԷՆ ՎԱՐ ...

—o—

Ծանօթ է, որ վերջերս պաշտօնեաները յանախակի գործադուլներ կ՚ընեն, ան – բաւարար նկատելով իրենց աշխատա – վարձը : Այս առիթով, տեղական թերթ մը կը յիշէ հին անեկտոտ մը, զոր կ՚ար – տագրենք նոյնութեամբ :

Գիւղացի մը կ՚երթայ շնորհաւորել իր շրջանի երեսփոխանին ընտրութիւնը : մարդը նախարար եղած է արդէն եւ գիւ – ղացին առիթէն կ՚օգտուի, իր տղուն յարմար գործ մը խնդրելու համար : քայց, խեղճ տղան անգրագէտ է, նոյնիսկ չէ կրցած ստանալ իր նախնական ուսման վկայագիրը :—

—Խնդիր չէ, կ՚ըսէ նախարարը, թղթա – ծրարը աչքէ անցնելով : Պէտք եղած գոր – ծը ունիմ արտադրութեան բաժնի վարիչ, ամսական 250·000 ֆրանքով ...

— Երկու հարիւր յիսուն հազա՞ր... բայց, պարոն նախարար, շատ է այդ գումարը, այն ատեն հօրը – մօրը վրան չի ճայիր :

— Շա՛տ լաւ· իրեն կուտամ մասնագի – տական խորհրդատուի պաշտօն մը՝ ամ – սական 150·000 ֆրանք : Լա՞ւ է :

— Խորհրդատո՞ւ, բայց, մտածեցէք որ անգրագէտ է խեղճը :

— Շատ դժուարահաճ էք, սիրելի բա – րեկամ ... այդ պարագային իրեն կը յանձնեմ փոխ տնօրէնի պաշտօն մը՝ ամ – սական 90·000 ֆրանք :

— Բայց շատ մեծ գումար մըն է ան իմ տղուս համար, պարոն նախարար : Սակայն, օրուան ապրուստը հանելիճ աշ – խատավարձ մը բաւական է :

— Զգուշացէ՛ք, սիրելի բարեկամ, կ՚ըսէ նախարարը, գիտէ՞ք 60·000 ֆրան – ֆէն վար, վկայականներ կը պահան – ջուին ... : ԱՐՄԵՆԱԿ

ՏԽՐՈՒՆԻ

Յաւով կ՚իմանանք թէ չարաթ առաու Քլամարի մէջ յանկարծամահ եղած է ըն – կեր Թադեւոս Ալթոպեան :

Մեր ողբացեալ ընկերը բնիկ Մեծ Նոր գիւղացի 65 տարեկան էր, եւ քանի մը չարաթ է փարիզ եկած էր իր քրոջը մօտ : «Կեդրոնական»էն չրջանաւարտ, երկար տարիներ ուսուցչութիւն ըրած է Սէօ – լէզի մէջ Յ. Օշականի հետ : Ա. պատե – րազմէն վերջ գացած է Յունաստան, ա – պա 1926ին հաստատուած է Լիոն : Կա – նուխէն մտած է Դաշնակցութեան չարքե – րը եւ եղած բարեխիղճ կուսակցական :

Վերջին անգամ ինք կը նախագահէր «Դաշնակցութեան Օրեան» ասնակատա – րութեան Լիոնի մէջ : Տակաւին առիթը կ՚ունենանք խօսելու իր մասին :

Մեր ցաւակցութիւնները Տիկին Ալթոպ – եանին եւ ընտանեկան պարագաններուն :

ՍՈՒՐԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ մէջ երկու – չարթի օր ներկայ եղան նաեւ եգիպտացի երեսփոխաններ : Այս դէպքը բացառիկ բնոյթ մը ունի մանաւանդ որ եգիպտա – կան պատուիրակութեան քոյէի իրաւունք ալ տրուած է : Արտաքին նախարար Սա – լահ Պէթար, այս առթիւ, յայտարարեց թէ նոր քայլ մը կարելի է նկատել այս դէպքը դէպի համարարական դաշնակցու – թեան զօրացումը եւ անոր աւելի սերտ դործակցութիւնը :

ԱՄԵՐԻԿԵԱՆ օդային ուժերը ներկայիս կը փորձեն նոր զէնք մը, որ մթնոլորտին մէջ պիտի կարենայ չէզոքացնել թշնա – միին կողմէ արձակուած հրթիռները՝ ըս – րածին ուռմբին միջոցաւ :

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿԸ

Այս պատուանունով ծանօթ է այն արտասովոր դէմքը՝ Մրմեան Կաթողիկոս, որուն մահուան 50ամեակը կ'ոգեկոչուի այս օրերուն, այնքան յուզումով ու յարգանքով :

Մեր պատմութեան մէջ չատ ունեցած ենք բազմաշնորհ ու արժէքաւոր դէմքեր, — զրադէտ, բանաստեղծ, պատմաբան, ազգային կամ եկեղեցական գործիչ :

Ունեցած ենք մեծանուն կրօնաւորներ, պարբերաբեր թէ կաթողիկոս, աստուածաբան, հայրենասէր, մեծազործ, ժողովրդական :

Սակայն, անոնցմէ ոչ մէկը ունի՝ իր ախտղոններով կամ իր վայելած համբաւով կամ ժողովրդականութեամբ, Մրմեանի համայքն ու համբաւը :

Ո՞րկէ այս վեհապետական ու անվիճելի հեղինակութիւնը՝ այս պարզ, զուտացած, ու զրեթէ զեղջուկ կրօնաւորին մօտ, որ մինչեւ իր երեսուն տարեկան հասակը, աշխարհական ու ընտանեկան կեանք ապրելէ ետք, կրօնաւորութեան նուիրեց ինքզինք· եղաւ յաջորդաբար, վարդապետ, վանահայր, եպիսկոպոս, պատրիարք ու կաթողիկոս, իրմով ոգեւորելով հայ ժողովուրդի բոլոր խաւերը· անդրագէտ գիւղացիէն սկսած մինչեւ մայրաքաղաքի մեծանուն զրադէտները, քեռնակիրներէն սկսած մինչեւ ականաւոր մտաւորականներն ու մեծատուները :

Բոլորը սիրեցին զինք, յափշտակուեցան իրմով ու հիացան իր վրայ· «Հայրիկ» կոչեցին զինք: Նախանձոտներն ու յաչագկոտները իսկ չհամարձակեցան արատաւորել իր լուսապայծառ ճակատը եւ, ի վերջոյ, խոնարհեցան իր առջեւ :

Անչօչափելի ուժեր կան մարդոց մէջ, որոնք իրենց եռեւէն կը քաշեն բազմութիւնները· անբացատրելի զաղանիքներ կան, որոնք համբաւներ կը ստեղծեն եւ պաշտամունքի առարկայ կը դարձնեն, երբեմն, սովորական նկատուած մարդիկը :

Մրմեանի վայելած համբաւը սակայն այդ «զաղանիք»ներէն չէ : Գաղանիք չունէր Մրմեան, ոչ իր զարափարներուն մէջ, ոչ ալ իր կեանքին: Ոչ մէկ մանկիի կամ թաքուն զօրութիւն՝ իր անունը վեր բարձրացուցած է իր ժամանակին եւ հետագայ ժամանակներու մեծութիւններէն :

Ամէն բան պարզ է ու պայծառ Մրմեան Հայրիկին մօտ :

Իրրեւ կրօնաւոր, մեծ աստուածաբան մը չէր ան, բայց խորունկ, անկեղծ հաւատացեալ մըն էր, ծառայելու կոչուած Աստծոյ եւ աստուածային, հոգեւոր գործաւութեան :

Ոչ մեծ զրադէտ մըն էր ոչ ալ բանաստեղծ մը, բայց հայ զիրն ու զրականութիւնը սրբութեան, աստուածային լոյսին տանող զրադէտ մը ու բանաստեղծ մը եղաւ ան, որ վիճայաւ հայ հոգեւորին անբաժան մասը դարձնել :

Հայրիկը՝ երաժիշտ մը չէր Շնորհալիի նման. ոչ ալ մեծ աղօթասաց մը՝ Նարեկացիին պէս· բայց իր բովանդակ կեանքով եւ գործունէութեամբ մեր աննման շարականներուն եւ հոգեմատոյց Նարեկին օծումն ունէր իր վրան :

Զուներ ան եղիչէ Դուրեանի մը հմտութիւնն ու պերճ բարբառը, բայց ունէր Հայոց բարբառին անիմանալի ջերմութիւնը, դարերու խորքէն բխած, առանց կարելիի տարօրինակութեան :

Կարելի է ըսել իրեն համար, որ ոչինչ ունէր սոսկական· ինչ որ ունէր, արդուած էր իրեն բնութենէն· Նախախնամութենէն: Բնական իմաստութիւն մը ունէր, որ աւելի էր, քան զիրքերու տուած իմաստութիւնը· ունէր իր խօսքին մէջ, այն անմշակ այլ անհունօրէն հզօր զօրութիւնը, որ սրտին կը բխէր եւ կը հասնէր հոգիներու բաղմութեան :

Սրտի մարդն էր Մրմեան, զերազանցօրէն, եւ իր զգացումներուն յորդումով զարերը կ'ընդգրկէր, ոգեղելով հայ ժողովուրդը ամբողջութեամբ, իր խօսքին պարզութեամբ, հայրական ջերմութեամբ եւ ինքնատիպ պատկերացումներով : Իր բերնով՝ կը թուէր թէ կը խօսէր հայ ցեղը, եւ իր ձայնին մէջ, ինչպէս կը վկայեն լսողները, Հայոց լեռներու մթին ոյզ խրոխտ չեչտը, քնդիւնը կը լսուէր· իր արցունքին մէջ հայութիւնն է որ կ'արտասուէր եւ իր հեգնութեան մէջ՝ Հայուն վեհապոյն իմաստութիւնը, աչխարհի ու մարդոց գործերուն հանդէպ :

Իր մութ ու զեղեցիկ հայեացքին մէջ ան Աստուած, կը թուէր թէ հայ ժողովուրդը կ'աղօթէր :

Հայոց եկեղեցին էր իր անձը՝ իր պերճութեամբ, աստուածային կոչումով եւ ազգապահպանութեան հրաչքով: Երկնային Նուիրակ մը՝ որ Հայոց պատմութեան հին զարերէն եկած, իր հովանին իր տարածէր իր ժողովուրդին վրայ, հայրենական ու անխրատուած :

Իր կեանքը՝ Հայոց պատմութենէն ի կենդանութիւն բերուած զրուագ մըն էր· Ազատութեան հետ եւ ազատութեան համար պայքարի մէջ: Նուիրեալ մը՝ որ իր բոլոր ուժերով ու խորհուրդներով կը վինտէր խաղաղ աչխատանքը, լոյսի կոթողով, եւ անհուն պաչտամունքով հայ հոգին հանդէպ, որ Հայոց հայրենիքն էր, հայութեան զարաւոր խարիսխն ու ապաստանը :

Հայ հոգը եւ հայ ընտանիքը, այսինքն մանրանկար հայութիւնը, իր բոլոր սրբութիւններով, աչխատանքով, հաւատքով, սիրով ու աւանդութիւններով — ահա՛ իր բովանդակ փիլիսոփայութիւնը :

Մրմեանը բուռ մը հող էր հայ հողէն, բեկոր մը հայրենի լեռներէն, ազատ ու վեհապանծ. — ահա թէ ինչու իր անունը կը կապուի ու կապուած կը մնայ Հայոց հայրենիքին ու անոր ազատութեան :

Իր երկարամեայ կեանքի ընթացքին, ներկայ եղաւ ան ամէնուրեք, արեւերէն մինչեւ պիւղական վանքերը· պիւղերէն մինչեւ վարքամ քաղաքները, խրճիթներէն մինչեւ պալատները· զեղջուկ ժամերու նստարաններէն մինչեւ պատրիարքական ու կաթողիկոսական Աթոռները :

Եւ ներկայ եղաւ, առանց արտաքին ազդակներու· ինքնաբեր մղումով, հայ կեանքի բարձրացող ալիքներէն քշուած :

Երբ պատրիարքական տաղնապ ծագեցաւ եւ հայ ժողովուրդը պէտք ունեցաւ մեծ Հովուապետի մը, մեծանուն դէմքեր, ինչպէս Գր. Օտեանն էր, իր անունը տուին, մութին մէջ նետելով փայլուն անուններ, հայրենի զաւառին չունչը եւ ուժը ունենալու համար Պոլսոյ Պատրիարքական Աթոռին վրայ :

Երբ հայկական Դատը ներկայացնելու եւ պաչտպանելու պատմական առիթը ներկայացաւ, բոլորին աչքերը զարձան Մրմեանի վրայ, որովհետեւ Ան միայն կրնար ներկայացնել հայութիւնը եւ զարաւորութիւնը :

Եւ երբ կաթողիկոս ընտրուեցաւ, իր ճամբու ընթացքին՝ դէպի Էջմիածին, արքայական ընդունելութեան արժանացաւ բոլոր Հայերուն կողմէ, անխտիր, որովհետեւ իրմով կը ընծուէին սահմանները, Արեւմտեան Հայաստանը կը միանար Արեւելեան Հայաստանի եւ կ'իրագործուէր մէկ հայութեան ու մէկ հայրենիքի զաղափարը — զարաւոր երազ :

Հայոց Հայրիկը հասած է այս փառքին ու պերճանքին, չնորհիւ իր բոցավառ հայրենասիրութեան ու սրատեսին գուրանքին հայութեան ու հայկականութեան ուղղութեան: Հարկ կա՞յ այլեւս հօր մը սիրտը չափելու իմացական, վարչական ու այլ կարգի տարազներով :

Մրմեան վեր է այս բոլոր չափերէն : Հայութիւնն էր ան, ազատութեան համար մարտնչող հայ ժողովուրդը, որ կը հաւատար Աստծոյ արդարութեան, հայրենիքի սրբութեան եւ հայ ժողովուրդի արժէքին ու առաքելութեան: Հաւատքի մարդ մը՝ որ խաչը ձեռքը՝ հայութեան ազատութեան ու բարօրութեան համար աչխատեցաւ, լոյս եւ, նաեւ, յոյս սփռելով ամէն տեղ :

Առասպելական դէմք մը զարձաւ Մրմեան, որ յեղաչրջեց Հայոց նորագոյն պատմութիւնը, նոր թուականներ բանալով, իմացական, ընկերային ու քաղաքական :

Գերազանցօրէն իրապաչտ իր մտածումներուն ու գործերուն մէջ, վիպային դէմք մը զարձաւ ան, բոցավառելով հայ ժողովուրդի կեանքն ու երեւակայութիւնը, դառնալով անոր Առաջնորդը, Մովսէսի նման :

Զտեսաւ ինք Հայուն ազատութիւը, ինչպէս Մովսէսը չտեսաւ Աւետեաց երկիրը, բայց կրցաւ Ազատութեան դրօչը

ՕՀԱՆ ԶՈՐՊԱՃԻ

Անճեր կան, որոնք ամբողջ պատմութիւն մ'են: Պատմութիւնը ո՛չ միայն իրենց բազմաճիւղ ու բազմատարած զերդաստանին, այլ եւ պատմութիւնը իրենց դիւղին ու քաղաքին :

Օհան Զորպաճի այդպիսի անձ մըն է, անուն մը, աւելի ճիշդ՝ յորջորջում մը, որ ամէն բան իր մէջ կը բովանդակէ, ինչ որ Եոզղատի մասին կարելի է պիտանալ :

Ծնած է Եոզղատ 1784ին եւ զաւակն է Հաճի Ապտալի եւ Տիկին Եղիսաբեթի : Բուն անունն է Օհան կամ Յովհաննէս Արսլանեան: Իր բնածին ուչիմութեամբ ու ինքնաչխատ յամառ ջանքերով այնքան յառաջդիմութիւն կ'ընէ ուսման ու գործնական կեանքի մէջ որ չուտով կը բացուին իր առջեւ փայլուն առաջարկներ վաճառականութեան ու պետական պաչտօներու: Առեւտուրի իր բնածին ընդունակութիւնը՝ միացած ձեռներեցութեան անխոնջ ոգիի մը՝ ան կը զարձնեն գինքը մեծապումար հարստութիւններու, որոնցմով թէ՛ անուն եւ թէ ազդեցութիւն ձեռք կը բերէ : Իր անունը — Օհան Զորպաճի— այլեւս խորհրդանիչն է մեծահարուստ Հայուն ու ժողովուրդի բարերարին :

Կը չինէ ճամբաներ, կամուրջներ, աղբիւրներ: Կը կառուցանէ Եոզղատի «զոյչական» — Պէտէքէն, Թուզ – Գայա թաղի Հաճը – Նէնէ մչտահոս աղբիւրը : Բայց առանցմէ աւելի՝ Եոզղատի Մատուռ – եկեղեցին, կառուցած 1844ին եւ իր անուան անմահ յիչատակ մը՝ Օհան – եան վարժարանը, որոնց իրրեւ մչտնջենաւոր հաստատ՝ խանութներ չինելով անոնց վրայ վագրի ըրած է :

Իր անուան անմահ յիչատակ մըն է նաեւ 1872 – 4ի Եոզղատի սովի տարիներուն Եոզղատի ուրիշ մէկ մեծահարուստ ընտանիքի մը — փոխադարձներու հետ բացառիկ միջոցներով ու հեռու տեղ գրկեն հացնելով Եոզղատը սովէն ազատելու իր մեծագործութիւնը :

Իր ազգին ու քաղաքին այս մեծ բարերարը եղած է անձնապէս ալ բարեպաչտ անձ մը: Իր կենդանութեան անձամբ հոգացած է եկեղեցիին իւղը, մոմն ու եւ բարձրաչխատ ուսուցիչին ամսականը, իսկ ժառանգորդներուն՝ մեծագումար հարստութեան հետ՝ կտակած է նոյնը չարունակել :

Ամէն տարի Զատկուան առաջին օրը կ'ուղարկէ Եոզղատ 100 ոսկի, որպէսզի Եոզղատի Մատուռ – եկեղեցիին մէջ պատարագ մատուցուի իր հանգուցեալ ծնողաց, քոյրերու եւ եղբարց հոգիներուն համար

ԿՅՁԱՑԻ

Գ.

ԳՎՈՂՎԱ ՈՅՍ ՎՍԿՅԳ

Ինչպես ամեն անգամ, այնպես էլ այդ անգամ ես ուզում էի ինձ համար ամենից առաջ ծանոթանալ այդ մարդու հետ, որ ինձ ուղարկել էր Ղազարոսի մոտ։ Ես ուզում էի իմանալ, թե ինչ է նա, ինչ է նրա կյանքը, ինչ է նրա ընտանիքը, ինչ է նրա տունը։ Ես ուզում էի ամեն ինչ իմանալ, որ հետո ինձ համար ավելի հեշտ լինի նրա հետ խոսել։ Ես ուզում էի նրա մեջ գտնել մի ուրիշ մարդ, որ ինձ ավելի մոտիկ լինի, քան այդ անծանոթ մարդը։ Ես ուզում էի նրա մեջ գտնել մի ընկեր, որ ինձ հասկանա, որ ինձ սիրի, որ ինձ ներում տա, որ ինձ մխիթարի։

Ես ուզում էի նրա մեջ գտնել մի մարդ, որ ինձ հետ լացի, որ ինձ հետ ծիծաղի, որ ինձ հետ ապրի։

Ես ուզում էի նրա մեջ գտնել մի մարդ, որ ինձ հետ ապրի, որ ինձ հետ մեռնի։

Ես ուզում էի նրա մեջ գտնել մի մարդ, որ ինձ հետ մեռնի, որ ինձ հետ հարություն առնի։

Ես ուզում էի նրա մեջ գտնել մի մարդ, որ ինձ հետ հարություն առնի, որ ինձ հետ ապրի հավիտյան։

Ես ուզում էի նրա մեջ գտնել մի մարդ, որ ինձ հետ ապրի հավիտյան, որ ինձ հետ մեռնի հավիտյան։

Ես ուզում էի նրա մեջ գտնել մի մարդ, որ ինձ հետ մեռնի հավիտյան, որ ինձ հետ հարություն առնի հավիտյան։

Ես ուզում էի նրա մեջ գտնել մի մարդ, որ ինձ հետ հարություն առնի հավիտյան, որ ինձ հետ ապրի հավիտենից հավիտյան։

Ես ուզում էի նրա մեջ գտնել մի մարդ, որ ինձ հետ ապրի հավիտենից հավիտյան, որ ինձ հետ մեռնի հավիտենից հավիտյան։

Ես ուզում էի նրա մեջ գտնել մի մարդ, որ ինձ հետ մեռնի հավիտենից հավիտյան, որ ինձ հետ հարություն առնի հավիտենից հավիտյան։

Ես ուզում էի նրա մեջ գտնել մի մարդ, որ ինձ հետ հարություն առնի հավիտենից

Ուխտը կրնայ անդամահատուիլ կամ ա-ւելի զօրանալ, կ՚եզրակացնէ Պիտօ, եւ այդ պարագային Թունուզի հարցը վերջնը պիտի բլլայ իր նմանին մէջ :

ԳՈՐԾԱԴՈՒԼԸ՝ ԱՅՍՕՐ

Ինչպէս ծանօթ է, վերջերս կարգ մը գործադուլներ եղան Ֆրանսայի մէջ: Այսօր՝ երեքշաբթի ընդհանուր գործադուլ մը պիտի բլլայ: Տրուած տեղեկութեանց համաձայն 24 ժամ աշխատանքը պիտի դադրեցնեն .—

1 .— Պաշտօնեաները . փակ պիտի մնան նախարարութիւնները, նահանգապետութիւնները, թաղապետարանները, դանձերը եւայլն :

2 .— Փակ պիտի մնան թղթատարական գրասենեակները . նամակ, հեռաձայն (հաւանաբար) եւ հեռագիր պիտի չըլլան, ձայնասփիւռի կեդրոնական գրասենեակն ալ պիտի գոցուի :

3 .— Հիւանդանոցներու մէջ վարչական սպասարկութիւնը պիտի դադրի, թէեւ հիւանդներու խնամք պիտի տարուի : Ծրնողքներէն պիտի խնդրուի որ այցելութիւն չտան :

4 .— Բացի համալսարաններէն, բոլոր կրթարաններու ուսուցիչները դաս պիտի չտան :

5 .— Ձայնասփիւռ ու հեռատեսիլը (թէլէվիզիոն) հաւանաբար դադրին կէսօրէն մինչեւ ժամը 20:

6 .— Ճամբորդատար սպասարկութիւնները հաւանաբար չարունակեն իրենց գործը :

7 .— Աւելածուները պիտի չաշխատին :

8 .— Օդանաւային սպասարկութեան մէկ մասը պիտի փեղչուի . յապաղումներ պիտի բլլան :

9 .— Սահմանագլուխներու վրայ՝ ոչ մէկ հսկողութիւն . մաքսատուներու պաշտօնեաները չեն աշխատիր :

10 .— Ջուրը՝ որոշ չափով : Ուշադրութիւն՝ ջերուցիչներուն (շոգ - օ) :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ օդային ուժը արձակեց միջերկրային նոր հրթիռ մը՝ Սնարք, որ ութ հազար քիլոմեթր անդին գտնուող իր թիրախին հասաւ ու կեղծ ջրածին ռումբ մը արձակելով վերադարձաւ իր մեկնակէտը : Սնարքը ռմբակոծիչ մըն է, որ առանց օդաչուի թռիչք կը կատարէ, մասնաւոր գործիքով մը իր ուղղութիւնը ստանալով: Տարբեր ուղղութեամբ արձակուած՝ օդին մէջ կարելի եղած է փոխել իր ընթացքը եւ տանիլ որոշուած թիրախին : Փորձը յաջողութեամբ պսակուած է :

ՄԵՔՍԻԿԱՅԻ Տնտեսական եւ Առեւտրական նախարար Լոյօ Փարիզ եկաւ, ֆրանսական կառավարութեան հրաւէրով :

ՖՐԱՆՍԱՅԻ Արտաքին նախարարութեան ներկայացուցիչ Մորիս Ֆոր վերադարձաւ Գերմանիայէն, ուր ուսումնասիրած էր կարգ մը կէտեր՝ որոնք պիտի քննուին Ատլանտեան Ուխտի ժողովին մէջ :

ԵՐԿԱԹՈՒՂԻԻ ծանր արկած մը պատահեցաւ շաբաթ օր Լա Րօշ Սիւր Իոն : Ցարդ 29 մեռեալ կայ եւ բազմաթիւ վիրաւորներ : Հանրօգուտ Շինութեանց նախարարը, Պօնըֆուս, կիրակի օր գնաց տեղւոյն վրայ կատարելու համար պէտք եղած քննութիւնները : Նախարարը յայտնեց որ վերջերս չատցած են նման արկածները Ֆրանսայի մէջ եւ յայտնեց թէ պատասխանատու պաշտօնեաները արդէն ձերբակալուած են :

ԼՈՆՏՈՆԷՆ պաշտօնապէս կը հաղորդուի թէ մարեչալ Մոնկոմըրի 1958 Սեպտեմբեր 20ին պիտի ձգէ իր պաշտօնը՝ ծերութեան պատճառով :

ՎԵՐԻՆ ԼՈՒԱՌԻ մէջ զինուորական օդանաւ մը ջախջախուեցաւ՝ կրակ առնելէ վերջ : Օդաչուն եւ իր օգնականը ածխացան :

ՓԱՐԻԶ - ԼԻԼ չոգեկառքին մէջ մօտ ամենէն հեռաձայններ պիտի հաստատուին : Ճամբորդները պիտի կարենան օգտագործել զանոնք :

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

Օր . Լիտի Պիչաքճեան, ողբացեալ Բարսեղ Շահպազի թոռնիկը, Յունիսին յաջողութեամբ անցուցած է հիւանդապահուհիներու պետական վարժարանին քննութիւնները եւ ստացած է վկայական : Ներկայիս կը պաշտօնավարէ Հանրային խնամատարութեան հիւանդանոցին մէջ :

Օր . ԼԻՏԻ ՊԻՉԱՔՃԵԱՆ
ԵԴՈՒԱՐԴ ՊԱՍՄԱՃԵԱՆ
Ամուսնացած

3 Օգոստոս, 1957 Պանեէօ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ

ՍԷՆ ՇԱՄՈՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ . Յ . Դ . «Վարուժան» կոմիտէի եւ մասնակցութեամբ Նոր Սերունդի :

Այս Շաբաթ, երեկոյեան ժամը 8.30-ին, Սալ Ժան տ'Արքի մէջ :

Կը նախագահէ ընկ . ԱՐՄԵՆԱԿ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ :

Կը խօսի ընկ . Վ . ԻՇԽԱՆԵԱՆ

Գեղարուեստական բաժին.— Երգ, խմբերգ, արտասանութիւն :

Մուտքը ազատ է :

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼՍԱՐԱՆ

Հերթական դասախօսութիւնը այս երեքշաբթի ժամը 21ին, Ռեժան սրճարանին առաջին յարկը :

Դասախօս՝ Պ . ԿԱՐԱՊԵՏ ՓՕԼԱՏԵԱՆ

Նիւթ՝ Եղիշէ Չարենց (ծննդեան վաթսունամեակին առթիւ) :

Չարենցէն կ'արտասանէ Օր . Ժիւլիէթ Աւետիսեան :

Մուտքը ազատ է :

Այրի Տիկին Բերուզ Թ . Այվազեան (Լիոն), Այրի Տիկին Պզտիկեան (Քլամար), Տէր եւ Տիկին Ալեքսան Տիրատուրեան եւ զաւակները (Լիոն), Տէր եւ Տիկին Հայկազուն Տիրատուրեան եւ զաւակը (Լիոն), Տէր եւ Տիկին Արմէն Տիրատուրեան եւ զաւակները, Զատիկ Այտընեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Պզտիկեան եւ զաւակները (Վիէն), Այրի Տիկին Այտընեան, Տէր եւ Տիկին Արսլանեան եւ զաւակները, Այրի Տիկին Գալայճեան (Պուլկարիա), Այրի Տիկին Այտընեան եւ զաւակները (Հայաստան), Այրի Տիկին Պաղտասարեան (Կահ), Տէր եւ Տիկին Վահան Պաղտասարեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Յ . Գրիգորեան, Զաքարեան եղբարք, եւ իրենց զաւակները, Պզտիկեան Թորոս եւ զաւակները խոր կսկիծով կը ծանուցանեն իրենց ամուսնոյն, եղբօր, քեռայրին, մօրեղբօր եւ ազգականին՝

ԹԱԳՒՈՐ ԱՅՎԱԶԵԱՆԻ
(Մեծ Նոր գիւղացի)

մահը որ տեղի ունեցաւ 65 տարեկանին, 16 Նոյեմբեր շաբաթ օր, իր քրոջ բնակարանը, 19 Րիւ Անթուան Բուրպարիէն, Քլամար :

Յուղարկաւորութիւնը Չորեքշաբթի, 20 Նոյեմբեր, առաւօտեան ժամը 8.30ին իր բնակարանը, ուրկէ մարմինը պիտի ամփոփուի Իսսի գերեզմանատունը իրենց ընտանեկան դամբարանին մէջ :

Մասնաւոր մահազդ ղրկուած չըլլալով, կը խնդրուի ներկայս իբր այդ նկատել :

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԼՍԱՐԱՆ

Հերթական դասախօսութիւնը այս չորեքշաբթի իրիկուն, ժամը 21ին, Քաւէ սրճարանին վերնայարկը : Կը խօսի՝ ԿԱՐԱՊԵՏ ՓՕԼԱՏԵԱՆ :

Նիւթ՝ «Հայ բանաստեղծութիւնը «Քայլէ տիւ Սիւտ»ի մէջ :

Մուտքը ազատ է :

ՀԱՅԱՍՏԱՆ
ԱՄՍԱԹԵՐԹ
(Օրգան՝ Հ . Յ . Դ . Նոր Սերունդի)

Լոյս տեսած է հոկտ.ի թիւը (10), ճոխ բովանդակութեամբ, պատկերազարդ :

Հայերէն եւ ֆրանսերէն :
Ձեռքէ՝ հատը 50 ֆրանք :
Տարեկան բաժնեգին՝ 450 ֆրանք :
Ստանալու համար դիմել՝

M. K. PAPAZIAN
25, Rue Martial-Boudet, Chaville - S. et O.

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԽՆՋՈՅՔ
«ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐ»ՈՒԱՆ ԱՌԹԻՒ

ԱՆԻԷՌԻ մէջ, Նոյեմբեր 24ին, Ընկերվարականներու սրահը, մանրամասնութիւնները յաջորդով :

ԱՌՆՈՒՎԻԼԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ . Յ . Դ . «Վարդան» ենթակոմիտէի եւ մասնակցութեամբ Կապոյտ Խաչի մասնաճիւղին եւ Նոր Սերունդի խումբին :

Այս կիրակի կէսօրէ վերջ ժամը 5էն 11, եկեղեցիին սրահը :

Կը խօսի ընկեր ՀԱՅԿ ՍԱՐԳՍԵԱՆ

Գեղարուեստական բաժնին կը մասնակցին Թատրոն ԳԱՐԵԳԻՆ :

Ճոխ պիւֆէ : Տախքերու մասնակցութիւն :

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԱՆԻԷՌ - ՊՈՒԱ ՔՈԼՈՄՊԻ Հ . Յ . Դ . «Արամ» ենթակոմիտէի եւ «Շաւարշ Միսաքեան» խումբի ժողովը այս չորեքշաբթի իրիկուն ժամը 21ին, ընկերվարականներու սրահը, Ավընիւ - տ'Արժանթէօյ : Կարեւոր օրակարգ :

ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ
GALERIE ROR VALMAR
58, RUE DE BOURGOGNE
ԺԵՐԱՆԵԱՆի վերջին գործերը
մինչեւ
— ՆՈՅԵՄԲԵՐ 28 —

"ԱՆԴԱՍՏԱՆ"Ի ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՆԵՐԸ

Այս Հինգշաբթի, երեկոյ ժամը 9ին Սոսիէթէ Սավանթի թիւ 1 նոր սրահին մէջ, 28 Րիւ Սերփանթ (Մեթրօ Սէն - Միշէլ)

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

Կը խօսին՝

Արդի հայ գրականութեան հարցերուն մասին

ՄԱՐՍԷԼ ՏԸԼԱՆՈՒԱ, ԼԻՒՔ - ԱՆՏՐԷ ՄԱՐՍԷԼ, ՎԱՀԷ ՔԱՉԱ, Կ . ՓՕԼԱՏԵԱՆ եւ ԲԻՒԶԱՆԴ ԹՕՓԱԼԵԱՆ :

Գեղարուեստական բաժին, որուն կը մասնակցին

ԼԻՏԻԱ ԿԱՐԻՆ (ԻԶՔԱԼԱՅԵԱՆ)

ԱՐՏԱՇԷՍ ԳՄԲԷԹԵԱՆ, ՆՈՒՐՀԱՆ ՄԱՐԳԱՐԵԱՆ, ԳՐԻԳՈՐ ՄԵԼԻՔԵԱՆ

Մուտքը ազատ է :

ՈՐԲԵՐՈՒ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԱՐՄՆԻ - ՓԱՐԻԶԱՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆ

ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՆՑԻԿ ՑԵՐԵԿՈՅԹԸ

ՆՈՅ . 24ԻՆ, ԺԱՄԸ 16ԷՆ 24 Կռանտ Օթէլի շքեղ սրահներուն մէջ

ՍԱՎԱ ՆԷՍԿՈՒՅԻ հռչակաւոր նուագախումբը եւ հաճելի անակնկալներ

Կը խնդրուի ապահովել սեղանները հեռաձայնելով ՓԱՍԻ 64.90

Մուտք 500 ֆրանք

ՊՈՄՈՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Ֆ . Կ . Խաչի մասնաճիւղին վարժարանը վերաբացուած է արդէն Հոկտեմբերի բակերէն ի վեր, ուսուցչութեամբ Պ . Վահրամ Կ . Պապոյեանի :

Արձանագրութիւնները տեղի կ'ունենան Ս . Սահակ - Մեսրոպ սրահին մէջ :

Կը հրաւիրենք Պոմոնի յարգ . ծնողները որ շարունակեն վառ պահել իրենց սէրը հանդէպ Կապ . Խաչի կրթարանին ուր մեր զաւակները կը ստանան Ազգ . ոգի եւ հայերէնի բաւականաչափ պաշար :

Ֆ . Կ . Խաչի Պոմոնի մասնաճիւղի Վարչութիւն

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Սէն Ժերմէ Թաղ . Խորհուրդը, խորին շնորհակալութեամբ ստացած է : ողբացեալ Տիկին Սիրարփի Կասաուքեանի՝ կրակծուի մահուան առթիւ փոխան ծաղկի - պսակի հետեւեալ նուէրները թաղիս դպրոցին, եկեղեցւոյ եւ այլ ազգային հաստատութեանց :

Ոմն, 1500 ֆրանք, Սէն Ժերմէի Կապ . Խաչ, Պ . Պ . Կարապետ Ասարլըքեան, Մանուկ Տէյիրէքեան, Արամ Գիթթաղեան հազարական ֆր ., իսկ Պ . Արշակ Արդումանեան հինգ հարիւր, ի նպաստ դպրոցին : Պ . Պ . Ոմն եւ Կարապետեան ընտանիք 1500ական, Գուրգէն Կասաուքեան եւ զաւակունք, Գրիգոր Վարուժանեան, Գրիգոր Դաւիթեան, Կարապետ Մահմուդեան հազարական, ի նպաստ եկեղեցւոյ : Տէր եւ Տիկին Յովհաննէս Սիմոնեան հազար ֆր . ի նպաստ Փարիզի Մշակոյթի Տան :

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Եկեղեցիին վարչութիւնը կը ծանուցանէ թէ՝ իր հիմնած հայերէն լեզուի եւ հայրենագիտութեան դասընթացքը կը վերսկսի 19 Նոյեմբեր Գշ . օրուընէ, դասախօսութեամբ ձեռնհաս ուսուցիչի մը, Բարեգործականի սրահին մէջ, ինչպէս նախորդ տարիներ, 19ա : Րիւ Վանթիւր, ժամը 19-21, ամէն Երեքշաբթի եւ Ուրբաթ : Ծնողները կը հրաւիրուին օգտուիլ առիթէն՝ արձանագրելով երկուսեռ եւ ամէն տարիքէ իրենց զաւակներ, զաւակաց պաշտօնն :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Տէր եւ Տիկին Յարութիւն Արապեան եւ պարագաները իրենց խորին շնորհակալութիւնները կը յայտնեն բոլոր անոնց որոնք անձամբ, գրաւոր, ծաղկեպսակով կամ բարենպատակ նուիրատուութիւններով մասնակից եղան իրենց սուգին՝

ԷԼԻԶ ՔԻՒՉԻՒՔԵԱՆԻ

մահուան առթիւ :

×

Լիոնի Եկեղեցւոյն Յանձնախումբը հրապարակաւ իր անկեղծ շնորհակալութիւնը կը յայտնէ Լիոնի ծանօթ վաճառական երկրաչափ ելեկտրագէտ Պ . Ռուբէն Աւետիսեանի, որ Շինութեան Յանձնախումբին կոչին երկրորդ անգամ ըլլալով կը պատասխանէ դարձեալ հազար ֆրանքի կարեւոր գումար մը նուիրելով :

×

Լիոնի Եկեղեցւոյն Տիկնանց Միութիւնը շնորհակալութեամբ ստացաւ հետեւեալ նուէրները ի նպաստ Լիոնի Եկեղեցւոյ շինութեան : Տիկին Սուլթան Սէֆէրեանէ հազար ֆրանք : Տիկին Մառի Նաճառեանէ իր ամուսնոյն տարելիցին համար հազար ֆրանք, Պ . Յարութիւն Տէր Յակոբեանէ իր ամուսնութեան տարեդարձին հինգ հազար ֆրանք :

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ Օգն . Մարմնի Ֆէօսանվիլիէի օգտակարութեան կայանին կը նուիրեն .—

Տէր եւ Տիկին Արուս հինգ հարիւր ֆր ., Տիկին Ասլանեան հազար, Տէր եւ Տիկին Սէֆէրեան հազար, Տիկին Սանթուրճեան հազար, Պ . Մերուն Ասատուրեան հինգ հարիւր ֆրանք :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Հայ Կարմիր խաչի օրը 11 Մայիս 1958 ժամը 14ին Սորպոնի ամփիթատրոնին մէջ :

Imprimé sur les presses du journal HARATCH
17, Rue Bleue, 17 — PARIS (9e)

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925 — Tél. : PRO. 86-60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. PARIS 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամս. 1600

Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք : Հատը 12 ֆր.

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 20 ՆՈՅԵՄԲԵՐ — MERCREDI 20 NOVEMBRE 1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8047 — 33e ANNEE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3848

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՀԱՄԱՐԱԲԱԿԱՆ ՃԱԿԱՏԸ

Պահրէյնի կցումը Թեհրանի կառավարութեան կողմէ՝ իբրեւ 14րդ նահանգը Իրանի՝ այժմէական կը դարձնէ Պարսից Ծոցին շուրջ համախմբուած արաբական փոքրիկ իշխանապետութեանց հարցը :

Ինչպէս գրեցինք (Յառաջ, 16 Նոյ.), Անգլիա թոյլ պիտի չտայ, որ երրորդ պետութիւն մը իր թեւարկութեան տակ առնէ Պահրէյնը կամ Պարսից ծոցի շէյխութիւններէն որեւէ մէկը :

Արաբ ազգայնական շարժումը, որ վերջին պատերազմէն ի վեր լայն համեմատութիւններ ստացաւ եւ օր ըստ օրէ աւելի եւս կը զարգանայ, իր սահմանները կը դնէ Ատլանտեան ովկիանոսէն մինչեւ Պարսից ծոց, մինչեւ Հնդկաց ովկիանոսի հիւսիս-արեւմուտքը :

Ներկայ պայմաններուն մէջ անկարելի է ստեղծել համարաբական մեծ կայսրութիւն մը, ինչպէս կ'երազեն կարգ մը թունդ ազգայնամոլներ : Կարելի չէ նոյնիսկ արաբական դաշնակցային պետութիւն մը կազմել :

Նորագոյն արաբախօս երկիրները վերջին ծայր նախանձախնդիր են իրենց անկախութեան եւ չեն ուզեր որեւէ պայմանով հրաժարիլ գերիշխանութեան որոշ ստորոգելիներէն :

Առկէ զատ Արաբական Լիկայի փորձը ցոյց տուաւ թէ արտաքին քաղաքականութեան մարզին մէջ համերաշխ գործունէութիւնը գլխաւոր առաքինութիւնը չէ այս խմբակցութեան : Եգիպտոս ու Սուրիա Լիկայի միւս անդամներուն բոլորովին հակոտնեայ քաղաքականութեան կը հետեւին : Յորդանանի դէմ այդ երկու երկիրներու բռնած թշնամական դիրքը կարեւոր ճեղք մը բացած է համարաբական միացեալ ճակատին մէջ :

Հակառակ այս իրողութեանց, արաբախօս երկիրներու ազգայնական շարժումը կը ծաւալի՝ հասնելով մինչեւ Պարսից ծոց, ուր կեդրոնացած են քարիւղի անսպառ հանքերը : Անոնցմէ առաւելապէս կ'օգտուին՝ բացի քարիւղի եւրոպական ու ամերիկեան ընկերութիւններէն՝ տեղական կէս-ինքնավար շէյխերն ու իրենց բնտանիքները : Փոքրիկ բաժին մըն ալ կը հասնի տեղացի բնակչութեան :

Գնդապետ Նասր, քաջալերուած Սովետ. ընկերութեան աջակցութենէն, ծրագրած է առաջարկել քարիւղ արտադրող արաբական պետութեանց — Սէուտի Արաբիա, Իրաք եւ Պարսից ծոցի իշխանապետութիւններ —, որ «սեւ ոսկի»ի շահագործումէն ստացուած դումարները համեմատական չափով բաժնուին արաբական երկիրներուն միջեւ :

Այդ կը պահանջէ, ըստ իրեն, արաբական համերաշխութիւնը :

Սուրիա, Լիբանան ու Յորդանան քարիւղ չեն արտադրեր, սակայն նաւթատար խողովակները կ'անցնին իրենց հողերէն եւ ատոր համար որոշ գումար կը ստանան : Մինչդեռ Եգիպտոս, որ իր 22 միլիոն բնակչութեամբ աւելի բազմամարդ է քան Միջին Արեւելքի բոլոր արաբական երկիրները միասին առած՝ ո՛չ մէկ կերպով կ'օգտուի քարիւղի հասոյթներէն...

Տարակոյս չկայ, որ այս ծրագիրը բուռն ընդդիմութեանց պիտի հանդիպի ո՛չ միայն քարիւղարտադրող պետութեանց, այլ նաեւ ու մանաւանդ նաւթահանքերը շահագործող ամերիկեան ու եւրոպական ընկերութեանց կողմէ, որոնց ետեւ կանգնած են իրենց կառավարութիւնները :

Մոսկուայի փորձը ցոյց տուաւ թէ դիւրին չէ չափուիլ դրամատիրական պետութեանց հետ :

Նման յանդուգն քայլ մը առնելէ առաջ, անհրաժեշտ է կատարել համերաշխութիւն եւ շահերու նոյնութիւն ստեղծել արաբախօս երկիրներուն միջեւ, Եգիպտոսէն մինչեւ Պարսից ծոց : Այս դժուարին գործը գլուխ հանելէ վերջ է միայն, որ կարելի կ'ըլլայ գործադրել Եգիպտոսի Հանրապետութեան նախագահին ինքնատիպ ծրագիրը :

Բայց կ'արժէ քիչ մը ծանօթանալ Պարսից ծոցի շրջանի փոքրիկ իշխանապետութեանց :

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԱՏԼԱՆՏԵԱՆ ՈՒԽՏԸ ԵՒ ԹՈՒՆՈՒԶ

ԱՆԳԼԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Թունուզի յանձնուած անգլեւամերիկեան զէնքերը տակաւին կը շարունակեն մտահոգութեան առարկայ դառնալ : Անգլիոյ Խորհրդարանին մէջ, Թունուզ ղրկուած բրիտանական զէնքերու մասին խօսելով Արտաքին Նախարար Սելվին Լոյտ յայտարարեց. — Մեր որոշումը Ատլանտեան միասնականութեան դէմ չէ. անոր նպատակն է պաշտպանել Արեւմուտքին շահերը, ոչ մէկ անպատեհութիւն կայ, որ Ֆրանսական կառավարութիւնն ալ իր կարգին զէնք տայ Թունուզի :

Հարցումի մը պատասխանելով, Արտաքին նախարարը բսաւ. — Անձնապէս պատրաստ եմ մասնակցելու որեւէ վիճաբանութեան, Թունուզի տրուած զէնքերու հարցին լուծում մը գտնելու համար : Կը ցաւիմ որ տարակարծութիւններ ծագեցան մեր եւ Ֆրանսական կառավարութեան միջեւ :

Սելվին Լոյտ յիշեց չորս պատճառներ, որոնց համար տրուած էր այդ որոշումը.

1.— Անկախ պետութիւն մը ըլլալով՝ Թունուզ իրաւունք ունի զէնք ստանալու, իր սահմանները պաշտպանելու համար :

2.— Թունուզի կառավարութիւնը երաշխիքներ տուաւ, որ այդ զէնքերը Ալժերիոյ ապստամբներուն ձեռքը պիտի չանցնին :

3.— Ֆրանսա, որ Թունուզի աւանդական հայթայթիչն է, զէնք պէտք է տար անոր :

4.— Դժբախտութիւն պիտի ըլլար, եթէ Թունուզ զէնք ստանար խորհրդային արբանեակէ մը :

Մեծն Բրիտանիոյ Արտաքին նախարարը երեսփոխաններուն առջեւ Ֆրանսայի եւ Թունուզի կառավարութեանց խորհրդակցութիւններուն պատմականը ըրաւ եւ, յայտնեց թէ Նոյեմբեր 14ին երկու կառավարութիւնները համոզուած էին, որ համաձայնութիւն գոյացնելու ի վիճակի չէին եւ անկարող՝ շարունակելու Թունուզի յանձնելիք ֆրանսական զէնքերու շուրջ սկսած բանակցութիւնները : Այս իրողութիւնը նկատի առնելով, որոշեցինք զէնք տալ Թունուզի, աւելցուց Լոյտ :

Արտաքին նախարարը իր խօսքը վերջացնելով, յայտարարեց թէ անգլիական եւ ֆրանսական կառավարութեանց միջեւ ծագած այս տարակարծութիւնը կասկածի պէտք չէ ենթարկէ Անգլիոյ անկեղծ զգացումները՝ Ֆրանսայի հանդէպ :

(Շարունակութիւնը կարդալ .Դ. էջ)

ՎՐԻՊԱԿ.— Երէկուան խմբագրականին Բ. սիւնակի, Բ. պարբերութեան առաջին տողերը պէտք է ըլլան. — «Արդիւնքն այն եղաւ, որ Կիլիկիան պարպուեցաւ, սակայն ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ չկրցաւ արգիլել եւայլն »:

Օրը Օրին

« ՄԵՐ ԳԻՒՂՆ Ո՞ՒՐ Ա »

Ինձի պատմեցին երկու բառով, ես ալ ձեզի պատմեմ տասը բառով :

Գիւղացի հայ մը, ջերմեռանդ հայրենասէր, որ քառասուն տարի օտարին հացըն ու ջուրը վայելելէ ետքն ալ, տակաւին մոռցած չէր իր գիւղը, գրոց-բրոցի մը մասներով, գրել կուտայ հետեւեալ աղերսագիրը՝ մեր ծանօթ հերոսներէն մէկուն .

— Տիրոջ օրհնութիւն անպակաս եղնի քո վերայ, իմ ազիզ ընկեր : Թէ որ իմ վիճակ հարցնես, փա՛ռք Աստուծոյ *սաղ* եմ, լաւ եմ..., Երեխէքն էլ լաւ են ու կը պագնեն քո ձեռք : *Ամա* էս օրեր իմ ներս տակնուվրայ ա : Կը լինի մի տաս օր, գնացի մեր քեռու տուն : Էնտեղ իմ քեռու որդի բաց արեց մէկ քարտէս Հայաստանի : Վերցրի իմ ակնոց որ էնտեղ տեսնեմ իմ գիւղ : Վա՛յ ես քոռանամ ու *սաղ – սաղ* գերեզման մտնեմ — մեր գիւղ չկայ : Քեռուս կնիկ ասաց որ էդ քարտէս շինել ա մէկ հայ վարժապետ : Ասացի էս ինչա՞ղ վարժապետ ա որ մեր գիւղ չի դրել : Քեռուս երդիք իմ գլխուս վերայ թափուեց, ընկեր ջան : Հիմի դու էլ վեր կաց ու սաս թէ Մխօ դու կարդալ – գրել որ չես իմանայ, ախր ո՞նց տեսար թէ քո գիւղ էնտեղ չի : Ազիզ ընկեր, երդում կ'անեմ, մեր գիւղն էնտեղ չի : Հալա դու մի ասա թէ ո՞նց կը լինի որ մէկ վարժապետ կը մոռանայ մեր գիւղ... Մեր գիւղն ո՞ւր ա : Մեր գիւղի *պաղ* ու *պաղչէն* դու քո աչքերովն ես տեսել : Մեր գիւղ ունէր վանք, եկեղեցի, դպրատուն, քահանայ, տիրացու, Սուրբ Միւռոն, խաչ, Աւետարան, Ծնընդայ, քշոց, խունկ, բուրվառ : Որ մեր եկեղեցում երգում էին «Առաւօտ Լուսոյ», իրեշտակները խորանի վերայ էին իջնում : Որ մեր Տէրտէր «Ազատեցէ՛ եւ զմեզ մարդասէրն Աստուած» էր աղօթում, ողջ ժողովուրդ «Ամէ՛ն» էր ասում : Մեր արեւ տաք էր, մեր երկինք պայծառ, մեր ջուր զուլալ : Մեր գիւղի սարն էնքան էր բարձր որ կատարից կը բռնէիր լուսինն էլ, աստղերն էլ... Մեր գիւղ ունէր կտրին տղերք : Մեր գիւղ ունէր հարսներ ու աղջկերք՝ ամէն մի հատ մի թագուհի : Մեր գիւղ ունէր հանդ ու այգի, կալ ու կամնող, արօր, եզներ, ոչխար, այծ ու ճանճուն հաւքեր... Մեր գիւղի միջով են անցել Խրիմեան Հայրիկ, Անդրանիկ, Մուրատ, Սեբոբ, Ջաւարեան, Ռոստոմ, ո'ր մէկն ասեմ...

— Մի ասա' տեսնեմ, ազիզ ընկեր ջան, ո՞նց կը լինի որ մեր կուսակցութիւն կը թողնի որ մի վարժապետ մեր գիւղ չդնի քարտէսի վերայ... Մեր գիւղն ո՞ւր ա.. Էսպէ՛ս էլ անիրաւ գործ կը լինի՞, աղբէր... Հրաման կ'անե՞ս ազիզ ընկեր, գիր նամբեմ մեր Կոմիտէին որ սրբագրի էս չարիք... Մի քիչ փող ունեմ բանկում : Շատ բան չի : Ի՞նչ կ'ասես, նամբե՞մ էդ փող Կոմիտէին որ հաւաքէ էդ քարտէսներ եւ թոնիրի կրակների մէջ նետի ու շինի մի նոր քարտէս ուր լինի մեր գիւղ... Կեանքումս շատ դարդ եմ տեսել, բայց էս դարդի նման դարդ չեմ տեսել... Մի ճար, մի ճարակ անես, ազիզ ընկեր, քո հոգուն մատաղ եղնիմ : Էնպէս անես որ մեր գիւղ եղնի Հայաստանի քարտէսի վերայ... Ասա', իմ փող նամբե՞մ...

×

Դրկուած նամակին ընդօրինակութիւնը չէ որ կուտամ այստեղ, որովհետեւ նամակը աչքերովս տեսած չեմ : Կարեւորը այս տողերուն տուն տուող ոգին է :

Ընկեր Մխօ, անգրագէտ գիւղացի չի կրնար հանդուրժել որ իր գիւղը Հայաստանի քարտէսին վրայ չըլլայ : Որովհետեւ իր գիւղը ունէր — երէկ — կտրին տղերք, թագուհիի նման հարսներ ու աղջիկներ : Ու նաեւ Սուրբ Միւռոն : Կարելի՞ է Հայաստանը երեւակայել առանց ընկեր Մխոյի գիւղին :

— Մեր գիւղն ո՞ւր ա...

Պիտի կարենա՞նք հայրենիքի կարօտը, սէրը, ա՛յս չափով վառ պահել մեր կուրծքին տակ, յաջորդ յիսնամեակին ալ՝ մեր բառերով ու նառերով :

ԵՒՐՈՊԱՑԻ

ԻՍՐԱՅԷԼ ԵՒ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐԸ

Իսրայէլի Վարչապետ Պէն Կուրիոն յայտարարեց, թէ իր երկիրը խաղաղութիւն կ'ուզէր արաբ դրացիներուն հետ : Խորհրդարանին մէջ արտաքին քաղաքականութեան շուրջ բացուած վիճաբանութենէն ետք, երեսփոխանական ժողովը 12ի դէմ 63 ձայնով վստահութիւն յայտնեց կառավարութեան :

Ամերիկացի լրագրող մը հարց տուած է Նասրի, թէ ապագային խաղաղութեան դաշինք մը կարելի՞ է ստանալ Իսրայէլի հետ : Եգիպտոսի Նախագահին պատասխանը ժխտական եղած է :

Միւս կողմէ, Դամասկոսի ձայնասփիւռը յայտարարեց, թէ Թրքական իշխանութիւնները որոշած են Սանճաքէն արտաքսել բոլոր անոնք՝ որ թրքահպատակ չեն :

Սուրիական Իտլպ գիւղէն Թուրքիա տարուած Սուրիացիներ հարցաքննուած են ու ազատ արձակուած :

Թրքական օդանաւ մը թռիչք կատարած է Սուրիական հողամասին վրայ : Այս բոլորը յիշատակելով սուրիական ձայնասփիւռը ցոյց կուտայ, թէ երկու երկիրներու միջեւ գոյութիւն ունեցող լարուածութիւնը չէ մեղմացած :

ԱՆԳԼԻԱ պատրաստ է, որ Մակարիոս Արք. Կիպրոս վերադառնայ :

ՏԽՐՈՒՆԻ. — ՄԱՐԳՕ ՊԱԳԸՐՃԵԱՆ

Լոնտոնի մեր թղթակիցը կը հեռաձայնէ թէ Նոյեմբեր 12ին Մանչեսթրի մէջ մեռած է Պ. Մարգօ Պագըրճեան : Ողբացեալը շուրջ 75 տարեկան, բնիկ Իզմիրցի՝ ծանօթ էր իր բարենպատակ գործունէութեամբ :

Համաձայն ողբացեալին կտակին, մարմինը այրուած է Նոյեմբեր 18ին եւ աճիւնները դրուած են Մանչեսթրի եկեղեցին : Լոնտոնի Համայնական Խորհուրդին կողմէ ներկայ եղած է Պ. Արշակ Սաֆրաստեան :

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ

ՏՊԱՐԱՆԻ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

Պէյրութէն ՈՄՆ	4.000
Ընկ. Ստեփան Պալեան (Առնուվիլ)	1.000

ԵԳԻՊՏՈՍԻ եւ Անգլիոյ միջեւ համաձայնութիւն գոյացած է եւ Մեծն Բրիտանիա հարցումներ պիտի ընէ՝ Սուէզի մէջ եղած վնասներուն համար :

ԱՄԵՐԻԿԵԱՆ նաւատորմիղը որոշուած թուականէն առաջ պիտի արձակէ արուեստական իր արբանեակը. այսինքն՝ 1958էն առաջ :

ՊԵՏՐՈՍ ՄԵԾԻ ԿՏԱԿԸ

Այս օրերս կը խօսուի Մեծն Պետրոսի վերագրուած հռչակաւոր կտակի մասին, ցոյց տալու համար որ Ռ. Միւռթիւնը կը հետեւի ցարերու քաղաքականութեան: Կտակը վաւերական չէ: Պատմաբանները քննութեան առած են յաճախ հարցը եւ ենթադրութիւնները միացն կատարած են: Առաջին անգամ հրատարակած է Լըվիւը «Ռուսիոյ յառաջդիմութեանց եւ քաղաքականութեան մասին» գործով, 1811ին: Ոմանք վերագրած են Էօն ասպետին, բայց Ֆրանսայի Արտաքին Նախարարութեան դիւաններու մէջ պահուած Էօնի վաւերական ցուցերը ոչ մէկ հետք ցոյց կուտան կտակին, որ ամբողջութեամբ հրատարակուեցաւ 1836ին հրապարակագիր կայսրէն կողմէ, քարոզչական նպատակով: Կտակը ներկայացուած է որպէս թէ վերցուած ցարերու պաղտնի դիւաններէն: Վերջերս պատմաբանին համաձայն, կտակին ամփոփումին հեղինակն է Նափոլէոն Առաջին: Նոյն գաղափարը կը յայտնէ նաեւ Ուալիսճեւսքի «Պետրոս Մեծ» գործին մէջ:

Սակայն կտակով բանաձեւուած է ռուս քաղաքականութիւնը:

Կը հրատարակենք էական կէտերը.

ՅՕԴ. Ա.— Ռուս ազգը միշտ պատերազմական վիճակի մէջ պահելու է, դիմուողները միշտ պատերազմի վարժեցնելով:

ՅՕԴ. Գ.— Միջամտելու Եւրոպայի, մանաւանդ Գերմանիոյ մէջ տեղի ունեցած ամէն գործերու, վէճերու եւ հակամարտութեանց, ամէն անգամ որ առիթը ներկայանայ:

ՅՕԴ. Դ.— Երկպառակութիւններ սերմանելու է Լեհաստանի մէջ, կաշառելու է լեհ երեւելիները, նախանձ արթնցնելու է իրենց մէջ, իրարու դէմ եւ ռուս ազգեցութիւնը տարածելու է պետական ժողովներու մէջ: Թագաւորի ընտրութեան պարագային վարչութեան գլուխ բերել աշխատիլ Ռուսիոյ համակիրները, կաշառելով մեծերը եւ յետոյ գանոնք պաշտպանելու եւ վտանգէ վերծ պահելու պատրուակով, Լեհաստանի մէջ գործ մտցնել եւ աստիճանաբար դրաւել երկիրը: Եթէ սահմանակից երկիրները բոզքէն եւ դժուարութիւններ յարուցանեն, անոնց ալ բաժին հանել Լեհաստանէն, բայց յետոյ առիթներ ստեղծել այդ բաժիները խլելու անոնց ձեռքէն, ամբողջապէս երկրին տէր դառնալու համար:

ՅՕԴ. Զ.— Ինամութեան կապեր հաստատել գերման կայսրութեան հետ, ռուս կայսերական ընտանիքին անդամներուն գերման արքունիքէն աղջիկ առնելով: Ընտանեկան կապակցութեան չնորհիւ, կարելի է սերտ յարաբերութիւններ մշակել եւ ազդեցիկ դիրք մը ապահովելով Գերմանիոյ մէջ, գործածել զայն Ռուսիոյ չահերուն ի նպաստ:

ՅՕԴ. Ը.— Ռուսիա հետզհետէ եւ չափաւորաբար ծաւալելու է դէպի հիւսիս Պալթիկ ծովուն եւ դէպի հարաւ Սեւ Ծովուն ափերը:

ՅՕԴ. Թ.— Մերձենալու է Պոլսոյ եւ Հնդկաստանի կարելի եղածին չափ: Հետեւելով «Պոլսոյ տէրը ամբողջ երկրի իրական իշխողն է» առածին, տեւական պատերազմներ ստեղծելու է Օսմանեան պետութեան դէմ, երբեմն ալ Պարսկաստանի դէմ, որպէսզի կարելի ըլլայ տիրանալ Սեւ Ծովու, նաւարաններ հաստատելու համար հոն, որպէսզի մինչեւ Պարսից Ծոցը երկաթելու կարող ըլլանք, աշխատելու ենք վերջացնելու Պարսկաստանի քայքայումը: Անհրաժեշտ է միանգամայն բերաչամի ճամբուն վերազարձին արեւելեան երկիրներու հին առեւտուրը, Հնդկաստանը, ասիզերքի այս մթերանոցը դրաւելու համար: Այսպէս կը դադրինք Անգլիոյ ոսկիներուն կարօտ ըլլալէ:

ՅՕԴ. Ժ.— Աւստրիական կայսրութեան հետ համաձայնութիւններ կնքելու է պահնակելու եղանակով, չնայելով պայմանագրութիւնը անվթար պահել, ուժ տալու է գերմանական երկիրները դրաւելու գաղափարին, բայց թաքուն կերպով չարժելու է աւստրիական պետութիւնը կազմող դանազան տարրերը, այնպէս որ իւրաքանչիւրը Ռուսիային առանձնապէս օգնութիւն խնդրէն: Այսպէսով ապահովելու է ռուսական տեսակ մը թեւարկութիւն եւ պաշտպանութիւն Աւստրիոյ վրայ:

ՅՕԴ. ԺԲ.— Լեհաստանի հարաւային կողմերը, Հունգարիոյ Օսմ. երկիրներուն մէջ գտնուող օրթոտոքս ժողովուրդները կը մերժեն պապական հոգեւոր իշխանութիւնը, անոնք մեր պաշտպանութեան տակ առնելով, ամէնուն վրայ տեսակ մը կրօնական իշխանութեան ազդեցութիւնը բանեցնելու համար, հաստատելու ենք կրօնական պետի իշխանութիւնը, Պատրիարքութիւն մը, այսպէս մեր թշնամիներուն իւրաքանչիւր հոգեմասին մէջ Ռուսիոյ չահերուն ջերմ կուսակից օգնականներ չահած կ'ըլլանք:

ՅՕԴ. ԺԳ.— Երբ վերոյգրուած ծրագիրները իրագործուին, Շուէտ տակաւ-նայ, Պարսկաստան ընկճուի, Լեհաստան դրաւուի, Օսմ. երկիրները մեր տիրապետութեան տակ անցնին, մեր բանակները կը կեդրոնացնենք որոշ վայր մը, Պալթիկ եւ Սեւ Ծովերը կը պաշտպանենք մեր ծովային ուժերով եւ կը ձեռնարկենք սմբողջ աշխարհի տիրապետութեան, նախ Ֆրանսական, յետոյ աւստրիական պետութեանց առանձին առանձին եւ զատ-նատրար կ'առաջարկենք այս բաժանումը: Երկու պետութիւններէն մէկը կ'ընդունի մեր առաջարկը անպատճառ: Կը ջանանք

ՅԱՋՈՐԴԱԲԱՐ...

Զօրավար Ժուկովին վիճակուած էր օգնութեան հասնիլ եւ փրկել, Գերագոյն Հրամատարի առաջին քարտուղար՝ Ն. Խրուշչեւը, երբ այս վերջինը սուր եւ վտանգաւոր հակամարտութեան մէջ կը գտնուէր Խորհրդային աշխարհի մեծագոյն դէմքերէն՝ Մալենկովի, Մոլոթովի եւ Կաղանովիչի հետ: Կը պատմուի թէ կեդր. կոմիտէի նիստերէն մէկուն մէջ երբեմնի համախոհներէն մին, վրդոված, հարց կուտայ Ժուկովին. — «Հաւանաբար ձեր տեսակէտները պաշտպանելու համար հրատայլեր ալ բերած էք»: — «Եթէ անհրաժեշտ նկատուի, ես ինքս կ'առաջնորդեմ դանոնք»,— կը պատասխանէ Ժուկով:

Հինգ ամիս առաջ, Խրուշչեւ պատճառներ ունէր երախտապարտութիւն յայտնելու Ժուկովին, իր այս յայտարարութեանը համար, գիտնալով որ առանց բանակի օգնութեան, դժուար թէ կարելի ըլլար հրապարակէն քշել «պարտիա»ի ականաւոր դէմքերէն յիշեալ երեակը: Սակայն այդ օրերուն իսկ Խրուշչեւ, որ իր ձեռքերուն մէջ կ'ուզէր կեդրոնացնել խորհրդային աշխարհի դիկը, համոզուած ըլլալու էր թէ իր ներկայ «դինակիցը» կրնար վտանգաւոր «հակառակորդ» մը դառնալ ապագային:

Նոր Ստալին մը դառնալու մարմաջով, Խրուշչեւ անչուշտ քաջածանօթ էր Ժուկովին վայելած ժողովրդականութեան: Խորհրդային բազմամիլիոն քաղաքացիները առհասարակ եւ կարմիր բանակայիները մասնաւորաբար, զօրավարին ան-ուան հետ կը միացնեն Մոսկուայի եւ Ստալինկրատի հերոսամարտները չհաշած բլլալու եւ կարմիր յաղթական բանակը Պերլին առաջնորդած բլլալու արժանիք-ները:

Առժամապար Զօրավարը Մոսկուայէն հեռացնելու միտումով, — մինչեւ որ հարկ եղած միջոցները ձեռք առնուէին, — անակնկալօրէն Հոկտեմբերին սկիզբ-ները, համաձայնաբար կուսակցութեան կեդր. Մարմինը մեծ չուքով երկու չաբաթով եուկոսլաւիա ճամբեց, յետագային չաբաթով մը եւս Ալպանիա:

Զօրավարին բացակայութեան, Խորհրդային պաշտօնաթերթերը, յանկարծօրէն եւ միաբերան սկսան յայտարարել թէ համաչխարհային երկրորդ պատերազմին՝ Խորհրդային Ռուսաստան յաղթական դուրս եկաւ չնորհիւ «պարտիա»ին եւ ոչ թէ այս կամ այն զօրավարներու դինուորական չնորհքներուն: Այսպէս օրինակ «Խորհրդային նաւատորմ» թերթը կը գրէր թէ «անհրաժեշտ է ի մաի ունենալ որ հայրենական պատերազմը դեկավարողը եւ յաղթանակը ապահովողը՝ եղաւ համայնավար կուսակցութիւնը»: Այլ խօսքով կեդր. կոմիտէն, որուն գլուխ կը գտնուէր Խրուշչեւ եւ ուր կը բացակայէր Ժուկով, այսպէս կը փորձէր քանդել խորհրդային երկրի ժողովուրդին պաշտամունքի հասած սէրը հանդէպ Ժուկովին:

Պարզօրէն, Խրուշչեւ ի մաի ունէր, — խուսափելու համար չնդալից ելոյթնե-րէ, Ժուկովին «վատահել» աւելի «բարձր» պաշտօն մը, նպատակ ունենալով զրկել բանակի դեկավարի իր դիրքէն, իւրաքանչիւրին երկրակալութեան գոտ-գումը դգալ. Եթէ չէկը չերժէ, ընդդունդր մերժողին դէմ կը հանենք իրը թշնամի: Ռուսիա արեւելեան ամբողջ երկիրները դրաւած բլլալով, եւրոպական երկիրներու մեծագոյն մասին ալ տիրացած կ'ըլլայ եւ Ֆրանսական ու աւստրիական պետութիւններէն որը որ յաղթական բլլայ, իր բոլոր ուժերը դիւրաւ կրնայ չախչախել զայն:

Ցօդ. ԺԴ.— Եթէ Աւստրիա եւ Ֆրանսա մեր վերի առաջարկը մերժեն, երկուքին միջեւ դժուարութիւն սերմանելու կը չանանք, երբ Գերմանիա ընկճուած կ'ըլլայ, պատեհ առիթով Գերմանիոյ վրայ կը յարձակինք, միւս կողմէ Անատոլուի եւ այլ եւ այլ դեղերէ կազմուած մեր անպարտելի զինուորները Ազգային ծովէն, Հիւսիսային Սառուցեալ Ովկիանոսէն, Արեանկիլի նաւահանգիստէն դուրս ելլելէ առաջ մոմիդներուն հետ զուգընթացաբար Սեւ Ծովու եւ Պալթիկի մոմիդները ռուսին ֆրանսական նաւահանգիստները կը հանձնինք Միջերկրականէն եւ Հիւսիսային ծովէն, երբ Գերմանիա ընկճուած կ'ըլլայ. մբր ծառատոք այս երկու ընդարձակ երկիրները, կրնանք դրաւել, նոյնիսկ առանց պատերազմի, Եւրոպայի միւս մասերը: Այս ծրագիրը ամբողջապէս իրագործելով, ամբողջ Եւրոպա ռուսական տիրապետութեան ենթակայ կ'ըլլայ»:

Ահա մաքիաւելեական ծրագիր մը: Կտակը վաւերական չէ, սակայն ցարական պետութեան ձգտումներն ու մեթոտները վաւերական կը գտնենք զայն: Տիրացում Պալթիկ եւ Սեւ Ծովերու, բաժանում Լեհաստանի պաշտպանութեամբ փոքրամասնութեան, չարժելով Աւստրիա-Հունգարիոյ եւ Օսմ. կայսրութեան այրատան տարրերը, ասոնց պաշտպան ներկայանալով, յառաջացում դէպի Պարսից Ծոց եւ Պոլիս: Մոլոթով Հիթլերի առաջարկեց ատատ գործունէութիւն դէպի Պոլիս եւ Պարսից Ծոց, երբ Գերմանիա կը ճակատէր Անգլիոյ դէմ եւ Ֆրանսան ընկճուած էր: Հիթլէր մերժեց առաջարկը, բմբռնելով Ռ. ծրագիրը:

ԽՈՐԻՆ ԳԱԲՐԻԿԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

•

Շաբաթ, 15 Հոկտեմբեր 1955, երեկոյեան ժամը 11ին Անթիլիաս հասաւ Դպրեվանուց Տեսուչ Դերենիկ Սրբազան, վերադառնալով էջմիածնէն ուր գացած էր Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան մասնակցելու, որպէս եկեղեցական պատգամաւոր Կիլիկիոյ Կաթողիկոսութեան: Դերենիկ Սրբազան կարծել կը ձեւացնէր թէ նախորդ օր կատարուած էր, արդէն, կաթողիկոսական ընտրութիւնը, եւ յաջորդ օրն ալ ընտրեալ կաթողիկոսի օծումը տեղի պիտի ունենար, քան կանխագոյն համաձայնութեան, եւ Տեղապահի կողմէ կատարուած բազմաթիւ վճռական յայտարարութեանց: Միաբանական ժողովոյ Աթենապետ Զարեհ Սրբազան եպիսկոպոս խօսակցութեան մէջ էր Դերենիկ Սրբազանի հետ, երբ վեհարանի պաշտօնեան իրեն ներկայացուց Խոշ Արքեպիսկոպոսի (հրաժարեալ Տեղապահ) կողմէ հրապարակ հանուած նոր չրջաբերական մը, որով Միաբանական ժողովը ի նիստ կը հրաւիրուէր 20 Հոկտ. 1955, Հինգշաբթի օր, առաւօտեան ժամը 10ին, վեհարանի դահլիճին մէջ: Միաբանական ժողովոյ Աթենապետ Զարեհ Սրբազան, անակնկալի եկած այս վերջին դիմադրութեան առջեւ, իր կարգին կ'առնէր չրջաբերականը պաշտօնեային ձեռքէն, յայտնելով թէ պիտի ուսումնասիրէ զայն, եւ եթէ յարմար տեսնէ պիտի առաջարկէ եւ յանձնէ ի չրջադայութիւն: Ու այս ձեւով խափանուած կ'ըլլային Միաբանական ժողովոյ նիստերը, առաջինը կանչուած՝ Աթենապետ Զարեհ Եպիսկոպոսի, իսկ երկրորդը՝ հրաժարեալ Տեղապահի կողմէ:

Յաջորդ օր, Կիրակի, 16 Հոկտեմբերին, միաբաններէն ոմանք, առանց ժամադրութեան մասնակցելու, Աթթիլիասի հեռաձայնային կեդրոնէն առացուած բանացի հաղորդագրութեան մը վրայ, մի առ մի, վեղարները պահած իրենց վերարկուներուն ներքեւ, գաղտագողի եւ յանցաւորի երեւոյթով հետացան Անթիլիասէն եւ լեցուելով իրենց սպասող ինքնաչարժներու մէջ, եւան Գհամտուն...:

Նոյն ժամուն, պետական ապահովութեան յայտնի եւ գաղտնի պաշտօնեաները, սկսան վանքի չրջապատը լեցնել եւ ուշադրուած հարցումի մը պատասխանելով յայտարարեցին, թէ իրենց պաշտօնապէս իմաց տրուած է, որ վանքէն ներս ան-կարգութիւններ տեղի պիտի ունենան եւ իրենք եկած են առաջքն առնելու ամէն անհարիժ դէպքի: Այսպես, ուրեմն, առջին անգամն ըլլալով, Կաթողիկոսարանէն ներս պետական միջամտութիւն կը հրաւիրուէր, անյայտ լրտասւի մը կողմէ, որովհետեւ ապահովութեան պաշտօնեաները չկրցան, կամ չուզեցին ըսել, թէ որո՞ւ խնդրանքով եկած էին կաթողիկոսարան, կանխելու համար ուէ ան-կարգութիւն...: «Կամապաշտ» ընդդիմադիրները յայտնապէս ճնշում բանեցնել կ'ուզէին Աթենապետ Զարեհ Եպիսկոպոսի վրայ որպէսզի տեղի չունենայ Միաբանական Ընդհանուր ժողովոյ նիստը եւ չպաշտօնականանայ Խոշ Արք. ի հրաժարականը: Ապահովութեան պաշտօնեաները Աթենապետ Սրբազանէն ուղղակի տեղեկացան ստեղծուած կացութեան մասին, պատրաստեցին իրենց տեղեկագիրը եւ ժամանակ մը եւս վանքի չրջապատէն ներս մնալէ յետոյ մեկնեցան, յայտնելով որ զոհ գացած են խարէութեան մը: Ասոնցմէ ետքը, իրենց տեսածներն ու իմացածները, ինչպէս նաեւ իրենց քննութեան արդիւնքները մանրամասնօրէն տեղեկագրել առ որ անկ է:

Կաթողիկոսական Տեղապահի հրաժարագրին ընդունուելն ու նոր Տեղապահի ընտրութեան պարագաները մշուշոտ ու անհասկնալի կը մնան եթէ չբացատրուի, այս տագնապի ընթացքին, Դերենիկ Սրբազանի դիրքը: 15 Հոկտեմբեր 1955 Շաբաթ երեկոյ ժամը 10ի առեններէն էջմիածնէն վերադարձին, Դերենիկ Եպիսկոպոսը ոչ միայն Աթենապետ Զարեհ Սրբազանի հետ, այլ նաեւ Ս. Աթոռի Տեղապահ Խոշ Արքեպիսկոպոսի հետ ալ տեսակցած էր եւ անոնց հետ ալ խորհրդակցած: Ասոնց հետ տեսակցութեան ընթացքին, Դերենիկ Սրբազան ըսած էր թէ ինք ոչ միայն Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան մասնակցելու, այլ նաեւ Ս. Աթոռի Տեղապահ Խոշ Արքեպիսկոպոսի հրաժարականը ստանալու համար գացած էր Էջմիածին

ԿՅՈՒՆՔ

ԴՎՈՒՎԱ ՈՅՍ ՎՍԿՅՉ

Վ.

Մեկը ամսում եր։ Եկել էր Ձմեռը։ Ես ձյունը շատ եմ սիրում։ Ինձ համար ամեն տարի ձմռանը մի հրաշք է կատարվում։ Ես ինձ մի ուրիշ աշխարհում եմ զգում։ Ամեն ինչ ինձ համար նոր է թվում։ Ես ինձ նոր մարդու պես եմ զգում։ Ես ինձ ավելի ազատ եմ զգում։ Ես ինձ ավելի ուրախ եմ զգում։ Ես ինձ ավելի երջանիկ եմ զգում։ Ես ինձ ավելի կենդանի եմ զգում։ Ես ինձ ավելի ապրող եմ զգում։ Ես ինձ ավելի շնչող եմ զգում։ Ես ինձ ավելի սիրող եմ զգում։ Ես ինձ ավելի սիրված եմ զգում։ Ես ինձ ավելի հարգված եմ զգում։ Ես ինձ ավելի պատվավոր եմ զգում։ Ես ինձ ավելի ազնիվ եմ զգում։ Ես ինձ ավելի անկեղծ եմ զգում։ Ես ինձ ավելի ուղիղ եմ զգում։ Ես ինձ ավելի արդար եմ զգում։ Ես ինձ ավելի բարի եմ զգում։ Ես ինձ ավելի քաղցր եմ զգում։ Ես ինձ ավելի մեղմ եմ զգում։ Ես ինձ ավելի համեստ եմ զգում։ Ես ինձ ավելի խոնարհ եմ զգում։ Ես ինձ ավելի հեզ եմ զգում։ Ես ինձ ավելի համբերատար եմ զգում։ Ես ինձ ավելի հանդուրժող եմ զգում։ Ես ինձ ավելի ներող եմ զգում։ Ես ինձ ավելի ներողամիտ եմ զգում։ Ես ինձ ավելի ներելու եմ զգում։ Ես ինձ ավելի ներելու պատրաստ եմ զգում։ Ես ինձ ավելի ներելու կամեցող եմ զգում։ Ես ինձ ավելի ներելու ցանկացող եմ զգում։ Ես ինձ ավելի ներելու ձգտող եմ զգում։ Ես ինձ ավելի ներելու ջանացող եմ զգում։ Ես ինձ ավելի ներելու աշխատող եմ զգում։ Ես ինձ ավելի ներելու ճգնող եմ զգում։ Ես ինձ ավելի ներելու ճիգ թափող եմ զգում։ Ես ինձ ավելի ներելու ճիգ գործադր

Աշխատաւորական երեսփոխան մը հարց տուաւ, թէ միայն Ամերիկա ու Անգլիա՞ զէնք պիտի տան Թունուզի :

— Զէնք փափաքիր որ նման բան մը ըլլայ, յայտարարեց Լոյտ. մեզի համար՝ Թունուզի աւանդական մատակարարն է Ֆրանսան, որ պէտք է գլխաւոր հայթայթիչը ըլլայ՝ ապագային :

Միւս կողմէ, կարեւորութիւն կ'ընծայուի նաեւ Ֆրանսայի Արտաքին նախարար Փինոյի յայտարարութեանց, որ կատարուած է Նիւ Եորքի օդակայանին մէջ : Պատասխանելով հարցումի մը, Ֆրանսացի նախարարը ըսած է, թէ այդ խնդիրը մեծ ազդեցութիւն գործեց Ֆրանսայի հանրային կարծիքին վրայ: Այս հարցին կարեւորագոյն կէտը հոն է, որ անգլեւ-ամերիկեան զէնքերը Թունուզ հասան եգիպտականներէն առաջ: Այսուհանդերձ Ֆրանսայի հանրային կարծիքը աւելի՛ պիտի յուզուէր՝ եթէ այդ զէնքերուն մէկ մասը անցնէր ալժերիացի ապստամբներուն ձեռքը :

Փինօ յիշեցուց, թէ Ալժերիացիներու զինեալ խումբեր պարտօրէն կ'անցնէին Թունուզեան սահմանէն եւ նոյնիսկ, Թունուզի մէջ կը պատրաստուէին:

Գալով խորհրդային զէնքեր գրկուելու հարցին, ըստ իրեն նման խնդիր մը գոյութիւն չունէր: Նախագահ Պուրկիպա եւ Ֆրանսայի խորհրդային դեսպանը հաստատած են ասիկա :

Զէնքերու այս հարցը պիտի արծարծուի Ատլանտեան Ուխտի յառաջիկայ ժողովին մէջ, ըսաւ Փինօ, եւ պէչ անդրադարձներ պիտի ունենայ: Արտաքին նախարարը հաստատեց, թէ Ֆրանսայի Ատլանտեան Ուխտէն հեռանալու հարց մը գոյութիւն չունի :

Ռուշինկթըն մեկնելէ առաջ, Փինօ յայտարարեց թէ Տըլըսի հետ իր տեսակցութեան ատեն հետեւեալ հարցերը պիտի քննուին. Թունուզի յանձնած զէնքերը եւ այն երաշխիքները՝ որ կը սահմանափակեն անոնց գործածութիւնը. յառաջիկայ Դեկտեմբերի Ատլանտեան Ուխտի ժողովին պատրաստութիւնները. ՄԱԿի մէջ Ալժերիոյ հարցին քննութիւնը. Միջին Արեւելքի խնդիրը :

Ալժերիոյ հարցը ՄԱԿի մէջ պիտի քննուի Նոյեմբեր 27ին կամ 29ին:

Արտաքին նախարար Ռուշինկթըն մեկնած է արդէն եւ Միացեալ Նահանգներու Արտաքին նախարար Տըլըսի հետ ունեցած՝ իր առաջին տեսակցութիւնը: Ինչպէս գրած էինք, խորհրդակցութեանց ժամանակամիջոցը որոշուած չէ եւ կախում ունի հարցերուն քննութենէն :

ԵՐԷԿՈՒԱՆ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ

Ինչպէս գրած էինք, երէկ, Գշ. օր գործադուլ եղաւ Ֆրանսայի մէջ: Պաշտօնեաները, յատկապէս, չաշխատեցան :

Փակ էին դպրոցները եւ թղթատարական գրասենեակները. նամակ չկար: Ինքնագործ հեռաձայնները կը գործէին: Որոշ յապաւումներ կային օդանաւային ըսպասարկութեանց մէջ: Մաքսատան պաշտօնեաները չէին աշխատեր: Թանգարաններու եւ գրադարաններու մէջ՝ պաշտօնէութիւնը գործը դադրեցուցած էր :

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ Արտաքին նախարարատան մէջ Սթիվենսըն եւ Տըլըս հանդիպում մը ունեցան: Խորհրդակցութեան կը մասնակցէին երկու կուսակցութեանց պարագլուխները :

ՖՐԱՆՍԱՑԻ հիւլէական ուժի պատուիրակութիւն մը գնաց Մոսկուա: Պատուիրակութեան նախագահը՝ Փերէն, խորհրդային գիտնականներ հրաւիրած է Ֆրանսա :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Այրի Տիկին Ա. Միքայէլեան եւ զաւակները, Տօքթ. Ս. Միքայէլեան եւ Միքայէլեան ընտանիքը, շնորհակալութիւն կը յայտնեն, Գերաշնորհ Սերովբէ Սրբազանին, Լիոնի Արժ. քհնյ. հայրերուն, Պ. Կ. Ճնկըրեանին, եկեղեցաշէն յանձնախումբի անդամներուն եւ բոլոր անոնց, որոնք մասնակցեցան իրենց ամուսնոյն, հօր, եղբօր եւ ազգականին, ողբացեալ Կ. Միքայէլեանի մահուան քառասունքին առթիւ մատուցուած հոգեհանգստեան պաշտօնին :

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԽՆՋՈՅՔ

«ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐ»ՈՒԱՆ ԱՌԹԻՒ

ԱՆԻԷՌԻ մէջ, Նոյեմբեր 24ին, Ընկերվարականներու սրահը, մանրամասնութիւնները յաջորդով :

ԱՌՆՈՒՎԻԼԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. «Վարդան» ենթակոմիտէի եւ մասնակցութեամբ Կապոյտ Խաչի մասնաճիւղին եւ Նոր Սերունդի խումբին :

Այս կիրակի կէսօրէ վերջ ժամը 5էն 11, եկեղեցիին սրահը :

Կը խօսի ընկեր ՀԱՅԿ ՍԱՐԳՍԵԱՆ

Գեղարուեստական բաժնին կը մասնակցին Թառիստ ԳԱՐԵԳԻՆ :

Ճոխ պիւֆէ: Տախքերու մասնակցութիւն :

×

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ

ՍԷՆ ՇԱՄՈՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. «Վարուժան» կոմիտէի եւ մասնակցութեամբ Նոր Սերունդի :

Այս Շաբաթ, երեկոյեան ժամը 8·30-ին, Սալ Ժան տ'Արքի մէջ :

Կը նախագահէ ընկ. ԱՐՄԵՆԱԿ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ :

Կը խօսի ընկ. Վ. ԻՇԽԱՆԵԱՆ

Գեղարուեստական բաժին.— Երգ, խմբերգ, արտասանութիւն :

Մուտքը ազատ է :

ՑԵՐԵԿՈՅԹ - ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Կազմակերպուած Սեվրանի Կապ. Խաչի մասնաճիւղին կողմէ :

Կիրակի 24 Նոյեմբեր, ժամը 15էն 23, «ՄԱՍԻՍ»ի շքեղ սրահին մէջ, 87 Ավընիւ տը Լիվրի, Սեվրան:

Հայկական եւ եւրոպական պարեր, անակնկալներ, ՍԹԷՍԷԼԻ նուագախումբին մասնակցութեամբ :

Օթօպիւս՝ 147 էկլիզ տը Փանթէն, Կար տիւ Նոր, ժամը 14 եւ 15:

ԴԵԿՏԵՄԲԵՐ 15ԻՆ

« ՍԻՓԱՆ - ԿՈՄԻՏԱՍ»Ի

ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ՝

SALONS DES AMBASSADEURS

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԼՍԱՐԱՆ

Հերթական դասախօսութիւնը այս չորեքշաբթի իրիկուն, ժամը 21ին, Քաղէ սրճարանին վերնայարկը : Կը խօսի՝ ԿԱՐԱՊԵՏ ՓՕԼԱՏԵԱՆ :

Նիւթ՝ «Հայ բանաստեղծութիւնը «Քայիէ տիւ Սիւտ»ի մէջ:

Մուտքը ազատ է :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Այրի Տիկին Նեկտար Գասպարեան եւ զաւակները կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի այս կիրակի առաւօտ Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին իրենց ամուսնոյն եւ հօր՝ ՍԵԴՐԱԿ ԳԱՍՊԱՐԵԱՆԻ մահուան տարելիցին առթիւ :

Կը հրաւիրուին ողբացեալին յիշատակը յարգողները:

×

Այս առթիւ Տիկին Գասպարեան հազարական փրանք կը նուիրէ «Յառաջ»ի բարգաւաճման, Որբերու Օգն. Մարմնի, Կարմիր եւ Կապոյտ Խաչերու օգախոտութեան կայաններու եւ Դպրոցասէրին : Հինգ հազար փրանք ալ Շաւիլի եկեղեցւոյ շինութեան : (Ստանալ Յառաջէն):

ՊՕՄՈՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Ֆ. Կ. Խաչի մասնաճիւղին վարժարանը վերաբացուած է արդէն Հոկտեմբերի ըսկիզբէն ի վեր, ուսուցչութեամբ Պ. Վահրամ Կ. Պապուխեանի :

Արձանագրութիւնները տեղի կ'ունենան Ս. Սահակ - Մեսրոպ սրահին մէջ :

Կը հրաւիրենք Պօմոնի յարգ. ծնողները որ չարունակեն վառ պահել իրենց սէրը հանդէպ Կապ. Խաչի կրթարանին ուր մեր զաւակները կը ստանան Ազգ. ոգի եւ հայերէնի բաւականաչափ պաշար :

Ֆ. Կ. Խաչի Պօմոնի մասնաճիւղի Վարչութիւն

Կ'ՈՒԶՈՒԻ

Տունը աշխատող գործաւորուհիներ Շըմիզիէի համար: Կը յանձնենք Փարիզի շրջակայքը (մինչեւ 50 քիլոմեթր) : Դիմել՝

TAVITIAN, 40, Rue de Flore. Alfortville

ENT. 35-17

Կամ Փարիզի հասցէին՝

19, Bd. Saint-Denis

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՄԱՀՈՒԱՆ

ՅԻՍՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ

ՄԱՍՆԱՒՈՐ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Հայրենասէր մեծ Հայրապետ Խրիմեան Հայրիկի մահուան յիսնամեակին առթիւ հանդիսաւոր քառաձայն Ս. պատարագ պիտի մատուցուի Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ մէջ, այս կիրակի ժամը 10ին եւ պիտի կատարուի մասնաւոր հոգեհանգստեան արարողութիւն :

Պիտի պատարագէ եւ քարոզէ Կաթողիկոսական պատուիրակ ՍԵՐՈՎԲԷ ԵՊԻՍԿ. ՄԱՆՈՒԿԵԱՆ :

Կը հրաւիրենք հայ ժողովուրդը որ ներկայ գտնուի այս արարողութեանց, յարգելու համար մեծ եկեղեցականին անմոռանալի յիշատակը :

ԴԻՒԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Համախորհրդակցական Միութեան Ֆրանսայի շրջանի 1958ի օրացոյցը: Խըռնամուած տպագրութեամբ եւ ճոխ պատրաստութեամբ: Ճակատի նկարը կը ներկայացնէ Սահակ Կաթողիկոսի Խարբերդ այցելութիւնը 1906ին, իր շքախումբով:

Բոլոր հայրենակիցները պէտք է ունենան նոր տարուայ այս գեղեցիկ նուէրը: Գրել հետեւեալ հասցէին՝

G. GUMUCHIAN, 10, Rue Mission de France, Marseille

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԱՆԻԷՌ - ՊՈՒԱ ՔՈԼՈՄՊԻ Հ. Յ. Դ. « Արամ » ենթակոմիտէի եւ «Շաւարշ Միսաքեան» խումբի ժողովը այս չորեքշաբթի իրիկուն ժամը 21ին, ընկերվարականներու սրահը, Ավընիւ - տ'Արժանթէօյ: Կարեւոր օրակարգ :

Ֆ. Կ. ԽԱՉԻ Փարիզի մասնաճիւղի ընդհ. ժողովը այս շաբաթ, կէսօրէ վերջ, ժամը 3ին, Քաֆէ Րէժանի մէջ: Շատ կարեւոր օրակարգ: Պարուհանդէսի կարգադրութիւններ: Բոլոր ընկերուհիներու ներկայութիւնը անհրաժեշտ է, ինչպէս նաեւ վարչութեան օժանդակներու ներկայութիւնը :

ՍԵԲԱՍՏԻՈՅ Նահանգային Մուրատ Ուսումնասիրաց Միութեան անդամական ժողովը այս կիրակի ժամը չորսին, Իսիի Խրիմեան վարժարանին սրահը :

Օրակարգ.— Ա) Նիւթական եւ բարոյական հաշուետուութիւն :

Բ) Զեկուցում հոկտեմբերի պատգամաւորական ժողովին :

Գ) Նոր վարչութեան ընտրութիւն :

Հ. Յ. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

Պանեէօ - Քաշանի մասնաճիւղին ժողովները կը վերսկսին այս չորեքշաբթի ժամը 21ին:

"ԱՆԴԱՍՏԱՆ"Ի ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՆԵՐԸ

Այս Հինգշաբթի, երեկոյ ժամը 9ին Սոսիէթէ Սավանթի թիւ 1 նոր սրահին մէջ, 28 Րիւ Սերփանթ (Մեթրօ Սէն - Միշէլ)

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

Կը խօսին՝

Արդի հայ գրականութեան հարցերուն մասին

ՄԱՐՍԷԼ ՏԸԼԱՆՈՒԱ, ԼՈՒՔ - ԱՆՏՐԷ ՄԱՐՍԷԼ, ՎԱՀԷ ՔԱՉԱ, Կ. ՓՕԼԱՏԵԱՆ եւ ԲԻՒԶԱՆԴ ԹՕՓԱԼԵԱՆ :

Գեղարուեստական բաժին, որուն կը մասնակցին

ԼԻՏԻԱ ԿԱՐԻՆ (ԻԶՔԱԼԱՅԵԱՆ)

ԱՐՏԱՇԷՍ ԳՄԲԷԹԵԱՆ, ՆՈՒՐՀԱՆ ՄԱՐԳԱՐԵԱՆ, ԳՐԻԳՈՐ ՄԵԼԻՔԵԱՆ

Մուտքը ազատ է :

ՈՐԲԵՐՈՒ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԱՐՄՆԻ - ՓԱՐԻԶԱՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆ

ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՆՑԻԿ ՑԵՐԵԿՈՅԹԸ

ՆՈՅ. 24ԻՆ, ԺԱՄԸ 16էն 24 Կոանտ Օթէլի շքեղ սրահներուն մէջ.

ՍԱՎԱ ՆԷԱԿՈՒՑԻ հունգարական նուագախումբը եւ հաճելի անակնկալներ

Կը խնդրուի ապահովել սեղանները հեռաձայնելով ՓԱՍԻ 64·90

Մուտք 500 փրանք

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԾԱԳՈՅՆ ԳՐԱՏՈՒՆԸ

ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱՐԵՒԵԼԱԳԻՏԱԿԱՆ ԳՐՔԵՐ՝

— ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ —

ՃՈԽ ՄԹԵՐՔ ՀԱՅԵՐԷՆ ԳՐՔԵՐՈՒ՝ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԸ ԳՆԷ ԵՒ ԿԸ ՓՈԽԱՆԱԿԷ ՀԱՅԵՐԷՆ ԳՐՔԵՐ

LIBRAIRIE H. SAMUELIAN

51, RUE MONSIEUR-LE-PRINCE - TÉL. : DAN. 88-65

C. C. Postal : Paris 1278-35

BAINS DE VAPEUR

4 bis, Rue de la Pierre-Levée — Paris - 11e

OBE. 12-51

MÉTRO : RÉPUBLIQUE, OBERKAMPF ET PARMENTIER

ԵՐԵՔ ՍՐԱՀ ՇՈԳԻԻ ԼՈԳԱՆՔԻ

(SUDATION ET FUMIGATION)

Մասաժ, Օքսիժենօթերափի, ձեռքերու եւ ոտքերու խնամք (մանիւքիւր - փետիւքիւր) քուափիւր, սուէն տը պօթէ, փիսին:

BAR - RESTAURANT

Բաց օրեր.—

ԿԻՆԵՐՈՒՆ

Ուրբաթ ժամը 11էն 23
Երկուշաբթի ժամը 11էն 23
Չորեքշաբթի ժամը 11էն 23

ԱՅՐԵՐՈՒՆ

Հինգշաբթի ժամը 17էն 23
Շաբաթ ժամը 9էն 23
Կիրակի ժամը 8էն12

ՀԱՅԵՐԷՆ ԿԸ ԽՕՍԻՆՔ

Imprimé sur les presses du journal HARATCH
— 17, Rue Bleue, 17 — PARIS (9e) —

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925 — Tél. : PRO. 86-60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. PARIS 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամսեայ 1600

Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք: Հատը 12 ֆր.

ՀԻՆԳՇԱԲԹԻ 21 ՆՈՅԵՄԲԵՐ — JEUDI 21 NOVEMBRE 1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8048 — 33e ANNEE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3849

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ԱՆԳԼԻԱ ԵՒ ՔԱՐԻՒՂ

Համաշխարհային երկրորդ պատերազմէն վերջ Անգլիա ինքնավարութիւն շնորհեց իր կայսրութեան ամէնէն հարուստ հողամասերուն եւ դաշնագիրներով կապուեցաւ անոնց հետ: Եղիսաբէթ Բ. Թագուհին Հնդկաստանի կայսրուհի տիտղոսը չի կրեր: Սակայն բրիտանական կայսրութիւնը կը մնայ ամէնէն մեծ աշխարհակալ երկիրը :

Այդ աշխարհակալութեան հետքերը կը տեսնուին տակաւին հինգ ցամաքամասերու վրայ :

Պարսից ծոցի շուրջը երկու հարիւր մղոն տարածութեան վրայ կը գտնուի Միջին Արեւելքի քարիւղի հարստութեան հարիւրին ութսունը: Իրանի կը պատկանին Ապատանի նաւթահանքերը, Իրաքի՝ Պասրայի քարիւղի հորերը :

Իսկ Անգլիոյ թեւարկութեան ենթակայ քարիւղաշատ հողամասերն են՝ Քուվէյթ, որ մինակը ամբողջ աշխարհին քարիւղի պահեստին հարիւրին քանը կը պարունակէ, Պահրէյն՝ համանուն կղզիին վրայ, Քաթար՝ Արաբիոյ եզերքին վրայ, Մասքաթ ու Օման :

Անգլիական ազդեցութիւնը կը տարածուի Պարսից ծոցի իրաքեան սահմաններէն սկսեալ ամբողջ ծովեզերեայ շրջանին վրայ, մինչեւ ծոցին բերանը, յետոյ անկէ դէպի հարաւ ու արեւմուտք, մինչեւ Ադէն, որ կը գտնուի Կարմիր ծովու հարաւային ծայրին վրայ եւ սահմանակից է Եմէնի: Քարիւղ կայ նաեւ Տհոյանի եւ Պէյհանի մէջ, Ադէնի արեւմտեան սահմանագծին վրայ :

Վերջին ատենները կռիւները անպակաս էին Եմէնցիներու եւ անգլ. ուժերու միջեւ՝ քարիւղի պատճառաւ: Մոսկուա կ'աջակցէր Եմէնցիներուն: Սակայն քանի մը շաբաթ առաջ Եմէնի գահաժառանգը Լոնտոն գնաց՝ Անգլիոյ հետ լեզու գտնելու համար :

Անգլիա ԺԹ. դարու ընթացքին զանազան դաշնագիրներով իր հովանաւորութեան տակ առաւ Պարսից ծոցի շրջանի հետեւեալ իշխանապետութիւնները՝ արեւմուտքէն դէպի արեւելք .— Քուվէյթ, Պահրէյն, Քաթար, Ապու Տհապի, Տուպայ, Շարժա, Աճման, Ումմ էլ Քայվայն, Ռաս էլ Խայմա, Ֆու – ճայիրա եւ Մասքաթ – Օման :

Առանձնէ միայն Մասքաթն է, որ բոլորովին անկախ է եւ դաշնագրով կապուած Անգլիոյ հետ: Անցեալ Յուլիսին այս վերջինն էր որ զսպեց Օմանի իմամին ապստամբութիւնը :

Միւս շէյխութիւնները ներքին ինքնավարութիւն ունին միայն, արտաքին գործերու պատասխանատուն Անգլիան է, որ նոյնպէս կ'երաշխաւորէ անոնց պաշտպանութիւնը ներքին եւ արտաքին թշնամիներու դէմ :

Անգլիա իր թաթը դրած էր այս հողամասերուն վրայ՝ պաշտպանելու համար դէպի Հնդկաստան տանող իր ճամբան : Այն ատեն քարիւղ չէր գտնուած դեռ այդ երկիրներուն մէջ :

Ժամանակները փոխուած են այլեւս: Հնդկաստանի ճամբու ապահովութեան փոխարինած է քարիւղը, որուն ուղղուած են մէկ կողմէ դրամատէրներու, միւս կողմէ արաբ ազգայնականներու աչքերը :

Անցեալ տարի Սուէզի արշաւանքի օրերուն հականգլիական ցոյցեր կատարուեցան այդ շրջանին մէջ: Քուվէյթի մէջ անգլիական ապրանքները պոյքոթի ենթարկուեցան եւ Փորթ Սայիտի զոհերուն համար դրամական հանգանակութիւն կատարուեցաւ: Պահրէյնի մէջ, որ կեդրոնատեղին է անգլիական մարզականին եւ զինուորական ուժերուն, ամբողջ երկու շաբաթ ցոյցեր, գործադուլներ եւ խռովութիւններ տեղի ունեցան :

Արաբ ազգայնական շարժումը հետզհետէ կը ծաւալի այս երկիրներուն մէջ եւ սպառնական կը դառնայ :

Անհրաժեշտ է այլեւս փոխել ԺԹ. դարու դաշնագիրները եւ յարմարիլ օրուան պահանջներուն՝ քանի դեռ ուշ չէ :

Օմանի դէպքէն ի վեր Անգլիացիք կը մտածեն Քուվէյթն ու Պահրէյնը կապել Պաղտատի Ուխտին : Ուրիշ լուծում մը կը նկատուի Անգլիոյ, Իրաքի, Իրանի, Սէուտի Արաբիոյ, հաւանաբար նաեւ Մ. Նահանգներուն միջեւ կնքել դաշնագիր մը՝ երաշխաւորելու համար Պարսից ծոցի մեծագոյն իշխանապետութեանց անկախութիւնն ու գերիշխանութիւնը : Ծրագիր կայ նաեւ այդ բոլորը միացնել «դաշնակցային» միակ պետութեան մը մէջ :

Անգլիա իբրեւ իրատես՝ միջոց մը պիտի գտնէ ի վերջոյ ձեռքէ չհանելու համար այս հողամասերը, որոնք անսպառ հարստութիւն կը պարունակեն :

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԹՈՒՐՔԵՐԸ ՔՈՒԷԱՐԿՈՒԵՑԱՆ

ԴԱՀԼԻՃԸ ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ ՇԱՀԵՑԱՒ 182Ի ԴԷՄ 256 ՁԱՅՆՈՎ

Երեքշաբթի իրիկուն Ազգ. Ժողովը 256 ձայնով 182ի դէմ քուէարկեց ելմտական եւ տնտեսական ծրագիրը :

Այս ձեւով Ազգ. Ժողովը ընդունած եղաւ 101 միլիառի նոր տուրքերը, որոնք հետեւեալներն են :

Թաքս ա լա վալէօր աժութէ 2.5 առ հարիւրի յաւելում բոլոր ապրանքներու վրայ որոնք կը նկատուին պերճանքի առարկաներ :

Փրեսթասիոն տը Սերվիսի տուրքի յաւելում 12էն 15.5 առ հարիւր (7.5 արհեստաւորներու համար) :

Տասը առ հարիւր՝ շարժավարութեան եւ որսորդութեան արտօնագիրներու եւ անցագիրներու վրայ :

Յաւելեալ շահերուն վրայ հաստատութեանց պիտի դրուի քսան առ հարիւրի տուրք մը, եւ 45 առ հարիւր՝ դրամատուներու որոշ գործողութեանց շահերուն վրայ :

Քուէարկութեան անցնելէ առաջ կարգ մը հարցումներ եղան վարչապետին : Քուրան (անկախ) հարց դրաւ թէ վարչապետը տրամադի՞ր է վստահութեան քուէ պահանջել նաեւ այն ատեն երբ դրուի սահմանադրութեան բարեփոխման հարցը որ երեսփոխաններու ձեռքէն պիտի առնէ ծախքերը որոշելու իրաւասութիւնը: Երբ վարչապետը դրական պատասխան տուաւ, դժգոհութեան որոշ ձայներ եղան ընկերվարական շարքերէն :

Հակառակ կարգ մը ընդդիմութեանց տուրքերու յաւելման մասին, յայտնի էր որ երեսփոխանները նոր տագնապ մը պիտի չստեղծեն երկրին մէջ: Նախկին վարչապետ Բէյօ (անջատուած արմատական) կոչ ըրաւ երեսփոխաններուն, յիշելով ներքին եւ արտաքին դժուարութիւնները եւ շեշտեց թէ ամէնքը պէտք է աչքի առաջ ունենան Ֆրանսայի շահը :

Կայլեարի պատասխանէն վերջ, տեղի ունեցաւ քուէարկութիւնը :

Թեր քուէարկեցին 82 Ընկերվարական, 22 Ուղղափառ Արմատական, ութ Անջատուած Արմատական, ութ Ձախ Հանրապետական, եօթը Ընկերային Հանրապետական, 69 Ժողովրդական Շարժում, երկու Անկախ (անդրծովեան), չորս Աֆրիկեան Ընկերվարական, ութ Դիմադրական, 42 Անկախ, չորս Գիւղացի :

Դէմ քուէարկեցին.— 123 Համայնավար, հինգ Յառաջդիմական, երեք Ուղղափառ Արմատական, երկու Ձախ Հանրապետական, մէկ Ընկերային Հանրապետական, չորս Անկախ, 9 Գիւղացի, 29 Փուժատական, վեց՝ չարձանագրուած :

98 երեսփոխան բացակայ էր, 59 ձեռնպահ կար որոնց 35ը՝ Անկախ :

ՓԻՆՕ-ՏԸԼԸՍ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Ինչպէս գրած էինք, Ուաշինկթընի մէջ տեղի ունեցաւ Տըլըս – Փինօ հանդիպում մը: Օրուան ամէնէն հրատապ հարցն էր՝ Թունուզ :

Միացեալ Նահանգներու Արտաքին նախարար Տըլըս յայտնեց, թէ Ամերիկա Սեպտեմբերին արդէն համաձայնած էր թեթեւ զէնքեր յանձնել Թունուզի, մինչեւ Հոկտեմբերի սկիզբը: Այս որոշումը պիտի գործադրուէր՝ ինչ որ ալ պատահէր: Տըլըս ըսաւ, թէ անգլեւամերիկեան այս որոշումը օգնեց որ խաղաղութիւնը պահպանուի, արդար երկիրներուն ներշնչելով զինադրական ոգի մը՝ համայնավարութեան դէմ: Այս նպատակով է նաեւ, որ ՄԱԿի մէջ Ամերիկա չէզոք դիրք մը պիտի բռնէ Նոր – Կինէի հարցով Հոլանտայի եւ Ինտոնէզիոյ միջեւ ծագած տարաձայնութեանց մէջ: Ըստ Միացեալ Նահանգներու, այս բոլորը կը կատարուին ամբողջապէս Ատլանտեան Ուխտին զօրացման համար :

Ֆրանսայի Արտաքին նախարարը ցոյց տուաւ այն վտանգը, որ կրնայ ծագիլ Ամերիկայի որդեգրած քաղաքականութեան հետեւանքով : Միացեալ Նահանգներ կ'անգիտանային այն յուզումը՝ որ առաջ եկաւ Ֆրանսայի մէջ, Թունուզի յանձնուած զէնքերէն ետք :

Փինօ յիշեցուց նաեւ խորհրդային առաջարկութեան նոյն գործունէութիւնը՝ Արեւմուտքի երեք գլխաւոր պետութեանց միջեւ ծագած տագնապէն ետք : Ֆրանսայի հանրային կարծիքը մեծ նշանակութիւն ունի կառավարութեան համար: Խ. Միութիւնը ամէն առիթ կ'օգտագործէ՝ ժողովուրդը սիրաշահելու համար. եթէ անուշադիր ըլլան, հանրային կարծիքին մեծամասնութիւնը շահելով, Համայնավարները առնուազն կրնան լուրջ հարուած մը հասցնել արեւմտեան Ուխտերուն :

Գլխաւորաբար այս կէտն է, որ Փինօ ուզած է հասկցնել Ամերիկացիներուն, որովհետեւ Ֆրանսա ոչ մէկ պարագայի մէջ կրնայ մեկուսանալ. իր դիրքը զօրաւոր է :

Այս բոլորը յիշեցնելով հանդերձ, կայեանի կառավարութիւնը ծայրայեղ սպառնալիքներ չըներ: Կը պահանջէ միայն, որ Թունուզի հանդէպ Ֆրանսայի ունեցած օրինական պարտաւորութիւնները յարգուին :

Երկու Արտաքին նախարարներուն հանդիպումը տեւած է մօտ երեք ժամ :

ՏԸԼԸՍԻ ՄԱՄՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՍԸ

Ինչպէս կը սպասուէր, Տըլըսի մամուլի ասուլիսը գլխաւորապէս կ'ընդգրկէր երկու նիւթ.— Ատլանտեան Ուխտին յառաջիկայ համագումարին պատրաստութիւնը եւ Թունուզի յանձնուած զէնքերը:

Փարիզի մէջ գումարուելիք Ատլանտեան Ուխտի ժողովին մէջ, ըսաւ Տըլըս, հաւանական է որ անդամ երկիրներու միջեւ համաձայնութիւն մը կնքուի՝ Եւրոպայի մէջ հիւլէական զէնքերու եւ միջերկրային հրթիռներ արձակելու կեդրոններ հաստատելու համար. այս համաձայնութիւնը գոյութիւն ունի արդէն Անգլիոյ եւ Ամերիկայի միջեւ : Միացեալ Նահանգներ ոչ մէկ երկրի վրայ ճնշում պիտի ընեն՝ միջերկրային հրթիռներ արձակելու կեդրոններ հաստատելու համար :

Գալով Թունուզի յանձնուած զէնքերու հարցին, Տըլըս ցաւ յայտնեց որ անգլեւամերիկեան այդ որոշումը այդքան յուզում առթած է Ֆրանսայի մէջ: Միացեալ Նահանգներ միշտ կողմնակից եղած են այն տեսակէտին, որ Ֆրանսայի կը պատկանի Թունուզը զինելու պարտականութիւնը: Արտաքին նախարարը յոյս յայտնեց, որ կարելի կ'ըլլայ համաձայնութիւն մը գոյացնել եւ շուտով Ֆրանս –

(Շարունակութիւնը կարդալ .Դ. էջ)

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ ԱԼԺԵՐԱՑԻՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ

Ֆրանսայի մէջ կը շարունակուի Հիւս. Ափրիկէցիներու հակամարտութիւնը : Փարիզի արուարձաններէն Պոնտիի մէջ, տան մը գետնայարկը աննկարագրելիօրէն իրարու վրայ նետուած եօթը Ալժերիացիներու մարմինները գտնուեցան. հինգը մեռած ու երկուքը՝ ծանր վիրաւոր :

Ոստիկանութիւնը քննութիւն մը բացած է, սակայն ցարդ յստակ չէ իրականութիւնը: Կը թուի թէ զոհերը կը պատկանին Ազատագրական Ճակատին, մահափորձի ենթարկուած՝ Ալժերիոյ Ազգ. Շարժումին կողմէ :

Փարիզի կարգ մը սրճարաններուն մէջ ալ շարք մը մահափորձեր եղան : Մեռեալ չկայ, սակայն քանի մը հոգի ծանրօրէն վիրաւորուած է :

Միւս կողմէ, Տրանսիի մէջ ձերբակալուեցան Ազատագր. Ճակատի չորս ղեկավարներ, որոնցմէ մէկուն մօտ անուանացանկ մը գտնուած է :

Գաւառներու մէջ ալ, ինչպէս՝ Վալանս եւ Մոպէօժ քանի մը հոգի վիրաւորուած է Ալժերիոյ Ազգ. Շարժումին կողմէ :

Ինչպէս կը տեսնուի, ալժերիական երկու կազմակերպութեանց միջեւ հակամարտութիւնը հետզհետէ կը սաստկանայ : Գրեթէ ամէն օր յարձակում կը գործեն իրարու վրայ: Զինամարտութեան զոհերը իրենք են, Փարիզ թէ գաւառ :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՄՈՍԿՈՒԱՅԻ մէջ մարաջախտ Բուլկանին յայտարարեց, թէ Խ. Միութիւն տնտեսապէս պիտի օժանդակէ Եգիպտոսի :

ՉԵԽՈՍԼՈՎԱՔԻՈՅ Հանրապետութեան Նախագահ նշանակուեցաւ համայնավար կուսակցութեան ընդհանուր քարտուղար՝ Նովոթնի :

ԼՈՆՏՈՆԷՆ կը յայտնեն, թէ Վարչապետ Մաքմիլըն Փարիզ պիտի չգայ, ինչպէս կը նախատեսուէր :

ՆԱԽԱԳԱՀ ԱՅԶԸՆՀԱՈՒԸՐԻ Փարիզ այցելութիւնը բաղձալի չէ, յայտարարեց Փուժատ, քանի որ զէնք տուաւ Թունուզի :

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԳԵՐՄԱՆԻՈՅ զինեալ ուժերու հրամանատար զօրավար Հէօսինկըր յայտարարեց, թէ քսանէն մինչեւ 45 տարեկան ամէն մարդու համար զինուորութիւնը պարտադիր պիտի ըլլայ Գերմանիոյ մէջ :

ՀՈՒՆԳԱՐԻՈՅ մէջ ձերբակալուած է համալսարանի դասախօսներէն՝ պատմագէտ Քոզարի, որ համայնավար կուսակցութեան մաս չէր կազմեր : Ուսանողները պահանջած են որ ազատ արձակուի :

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԵՐՄԱՆԻՈՅ ոստիկանութիւնը ձերբակալած է 27 խռովարարներ :

ԵԳԻՊՏՈՍԻ նախարար եւ Նասըրի քաղաքական խորհրդատու Ալի Սապրի դատապարտեց Սուէզի ընկերութիւնը, իբրեւ հակաեգիպտական լրտեսութեան կեդրոն մը :

ԵՈՒԿՈՍԼԱՒԻՈՅ մէջ օտար լրագրողներու տուրքը 65 առ հարիւր պիտի աւելնայ՝ Յունուար 17էն ետք :

ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ մէջ Ֆրանսայի Արտաքին նախարար Փինօ երէկ տեսակցութիւն մը ունեցաւ Ամերիկայի դեմոկրատ կուսակցութեան պարագլուխ Սթիվընսընի հետ :

ՄՈՍԿՈՒԱՅԻ մէջ երէկ առաւօտ բացուեցաւ Ջրածինի ռումբի միջազգային համագումարը :

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏԱՆ

Գ. Ստեփան Էլչիբէկեան, (Փարիզ)	10.000
Օմն (Ստանալ «Յառաջ»էն)	1000

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԸ

ՎԻԵՆՆԱԿԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐՈՒ ՄՕՏ

Տարին է 1893, ամիսը՝ Օգոստոս, ա – նոր երրորդ տասնեակի սկիզբը . օրը՝ Հինգշաբթի :

Վիէննական Մխիթարեան Միաբանու – թեան Մայրավանքի բոլոր միաբանները եւ ժառանգաւորաց վարժարանի աշա – կերտները — յառկակէս ամարանոցէն վար իջած — ապա գանէն սկսած մինչեւ ընդունելութեան դահլիճը կարգով շար – ուած են ու անհամբեր կը սպասեն մեծ Հիւրին :

Կառքերու անիւներուն ձայները լսելի կ'ըլլան ...: Ինքն է ... Խրիմեան Հայ – րիկը, — Հայերու նորընտիր Կաթողիկո – սը ...: Ձեռքերը իրարու կը մերձենան եւ խլացուցիչ ծափեր ուրախութեան յայ – տարար կ'ըլլան :

Կառքէն վար կ'իջնէ Հայրիկը : Ժամա – նակակից հայ մեծ դէմքերէն երկուքը ի – րարու հետ կ'ողջագուրուին : Խրիմեան Հայրիկը եւ Այտընեան Աբբահայրը իրա – րու հետ խօսելով սանդուխներէն վեր կ'ելլեն :

Դահլիճին մէջ Գերպ. Այտընեան Վե – հափառ Կաթողիկոսին կը ներկայացնէ իր միաբանները : Անոնց մէջ է ձեռներէց Հ. Գրիգորիս Գալէմքեարեան, որ օրուան հանդէսին կարգադիրն է : Հոն է մեծա – տաղանդ բանաստեղծ Հ. Ցակոբոս Տաշեան Համեստ վարդապետը, որուն անունը ար – դէն հանրածանօթ է, թէեւ ինք դեռ շատ երիտասարդ եւ նոր գրող : Հայրիկը քըն – քշօրէն կը բռնէ անոր մատները ու կ'ը – սէ . « Միտքդ արթուն եւ մատներդ միշտ գալար մնան : Գրէ՛, չեմ ըսեր լաւ գրէ, զի երբեք գէշ չես գրեր » :

Ժառանգաւորաց վարժարանէն աշա – կերտ մը յուզիչ չեշտով բարի գալուստի ուղերձը կը կարդայ, ապա Գերպ. Աբ – բահայրը իր եւ Միաբանութեան խնդու – թիւնը կը յայտնէ եւ արեւշատութեան ու յաջողութեան ջերմ մաղթանքներով բա – ժակը կը բարձրացնէ : Վեհափառ Հիւրը կը պատասխանէ . « Շէն ու ծաղկուն մը – նայ Մխիթարի յարկը » :

Բաժակներ կը պարպուին կեցցէներու տարափին տակ եւ բառ բառի, խօսք խօս – քի կը յաջորդէ : Ցետոյ մեծ Հիւրը իր շքախումբով, Գերպ. Աբբահօր առաջ – նորդութեամբ ու քանի մը միաբաններու հետ կ'այցելէ ճոխ մատենադարանը, թանգարանը, բայց յատուկ ուշադրու – թեան առարկայ կ'ընէ տպարանը, ուր մամուլներ կը ճռնչեն եւ «Հանդէս Ամ – սօրեայ» ամսագրին նոր թիւ մը կը ցու – ցադրեն եւ ուր գրաշարները — ամէնքը անխտիր Գերմանացի եւ հայերէնի բա – ցարձակ անծանօթ — հայերէն գրքեր ու յօդուածներ կը շարեն :

Մեկնումի պահուն զոյգ առաջարկներ կ'ըլլան մեծ Հիւրին. ամարանոցին մէջ հայկերոյթի նստիլ. կը սրուի հաւանու – թիւն, եւ արձանագրութեան մատեանին մէջ քանի մը տող յիշատակ թողուլ. կը գրուին հետեւեալ տողերը.

« 1878 Յուլիս 11 եկայ Վիէննա, այ – ցելեցի Մխիթարեան վանուց : 1893 Օգոս – տոսի 19/31 դարձեալ այցելութեան եկի ի սոյն վանս, յորում ժամանակի ուխտին վանահայրն էր Գերապայծառ Տէր Արսէն Արքեպ. Այտընեան, տեսի ամէն յառաջ – դիմութիւն, աշխատութիւնս գրական հանդէսի, օրհնեցի եւ մաղթեցի որ եր – թալով եւս պտղաբեր լիցի վասն փառացն Քրիստոսի եկեղեցւոյն : Կաթողիկոս Ամե – նայն Հայոց՝ Խրիմեան Հայրիկ » :

Գրիչը, որով այս տողերը գրուած են, կը պահուի Մայր վանքի թանգարանին մէջ : Նաեւ նկարը, զոր յաջորդ օրը կը յղէ նուէր՝ վրան գրելով . «Յիշատակ առ միաբանական ուխտն Մխիթարեան, Վի – էննա, Խրիմեան Հայրիկէն . թէ կենդա – նագիր մահկանացուիս երթայ ի գերեզ – ման, սուերն իմ մնասցէ առ ձեզ յիշա – տակ» : Նմանապէս կը ղրկէ իր երկերէն՝ Հրաւիրակ Երկրին Աւետեաց, որ մատե – նադարանին մէջ կը մնայ :

Իսկ հայկերոյթը տեղի կ'ունենայ Մանուէր անուն գիւղի Մխիթարեան տան մէջ, ուր անոր ի պատիւ սեւաչուի ու կայտառ աշակերտներ ժառանգաւորաց վարժարանի՝ կ'երգեն հայկական երգեր, ինչպէս եւ շարականներ : Արդէն համեղ կերակուրները աւելի հաճելի կ'ըլլան ա – նոնց գեղգեղանքներով ու Հայրիկի անոյշ ժպիտով եւ պատմած դէպքերով ու դըր – ուագներով :

Անոնք մինչեւ այսօր դեռ կը յիշուին :

Հ. ՀԱՄԶ. ՈՍԿԵԱՆ

ԱՐՈՒԵՍՏԸ Խ. ՄԻՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ԽՄԲ. — « Բոմպա » թերթին թղ – թակիցը այցելած է Խ. Միութիւն եւ ու – սումնասիրած արուեստի զանազան ճիւ – ղերը : Ստորեւ՝ իր կրած տպաւորութիւն – ները :

Խ. Միութեան մէջ գրեթէ չեն վիճիր նկարչութեան երկու մեծ հոսանքներուն մասին. իրապաշտութիւն եւ վերացա – կանութիւն (ապսդրաքթիվիզմ) : Ընդուն – ուած է մի անգամ ընդ միշտ թէ այնտեղ իրապաշտ արուեստը ի զօրու է միայն : Վերացական արուեստը հող չէ գտած, նկատելով որ մտքերու բարդոյթը եւ մարդկային զգացումները արտայայտելու անկարող է ան :

Թերթին թղթակիցը այցելած է Մոս – կուայի արուեստի թանգարանը եւ փոր – ձած է տեսակցութիւն ունենալ տնօրէնու – հիին հետ եւ հարցումներ ուղղած անոր : Անհաւատալի թէ ի՛նչ կը գրէ ան . — կէս ժամ անդադար դասական բացատրու – թիւններ լսեցի . «Փիքասօ կը յետադիմէ ... աշխարհաքաղաքացի քաղքենի նկա – րիչ ... վերացական արուեստ՝ մեռած արուեստ ... մենք վերացական արուես – տէն առաջ անցնելով ժողովուրդին տը – ւինք իրաւ արուեստ մը, որ հասարակու – թիւնը կը սիրէ եւ կը հասկնայ », եւայլն :

— Բայց ի՛նչ ձեւով կ'որոշուի անոր արժէքը :

— Դատական կազմ մըն է որ կ'որոշէ այդ բոլորը : Եւ, ինչպէս աշխարհի բո – լոր ծիւրիները՝ անսխալական չէ ան : Օրինակի համար, ի՞նչ կը մտածէք այս արձանիկներուն մասին :

Բազմաթիւ արձանիկներու մէջէն կը գտնեմ քանի մը հատ :

— Միս տասը զործերն են որ մրցանակ ստացած են, կ'ըսէ արուեստագէտը բարձրագագակ խնդալով : Կը տեսնեմ թէ Փարիզի մէջ հարստութիւն մը պիտի չկարենամ ապահովել : Այսուհանդերձ, Աստուած գիտէ թէ օր մը այնտեղ պիտի երթա՞մ թէ ոչ :

— Ուշինչ ձեզի արգիլք կը հանդիսա – նայ : Փորձեցէք :

Քանդակագործը նիւթը կը փոխէ : Կը բացատրէ, թէ ոչինչ կարելի է ծախել անհատներու : Ամէն ինչ խումբերու հա – մար է :

Իրեն կը խօսիմ Փիքասոյի մասին :

— Ես չեմ հասկնար զայն : Ինչ որ կը սիրեմ իր մէջ՝ «կապոյտ շրջան»ն է :

Կը բաժնուիմ քանդակագործէն, որ պատրաստ է իր գործը շարունակելու :

Խորհրդային արուեստին յաջողութեան սպասելով, կարելի չէ թերագնահատել Պետութեան օժանդակութիւնը՝ որ կը կատարուի բոլոր արուեստագէտներուն, պայմանաւ՝ որ չի մերձենին արուեստի տարբեր ճիւղերուն մէջ :

ՀԱՅ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾԻ ՄԸ ՀԵՏ

Նիքոլա Մ., 40 տարեկան, գնահատ – ուած արձանագործ մըն է Խ. Միութեան մէջ : Ունի Հայուն բոլոր յատկանիշները, երենոսեան յօնքեր, բաւական հրապուրիչ է եւ քիչ մը շատ գիտակից իր հրապոյ – րին : Գացի իր աշխատանոցը, որ կը գտ – նուի Մոսկուայի մէջ : Հարցումի մը պա – տասխանելով, բսաւ. — ժողովրդական արուեստագէտի մը գործը կ'արժէ 9000էն 25.000 ռուբլի (315.000էն 720.000 Ֆր.) :

ՓԱՐԱԽԱԴ

Խորհրդային պարախաղի (պալէ) մը ներկայացումին գացած էի. 80.000 հան – դիսականներ լեցուցած էին « Տինամօ » մարզադաշտը : Շարժական երեք բեմեր

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀՆԳԱՄԵԱԿԻ ՆԱԽԱԳԻԾ

Վեցերորդ հնգամեակին համար (1956 – 60) գծուած ծրագրին համաձայն Հայաս – տանի համախառն արտադրութիւնը պիտի աւելնայ 1.7 անգամ, ելեկտրական ուժ՝ 1.3, հանքային պարարտանիւթ՝ 1.6, կրաքիւս՝ երկու, խաղողի գինի՝ 1.4, կօշիկի կաշի՝ մէկուկէս անգամ : Այս հրն – գամեակին պիտի վերջանայ նաեւ Սեւան Հրազդանի ջրաելեկտրակայաններու շի – նութիւնը եւ պիտի ձեռնարկուի Տաթեւի ջրաելեկտրակայանի կառուցման : Նմա – նապէս, պիտի շինուին մետաքսի, պա – հածոներու եւ այլ գործարաններ : Գիւ – ղատնտեսութեան մարզին մէջ, 1960ին, 1955ի համեմատութեամբ հացահատիկի արտադրութիւնը պիտի աւելնայ մէկու – կէս անգամ, միս՝ 2.1, կաթ՝ 2.2, բուրդ՝ 1.8 : Զարկ պիտի տրուի այգե – գործութեան, խաղողի մշակութեան եւ բամպակագործութեան : 39 հազար հեկ – տար տարածութեան վրայ պիտի կառուց – ուի ոռոգման ցանց :

ԵՐԵՒԱՆԻ մէջ մեռած է Հայաստանի Գիտական Խորհուրդի կազմակերպական բաժնի վարիչ Մ. Մ. Գրիգորեան, ծնած էր 1900ին Արտաշատի Գեօղակլու գիւղը :

ԱՐՄԱՒԻՐԻ մէջ լոյս տեսած է «Աշ – խատիր» թերթը, նուիրուած՝ մասնաւո – րաբար տնտեսական հարցերու :

կան. կեդրոններ, լոյսերու մէջ կ'ընդու – նէր Զայքովսկիի «Կարապներու լիճ»ը, կամ Խաչատուրեանի շրջապարը :

Ներկայացումը չքեղ էր : Երեւոյթին միակ տխուր կէտը այն էր, որ այս խումբերուն հետ բեմ բարձրացած էին սկսնակներ՝ ժողովրդական պարեր կա – տարելու համար :

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Գրականութիւնը արուեստին ամէնէն կարեւորագոյն մէկ ճիւղն է : Խ. Միու – թեան ամէնէն համբաւաւոր գրագէտը՝ Իլիա Էհրէնպուրկ, տեսակցութեան մը ընթացքին հետեւեալը յայտարարեց . — Շատերու համաձայն, եթէ մշակոյթը բոլորին դիւրահասցրդ ըլլար՝ պիտի տգեղանար եւ ըլլար նուազ մշակ – ուած : Մեր փորձառութիւնը այս տեսա – կէտը ջրեց : Մենք բոլորին մատչելի ար – ուեստ մը մշակեցինք : Այնքան զարգա – ցուցինք զայն եւ ընդհանրացուցինք, որ այսօր կրնանք ըսել թէ մեր երկրին իւ – րաքանչիւր քաղաքացին ծանօթ է արդէն համաշխարհային մշակոյթին : Յաճախ կը հարցնեն մեզի . «ո՞ւր է ձեր գրականու – թիւնը որ պիտի յեղաշրջէր աշխարհը » : Կը պատասխանեմ . — Աշխարհը կը յե – ղաշրջենք ոչ թէ մեր գրողներով՝ այլ մեր ընթերցողներով : Կրնամ ըսել, թէ ոչ մէկ երկիր մեզի չափ ընթերցող ունի ... Մենք մարդոց ընթերցումը սիրել սորվեցու – ցինք :

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Իր դէմ սադրանքներ լարուելու վրայ էին եւ Տեսչութիւնը ձեռք անցնել ուզող – ները յաջողութիւն արձանագրելու մեծ յոյսեր եւ խոստումներ ունէին : Դերենիկ Սրբազանի վերադարձէն անմիջապէս յե – տոյ, Լիբանանի Առաջնորդ Խորէն Սրբա – զան՝ Առաջնորդարանի մէջ անոր հետ տեսակցութիւն մը ունենալու նախաձեռ – նարկ եղաւ. տեսակցութիւն՝ որուն ներ – կայ էր Բերիոյ Թեմին Առաջնորդ Զարեհ Եպիսկոպոս : Այս հանդիպման գլխաւոր օրակարգը կաթողիկոսական ընտրութեան հրատապ հարցն էր, անշուշտ : Թեր ու դէմ կարծիքներ յայտնուեցան, նախատե – սութիւններ բանաձեւուեցան, եւ երբ հարկ էր, այլեւս, եզրակացութեան յան – գիլ, Դերենիկ Սրբազան համաձայն գտ – նուեցաւ Բերիոյ Թեմին Առաջնորդ Զարեհ Եպիսկոպոսի Կիլիկիոյ Կաթողիկոս ըն – տրուելուն, պայմանաւ որ ... Զարեհ եւ Խորէն Եպիսկոպոսները համաձայն ըլլան եւ աշխատին, իր, Դերենիկ Եպիսկոպոսի Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուե – լուն : Այսպէս, ուրեմն Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան ինքզինքը արժանի նկատող Դերենիկ Եպիսկոպոս, Տեղապահ Խադ Սրբազանի հրաժարման մէջ կը տեսնէր, զանէ Կիլիկիոյ Աթոռին Կաթո – ղիկոս ըլլալու հաւանականութիւն : Եւ Դերենիկ Սրբազան եղաւ գլխաւոր գերա – կատարը Խադ Արքեպիսկոպոսի հրաժա – րականին ընդունուելուն, Միաբանական Ժողովի կողմէ : Արդար ըլլալու համար, պէտք է այստեղ յայտնել, թէ Զարեհ, Խորէն եւ Ղեւոնդ Եպիսկոպոսներն ալ հա – մաձայն եղած էին Դերենիկ Եպիսկոպոսի Տեղապահութեան, եւ խօսք տուած իրեն օգնելու, պարզապէս դառնութեան ս – գիով, վստահ ըլլալով թէ Դերենիկ Ե – պիսկոպոսի Տեղապահութիւնը տարբեր պիտի չըլլար Խադ Սրբազանի պաշտօնա – վարութենէն, եւ Կիլիկեան Միաբանու – թեան անդամներէն ոմանք պիտի վայե – լէին արտաքոյ ըմբռնումներու եւ վար – չեցողութեան գլխաւորութիւն մը : Դե – րենիկ Սրբազան, եթէ համաձայն եղած չըլլար Խադ Սրբազանի հրաժարման, եւ չգտնէր հրաժարեալ Տեղապահի տօտ, որ – պէսզի նա յետս կոչէ իր պաշտօնագիրը Միաբանական Ժողովի ընթացքին, Խորէն Եպիսկոպոս չէր կրնար Տեղապահ ընտր – ուիլ, եւ կաթողիկոսական ընտրութեան Պատգամաւորական Ժողովը հաւանաբար չհրաւիրուէր տակաւին երկար ժամանակ :

17 Հոկտեմբեր 1955, Երկուշաբթի օր, Տ. Տ. Զարեհ, Դերենիկ, Խորէն եւ Ղե – ւոնդ Եպիսկոպոսները ի մի հաւաքուելով վանքէն ներս, եւ միշտ Դերենիկ Սրբա – զանի Տեղապահութիւնը ի մտի ունենա – լով, իրենց խորհրդակցութեան արդիւնքը կը բանաձեւէին հետեւեալ կէտերով .

« Ի ներքոյ ստորագրեալներս, Եպիս – կոպոսներ Կիլիկեան Ուխտին, նկատի առ – նելով Կաթողիկոսական Տեղապահ Տ. Խադ Արքեպիսկոպոսի հրաժարումով բա – ցուած տագնապալի կացութիւնը, սպասուելու համար հաւանական աւելի անախորժ եւ վտանգաւոր կացութիւննե – րէ, յանձն կ'առնենք . —

Ա.— Ներկայ տարւոյս Դեկտեմբեր 22– ին — 1955 — կատարել կաթողիկոսական ընտրութիւնը, նկատելով որ սոյն ընտ – րութեան համար օրինական ոչ մէկ ար – գելք կայ, Թեմերն ու Միաբանութիւնը արդէն ընտրած ըլլալով իրենց պատգա – մաւորները :

Բ.— Միաբանական Ընդհանուր Ժողո – վը անմիջապէս գումարել եւ վերոյիշեալ թուականը որոշել տալ նոյն ժողովին կողմէ :

Գ.— Նոյն ժողովին մէջ կատարել ըն – տրութիւնը Տնօրէն Ժողովի, որուն շըր – ջութենէն նմանապէս սուժած է արդէն վանքը :

Յ. Գ. Յօդուած Ա.ի մէջ յիշատակուած թուականը կը փոխուի, եւ կ'որոշուի 14 Յունուար 1956 :

ԶԱՐԵՀ եպիսկ., ԴԵՐԵՆԻԿ եպիս. ԽՈՐԷՆ եպիսկ. ՂԵՒՈՆԴ եպիսկ.

Անթիլիաս, 17 Հոկտ. 1955

Ամբողջ շաբաթ մը, Կիլիկեան Աթոռին Մայրավանքը եռուզեռի մէջ էր : Միա – բանական հաւաքոյթներ, խօսակցութիւն – ներ, թեր ու դէմ կարծիքներ, արտա – յայտութիւններ, եւայլն : Եռուն այս հո – գեվիճակին գործօն կերպով իր մասնակ – ցութիւնը կը բերէր «կամապաշտ»ներու խմբակը, զօրնզօրն իր հաւաքականու – թեամբ : Հրաժարեալ Տեղապահի ննջա – սենեակը, ուր Խադ Արքեպիսկոպոս ան – հանգստութեամբ մը պառկած էր, ան – հանգստութիւն՝ որ կրնար օգի փոփո – խութեան կամ վերջին շրջանի յուզումնա – լից իր օրերուն արդիւնքն ըլլալ, վերած – ուէր էր խորհրդակցութեանց ու բանակ – ցութեանց զաղտնարանի մը : Իր անկող – նին մէջ իսկ, Հրաժարեալ Տեղապահը ձնշումներու ենթարկուեցաւ : Կիլիկիոյ կաթողիկոսութեան ներկան ու ապագան իրենց ձեռքին մէջ պահել ուզող մութ ու – ժեր և անորմաւ խմբակցութիւններ չէին կրնար անտարբերութեամբ մը հանդի – սատես ըլլալ չահուած եւ երկարօրէն օղ – տագործուած հեղինակութեան մը կո – րուստին :

Խմբագրական ՀԱՍԿի

(18 Շար.)

ԿՈՒՅՐ

ՅԱՍՏՂՊ ՂՈՂՋՎՍԿՈՎՈՒԹԻՒՆ

ԺԲ.

Լռութիւն տիրեց ժողովատեղիին մէջ։ Ամէնքն ալ իրենց մտքերուն մէջ կը մտածէին այն ահռելի պատասխանատուութեան մասին, որ կը սպասէր իրենց։ Ամէնքն ալ կը զգային, որ ներկայ պահուն իրենց ձայնը կրնայ որոշել ոչ միայն իրենց, այլ նաեւ ամբողջ գիւղին ապագան։ Ամէնքն ալ կը զգային, որ իրենց ձայնը կրնայ ոչ միայն ազատել Ղարիպը, այլ նաեւ ամբողջ գիւղը ենթարկել ահռելի վտանգի։

Ամէնքն ալ կը մտածէին, թէ ինչպէ՞ս պիտի ազատուի Ղարիպը, եթէ ինքը ոչ մէկ յանցանք ունի։ Ամէնքն ալ կը մտածէին, թէ ինչպէ՞ս պիտի ազատուի գիւղը, եթէ Ղարիպը ազատուի։ Ամէնքն ալ կը մտածէին, թէ ինչպէ՞ս պիտի ազատուի Ղարիպը, եթէ ինքը ոչ մէկ յանցանք ունի։ Ամէնքն ալ կը մտածէին, թէ ինչպէ՞ս պիտի ազատուի գիւղը, եթէ Ղարիպը ազատու

տա կը վերատանձնէ իր դերը· սակայն մինչ այդ կարգ մը պայմաններ պէտք է իրականան: Միացեալ Նահանգներ խոստացած էին զէնք տալ Պուրկիպայի, սակայն մինչեւ վերջին վայրկեանը կը մտածէին, թէ Ֆրանսա պիտի կատարէր այդ պարտականութիւնը: Երբ յայտ – նուեցաւ, թէ Ֆրանսա զէնքերու հետ ան– ընդունելի պայմաններ կ'առաջարկէր Պուրկիպայի, Ուաշինկթըն եւ Լոնտոն ո– րոշեցին արագ շարժիլ եւ չանտսալ : Տրիդս չէ թուած ֆրանսական այն առա – ջարկները՝ որ անընդունելի նկատուած են Թունուզի կողմէ: Ամերիկայի Արտաքին նախարարը աւելցուց, թէ այս քայլը առնուած էր՝ ազատ աշխարհին մէջ խա– ղաղութիւնը պահպանելու եւ հակահա – մայնավար միասնականութիւնը զօրացնե– լու համար :

× Արեւմտեան Գերմանիոյ Արտաքին Նախարար Ֆոն Պրենթանօ շաբթու վերջ Ուաշինկթըն պիտի երթայ, քննելու հա – մար այն բոլոր հարցերը, որ պիտի ար – ծարծուին Ատլանտեան Ուխտի ժողովին մէջ, յառաջիկայ Դեկտեմբերին :

———o———

ՍԱԿԱՐԱՆ (Նոյեմբեր 19) — Զոյլ ոսկի 576·000, նափոլէոն 4250, զուից· 4100, անգլ· 5070, քսան տոլարնոց 20·520, Թղթադրամ (զուգահեռական շուկայ) սթերլին 1300, տոլար 494, զուից· 119, պելժ· 9·35, լիր 0·78:

◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆

ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ
ՆՈՒԻՐՈՒԱԾ ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ

Նախաձեռնութեամբ
Հ· Յ· Դ· ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻՆ

Այս Ուրբաթ, իրիկուան ժամը 21ին
Տէսինի Ազգ· Տան մէջ

Կը նախագահէ Կ· ՄԵՀԵԱՆ
Կը խօսի Կ· ՓՕԼԱՏԵԱՆ

Գեղարուեստական բաժին :

Մուտքը ազատ է

ՇԱՒԻԼԻ ԵԿԵՂԵՑԻԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Փոքրիկն Ռաֆֆի Եսայեան 15·000 Ֆր· իր քրոջ վաղամեռիկ Լիտիայի յիշատա – կին: Խաչիկ Էքպէքեան տասը հազար, Եանպէկեան, Ակոնայեան, Սիմոն Պէր – պէրեան, Տէր եւ Տիկին Մկրտիչեան հինգ հազարական ֆրանք : Խսկիճեան երկու հազար, Կարապետեան երկու հազար, Նիկողոսեան հազար:

Պ· Համբարձում Ֆըչըճեանի մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի կը նուիրեն Պ· Սիրուն Պարոնեան հազար ֆր· : Պ· Դաւիթ Տէր Գալուստեան հազար ֆրանք:

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Եկեղեցիին վարչութիւնը կը ծանուցա – նէ թէ՝ իր հիմնած հայերէն լեզուի եւ հայրենագիտութեան դասընթացքը կը վերսկսի 19 Նոյեմբեր Գշ· օրուընէ, դա – սախօսութեամբ ձեռնհաս ուսուցիչի մը, Բարեգործականի սրահին մէջ, ինչպէս նախորդ տարիներ, 19ա: Րիւ Վանթիւր, ժամը 19–21, ամէն Երեքշաբթի եւ Ուր – բաթ : Ծնողները կը հրաւիրուին օգ – տուիլ առիթէն՝ արձանագրելով երկու սեռէ եւ ամէն տարիքէ իրենց զաւակնե – րը, դասերու պահերուն :

◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆

ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԵԱՆ ՕՐԸ
ԱՌՆՈՒՎԻԼԻ ՄԷՋ

Առնուվիլի Առաքինազարդ Քոյրերը կը տօնեն Անարատ Յղութեան Օրը, կիրակի, 8 Դեկտեմբերին:

Այս առթիւ տեղի կ'ունենայ հանդիսա– ւոր պատարագ տեղւոյս Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, առաւօտեան ժա– մը 11ին:

Յետ պատարագի կազմակերպուած է ճաշ մը նախկին հաւատարիմ սանուհի – ներուն եւ իրենց փոքրիկներուն համար :

Փարիզի եւ արուարձաններու հին ա – շակերտուհիներէն անոնք որ կը փափա – քին ներկայ ըլլալ այս հանդիսութեան, բարեհաճին երկտողով մը իմաց տալ կամ հեռաձայնել՝ Սէօր Արմէնիէն, 73 Ավընիւ Հանրի Պարպիւս, Առնուվիլ լէ Կոնէս : Հեռաձայն 179 Առնուվիլ :

◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆

Imprimé sur les presses du Journal HARATCH
17, Rue Bleue, 17 — PARIS (9e)

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԽՆՋՈՅՔ
«ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐ»ՈՒԱՆ ԱՌԹԻՒ

ԱՆԻԷՌԻ մէջ, Նոյեմբեր 24ին, Ընկեր– վարականներու սրահը, մանրամասնու – թիւնները յաջորդով :

ԱՌՆՈՒՎԻԼԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ· Յ· Դ· «Վար – դան» ենթակոմիտէի եւ մասնակցու – թեամբ Կապոյտ Խաչի մասնաճիւղին եւ Նոր Սերունդի խումբին :

Այս կիրակի կէսօրէ վերջ ժամը 5էն 11, եկեղեցիին սրահը :

Կը խօսի ընկեր ՀԱՅԿ ՍԱՐԳՍԵԱՆ

Գեղարուեստական բաժնին կը մասնակ– ցին Թաւիտ ԳԱՐԵԳԻՆ :

Ճոխ պիւֆէ : Ծախքերու մասնակցու – թիւն :

×

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ
ՍԷՆ ՇԱՄՈՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ· Յ· Դ· «Վարու– ժան» կոմիտէի եւ մասնակցութեամբ Նոր Սերունդի :

Այս Շաբաթ, երեկոյեան ժամը 8·30 – ին, Սալ ժան տ'Արքի մէջ :

Կը նախագահէ ընկ· ԱՐՄԵՆԱԿ ԳՈՒ – ՅՈՒՄՃԵԱՆ :

Կը խօսի ընկ· Վ· ԻՇԽԱՆԵԱՆ

Գեղարուեստական բաժին.— Երգ, խմբերգ, արտասանութիւն :

Մուտքը ազատ է :

◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆

ՅԵՐԵԿՈՅԹ – ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Կազմակերպուած Սեվրանի Կապ· Խա– չի մասնաճիւղին կողմէ :

Կիրակի 24 Նոյեմբեր, ժամը 15էն 23, «ՄԱՍԻՍ»ի շքեղ սրահին մէջ, 87 Ավընիւ տը Լիվրի, Սեվրան:

Հայկական եւ եւրոպական պարեր, ա– նակնկալներ, ՍԹԷՍԷԼի նուագախում – բին մասնակցութեամբ :

Օթօպիւս՝ 147 էկլիզ տը Փանթէն, Կար տիւ Նոր, ժամը 14 եւ 15:

ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ

Ընկեր Սողոմոն Կիւլէզեան ցաւակցու – թիւն կը յայտնէ Տիկին Այվազեանի եւ պարագաներուն Թագւոր Այվազեանի մահուան առթիւ եւ փոխան ծաղկեպսակի երկու հազար ֆրանք կը նուիրէ Մշակոյ– թի Տան :

(Ստացանք «Յառաջ»էն) :

ՊՈՄՈՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Ֆ· Կ· Խաչի մասնաճիւղին վարժարանը վերաբացուած է արդէն Հոկտեմբերի սկիզբէն ի վեր, ուսուցչութեամբ Պ· Վահրամ Կ· Պապուխեանի :

Արձանագրութիւնները տեղի կ'ունենան Ս· Սահակ – Մեսրոպ սրահին մէջ :

Կը հրաւիրենք Պոմոնի յարգ· ծնողները որ չարունակեն վառ պահել իրենց սէրը հանդէպ Կապ· Խաչի կրթարանին ուր մեր զաւակները կը ստանան Ազգ· ոգի եւ հա– յերէնի բաւականաչափ պաշար :

Ֆ· Կ· Խաչի Պոմոնի մասնաճիւղի Վարչութիւն

ՀԱՐ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ Օգն· Մարմնի Ֆէ– սանվիլիէի օգափոխութեան կայանին կը նուիրեն· Այրի Տիկին Վ· Մեսրոպեան տասը հազար ֆրանք, իր ողբացեալ ա – մուսնոյն յիշատակին, Այրի Տիկին Մա – լաքեան հինգ հազար, Պ· Ծ· Աստուր – եան 500 ֆրանք:

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ Օգն· Մարմնի Փարիզի զարմանատան կը նուիրեն· — Տիկին Արոյեան հինգ հարիւր ֆր· : Պ· Չէյթունցեան 700 ֆրանք :

◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆◆

LE CLUB

DANCING
51, Rue Grignan, MARSEILLE
Tél. FE 27-66

Լաւագոյն ընդունելութիւն վերա– պահուած է հայկական կազմակեր– պութեանց եւ հայ ընտանիքներուն սրահը վարձելու համար :

Երեկոյթ, պարահանդէս, նշան– տուք, ամուսնութիւն եւայլն:

Տնօրէնութիւն՝ ԷՏԻ ԹՈՒՐՆԷԼ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՄԱՀՈՒԱՆ
ՅԻՍՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Հայրենասէր մեծ Հայրապետ Խրիմեան Հայրիկի մահուան յիսնամեակին առթիւ հանդիսաւոր քառաձայն Ս· պատարագ պիտի մատուցուի Փարիզի Ս· Յովհ· Մկրտիչ եկեղեցւոյ մէջ, այս կիրակի ժա– մը 10ին եւ պիտի կատարուի մասնաւոր հոգեհանգստեան արարողութիւն :

Պիտի պատարագէ եւ քարոզէ Կաթողի– կոսական պատուիրակ ՍԵՐՈՎԲԷ ԵՊԻՍԿ· ՄԱՆՈՒԿԵԱՆ :

Կը հրաւիրենք հայ ժողովուրդը որ ներկայ գտնուի այս արարողութեանց, յարգելու համար մեծ եկեղեցականին ան– մոռանալի յիշատակը :

ԴԻՒԱՆ

ԱԼՖՈՐՎԻԼ.— Կապ· Խաչի մասնաճիւ– ղը շնորհակալութեամբ ստացած է երկու հազար ֆրանք Պ· ՄեսրոպՋօրաբաբեյեա– նէ իր կնոջ ապաքինման առթիւ :

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Ֆ· Կ· ԽԱՉԻ Փարիզի մասնաճիւղի ընդհ· ժողովը այս շաբաթ, կէսօրէ վերջ, ժամը 3ին, Քաֆէ Րէժանի մէջ: Շատ կա– րեւոր օրակարգ: Պարահանդէսի կարգա– դրութիւններ: Բոլոր ընկերուհիներու ներկայութիւնը անհրաժեշտ է, ինչպէս նաեւ վարչութեան օժանդակներու ներ – կայութիւնը :

ՍԵԲԱՍՏԻՈՅ Նահանգային Մուրատ Ռուսուննարրաց Միութեան անդամական ժողովը այս կիրակի ժամը չորսին, Իսիի Խրիմեան վարժարանին սրահը :

Օրակարգ.— Ա) Նիւթական եւ բարո – յական հաշուետուութիւն :

Բ) Զեկուցում Հոկտեմբերի պատգամա– ւորական ժողովին :

Գ) Նոր վարչութեան ընտրութիւն :

ԿԱՐՏԱՆ.— Համախարբերդցիական Միութեան մասնաճիւղի ընդհ· անդամա– կան ժողովը այս կիրակի կէսօրէ վերջ ժամը ճիշդ երեքին Հ· Բ· Ը· Միութեան սրահին մէջ: Օրակարգ խիստ կարեւոր հարցեր : Անհրաժեշտ է մասնա – ճիւղիս բոլոր անդամներու ներկա – յութիւնը : Կը հրաւիրուին նաեւ ոչ ան – դամ բոլոր հայրենակիցները անխտիր :

"ԱՆԴԱՍՏԱՆ"Ի ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՆԵՐԸ

Այս Հինգշաբթի, երեկոյ ժամը 9ին Սոսիէթէ Սավանթի թիւ 1 նոր սրահին մէջ, 28 Րիւ Սերփանթ (Մեթրօ Սէն – Միշէլ)

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

Կը խօսին՝
Արդի հայ գրականութեան հարցերուն մասին

ՄԱՐՍԷԼ ՏԸԼԱՆՈՒԱ, ԼԻՒՔ – ԱՆՏՐԷ ՄԱՐՍԷԼ, ՎԱՀԷ ՔԱՋԱ, Կ· ՓՕԼԱՏԵԱՆ եւ ԲԻՒԶԱՆԴ ԹՕՓԱԼԵԱՆ :

Գեղարուեստական բաժին, որուն կը մասնակցին

ԼԻՏԻԱ ԿԱՐԻՆ (ԻԶՔԱԼԱՅԵԱՆ)

ԱՐՏԱՇԷՍ ԳՄԲԷԹԵԱՆ, ՆՈՒԻՐՀԱՆ ՄԱՐԴԱՐԵԱՆ, ԳՐԻԳՈՐ ՄԵԼԻՔԵԱՆ

Մուտքը ազատ է :

ՈՐԲԵՐՈՒ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԱՐՄՆԻ - ՓԱՐԻԶԱՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆ
ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՆՑԻԿ ՅԵՐԵԿՈՅԹԸ

ՆՈՅ· 24ԻՆ, ԺԱՄԸ 16էն 24 — Կամոտ Օթէլի շքեղ սրահներուն մէջ

ՍԱՎԱ ՆԷԱԿՈՒՅԻ հունգարական նուագախումբը եւ հաճելի անակնկալներ

Կը խնդրուի ապահովել սեղանները հեռաձայնելով ՓԱՍԻ 64·90

Մուտք 500 փրանք

ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՐԵՐՈՒ ԵՒ ՆՈՒԱԳԻ ԲԱՑԱՌԻԿ ԵՐԵԿՈՅ
12, Դեկտեմբեր, Հինգշաբթի ժամը 8·45ին

THEATRE DE PARIS, 15, Rue Blanche, Métro : Trinité ou Blanche

ԱԼԻՍ ՊՕՅԱՃԵԱՆ

Կը պարէ ու կը ղեկավարէ իր պատրաստած երկսեռ պարախումբը
Մասնակցութեամբ նուագախումբի զոր կը ղեկավարէ

ԱՐԱ ՊԱՐԹԵՒԵԱՆ

Տոմսերու գիներն են 800, 600, 500, 400 եւ 300 Ֆրանք
Ստանալու համար դիմել՝
Etabl. O. B 63, Rue d'Aboukir, Paris - Tél. CEN. 48-69
եւ ներկայացման օրը թատրոնին կիչէն :

ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Շաւիլի Եկեղեցւոյ Հոգաբարձութիւնը կը փութայ իր խորին ցաւակցութիւնը յայտնել, Պ· Համբարձում Ֆըչըճեանի մահուան առթիւ, անոր ընտանեկան պա – րագաներուն :

Հանգուցեալը յոյժ եկեղեցասէր, մաս կը կազմէր հոգաբարձութեան փոխ ատենապետի պաշտօնով :

ԿՈՒԶՈՒԻՆ
Société France-Cameroun
24. RUE D'ENGHIEN, PARIS

Կը փնտռէ հայ երիտասարդ մը ամու – րի, ազատ զինուորական պարտականու – թենէ եւ պատրաստուած: Դիմել$ գրա – ւոր կամ անձնապէս :

ԳՆՈՒՄ ԵՒ ՎԱՃԱՌՈՒՄ

Ցարկարաժին, խանութ, հող, շէնք, ընդունելութիւն եւ խոր – հուրդներ՝ Հայու մը կողմէ

ԱՄԷՆ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

AGENCE LEVET
9, Boulevard des Italiens, PARIS 2e
Téléphone : RIC. 36-75



Նոր կատարելագործում կօշիկի կրունկներու պատրաստութեան մէջ

Առաջին հայ հաստատութիւնը որ յա – ջողած է մաքիէռ փլասթիքի եւ ալիւ – մինիոմի միացումով չինել անբէկ (էնճա– սապլը) եւ ձիւն կօշիկի կրունկներ ամէն բարձրութեամբ :

Դիմել՝

VAN-PLAST
(ՎԱՆԼԵԱՆ)
7, RUE GODOT DE MAUROY
Tél. : OPE. 01-08
Առաւօտները հեռաձայնել՝ TAI 33-38

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925 — Tél. : PRO. 86-60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. PARIS 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամս. 1600

Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք : Հատը 12 ֆր.

ՈՒՐԲԱԹ
22
ՆՈՅԵՄԲԵՐ
VENDREDI
22 NOVEMBRE
1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8049 — 33e ANNEE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3850

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ "ԴԻՐՔԸ"

Ամենայն Հայոց Կաթողիկոսարանի Դիւանն ապահովագրեալ նամակով մը ծանր 5 Նոյեմբեր թուակիր «Հայորդոց Հայրենեաց պրուքսէլեան» մը՝ «Տպագրակման համար» :

Քիչ մը ուշացած այս «Հայորդոց պրուքսէլեան»ը կը պարունակէ Հոկտեմբեր 22 թուակիր այն յատուկ կարեւոր հեռագիրը, զոր Վազգէն Ա. ուղղած էր «Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Աթոռակալ Տ. Զարեհ Եպիսկոպոս»ին՝ Ամերիկայ Ազգային Թեմին Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կապուելուն առթիւ, ինչպէս նաեւ Կիլիկիոյ Կաթողիկոսարանի Դրան Եպիսկոպոս Աբրահամ սրբազանի 2 Նոյեմբեր թուակիր պատասխանը : Այս երկու հեռագիրներն ալ հրատարակուած էին «Յառաջ»ի 15 Նոյեմբերի թիւին մէջ՝ լրջիւ նկատի պատմութեան համար :

Էջմիածնի պահակային հեռագրին մէջ ըսուած արտայայտուած էին զգուշ արդէն (Յառաջ, 5 եւ 6 Նոյեմբեր) :

Նորութիւնը Մայր Աթոռի Դիւանի հաղորդագրութեան մէջ, հետեւեալն է.

« Վեհ. Հայրապետը յատուկ կոնդակով, ուղղուած համայն հայ ժողովրդեան, պիտի ճշդէ Մայր Աթոռի դիրքը Ամերիկայի եւ նրա հակականոնական ու եկեղեցահալած ընթացքի հանդէպ » :

Ուրեմն Ամենայն Հայոց Կաթողիկոսը « հակականոնական եւ եկեղեցահալած » դանելով Ամերիկեան ընթացքը, յատուկ կոնդակով պիտի ճշդէ իր դիրքը անոր հանդէպ :

Մինչ Հոկտեմբեր 22ի իր հեռագրին մէջ Վազգէն Ա. կ'առաջարկէր «անյապաղ կերպով բանակցութիւններ սկսիլ որեւէ տեղ, վերականգնելու համար հոգեւոր մտութիւնը եւ խաղաղութիւնը », Մայր Աթոռի Դիւանը Նոյեմբեր 5ին դիրք կը ընդունէր հետեւեալ խօսքը կ'ընէ :

Ի՞նչ դիրք է որ կ'ուզէ ճշդել Վազգէն Կաթողիկոս, որ առաջին օրէն իսկ ձեռքով ոտքով մէջտեղ եկաւ Կիլիկիոյ Կաթողիկոսական ընտրութեան գործին : Մեր եկեղեցական պատմութեան մէջ ե՞րբ տեսնուած է, որ Էջմիածնի կաթողիկոսը Աբրահամն մինչեւ Տաւրոս ճամբայ կարէ՝ Կիլիկիոյ Հայրապետական ընտրութեան «մասնակցելու» համար :

Վազգէն Ա. ուղեց նախընթաց մը ըսել : Ու չարաչար ձախողեցաւ :

1956 Յունուար 31ին Կիլիկիոյ Կաթողիկոս Տէրէն Եպիսկ. Բարսեղեանի տեղապահ Խորէն Եպիսկ. Բարոյեանի ուղղուած հեռագրով մը, Էջմիածնի Տնօրինական Կաթողիկոսը կ'ըսէր. «Առաջնորդուած մեր Ս. եկեղեցւոյ սիրոյ, միութեան եւ վերադարձը չտեսնելու եւ ամրապնդելու վճռակամութենէն, որոշած ենք անձամբ մասնակցիլ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի ընտրութեան եւ օծման » :

Տեսանք սակայն, որ հակառակ իր խոստումին, ո՛չ ընտրութեան մասնակցեցաւ ո՛չ ալ՝ օծման : Ի յառաջագունէ հաստակորոշ Ազգային Սահմանադրութեան, որուն համար Փարիզի մէջ անձամբ, մեղի կ'ըսէր թէ այլեւս դոյութեան իրաւունք չունի՝ քանի որ հիմա չկայ Օսմ. կայսրութիւն, Վազգէն Ա. չուզեց լսել ձայնը Պատրիարքարանի ժողովին, որ ընտրուած էր ժողովուրդին ձայնով՝ ըստ Սահմանադրութեան եւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կանոնադրին :

Ենթակայ՝ զանազան ազդեցութեանց, ուզեց պարտադրել իր կամքը՝ անհանելով օրէնքը : Ու երբ չյաջողեցաւ՝ ցուցական կերպով հեռացաւ Լիբանանէն՝ կաթողիկոսական ընտրութենէն քանի մը ժամ առաջ : Ցետոյ Գահիրէի մէջ դումարեց « եպիսկոպոսական ժողով » մը, անոր մէջ ջոգաւ «թերի եւ անընդունելի» հռչակելու համար Զարեհ Ա.ի ընտրութիւնը :

Այս բոլորէն ալ ո՛չ մէկ արժէք ունեցաւ, քանի որ անոր հեղինակները ներ կայիս կը ճանչնան Զարեհ Ա.ի ընտրութեան օրինաւորութիւնը : Միայն թէ տակաւին կը յամառին «օծումի»ը ապօրէն կատել : Կ'ուզեն փոթորիկ յարուցանել պատաթ մը ջուրի մէջ :

Կ'ուզեն վերարծարծել այն անամէջ վէճերը, որոնք Գէորգ Դ. Կաթողիկոսի օրով ա՛նքան թունաւորեցին մթնոլորտը, Էջմիածինէն մինչեւ Պոլիս, մինչեւ Աղթամար ու Սիս :

Ո՞ւր կ'ուզեն հասնիլ ի վերջոյ :

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՓԻՆՕ - ՏԸԼԸՍ
ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՎԵՐՋԱՑԱՆ

ՓԻՆՕ ԴՈՒՋ Է ԱՐԴԻՒՆՔԷՆ

Ուաշինկթընի մէջ վերջացան Փինօ – Տըլլըս խորհրդակցութիւնները : Զորեք – շաբթի վերջը Ֆրանսայի Արտաքին Նախարարը մեկնեցաւ Նիւ Եորք :

Ընդհանուր առմամբ Փինօ գոհ է արդիւնքէն : Խորհրդակցութիւնները տեւեցին Աթլանտեան Ուխտի ժողովին չուրջ եղած են : Արտաքին նախարարը յայտարարեց թէ Ֆրանսայի եւ Ամերիկայի կառավարութեանց տեսակէտները իրարու կը համապատասխանէին՝ Փարիզի վճռաբանութեանց չուրջ : Երկու երկիրները պիտի աշխատին որդեգրել հասարակ ուղեգիծ մը՝ լաւ արդիւնքի հասնելու համար :

Օրակարգի երկրորդ հարցն էր՝ Թունուզի յանձնուած անգլեամերիկեան դէնքերուն խնդիրը : Մեծացեալ Նահանգները պիտի աշխատին, որ Թունուզի յանձնուած դէնքերը ալժերիայի ապստամբ – ներուն ձեռքը չանցնին, յայտարարեց Ուաշինկթընի Արտաքին նախարարութեան բանբերը, մեժամտանակ չհերքելով թէ Տըլլըս եւ Փինօ համաձայնութիւն պոյա – ցուցած են եւ Ամերիկա ճիշ պիտի չխնայէ, որպէսզի Ֆրանսայի դիրքը ամուր ճնայ :

— Իր կարգին, խորհրդակցութիւններէն առաք Փինօ յայտարարեց.— Ուզածս ստացայ. ոչ ոք հրաշքներու կը սպասէր արդէն :

Ըստ երեւոյթին, Թունուզի յանձնուած դէնքերու հարցին մէջ Ֆրանսական տեսակէտը ամբողջութեամբ չէ ընդունուած Տըլլըսի կողմէ. անոր փոխարէն սակայն, ՄԱԿի մէջ Ալժերիոյ չուրջ բացուելիք վիճաբանութեանց ընթացքին Միացեալ Նահանգներ թիկունք պիտի կանգնին Ֆրանսայի : Այս պարագային ալ սակայն, տակաւին յստակ չէ թէ ի՛նչ ուղղութիւն պիտի արդեղրուի ՄԱԿի մէջ : Ամերիկայի Արտաքին Նախարարը համաձայն ըլլալով հանդերձ Փինոյի, ըսած է.— Ալժերիոյ հարցին չուրջ բացուելիք վիճաբանութեանց մէջ մեր արդեղրելիք դիրքը կախում ունի ձեր Խորհրդարանէն :

Բաց ասոր, Տըլլըս խնդրած է, որ Փինօ միջամտէ Փարիզի եւ Թունուզի կառավարութեանց միջեւ, որպէսզի տարակոյսները ու Ֆրանսա Թունուզի տայ իր խոստացած դէնքերը : Ֆրանսայի Արտաքին Նախարարին խոստումը տրուած է, որ ցարդ յանձնուած անգլեամերիկեան դէնքերը անմիջապէս պիտի բաժնուին Թունուզեան բանակին, փոխանակ պահուելու՝ ուրկէ կրնան անհետանալ : Ֆրանսան պիտի միջամտէ եթէ պարձեալ դէնքեր յանձնուին, բայց Թունուզ նման առաջարկ մը չէ ըրած :

Խորհրդակցութեանց ընթացքին ամէնէն

(Շարունակութիւնը կարդալ .Դ. էջ)

ԵԳԻՊՏՈՍ Կ'ՕԳՏՈՒԻ
ՈՒՈՇԻՆՔԸՆԷՆ ԵՒ ՄՈՍԿՈՒԱՅԷՆ

Գահիրէի Հայոց Թեմական Հաղորդակ, թէ եգիպտական զինեալ ուժերու ընդհանուր հրամանատար զօրավար Ամեր, որ Մոսկուա գացած էր, համաձայնութիւն մը ստացած է խորհրդային զէնքամթերքներուն հետ : Եգիպտոս 700·000·000 ռուբլի պիտի առնայ Խ. Միութենէն (200 միլիոն տոլար) : Այս դումարը պիտի օգտագործուի Եգիպտոսի հնդամեակի ծրագիրներուն գործադրութեան համար : Գահիրէ իր պարարը պիտի սկսի վճարել հինգ տարի վերջ :

Այս յայտարարութիւնը ձեռք ձգելէ վերջ, զօրավար Ամեր վերադարձաւ Գահիրէ, Դ. օր : Օդակայանին մէջ զօրավարը յայտարարեց.— Հաստատեցի որ եգիպտացի եւ խորհրդային ժողովուրդներուն միջեւ բարեկամական կապերը կան. կը մտքեմ որ այդ կապերը ամէն օր աւելի սերտանան :

Այս ձեւով, Գահիրէ կը հետեւի Դամասկոսի ուղեգիծին, ընդունելով Խ. Միութեան տնտեսական օժանդակութիւնը : Արաբական այս երկու երկիրներն ալ դէնք ստացած են արդէն Մոսկուայէն, իրենց Պատերազմական Նախարարներն ալ կրեմլին պիտի ղրկեն :

Այն պահուն, երբ Ամեր խորհրդային ռուսլիներով բեռնաւորուած Գահիրէ կը վերադառնար, Միացեալ Նահանգներու դ'ատաներ յայտարարեց, թէ իր կառավարութիւնը որոշած է 600·000 տոլար տալ Եգիպտոսի, որպէս զի կարենայ իր աշխատանքները կատարել :

Այսուհանդերձ, Նախագահ Նասր վերջնական որոշում մը տալէ առաջ բաւական երկմտած է : Նախ սպասեց, որ եգիպտոսի Էմմատական նախարարը Ուաշինկթընէն վերադառնայ՝ առաքելութեան արդիւնքը տեսնելու համար : Յայտ ունէր նաեւ, որ Անգլիոյ հետ սկսած խորհրդակցութիւնները չտեսով կը վերջանան եւ կ'ապահովէ անյարժութեան մասնուած միլիոնաւոր սթերլինները, որոնց այնքան պէտք ունի Եգիպտոս : Նասր կը սպասէր նաեւ Մեջլիսին Դրամատունէն բաւական մեծ դումար մը առնել՝ Սուէզի նախկին Ընկերութեան պաշտօնեաներուն վնասուց հատուցման համար :

Այս բոլորը, անշուշտ, կապ ունի Ասուանի ամբարտակին շինութեան հետ :

Նասրի մտահոգութիւնները պատճառ չեն սակայն, որ Դամասկոսի հետ պարծակի : Երկու երկիրներու միջեւ կապը հետզհետէ կը սերտանայ եւ արդէն իսկ կը խօսուի Եգիպտոս – Սուրիա Առանցքի մասին :

Սուրիոյ Տնտեսական Նախարարը ներ ղուկ Գահիրէ գացած է, երկու երկիրներուն միջեւ տնտեսական միութիւնը ստեղծելի հաստատուն վերնի վրայ դնելու համար :

Դամասկոս, ինչպէս Գահիրէ այս մեծ ձեռքը կը նկատէն առաջին քայլը՝ դէպի արաբական աշխարհի միութիւնը : Այս միութիւնը, կը յայտարարեն անոնք, պիտի պահէ հասարակաց այն տեսլուքը, թէ նր՝ որ դոյութիւն ունի Իսրայէլի դէմ :

ԴԱՆԻՈՑ վարչապետը՝ Հանսէն, երկու օրուան համար Փարիզ եկաւ, ուրկէ պիտի երթայ Արեւմտեան Գերմանիա, վարչապետ Ատենաուերի հետ խորհրդակցելու համար :

ՕՐ ՔԱՆ ՕՐԻՆ

ԾԱՆՕԹԱՆԱՆՔ ...

—o—

Հայաստանի մէջ զոյութիւն ունի քանի կերպութիւն մը, որուն կոչումն է «կուլ տուրական կապ » պահել արտերկրի Հայութեան հետ : Վերջերս, այդ ընկերութեան մէկ... լուսարարը, Հր. Գրիգորեան, իր ընթերցողներուն ծանօթացուցած է «Սփիւռհահայ գրողների երկերը» որոնց մէջ տեղ գրաւած է «վերածնած Հայաստան»ը :

Մենք ալ ծանօթանանք այդ... գրողներուն :

Պարզ է, որ Վ. Թէֆէեան եղած է ոչ դաշնակցական գրող մը եւ, լա՛ւ բանաստեղծ : Անխուսափելի է անոր անունն կրկնութիւնը՝ նման պարագաներուն : Սակայն անոր հե՞տ. տանիք բանի մը նմոյշներ :

« Սփիւռհահայ բանաստեղծներու աւագ սերնդի ներկայացուցիչ »... Վահան Մալէգեան : Յիշուած է նաեւ իր մէկ ոտանաւորը, որուն մէջ «Ափ մը հող » կ'ուզէ (եղեր) իր հայրենիքէն, շիրմին վրայ « բուսնելու » համար : Աւելի լաւ չէ՞ր ըլլար, որ փոխանակ «հող»ին, ինք բուսնէր «վերածնած հայրենիք»ի հողին վրայ ... :

Վ. Վահեանէ վերջ, կը շարունակուի անունանացանկը կարմրաւուն հերոսներ – րուն. Գ. Ադդարեան, Ս. Տէրունեան, Զարեհ Մելիոնեան, Յակոբ Գոյումճեան եւայլն... եւայլն : Լա՞ւ էք այս մարդոց անուններ՝ իբրեւ «բանաստեղծ» : Կարդացա՞ծ էք անոնց «խոշո՛ր» ստեղծագործութիւնները : Անոնց ոտանաւորները ձեռս անցած են... սխալմամբ : Նոյն – իսկ՝ կարդացած եմ : Ի՞նչ կ'ուզէք որ ըլլան անոնք... մէկը Քորէայի մէջ ինկած խեղճերը կը «հերոսացնէ», միւսը սրճարանի մը մէջ սպանուած «ընկեր» Մահմուտին վրայ երդում կ'ընէ, որ պիտի շարունակեն իր ... գործը, ուրիշ մը Սթալինի մեծութեամբ սկսած էր՝ հասնելու համար խրուշչեւի եւ դեռ... ինչե՞ր :

Ասոնց կողքին յիշած են նաեւ «մե՛ծ» արձակագիրներու անուններ, որոնց մէջ ծանօթ է միայն վահէ Հայկը (Ամերիկա) :

Եւ՝ այսքան միայն, իրրեւ արտերկրի գրականութիւն եւ գրողներ :

Ուրախ ենք, որ մենք ալ ծանօթացանք արդի հայ գրականութեան :

Բայց, ոչ – դաշնակցական Թէֆէեանի հոգին պիտի չխռովի՞ արդեօք, երբ իր անունը կր դնեն խեղկատակներուն ճի՛շդ հովիկը : Թերեւս, Հայաստանի մէջ դեռ կր կասկածին անոր ալ արժէքին վրայ ... :

ԱՐՄԵՆԱԿ

Թ. ԱՅՎԱԶԵԱՆԻ
ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

—o—

Զօրեքշաբթի առաւօտ անդի ունեցաւ Լիոնի մեր ընկերներէն Թադեւոս Այվազեանի թաղումը : Ներկայ էին բացի իր ընտանեկան պարագաներէն ու հայրենակիցներէն՝ մեծ թիւով ընկերներ Իսիէն, Փարիզէն, Լիոնէն եւ Տէսինէն : Ծաղկեպսակներ դրկած էին Հ. Յ. Դ. Փարիզի Երջանկային Կոմիտէն, Իսիի Զաւարեան Կոմիտէն եւ Լիոնի ընկերները :

Իսիի գերեզմանատան մէջ «յանուն իր զաւակներու ընկերներուն» դամբանական խօսեցան ընկեր Հրանտ – Սամուէլ եւ ընկեր Պետոնեան (Լիոնէն) :

ԳԱՂՈՒԹԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԼՐԻՒԱԼ ԳՈՅՔ ՉԷ

1945 Ապրիլ 8ին, մօտ հինգ տարուան լռութիւնէ մը ետք, վերահրատարակուած «Ցառաջ»ը, «Նորէն Պատնէշին Վրայ» խմբագրականով կը գրէր.—

«Ի՞նչպէս կ'ըմբռնենիք աշխատաւիքը այսօրուան եւ վաղուան համար:

«Ա.— Այսօր ալ, ինչպէս երէկ, աշխատաւիք ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՀԱՄԱՐ:

«Բ.— Աշխատաւիք արտասահմանի իւիճապաշտպանութեան համար:

«Գ.— Աշխատաւիք մշակոյթի ճակատին վրայ:

«Դ.— Աշխատաւիք նոր սերունդին փրկութեան համար»:

Ամբողջական ուղղութ մը — խառացած եւ յստակ — որ մի քանի տասնեակ տարիներէ ի վեր, անդադար կը հետապնդուի «Ցառաջ»ի եւ մեր կուսակցական եւ համակիր մամուլի կողմէն:

Այս հաստատումով, սխալ պիտի ըլլայ հետեւցնել, որ մեզմէ դուրս ուրիշները — կուսակցութիւնները ու կազմակերպութիւնները — անտարբեր դանուած են եւ աչ մէկ ճիգ գործ դրած՝ այս ուղղութեամբ:

Իրողութիւնը այն է, որ պակսաչափ հի հայկական բոլոր կուսակցութիւնները, գանազան բնոյթ կրող հանրային կազմակերպութիւնները, չմոռնալով նաեւ մեր եկեղեցիներն ու կրթական հիմնարկութիւնները իւրացուցած են վերը յիշատակուած ուղեգիծը, հոգ չէ թէ տարբեր ձեւակերպումով:

Աւելի հանդերձ, փաստը այն է, որ բոլորի կողմէն կենսական նկատուած այս աշխատանքներու չուրջ անկարող եղանք համախմբել մեր ուժերն ու ճիգերը, եւ դեռ աւելին ըլլալով բաժանուածներ եր - կու հակամարտ եւ անհաշտ կողմերու:

Ինչպէ՞ս բացատրել այս երեւոյթը:

Թող զարմանալի չնկատուի, եթէ առաջին հայեացքով տարօրինակ եւ անբնական նկատուող այս երեւոյթի մէջն իսկ փորձենք փնտռել այն հիմնական պատճառները, որոնք ծնունդ տուին մեր ներքին անհամակարգութիւններուն, եւ ինչու չէ՞, չափով մը նաեւ մեր պատմութիւններուն եւ հակամարտութիւններուն: Ուրիշ խօսքով, երկու անհաշտ կողմերու առկայութեան:

Բացատրելու համար մեր միտքերը, անցողակի կերպով պատկերացնենք այն տագնապալի վիճակը, որուն ենթարկուեցաւ հայութիւնը Լօզանի չարաղէտ դաշնագրով:

Առանց մանրամասնութիւններու վրայ ծանրանալու, յիշեցնենք, որ, աշխարհի մեծերու ներհակ չահերու հակամարտութեանց մէջ, անդամ մը եւս «Թզուկեցաւ» Հայկական Հարցը:

Թրքական ոճրային գործողութիւններէն պատճառած հայութիւնը՝ թափառական եւ հալածական, կը մատնուէր կատարեալ տագնապալի կացութեան մը: Հարիւր հազարաւոր բռնագութիւնները, հարկադրաբար, կը լքէին իրենց հոգն ու տունը, անհատական եւ ընդհանրական սեփականութիւնները, գարաւոր քիչատակարան - ներն ու ամէն տեսակի հարստութիւններ:

Անհրաժեշտ էր արագութեամբ ապահովել պատմական գարձած մեր ժողովուրդի տեղաւորման եւ հոգատարութեան ծանր գործը, փրկելու համար գայն վերջնական ոչնչացումէ:

Գիտենք թէ՝ ինչ գժուարին պայմաններու մէջ կատարուեցաւ այդ աշխատանքները:

Առանց ժխտելու օտար բարեսիրական կազմակերպութիւններու եւ հանգուցեալ Ազգերու Ժողովի կատարած նախանձա - մոտ գերը մեր տարագիր բռնագութիւներու օժանդակութեան գործին մէջ, անհրաժեշտ է մէջտ կրկնել, որ Հայկական Հարցը կտրանցուցած էր իր իրական նշանակութիւնը: Գարպուած քաղաքական բռնանդակութիւնէն, գարձած էր պարզ մարդասիրական խնդիր մը:

Առեղծուած այս պայմաններուն մէջ, խորհրդայնացած մեր Հայրենիքը յանձին Մ. Թուլումեանի, հանդիսացաւ էր, չըսելու համար միակակից եւ պլխաւոր գերակատարներէն մէկը:

Հայաստանի խորհրդայնացումով, հայկական հարցը «ընդմիշտ լուծուած է» յայտարարելով, Մ. Թուլումեանը, փաստօրէն հրաժարած էր հայկական չահերու հետապնդման իրաւունքէն: Ինքնին հասկրնալի է, որ Մ. Հայաստանի կառավարութիւնը իր կարգին եթէ ցանկութիւն ունենար անդամ, պիտի չկրնար տարբեր վերաբերմունք մը դրսեւորել:

Անհրաժե՞շտ է հաստատել, որ ասեղծուած այս պայմաններուն մէջ, մեր տարագիր բռնագութիւնները դրկուած պատական ամէն տեսակի օժանդակութիւն - ներէ եւ պաշտպանութենէ, դէր ցանձ - նուէին անորոշ ճակատագրի քմահաճոյքներուն:

Պէ՞տք էր համակերպիլ այս ժողովուրդին պարտադրուած այս վիճակին հետ: Պէ՞տք էր հրաժարիլ մեր ժողովուրդի անվիճելի եւ արդար բոլոր իրաւունքները հետապնդելէ: Եւ վերջապէս, պէ՞տք էր ենթարկուիլ աշխարհի հզօրներու կամ - քին եւ համակերպիլ Հայկական Հարցի թաղման յանգագարտ արարքին հետ:

Եթէ ընդունինք, որ մեր ժողովուրդը բաժնուած է Դաշնակցական եւ հակա - դաշնակցական երկու պլխաւոր ճակատ - ներու, կարող ենք առանց իրողութեան դէմ մեղանչելու յայտարարել, որ Դաշ - նակցական ճակատի պատասխանը մեծ ՈՉ մրն է եղած երէկ, ինչպէս եւ այսօր:

Մեր այս ոչը՝ հիմնաւորուած է մեր ժողովուրդի անժխտելի եւ արդար իրա - ւունքներով եւ նուիրագործուած է ոչ մէ - այն անասհման զոհաբերութիւններով, այլ եւ Սեւրի դաշնագրով: Ուրիշները, կարող են ուրանալ, ժխտել, բայց մենք պարտական չենք ենթարկուելու անոնց կամքին եւ անարդար վճիռներուն:

Կը սխալի՞նք եթէ ըսենք, թէ դըժ - բախտաբար, հակադաշնակցական ճակա - տը կը խուսափի յստակօրէն ձեւակերպե - լու իր պատասխանը: Կը խուսափի, հա - ւանաբար այն պատճառով, որ մեզ նման մտածելով եւ գատելով հանդերձ, կը դժուարանայ մեզ հետ միեւնոյն կեցուածքն ունենալու աններելի յանցանքէն:

Ես նաեւ այն պատճառով, որ իբրեւ համոզումով, հայ ժողովուրդի ուրաց - մնային: Ենթադրաբար Դերենիկ Եպիս - կոպոսի հետ բլլալու ամէն առեւել ունե - ցող երիտասարդ միաբաններն անդամ, վճռաբար եւ կտրուկ կերպով կը մերժէին որեւէ աջակցութիւն իրենց հոգեւոր ծնո - դին...: Քիչ անդամ, ուսուցչի եւ աշա - կերտի, ձեռնադրողի եւ ձեռնադրեալի փոխ-յարաբերութիւնները կրնային այս - քան լարուած բլլալ: Երիտասարդ բոլոր միաբանները, կարծէք, կը լուծէին վրէ - ժը այն տարօրինակ, անմարդկային եւ հակամանկավարժական վերաբերումին, զոր կրած բլլալու պատուհենէն չէին եւ չեն կրնար ձերբազատուիլ:

Շատեր մը ամրողջ, ուրեմն, Դերենիկ Սրբազան սկսաւ ծրագիրներ մշակել ա - պագայ իր գործունէութեան համար, ա - նոնց մասնակից գարձնելով նաեւ իր ա - տիճանակիցները: Իր հաստատ մտադրութեան առարկան էր «ճնունդ» ի Երիտ. Թեմին Գաւառական Ժողովի կազմութեան: Տեղապահ բնարուելէ անմիջապէս յետոյ, Դերենիկ Սրբազան որոշած բլլալ կը թր - ւէր մեկնիլ Հալէպ, իջեւանիլ քաղաքին նշանաւոր մէկ հիւրանոցը եւ այնտեղէն, այդ պանդոկէն քննել թեմին ահմանա - դրական կեանքին երեւոյթները: Դերենիկ Եպիսկոպոս եւ, ... Ազգային Սահմանադրութիւն: Ցայտնի էր թէ Տեղապահու - թեան պատրաստուող Սրբազանը ինչպէ - սի, եւ որանց հաչոյն գործունէութիւն պիտի ունենար: Բացի խրտչեցուցիչ այս

ՖՐԱՆՍԱՅԻՆԵՐՈՒ ՄԵԾ ՄԱՍԸ ՀԱՄԱՁԱՅՆ Է

ՖՐԱՆՔԷՒԳԵՐՄԱՆ ՄԵՐՁԵՑՄԱՆ

ՄՄԲ.— Օրուան հրատապ խնդիրներէն մէկն է Ֆրանսայի եւ Գերմանիոյ յարաբերութիւնները: Այս առթիւ Լը Մոնտ շահեկան տեղեկութիւններ կը հրատարակէ հանրային կարծիքին գաղելով: Ստորեւ գլխաւոր մասերը.—

Արեւմտեան Գերմանիոյ կառավարութեան խնդրանքին ընդառաջելով, հանրապետութեան սպասարկութիւնը քննութեամբ բացառ հասկնալու համար Ֆրանսայի հանրային կարծիքը՝ Գերմանիոյ մասին: Հաստատուեցաւ, որ Ֆրանսայի ժողովուրդը անտարբեր չէ գերմանական հարցին նկատմամբ:

Տրուած է հետեւեալ հարցումը.— Ձեզի համաձայն, ի՞նչ պէտք է ըլլայ Ֆրանսայի դիրքը՝ Արեւմտեան Գերմանիոյ հանդիպելով, վատահութի՞ւն, վատահութիւն եւ խոհեմութի՞ւն, թէ ա՛չ մէկ վատահութիւն:

Հարցապնդուած մարդոց 93 առ հարիւրը պատասխանած է, որոնց 70 առ հարիւրը պատասխանած է խոհեմ վատահութեան, 15 առ հարիւրը՝ դուշութեան եւ ութ առ հարիւրը՝ բացարձակ վատահութեան:

Հարցապնդուած մարդոց կէսը յարաբերութիւններ ունեցած էին Գերմանիա - յինեալու հետ, 49 առ հարիւրը լսած էր վարչապետ Ատենաուերի անունը եւ 24 առ հարիւրը՝ այցելած Գերմանիա: Սակայն, անձնական այս փորձառութիւնները չեն նշանակեր, թէ Գերմանացիներու եւ Գերմանիոյ հանդէպ տարակարծութիւններ չկան:

Հասարակութեան մեծամասնութիւնը տակաւին կ'երկմտի Գերմանիոյ առջեւ: Շատեր կը դժուարանան կամ չեն պատասխաններ, երբ հարց կը տրուի, թէ ըստ իրենց Գերմանացիները հասկացո՞ղ են այլեւս անցեալին մէջ գործուած սխալները, կամ, ժողովրդավարակա՞ն է Գերմանիոյ ներկայ վարչակարգը:

Վերապահ են նաեւ Արեւմտեան Գերմանիոյ ապագային նկատմամբ, յատկապէս՝ Ֆրանսայի հետ ունենալիք յարաբերութեանց մէջ: Կը հաստատեն Գերմանացիներու ողջախոհութեան տակայն կը կասկածին որ իրենց նկարագիրը կրնայ չափազանցութեան տանիլ զիրենք:

Այս բոլոր վերապահութիւնները պատճառ մը չեն նկատուր տակայն, որ Ֆրանքեւգերման անտեսական մերձեցում մը բլլայ, ինչպէս նաեւ վատահութիւն՝ անոր եւ այլ դէշ յիշատակները մոռնալու համար: Եզրակացնելով, քննութիւն կատարող կազմակերպութիւնը կը հաստատէ, թէ Ֆրանսայի հանրային կարծիքը բաւիսխուած է եւ այնպէս կը թուի թէ առանց յետին նպատակի պատրաստ է ընդունելու Ֆրանքեւգերման գործակցութեան մը գաղափարը:

Ահաւասիկ քանի մը հարցումներ եւ անոնց պատասխանները.—

— Գերմանիան իրապէս ժողովրդավար վարչակարգ մը ունի՞:

21 առ հարիւրը պատասխանած է այո', 19 առ հարիւրը՝ ոչ:

— Գերմանիա հասկացո՞ւ անցեալի իր սխալները:

24 առ հարիւրը հաստատական պատասխան տուած է, 26 առ հարիւրը՝ ժխտական:

— Գերմանիա կը փափաքի՞ գործակցիլ Ֆրանսայի հետ:

25 առ հարիւրը՝ հաստատական, 18 առ հարիւրը՝ ժխտական:

— Զօրաւոր Գերմանիա մը վտա՞նգ մըն է արտայայտութիւններէն, Դերենիկ Սրբազան, համաձայն իր մէկ յայտարարութեան, կարելիութիւն ունէր Ամենայն Հայոց նորընտիր Կաթողիկոսը բերել տալ Անթիլիաս, լուծելու համար արդէն գոյութիւն ունեցող (եւ հաւանաբար արուեստականօրէն առեղծուելիք) բոլոր դժուարութիւնները եւ ապահովել Ն. Սրբութեան նախագահութիւնը Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութեան Պատգամաւորական ժողովին: Անակնկալ այս երկրորդ յայտարարութիւնը, թափանցիկ իր մտադրութիւններուն մէջ, ցոյց կուտար թէ Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութիւնը ենթադրուած չափով պարզ, կրօնական ու ազգային խնդիր մը չէր: Ընտրութենէն ու օծումէն յետոյ, տակաւին Ս. Էջմիածնայ պատերուն ան - դամ չծանօթացած, Ամենայն Հայոց Կաթողիկոսը կրնար դալ Անթիլիաս, ուրեմն, ու նախապատրաստել ժողովի մը, որուն հիմնական օրէնքները երբեք ծանօթ չէին Ն. Ս. Օծութեան: Եւ դեռ, առաջին անդամ բլլալով Հայց. Եկեղեցւոյ պատմութեան ընթացքին, էջմիածնայ Կաթողիկոսը պիտի ուղեւորէր Արաստահման, քաղաքական այնպիսի պայմաններու ներքեւ, որ նախընթաց չունէին միջազգային փոխ - յարաբերութեանց տարեգրութիւններու մէջ:

Խմբագրական ՀԱՄԱԿ

(19 Շար.)

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Վերջին ու բուռն հիզեր Թափուեցան, որպէս զի Պատ Սրբազան, Մխիթարեան Ժողովի ընթացքին տեղի ապ միաբան - ներու խնդրանքին, իր հրաժարականը վերցնելու մասին, եւ որուն մօտ պէտք եղած աշխատանքները կը թափուէին նուիթական ու բարոյական գեղումներով: Մխիթարեան Ժողովին վերադրուած յատկութիւնները, տակայն, պղտաբերելու հաւանականութիւն չէին ներկայացներ. որովհետեւ,

Ա.— Տեղապահ բլլալու բուռն բազձանքէ բռնուած, եւ ապագային փայլուն հեռանկարներով արդէն իսկ խանդավառ Դերենիկ Եպիսկոպոս, ինքնավստահ չէ զրկութեան դիրք մը բռնած էր, կատարելու վրայ եղող այս բարեշրջումի դիմաց: Իր պնդումը հրաժարեալ Պատ Սրբազանի մօտ, հրաժարագիրը ետ քաշելու, անչուշտ թէ պիտի օգուտ ունենայ: Դերենիկ Սրբազան չառաւ այդ քայլը, վստահ բլլալով թէ Մխիթարեան Ընդհանուր Ժողովը, մեծամասնութեամբ, իրեն պիտի յանձնէ Տեղապահի պաշտօնը:

Բ.— Կաթողիկոսարանի դիւանապետ Շահէ Վարդապետ, այդ չրջանին (եւ անկէ յետոյ, ալ, հաւանաբար) իր պայքարով մը լեցուած էր հաւանական Տեղապահ Դերենիկ Սրբազանի դէմ, որու բնարութեան ի նպաստ խօսակցութեան մը առթիւ Մխիթարեան Ժողովի Ատենապետ Զարեհ Եպիսկոպոսին յայտարարած էր, թէ ինք, եւ իրեն հետ երիտասարդ միաբանները եւ ոչ ոք, պիտի քուէարկէր ի նպաստ Դերենիկ Սրբազանի Տեղապահութեան: Շահէ Վրդ. այդ ատեանակցութեան ընթացքին, որուն ներկայ էր հասարակաց բարեկամ մրն ալ, Դիւանատան մէջ կ'առաջարկէր որ, Տեղապահի պաշտօնը ընդունի Զարեհ Եպիսկոպոս, առաջարկութիւն՝ զոր կատուկ կերպով կը մերժէր Զարեհ Սրբազան, իրա - ւացիօրէն յայտնելով թէ չէր կրնար Հայկական Գաւառական Ժողովի դէմ սար - քուած գաւին պատճառաւ, ձգել Թեմն ու հեռանալ: Բայ ատաի, Զարեհ Եպիսկոպոս չէր ուզեր իրաւունք տուած բլլալ դրգռութիւններուն, որոնք սկսած էին, արդէն, խեղաթիւրումներ եւ վերապրումներ կատարել եւ մարդպարկական նախատեսութիւններ հրամցնել հասարակութեան...:

Ձակատագրական այդ ամրողջ չաբթու ետեւողութեան, Զարեհ, Խրէն եւ Ղեւոնդ Սրբազաններու աշխատանքները միաբաններու մօտ, ի նպաստ Դերենիկ Սրբազանի տեղապահութեան, ապարդիւն

ՏԵՍ ԱՌԱՋ ԱՌ ԱՌԱՋ

ԿՅԱՆՔԻՑ

ԺԸ.

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

— Ինչ ես կարդում, տատ, այդ ուշադրությամբ ... Դադարեցրու ընթերցանությունը ... ասասկս ... Դու ոչ մի բան չես լսում ... Ի՞նչ է պատահել քեզ ... Ինչո՞ւ ես լալիս ...

— Ես կ՚ուզեի, որ դու ինձ ասեիր, թե ինչո՞ւ ես դու ինձ ատում ... Ինչո՞ւ ես դու ինձ չես սիրում ... Ինչո՞ւ ես դու ինձ հետ այդպես վարվում ... Ես քեզ ոչ մի վատ բան չեմ արել ... Ես քեզ միշտ սիրել եմ ... Ես քեզ միշտ ուզել եմ ... Ես քեզ միշտ ... Ես քեզ միշտ ... Ես քեզ միշտ ...

Ես ուզում էի, որ նա ինձ ասեր, թե ինչո՞ւ է ինձ ատում, ինչո՞ւ է ինձ հետ այդպես վարվում, ինչո՞ւ է ինձ չի սիրում, ես նրան ոչ մի վատ բան չէի արել, ես նրան միշտ սիրել էի, միշտ ուզել էի, միշտ ...

ունի ուշադրութիւն ընծայուած է յառաջիկայ Դեկտեմբերին Փարիզի մէջ գումարուելիք ժողովին: Ատլանտեան միասնականութեան հարցը երկարօրէն քննուած է. այս խորհրդակցութեանց մասնակցած է նաեւ Միացեալ Նահանգներու Դեմոկրատ կուսակցութեան ղեկավարը՝ Սթիվենսըն :

Ծանօթ է, որ Ատլանտեան Ուխտի ժողովին մէջ մասնաւորաբար պիտի քննուի անդամ երկիրներու ապաստանման հարցը եւ համաձայնութիւն մը պիտի կնքուի՝ բոլոր երկիրներու մէջ հրթիռներ հաստատելու համար: Ամէն . պարագայի մէջ հրթիռներն ու հիւլէական զէնքերը ամբողջութեամբ պիտի չյանձնուին խնդրոյ առարկայ երկիրներուն. անոնց վերին հրամանատարութիւնը պիտի ստանձնեն Ատլանտեան Ուխտի ղեկավարները : Կարեւոր խնդիր մըն է նաեւ գիտական մարզին մէջ համագործակցելու գաղափարը:

Միացեալ Նահանգներու Դեմոկրատ պարագլուխ Սթիվենսըն, որ վերջերս հրաւիրուած էր խորհրդակցելու Այզընհաուրի եւ Տըլըսի հետ, Ուաշինկթընի ֆրանսական դեսպանատան մէջ տեսակցութիւն մը ունեցաւ Արտաքին նախարար Փինոյի հետ : Խորհրդակցութենէն վերջ, Սթիվենսըն մերժած է որեւէ յայտարարութիւն ընել, և բաւարարուած է ըսելով թէ հանդիպումը գոհացուցիչ պարագաներ անցած է : Այս խորհրդակցութենէն ետք, Փինօ ճաշած է Ամերիկայի Պետերազմական նախարարութեան քարտուղարին հետ եւ խօսած՝ զինուորական հարցերու շուրջ: Այս առիթով ալ կը շեշտուի, թէ ֆրանքօ-ամերիկեան համաձայնութիւնը մասնաւորապէս կը վերաբերի Ֆրանսայի մէջ հրթիռներու կայաններ հաստատելու հարցին :

× Նախագահ Այզընհաուըր հեռաձայնով խօսած է Տըլըսի հետ՝ Փարիզի մէջ գումարուելիք Ատլանտեան Ուխտի ժողովին մասին եւ տեղեկութիւններ ուզած է Փինոյի տեսակէտներուն շուրջ :

Սպիտակ Տան ներկայացուցիչը շեշտով Փարիզ պիտի գայ՝ նախապատրաստական աշխատանքներու համար : Նախագահ Այզընհաուըր Դեկտեմբեր 14ին կը հասնի ֆրանսական մայրաքաղաքը :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԼԵՀԱՍՏԱՆԻ մէջ ծանօթ բանաստեղծ Ադամ Վաժիք հրաժարած է համայնավար կուսակցութենէ, անձնական պատճառներու :

ՄՈՍԿՈՒԱՅԻ ձայնասփիւռը Անգլիան զգուշացուց՝ ամերիկեան հրթիռներու խարիսխներ հաստատելու ծրագրին համար, յայտնելով թէ, պատերազմի պարագային խորհրդային հրթիռները մէկ ուղղութեամբ պիտի չարձակուին միայն ...:

ԴԱՆԻԱ բողոքագիր մը ներկայացուց Խ. Միութեան, որ դանիացի դիւանագէտ մը արտաքսած էր իր սահմաններէն՝ լրտեսութեան մեղադրանքով :

ՀԱՄԱՅՆԱՎԱՐ ՉԻՆԱՍՏԱՆԻ Նախագահ Մաօ Ցէ Թունկ որ Մոսկուա գացած էր, վերադարձաւ Փեքին :

ԱՆԳԼԻՈՅ աշխատաւորական ղեկավար մը մամուլի ասուլիս մը տուաւ, դէմ արտայայտուելով Ալժերիոյ անկախութեան:

ՍԱԿԱՐԱՆ (Նոյեմբեր 20) — Զոյլ ոսկի 581·000, նափոլէոն 4270, զուից. 4130, անգլ. 5090, քսան տոլարնոց 20·720, Թղթադրամ (զուգահեռական շուկայ) տոլար 503 (494), ստեռլին 1320, զուից. 120·55, պելժ. 9·45, լիր 0·80, փեսեթա 8·35:

ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ

ՆՈՒԻՐՈՒԱԾ ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ

Նախաձեռնութեամբ

Հ. Յ. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻՆ

Այս Ուրբաթ, իրիկուան ժամը 21ին
Տէսինի Ազգ. Տան մէջ

Կը նախագահէ Կ. ՄԵՀԵԱՆ
Կը խօսի Կ. ՓՕԼԱՏԵԱՆ

Գեղարուեստական բաժին :
Մուտքը ազատ է

Imprimé sur les presses du journal HARATCH
17, Rue Bleue, 17 — PARIS (9e)

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԽՆՋՈՅՔ

«ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐ»ՈՒԱՆ ԱՌԹԻՒ

ԱՆԻԷՌԻ մէջ, Նոյեմբեր 24ին, Ընկերվարականներու սրահը, 149պիս, Ավընիւ տ'Արժանթէօյ :

Կազմակերպութեամբ Հ. Յ. Դ. Արամ ենթակոմիտէի, Շ. Միսաքեան խումբի եւ Կապոյտ Խաչի մասնաճիւղին :

Ժամը երեքէն մինչեւ 11 :

Կը նախագահէ ընկեր ԲԱՐՍԵՂ ԽՐԻՄԵԱՆ :

Գեղարուեստական բաժին :

ԱՌՆՈՒՎԻԼԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. «Վարդան» ենթակոմիտէի եւ մասնակցութեամբ Կապոյտ Խաչի մասնաճիւղին եւ Նոր Սերունդի խումբին :

Այս կիրակի կէսօրէ վերջ ժամը 5էն 11, եկեղեցիին սրահը :

Կը խօսի ընկեր ՀԱՅԿ ՍԱՐԳՍԵԱՆ

Գեղարուեստական բաժնին կը մասնակցին Թատրոն ԳԱՐԵԳԻՆ :

Ճոխ պիւֆէ : Տախքերու մասնակցութիւն :

×

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ

ՍԷՆ ՇԱՄՈՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. «Վարուժան» կոմիտէի եւ մասնակցութեամբ Նոր Սերունդի :

Այս Շաբաթ, երեկոյեան ժամը 8·30–ին, Սալ ժան տ'Արքի մէջ :

Կը նախագահէ ընկ. ԱՐՄԵՆԱԿ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ :

Կը խօսի ընկ. Վ. ԻՇԽԱՆԵԱՆ

Գեղարուեստական բաժին.— Երգ, խմբերգ, արտասանութիւն :

Մուտքը ազատ է :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Պ. Նշան Զիլինկիրեան, Պ. Արամ Զիլինկիրեան, Տէր եւ Տիկին Սրապեան կը ծանուցանեն թէ, այս կիրակի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ մէջ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի ի յիշատակ իրենց մօր Այրի Տիկին Փեփրոն Զիլինկիրեանի մահուան քառասունքին առթիւ : Կը հրաւիրուին հանգուցեալին յիշատակը յարգողները :

×

Այրի Տիկին Սրբուհի Փափազեան, Տէր եւ Տիկին Մելքոն Թաշճեան, Տէր եւ Տիկին Վահան Թէրզեան (Նիս), կը ծանուցանեն թէ՝ այս կիրակի ժամը 11ին, Լիոնի եկեղեցւոյ մէջ տեղի պիտի ունենայ, հոգեհանգստեան պաշտօն եւ պատարագ, իրենց ամուսնոյն, հօր եւ աներհօր Պ. Սարգիս Փափազեանի մահուան քառասունքի առթիւ : Կը խնդրուի ներկայ գտնուիլ հանգուցեալին յիշատակը յարգողներէն :

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Տ. Կ. Խաչի Շրջ. վարչութիւնը իր խորին վշտակցութիւնները կը յայտնէ ընկերուհի Փերուզ Այվազեանի եւ պարագաներուն, Թագւոր Այվազեանի դառնաղէտ մահուան առթիւ ու փոխան ծաղկեպսակի հինգ հազար ֆր. կը նուիրէ Մշակոյթի Տան :

ՑԵՐԵԿՈՅԹ – ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Կազմակերպուած Սեվրանի Կապ. Խաչի մասնաճիւղին կողմէ :

Կիրակի 24 Նոյեմբեր, ժամը 15էն 23, «ՄԱՍԻՍ»ի շքեղ սրահին մէջ, 87 Ավընիւ տը Լիվրի, Սեվրան:

Հայկական եւ եւրոպական պարեր, անակնկալներ, ՍԹԷՍԷԼ նուագախումբին մասնակցութեամբ :

Օթօպիւս՝ 147 էկլիզ տը Փանթէն, Կար տիւ Նոր, ժամը 14 եւ 15:

ԳՆՈՒՄ ԵՒ ՎԱՃԱՌՈՒՄ

Ցարկարաժին, խանութ, հող, շէնք, ընդունելութիւն եւ խորհուրդներ Հայու մը կողմէ

ԱՄԷՆ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

AGENCE LEVET

9, Boulevard des Italiens, PARIS 2e

Téléphone : RIC. 36-75

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ

Տէսինէն Պ. Նուպար Պօտուրեան՝ հազար ֆրանք իր այցելութեան առթիւ :

Ընկեր Թագւոր Այվազեանի մահուան առթիւ ընկեր Ղ. Ղազարեան (Լիոնէն) եւ ընկեր Ս. Կիւլեղեան հազարական ֆրանք կը նուիրեն :

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Կը խնդրուի առհասարակ այն բաժանորդէն որ 10·000 ֆրանքի մանդա մը ղրկած է ՐՈԱՆԷՆ (Լուան) անմիջապէս իր անունը եւ հասցէն հաղորդէ թերթիս վարչութեան : Անուշադրութեամբ ղրկողին վերապահուած բաժինին վրան ալ գրուած է «Յառաջ»ի անունը եւ հասցէն :

ՄԱՐՍԷՅԼ

Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

Դեկտեմբեր 14ին, Շաբաթ երեկոյ ժամը 21էն մինչեւ լոյս Ալհամպրայի մէջ

Մանրամասնութիւնները մօտ ատենէն :

ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Հայ Կաթ. Երիտասարդաց ակումբը կը կազմակերպէ ընտանեկան պարահանդէս, այս կիրակի ժամը 14·30էն 24, Ջիմմէր քաբէրէատան մէջ (Փլաս Շաթըլէ) : Նուագախումբ, ճոխ պիւֆէ :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Լիոնի Եկեղեցական Երիտ. Միութիւնը, Լիոնի եկեղեցւոյ շինութեան ի նպաստ պարահանդէս մը կազմակերպած է, Դեկտեմբեր 14ին, ժամը 16էն մինչեւ կէս գիշեր, Թէք տ'Օրի Շալէ տիւ Փարքի շքեղ սրահներուն մէջ: Այժմէն իսկ բոլոր հայ գեղարուեստասէրները եւ բարեկամները կը հրաւիրուին ապահովել իրենց սեղանները :

× Կը խնդրուի Լիոնի եւ շրջաններու բոլոր ազգային կազմակերպութիւններէն այս թուականը նկատի ունենալ :

ԸՆԴՀ. ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Համախմբերգ. Միութեան Մարսէյլի մասնաճիւղի ընդհ. անդամական ժողովը այս կիրակի առաւօտ, ժամը 9·30ին, սովորական սրահը, Պար տը Կլոյի մէջ : Բոլորին ներկայութիւնը անհրաժեշտ է : Օրակարգ՝ 17րդ Պատգ. ժողովի ատենագրութեան ընթերցում եւ զանազանք :

ՑՈՒՇԱՏԵՏՐ

ՄԱՐՍԷՅԼ.— Հ. Յ. Դ. Շրջ. կոմիտէն ընկերական ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր շրջանին՝

Քրիստափոր ենթակոմիտէն այս Շաբաթ ժամը 9ին :

Ակնունի ենթակոմիտէն այս չորաթ ժամը 9ին :

Արամ խումբը այս կիրակի առաւօտեան ժամը 10ին:

Կը հրահանգուի բոլոր ընկերներուն ներկայ ըլլալ ճիշդ ժամուն: Սոյն ժողովները տեղի կ'ունենան սովորական հաւաքատեղիները: Ներկայ կ'ըլլան Կեդր. Կոմիտէին եւ Շրջ. վարչութեան ներկայացուցիչները :

Տ. Կ. ԽԱՉԻ Փարիզի մասնաճիւղի ընդհ. ժողովը այս չորսաթ, կէսօրէ վերջ, ժամը 3ին, Քաֆէ Ըէժանի մէջ: Շատ կարեւոր օրակարգ : Պարահանդէսի կարգադրութիւններ : Բոլոր ընկերուհիներու ներկայութիւնը անհրաժեշտ է, ինչպէս նաեւ վարչութեան օժանդակներու ներկայութիւնը :

ՍԵՒԱՍՏԻՈՅ Նահանգային Մայրաքաղաքային Միութեան անդամական ժողովը այս կիրակի ժամը չորսին, Իսիի Երեւեան վարժարանին սրահը :

Օրակարգ .— Ա) Նիւթական եւ բարոյական համարատուութիւն :

Բ) Ձեկուցում հոկտեմբերի պատգամաւորական ժողովին :

Գ) Նոր վարչութեան ընտրութիւն :

ԿԱՐՏԱՆ.— Համախմբերգական Միութեան մասնաճիւղի ընդհ. անդամական ժողովը այս կիրակի կէսօրէ վերջ ժամը ճիշդ երեքին Հ. Բ. Ը. Միութեան սրահին մէջ: Օրակարգ խիստ կարեւոր հարցեր : Անհրաժեշտ է մասնաճիւղիս բոլոր անդամներու ներկայութիւնը : Կը հրաւիրուին նաեւ ոչ անդամ բոլոր հայրենակիցները անխտիր :

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ, ՊՈՄՈՆ, «Զուարեան» կոմիտէ.— Գործադրուելի պատճառով ձեր յայտարարութիւնները ուշ հասան եւ կարելի չեղաւ հրատարակել :

ՌՈՆԻ – ՍՈՒ – ԲՈՒԱՅԻ ԼՍԱՐԱՆ

Այս Շաբաթ գիշեր, ժամը 21ին, կը դասախօսէ գերասան Ա. ԳՄԲԷԹԵԱՆ :

Նիւթ՝ Պետրոս Ադամեանի կեանքն ու գործը : Դասախօսը պիտի արտասանէ նաեւ մեծանուն դերասանին բանաստեղծութիւններէն ընտիր կտորներ :

ՈՐԲԵՐՈՒ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԱՐՄՆԻ - ՓԱՐԻԶԱՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆ
ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՆՑԻԿ ՑԵՐԵԿՈՅԹԸ

ՆՈՅ. 24ԻՆ, ԺԱՄԸ 16ԷՆ 24 — Կռանտ Օթէլի շքեղ սրահներուն մէջ

ՍԱՎԱ ՆԷԱԿՈՒՅԻ հռչակաւոր նուագախումբը
եւ հաճելի անակնկալներ

Կը խնդրուի ապահովել սեղանները հեռաձայնելով ՓԱՍԻ 64·90

Մուտք 500 ֆրանք

ՄԵԾ ԵՒ ՇՔԵՂ ԵՐԵԿՈՅԹ

Շաբաթ, 30 Նոյեմբեր, ժամը 21ին Կըրնոպլի մէջ, Րիւ ժէի սրահը

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ Հ. Յ. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Կը նախագահէ ընկեր Գ. ՓԱՓԱԶԵԱՆ (Փարիզ)

Կը խօսի ընկեր Ժ. ՄԻՐԻՃԵԱՆ (Մարսէյլ)

Մասնակցութեամբ Փարիզի եւ իր շրջաններու, Կեդր. Ֆրանսայի եւ Մարսէյլի մասնաճիւղերուն :

Գեղարուեստական բացառիկ յայտագիր

Հանդիսութենէն ետք, ընկերական խրախճանք եւ պար մինչեւ 2 :

Մուտք՝ 100 ֆրանք :

BAINS DE VAPEUR

4 bis, Rue de la Pierre-Levée — Paris - 11e

OBE. 12-51

MÉTRO : RÉPUBLIQUE, OBERKAMPF ET PARMENTIER

ԵՐԵՔ ՍՐԱՀ ՇՈԳԻԻ ԼՈԳԱՆՔԻ

(SUDATION ET FUMIGATION)

Մասաժ, Օքսիժենօթերափի, ձեռքերու եւ ոտքերու խնամք (մանիւքիւր – փետիւքիւր) քուաֆիւր, սուէն տը պօթէ, փիսին:

BAR - RESTAURANT

Բաց օրեր.—

ԿԻՆԵՐՈՒՆ	ԱՅՐԵՐՈՒՆ
Ուրբաթ ժամը 11էն 23	Հինգշաբթի ժամը 17էն 23
Երկուշաբթի ժամը 11էն 23	Շաբաթ ժամը 9էն 23
Չորեքշաբթի ժամը 11էն 23	Կիրակի ժամը 8էն12

ՀԱՅԵՐԷՆ ԿԸ ԽՕՍԻՆՔ

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925 — Tél. : PRO. 86-60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. PARIS 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր· վեցամս· 1600

Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք : Հատը 12 ֆր·

ՇԱԲԱԹ 23 ՆՈՅԵՄԲԵՐ — SAMEDI 23 NOVEMBRE 1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8050 | 33e ANNEE | Fondateur : SCHAVARCH MISSAKIAN | ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3851

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ԹՐՔԱԿԱՆ ՃԱԿԱՏԻՆ ՎՐԱՅ

Գրեթէ չորս չաբաթ անցած է Հոկտեմբեր 27ի ընտրութիւններէն ի վեր եւ սակայն կիրքերը տակաւին չեն հանդարտած Թուրքիոյ մէջ :

Այս անգամ ընտրական պայքարը բացառիկ կերպով բուռն եւ աղմկալի հանգամանք առած էր, մասնաւորապէս մեծ քաղաքներու մէջ, ուր Դեմոկրատ կուսակցութիւնն ու Հալքը չարժման մէջ դրած էին իրենց ծանր հրետանին — արդի եւ նախկին Հանրապետութեան նախագահներ, վարչապետներ, նախարարներ եւ կուսակցապետներ :

Յաճախ միեւնոյն քաղաքին մէջ նոյն օրը եւ նոյն ժամուն իրարու դէմ կը ճակատէին հակընդդէմ երկու մեծ կուսակցութիւնները՝ հրապարակային մեծ հաւաքոյթներով : Օրինակ, Հոկտեմբեր 20ին մինչ Պոլսոյ մէջ Հանրապետութեան Նախագահ Ճէլալ Պայար յաղթական ճառ մը կը խօսէր բազմահազար մարդոց առջեւ, անդին ուրիշ հաւաքավայրի մը մէջ Իսմէթ Ինէօնիւ չէր կրնար խօսք առնել ... բարձրախօսը աւրուած ըլլալուն պատճառաւ :

Դեմոկրատները իրենց ձեռքն ունենալով երկրին իշխանութիւնը, ամէն տեղ լայնօրէն ի նպաստ իրենց օգտագործեցին կառավարական մեքենան — ոստիկանութիւն, ձայնասփիւռ, փոխադրական միջոցներ, եւայլն :

Հալքը քուէներու աւելցութիւն չահեցաւ մեծ քաղաքներու մէջ, ուր գլխաւորն էր քարոզութիւնը Դեմոկրատ կառավարութեան դէմ :

Քաղաքացիները դժգոհ էին անոր համար, որ տարիներէ ի վեր երկիրը տնտեսական ծանր տագնապի ենթարկուած է : Ապրուստի անհրաժեշտ ապրանքները անգտանելի են դարձած հրապարակին վրայ : Գիները տարապայման կերպով բարձրացած են : Դրամին գնման կարողութիւնը բոլորովին ինկած է : Ժողովուրդը տուրքերով ծանրաբեռնուած է : Բնակարանի տագնապ կայ : Առեւտուրը կասած է : Զարաչահութիւնները կը չարունակուին, եւայլն :

Հալքը կրցաւ այս վիճակը օգտագործել՝ քաղաքացիներու դժգոհութիւնը հրահրելու համար դեմոկրատ կուսակցութեան դէմ եւ յաջողեցաւ 178 աթոռ չահիլ, մինչ նախորդ ազգային ժողովին մէջ իր երեսփոխաններու թիւը 31 էր միայն :

Թուրքիոյ բնակչութեան հարիւրին 76ը գիւղացիները կը կազմեն, մեծ մասամբ բոլորովին անուս եւ տգէտ : Ասոնք ոչ դեմոկրասիէ բան մը կը հասկնան, ոչ քաղաքացիական իրաւունքէ, ոչ ազգային ժողովէ, ոչ ալ քուէարկելէ : Դեմոկրատները իրենց պետական լայն միջոցներով հնարաւորութիւն ունեցան երթալու մինչեւ ամենայետին գիւղը եւ իրենց ի նպաստ «հաւաքելու» գրել-կարդալ չգիտցող գիւղացիներու քուէները :

Կարգ մը քաղաքներու մէջ խարդախութիւններ գործուած են : Ընդդիմադիրները մինչեւ այսօր ալ դեռ կը պահանջեն որոշ վայրերու մէջ կատարուած ընտրութեանց բեկանումը : Սակայն կառավարութիւնը խուլ ականջ կը ձեւանայ :

Երրորդ անգամ ըլլալով դեմոկրատները յաղթանակը տարին չահելով 424 աթոռ : Սակայն այս անգամ ընդդիմադիրները ունին 186 երեսփոխան (178 հալքեան, 4 Միլլէթ, չորս Հուրրիէթ) եւ կրնան մեծ աղմուկ հանել ազգային ժողովին մէջ, նեղ կացութեան մատնելով յանձնապաստան եւ յոխորտ Մէնտերէսը :

Մէկ ամիսէ ի վեր կուսակցութեանց միջեւ մղուած բուռն պայքարը ցոյց կու տայ թէ վերամուտէն վերջ ընդդիմադիրները պիտի կրնան որոշ չափով դողել դեմոկրատներու սանձարձակ գործունէութիւնը : Թրքաբարոյ տեսարանները անպակաս պիտի ըլլան խորհրդարանին մէջ :

Ճէլալ Պայար եւ Մէնտերէս վերահաստատուեցան իրենց նախկին պաշտօններուն մէջ իբրեւ Հանրապետութեան Նախագահ եւ վարչապետ :

Ըստ երեւոյթին ո՛չ մէկ բան փոփոխուած է Թրքական ճակատին վրայ :

Թուրք ժողովուրդը իր քուէներով վստահութիւն յայտնեց այն կառավարութեան, որ երկիրը հասցուցած է սնանկութեան դուռը : Թչուառութեան մատնած ժողովուրդը : 1955 Սեպտեմբեր 6ի դէպքով յաչս օտարներու վարկաբեկած Թրքութիւնը :

Բարի վայելո՜ւմ :

ՀՐԱՆՏ - ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԱՆԳԼԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՓԱՐԻԶ ԿՈՒԳԱՅ

ՀԻՒԼԷԱԿԱՆ ՀՐԹԻՌՆԵՐՈՒ ԿԵԴՐՈՆՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

Ծանօթ է, որ Ատլանտեան Ուխտի ժողովէն առաջ Անգլիոյ Վարչապետ Մաքմիլլըն Փարիզ պիտի գայ : Քանի մը օր առաջ սակայն, ինչպէս գրած էինք, Անգլիոյ Արտաքին նախարարութիւնը այլուրը հերքեց, միաժամանակ յայտնելով թէ «անգլօ-ամերիկեան հիւլէական գերակայութեան» հարց ալ գոյութիւն չունի՝ Ատլանտեան Ուխտին մէջ :

Տարակոյս չկայ, թէ բրիտանական կառավարութիւնն ու յատկապէս Մաքմիլլըն, որ Չըրչիլեան աւանդութեան կը հետեւի, ուզեցին յառաջ քշել անգլօ-ամերիկեան մենատիրութեան մը գաղափարը, նոր զէնքերու մէջ : Տեղական մամուլը անգլիացի խումբ մը մասնագէտներու Ուաշինկթըն մեկնումը հաղորդելով, Վարչապետ Մաքմիլլընի անգլօ-ամերիկեան գերակայութիւն մը ստեղծելու մտադրութիւնը կը գտնէ անոր մէջ :

Այսուհանդերձ, անգլիական դրդումները Ուաշինկթընի վճռական մերժումին հանդիպեցան եւ ինչ որ աւելի մեծ նշանակութիւն կը ստանար՝ Ամերիկայի Պաշտպանողական նախարարին եւ Փինոյի ճառն էր, որմէ ետք կը յայտարարուէր, թէ Ֆրանսա կ'ընդունէր, որ իր հողին վրայ հրթիռներ արձակելու կեդրոններ հաստատուին եւ հիւլէական ռազմանիւթ ստանայ՝ յատկապէս հրթիռներուն համար : Մօտ ատենէն Ֆրանսա պէտք պիտի ունենայ անոնց՝ հիւլէական զէնքի իր կարիքներուն համար :

Այնպէս կը թուի, թէ Ատլանտեան Ուխտին մէջ Ֆրանսայի դիրքը հետզհետէ կը զօրանայ : Աւելի կը բացատրուի նաեւ անով, որ Վարչապետ Մաքմիլլըն արագօրէն որոշեց Ֆրանսայի հետ բարեկամական կապեր հաստատել, ինչ որ խանգարուած էր Թունուզի յանձնուած զէնքերէն վերջ :

Վարչապետ Մաքմիլլըն պիտի աշխատի նաեւ, որ յիշեալ զէնքերէն ետք Ֆրանսայի մէջ Անգլիոյ նկատմամբ ստեղծուած հանրային կարծիքը մեղմանայ :

Խորհրդարանին մէջ Վարչապետ Մաքմիլլըն յայտարարեց, թէ Բշ· օր Փարիզ պիտի գայ, Կայեարի հետ տեսակցութիւն մը ունենալու համար : Խորհրդակցութիւնները պիտի ըլլան երկու երկիրներու փոխադարձ չահերուն վերաբերեալ հարցերուն չուրջ եւ յատկապէս՝ Հիւսիսային Ափրիկէ ղրկուած զէնքերուն ու Փարիզի մէջ գումարուելիք Ատլանտեան Ուխտի ժողովին մասին :

Այս լուրը ուրախութեամբ ընդունուեցաւ Լոնտոնի չրջանակներուն կողմէ՝ որոնք կը մտածեն թէ այս ձեւով անգլօ-ֆրանսական տագնապը կրնայ լուծուիլ, կամ, առնուազն՝ մեղմանալ : Բրիտանիա համաձայն է այն տեսակէտին՝ որ Ատլանտեանի ժողովէն առաջ երկու կառավարութեանց ղեկավարները խորհրդակցութիւն մը ունենան եւ համաձայնութիւն գոյանայ Լոնտոնի ու Փարիզի միջեւ, ժողովին մէջ միեւնոյն ուղղութիւնը որդեգրելու համար :

Քանի մը օր առաջ, Ֆրանսան ալ համակարծիք չէր այն տեսակէտին, որ Անգլիոյ հետ ղեկավար դէմքերու հանդիպում մը ըլլայ :

Բշ· օրուան հանդիպումը Կայեարի եւ Մաքմիլլընի առաջին տեսակցութիւնը պիտի ըլլայ, ինչպէս նաեւ առաջին փորձը՝ երկու երկիրներու յարաբերութիւնները բարելաւելու համար, ինչ որ սկսած էր Անթընի Իտընի եւ Կի Մոլէի չրջանին :

Անգլիոյ Վարչապետին պիտի ընկերանայ Արտաքին նախարար Սելվին Լոյտ, լրջօրէն պիտի քննուին արտաքին քաղաքականութեան վերաբերեալ հարցերը :

Կը կարծուի թէ Վարչապետ Մաքմիլլըն մէկ օր միայն պիտի մնայ Փարիզ եւ իրիկուան պիտի վերադառնայ Լոնտոն :

ԻՍՐԱՅԷԼԵԻՅՈՐԴԱՆԱՆ ՆՈՐ ՄԻՋԱԴԷՊԵՐ

Իսրայէլ եւ Յորդանանեան սահմանին վրայ նոր միջադէպ մը պատահեցաւ, որմէ ետք Ամմանի կառավարութիւնը ՄԱԿի հաղորդեց, թէ եթէ Իսրայէլ 48 ժամուան ընթացքին ազատ չարձակէր իր հողամասին մէջ տարուած յորդանանցի մը, Ամման հարկ եղած միջոցները ձեռք պիտի առնէր՝ իր իրաւունքներուն պաշտպանութեան համար :

Յորդանանեան բանակի բանբերներէն մէկը յայտարարեց, թէ վերջնագիր տրուած էր ՄԱԿի ներկայացուցիչին :

Հինգշաբթի կէսօրին, իսրայէլեան ուժերը կրակ բացած են Երուսաղէմի արաբական չրջանին վրայ : Մէկ ժամ ետք, իսրայէլեան խմբակ մը սահմանը անցած է եւ արաբական հողամասին վրայ աշխատող յորդանանցի գիւղացիի մը առաջարկած են որ Իսրայէլ անցնի, հակառակ պարագային սպառնալիքներ ընելով :

Յորդանանեան զինուորական ջոկատ մը ետ մղած է Իսրայէլցիները, որոնք անմիջապէս վերադարձած են իրենց հողամասը :

ՄԱԿի յանձնուած վերջնագիրէն դատ, Յորդանան բողոքագիր մըն ալ ներկայացուց զինադադարի խառն յանձնախումբին :

ՄԱԿի զինուորական մէկ ներկայացուցիչը չուտով Ամման պիտի երթայ, տարակարծութիւնները հարթելու եւ միջադէպերուն վերջ տալու համար :

ԱԼԺԵՐԻՈՅ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ինչպէս գրած էինք, Թունուզի Հանրապետութեան Նախագահ Պուրկիպա Ռապաթի մէջ տեսակցութիւն մը ունեցած էր Մարոքի Թագաւորին հետ : Խորհրդակցութիւնները եղած են Ալժերիոյ չուրջ :

Հրատարակուած է պաշտօնական դեկոյց մը, ուր Թագաւորն ու Նախագահը իրենց միջնորդութիւնը կ'առաջարկեն Ֆրանսայի եւ Ալժերիացիներու միջեւ, ՄԱԿի սկզբունքներուն համաձայն հարցը լուծելու համար : Պուրկիպա եւ Թագաւորը իրենք զիրենք կը նկատեն Ֆրանսայի ու Ազատագր· ճակատի պատասխանատուներուն տրամադրութեան տակ : Անոնք համոզուած են, թէ այս ձեւով վերջ մը պիտի դրուի արեան հեղեղին եւ խաղաղութիւնը հաստատուի՝ Հիւս· Ափրիկէի մէջ :

Մարոքի եւ Թունուզի այս առաջարկը Փարիզի մէջ արձագանգ չէ գտած տակաւին, նկատելով որ ոչ ոք ծանօթ է, թէ անոնք ինչ խօսեցան իրարու հետ եւ ինչ առաջարկներ ըրին իրարու :

× Ռապաթի մէջ Ազատագր· ճակատի երկու ղեկավարները տեսակցութիւն մը ունեցած են Պուրկիպայի հետ :

× Անձրեւն ու փոթորիկը ներկայիս մեծ աւերներ կը գործեն Ալժերիոյ մէջ :

Բազմաթիւ չրջաններու մէջ հեղեղը կը տանի տուներ ու մարդիկ : Թաչմալթի մէջ զինուորական կայան մը փլանդի առջեւ գտնուելով՝ իշխանութիւնները փորձած են պարպել· այդ գործողութեան ընթացքին պատուակաւոր օդանաւ մը (Հելիքոփթէր) թեթեւ օդանաւ մը ու երեք բեռնատար ծանր կառքեր քչուած են ջուրերէն : Կարգ մը չրջաններու մէջ ճամբաները փակուած են :

Այս միջոցին խումբ մը ապստամբներ փորձած են անցնիլ Թունուզեան սահմանէն ու մտնել Ալժերիա : Սահմանագլուխին վրայ չրջապատուած են բանակայիններու կողմէ : Ըմբոստները ձգեցին 47 մեռեալ եւ բազմաթիւ զէնք ու ռազմանիւթ : Թլէմսէնի մէջ պատահած բախումի մը ընթացքին ապստամբները տուին 22 զոհ :

× Թունուզէն արտաքսուած են երեք Ֆրանսացիներ՝ անծանօթ պատճառներով : Երեքն ալ երկար ատենէ ի վեր Թունուզ հաստատուած էին :

ՄԵՐ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԸ

Ամերիկայէն վերադառնալով առջի օր մեր խմբագրատունը այցելեց Պ· Տիգրան Թոսպաթ :

Լիբանանի երեսփոխանը քանի մը օր Փարիզ մնալէ ետք, հինգշաբթի օր Պէյրութ վերադարձաւ :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՓԱՐԻԶԻ մէջ յառաջիկայ Դեկտեմբեր 15 – 20, վեց երկիրներու Արտաքին նախարարներու հանդիպում մը պիտի ըլլայ, որուն պիտի նախագահէ Իտալիոյ Արտաքին նախարարը :

ՄՈՍԿՈՒԱՅԷՆ կը հաղորդեն, թէ Հիմալայեայի տակէն փապուղի մը պիտի բանան՝ 12 քիլոմեթր երկայնութեամբ : Այս ձեւով Հնդկաստանի եւ Ռուսիոյ ճամբան 800 քիլոմեթր աւելի կարճ պիտի ըլլայ :

ՄՈՍԿՈՒԱՅԻ մօտերը Վնուկովոյի օդակայանին մէջ գտնուող երկու մեթրէն աւելի բարձր Սթալինի արձանը վերցուցին չաբթուան սկիզբը : Մոսկուայի մէջ Սթալինի վերջին արձանն էր ան :

ԱՄԵՐԻԿԱՅԻ եւ Խ· Միութեան գիտուններուն միջեւ եղած խօսակցութիւններէն երեւան կուգայ, թէ խորհրդային գիտուն մը տարեկան 50·000 տոլար կը չահի (մօտ քսան միլիոն ֆրանք) :

ՖՐԱՆՍԱՅԻ բնակչութեան թիւը ներկայիս 44 միլիոնը անցած է : 1800ին 28 միլիոն բնակիչ ունէր միայն : Այս ձեւով Ֆրանսա աշխարհի տասնմէկ բազմամարդ երկիրներէն մէկն է :

ԴԱՆԻԱ հասան երեք լեհ ձկնորսներ, որ առջի գիշեր փախած էին իրենց երկիրէն : Ձկնորսները ապաստան խնդրեցին դանիական կառավարութենէն :

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Ընդունուած է, որ շրջան ստեղծողը անհատն է, իսկ անհատը իր կարգին, ստեղծագործութիւն է ազգի մը կամ ժողովուրդի մը գոյութեան պայքարին եւ կամ պայմաններուն։ Անհատը յաճախ ժողովուրդի մը կամքն է եւ տառապանքներուն մէջ, պոռթկում։ Ան կ'ըլլայ սուր ու վահան։ Այդ պայմաններուն պոռթկումները եղած են, մեր նորագոյն պատմութեան մէջ, Դաւիթ Բէկը, Արովեանը, Րաֆֆին, Քրիստափորը, Անդրանիկը եւ Խրիմեան Հայրիկը։

Խրիմեան իր շունչով եւ իր առաքելատիպ նկարագրով կրնար գալ Վասպուրականէն եւ կամ Տարօնէն. ժողովուրդ մը՝ որ իր հոգիին մէջ պահեց դամբարանները մեր հերոսական նախնիքներուն եւ որ տանջուեցաւ, պայքարեցաւ պահելու համար իր գոյութիւնը որպէս ազգ՝ ամբողջութիւն է։ Մենք չգիտենք ժառանգական ինչ օրէնքով մեր նախնիքները չնչեցին, ապրեցան Խրիմեանին մէջ եւ յաճախ անոր շարժումներն ու մտածումները կառավարեցին։

Դիցաբանական հերոսներուն մէջ աստուածներն էին որ կը կառավարէին, կ'առաջնորդէին հերոսներուն շարժումները այնպէս ինչպէս Հոմերոսի հերոսները եղած են։

Եհովան էր որ կ'առաջնորդէր Մովսէսը։ Խրիմեան չունեցաւ հայու այդ Եհովան, որ ձեռքէն բռնած, առաջնորդէր զինք։ Խրիմեանին առաջնորդը, ինքը, հայ ժողովուրդը եղաւ։ Ինչպէս կեանքը, որպէս գոյութիւն, ապրելու համար իր կենսաբանական անյեղլի օրէնքներն ունի, նոյն օրէնքներուն ենթակայ է նաեւ ժողովուրդին գոյութիւնը որպէս հաւաքական կեանք, որովհետեւ գոյութիւն մը հաւաքականութեան մէջ աւելի ուժեղ է եւ տեւական։ Պայքարը, բնազդային, նախնական օրէնքներէն մէկը եղած է, ըլլայ այդ պայքարը սուրով թէ մշակոյթով։ Երկուքն ալ գոյութիւն մը պահելու եւ ապրեցնելու նպատակին կը ծառայեն եւ մենք, որպէս մարդկային ազնիւ նպատակ, նախընտրած ենք մշակոյթով պայքարիլ։ Մեր մշակոյթով պայքարը այնքան անհրաժեշտ եւ կենսաբանական դարձած է, որքան զէնքի պայքարը։

Որեւէ հզօր ցեղ, նախ՝ մշակոյթին անկումով հետզհետէ կը սկսի քայքայուիլ։

Խրիմեանին մէջ բոլոր մշակութային տարրերը, մարդկային, բարոյական, եկեղեցի, Աստուած ու արուեստ թէ գրականութիւն, միշտ ալ հայ ժողովուրդի գոյութիւնը պահպանելու եւ ուժեղացնելու համար եղած են։ Հետաքրքրական է այն շրջանը, որուն նկարագիր տուաւ Խրիմեան իր առաքելութեամբ։ Այն օրերուն կար բարենորոգչական շարժումը Պոլսոյ գաղութին մէջ, որ շատ էր սահմանափակ եւ հեռու՝ ազատագրական ըլլալէ։ Ազատագրական շարժումը առաւելապէս գաղափարական էր։ Կար առաջնորդութիւնը Գրիգոր Օտեանի, կար ազգային սահմանադրութիւնը, պայքար՝ գրաբարի եւ աշխարհաբարի, այդ ըսել է մեր գպրութիւնը վանքի պարիսպներէն վար կուգար եւ կը փորձէր իր ուժը իրական հողի վրայ գնել, իսկ ամէնէն էական եւ հիմնականը, կար ազատագրական խուլ խլրտանք առաւելապէս Տարօնի եւ Վասպուրականի ժողովուրդին մէջ։

Այդ շրջանին էր, որ Խրիմեան, Պոլսոյ այդ միջավայրին մէջ յայտնութիւն մը եղաւ իր առաքելատիպ երեւոյթով, իր հետ բերելով հողին բուրմունքը, բերելով ժողովուրդ մը իր տառապանքով, իր ալերսով ու իր ծխանի ծուխով։ Անոր հեղինակած «Հրաւիրակ Արարատեան»ը եղաւ տեսակ մը եղջերափողը՝ գաղութացած, աշխարհի չորս հովերուն ցրուած ժողովուրդին։

Թէ Պոլսոյ եւ թէ Թիֆլիսի ժողովուրդը անոր մէջ տեսաւ հայ ժողովուրդի չարչարանքով ամրացած նկարագիրը ու ապրելու երկաթեայ կամքը։ Անոր մէջ տեսաւ հազարամեայ վանքերու իմաստութիւնն ու հաւատքը։ Տեսաւ հողին ու երկինքին շնչելը անոր մէջ ու խանդավառուեցաւ։

Գրիգոր Օտեան, խանդավառուեցաւ Խրիմեանի յայտնութիւնով, Րաֆֆին անոր մէջ գտաւ Մեծ Հայը, իսկ պատանի Պետրոս Դուրեան, բանաստեղծը, որուն մէջ միշտ ալ «Սեւ հողեր»ը կար, Խրիմեանի մէջ տեսաւ առաջնորդը։

Մեծ գրականագէտ չէր Խրիմեան եւ ոչ ալ մեծ բանաստեղծ։ Ունեցած ենք ուրիշ հմուտ եկեղեցականներ եւ սակայն Խրիմեան Մեծ էր որպէս մարդ, որպէս քրիստոնեայ եւ աւելի մեծ՝ որպէս Հայ։ Ան առաւելապէս մարդկայինով, քրիստոնէականով եւ մանաւանդ ժողովուրդի տառապանքով ուժեղացուցած էր իր ազգային նկարագիրը։ Այդ բոլորը անոր մէջ այնքան բնական էին, որքան հողին վրայ աշխատող հայ գիւղացու դէմքին գծերը։ Անոր մէջ ոչ մէկ արուեստակեալ գիծ կար, եւ ինչ լաւ, որ Եւրոպա չգնաց սորվելու համար, չսերտեց ուրիշ լեզուներ ու մնաց անապական։ Այդ շրջանին հետզհետէ Եւրոպայէն կը ժամանէին, աշտարակներու բնակիչները, թէ Պոլսոյ եւ թէ Թիֆլիսի մէջ իրենց աշտարակներէն հռետորելու եւ պատգամելու։ Անոնք շատ աւելի օգտակար պիտի ըլլային, եթէ ճանչնային հայ ժողովուրդը։

Խրիմեան, ժողովուրդէն կուգար։

Եւ ի զուր չէր, որ ժողովուրդը, — մտաւորականութիւնը, արհեստաւորը եւ նոյնիսկ թերահաւատը՝ զայն «Հայրիկ» կանչեց։

Այդ անունը պատահական չէր։ Ժողովուրդը բնազդօրէն իր գոյութեան եւ ապրումի իմաստը կապած էր այդ «Հայրիկ» անունին հետ։

«Հայրիկ»ը տան պետն է, տան հովանաւորը, ժառանգ ձգողը, տան պահապանը, բարոյական եւ ֆիզիքական պատնէշը։ Քարայրներու շրջանէն սկսած, ան կը պահպանէ ընտանիքը գազաններէն ու թշնամիներէն։ Ըստ հոգեվերլուծականներուն, «Հայրիկ»ի նոյն իմաստն է, որ մարդիկ փոխանցած են իրենց հէքեաթի հերոսներուն, իրենց կուռքերուն եւ կամ աստուածներուն։

Խրիմեան «Հայրիկ» էր մանաւանդ, երբ մեր ազգային այդ պայմաններուն մէջ ժողովուրդը առաջնորդ մը կը փնտռէր, որ գար եկեղեցիի կամ ֆետայիներու ճամբով։ Եւ ժողովուրդը բնազդօրէն տեսաւ, որ Խրիմեանին մէջ կար այդ երկաթը։ Ան հոգեպէս կատարելացած միակ եկեղեցականն էր այդ շրջանին, որուն հոգիին մէջէն, ֆետայիները կ'անցնէին, ինչպէս կ'անցնէին Հայաստանի լեռներէն։

ՀԱՄԱՍՏԵՂ

(Մնացեալը յաջորդով)

ԽՕՍՔԵՐ ԵՒ ԹԻՒԵՐ

Վերջերս արեւելեան թէ արեւմտեան ճակատի վրայ բաւականին խօսուեցաւ տնտեսական ծրագիրներու մասին։

Հոկտեմբերեան յեղափոխութեան քառասնամեակին առիթով Համայնավար կուսակցութեան ընդհանուր քարտուղարը՝ Խրուշչեւ չորս ժամ տեւող ճառ մը կարդաց, մասնաւորապէս ծանրանալով յառաջիկայ հնգամեակին ձեռք ձգուելիք տնտեսական յառաջդիմութեան վրայ։ Խ. Միութեան նոր բռնատէրը յայտարարեց, թէ պիտի գլէն անցնին Ամերիկան՝ բազմաթիւ մարզերու մէջ. ներկայացուց վիճակագրութիւն մը, ըստ որուն 1972ին երկրին պողպատի արտադրութիւնը պիտի հասնի 110 – 130 միլիոն թոնի, քարիւղինը՝ 2·4 – 2·7 պիլիոն տակառի, ածուխինը՝ 415 – 825 միլիոն թոնի, ելեկտրական ուժինը՝ 800 – 900 պիլիոն քիլովաթի։

Ինչպէս կ'երեւի, ծրագիրներ են առանք՝ ապագայի համար։ Եթէ ընդունինք նոյնիսկ, որ Խ. Միութիւնը իր ծրագիրներուն մէջ հարիւր տոկոսով պիտի յաջողի՝ դարձեալ չի կրնար մրցիլ Ամերիկայի հետ, քանի որ Միացեալ Նահանգներու արտադրութիւնը, ներկայիս արդէն կը հաւասարի այդ ծրագրին։ Արդարեւ, Ամերիկայի պողպատի արտադրութիւնը ներկայիս 115 միլիոն թոն է, քարիւղինը՝ 2·6 պիլիոն տակառ, ածուխինը՝ 575 միլիոն թոն, իսկ ելեկտրական ուժին արտադրութիւնը՝ 684 պիլիոն քիլովաթ։

Յիշեցնենք, որ Ղազախստանի «Կոյս հողերը» բերրի դարձնելու Խրուշչեւի ծրագիրն ալ ձախողութեան մատնուեցաւ. Իրքուքսի եւ Ալմա – Աթայի արդիւնաբերական կեդրոններուն մէջ բազմաթիւ գործարաններ գոցուած են բանելէ՝ հում նիւթերու... պակասէն։

×

1952ին, եւրոպական վեց պետութիւններ՝ Գերմանիա, Ֆրանսա, Իտալիա, Պելժիա, Հոլանտա եւ Լիւքսէնպուրկ կազմեցին Եւրոպայի ածուխի եւ պողպատի դաշնակցութիւնը, որուն հակակշռին տակ դրուեցաւ յիշեալ վեց պետութեանց պատկանող 188 երկաթի հանքերը, 355 պողպատ արտադրող ընկերութիւնները որոնք կը շահագործէին 455 երկաթի եւ պողպատի գործարաններ եւ ածուխի 145 ընկերութիւնները՝ իրենց 459 հանքերով։

Հինգ տարի առաջ հիմնուած այս Դաշնակցութեան Միացեալ Ժողովը, Նոյեմբերի կիսուն գումարուեցաւ Հռոմի մէջ, քննելու համար ձեռք ձգուած արդիւնքները։

Յիշեալ վեց պետութեանց պողպատի արտադրութիւնը 46էն բարձրացած է 62·4 միլիոն թոնի, գլել անցնելով Խ. Միութիւնը։ Ածուխի արտադրութիւնը աւելցած է 11 միլիոն թոնի համեմատութեամբ։

Մինչ այլ հում նիւթերու եւ ապրանքներու ներածումն ու արտածումը յիշեալ վեց պետութեանց միջեւ աւելցած է 59 առ հարիւր համեմատութեամբ, անդին ածուխինը եւ պողպատինը հասած է 93 առ հարիւրի, շնորհիւ մաքսային զրութեան վերացման։

Քաջալերուած ձեռք ձգուած արդիւնքներէն, դաշնակցութեան Բարձրագոյն Մարմինը առաջին անգամ ըլլալով Եւրոպայի մէջ, հրապարակ հանած է «աշխատաւորական անձագրեր» որոնց շնորհիւ եւրոպացի աշխատաւորը ազատ շրջագայութիւն եւ աշխատանքի իրաւունք պիտի ունենայ վեց երկիրներէն որեւէ մէկուն մէջ։

Ժ.

— Տակաւին Աստղիկին հետ նշանուա՞ծ ես ...

— Ո՛չ ...

— Լա՛ւ...

— Ի՞նչ բսիր ...

— «Լա՛ւ», բսի... Ինչպէ՞ս օժիտդ ազատեցիր այդ փիւլին ձեռքէն ...

— Հետը կարգուեցայ ...

×

— Յաւակցութիւններս, Տիգրան ...

— Ի՞նչ կայ, ի՞նչ պատահած է որ ...

— Ի՞նչ պիտի պատահի... կինս այսօր նոր գլխարկ մը գներ է ...

— Լա՛ւ, ինծի՞ ինչ ...

— Վաղը, տիկնոջդ այցելութեան պիտի երթայ եղեր ...

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

•

«Կամապաշտ» ընդդիմադիրներու յաճախակի այցելութիւնները Անթիլիաս, յայտնի եւ գաղտնի տեսակցութիւնները միաբաններու հետ, իրենց տուած էին այն անխախտ համոզումը, թէ անոնք, Կիլիկիոյ միաբաններու նոր սերունդը, երբեք պիտի չհանդուրժեր Դերենիկ Սրբազանի տեղապահութեան։ Կարելի չէր եղած, սակայն, Դերենիկ Սրբազանը տարհամոզել, եւ կեցնել իր մտադրութենէն եւ իրատեսութեան հրաւիրել։

Եռեւեփումի ամբողջ շրջան մը կ'անցնէր այսպէս, լի անակնկալներով։ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Սուրիոյ, Լիբանանի, եւ ինչո՞ւ չէ, Արտասահմանի համայն հայութեան ճակատագիրը խնդրոյ առարկայ կը դառնար։ Գագաթնակէտին հասած էր «ՕՐԷՆՔ»ի եւ «ԿԱՄՔ»ի միջեւ երկար ատենէ ի վեր տարուող ծանր պայքարը, թաքուն հակամարտութիւնը։

Հրաժարեալ Տեղապահ Խադ Արքեպիսկոպոս, Ուրբաթ, 21 Հոկտեմբերին արդէն ապաքինած ըլլալով իր անհանգստութենէն, ժողովի Ատենապետ Զարեհ Եպիսկոպոս սկսած էր խորհրդակցութիւններ ունենալ անոր հետ, Միաբանական ժողովի նիստը յաջողցնելու համար։ Կարելի եղած էր յանգիլ եզրակացութեան մը, որու համաձայն Խադ Սրբազան պիտի հրաւիրէր ժողով մը, 23 Հոկտեմբեր Կիրակի, կ. վ. ժամը եօթին, եւ նիստի ներկայութեան պիտի պնդէր իր հրաժարագրին վրայ, զայն պիտի յայտարարէր «վերջնական եւ անդառնալի», տեղի չտալով նոր եւ անհարկի բարդութեանց։ Արդարեւ, Միաբանական Ընդհանուր Ժողովի նիստը հրաւիրուեցաւ 23 Հոկտեմբեր, 1955, Կիրակի, երեկոյեան ժամը 7ին։

«Կամապաշտ» ընդդիմադիրները, սակայն, վար չէին դրած իրենց այլեւս բթացած զէնքերն ու սպառնալիքները։ Ի վեր ամէն բանի չէին կրնար հաշտուիլ «կիլիկիոյ կաթողիկոսութիւնը ձեռքէ հանել»ու գաղափարին հետ։ Արտասահմանի Հոգեւոր Բարձրագոյն Իշխանութիւնը պահած էին նիւթական սեղմումներու մշտական սպառնալիքին ներքեւ եւ այդ ձեւով միայն կրցած՝ անոր բարոյական եւ հոգեւոր հեղինակութիւնը գործածել իրենց երեւութական վարկին ու ազդեցութեան բարձրացման։ Կը մնար, ուրեմն, անգամ մը եւս գործածել վերջին ու ազդեցիկ զէնքը, Կաթողիկոսական ընտրութեան երեք յաջորդական յետաձգումներու ախոյեան Եղիշէ Արքեպիսկոպոս Տէրտէրեանը, զոր Պէյրութ բերել տալու համար միջքաղաքային հաղորդակցութեան հեռախօսային գիծերը անդադար կ'աշխատէին։ Պիտի յաջողէ՞ր արդեօք Եղիշէ Արքեպիսկոպոս, անգամ մը համար եւս փրկել կացութիւնը եւ ոտքի կեցնել անոյժ, եւ խայտաբղէտ, սակայն նոյն պղտոր ակէն ջուր խմող հաւաքականութիւնները։

Միաբանական ժողովի անդամներէն ոմանց մօտ ներելի ու աններելի միջոցներով տարուած աշխատանքներէ յետոյ, «կամապաշտ»ները որոշած էին ճեղք յառաջացնել փորձել Ս. Աթոռի երեք միակամ եւ միաձայն եպիսկոպոսներուն միջեւ, քսութեան, բամբասանքի ու չոյումանքի բոլոր ձեւերը գործածելով։ Պէտք էր այսուհանդերձ, վերջին ճիգը թափել ժամանում մը յաջողցնելու յետին եւ անձնական նկատումով։ Այս նախատեսութեամբ, ահա, 23 Հոկտեմբերի Կիրակի օրը, Կիպրոսի Առաջնորդ Ղեւոնդ Եպիսկոպոս ճաշի հրաւիրուեցաւ իր բարեկամ հայրենակցի մը տունը, հրաւէր զոր սիրով ընդունեցաւ Ղեւոնդ Սրբազան, առանց դոյզն չափով մը իսկ մտքէ անցնելու, թէ հիւրասիրութեան պատրուակով, եւ անշուշտ իր բարեմիտ հայրենակիցին կամքէն հակառակ, նոյն օր երեկոյեան տեղի ունենալիք Միաբանական Ժողովի եւ Տեղապահի ընտրութեան մասին խօսակցութիւններ տեղի պիտի ունենային։

Հիւր Սրբազանին սեղանակից եղած էին, անակնկալօրէն, պէյրութահայութեան բաւականին ծանօթ Տիկին մը, ընդդիմադիր թերթի մը արտօնատէր եւ յետին ու կուսակցական հաշիւներով միայն դաւանափոխ եղած ուսուցիչ մը, եւ, անխուսափելին... Եղիշէ Արքեպիսկոպոս։ Անհրաժեշտ չէ տալ մանրամասնութիւնները ճաշի ընթացքին տեղի ունեցած խօսակցութեանց։ Ծանօթ է բոլորին, թէ անոնք կը միտէին Կիպրոսի Առաջնորդը բաժնել իր երկու գաղափարակից Եպիսկոպոսներէն։ Դաւ եւ ծուղակ, զորս կը կարծէին ճարպիկօրէն գործածել ուղղամիտ եկեղեցականի մը դէմ։ Այս վերջին փորձը պէտք էր ցոյց տար իրենց, «կամապաշտ»ներուն, թէ մարդերը ճանչնալու իրենց կերպերը որքան սխալ էին։

Խմբագրական ՀԱՍԿԻ

(20 Մնացեալը յաջորդով)

Ինչ որ բսես
Այն կը լսես։

×

Խօսողը կը ցանէ,
Լռողը կը ժողվէ։

×

Աւելի լաւ է բախտաւոր ըլլալ, քան խելացի։

×

Բարիք ընողը պէտք է լռէ։
Բարիքը ստացողն է որ պէտք է խօսի։

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼՍԱՐԱՆ

—o—

Համապղպայինի հերթական լսարանը տեղի ունեցաւ Նոյեմբեր 19ին Բեժան սրբազան վերնայարկը :

Դասախօսն էր ծանօթ պրպտիչ Պ. Կաբպետ Փօլատեան (Մարսէյլէն), նիւթը՝ Եղիշէ Չարենց :

Նախագահ Պ. Պարսամեան լսարանը բանալով յայտնեց թէ Համապղպայինը առաջին անգամ չէ որ համակրանքով կը մօտենայ երկրի պրպտիչներու գործունէութիւն :

Այս իրիկուան լսարանը նուիրուած է Չարենցի ծննդեան վաթսունամեակին եւ ամէնուրք ծանօթ Պ. Փօլատեան պիտի խօսի ձեզ այս մասին :

Կ. Փօլատեան : (*ՀՄԲ.— Դասախօսութիւնը պիտի հրատարակենք առանձին*) :

Յայտնեց թէ ներկայիս Հայաստանի մէջ Սպուտնիկներէ եւ քաղաքական չատ կարեւոր խնդիրներէ աւելի կը յիշուի Եղիշէ Չարենցի անունը, անոր ծննդեան վաթսունամեակին առթիւ որ կը զուգադիպի նաեւ իր մահուան քառամեակին :

Հայաստանի մէջ Չարենցի վարկին այս կերպով վերահաստատումը բարերախտութիւն մըն է հայութեան համար : Ո՛րովհետեւ Չարենցի անունը խորհրդանշան մըն է այսօր : Ան մեծ քերթողն է հայ իրականութեան մէջ որ պաշտուած է թէ երկրի եւ թէ արտասահմանի անխտիր բոլոր գանգուածներէն :

Դասախօսը կարդաց բազմաթիւ կտոր – ներ Չարենցէն, մանաւանդ Չարենցնա – մէն, բնորոշ համապատասխան վերլուծումներ :

Իբր եզրակացութիւն աւելցուց թէ, այդ իրիկուան ոգեկոչումը կը թելադրէ մեզ կարգ մը գործարներ, նախ որ հայ հանճարի տարօրինակ փայլն է որ դարերէ ի վեր կը ցոլանայ հայ իրականութեան մէջ մեզի տալով հոգեկան, յոգեյոյս նաեւ կը հաստատուի այն իրողութիւնը թէ հայ մտաւորականը պէտք է զոհուի իր ցեղին համար :

Դասախօսը պատասխանեց եւ լուսաբանութիւններ տուաւ ներկաներու կողմէ եղած հարցումներուն :

Օրիորդ Ժիւլիէթ Աւետիսեան յաջող կերպով արտասանեց Չարենցի «Հայաստանին» ու «Ես իմ անուշ»ը :

Լսարանը վերջ գտաւ, նախագահի փակման խօսքերով :

Պ. ՊԱՐԹԵԻ

ՉՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ ՉԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ :

ԿԱՅԾԵՐ

ԺԸ.

ԵՐԿՊԱՌԱԿՈՒԹԵԱՆ ԽՆՁՈՐԸ

Բոլոր ժամանակը նա մի քանի անգամ միայն խօսեց ինձ հետ, եւ նրա խօսքերը խիստ կարճ եւ անդոյն էին : Սպօն խիստ ճչդութեամբ նկատեց՝ թէ «Հասօն քաղցրախօս է միայն իր եղների հետ , ո – րոնք նրա արօրը քաշում են : » Այսու – ամենայնիւ , ես միշտ համակրութեամբ էի վարւում նրա հետ, որովհետեւ նա Մարոյի եղբայրն էր ... :

Գիւղը չատ հեռու չէր ապարակից , մենք չուտով ստացանք ծերունի որսոր – դի խոստացած պաշարը՝ առատ գինի եւ հաց : Ղարանի մսից պատրաստուած խորովածները արդէն եփուած էին, իսկոյն կազմուեցաւ ընթրիքի սեղանը : Տղերքը չափազանց սոված լինելով, նստեցին ուտելու . ես հրաժարուեցայ սեղանից , յայտնելով, թէ ախորժակ չունիմ եւ ինձ ոչ այնքան առողջ եմ զգում : Եւ իրաւ , գլուխս ստաւիկ ցաւում էր, եւ ճանապարհի անախորժ անցքից յետոյ, ես զգում էի մի տենդային դրգռման մէջ, որ դնալով, աւելի եւ աւելի վրդովում էր ինձ քանի մտաբերում էի իմ անպատշաճ վարմունքը Աւետի եւ Սպօյի հետ : Իսկ նրանք, կարծես թէ, մոռացել էին բոլորը, եւ ոչ մի կերպով, եւ ոչ մի թեթեւ ակնարկութեամբ անգամ չէին յիշեցնում անցածը, այլ ընդհակառակն, պատմում էին Հասոյին՝ իմ եւ Մարոյի կռիւը գրանի հետ, եւ զուարճանում էին մեր քաջագործութիւնը : Իսկ նրանց մի այսպիսի ներողամտութիւնը աւելի ծանր էր ինձ համար . ինձ բոլորովին վիրաւորական էր թւում վշտացնել մէկին, եւ առանց փոխադարձ բառականութիւն տալու , վայելել նրա ներողամտութիւնը : Այդ մի տեսակ ոգորմութիւն էր, իսկ ոգորմութիւն խնդրել ես չէի ուզում :

Ընթրիքի սեղանը կազմուել էր տաղաւարի մէջ, տղերքը հաւաքուել էին այնտեղ . ես պառկել էի տաղաւարից դուրս խոտերի վրայ, մի քանի քայլով միայն հեռու նրանցից, այնպէս որ, նրանց խօսակցութիւնը լսելի էր ինձ :

— Ձմարի՛ա , հիւանդ է նա հարցրուց Հասօն :

— Չէ, նա ուրիշ փորացաւ ունի ... պատասխանեց Սպօն եւ մօտեցաւ ինձ, դինով լիքը երկու բաժակներ ձեռին, եւ երգելով մի զեղեցիկ երգ : Տաղաւարի մէջից միաձայն հնչեցին ամբողջ խօրով երգի ձայները, որոնք, ըստ երեւոյթին բոլորին ազգուկ բարձրացուցած են :

Ս. Հրամանադիրով կուսակալներուն լայն լիազօրութիւններ կը տրուին, իրենց չրջանին մէջ հակակչռելու համար ուսեստեղծներու առուծախը : Սահմանները նախակռմներ ալ պիտի ընեն :

Բ. Հրամանագիրով բամպակի առեւտուրը առժամապէս կը դադրի : Այն վաճառականները որ երկու հարիւր քիլոյէն աւելի բամպակ ունին, պէտք է իմաց տան կուսակալութեան :

Այս միջոցները ձեռք առնուած են ապրուստի սղութեան առաջքն առնելու եւ անհետական կեանքը հաւասարակչռելու համար : Կուսակալները առաջին առիթով որոշած են իւղը եւ պանիրը բաշխումի դրութեան ենթարկել ... :

ԹՐՔԱՊԱՏՈՒՄ

« ՄԵԶՄԷ ԵՂՈՂՆԵՐՆ ՈՒ ՁԵՂՈՂՆԵՐԸ ... »

ՀՄԲ.— Պոլսոյ «*Մխիթէթ*» քերթին մէջ Փէյամի Սաֆա հրոնիկ մը գրած է, անգամ մը եւս արծարծելով փոխրամասնութեանց հարցը : Անհանդուրժող ոգիով Թուրք մըն է սակայն այս լրագրողը, որ զայրացած է, անդրադառնալով թէ Հայերն ու Յոյները չեն հետաքրքրուիր քրիստոնեայ ... գրականութեամբ : Ստորեւ՝ նմոյշ մը իր «յայնախոհութենէն» :

Թուրք եպարքոսներու, նախարարներու եւ պետական մեծ մարդոց մէջ, կան այնպիսի Յոյներ, Հայեր եւ Հրեաներ, որոնց ծառայութիւնը մեծ ու անմոռանալի է եղած այս երկրին : Անոնք մեզմէ չեն պառուած եւ մինչեւ իրենց ծուծը թուրք բլլալով ապրած ու աշխատած են :

Այսօրուան բարեկամներուս մէջ ալ կան փոքրամասնութեան պատկանող անձեր , որոնք մեզի չափ կսպառած են մեր հոգին ու մեր չհեռուն :

Բայց բազմաթիւ հայ, յոյն, հրեայ, ծառայողներու վաճառատուներուն մէջ կը պաշտօնավարեն, Հայեր, Յոյներ, Հրեաներ : Երբեք չէք հանդիպիր Թուրքի մը : Մինչեղ Թուրք առեւտրական հաստատութիւններու մէջ, խորութիւն չկայ եւ ոչ խլամներուն ալ գործ կը տրուի հաւատարապէս : Ինչ կը նշանակէ այս : Իմաստը յստակ է .— Անոնք մեզմէ չեն նկատեր իրենք պիրենք : Մինչ մենք, խորութիւն չենք դներ անոնց եւ մեր միջեւ :

Շատերը, հակառակ յայտնի օրէնքին, ցուցատախտակ չեն կախեր իրենց վաճառատուներուն մէջ ու կը խուսափին իրենց ինքնութիւնը յայտնելէ : Ոմանք կեղծ Թուրքի անուններ կը գործածեն : Թրքերէն չեն սորիր, իսկ իրենց որդիները ալ չեն գործածեր : Ահաւոր ոճ մը ունին : Չեն ճանչնար Թուրք գրականութիւնը, չեն իւրացուցած Թրքական մշակոյթը : Բայց Թուրքիոյ մէջ կը չահին ու կ'ապրին ամէնէն հանդիստ պայմաններու տակ : Մենք եղբայրաբար կը վերաբերուինք անոնց հետ : Անոնք թշնամիի պէս կը չարժին մեզի հանդէպ : Մեզմէ չեղողները կարելի է դասդասանել իրենց ոճէն , չարժումներէն, Թրքութեան մասին իրենց ունեցած ծանօթութենէն ապրելակերպէն եւ նոյնիսկ նպաստածքներէն, ժողովրդականէն ամէնէն պարզ սկզբունքը մեզ կը պարտադրէ բարեկամ բլլալ մեզ սիրողներուն հետ : Գործ ատլ՝ մեզի դործ տուողներուն, եւ հեռու մնալ մեզմէ հեռացողներէն : Այլեւս վերջ տանք միակողմանի հայրենակցութեան , միակողմանի առեւտուրին եւ միակողմանի բարեկամութեան ... :

«ՅԱՌԱՋԴԻՄՈՒԹԻՒՆ »

Թուրքիոյ Առեւտուրի նախարարութիւնը վերջերս հրատարակեց երկու հրամանագիրներ, որոնք, ըստ երեւոյթին բաւական ապշուկ բարձրացուցած են :

Ս. Հրամանագիրով կուսակալներուն լայն լիազօրութիւններ կը տրուին, իրենց չրջանին մէջ հակակչռելու համար ուսեստեղծներու առուծախը : Սահմանները նախակռմներ ալ պիտի ընեն :

Բ. Հրամանագիրով բամպակի առեւտուրը առժամապէս կը դադրի : Այն վաճառականները որ երկու հարիւր քիլոյէն աւելի բամպակ ունին, պէտք է իմաց տան կուսակալութեան :

Այս միջոցները ձեռք առնուած են ապրուստի սղութեան առաջքն առնելու եւ անհետական կեանքը հաւասարակչռելու համար : Կուսակալները առաջին առիթով որոշած են իւղը եւ պանիրը բաշխումի դրութեան ենթարկել ... :

Նրա չարունակութիւնը :

Գիշերային լռութեան պահուն, երկրագործի մենաւոր տաղաւարի մէջ, մանկահասակ պատանիների ջերմ եւ անկեղծ սրտերից դուրս բխած հնչիւնները այնքան հոգեչարժ եւ սրտառիչ էին, որ ներչնչեցին իմ վրայ ընկերասիրութեան բոլոր սուրբ եւ կենագործող զօրութեամբ : Իմ սիրտը լցուեց մի սրբազան խաղաղութեամբ եւ զգացի, որ այնպէս սաստիկ կերպով խռովում էր ինձ : Ես չկարողացայ պահել իմ արտասուքը , եւ ընդունելով Սպօյի ձեռքից բաժակը , մխաին մօտեցանք իմերին : Նրանք նոյնպէս մի մի բաժակ ձեռքերին, կանգնած լսորում էին սեղանի չուրջը : Կարօն խիստ հանդարտ եւ ծանր եղանակով կարդաց մի փոքրիկ ճառ : Բայց նրա խօսքերը , ոչնք այնպէս ազդու եւ զօրեղ կերպով դուրս էին հոսում, մինչ այն ատիճան ներգործեցին իմ վրայ, որ ես մինչեւ այսօր չեմ մոռացել, թէեւ այն օրից անցել է չիսուն տարի, այո, չիսուն տարի, գա քիչ չէ ... :

« Սիրելի ընկերներ, մենք այն ազգի որդիքն ենք, որ զրկուելով հայրենական հողից, գրուած է աչխարհի զանազան անկիւններում : Մենք մի այնպիսի ժողովրդի ծնունդ ենք, որ ապրում է մի երկրում , ուր նրա խրճթի օջախը չատ քիչ անգամ տաքանում է կրակով, որովհետեւ նա վառելիք չունի, որի տան մէջ լոյս

ԳԱՂՈՒԹՔ ԳԱՂՈՒԹ

Տ. ՀՈՐԷՆ ԵՊԻՍԿ. ՏԻԹՐՈՑԻՏԻ ՄԷՋ

170 ՀԱԶԱՐ ՏՈԼԱՐ ԿԸ ՀԱՒԱՔՈՒԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՓՈՆՏԻՆ

Տիթրոյիտի գոհաբերող ու հայրենասէր հայութիւնը իր անունին վայել առատաձեռնութեամբ Ս. Սարգիս Եկեղեցւոյ շինութեան փոնտին նուիրեց 170·000 տոլարի աննախընթաց գումար մը : Հայ կեդրոնի Սրահը, ուր տեղի ունեցաւ հոգեկոչումը – հանդէսը, ներկայ էին հարիւրաւելի հայրենասէր ու եկեղեցասէր Հայեր :

Ներկայ էին նաեւ պետական բարձրաստիճան պաշտօնատարներ, ինչպէս նաեւ Քանանի չարքերի Հիւպատոսը :

Հոգեկոչումը – հանդիսին նախագահեց՝ Սեծի Տանն Կիլիկիոյ Պատուիրակ եւ Լիբանանի Առաջնորդ , Գերչ. Տ. Խորէն Արք. Բարոյեան :

Նուիրահաւաքումը վարեց ձեռնհասորէն ընկեր Կոպեռնիկ Թանարբճեան, ջերմ խօսքեր ըսելէ ետք : Նուիրատուութեան չարքը բացին իրենց առատաձեռնութեամբ ծանօթ Պ. Պօղոս Մատանեան եւ իր ընտանիքը, 8000 տոլար գումարով մ.: Ցետոյ, 5000, 3000, 2000, 1000 եւ այլ գումարներով մասնակցեցան խանդավառութեամբ եւ յուզումով, անգամ մը եւս հաստատելով հայ ժողովուրդի զոհաբերութեան անմնան ոգին :

Նման խանդավառութիւն չէ տեսնուած Տիթրոյիտի մէջ : Սրբազան Հայրը հարցրեց ներկայ հայութեան Ն. Վեհ. Զարեհ Կաթողիկոսի ողջոյնները, որ ներկաները լսեցին խորունկ յուզումով եւ արցունքով :

Խօսեցաւ Գերչ. Սրբազան Հայրը, խօսեցաւ նաեւ Լիբանանի Հիւպատոսը՝ գովելով Լիբանանի հայութիւնը, իրրեւ չնորհար տարր եւ Լիբանանի խորհրդարան – նի հայ երեսփոխանները կոչելով «եղբայրներ» :

Սրբազան Հայրը խօսեցաւ նաեւ բացիկի կապանքէն . ջերմ ընդունելութիւն մը եղաւ Լիբանանի Հիւպատոսին ի պատիւ :

Ս. Պատարագի ընթացքին, երբ Լիբանանի դէս – պանը Թաղաւորին ներկայացուց հայ եպիսկոպոսը Պ. Մովսէս Տէր Գալուստեան – նը, այս վերջինը հայ ժողովուրդի երախտագիտութիւնը յայտնեց Վեհապետին :

Պ. Մովսէս Տէր Գալուստեանի ընկերակցութեամբ հայ պատուիրակութիւն մը, բաղկացած Տօքթ. Միհրան Ներսէսեանէ, Օննիկ Զաքարեանէ («Ազատ Օր»), Պարիկ Սարգիսեանէ (Հ. Մ. Ը. Մ.) եւ Սմպէլեանէ (Համապղպային) ներկայացաւ Լիբանանի Նախագահին, շնորհակալութիւն յայտնելու Լիբանանի Հայերուն ցոյց տրուած ազնիւ վերաբերմունքին համար :

Հետեւեալ մատուցը օրը օրին արձանագրեց կատարուած ընդունելութիւններու մանրամասնութիւնները, հրատարակեց բազմաթիւ լուսանկարներ և խմբագրական նոթերու մէջ վեր առաւ երկու երկիրներու բարեկամութիւնը :

ՍԱՄՈՒԷԼ – ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Ս. Մուրատեան վարժարանի ծննդեան մխիթարեան զումարեց իր ընդհանուր ժողովը 1957 – 58 դպրոցի տարեչրջանի բացման առթիւ :

Մանրամասնօրէն քննուեցան Մխիթեան ընդհանուր դործունէութեան վերաբերեալ ծրագիրներու գործադրութիւնը : Զեռք բերուած , ըլլայ՝ արժէքաւոր կարօտեալ հայ մանուկներու թոշակները լրացնելու եւ ըլլայ՝ դպրոցին միչտ աւելի բարեզարդման գործին վերաբերեալ մեծ յաջողութիւնները գնահատուեցան անխտիր ամէնուն կողմէ ջերմ գոհունակութեամբ :

Նոր վարչութիւնը վերակազմուեցաւ միաձայնութեամբ հետեւեալ անդամուհիներով . —

Տիկին Հերմինէ Ֆէյտի՝ նախագահուհի,
Տիկին Ն. Հացերեան՝ փոխ–նախագահուհի,
Տիկին Գրիգորեան՝ քարտուղարուհի ,
Տիկին Թեւանեան եւ Տիկին Յանջեան՝ դանձապահուհի ,
Տիկիններ Տաքէսեան, Մինասեան, Եփրեմեան, Ադամեան, Մանուկեան, Շերոյեան՝ խորհրդականներ :

ԼԻԲԱՆԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՄԷՋ

ԸՆԿԵՐ Մ. ՏԷր ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ԵՐԿԱՅ ԵՂԱՒ ԹԱԳԱՒՈՐԻ ԵՒ ԿԱՐԵՒՈՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆՑ

Պատմական չարաթ մը ապրեցաւ Լիբանէ, հիւրասիրելով Լիբանանի Հանրապետական Նախագահը եւ իր տիկինը , որոնք կը վերադառնային Սպանիայէն : Անոնք եղան պաշտօնական հիւրը թագաւորին : Շքեղ ընդունելութիւն մը կազմակերպուած էր օդակայանը եւ ապա մայրաքաղաքի կեդրոն Սրամպղի Տաճարին մօտ, Աթէնքի քաղաքապետը եւ խորհրդականները դիմաւորեցին Ն. Վ. Նախագահը, մինչ Լիբավիթոսի բլուրէն թնդանօթի 21 հարուածներ կ'արձակուէին :

Հիւրերը մնացին Իրօտու Աթթիքու պալատը եւ յաջորդ առաւօտ Նախագահը , չքերթով մը գնաց Անծանօթ Զինուորի դամբանը ու ծաղկեպատկ մը գետեղեց : Լիբանանի գեսպանատան մէջ ճաշ մը եւ մեծ ընդունելութիւն եղանկրանՊրըթաներ պանդոկին մէջ : Աթէնքի համալսարանին մէջ մասնաւոր արարողութեան մը ընթացքին ուսուցչապետի աստիճանը տրուեցաւ Նախագահին :

Նոյն չարաթը Լիբանանէն Աթէնք ժամանած կը Պէյրութի հայ երեսփոխան Պ. Մովսէս Տէր Գալուստեան, որ հրաւիրուեցաւ մասնակցելու բոլոր կարեւոր ընդունելութիւններուն :

Պալատի մէջ կատարուած ընդունելութեան ընթացքին, երբ Լիբանանի դեսպանը Թագաւորին ներկայացուց հայ եպիսկոպոս Պ. Մովսէս Տէր Գալուստեանը, այս վերջինը հայ ժողովուրդի երախտագիտութիւնը յայտնեց Վեհապետին :

Պ. Մովսէս Տէր Գալուստեանի ընկերակցութեամբ հայ պատուիրակութիւն մը, բաղկացած Տօքթ. Միհրան Ներսէսեանէ, Օննիկ Զաքարեանէ («Ազատ Օր»), Պարիկ Սարգիսեանէ (Հ. Մ. Ը. Մ.) եւ Սմպէլեանէ (Համապղպային) ներկայացաւ Լիբանանի Նախագահին, շնորհակալութիւն յայտնեցին Լիբանանի Հայերուն ցոյց տրուած ազնիւ վերաբերմունքին համար :

Հետեւեալ մատուցը օրը օրին արձանագրեց կատարուած ընդունելութիւններու մանրամասնութիւնները, հրատարակեց բազմաթիւ լուսանկարներ և խմբագրական նոթերու մէջ վեր առաւ երկու երկիրներու բարեկամութիւնը :

չկայ արեւը մանելէն յետոյ, որովհետեւ նրա ճրագի իւղը վաղուց սպառուել է , որի որդիքը պիչերը քաղցած են քնում , որովհետեւ նա տանը հաց չունի : Արեւն այրում է նրա գաւակների մարմինը , ցուրտը սառեցնում է, անձրեւը թրջում է, որովհետեւ նրանց հագուստներն այնքան քրքրուած են, որ չեն կարողանում պահպանել անբախանների եղանակները խոտութիւնից :

ԲԱՖՖԻ

(Շար.)

ՍԹՐԱՋՊՈՒՐԿԻ մէջ տեղի ունեցած Արմատականներու համագումարին մէջ, Լուսէր Տալատիէ կուսակցութեան նախագահ ընտրուեցաւ :

ԱՄԵՐԻԿԱՅԻ դեմոկրատ կուսակցութեան ղեկավար Ատլայ Սթիվենսըն նախագահ Այզընհաուըրի խորհրդատու նշանակուեցաւ՝ արտաքին քաղաքականութեան հարցերուն մէջ :

ՌՈՒՈՇԻՆԿԹԸՆ հանելով Արտաքին Նախարար Տըլըս յայտարարեց, թէ վճռական պիտի ըլլան իրենց պատասխանին մէջ՝ եթէ ամերիկեան զինուորի մը կամ գրօշի մը վրայ կրակ բացուի :

ՄԱՐՍԷՅԼԻ մէջ համալսարանի գիտութեան բաժնի ուսանողները գասադուլ ըրած են, բողոքելով տնօրինութեան դէմ՝ որ դպրոցէն արտաքսած է ուսանող մը :

ՊԻՆՆԻ մէջ սկսան Դանիոյ Վարչապետ Հանսընի եւ Վարչապետ Ատընաուըրի խորհրդակցութիւնները :

ՃԱՓՈՆԻ երեսփոխանական ժողովը պիտի ցրուի եւ յառաջիկայ ընտրութիւնները պիտի ըլլան 1958ի աշնան :

ՍԱԿԱՐԱՆ (Նոյեմբեր 21). — Զոյլ ոսկի 588.000, նափոլէոն 4330, զուից. 4120, սթերլին 5100, քսան տոլարնոց 20.680, թղթադրամ (զուգահեռական շուկայ) անգլ. 1330, տոլար 503, զուից. 120, լիր 0.80 :

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

ԼԻՈՆ. — Հ. Յ. Դ. Վարանդեան կոմիտէն ու բոլոր ընկերները սրտի խոր կսկիծով կը ծանուցանեն ղառնագին մահը իրենց սիրեցեալ ընկերոջ ԹԱԳԻՈՐ ԱՅՎԱԶԵԱՆԻ (Մեծ Նոր Գիւղացի), որ տեղի ունեցաւ Փարիզ, 64 տարեկան հասակին, ուր եւս կատարուեցաւ յուղարկաւորութիւնը :

Այս տխուր առիթով Վարանդեան կոմիտէն իր խոր վշտակցութիւնը կը յայտնէ Այրի Տիկին Փերուզ Այվազեանի եւ պարագաներուն :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

ՄԱՐՍԷՅԼ. — Պոլսէն նոր ժամանած Պ. Մուրատ Տէմիրճեան կը ծանուցանէ իր բարեկամներուն թէ այս կիրակի առաւօտ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Մարսէյլի Մայր եկեղեցին (Ավընիւ տիւ Փրատօ) իր ողբացեալ ծնողաց եւ քրոջը հոգւոյն :

×

Այրի Տիկին Նեկտար Գասպարեան եւ զաւակները կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի այս կիրակի առաւօտ Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին իրենց ամուսնոյն եւ հօր՝ ՍԵԴՐԱԿ ԳԱՍՊԱՐԵԱՆԻ մահուան տարելիցին առթիւ :

Կը հրաւիրուին ողբացեալին յիշատակը յարգողները :

×

Այրի Տիկին Սրբուհի Փափազեան, Տէր եւ Տիկին Մելքոն Թաղէոսեան, Տէր եւ Տիկին Վահան Թէրզեան (Նիս), կը ծանուցանեն թէ՝ այս կիրակի ժամը 11ին, Լիոնի եկեղեցւոյ մէջ տեղի պիտի ունենայ, հոգեհանգստեան պաշտօն եւ պատարագ, իրենց ամուսնոյն, հօր եւ աներհօր Պ. Սարգիս Փափազեանի մահուան քառասունքի առիթով : Կը խնդրուի ներկայ գտնուիլ հանգուցեալին յիշատակը յարգողներէն :

×

Պ. Նշան Զիլինկիրեան, Պ. Արամ Զիլինկիրեան, Տէր եւ Տիկին Սրապեան կը ծանուցանեն թէ, այս կիրակի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ մէջ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի ի յիշատակ իրենց մօր Այրի Տիկին Փեփրոն Զիլինկիրեանի մահուան քառասունքին առթիւ : Կը հրաւիրուին հանգուցեալին յիշատակը յարգողները :

ԹՈՆԻ – ՍՈՒ – ՊՈՒԱՅԻ ԼՍԱՐԱՆ

Այս Շաբաթ գիշեր, ժամը 21ին, կը դասախօսէ դերասան Ս. ԳՄԲԷԹԵԱՆ :

Նիւթ՝ Պետրոս Ադամեանի կեանքն ու գործը : Դասախօսը պիտի արտասանէ նաեւ մեծանուն դերասանին բանաստեղծութիւններէն ընտիր կտորներ :

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԽՆՋՈՅՔ
«ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐ»ՈՒԱՆ ԱՌԹԻՒ

ԱՆԻԷՌԻ մէջ, Նոյեմբեր 24ին, Ընկերվարականներու սրահը, 149պիս, Ավընիւ տ'Արժանթէօյ :

Կազմակերպութեամբ Հ. Յ. Դ. Արամ Ենթակոմիտէի, Շ. Միսաքեան խումբի եւ Կապոյտ Խաչի մասնաճիւղին :

Ժամը երեքէն մինչեւ 11 :

Բանախօսութիւն եւ գեղարուեստական բաժին :

ԱՌՆՈՒՎԻԼԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. «Վարդան» Ենթակոմիտէի եւ մասնակցութեամբ Կապոյտ Խաչի մասնաճիւղին եւ Նոր Սերունդի խումբին :

Այս կիրակի կէսօրէ վերջ ժամը 5էն 11, եկեղեցիին սրահը :

Կը խօսի ընկեր ՀԱՅԿ ՍԱՐԳՍԵԱՆ

Գեղարուեստական բաժնին կը մասնակցին Թառիստ ԳԱՐԵԳԻՆ :

Ձոխ պիւֆէ : Ծախքերու մասնակցութիւն :

×

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ
ՍԷՆ ՇԱՄՈՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. «Վարուժան» կոմիտէի եւ մասնակցութեամբ Նոր Սերունդի :

Այս Շաբաթ, երեկոյեան ժամը 8.30ին, Սալ Ժան տ'Արքի մէջ :

Կը նախագահէ ընկ. ԱՐՄԵՆԱԿ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ :

Կը խօսի ընկ. Վ. ԻՇԽԱՆԵԱՆ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՄԱՀՈՒԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ ՄԱՍՆԱՒՈՐ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Հայրենասէր մեծ Հայրապետ Խրիմեան Հայրիկի մահուան յիսնամեակին առթիւ հանդիսաւոր քառաձայն Ս. պատարագ պիտի մատուցուի Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ մէջ, այս կիրակի ժամը 10ին եւ պիտի կատարուի մասնաւոր հոգեհանգստեան արարողութիւն :

Պիտի պատարագէ եւ քարոզէ Կաթողիկոսական պատուիրակ ՍԵՐՈՎԲԷ ԵՊԻՍԿ. ՄԱՆՈՒԿԵԱՆ :

Կը հրաւիրենք հայ ժողովուրդը որ ներկայ գտնուի այս արարողութեանց, յարգելու համար մեծ եկեղեցականին անմոռանալի յիշատակը :

ԴԻՒԱՆ

Imprimé sur les presses du journal HARATCH
17, Rue Bleue, 17 — PARIS (9e)

ՑՈՒՑԱՏԵՏՐ

ՄԱՐՍԷՅԼ. — Հ. Յ. Դ. Շրջ. կոմիտէն ընկերական ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր շրջանին՝

Քրիստափոր Ենթակոմիտէն այս Շաբաթ ժամը 9ին :

Ակնունի Ենթակոմիտէն այս չորեքշաբթի ժամը 9ին :

Արամ խումբը այս կիրակի առաւօտեան ժամը 10ին :

Կը հրահանգուի բոլոր ընկերներուն ներկայ ըլլալ ճիշդ ժամուն : Սոյն ժողովները տեղի կ'ունենան սովորական հաւաքատեղիները : Ներկայ կ'ըլլան Կեդր. Կոմիտէին եւ Շրջ. վարչութեան ներկայացուցիչները :

Ֆ. Կ. ԽԱՉԻ Փարիզի մասնաճիւղի ընդհ. ժողովը այս չորեքշաբթի, կէսօրէ վերջ, ժամը 3ին, Քաֆէ Ռէժանի մէջ : Շատ կարեւոր օրակարգ : Պարահանդէսի կարգադրութիւններ : Բոլոր ընկերուհիներու ներկայութիւնը անհրաժեշտ է, ինչպէս նաեւ վարչութեան օժանդակներու ներկայութիւնը :

ՍԵԲԱՍՏԻՈՅ Նահանգային Մուրատ Ուսումնասիրաց Միութեան անդամական ժողովը այս կիրակի ժամը չորսին, Իսկի Խրիմեան վարժարանին սրահը :

Օրակարգ. — Ա) Նիւթական եւ բարոյական համարատուութիւն :

Բ) Զեկուցում հոկտեմբերի պատգամաւորական ժողովին :

Գ) Նոր վարչութեան ընտրութիւն :

ԿԱՐՏԱՆ. — Համախորհրդեցիական Միութեան մասնաճիւղի ընդհ. անդամական ժողովը այս կիրակի կէսօրէ վերջ ժամը ճիշդ երեքին Հ. Բ. Ը. Միութեան սրահին մէջ : Օրակարգ խիստ կարեւոր հարցեր : Անհրաժեշտ է մասնաճիւղիս բոլոր անդամներու ներկայութիւնը : Կը հրաւիրուին նաեւ ոչ անդամ բոլոր հայրենակիցները անխտիր :

ՑԵՐԵԿՈՅԹ – ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Կազմակերպուած Սեվրանի Կապ. Խաչի մասնաճիւղին կողմէ :

Կիրակի 24 Նոյեմբեր, ժամը 15էն 23, «ՄԱՍԻՍ»ի շքեղ սրահին մէջ, 87 Ավընիւ տը Լիվրի, Սեվրան :

Հայկական եւ եւրոպական պարեր, անակնկալներ, ՍԹԷՍԷԼի նուագախումբին մասնակցութեամբ :

Օթօպիւս՝ 147 էկլիզ տը Փանթէն, Կար տիւ Նոր, ժամը 14 եւ 15:

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

վարչութիւնը շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուէրները :

Պ. Պ. Ստեփան Փիլիպոսեան (Ամերիկա) քսան տոլար, Ալէն Ենկոյեան (Ամերիկա) 25 տոլար, Երամ Քարաքէյէեան երկու հազար ֆրանք, Տիկին Գոհար Վարդանեանի մահուան առթիւ Տէր և Տիկին Միհրան Կարապետեան տասը հազար ֆրանք, Տիկին Հրանոյշ Ֆիտօ եւ Տէր եւ Տիկին Օհանեան հազարական ֆրանք, Տիկին Սաթենիկ Եաղքարաշեան 1500, Տիկին Վարդանեանի եւ Աստուրեան մահուան առիթով :

ՈՐԲԵՐՈՒ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԱՐՄՆԻ - ՓԱՐԻԶԱՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆ
ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՆՑԻԿ ՑԵՐԵԿՈՅԹԸ
ՆՈՅ. 24ԻՆ, ԺԱՄԸ 16ԷՆ 24
Կաֆէ Օրէլի շքեղ սրահներուն մէջ
ՍԱՎԱ ՆԷԱԿՈՒՅԻ հանգարական նուագախումբը
եւ հաճելի անակնկալներ
Կը խնդրուի ապահովել սեղանները հեռաձայնելով ՓԱՍԻ 64.90
Մուտք 500 փրանք

Décoration — Agencement de Magasin
ANCIENS ÉTABLISSEMENTS
J. PAICHOUX et E. THION
149, RUE NATIONALE, PARIS 13E — TÉL : GOB. 19 52
SERRURERIE D'ART ET DE BATIMENT
Tous Travaux de Fer Forgé

ԾՐԱՐՆԵՐ ԿԸ ՂՐԿՈՒԻՆ ԱՆԳԼԻՈՅ ՃԱՄԲՈՎ, ԴԷՊԻ Խ. ՄԻՈՒԹԻՒՆ, ՄԷՋՆ ԸԼԼԱԼՈՎ ՊԱԼԹԵԱՆ ԵՐԿԻՐՆԵՐԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ
Մասնաւոր արտօնութիւնը որ տրուած է մեզի ֆրանսական կառավարութեան կողմէ, մեզի թոյլ կուտայ պատասխանելու մեր բազմաթիւ յաճախորդներուն որոնք կը փափաքին ծրարներ ղրկել Հայաստան

ՏՕՆԵՐԸ ԿԸ ՄՕՏԵՆԱՆ
ՄՏԱԾԵՑԷՔ ՁԵՐ ԱԶԳԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԵՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ
Իրենց մեծ հաճոյք պատճառած կ'ըլլաք ղրկելով, հիմակուընէ, մեր սահմանած վեցնմոյշ-ծրարներէն մէկը, որոնք պատրաստուած են մեծ խնամքով : Մեր բոլոր ապրանքները վստահօրէն անգլիական են :

ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ ԾՐԱՐ – 20.000 ՖՐԱՆՔ
Վերարկու-կերպաս 2 մեթր 75
Հագուստի կերպաս 2 մեթր 75
աստառ 4 մեթր
2 զոյգ նայլըն գուլպայ
2 քոմպինէզոն նայլըն
2 վարտիք նայլըն

ԱՅՐ ՄԱՐԴՈՑ ՀԱՄԱՐ – 20.000 ՖՐԱՆՔ
3 մեթր կերպաս հագուստի
3 մեթր փոփըլին շապիկի համար
1 ներքին ճերմակեղէն (մայօ տը քօր եւ մէկ էնթերլոք (վարտիկ)
2 զոյգ բուրդէ գուլպայ
1 զոյգ պոքս կօշիկ

ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ – 30.000 ՖՐԱՆՔ
2 մ. 75 բուրդէ թաւիշ վերարկուի համար
3 մեթր աստառ
2 մ. 75 զուտ բուրդէ կերպաս հագուստի համար
1 բուրդէ քառտիկան
1 զոյգ նայլըն գուլպայ
1 շալ բուրդէ (110×110)
6 թաշկինակ

ԱՅՐ ՄԱՐԴՈՑ ՀԱՄԱՐ – 30.000 ՖՐԱՆՔ
3 մեթր կերպաս զգեստի համար
3 մեթր աստառ
1 զուտ բուրդէ փուլ-օվըր
1 զոյգ կօշիկ պոքս
1 ներքնազգեստ (մայօ տը քօր եւ էնթերլոք)
3 մեթր փոփըլին շապիկի
1 զոյգ բուրդէ գուլպայ

ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ – 40.000 ՖՐԱՆՔ
2 մ. 75 թաւիշէ բուրդ վերարկուի համար
2 մ. 75 զուտ բուրդ թայյէօրի համար
5 մեթր աստառ
1 քառտիկան զուտ բուրդ
1 փլէտ էքոսէ 160×160
2 զոյգ նայլըն գուլպայ
1 բուրդէ շալ 110×110

ԱՅՐ ՄԱՐԴՈՑ ՀԱՄԱՐ – 40.000 ՖՐԱՆՔ
3 մեթր կերպաս ֆենէհագուստի համար
2 մ. 75 զուտ բուրդէ կերպաս վարտըսիի համար
5 մեթր աստառ սաթէն
1 փուլօվէր զուտ բուրդ
1 զոյգ գուլպայ զուտ բուրդ

ՇԱՏ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԱԾ ԳԻՆԵՐ որոնց մէջ՝ մաքս, ապահովագրութիւն, առաքման ծախքեր եւ ամէն տուրք
— ՍՏԱՑՈՂԸ ՎՃԱՐԵԼԻՔ ՉՈՒՆԻ —
Կարելիութիւն կայ ձեր ընտրութեամբ ծրարներ կազմել մեր ցուցակին ապրանքներով՝ ԺԱՄԱՑՈՅՑ, ԴԵՂ, ՃԵՐՄԱԿԵՂԷՆ ամէն տեսակի ՀԱԳՈՒՍՏԵՂԷՆ եւ ՀԻՒՍՈՒԱԾԵՂԷՆ
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՑՈՒՑԱԿԸ՝ ՁՐԻ

SICOMEX — 20, RUE ROYALE, PARIS 8e
TÉL : OPE. 67-77
MÉTRO MADELEINE OU CONCORDE — C. C. P. PARIS 11964-43

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925 — Tél. : PRO. 86-60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. PARIS 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 փր. վեցամս. 1600

Արտասահման՝ տարեկան 3500 փրանք : Հատը 12 փր.

ԿԻՐԱԿԻ 24 ՆՈՅԵՄԲԵՐ — DIMANCHE 24 NOVEMBRE 1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8051 — 33e ANNEE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3852

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՀԱՅ ԴԱՏԻ ԱՆՆԿՈՒՆ ՊԱՇՏՊԱՆԸ

Փարիզի Հայոց եկեղեցին ալ կը մասնակցի այսօր յարգանքի այն ցոյցին, զոր ամբողջ հայ ժողովուրդը՝ Արեւելքէն մինչեւ Ամերիկա՝ կ'ընծայէ Խրիմեան Հայրիկի յիշատակին՝ մահուան յիսնամեակին առթիւ :

Մեր նորագոյն պատմութեան մէջ դժուար է գտնել ուրիշ դէմք մը, որ ա՛յնքան սիրուած ըլլայ անխտիր հայութեան բոլոր հատուածներուն եւ դասակարգերուն կողմէ :

Րաֆֆի 1883ին կը գրէր :

« Խրիմեանին Հայոց ամբողջ ազգը « Հայրիկ » է կոչում : Աշխարհի բոլոր փառքի տիտղոսների մէջ չկայ մէկը, որ այդ համեստ կոչման նման բովանդակ էր իր մէջ այնքան ընդարձակ զգացմունք, սէր եւ յարգանք : Դա փառքի եւ աստիճանի տիտղոս չէ, որ պաշտօնական անշունչ թղթերով են տալիս · դա այն որդիական կոչումն է, որ բղխում է կենդանի սրտից, — մի կոչում, որ ընտանիքի անդամները տալիս են գերդաստանի գթասիրտ հօրը : Խրիմեանը հայկական մեծ գերդաստանի հայրն է» :

Հայոց երկնակամարին վրայ յայտնութիւն մը եղաւ Խրիմեան ԺԹ. դարուն, համազգային վերածնունդի, հայկական զարթօնքի, ազատագրական երկունքի խռովայոյզ օրերուն, երբ սահմանին երկու կողմերէն միաժամանակ՝ ռահվիրաներու փաղանգ մը կուգար նոր շունչ, թարմ աւիշ ներարկելու թմրած հոգիներու :

Աշխատունակ, բարի, պարկեշտ, հայրենասէր ու բարեպաշտ հայ գեղջուկի հարազատ տիպարն էր ինք, իսկ եւ իսկ դասական մաքուր Հայը՝ իր ազատատենչ զգացումներով եւ յեղափոխական շունչով :

« Նրա ամբողջ կեանքը ներկայացնում է արկածների մի նշանաւոր շարք, մի երկայն շղթայ, որի իւրաքանչիւր օղակը արտայայտում է նրա բարձր առաքինութիւնը եւ նրա օգտաւէտ գործերը : Այդ շղթան կռել եւ կոփել է նա իր դառն աշխատանքով եւ անվհատելի եռանդով», կը գրէ դարձեալ անմահն Րաֆֆի :

Իբրեւ ուսուցիչ, հոգեւորական, քարոզիչ, հրապարակագիր, բանաստեղծ, գրագէտ, քաղաքագէտ, առաջնորդ, պատրիարք, կաթողիկոս՝ Խրիմեան եղաւ անկաշառ ու անշահախնդիր գործիչ՝ հոգեւին նուիրուելով իր ազգին եւ անոր բարօրութեան աշխատելով մինչեւ վերջին շունչը :

Հայկական Դատի պատմութիւնը սերտօրէն կապուած է իր անձին եւ անունին հետ : Ներսէս պատրիարք Վարժապետեան եւ Ազգային Ժողով, հայութեան համար բախտորոշ եւ ճակատագրական վայրկեանի մը իրեն վստահեցան առաջին պատուիրակի պաշտօնը՝ Պերլինի վեհաժողովին ներկայացնելու համար Հայկական համեստ պահանջները, — կեանքի, ինչքի եւ պատուի ապահովութիւն :

Ո՛չ ոք իրմէ աւելի կրնար անկեղծ թարգմանը ըլլալ երկրի հայութեան իրական զգացումներուն եւ կենսական պահանջներուն : Ինք ժողովուրդի ծոցէն ելած էր, անոր մէջ ապրած ու անոր հետ միասին տառապած :

Բարեմիտ ու անկեղծ՝ մեծապէս կը յուսար, որ քրիստոնեայ, խաչապաշտ պետութիւնները անմիջական դարման պիտի տանէին հայութեան ցաւերուն՝ երբ իր բերնէն լսէին անոր տառապանքին պատմութիւնը :

Ո՛րքան մեծ եղաւ իր հիասթափութիւնը աշխարհի մեծերէն, երբ ձեռնունայն ու սրտաբեկ Պոլիս կը դառնար Պերլինէն :

Իր սրտին ամբողջ դայրոյթը պոռթկաց առաջին առթիւ Մայր եկեղեցւոյ բեմէն՝ «երկաթէ շերեփ» յանձնարարելով հայրենապաշտ ու ազատատենչ ժողովուրդին :

Հայոց Հայրիկի այս պատգամն էր, որ արձագանգ գտաւ ի վերջոյ հայրենասէր հայորդիներու հոգիին մէջ : Մինչեւ որ «երկաթէ շերեփ»ին միջոցաւ — սակայն ի՜նչ անհուն զոհողութիւններու գնով — կարելի եղաւ ստեղծել անկախ Հայաստան մը : Խրիմեան եղաւ անոր հոգեւոր ծնողը :

Հայ ժողովուրդը երբե՛ք պիտի չմոռնայ իր «Հայրիկ»ը եւ երկիւղածութեամբ պիտի ոգեկոչէ միշտ Հայ Դատի աննկուն պաշտպանին անմոռանալի յիշատակը :

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԱՄԵՐԻԿԱ ԵՐԿՆԱՔԱՐԵՐ ԱՐՁԱԿԵՑ

ԺԱՄԱԿԱՆ ԱՐԱԳՈՒԹԻՒՆ՝ 64·300 ՔԻԼՈՄԵԹՐ ԵՒ ՍՊՈՒՏՆԻԿԷՆ 5000 ԱՆԳԱՄ ԱՒԵԼԻ ԼՈՒՍԱՒՈՐ

Ուրբաթ օր, Նոյեմբեր 22, ամերիկեան օդային ուժերու հրամանատարութիւնը հաղորդեց, թէ անցեալ ամիս, Նոր–Մեքսիկայի մէջ արձակուած են արուեստական երկնաքարեր, որոնք 87 քիլոմեթր բարձրացան՝ ժամական 64·300 քիլոմեթր արագութեամբ :

Փորձը կատարուած է Հոկտեմբեր 16ին, Քէմպրիճի (Մասաչուսեթ) օդանաւային Գիտութեանց Կեդրոնի երկրաբնագիտական բաժնի գիտնականներուն կողմէ :

Երկնաքարերը արձակուած են հրթիռի մը թռիչքով, որ խորհրդային Սպուտնիկէն 5000 անգամ աւելի ուժեղ պայթած է :

Երկնաքարերը ալիւմինիումէ *պատրաստուած գնդակներ են, որոնց թիւը չէ յայտարարուած : Մասնագէտներուն կարծիքը այն է, թէ անոնք կարողացած են մտնել միջմոլորակային անջրպետին մէջ :*

Ամերիկեան օդային ուժին հրատարակած զեկոյցը կը բացատրէ, թէ երկրի ձգողութեան ուժին ժամական արագութիւնն է 40·000 քիլոմեթր, այսինքն՝ արուեստական երկնաքարերուն ժամական արագութենէն 34·000 քիլոմեթր պակաս :

Զեկոյցը կ'ըսէ, թէ Սաքրամենթօ լեռան դիտարանը (Նոր Մեքսիկա) յաջողութեամբ լուսանկարած է արուեստական երկնաքարերը, եւ կ'աւելցնէ .— Այս լուսանկարը ցոյց կուտայ արուեստական երկնաքար մը՝ ժամական 64·300 քիլոմեթր արագութեամբ թռիչք առնելու պահուն եւ «Վէնիւս»ի նման փայլով : Երբ հրթիռը հասաւ 56 քիլոմեթր բարձրութեան՝ անապատին վրայ, ինքնաբերաբար բաժնուեցաւ երկնաքարէն : Այս ձեւով, երբ 87 քիլոմեթր բարձրութեան վրայ պայթումը եղաւ՝ հրթիռին մէջ մնացած գործիքները չվնասուեցան :

Փորձը թելադրուած է Քալիֆորնիոյ մասնագիտական համալսարանէն՝ փրոֆէսէօր Ֆ. Զուիքիի կողմէ :

Զեկոյցը կը բացատրէ, թէ մթնոլորտին վերի խաւերուն մասին ծանօթութիւններ ստանալու համար՝ արուեստական երկնաքարերը լաւագոյն միջոցներն են, նկատելով որ ցարդ այդ խաւերու մասին մեր գիտցածը կուգայ միայն բնական երկնաքարերու ուսումնասիրութեամբ :

Փորձին կարեւորագոյն կէտերէն մէկն ալ այն է, որ արձակուած մետաղը դիմացած է տիեզերական արագութեան :

Արուեստական երկու արբանեակներուն հետքը գտնուած է Նոյեմբեր 21ին :

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՋ

Մինչ ամերիկեան գիտական շրջանակները պարզ զեկոյցով մը կը յայտնեն, թէ Հոկտեմբեր 16ին արձակած են արուեստական երկնաքարեր, Խ. Միութեան մէջ կը խօսուի ծրագիրներու եւ սպուտնիկներու մասին :

Մոսկուայի ձայնասփիւռէն փրոֆեսէօր Տոպրոնով յայտարարեց .— Արուեստական արբանեակներուն արձակումը միջմոլորակային անջրպետին մէջ մարդուն թափանցման դարաշրջանն է : Մեծ կայաններ պիտի հաստատուին մթնոլորտին մէջ՝ անջրպետային նաւերու համար : Ի՞նչ ուղղութեամբ պիտի մեկնին անջրպետային այդ նաւերը : Կը կարծեմ, թէ անոնք պիտի արձակուին դէպի երկրին մօտ գտնուող մոլորակները, Լուսին կամ Հրատ : Դէպի Լուսին ճամբորդութիւնը պիտի տեւէ 1 – 5 օր, համաձայն՝ անջրպետային նաւերու ուժգնութեան :

Լոնտոնի խորհրդային դեսպանատան երկրորդ քարտուղարը՝ Սապուրով, յայտարարեց թէ Խ. Միութիւնը պիտի պատրաստէ նոր հրթիռ մը՝ լոյսի արագութեամբ, 300·000 քիլոմեթր՝ երկվայրկեանի մէջ :

ԹՈՒՆՈՒԶԻ ԵՒ ՄԱՐՈՔԻ ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆԸ

ԱԼԺԵՐԻՈՅ ՀԱՐՑԻՆ ՄԷՋ

Մարոքի Թագաւորը եւ Թունուզի Հանրապետութեան Նախագահը իբրեւ եզրակացութիւն իրենց խօսակցութեանց՝ զեկոյց մը հրատարակեցին Ռապաթի մէջ :

Իրենց գլխաւոր նպատակն էր, ինչպէս յայտնի էր, լուծում մը գտնել Ալժերիոյ համար իրենց միջամտութիւնը առաջարկելով Ֆրանսայի եւ Ազատագրական Ճակատին :

Շաբաթ օր յայտնի եղաւ որ այս առաջարկը որեւէ դրական արձագանգ չէ գտած ոչ մէկ տեղ : Ամերիկայէն Արտաքին Նախարար Փինօ անընդունելի կը գտնէ սկսիլ բանակցութիւններու՝ երբ ազատ ընտրութիւններ տեղի չեն ունեցած : Իսկ այդ ազատ ընտրութիւններուն համար անհրաժեշտ է որ նախ ըմբոստները զէնքերը վար դնեն : Ալժերիոյ Նախարար Լաքոստ աւելի խիստ պատասխանով մը կ'ըսէ թէ Ալժերիոյ խնդիրը «մեր խնդիրն» է եւ մարդ թող չխառնուի անոր : Նոյն ժխտական պատասխանը տուած են Ազատագրական Ճակատի պարագլուխները, որոնց առաջին պայմանը՝ բանակցութեանց սկսելէ առաջ անկախութեան ճանաչումն է :

Զարմանալի կը թուի նաեւ թէ Մահամէտ Ե. եւ Պուրկիպա իրենց պաշտօնական զեկոյցին մէջ միայն Ազատագրական Ճակատի խօսքը կ'ընեն Ալժերիոյ կողմէ, մինչ էֆ – էլ – էնը չի ներկայացներ ամբողջ Ալժերիան :

Յառաջիկայ շաբաթ Ալժերիոյ Հարցը պիտի դրուի միջազգային զանազան սեղաններու վրայ : Ամերիկա՝ ուր Այզընհաուըր պիտի ընդունի Մարոքի Թագաւորը : Փարիզ՝ ուր Մաք – Միլըն պիտի տեսակցի վարչապետ Կայեարի հետ եւ Նիւ Եորք՝ ուր Արտաքին Նախարար Փինօ պիտի մասնակցի ՄԱԿի քաղաքական յանձնախումբի ժողովին :

ՕՐԷ ՕՐԻՆ

« ՀԱԿԱԿԱՆՈՆԱԿԱՆ ... »

Ծանօթ է, որ վերջերս էջմիածինը մօտէն հետաքրքրութիւն սկսած է ցոյց տալ արտերկրի Հայութեան ու կիլիկիոյ Կաթողիկոսութեան իշխանութեան ներքեւ գտնուող թեմերուն հանդէպ : Հարաւիրոց մըն ալ ծայր տուած է, ներքին թէ արտաքին ճակատի վրայ : Վազգէն Ա., օգտուելով Ամենայն Հայոց հայրապետի իր տիտղոսէն, եկեղեցագիտական ու կրօնական դասեր կուտայ, ազատ երկրի մը մէջ հաստատուած կիլիկեան դարաւոր Աթոռին :

Վազգէն կաթողիկոս հաղորդագրութեամբ մը «հակականոնական ու եկեղեցաքանդ» կը գտնէ Անթիլիասի ընթացքը, աւելցնելով թէ *յատուկ կոնդակով* մը պիտի ճշդէ իր *դիրքը*՝ անոր հանդէպ («*Յառաջ*» Նոյեմբեր 22) :

Ինչ որ պէտք էր ըսել՝ ըսուա՛ծ է արդէն այս ուղղութեամբ ու տակաւին պիտի խօսուի, այնքան ատեն որ մարդիկ կը փորձեն մտքերու շփոթ ստեղծել տարագիր զանգուածներուն մէջ :

Հարցում մը, սակայն, Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ էջմիածնի Դիւանին :

Վերջերս հայ գրականութիւնը դժբախտութիւնը ունեցաւ կորսնցնելու իր լաւագոյն ներկայացուցիչներէն մէկը՝ Աւետիք Իսահակեան : Ծանօթ է, որ մեծ բանաստեղծը անդամ էր նաեւ էջմիածնի Հոգեւոր խորհուրդին : Եկեղեցական ու կրօնական սկզբունքներու ... դասատու էջմիածինը եկեղեցական արարողութիւններով կատարե՞ց իր Հոգեւոր խորհուրդի մէկ անդամին թաղումը :

Դժբախտաբար՝ ո՛չ :

Թէեւ գիտէինք, թէ մարքս – լենինեան վարչակարգին ներքեւ արգիլուած են Հայաստանեայց Եկեղեցւոյ թաղմանական արարողութիւնները, այսուհանդերձ, անգամ մը եւս ուշի – ուշով հետեւեցանք խորհրդային Հայաստանի մամուլին, աւելի ապահով ըլլալու համար : Ա. Իսահակեանի մարմինը, առանց եկեղեցի տարուելու, փոխադրուեցաւ Պանթէոն, ուր քանի մը «ընկեր»ներ ճառեր խօսեցան ու թաղեցին զայն : Քահանայ մը կամ վարդապետ մը «հոգոց» մը բա՞ւ անոր վրայ :

Ո՛չ մէկ խօսք՝ այս մասին :

Աւելի լաւ պիտի չըլլա՞ր, որ Անթիլիասի *կանոնական* ու *եկեղեցաշէն* զործունէութիւնը ձգելով, Հայրապետը զբաղէր էջմիածնի Հոգեւոր խորհուրդին *հակականոնական* ու *հակակրօնական* ընթացքով :

Երբ Հոգեւոր խորհուրդի մէկ անդամին իսկ կը զլացուին եկեղեցական արարողութիւնները, ո՞վ է որ կը գտնուի «հակականոնական ու եկեղեցաքանդ» ընթացքի մէջ : Անթիլիա՞սը թէ էջմիածինը ... :

ԱՐՄԵՆԱԿ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԳԵՐՄԱՆԻՈՅ *Արտաքին Նախարար Ֆոն Պրենթանօ յայտարարեց, թէ պատճառ մը չկայ որ Ատլանտեան Ուխտին մէջ անգլօ-ամերիկեան հրամանատարութիւն մը ստեղծուի :*

ԷՏՈՒԱՐ ՏԱԼԱՏԻԷ *արմատական կուսակցութեան նախագահ ընտրուելէ վերջ՝ պայքար մը ծայր տուած է մենտեսեան–ներու եւ հակամենտեսեաններու միջեւ՝ մասնաւորապէս Ալժերիոյ հարցին մէջ : Վերջերս զրոյց մը շրջան կ'ընէր, որուն համաձայն Քէյօյ պիտի միանար Վալուայի խմբակին, սակայն նախկին Վարչապետը հերքեց այդ լուրը :*

ՊՈՆՆԻ ՄԷՋ, *երկուքուկէս տարիէ ի վեր առաջին անգամ ըլլալով Ատընաուըր տեսակցեցաւ Ընկեր – Դեմոկրատ կուսակցութեան ղեկավար Օլէնաուըրի հետ :*

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

(Բ· եւ վերջին մաս)

«Ճանչնանք հայ ժողովուրդը», կը պատառ Բաֆֆի, եթէ կ'ուզենք որ մեր ազգային ձգտումները, մեր քաղաքական աշխատանքները, մեր մշակոյթը, մեր մտածողութիւնը առողջ հիմերու վրայ դրուին: Գաղութահայերու ճիգերը վէնեթիկէն կամ էջմիածնէն աւելի չէին: Ուր – բիմեան ոչ միայն հայ ժողովուրդը ճանչ – ցնելու, այլ անոր օգնութեան հասնելու հերոսական աշխատանքին լծուած էր, որպէս քարոզիչ, որպէս ուսուցիչ, որպէս բանաստեղծ եւ կամ արձակագիր, որպէս խմբագիր «Արծուի Վասպուրականի»ին, որպէս աքսորական երուսաղէմի մէջ, որպէս առաջնորդ Տարօնի, որպէս պատ – պէս առաջնորդ Տարօնի, որպէս պատրիարք Վանի եւ Տարօնի մէջ, հասաւ առաքեալներուն եւ ժողովուրդի անմիջական կարիքներուն:

Բանաստեղծութիւնը անոր մէջ հոգեկան թեւեր էին տուած: Այդ թեւերով միշտ ալ Աստուծոյ մօտ մնաց իսկ անոր մտածումները այնքան գործնական էին եւ իրական, որքան հայ ժողովուրդի տագնապն էր, ժողովուրդի ապրումն ու քմբոստութիւնը: Խրիմեան այդ չատ գործնական մտածումով էր, որ Վանի մէջ հիմնեց երկրագործական վարժարանը: Ես չգիտեմ, բանաստեղծութեան մէջ քա՞յ աւելի մեծ թռիչք քան Խրիմեանին երկրագործական վարժարանի մը բացումը:

Խրիմեան նոյնպէս նոր չրջան բացաւ մեր գրականութեան մէջ: Ինչ որ Աբով – եան ըրաւ արեւելահայ լեզուին եւ գրականութեան մէջ, նոյնը ըրաւ Խրիմեան արեւմտահայ գրականութեան: Այլապէս՝ մեր երկու կեդրոններուն մէջ մշակուած գրականութիւնը կրնար առանձ անճա – նաչելի նկարագիր մը, եթէ ընդունինք, որ գրականութիւնը ժողովուրդի մը հարատաւ պատկերացումը պէտք է ըլլայ:

Խրիմեան եւ անոր չունչով մեծցած առաջնորդաւոր աշակերտը, Գ· Սրուանձտեանց, բացին այն չատ կարեւոր չրջանը եւ աւելի հիմնաւորեցին Աբովեանի սկըսած աշխատանքը: Անկէ յետոյ էր որ գաւառական լեզուի անկեղծութիւնը, դիւցազներգութիւնը, հէքեաթը, բարքային, ազգագրական աշխատանքները փերթուեցան մանաւորապէս Պոլսահայ գրողներու կողմէ: Ուրեմն հոն, Հայաստանի մէջ կայ ժողովուրդ մը որ իր գոյութիւնը պայքարով բռնած է, կ'ապրի, կ'երգէ, իր հոգին քակած հէքեաթին ու դիւցազներգութեան մէջ, որ նոյնպէս իր հոգիին մէջ բռնած է յարութիւնը աւետարաններուն եւ դամբարաններուն: Գաղութահայ մտաւորականութիւնը այն առեն միայն տեսաւ, որ հոն էր բարախող սիրտ մը մշակոյթին եւ գրականութեան:

Պոլսոյ «Հայրենիք»ին չուրջ հաւաքուող արժէքաւոր գրականագէտներ, արդէն վաղուց թօթափած վանքերուն ազդեցութիւնը, բերած էին ապրող գրականութեան մը ճաշակը եւ լեզուն, ու չնորհիւ իրենց իրական ճաշակին՝ յաջող արեւի մը պէս ողողեցին ինչ որ գաւառէն կու գար եւ սկսան հետեւողականութիւնով նկարագրել Հայաստանի կապանդը (Բանալեան), ինքնիրենց ուժերով հէքեաթ չինել (Զօպանեան), իսկ բանաստեղծները, գիւղի աղջիկները երեւակայեցին, կուժն ուսերուն, ապրիլը ճամբէն քալելով:

Մ· Կիւրճեան կրցաւ իր չուրջ տեսնել գաւառէն եկած եւ արհամարհուած պանդուխտները: Այդ չրջանին էր, որ գաւառ – ացիները չատ տպաւորուած եւ ինք – ոչն կուգար չատ տպաւորուած եւ ինք – նատիպ գրագէտ մը, բոլորովին ա – նարատ, կուգար ժողովուրդ մը բռնած իր ոճին, իր չունչին մէջ, կուգար, վառած քայլերով: Այդ Թլկատինցին էր:

Խրիմեանին համար հայ ընտանիքը արբանեան հաստատութիւն էր, իսկ Հայր, ըլլայ անուն թէ տանուտէր, բարոյական կառուցում է:

Ուժեղ էին անոր մէջ մարդկայինը, ազգասական սկզբունքները· այնքան ուժեղ, որ այդ բոլորը կիրարկած էր իր գործնական աշխատանքներուն մէջ, պահելու համար ժողովուրդի մը ամբողջութիւնը, որպէս ազգ: Ազգասական էր հաւատալիքի հանդէպ, ընդունելով կրօնքը որպէս խղճի գործ: Բան մը, որ նոր սկսած էր որպէս ազգասական չարժում եւ դէմ՝ ուղղափառ գաւանաւորներուն: Այս օրերուն իսկ դժուար է դանել այդ չինարար ազգասէր – ութիւնը մեր եկեղեցականներուն մէջ:

Եւ որովհետեւ Խրիմեան ամէն բանէ աւելի անկեղծ էր ինքն իրեն հետ, կրցած էր չատ հարազատ պոյներով տալ իր ներքին աշխարհը իր գրական կարեւոր մէկ աշխատանքին, «Պապիկ ու Թոռնիկ»ին մէջ: Գրած է կատարելագործուած աշխարհաբարով եւ իրական չունչով: Անոր ներքին աշխարհը գեղեցիկ դաշտանկար մըն է, ուր գիւղացին երջանիկ է իր քրտինքի աշխատանքով ու օրուան ծանր ու չինարար մտահոգութիւնով: «Մչակականք» մը, ուր կայ հողը, աշխատանքը, սերմը, կալը, այդին, գոմէշը, հովիւը, ծառը՝ նոյնիսկ հայկ· կանանչը: Խրիմեան կը խօսի աւանդական իմաստութիւնով որ մեր պապերուն մտահոգութիւնը եղած է՝ խառնուած՝ երկնքի կապոյտին հետ: Կը զգանք, որ Խրիմեանի հոգիին մէջ կայ հողին կենսաբեր խլլբտանքն ու հողին մտածումը: Այդ զբքին մէջ կը տեսնենք նոյնպէս Խրիմեանի փիլիսոփայական աշխարհը:

Երբ պատանի էինք, դասագրքերուն մէջ յաճախ կը կարդայինք, թէ ինչպէս Թոռնիկը, գեղեցիկ Շուչիկին հետ ամուսնացրնելէ յետոյ, ծիսական հանդիսաւորութեամբ կը պահէ, Շուչիկին պէս արդասաւոր, հողին հետ ու համբուրել կուտայ նաեւ լայն ճակատը գոմէշին:

Այդ այն հողն է, որուն մեր գրողները միայն անուններ կուտան ու կ'անցնին: Խրիմեան տուած է այդ հողը նոյնիսկ գեղարուեստական արժէքով:

Ինչպէս բահն ու խոփն են, այնքան գործնական եղաւ ու դեր կատարեց Խրիմեանի չատ պարզ «չերեփ»ի պատմութիւնը: Ուզեցի յիշել այդ՝ ըսելու համար, թէ ինչքան կարեւոր դեր կրնան կատարել տեղին՝ եւ լաւ ձեւով ըսուած քանի մը խօսքերը, երբ՝ հողը պատրաստ է, աճեցնելու փոքրիկ սերմն անգամ:

Արդէն տակի կարդ անցած այդ խօսքերէն չունչ առին բանաստեղծը, հեռուրը, ֆեաային, լերան չոպանը, բեռնակիրն ու խանութպանը:

Խրիմեան, երկաթէ այդ «չերեփ»ն էր որ գործածեց կալուածներու գրաւման ժամանակ: Ան կեցաւ հսկայի մը պէս, իր եաեւ ունենալով ժողովուրդի մը գայլայթքն ու ֆեաային բռունցքը երկաթէ:

Այս օրերուն՝ Խրիմեանի մահուան 50 – ամեակն է, որ կը յիշատակուի եւ սակայն ինծի այնպէս կը թուի, որ ան մեռած է 200 տարի առաջ, երբ կը տեսնեմ, թէ ինչքա՞ն փոխուած է մեր եկեղեցին, ինչքա՞ն փոխուած են մեր բարձրաստիճան եկեղեցականները եւ նպատակը ինչքան հեռացած: Խրիմեան Հայրիկի այս 50ա – եակը երանի ոգեկոչում մը ըլլայ մեր եկեղեցականներուն համար:

ՀԱՄԱՍՏԵՂ

ՕՏԱՐ ԷՋԵՐ

ԴԱՏԱՍՏԱՆԱՏՈՒՆԸ

Լուսթիւնը տիրեց Դատաստանատան մէջ, եւ Մարդը՝ մերկ՝ երեւցաւ Աստուծոյ առջեւ:

Եւ Աստուած ըսաւ Մարդուն .— Դուն դէշ կեանք մը ունեցար, անպուճ գտնուեցար անոնց հանդէպ որ օդնութեան կը կարօտէին, եւ անոնց որ օժանդակութեան պէտք ունէին. դաժան ու կարծրասիրտ եղար: Աղքատները գեղի կը դիմէին ու դուն չէիր լսեր, եւ ականջներդ գոց կը մնային իմ վշտահարներուս ազաղակին: Որբերուն ժառանգութիւնը իւրացուցիր, ու դրացիդ այրիներուն մէջ ատելութիւնը արձակեցիր: Մանուկներուն հացը առիր եւ չուներուն կերցուցիր. ու պղտոտանեբուս վրայ եաեւէն ինկար իմ բորոտնե – բուս՝ որ ճահիճներու մէջ կ'ապրէին, եւ որոնք հանդստաւէտ՝ գիս կը գովէին. եւ իմ երկրիս վրայ՝ ուրկէ չինուեցար՝ չատ մը խղճմտանքներ ըրիր:

Ու Մարդը պատասխանեց· — Ըրի՛ այդ ամէնը:

Աստուած բացաւ Մարդուն Կեանքին Գիրքը:

Եւ ըսաւ Աստուած Մարդուն .— Դուն դէշ կեանք մը վարեցիր, ու փնտռեցիր Գեղեցկութիւնը՝ զոր աչքիդ առջեւ զրե· ու չկրցար պահել Բարին՝ զոր ծածկեցի: Սենեակիդ պատերը պատկերներով նկարեցիր, ու արձիններու ձայնով եղար խլացուցիչ, ու արձիններու ձայնով եղար խլացուցիչ, ու ոտքերդ քրքումով կը լուայիր ու զոր – պերդ կը փռէիր անոնց առջեւ: Անոնց թարթիչները ծարիրով կը ներկէիր, ու գմուռսով կը ծեփէիր անոնց մարմինները: Անոնց առջեւ կը ծնրադրէիր, ու կուռ – քերուդ գահերը արեւի տակ կը բարձրանային: Արեւին ամօթ՝ եւ լուսնին չամբրչանք ցուցուցիր:

Մարդը պատասխանեց·— Ըրի՛ այդ ամէնը:

Երրորդ անգամ մըն ալ Աստուած բացաւ Մարդուն Կեանքին Գիրքը:

Եւ Աստուած ըսաւ Մարդուն .— Կանգդ չարիք եղաւ: Բարիին չարիք ըրիր, ու վնաս հասցուցիր քեզի բարիք ընդներուն: Վիրաւորեցիր ձեռքերը որ քեզ անուչին, եւ անզոսնեցիր սիրնքները՝ որ քեզի կաթ տուին: Քեզի ջուրով եկողը ծարաւ եաեւ դարձուր, եւ արչալոյսէն առաջ մտանեցիր քեզ իրենց վրաններուն մէջ պահող տարագիրները: Որոգայթի մէջ ձգեցիր թշնամիդ՝ որ քեզի խնայէ, ու դրամով ծախեցիր քայլակից բարեկամդ, ու քեզի Սէր բերողներուն փոխարէն Չեզխութիւն տուիր:

Մարդը պատասխանեց· — Ըրի՛ այդ ամէնը:

Աստուած գոցեց Մարդուն Կեանքին Գիրքը եւ ըսաւ· — Վատահաբա՛ր, քեզ Դժոխք պիտի ղրկեմ, Դժոխք ղրկել կ'ուզեմ քեզ:

Մարդը պոռաց·— Չես կրնար:

Աստուած ըսաւ Մարդուն· — Ինչո՞ւ համար եւ ի՞նչ պատճառով չեմ կրնար եղեր քեզ Դժոխք ղրկել:

— Որովհետեւ Դժոխքի մէջ անգութ կեանք, պատասխանեց Մարդը:

Ու լուսթիւնը տիրեց Դատաստանատան մէջ:

Վայրկեան մը յետոյ Աստուած խօսեցաւ Արդէն տակի կարդ անցած այդ խօսքերէն չունչ առին բանաստեղծը, հեռուրը, ֆեաային, լերան չոպանը, բեռնակիրն ու խանութպանը:

Խրիմեան, երկաթէ այդ «չերեփ»ն էր որ գործածեց կալուածներու գրաւման ժամանակ: Ան կեցաւ հսկայի մը պէս, իր եաեւ ունենալով ժողովուրդի մը գայլայթքն ու ֆեաային բռունցքը երկաթէ:

Այս օրերուն՝ Խրիմեանի մահուան 50 – ամեակն է, որ կը յիշատակուի եւ սակայն ինծի այնպէս կը թուի, որ ան մեռած է 200 տարի առաջ, երբ կը տեսնեմ, թէ ինչքա՞ն փոխուած է մեր եկեղեցին, ինչքա՞ն փոխուած են մեր բարձրաստիճան եկեղեցականները եւ նպատակը ինչքան հեռացած: Խրիմեան Հայրիկի այս 50ա – եակը երանի ոգեկոչում մը ըլլայ մեր եկեղեցականներուն համար:

ՀԱՄԱՍՏԵՂ

ԾԻՍԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

ՀԵՂԻՆԱԿ

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ

(Գ· եւ վերջին մաս)

Սրբազրութեան կարօտ նիւթերու կարգին, ահաւասիկ նիւթեր եւս, որոնք չատ աղբատ են.—

ԿՈՆՔ.—Օրմանեան արք· եօթը տող միայն նուիրած է այս բառին, ըսելու համար ինչ որ ... գրուած է սովորական բառարաններու մէջ:

Նախ, իրրեւ բառագիտական պակասութիւն, դիտելի է որ զանց առած է չենթաբը,— ծիսական բառ, գործածուած՝ Մաշտոցի մէջ, ծանօթ նաեւ չենիճ գրչականն ձեւով: Ոմանք վերջին այս բառին առած են ըպրբղ նշանակութիւնը, իսկ Կոյլաւ՝ զայն հոմանիշ կը դնէ ... միստառ բառին դէմ, արմատը հայերէն կարծելով: Արդ, չենիթա յունարէն ծագում ունի, խէոնիվոն բարդ բառն է որ հայացուած է, ձեռք լուալու ատեն նշանակութեամբ, (պէտք է աւելցնել, սակայն, թէ Հիպոկրատ եւս գործածած է այս բառը ... կարուրայ իմաստով, որով Կոյլաւ կ'արդարանայ այստեղ):

Շոնիթին հետ ձայնաբանական առնչութեամբ՝ տեղն է յիշեցնելու թէ չոիչ (Նարեկացի) եւ չունչան (Դատ· Ը· 26) բառերուն ստուգաբանութիւնը, ինչպէս նշանակութիւնը, զոր կուտան մեր մեծանուն հայագէտները, կարօտ է վերաքննութեան:

Կոնքին ծիսապետական բացատրութիւնը մեզ կը տանի խնջոյքներու եւ զոհատօներու պատմական երկար նկարագրութեան:

ԽԱՀ.— Գոհացուցիչ չէ նոյնպէս ինչ որ կը տրուի խաչին մասին իրրեւ պատմական ծանօթութիւն: Օրմանեան կանգ առած է միայն խաչի ձեւերուն վրայ:

Խաչը, սկզբնաբար, գից մըն էր սրածայր,— այսքանը՝ նախ իրրեւ բառագիտական ծանօթութիւն: Աղղաբեւ, խէչակ կը կոչուի, այսինքն փոքրիկ խաչ, ձողը որ, պարտէզներու մէջ, նեցուկ կը տըրուի մատղաչ տունկերուն կամ օրան կը կապուին պատապիճները:

Երկրորդ, իրրեւ պատմական ծանօթութիւն, խաչը այն գիշեր էր, որու վրայ վերջ կը գտնէր մահապարտին կեանքը ամէնէն անարդական ձեւով: Աստուածաչունչ Մատեանին մէջ բազմաթիւ ակնարկութիւններ կան պատժական այդ գիշերին մասին,— Ս· Յերոնիմոս քանիցս «խաչ» թարգմանած է այդ բառը հոն ուր մեր թարգմանիչները նախընտրած են ըսել «փայտ» (Ծննդ· Խ· 19)·— «Յետ երից աւուրց բարձցէ փարաւոն զգլուխ քո ի քէն, եւ կախեսցէ զքեզ փայտէ»: Երբայեցի մը դիտել կուտայ թէ անօգուտ է գլուխ կարել եւ յետոյ կախել, ուստի «կախել» բառին տեղ, առարկելով թէ երբայեցիները կախել չէին գիտեր, այլ միայն քարկոծել, կ'առաջարկէ կարգել բայը, որ սակայն ոչինչ կը փոխէ իր դիտողութենէն(*): Մահապարտին համար էր, որ երբայեցի ժողովուրդին մէջ՝ ցցահանութիւնը կը համարուէր ոչ միայն պատիժներուն մեծագոյնը, այլ եւ նախատինք – ներուն նախատինքը, որ իրրեւ անէծք կը չարունակուէր յետ – մահու, ինչպէս կը վկայէ Պօղոս· «Զի գրեալ է թէ անիծեալ ամենայն որ կախեալ կայցէ գիպայտէ» (Գաղ· Գ· 13): Ահա թէ ինչո՛ւ, սկիզբ – ներէն, կը պայթակղէին մարդիկ՝ երբ կը տեսնէին խաչ մը, որու գամուած էր Քրիստոս:

(*) Կը կարծեմ թէ երբայերէնի «փայտ» բացատրութիւնը, որ կը յիշեցնէ ցցահանութեան կարգ մը գործողութիւններ,— մահապարտը ցիցին գլուխը կը բարձրացնէին փոկերով ու պարաններով, ինչպէս կը վկայէ Պլինիոս: Հարկ է աւելցնել թէ ցցապատիժը հռովմէական ձեւ է, ծագումով Կարթագինեան:

Խաչին հնագոյն ձեւը, առանց յիշելու քրիստոնէական աշխարհէն դուրս ծանօթ ձեւերը, գծապատկեր մըն է, որ կուգայ Գ· դարէն,— մարդ մը կը համբուրէ հոգու գլուխով ուրիշ մարդու մը ձեռքը, մինչ այս վերջինը ձեռնատարած կպած է խաչի մը, ու տակը գրուած· «Ալեքսամենոս կը պաչէ իր աստուածը»: Անարդական ծագրանկար մը քրիստոնեաներուն դէմ, որոնք «իշապաշտ» կը կոչուէին հեթանոսներու կողմէ:

Այս գծապատկերին մէջ խաչը ունի

(**),— խաչելութեան պատկերը քրիստոնէութեան ծագումէն եօթը դար ետքը սկսած է գործածական դառնալ, ինչպէս կը գրէ Քասլրոլ, իսկ Հայոց մէջ՝ ոչ երբեք ժԲ· դարէն առաջ, ինչպէս կը գրէ Հայոյնի վարդապետ: Ուստի պէտք չէ պարմանալ, եթէ առաջին դարերու եկեղեցական մատենագիրները, կը գրէ արբայ Տիւէ, որոշ նեղութեան մը կը մատնուէին՝ երբ հարկ կը դառնար խօսիլ խաչին մասին: Այս վերապահութիւնն է պատճառը՝ եթէ քիչ են խաչին հնագոյն պատկերները եւ վէճ կայ խաչին սկզբնական ձեւին մասին:

Խաչին հնագոյն ձեւը, առանց յիշելու քրիստոնէական աշխարհէն դուրս ծանօթ ձեւերը, գծապատկեր մըն է, որ կուգայ Գ· դարէն,— մարդ մը կը համբուրէ հոգու գլուխով ուրիշ մարդու մը ձեռքը, մինչ այս վերջինը ձեռնատարած կպած է խաչի մը, ու տակը գրուած· «Ալեքսամենոս կը պաչէ իր աստուածը»: Անարդական ծագրանկար մը քրիստոնեաներուն դէմ, որոնք «իշապաշտ» կը կոչուէին հեթանոսներու կողմէ:

Այս գծապատկերին մէջ խաչը ունի

(**) Հեղինակ մը, իր կարգին, կը վերկայէ թէ «Հայէ անարգ կը համարին որ Տեառն մերոյ կերպարանքը խաչին վրայ կախուած, գամուած եւ յարած լինի»:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՄԱՍՆԱՎՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

La Reine de Césarée

—o—

Ներկայացումներ ամեն օր, սկսած ժամը 7½-ից։

Կասսայի բացումը՝ ժամը 6-ից։

Ներկայացման տևողությունը՝ 2 ժամ։

Ներկայացման ընթացքում դահլիճ մտնել չի թույլատրվում։

Ներկայացման ընթացքում ծխելն արգելվում է։

Ներկայացման ընթացքում ուտելիք և ըմպելիք չի թույլատրվում։

Ներկայացման ընթացքում լուսանկարելն արգելվում է։

Ներկայացման ընթացքում ձայնագրությունն արգելվում է։

Ներկայացման ընթացքում ներս և դուրս գալն արգելվում է։

Ներկայացման ընթացքում ոտքերը բազկաթոռների վրա դնելն արգելվում է։

Ներկայացման ընթացքում ոտքերը դիմացի բազկաթոռի

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՃԱԿԱՏ

ՀԱՄԱՅՆԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԱՐԴԻՒՆՔԸ

Ինչպէս գրած էինք, Մոսկուայի մէջ տեղի ունեցաւ 12 երկիրներու համայնավար կուսակցութեանց պատուիրակներուն համագումարը։ Այս առիթով խորհրդային բոլոր թերթերը կը հրատարակեն համարակաց յայտարարութիւն մը, զանազան հարցերու շուրջ։

Յայտարարութեան Ա. գլուխը յատկացուած է միջազգային ներկայ կացութեան, անշուշտ՝ հարուածելով Արեւմուտքը եւ փառաբանելով Արեւելքը։ Յիշատակուած են նաեւ Հնդկաչինի, Ինտոնեզիոյ, Քորէայի, Մալեզիոյ, Քենեայի, Կուաթեմալայի, Եգիպտոսի, Ալժերիոյ, Օմանի ու Եմէնի մէջ ամերիկացի, անգլիացի եւ ֆրանսացի «աշխարհակալ»ներու կողմէ շղթայազերծուած պատերազմները։ Յայտարարութիւնը կ՚աւելցնէ, թէ երբ «համարձակին նոր պատերազմ շղթայազերծել՝ աշխարհակալութիւնը իր մահավճիռը ստորագրած պիտի ըլլայ»։

Բ. գլուխը յատկացուած է արբանեակ երկիրներու յարաբերութեանց։ Միասնականութիւն ու եղբայրութիւն կ՚առաջարկուի եւ պաշտպանութեան համար՝ Վարշաւայի Ուխտին զօրացումը։

Գ. գլուխ՝ գաղափարական հարցեր։ Համայնավար կուսակցութեան 20րդ համագումարին ճշդուած բոլոր սկզբունքները պէտք է իւրացնեն կուսակցութիւնները եւ հնազանդին «օրէնք»ներուն։

Դ. գլուխ՝ խաղաղութեան պաշտպանութիւնը։ Համարակաց այս յայտարարութեան վերջին գլուխը կը հաստատէ 20րդ համագումարին մէջ որդեգրուած թէզերը՝ խաղաղութեան պաշտպանութեան համար եւ ընկերվարական խաղաղ յեղափոխութիւններ կը թելադրէ, առաջարկելով որ «գաղթատիրական» երկիրներու մէջ «ժողովրդական ճակատ»ներ կազմեն։

ԹԻԹՕ ՀԱՄԱՁԱՅՆ ՉԷՐ

Եուկոսլաւիա մաս չէ կազմած Մոսկուայի համարակաց յայտարարութեան եւ չէր ստորագրած զայն։ Մոսկուայի Եուկոսլաւեան դեսպանատան մէջ տրուած հացկերոյթի մը ընթացքին, այս ուղղութեամբ հարց տրուած է Եուկոսլաւիոյ դեսպանին, որ պատասխանած է. — Մենք չստորագրեցինք այդ յայտարարութիւնը, որովհետեւ համաձայն չէինք։

Հարց տրուած է, թէ Պելկրատ այդ յայտարարութեան ո՞ր կէտին համաձայն չէ։

— Ուշադրութեամբ կարդացէք զայն եւ պիտի տեսնէք։

Այս միջոցին, արեւելեան Եւրոպայի դիւանագէտներէն մէկը աւելցուցած է. — Եուկոսլաւիա ընկերվարական երկիր մըն է բայց մաս չի կազմեր ընկերվարական ճակատին։

ՄԱՐՍԷՅԼԻ առեւտրական նաւերու նաւաստիները գործադուլ հռչակեցին, որուն հետեւեցան Ֆրանսայի բոլոր նաւաստիները։

ՖՐԱՆՍԱՅԻ մէջ Դեկտեմբեր մէկին կաթին եւ կարագին գինը պիտի բարձրանայ։

ԱՆԳԼԻՈՅ Էլիզապէթ թագուհին եւ Էտինպուրկի դուքսը յառաջիկայ մարտ 25, 26, 27ին պաշտօնական այցելութիւն մը պիտի տան Լա Հէյ։

ՎԱՐՇԱՒԱՅԷՆ մանեչալ Վորոշիլով ճամբայ ելաւ դէպի Մոսկուա։

ԵԹՈՎՊԻՈՅ առաջին խորհրդարանին երկու կին անդամներէն մէկը ընտրուած է փոխ–վարչապետ։

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԼՍԱՐԱՆ

Հերթական դասախօսութիւնը այս չորեքշաբթի գիշեր, ժամը 21ին, Քատէի սրահը։ Կը խօսի՝ Օր. ԺԻՒԼԻԷԹ ԱԽԵՏԻՍԵԱՆ։ Նիւթ՝ «Ակնարկ մը Հայոց Թատրոնի պատմութեան վրայ»։ Կը խնդրուի ճշդապահ ըլլալ։

Կ'ՈՒԶՈՒԻ

Մասնագէտ քայէօր մը այր մարդու զասական ժիլէի համար։ Դիմել՝

SILVERCEL

9. Rue Geoffroy L'Angevin - Métro Rambuteau

Tél. : ARC. 33-72

Այրի Տիկին Աստղիկ Ֆորթունաթօ, Տէր եւ Տիկին Ժան Ֆորթունաթօ, Տէր եւ Տիկին Սուճեան, Օրիորդներ Սուճեան, Տէր եւ Տիկին Վայօ եւ զաւակները, Տէր եւ Տիկին Պետիկեան եւ զաւակները, Պ. Նուպար Շիշմանեան, Տէր եւ Տիկին Քօթօնեան, Պ. Պ. Էտկար եւ Էտմոն Քօթօնեան, Պ. եւ Օր. Տէօվլէթեան ցաւով կը ծանուցանեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, քեռայրին, եւ ազգականին

ԱՐՇԱԿ ԳԱՌԼՕ ՖՈՐԹՈՒՆԱԹՈՅԻ

մահը որ պատահեցաւ 75 տարեկան հասակին, Նոյեմբեր 21ին, իր բնակարանը 52 րիւ տիւ Ֆոպուր Մոնմարթր։

Յուղարկաւորութիւնը տեղի կ՚ունենայ այս երկուշաբթի (Նոյ. 25) ժամը 10·30ին Փարիզի՝ Ս. Յովհաննէս–Մկրտիչ եկեղեցին։

Ուրկէ մարմինը պիտի փոխադրուի Փանթէնի գերեզմանատունը։

Մասնաւոր մահազդ ղրկուած չըլլալով կը խնդրուի ներկայս իբր այդ նկատել։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Լիոնի Եկեղեցաշէն Յանձնախումբը շնորհակալութեամբ ստացաւ Պ. Հ. Արամ Պօյաճեանի ձեռամբ, Փոն տը Շէրիւէն բարեպաշտ տիկնոջ մը կողմէ, խաչի օծման առթիւ նուիրուած հինգ հազար ֆրանքի գումարը։

Նոյնպէս Եկեղեցաշէն Տիկնանց Միութիւնը շնորհակալութեամբ ստացաւ հետեւեալ նուէրները. — Լը Փիւիէն Պ. Յարութիւն Տէր Յակոբեանէ հինգ հազար ֆրանք իր ամուսնութեան առթիւ։

Պ. Յարութիւն Գասպարեանէ երկու հազար ֆրանք իր զաւկին Ալժերիայէն վերադարձին առթիւ։

Տիկին Մարիամ Քիփիէլեանէ հինգ հարիւր ֆրանք, Տիկին Մառի Նաճարեանէ հազար ֆրանք իր ամուսնոյն ապաքինման համար, խաչին օծման առթիւ Տիկին Թորիկեանէ հազար ֆրանք, Տիկին Ադամեանէ հազար, Տիկին Գալուստեանէ հազար, Տիկին Սուլթան Սէֆէրեանէ հազար ֆրանք։

Իւժինէն – Սավոա հետեւեալ նուէրները եկած են շինութեան համար Պ. Քէնտիրեան Հայգազ հինգ հազար ֆրանք, Պ. Սողոմոն Կարմիրեան հինգ հազար, Պ. Լուսիկեան Օննիկ երեք հազար, Պ. Յովսէփ Ինճէեան 2500, Պ. Գէորգ Տէրտէրեան հազար ֆրանք։ Սոյն նուէրներու հաւաքումը կատարուած Պ. Յովսէփ Ինճէեանի ձեռամբ։

ՓԱՐԻԶԻ Ազք. Ընկերակցութիւնը շնորհակալութեամբ ստացած է, զանազան առիթներով, հետեւեալ նուէրները. —

Բ. ՑԱՆԿ

Տիկին Էլիզ 2000 ֆրանք, Տիկին Հասկօ Կարապետօֆ հինգ հազար, (Փօնթ–Էվէգէն) Հայ սպասուհի մը հինգ հարիւր, Տէր եւ Տիկին Սողոմոնեան հազար, Պ. Մարգար Ադամեան 2000, Տէր եւ Տիկին Համբարեան հազար, Տէր եւ Տիկին Նատիրեան (Մոնթրէօյէն) հազար, Տքթ. Զիլինկիրեան հազար, Տիկ. Վէզիրեան հազար, Տէր եւ Տիկին Քէպէլեան 5000, Պ. Յակոբ Զագարեան հազար, Տիկին Զատիկեան հինգ հազար, Պ. Հրանդ Պարոնվարդեան երկու հազար, Պ. Աթալահ հազար, Տիկին Զապէլ Պաքալեան երկու հազար, Տէր եւ Տիկին Զագարեան երկու հազար, Տիկին Արմենուհի Սապունճեան երեք հազար, Այրի Տիկին Էմէրեան երկու հազար, Պ. Յարութիւն Արութեան երեք հազար, Պ. Վարդանօֆ երկու հազար, Պ. Եդուարդ Ճերմակեան 25 հազար, Պ. Ժիրայր Զիլինկիրեան տասը հազար, Պ. Ակոբովիչ հազար, Ոմն երեք հազար, Պ. Լեւոն Զիլինկիրեան հինգ հազար, Տէր եւ Տիկին Աժտէրեան երկու հազար, Տիկին Սավիօրլանեան Սոֆի հազար, Պ. Մկրտիչ Գաղանճեան երկու հազար, Տիկին Յակոբեան Մարի 10·000, Պ. Լեւոն Զարդավաթճեան չորս հազար, Տիկին Մինասեան հինգ հազար, Տիկին Վէզիրեան 1500, Տէր եւ Տիկին Գամպէրեան կարապետ հազար, Օր. Պալտասարեան հինգ հարիւր, Տիկին Կիւրճեան հազար, Տէր եւ Տիկին Մորուքեան հազար, Պ. Զօպանեան (Մարսէյլէն) 15·000 ֆրանք։

ՄԵԾ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ՄԵԾ ՆՈՐ Ե՛ՐԵԿՈՅԹ [sic: ՄԵԾ ՆԻ ՇՔԵՂ ԵՐԵԿՈՅԹ]

Շաբաթ, 30 Նոյեմբեր, ժամը 21ին Կրընոպլի մէջ, Րիւ Ժէի սրահը

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ Հ. Յ. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Կը նախագահէ ընկեր Գ. ՓԱՓԱԶԵԱՆ (Փարիզ)

Կը խօսի ընկեր Ժ. ՄԻՐԻՃԵԱՆ (Մարսէյլ)

Մասնակցութեամբ Փարիզի եւ իր շրջաններու, Կեդր. Ֆրանսայի եւ Մարսէյլի մասնաճիւղերուն։

Գեղարուեստական բացառիկ յայտագիր

Հանդիսութենէն ետք, ընկերական խրախճանք եւ պար մինչեւ 2։

Մուտք՝ 100 ֆրանք։

ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՐԵՐՈՒ ԵՒ ՆՈՒԱԳԻ ԲԱՑԱՌԻԿ ԵՐԵԿՈՅ

12, Դեկտեմբեր, Հինգշաբթի ժամը 8·45ին

THEATRE DE PARIS, 15, Rue Blanche, Métro : Trinité ou Blanche

ԱԼԻՍ ՊՕՅԱՃԵԱՆ

Կը պարէ ու կը ղեկավարէ իր պատրաստած երկսեռ պարախումբը

Մասնակցութեամբ նուագախումբի զոր կը ղեկավարէ

ԱՐԱ ՊԱՐԹԵՒԵԱՆ

Տոմսերու գիներն են 800, 600, 500, 400 եւ 300 ֆրանք

Ստանալու համար դիմել՝

Etabl. O. B 83, Rue d'Aboukir, Paris - Tél. CEN. 48-69 եւ ներկայացման օրը թատրոնին կիչէն։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Եկեղեցաշէն Տիկնանց Յանձնախումբը շնորհակալութեամբ ստացաւ հետեւեալ նուիրատուութիւնները ի նպաստ Լիոնի եկեղեցւոյ շինութեան, հանգուցեալ Թագուհի Այվազեանի մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի Պ. Ֆիլիփ Ինէքճեանէ հազար ֆրանք։ Մոնթէլիմարէն Պ. Կարապետ Թէրզեան հազար ֆրանք։ Ոմն հինգ հարիւր ֆրանք։

ՓՆՏՌԵՑԷՔ Թ. ՄԻՆԱՍԵԱՆԻ ԳՈՂԳՈԹԱՆ

Անգարայի, Քեսկինի, Կեսարիոյ, Պօզաղեանի, Քըրքշէհիրի եւ Քալայճըքի Ջարդերու սրտակեղէք պատմութիւնը։

Գին 300 ֆրանք։ Դիմել հեղինակին՝

156 Րիւ Լաֆայէթ, Լիոն

Գիրքին հասոյթին կէսը պիտի յատկացուի բարենպատակ Միութեանց։

ԿԱՐԵՒՈՐ ՆՈՒԷՐ ՄԸ ԼԻՈՆԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇԻՆՈՒԹԵԱՆ

Նոյեմբեր 10ին Մարսէյլի մէջ տեղի ունեցած է ծանօթ առեւտրական Արծրունի ... ծանօթ առեւտրական Զրրաչեանի երկու թոռնիկներու Վարուժան եւ Արծրունի Կուրտիկեաններու մկրտութիւնը։

Անկէ տարի մը առաջ Պ. Զրրաչեան իր աղջկան ամուսնութեան առթիւ, հարսանեկան ուրախութեան ընթացքին, շնորհիւ իր նախաձեռնութեան, ներկաներէն նուիրահաւաքում կատարելով մէկ միլիոն ֆրանք ապահովեց Լիոնի եկեղեցւոյ շինութեան, կարեւոր գումար մը ինքն ալ մասնակցելով։ Այս անգամ ալ Պ. Զրրաչեան Լիոնահայութեան խոր երախտիքին կ՚արժանանայ, իր երկու թոռնիկներուն մկրտութեան առթիւ 500·000 ֆրանքի նոր գումար մը եւս նուիրելով։

Լիոնահայութիւնը այս գործին յաջողութեան համար շատ բան կը պարտի, շինութեան յանձնախումբի ատենապետ Պ. Կարպիս Ճնկրտեանի, որ միշտ նոր հասոյթի միջոցներ կ՚ապահովէ։

Թ. Բ.

ՏՕՆԱԾԱՌ

ՍԱՄՈՒԷԼ – ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Կիրակի, 22 Դեկտեմբեր

ՍՏԻՊՈՂԱԿԱՆ

Կը փնտռուի երիտասարդ աղջիկ մը (տաքթիլօ)։ Ներկայանալ «Յառաջ»ի վարչութեան։



Նոր կատարելագործում կօշիկի կրունկներու պատրաստութեան մէջ

Առաջին հայ հաստատութիւնը որ յաջողած է մաքիէն փլաքիէի եւ ալիւմինիումի միացումով շինել անբէկ (էնճասապլը) եւ ճկուն կօշիկի կրունկներ ամէն բարձրութեամբ։

Դիմել՝

VANPLAST

(ՎԱՆԼԵԱՆ)

7, RUE GODOT DE MAUROY

Tél. : OPE. 01-08

Առաւօտները հեռաձայնել՝ ITA 33-38

Imprimé sur les presses du journal HARATCH

17, Rue Bleue, 17 — PARIS (9e)

Հիմնադիր–Տնօրէն ԳՐԻԳՈՐ ԹԵՒԱՆԵԱՆ

ՃԱՇԱՐԱՆ ԵԱՐ

Ֆրանսական – հայկական եւ կովկասեան ընտիր կերակուրներ

4, RUE ROBERT-ETIENNE

(Rue Marbeuf) PARIS - 8e

TÉL. : BAL. 31-21

ՇԱՆ ԶԷԼԻԶԷ ՄՐՏԻՆ ՎՐԱՅ

Métro : F. D. Roosevelt

Հաճելի մթնոլորտ

Առաջնակարգ կովկասեան խորոված–ներ, «շաշլիք», «քարսքի»

Bar Américain



ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925 — Tél. : PRO. 86-60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. PARIS 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամս. 1600

Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք : Հատը 12 ֆր.

ԵՐԵՔՇԱԲԹԻ 26 ՆՈՅԵՄԲԵՐ

MARDI 26 NOVEMBRE 1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8052 — 33e ANNEE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3853

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՅՈՅՍԻ ՆՇՈՅԼՆԵՐ

Վերջացող շաբթուան ընթացքին Ուաշինկթընի, Նիւ Եորքի, Ռապաթի եւ Սթրազպուրկի մէջ տեղի ունեցող քաղաքական խօսակցութիւնները որոշ յոյսեր ներշնչեցին թէ Մթնոլորտը պիտի պայծառանայ հետզհետէ :

Փարիզի մէջ Անգլիոյ վարչապետ Մաքմիլընի եւ Ֆէլիքս Կայեարի միջեւ կատարուած բանակցութիւններն ալ կոչուած են ամրապնդելու այդ յոյսերը : Վճռական որոշումներ պիտի տրուին այս օրերս՝ օրուան հրատապ հարցերուն մասին, որոնց առանցքը կը կազմէ Ալժերիոյ տագնապը :

Երեք տարիէ ի վեր այս խնդիրը կը զբաղեցնէ Ֆրանսան, մեծապէս ազդելով անոր ներքին եւ արտաքին քաղաքականութեան վրայ :

Ելմտական – տնտեսական տագնապը, որ ամէն օր աստիճան մը աւելի կը ծանրանայ, գլխաւորաբար հետեւանքն է Ալժերիոյ պատերազմին : Կառավարութիւնը ստիպուած է դրօշի տակ պահել հարիւր հազարաւոր երիտասարդներ, որոնք կրնային արդիւնաբեր աշխատանք կատարել ճարտարարուեստի, երկրագործութեան եւ տնտեսութեան այլ մարզերուն մէջ : Ելմտացոյցի ելքի բաժինէն տարեկան առնուազն եօթը հարիւր միլիառ ֆրանք կը յատկացուի հիւսիսային Ափրիկէի խաղաղեցման գործին :

Արտաքին քաղաքականութեան մէջ ալ Ֆրանսայի հետապնդած ուղղութիւնը երեք տարիէ ի վեր մեկնակէտ ունեցած է Ալժերիան : Մասնաւորապէս Մերձաւոր Արեւելքի մէջ :

Ալժերիա Ֆրանսայի անբաժանելի մասը կը կազմէ 1830էն ի վեր : Մէկուկէս միլիոն Ֆրանսացիներ հաստատուած են հոն սերունդներէ ի վեր՝ մեծապէս սատարելով երկրի վերաշինութեան : Մարոքի եւ Թունուզի պարագան տարբեր էր : Ֆրանսա անկախութիւն շնորհեց այդ երկիրներուն՝ համաձայն իր դաշնագրային յանձնառութեանց :

Ալժերիոյ ազգայնականները կ'ուզեն եւ չմնալ արեւմուտքի եւ արեւելքի իրենց դրացիներէն, որոնց բարոյական, որոշ չափով նաեւ ռազմական օժանդակութիւնը կը վայելեն :

Նոյն օժանդակութիւնը ցոյց կուտան նաեւ արաբական միւս երկիրները, որոնք գարթօնքի շրջան մը կ'ապրին համաշխարհային երկրորդ պատերազմէն ի վեր : Ալժերիացիք նախանձով կը դիտեն իրենց ցեղակիցներուն ազատագրութիւնը եւ արժանապատուութեան զգացումէն տարուած կ'ուզեն զէնքի ուժով ձեռք բերել իրենց անկախութիւնը :

Արաբական Լիկան եւ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան արաբ ներկայացուցիչները — որոնց միացած են նաեւ Ասիոյ խմբակ պետութեանց պատուիրակները — ամէն առթիւ կ'արծարծեն ալժերիական հարցը, դիմումներ կը կատարեն միջազգային ատեաններուն ու բանաձեւեր կը քուէարկեն :

Մերձաւոր Արեւելքի երկիրներուն մէջ ազգայնական տարրերը քարոզութիւններ կ'ընեն Ֆրանսայի դէմ, զայն նկատելով արաբական դատի մեծագոյն թշնամին :

Անցեալ տարուան Սուէզի արշաւանքին գլխաւոր դրդապատճառը նոյնպէս Ալժերիան էր : Եգիպտոսը պատժելով, Ֆրանսա կ'ուզէր չէզոքացնել Ազգային Ազատագրութեան Ճակատին մեծագոյն աջակիցը : Իրեն հետ էր Անգլիա : Սակայն ճակատագրական այդ օրերուն, Ատլանտեան Ուխտի իրենց մեծ դաշնակիցը [illegible] քսեց հակառակորդ ճակատի հացին : Այդ ընհատր չուզեց Բուլկանինին տալ արաբական աշխարհի պաշտպանին ըլլալու մենաշնորհը :

Այս անգամ Անգլիա ճարպիկ դարձուածքով մը միացաւ Ամերիկայի՝ զէնք զրկելու համար Թունուզի նորաղատ կառավարութեան : Անգլիա այս ձեւով կը ձգտէր վերահաստատել Արաբներուն աչքեւ իր կորսնցուցած վարկը : Մէջտեղը կը մնար միայն Ֆրանսա՝ իբրեւ «թշնամի» արաբական դատին :

Քրիսթիան Փինոյի բացատրութիւնները Տըլըսի, Ֆելիքս Կայեարի գլուխ գլխի տեսակցութիւնը Մաքմիլընի հետ կոչուած են փարատելու թիւրիմացութիւնները եւ վերահաստատելու երեք մեծ դաշնակիցներու սերտ գործակցութիւնը միջազգային կարեւոր խնդիրներու մէջ :

ՄԱԿի առջեւ Ալժերիոյ խնդրին քննութենէն առաջ անհրաժեշտ էին այս սրտաբաց խօսակցութիւնները :

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՆԵՐՔԻՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ՀՈԳԵՐ

ԱՆԳԼԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՓԱՐԻԶ ԵԿԱՒ

—o—

ԱՐՄԱՏԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՎԵՐՋԱՑԱՒ

Անգլիոյ Վարչապետը՝ Մաքմիլըն, երէկ, երկուշաբթի կէսօրէ առաջ Փարիզ եկաւ : Անգլիոյ Արտաքին նախարար Լոյտ եւրոպական հարցերու պատասխանատու նախարար Մէնտլինկ կ'ընկերանային Վարչապետին :

Բրիտանական պատուիրակութիւնը ուղղակի գնաց Մաթինեոն, ուր խորհրդակցութիւնները սկսան վարչապետ Կայեարի հետ : Ֆրանսայի կողմէ ժողովին կը մասնակցէին Արտաքին հարցերու պատասխանատու Մորիս Ֆոր եւ Քէ տ'Օրսէի ընդհանուր քարտուղար՝ Լուի Ժոքս :

Երկու պատուիրակութեանց անդամները միասին ճաշելէ ետք, խորհրդակցութիւնները շարունակեցին :

Խօսակցութեան մեծ մասը յատկացուած է Թունուզի յանձնուած անգլեւամերիկեան զէնքերու հարցին : Երկու երկիրներու ներկայացուցիչները յստակօրէն պարզեցին իրենց տեսակէտները :

Ատլանտեան Ուխտին անդամ երկիրներու կառավարութեանց ներկայացուցիչներուն ժողովը կը կազմէր օրակարգին երկրորդ նիւթը : Ինչպէս ծանօթ է, այս ժողովը տեղի պիտի ունենայ Փարիզի մէջ, որուն պիտի մասնակցի նաեւ Նախագահ Այզընհաուըր : Ատլանտեան ճակատին վրայ անգլեւամերիկեան գեկավարութեան մը մասին շրջան ընող զրոյցները պաշտօնապէս հերքուեցան Անգլիոյ Արտաքին նախարար Լոյտի կողմէ : Ալժերիոյ հարցն ալ քննուեցաւ երկու երկիրներու պետական դէմքերուն կողմէ :

ԱՐՄԱՏԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՎԵՐՋԱՑԱՒ

Ինչպէս գրած էինք, Սթրազպուրկի մէջ տեղի ունեցաւ Արմատականներու տարեկան համագումարը, որուն մեծ կարեւորութիւն կ'ընծայուէր քաղաքական թէ ընկերային շրջանակներու կողմէ : Համագումարը պաշտօնապէս վերջացաւ կիրակի առաւօտ, կուսակցութեան յայտարարութեան ընթերցումով :

Փոթորկոտ համագումար մը՝ որուն կեդրոնական երկու դէմքերը, Վարչապետ Կայեար եւ նախկին Վարչապետ Մենտէս – Ֆրանս տաք բանավէճի մը բռնուեցան : Ժողովականները բաժնուած էին թեր ու դէմ :

Աւելի քան մէկ ժամ տեւող իր ճառին մէջ, Մենտես – Ֆրանս ծանրօրէն հարուածեց Կայեարն ու իր կառավարութեան որդեգրած քաղաքականութիւնը. — Կարելի չէ ամէն ինչ մէկ անգամէն ընել, բաւ. նախկին Վարչապետը. անկարելի է շարունակել Ալժերիոյ պատերազմը՝ եւ միաժամանակ տնտեսական յառաջդի–

(Շարունակութիւնը կարդալ ·Դ· էջ)

(Շարունակութիւնը կարդալ ·Դ· էջ)

Օրը Օրին

ՄԷԿԸ Ա՛Ռ, ՄԻՒՍԻՆ ԶԱՐԿ

—o—

Թուրքիոյ խորհրդարանական ընտրութեանց արդիւնքէն դատելով, օրուան Դեմոկրատ կուսակցութեան աստղը շիջելու վրայ է :

Հոկտ. 27ին քուէարկութիւն մը տեղի ունեցաւ : Դեմոկրատները շահեցան 432 աթոռ Ազգային ժողովին մէջ, Հալքճիները 170 աթոռ, իսկ մնացեալ երկու ընդդիմադիր կուսակցութիւնները, միասին, ութ աթոռ :

Ազգային ժողովը ունի, ընդամէնը, 610 երեսփոխան : Երեք տարի առաջ ունէր 541 երեսփոխան : Այդ տարին, Դեմոկրատները ջարդուփշուր ըրին Իսմէթ Ինէօնիւի ճակատը եւ տուին 503 երեսփոխան : Նախկին փաշային կուսակցութիւնը, ծայրը ծայրին, շահած էր միայն 31 աթոռ :

Բայց, թուաբանական պարզ հաշիւ մը ցոյց կուտայ թէ իրականին մէջ, յաղթողը եղած է Հալք կուսակցութիւնը, իսկ պարտուողը՝ Դեմոկրատներու ճակատը :

Արդարեւ, երբ կուսակցութիւն մը իր երեսփոխաններուն թիւը, յանկարծ, 31էն 170ի կը բարձրացնէ, կը նշանակէ որ ստուար բազմութիւն մը ունի իր թիկունքին : Ու երբ կուսակցութիւն մը, փոխանակ 579 աթոռ շահելու, կը շահի միայն 432 աթոռ, կը նշանակէ որ նահանջի ճամբան բռնած է :

Ի՞նչ եզրակացութեան կարելի է յանգիլ [illegible] հաշիւներէն առաջնորդուելով :

Միայն մէկ եզրակացութիւն տրամաբանական պիտի ըլլար :

Թուրք ժողովուրդը արդէն սկսած է ձանձրանալ Դեմոկրատներու քարոզներէն ու կարօտով կը փնտռէ հին օրերը :

Այդ կարօտը կը բացատրուի տնտեսական պատճառներով : Թուրքիա տնտեսական ծանրակշիռ տագնապի մը մատնուած է, հակառակ անոր որ վերջին տասնամեակին, քրիստոնեայ Ամերիկացիին գրպանէն 1500 միլիոն տոլար ելաւ ու մտաւ իր գրպանը :

[illegible] ուրիշ պատճառ մը — Թուրքիոյ վարիչները *աճել* մը ունին իրենց հայրենիքին ճարտարարուեստը յառաջ տանելու համար : Կ'ուզեն որ Թուրքիան մէկ օրէն միւսը, դառնայ Պելժիոյ կամ Շուէտի նման ճարտարարուեստական երկիր մը :

Այս կէտին մէջ, Մենտէրէսները ու Պայարները շատ կը նմանին Լաֆոնթէնի գորտին, որ կ'ուզէր, օրը իրիկուն չեղած, սագի մը չափ մեծնալ... ու պայթիլ :

Ո՞վ է այս չարիքներուն պատճառը,

— Դեմոկրատ կուսակցութիւնը, կը պատասխանեն Մէհմէտները ու Օսման – ները :

Բայց, չեմ կարծեր որ միմիայն տնտեսական տագնապս է որ փնտռել կուտայ, երէկուան երանելի օրերը :

Թուրք ժողովուրդը դժգոհ է իր այսօրուան վարիչներէն, որովհետեւ անոնք պէտք եղածին չափ «հայրենասէր» չեն : Ճշմարիտ թուրք «հայրենասէր» մը պէտք է կեղեքէ — եւ անհրաժեշտ պարագային կոտորէ — փոքրամասնութիւնները :

Ճէլալ Պայար ու Մենտէրէս, ձեռք ձեռքի հերոսութիւն մը ըրին 1955ի սեպտեմբեր վեցի գիշերը : Այո՛, բայց չի բաւեր : Աւելի վճռական քայլեր պէտք է առնել :

Ո՞վ կրնայ առնել այդ քայլը — Իսմէթ կոչուած գազանը :

Այդ հաւատքն էր որ 170 երեսփոխան տուաւ Հալքին : Թէեւ Դեմոկրատն ալ, մեր համոզումով, Հալքճիներէն վար չի մնար : Մէկը առ միւսին զարկ :

ԵՒՐՈՊԱՑԻ

Խ. ՄԻՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՄԵՐԻԿԱ

ԹԻԹՕ – ԽՐՈՒՇՉԵՒ ՆՈՐ ԽԶՈՒՄԻՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ինչպէս գրած էինք, նոր խզում մը եղաւ Եուկոսլաւիոյ եւ Խ. Միութեան յարաբերութեանց մէջ : Թիթօ Մոսկուա չգնաց եւ չստորագրեց բոլոր երկիրներու համայնավար կուսակցութեանց հասարակաց քաղաքականութեան յայտարարութիւնը :

Պելկրատի ձայնասփիւռը երկարօրէն բացատրեց երկու երկիրներու միջեւ ծագած նոր տարակարծութեան պատճառները : Եուկոսլաւիա դէմ էր Մոսկուայի որդեգրած քաղաքականութեան, նկատելով որ այդ ձեւով պաղ պատերազմը աւելի պիտի լարուէր :

Նոր խզումին գլխաւոր պատճառներէն մէկը կը նկատուի Թիթոյի ճառը : Արդարեւ, Մոսկուա երթալէ առաջ, մառեշալ Թիթօ ճառ մը գրկած էր Խրուշչեւի, յայտնելով թէ պիտի կարդար զայն՝ համայնավար կուսակցութեանց ներկայացուցիչներուն համագումարին մէջ : Խրուշչեւ այդ ճառը վերադարձուցած էր Թիթոյի, ջնջելով այն մասերը՝ որոնք չէին համապատասխաներ իր քաղաքականութեան : Այս պատճառով Թիթօ Մոսկուա չգնաց, առարկելով թէ «հիւանդ» էր :

Մառեշալ Ժուկովի շնորհազրկումն ալ իր մեծ տեղը ունի այդ խզումին մէջ :

Այս առթիւ Ա. Միկոյեան յայտարարած է, թէ Կոմուլքա եւ Մաօ Ցէ Թունկ տարբեր եղանակով աշխատելով հանդերձ, համայնավարութեան սկզբունքը կը պահեն եւ չեն ձգեր որ դէշ խօսեր բուսնին :

Միւս կողմէ կարեւորութիւն կ'ընծայուի այն յայտարարութիւններուն, որ Խրուշչեւ ըրած է ամերիկացի լրագրողի մը. — Համայնավար կուսակցութեան նոր յայտարարութիւնը, բաւ է Խրուշչեւ, խաղաղ համակեցութեան կոչ մըն է : Ժուկովի քաղաքականութիւնը իրապաշտ նկարագիր մը չունէր : Անոր բաժանումով ոչինչ կը փոխուի Սուրիոյ, Թուրքիոյ եւ Հունգարիոյ մէջ մեր վարած քաղաքականութեան մէջ :

Ուշագրաւ են Ամերիկայի մասին Խրուշչեւի կատարած յայտարարութիւնները.— Ամերիկա ամէնէն ուժեղ եւ յառաջադէմ երկիրն է : Մենք կը զինուինք՝ պատասխանելու համար յարձակումներուն : Մենք միջերկրային հրթիռներ ունինք, բայց զանոնք պիտի չգործածենք Միացեալ Նահանգներու դէմ, եթէ անոնք, կամ իրենց «արբանեակ»ները չյարձակին մեր վրայ : Մենք պատերազմ կը յայտարարենք Ամերիկայի դէմ՝ միջազգային առեւտուրի ճակատին վրայ :

Գալով Հունգարիոյ հարցին, մեր միջամտութիւնը կրնար տարբեր ձեւով ըլլալ, բայց յետադիմականները կը սպառնային հունգարացի ժողովուրդը բաժնել իր յաղթանակէն : Մեր միջամտութիւնը դաս մը եղաւ յետադիմութեան :

—o—

ԻՍՐԱՅԷԼԻ *յորդանանեան եւ սուրիական սահմանագլուխներուն վրայ նոր միջադէպեր պատահեցան : Հրեայ մը սպաննուեցաւ :*

ՖՐԱՆՍԱՅԻ *ճամբաներուն վրայ շաբաթ կիրակի օրերը բազմաթիւ արկածներ պատահեցան : 12 հոգի մեռան, վիրաւորներ ալ կան :*

ՍԻԿԻԼԻՈՅ *մէջ (Իտալիա) անձրեւները մեծ վնասներ հասցուցին :*

ՊԱՀՐԷՅՆԻ *մէջ (Պարսից Ծոց) 30 սանթիմեթր մեծութեամբ կարկուտ տեղաց, 15 հոգիի մահուան պատճառ ըլլալով :*

ԻՆՉՊԷՍ ՀԵՐԿԵՆՔ ՄԵՐ ԱՆԴԱՍՏԱՆԸ

ՄՄԲ.— Հինգշաբթի երեկոյ, Սոսիէթէ Սավանքի սրահին մէջ, Փարիզ, տեղի ունեցաւ գրական երեկոյ մը, կազմակերպուած «Անդաստան» պարբերականին կողմէ: Կը նախագահէր Շ. Նարդունի, որուն ճառը ստորեւ.—

Երեկոն, զոր կը բանամ, ազնիւ բան մը ունի իր բովանդակութեան մէջ: Դուք պիտի նշմարէք, առաջին առթիւ, որ ճիգ մը կայ թարմութիւն ղնելու, նորութիւն բերելու, ինքնատպութեամբ մը ներկայանալու, որպէս զի չըսուի թէ, մեր ժամերգութիւններուն պէս, ամէնօրեայ սաղմոսներու ունկնդրութեան պահ մը դարձաւ երեկոն:

Մեր առաջին ցանկութիւնն եղաւ չըսուեցնել ձանձրոյթի նոր երեկոյ մը, ոչ ալ ամուլ ժամանցներու երեկոյ մը: Այլ տալ երեկոյ մը, որու արձագանգը չարունակուի, որ աշխատանքի մը տպաւորութիւնը թողու, որ յիշեցնէ սերմնացանին կամքը, մախաղը եւ ափը լեցուն սերմնցուով, հոգին եւ աչքերը լեցուն երազուած հունձքի մը պատկերով, ուղիղ կանդնած ան դաստանին մէջ, որ դիրքի մը պէս էլ կը բանայ, ակօսները տող առ տող:

Ուրեմն, երեկոն, որ կը բացուի, անդաստան մըն է, ըստ կազմակերպիչնե րուն:

Արդ, ի՞նչ է որ կը կոչուի Անդաստան:

Պարբերական մը, զրականութեան եւ մտածման նուիրուած: Այս պարբերականը սեփական ձեռնարկն է մեր մէկ ընկերոջ, բանաստեղծ Բիւզանդ Թօփալեանի, որու չուրջ հաւաքուած ենք, ոչ միայն զօրացնելու համար անհատական ճիգ մը, այլ եւ հաստատելու համար թէ ամբողջովին անդիկ չէ մեր սերունդը՝ խաղալու համար կատակերգութիւն մը իրեբախոյս ուժերով, ընդհակառակն պիտի եւ ստեղծել զանգուածներ, իրարու հետ զանգելով հաւասիկներ, դնդիկներ, կաթիլներ, առաւել կամ նուազ ցոլցլուն, լոյսով բարախուն:

« Անդաստան » կ'ուզէ հաստատել թէ ժամգոյն ու տխուր օրերու մէջ եւս կարելի է տեսնել, մոայլ ու գորշ ամպերու պատրուածքէն վեր, երկնքի կապոյտ պատառիկ մը, լոյսի ծուէն մը, արեւի շող մը: Այդ հաստատումով եւս՝ կ'ուզէ ըստեղծել բարեկամութեան, հանդուրժողութեան, խաղաղասիրութեան մթնոլորտ մը, կլիմայ մը ստեղծագործութեան:

« Անդաստան » կ'աշխատի պատնէշ կանգնել նախանձի, թշնամութեան, ատելութեան մշուշին դէմ, պատ բարձրացնել բամբասանքի, պարսաւանքի, խըծբծանքի մոլախոտերուն դէմ, որոնք կը սպառնան լըրճել հայկական հոգեկան մեջասյրը: Վերջապէս «Անդաստան» կը ջանայ հեռու մնալ յաչաղանքի, բայց դանքի, կաչաղանքի տխուր հերոսներէն: «Անդաստան» ընկերային պարկեշտութեան սէրն ունի, իր աշխատանքը պիտի երբեք չծառայէ ծածկոց մը կազմելու դրականութեան խորթ հաշիւներու եւ միտքերու:

« Անդաստան » կը հաւատայ թէ, կարգապահութեան եւ մաքրագործութեան այս առաջադրութիւններէն զատ, առաքելութիւն մը եւս ունի արտաքին ճակատի վրայ:

Սխալ է կարծել թէ հայ դրականութիւնը կրնայ զարդանալ ինքն իր մէջ, — տեսակէտ մը, որ, թիւր ըմբռնումով մը, ծագում կ'առնէ տոհմիկ դրականութեան հին տեսաբաններուն մտածումներէն: Ժամանակ է վերաքննելու սակայն այդ տեսակէտները: Արտաքին աւիշը երբեք չի խթաթարեր տոհմիկ նկարագիրը՝ եթէ տաղանդ ունի արուեստագէտը կամ ստեղծագործը: Եթէ, օր մը, հայ դրականութիւնը չիմանայ թէ սերունդ մը ապրած է եւրոպական մտածման պարտէզներուն կամ արեւմտեան ճաշակի հանդիսասրահնե րուն մէջ, մեղքը մերն է անպայման: Այլ ձեւ խօսելով, — եթէ, օր մը, արեւմտեան դրականութիւնը չիմանայ թէ հայ դրագէտներ, հայ արուեստագէտներ ան գած են Եւրոպային, մեղքը մերն է անպայման:

Ահա թէ ինչո՛ւ պատուաստի տեսութիւնը կը նեանէք հրապարակ, ընդունելով որ քաղաքակրթութիւն կամ մշակոյթ կը կոչուի ինչ որ կուտան ժողովուրդները իրերաթափանցումով: Եւ վա՛յ այն ժողովուրդներուն, որոնք չեն պիտեր թափանցել, դեռ աւելին՝ անթափանց կը մընան, հաստ կեղեւով մը պատած իրենց մարմինը:

« Անդաստան»ի տղաքը, եթէ կարելի է գործածել այս բացատրութիւնը, կը փորձեն ուրեմն թափանցել ֆրանսական դրականութենէն ներս եւ թոյլ տալ որ ֆրանսական դրականութիւնը եւս թափանցէ հայ դրականութենէն ներս:

Այդ աշխատանքին կապուած է ճիգը, որ կը կատարուի ահա Ֆրանսայէն մինչեւ Արեւելք, — բարեկամութիւն մը ստեղծելով « Անդաստան »ի եւ Քահիէ տիւ Սիւտի միջեւ, ֆրանսական այս մեծ պարբերականին մէջ արձագանգներ տալով հայ արուեստին յատկանիշ աղաղակնե րէն, չարժումի ստեղծելով մեր գաղութներուն մէջ նոյն պարբերականին աչխատակիցներուն գործակցութեամբ: Միտքով ապագայ ըլլալու է մարդ, եթէ չի գիտեր գնահատել նման չարժումի մը: Այս չարժումին մասին կարելի չէ խօսիլ այսօր հանդամանօրէն, այդ աշխատանքը պիտի կատարուի, կը կատարուի արդէն մամուլի մէջ:

Ժողովուրդները կը մեծնան ոչ թէ փառաբա վատակելով ցերեկին եւ թիկնաթոռներու մէջ երկննալով երեկոյին, այլ գործելով ժամերը, երեկոներ, հանգստութիւն, հարստութիւն, եւ իրենց հոգիները տաքցնելով արուեստներու ջերմութեամբ:

Վստահ եմ թէ պիտի չմոռնաք այս երեկոն, որ կը բացուի հայկական եւ ֆրանսական ստեղծագործութեանց դիմ կընդխառնումով, Պօլէոնին համբոյրը բերելով Նարեկացիին:

×

Իրրեւ եզրակացութիւն, փակելէ առաջ այս երեկոն, բանաձեւելու համար այս տեղ արտայայտուած մտահոգութիւնները, երկու խօսք եւս.—

Գնահատելով հանդերձ ջժուարութիւնները հարթելու ամէն ճիգ, որ կը կատարուի պահպանելու համար հայ լեզուն եւ գրականութիւնը, կ'ուզէի ըսել թէ ջժուարութիւնները, որոնց կը բախի հայկական ստեղծագործական կամքը, յատուկ չեն միայն Սփիւռքին: Ափսո՛ս, յուսահատեցնելու աստիճան ծանր են այդ ջժուարութիւնները, որոնք չեն կրնար վերապրուիլ մեր քաղաքական մտածողութեան տկարութիւններուն: Կուսակցութեանց անհամաձայնութիւններէն ան կախ, քաղաքական խմբակցութեանց մըտահոգութիւններէն եւ յատկնութիւններէն զուրս, գոյութիւն ունին ջժուարութիւններ, որոնք յատուկ են, ինչպէս կ'ըսեն Գերմանները, ժէոփոլիթիք իրողութեանց:

Կարելի չէ խօսիլ նման նիւթի մը մասին, այսպէս, հրապարակային ճառերու մէջ: Կ'ուզէի, այս առթիւ, ըսել նաեւ թէ ժէոփոլիթիք այդ ջժուարութիւններուն կարգին կան վերապահութիւններ՝ հայրենիքի կարելիութեանց մասին: Հայրենիքը ամրոց կամ բերդ չէ, ամէն հաղորդակցութիւն կամ յարաբերութիւն կարելու համար արտաքին աչխարհի հետ, թշնամի համարելով արտաքին աչխարհը: Մշակոյթ չի կրնար ածիլ, ծաղկիլ, բարգաւաճիլ նման պայմաններու մէջ, ինչպէս տունկ մը չի կրնար ծառ դառնալ թաղարի մէջ:

Ուրեմն ջժուարութիւնները յատուկ չեն միայն Սփիւռքին, ու ծանր մտահոգութիւններ կը պատճառեն այդ ջժուարութիւնները, ըլլան աստնք սփիւռքի, ըլլան արտասահմանի մէջ: Բարեբախտաբար գիտութիւնը, որ կը յառաջդիմէ հսկայաքայլ, կարելիութիւններ կը ստեղծէ Սփիւռքը միացնելու հայրենիքին: Եօթը ծով ու եօթը լեռ բաժնեն իսկ մեզ հայրենիքէն, գիտութիւնը պիտի միացնէ մեզ հեռաստիւռ ձայնով ու պատկերով: Եւ այնքան առեն որ հայրենիքը աւիշ կուտայ արտասահմանի, արտասահմանը աւիշ կուտայ հայրենիքին, կ'ապրի եւ կ'աճի հայ հանճարը: Այս յոյսէն, այս երազէն զատ, հայ ժողովուրդը ունի թաքուն ուժ մը, որով կրցեր է ապրիլ այսքան տարի: Ճիգ ինչպէս քար մը կը դնես նորաորոգող բոյսի մը վրայ, բայց բոյսը կը ծռի եւ անկիւնէ մը դարձեալ կը բարձրացընէ գլուխը, հայ հանճարին թաքուն այդ ուժը, պիտի գիտնայ յաղթել այն դժուարութեանց, որոնց չի հասնիր մեր խելքը, ինչպէս յաղթեր է այն ջժուարութեանց՝ որոնց չեն դիմացեր իր զրացի հին ժողովուրդները:

Ահա այս յոյսով, կը յայտարարեմ՝ մեր եւ ձեր մաղթանքը արդար, աչխատողնե րուն վարձքը կատար:

Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

•

Կ'երեւակայէին, անշուշտ, թէ ամէն եկեղեցական պարապուած է զաղափարականէ, Հայ Եկեղեցւոյ եւ հայ ժողովուրդի չահերու դիտակցութենէն, եւ թէ բոլորին դէմ կարելի էր զործածել բոլոր բոյական եւ նիւթական սպառնալիքները, զանոնք ճկելու եւ իրենց ենթարկելու համար: Սխալ դնահատութիւն, որուն հետեւանքները պատուաբեր չեղան «կամապաչա»ներուն համար:

« Կամապաչա » ընդդիմադիրներու այս վերջին փորձն ալ, Առաջնորդ Եպիս.կոպոս մը խարբալելու, անյաջող անցնելէ յետոյ, Ղեւոնդ Սրբազան վերադարձաւ Անթիլիաս, ժամը 5ին, ընկերակցութեամբ... Եղիչէ Արքեպիսկոպոսի, որ անմիջապէս ուղղուեցաւ Դպրեվանքի Տեսչարանը, Դերենիկ Եպիսկոպոսի հետ առանձնութիւն մը ունենալու համար: Դերենիկ Սրբազանի ինքնավստահութեան առջեւ յուսահատ, Եղիչէ Արքեպիսկոպոս հանդիպում մը ունեցաւ հրաժարեալ Տեղապահին հետ, եւ փորձեց վերջին ճիգ մը ընել տալ Խազ Սրբազանին որպէս զի Միաբանական Ժողովի ընթացքին յայտնէ իր հրաժարականը: Ժամը 7ին հրաւիրուած ժողովէն քիչ առաջ, հրաժարեալ Տեղապահին ներկայացան Զարեհ, Խորէն եւ Ղեւոնդ Եպիսկոպոսները, եւ լրջութեամբ զգուշացուցին զինքը, անգամ մը եւս անոր աչքին առջեւ պարզելով աղէտալի այն կացութիւնը, որ կրնար ըստեղծուիլ հրաժարագրի յեսս կոչումով:

Կիրակի, 23 Հոկտեմբեր 1955, ժամը 7·30, բացուեցաւ Միաբանական Ընդհանուր Ժողովը, Բերիոյ Թեմին Առաջնորդ Տ. Զարեհ Եպիսկոպոսի Առենապետութեամբ, ճնշող ու ծանր մթնոլորտի մէջ: Որպէս առաջին եւ գլխաւոր օրակարգ՝ կարդացուեցաւ Խազ Արքեպիսկոպոսի հրաժարագիրը, որմէ յետոյ, Ն. Սրբ. բաղնութիւնը ոտքի ելլելով, յայտարարեց, թէ կարդացուած հրաժարագիրը, կամովին ստորագրուած եւ տրուած, վերջնական եւ անդառնալի ըլլալով՝ զայն չետս կոչել տալու ո՛չ մէկ խօսք պէտք է արտասանուի, եւ թէ ինք կ'առաջարկէ Դերենիկ Սրբազանը ընտրել, բացէ ի բաց, որպէս Տեղապահ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան: Խազ Սրբազանի առաջարկութեան դէմ դիտողութիւն եղած եւ երկրորդուած ըլլալով, որոշուեցաւ, ըստ օրինի, նոր Տեղապահի ընտրութիւնը կատարել՝ զաղտնի: Տասը վայրկեանի դադարէ յետոյ, գաղտնի քուէներու առնելու նպատակով կիլիկիոյ Կաթողիկոսութեան Տեղապահ ընտրուեցաւ Լիբանանի Թեմին Առաջնորդ ԲԱՐՁ. Տ. ԽՈՐԷՆ Ս. ԵՊԻՍԿՈՊՈՍ: Արտակարգ խոր եւ ծանր լռութեան մէջ քուէարկութեան արդիւնքը յայտարարուեցաւ Առենապետ Սրբազանին կողմէ, որուն յաջորդեցին նորընտիր Տեղապահին շնորհակալութեան արտայայտութիւնները:

Նոր էջ բացուեցաւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատմութեան համար: Երկար առեն, եւ ըստ կարգ ոնականոնականէ յետոյ՝ ՕՐԷՆՔը, զարձեալ, տիրական պիտի դառնար մեր ազգային – եկեղեցական կեանքին մէջ, վերջ դնելով հոն արմատնալ ձգտող եւ Հայց. Եկեղեցւոյ ոգիին անհամապատասխան դրութեան մը: Վանքի ներքին կեանքի յատուկ ընթացիկ կարգադրութիւններէ յետոյ՝ Միաբանները, ժողովը միաձայնութեամբ, եւ դարձեալ Խազ Արքեպիսկոպոսի առաջարկութեամբ, կ'որոշէր Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ընտրութեան թուականը, 14 ՓԵՏՐՈՒԱՐ 1956:

Խմբագրական ՀԱՍԿի

(21 եւ վերջ)

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԳԻՐՔ ՄԸ

Երկու ֆրանսացի լրագրողներ՝ Ալպէր Էքար եւ Ժաքլին Ֆրանք հրատարակած են հատոր մը՝ «Իրականութիւնը կը գիէ կ'անցնի պատրանքը» տիտղոսով: Այս հատորին մէջ, համեղ ոճով մը, զուարթ ու չէնչող ձեւով երկու լրագրողները կը նկարագրեն այն բոլոր տարօրինակութիւնները, այն բոլոր սխալները՝ ոճի, նախադասութիւններու դասաւորման եւն, որոնք կը վխտան ֆրանսական թերթերուն մէջ:

Երկար պրպտումներով անոնք ձեռք բերած են վաւերական փաստեր, թերթերու մէջէն մկրատելով սխալաչատ պրութիւններ, արտառոց խորագիրներ, եւ այդ բոլորը ֆլիշէի վերածելով զետեղած են իրենց հատորին մէջ:

Շահեկան այս հատորիմասինպատառիկ մը տալու համար, ստորեւ թարգմանաբար կուտանք քանի մը հատուածներ, որոնք իրենց տարօրինակութեամբ եւ երբեմն նոյնիսկ արտառոցութեամբ, ծիծաղի ալիք կը ստեղծեն ընթերցողին շուրջ.— (Ստորագծումները մերն է):

« Առանց բառ մը ըսելու, խնդրեց պինքը խնամող բժիշկէն, որպէսզի իր վիճակին մասին արագ բացատրութիւն մը տայ իրեն ...»:

« Աւելին հարկ չկար որպէսզի կապոյտ աչքերը լեցուէին վերատին մարած բոցով մը ...»:

« Ֆրանսան Եւրոպայի միակ երկիրն է ուր այնքան մխ կ'ուտեն որքան ուրիշ որեւէ երկիր »:

« Իրենց աչքերը անգլիական քայլերը պին նուագատեսրին վրայ սեւեռած, նուագածուները սկսան նուագել Մարսէյեզը ...»:

« Կը տեսնէք այնպիսի ընկերութիւն մը՝ ուր տեղ չունենան սուտը, կեղծիքը, պատհութիւնը, բերան ուժը եւ խարդախութիւնը: Եւատոր համար է որ ջատագովն ենք այս բոլոր արժանիքներուն ...»:

« Մենք խոստացանք օդնել ծերերուն եւ հիմա սկսած ենք մեր խոստումները կատարել, որովհետեւ դպրոցական տղոց սնունդը արդէն բաւեցուած եփ ...»:

« Զորս կողմէն անպործները կը դիմէին իրենց ամէնօրեայ աշխատանքին ...»:

« Շարանթ նահանգի ոճրագործ առեանը 15 տարուան մշտնջենական բանտարկութեան դատապարտեց Զինացի մը ...»:

« Գնդակներէն մին փչրեց չաքարեղէնի ամանը որ դրուած էր նժարին քովը: Ծանրապէս վիրաւորուած՝ դժբախտը գըլորեցաւ գետին ...»:

Այս բոլոր տարօրինակ ոճով դրուածքներէն զատ, հատորին մէջ կ'երեւան նոյնպէս այն բոլոր սխալները, որոնք ամէն օր կը սպրդին օրաթերթերուն մէջ, եւ որոնք արդիւնքը կրնան ըլլալ միայն ու միայն անուշադրութեան:

Ահաւասիկ քանի մը օրինակներ.—

« Քաղաքապետական պաշտօնեայ մը՝ Ալպէր Մարիուս Քապանին, 42 տարեկան, Մարսէյլի մէջ սպաննեց չորս զաւակներու մայր իր կինը, նախանձի հետեւանքով յառաջացած վիճաբանութեան մը ընթացքին: Ոճրագործը ինքնաբերաբար յանձնուեցաւ արդարութեան: Իրրեւ իրեն յաջորդ կը յիշուին անուններ Պ. Ըրլ Վարէնի, Գալիֆորնիոյ կառավարիչ եւ Պ. Թովմաս Տըվէյի՝ Նիւ Եորքի կառավարիչ ...»:

« Ընթացք տալով եղած բողոքի մը, ոստիկան դինուորները ձերբակալեցին եօթանասունամեայ ծերուն մը, որ կը մեղադրուէր անչափահաս աղջիկներու դէմ գործած իր անբարոյ արարքներով: Դատաւորին առջեւ ծերունին խոստովանեցաւ իր յանցանքը: Հրդեհին պատճառները տակաւին որոշապէս չեն ստուգուած ...»:

« Զօրանոց մը տեղի պիտի ունենայ Նիմբեր մէկին: Հաւաքուիլ Հոթել տէ Փոսթի առջեւ ժամը 10·30ին, դերեզմանատուն երթալու համար: Ծիծաղը յանձնարարելի է ...»:

« Զգպրդուած, Սանտրօն քաշեց իր դաշոյնը եւ ուղղակի սրտէն հարուածելով վիրաւորեց Լուիզը, որ մեռաւ տեղն ու տեղը: Մեր մարզական բաժնին մէջ կարդալ կասքոն Պէնճաֆի յօդուածը ...»:

« Լաւ սուրճը պէտք է պատրաստել եփուելէն անմիջապէս առաջ, յետոյ պէտք է չափել՝ մէկ գաւաթին մէկ գդալ: Ցետոյ պէտք է մաղ – մաղ կրակի վրայ եփել: Ջէք, բացախ եւ պղպեղ ...»:

« Ուրբաթ օր ժամը 14ին, Տրիւէի կողմերը, Ալպ լեռներուն վրայ, ինքնաշարժ մը, որ կը վարէր Ժան Ռիվիէր, 19 տարեկան, ելաւ ճամբէն եւ ինկաւ 200 մեթր խորութեամբ ձորի մը մէջ: Ժան Ռիվիէր ինկաւ ձորին յատակը, ուր գտնուեցաւ մեռած ...»:

«Իսկ ես ոչ մի ձեռնհասութիւն չունիմ, որ ես ինձ համար ինչ-որ բան ընտրեմ: Ինչ որ ինձ տան, ես կ՚առնեմ, ինչ որ ինձ տան, ես կ՚ուտեմ, ինչ որ ինձ հագցնեն, ես կը հագնիմ: Ես ոչ մի ձեռնհասութիւն չունիմ, որ ինձ համար որեւէ բան ընտրեմ: Ես ոչ մի կամք չունիմ, ոչ մի ցանկութիւն, ոչ մի ձգտում, ոչ մի ուզում, ոչ մի ախորժակ, ոչ մի սէր, ոչ մի ատելութիւն, ոչ մի ընդդիմութիւն, ոչ մի բողոք, ոչ մի զայրոյթ, ոչ մի վրէժ, ոչ մի ոգեւորութիւն, ոչ մի հաւատ, ոչ մի կասկած, ոչ մի յոյս, ոչ մի վախ, ոչ մի ուրախութիւն, ոչ մի տխրութիւն, ոչ մի զգացմունք, ոչ մի ապրում, ոչ մի մեռնում, ոչ մի ոչինչ, ոչ մի ամէն ինչ, ոչ մի ես, ոչ մի դու, ոչ մի նա, ոչ մի մենք, ոչ մի դուք, ոչ մի նրանք, ոչ մի ոչ ոք, ոչ մի ոչինչ, ոչ մի ոչ մի բան, ոչ մի ոչ մի բան, ոչ մի ոչ մի բան

մութեան քաղաքականութիւն մը վարել: Թունուզ եւ Մարոք առաջարկ մը ըրին, որ լրջօրէն պէտք էր քննել: Այս առաջարկին դէմ եթէ խուլ մնաք՝ Ալժերիոյ հարցը պիտի միջազգայնանայ: Մարոք եւ Թունուզ Ֆրանսայի մօտ երկիրներ են ու պատրաստ՝ օգնելու. այս աջակցութիւնը մերժելով, Ալժերիոյ հարցը պիտի յանձնուի ՄԱԿի 70 – 80 ազգերու քննութեան:

Մենտէս – Ֆրանսի խօսքը կը վերջանայ. ժողովականներուն կէսը կը ծափահարէ, միւս կէսը՝ հայհոյչներ կ'արձակէ, մինչ անդին Փուժատի ներկայացուցիչի մը եւ մենտեսեան խմբակի մը միջեւ կռիւ կը ծագի... Տալատիէ, որ նախագահ ընտրուած է, կը սպառնայ սրահը պարպել տալ: Վերջապէս սրահը կը խաղաղի եւ խօսք կ'առնէ Վարչապետ Կայեառ, որուն ճառը յաճախ կ'ընդհատուի ծափահարութիւններով կամ հայհոյչներով. «իրականութիւնը ըսէք, ըսէք» կը պոռան ընդդիմադիրները: Վարչապետը, առանց ինքզինքը կորսնցնելու կը շարունակէ իր խօսքը.— Ֆրանսայի ապագան կախում ունի Ալժերիայէն: Օրական մէկ միլիառ ֆրանք կը ծախսուի այդ պատերազմին համար: Չենք կրնար հրաժարիլ անկէ:

Գալով Թունուզի եւ Մարոքի միջամտութեան առաջարկին, Կայեառ կ'ըսէ. — Ժամանակ չունեցայ այդ հարցին շուրջ նախարարաց Խորհուրդին հետ խորհրդակցելու. սակայն կարգ մը հարցումներ կ'ընեմ. Մարոքի եւ Թունուզի երկու պետերը կ'անդրադառնայի՞ն թէ ֆրանսական կառավարութիւն մը գոյութիւն ունի. արդարեւ, անոնց առաջարկը իմացայ թերթերէն: Այդ առաջարկին մէջ կը խօսուի ալժերիացի ժողովուրդին գերիշխանութենէն: Ի՞նչ կը նշանակէ ասիկա. անկախութի՞ւնը. արդեօք, ասիկա կը նշանակէ թէ Ալժերիոյ մէջ ապրող Ֆրանսացիները օտարնե՞ր պիտի ըլլան: Յետոյ, պետական այդ երկու դէմքերը ի՞րենք գիրենք միակ անձե՞րը կը նկատեն Ազատագր. Ճակատին հետ խորհրդակցելու համար: Ծանր են այս հարցերը, եւ կը զարմանամ, որ առանց քննելու զանոնք՝ կ'առաջարկուի որ ընդունինք:

Ֆելիքս Կայեառ, այստեղ իր խօսքը կ'ուղղէ անձնապէս Մենտէս – Ֆրանսի եւ կը հարուածէ զայն, որ տարուած է քննադատութեան մարմաջէն: Դարձեալ աղմուկ կը բարձրանայ սրահին մէջ. «Հրաժարեցէ՛ք, հրաժարեցէ՛ք» կը պոռան ընդդիմադիրները:

Այս միջոցին, Մենտէս – Ֆրանս ոտքի կ'ելլէ, պատասխանելու համար Կայեառի եւ խօսքը ուղղելով անոր՝ կ'ըսէ. — Պարոն Վարչապետ, կան հարցեր, որ Ֆրանսացի մը, հայրենասէր մը չի կրնար ձգել առանց պատասխանի: Ըսիք թէ Ալժերիոյ պատերազմը օրական մէկ միլիառի ծախս ունէր: Ուրախ եմ որ ասիկա լսեցի ձեր բերնէն: Եթէ ալժերիական ձեր քաղաքականութիւնը իրապէս համապատասխանէր ազգին շահերուն՝ պատրաստ պիտի ըլլայինք վճարել անոր գինը: Բայց, այս պայմաններուն մէջ, գէթ քաջութիւնը ունեցէք իրականութիւնը ըսելու ժողովուրդին պարտադրելու համար պատերազմական տնտեսութիւն մը:

Անդրադառնալով Մարոքի եւ Թունուզի հարցին՝ չըսի թէ այդ առաջարկը պէտք է ընդունիլ առանց քննութեան. ըսի, որ հարկ էր լրջօրէն ուսումնասիրել զայն: Իսկ գալով Ալժերիոյ անկախութեան՝ «ո՛չ» ըսի, բայց երկու տարիէ ի վեր Ֆրանսայի վարած քաղաքականութիւնը այնտեղ կը տանի մեզ: Խորհրդարանին մէջ մեծամասնութիւն մը շահելու համար, կը վարէք քաղաքականութիւն մը՝ որ լաւ չէ:

Ֆելիքս Կայեառի պատասխանը կարճ էր. — Դուք ալ, պարոն Մենտէս – Ֆրանս, ձեր կառավարութեան մէջ աջակողմեաններ ունէիք: Անոնք ձեզի հետեւեցան. ինչո՞ւ չհետեւին նաեւ ինծի: Ես առաջնորդն եմ մեծամասնութեան մը՝ որ պիտի հետեւի ինծի. պիտի պաշտպանեմ այդ մեծամասնութիւնը եւ առաջնորդեմ՝ դէպի յաղթանակ:

Տալատիէ կուսակցութեան նախագահ ընտրուած է արդէն: Մենտէս – Ֆրանսի եւ Կայեառի յայտարարութիւններէն ետք, քուէարկութիւն եղաւ:

Մենտես – Ֆրանսի տեսակէտը լայն արձագանգ գտաւ համագումարին մէջ եւ 472ի դէմ 648 ձայնով՝ Արմատականները դէմ արտայայտուեցան կառավարութեան ալժերիական քաղաքականութեան:

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ

Շնորհակալութեամբ ստացանք Պ. Կարօ Ժամկոչեանէ (Օպոն) հազար ֆր.:

×

«ՅԱՌԱՋ» ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Օպոնէն Պ. Ժամկոչեան այս տարի եւս «Յառաջ» կը նուիրէ Տիկին Արաքսի Յարութիւնեանի:

ՏՕՆԱԾԱՌ
ՍԱՄՈՒԷԼ – ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ
Կիրակի, 22 Դեկտեմբեր

ԴԵԿՏԵՄԲԵՐ 15ԻՆ
« ՍԻՓԱՆ – ԿՈՄԻՏԱՍ»Ի ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ՝
SALONS DES AMBASSADEURS

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կապոյտ Խաչի Պոմոնի վարչութիւնը շնորհակալութեամբ ստացած է Պ. Յարութիւն Քէչեանէ երկու հազար ֆրանք, իր ողբացեալ կնոջ հոգեհանգստեան առթիւ: Պ. Ցարէթ Պարոնեանի կսկծալի մահուան առթիւ 1500 ֆրանք գլրայինեբու կողմէ: Նոյնպէս հազար ֆրանք Պ. ՑակոբԱմատունիէ փոխան ծաղկեպսակի:

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԼՍԱՐԱՆ

Հերթական դասախօսութիւնը այս չորեքշաբթի գիշեր, ժամը 21ին, Քաթէի սրահը: Կը խօսի՝ Օր. ԺԻԿԼԻԷԹ ԱՒԵՏԻՍԵԱՆ: Նիւթ՝ «Ակնարկ մը Հայոց Թատրոնի պատմութեան վրայ»: Կը խնդրուի ճշդապահ ըլլալ:

ՇԱՒԻԼԻ Երիտ. Եկեղեցաշէն Միութիւնը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, , որոնք օգտակար եղան իրենց հանդէսին յաջողութեան. մասնաւորապէս Շաւիլի հայ տիկիններուն իրենց պատրաստած պիւֆէին համար: Վիճակահանութենէն շահող երկու թիւերը 832 եւ 750, տակաւին չեն ստացած իրենց պարգեւները: Դիմել Պ. Ս. Պարոնեանի, Րիւ էյմէաբ Րընան, Շաւիլ:

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ՀԱՅ - ԲՈՅԺ
ԺՈՂ. ԱՄՍԱԹԵՐԹ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ
Խմբագիր՝ Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

Սեպտեմբեր – Հոկտեմբերի թիւը, 48 էջ ճոխ բովանդակութեամբ. —

Երջանկաբեր դեղերու մասին (Տոքթ. Շ. Այվազեան).— Երկու ուղեղ ունինք (Տոքթ. Լաննուա).— Նկարագիր չինել (Տոքթ. Արշակ Պօղոսեան).— Գօտի կապել (Շ. Նարդունի).— Հայաստան (Ն. Բարանսկի). — Բջջային զարմանում (Տոքթ. Լեւոն Գրիգորեան).— Դիագընութիւնը հին Հայաստանում (Ե. Մակարեան).— Ի՞նչ է հանճարը (Է. Վեռհառն).— Բորոտութիւն (Տոքթ. Գ. Սեւրոբեան).— Մազոտ կիներու եւ աղջիկներու մասին (Տոքթ. Ժաքմար).— Պնդերակութեան մասին (Տոքթ. Ա. Աչճեան). — Խաղող կերէք (Տոքթ. Յովհ. Մանուկեան).— Քանէրը փոխանցի՞կ է թէ ժառանգական (Տոքթ. Գ. Գալուստեան).— Ֆրանկախտը (Տոքթ. Պ. Միսաքեան).— Ծերութիւնը իբրեւ հիւանդութիւն (Տոքթ. Նաւասարդ).— Ծնեբեկ (Յ. Իշխանեան):

Բաժանորդագրութեան պայմանները.— Տարեկան 1000 ֆր. Ֆրանսա, 1200 ֆր. արտասահման: Դիմել Շ. Նարդունիի, «Յառաջ»ի հասցէով:

×

Մարսիլիոյ մէջ ՀԱՅ – ԲՈՅԺի բաժանորդագրուելու, ինչպէս նաեւ գնելու համար Շ. Նարդունիի հրատարակած գործերը, դիմել Ֆօթօ–Ռէքս, 2 ռիւ Պէռնար տիւ Պուա:

×

Մարսիլիոյ մէջ ՀԱՅ – ԲՈՅԺի բաժանորդները, ինչպէս ամէն տարի, այս տարի եւս սիրայօժար պիտի գանձէ Պ. Արմենակ Շահպազեան:

Imprimé sur les presses du journal HARATCH
17, Rue Bleue, 17 — PARIS (9e)

ՆԱՄԱԿ ՈՒՆԻՆ

Սարաֆեան Մկրտիչ, Մուրատեան Տիգրանուհի, Սարգիսեան Լեւոն, Նշանեան Եղուարդ, Խաչատուրեան Ազատ, Պըդտիկեանթաւուր:

Դիմել եկեղեցին, 15 Րիւ Ժան Կուժոն:

ՑՈՒՑԱՏԵՏՐ

ՓԱՐԻԶ.— Հ. Յ. Դ. Րաֆֆի խումբի ժողովը այս ուրբաթ իրիկուն սրահարանը: Ժամը 21ին: Ներկայ կ'ըլլայ Շրջ. կոմիտէի ներկայացուցիչը:

ՄԵԾ ԵՒ ՇՔԵՂ ԵՐԵԿՈՅԹ

Շաբաթ, 30 Նոյեմբեր, ժամը 21ին Կրընոպլի մէջ, Րիւ Ժէի սրահը
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ Հ. Յ. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
Կը նախագահէ ընկեր Գ. ՓԱՓԱԶԵԱՆ (Փարիզ)
Կը խօսի ընկեր Ժ. ՄԻՐԻՃԵԱՆ (Մարսէյլ)
Մասնակցութեամբ Փարիզի եւ իր շրջաններու, Կեդր. Ֆրանսայի եւ Մարսէյլի մասնաճիւղերուն:
Գեղարուեստական բացառիկ յայտագիր
Հանդիսութենէն ետք, ընկերական խրախճանք եւ պար մինչեւ 2:
Մուտք՝ 100 ֆրանք:

ՃՇԴՈՒՄ ՄԸ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Եւրոպայի Կեդր. Յանձնաժողովի դիւանը կը հաղորդէ հետեւեալը.

«Մարի Նուպար» Ուս. Տան նոր սրահներու բացման հանդիսութիւնը, Նոյեմբեր 9, երեկոյեան ժամը վեցին, կազմակերպուած էր Համալսարանական Ոստանի ընդհ. տնօրէնութեան կողմէ, որուն «Փրօթօքօլ»ը հրաւիրած էր միայն բարերար Պօղոս Նուպարի ընտանիքը, Հ. Բ. Ը. Միութեան Եւրոպայի եւ Փարիզի վարիչները ինչպէս եւ Հայ Տան Ուսանողներու վարչութիւնը եւ իր ուրոյն ֆրանսացի հիւրերը:

Այս պատճառաւ, Հ. Բ. Ը. Միութեան կողմէ ժամը 21ին սարքուած ընդունելութեան միայն կարելի եղաւ հրաւիրել փարիզահայ զանազան միութիւններու ներկայացուցիչները:

Հ. Բ. Ը. Միութեան Եւրոպայի Կեդր. Յանձնաժողովը կը ցաւի որ այս երկու անջատ ընդունելութիւններու յաջորդութիւնը ակամայ շփոթութիւն պատճառած է ոմանց մտքին մէջ:

Յատենի երկրորդ ընդունելութեան որ տեղի կ'ունենար ժամը 21ին, հրաւիրեալները հիւրասիրուեցան Տէր եւ Տիկին Քամբէնքիի, Տօքթ. եւ Տիկին Վահէ Անդրանիկեանի, ու Տէր եւ Տիկին Եդուարդ Խտրեանի կողմէ: Մինչեւ ժամը 23 տիրեց յայտնաբար հաճելի մթնոլորտ մը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Լիոնի Եկեղեցասէր Երիտ. Միութիւնը, Լիոնի եկեղեցւոյ շինութեան ի նպաստ պարահանդէս մը կազմակերպած է, Դեկտեմբեր մէկին, ժամը 16էն մինչեւ կէս գիշեր, Թէք տ'Օրի Շալէ տիւ Փարքի շրքեղ սրահներուն մէջ: Այժմէն իսկ բոլոր հայ գեղարուեստասէրները եւ բարեսէրները կը հրաւիրուին ապահովել իրենց սեղանները:

× Կը խնդրուի Լիոնի եւ շրջաններու բոլոր ազգային կազմակերպութիւններէն այս թուականը նկատի ունենալ:

ԿԸ ՓՆՏՌՈՒԻՆ

Պարոն Հայկ Արապաճեան (Եազմաճեան, Զմրշկազաքցի). կը փնտռէ իր եղբայրը Գրիգոր Արապաճեան – Եազմաճեան, իրենց հօր անունն էԿարապետ, մօրը Սաթենիկ, որոնցմէ բաժնուած է տասներեք տարեկանին 1918ին: Ք. Գրիգոր Արապաճեան – Եազմաճեան 1920ին ֆրանսական զինուորներուն հետ եկած է Մարսէյլ եւ այդ թուականէն ի վեր ոչ մէկ տեղեկութիւն կայ:

×Հայաստանէն Ղայրաման Յովսէփեան կը փնտռէ իր զաւակը Անդրանիկ Յովսէփեան: Կը կարծուի որ Մարսէյլ կը գտնուի, իր եղբայրներուն անուններն են Պետրոս, Ճան պէկ, Կարուչ եւ Թեւոս Յովսէփեան:

Այս փնտռուող հետեւեալ անձերու հասցէները գիտցողներէն կը խնդրուի տեղեկացնել Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ դիւանատունը, 15 Րիւ Ժան Կուժոն, Փարիզ (8):

ՍՏԻՊՈՂԱԿԱՆ

Կը փնտռուի երիտասարդ աղջիկ մը (տաքթիլօ): Ներկայանալ «Յառաջ»ի վարչութեան:

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

1958Ի "ԳՈՅԱՄԱՐՏ" ՕՐԱՑՈՅՑ-ԱԼՊՈՄԸ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Յ. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ՄԱՐՍԷՅԼԻ ՇՐՋԱՆԻ

ԸՆՏԻՐ ԹՈՒՂԹՈՎ 14 ՄԵԾԱԴԻՐ ԷՋԵՐ

Շքեղ նկարներ, մեծ մասը անտիպ: Գրական եւ պատմական նիւթերով ճոխ բովանդակութիւն

— ԳԵՂԱԶԱՐԴ ԵՒ ԳՈՒՆԱՒՈՐ ԿՈՂՔ —

Բացառիկ խնամքով եւ ճաշակով պատրաստուած այս օրացոյց–ալպոմը պիտի կազմէ զարդը՝ ամէն հայ տան:

Այժմէն ապահովեցէք ձեր օրինակը

Փարիզի համար դիմել՝ LIBRAIRIE H. SAMUELIAN, 51, Rue Monsieur-le-Prince, PARIS - 6e

BAINS DE VAPEUR
4 bis, Rue de la Pierre-Levée — Paris - 11e
OBE. 12-51
MÉTRO : RÉPUBLIQUE, OBERKAMPF ET PARMENTIER

ԵՐԵՔ ՍՐԱՀ ՇՈԳԻԻ ԼՈԳԱՆՔԻ
(SUDATION ET FUMIGATION)

Մասաժ, Օքսիժենօթերափի, ձեռքերու եւ ոտքերու խնամք (մանիւքիւր – փետիւքիւր) քուաֆիւր, սուէն տը պօթէ, փիսին:

BAR - RESTAURANT

Բաց օրեր.—

ԿԻՆԵՐՈՒՆ
Ուրբաթ ժամը 11էն 23
Երկուշաբթի ժամը 11էն 23
Չորեքշաբթի ժամը 11էն 23

ԱՅՐԵՐՈՒՆ
Հինգշաբթի ժամը 17էն 23
Շաբաթ ժամը 9էն 23
Կիրակի ժամը 8էն12

ՀԱՅԵՐԷՆ ԿԸ ԽՕՍԻՆՔ

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925 Tél. : PRO. 86-60

R. C. Seine 57 A 2731 C. C. P. PARIS 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամս. 1600

Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք : Հատը 12 ֆր.

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 27 ՆՈՅԵՄԲԵՐ

MERCREDI 27 NOVEMBRE 1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8053 | 33e ANNEE | Fondateur : SCHAVARCH MISSAKIAN | ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3854

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

"...ԵՒ ՅԵՐԿԻՐ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ"

Քրիստոնեայ եկեղեցիները դարերէ ի վեր ամէն լեզուով կ'երգեն «Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն» :

Պոլշեւիկեան կրօնքի հաւատացեալներն ալ ահա՛ տարիներէ ի վեր խաղաղութիւն կը հոլովեն, հպատակելով Մոսկուայէն տրուած հերթական հրահանգին : Դեռ չեն մոռցուած «Սթօքհոլմի կոչը» եւ Փիքասոյի խաղաղութեան ուխտաբեր աղաւնին :

Հոկտեմբերեան յեղափոխութեան քառասնամեակը նոր առիթ մը ընծայեց Կրեմլինի վարիչներուն անգամ մը եւս շահագործելու սա՛ խե՛ղճ «խաղաղութիւն»ը, որուն կարօտով կը տոչորի ամբողջ մարդկութիւնը :

Պոլշեւիկեան քարոզութեան համար աւելի լաւ, դիւրին ու շահաբեր «լօզունգ» կարելի չէ երեւակայել :

Վերջերս Մոսկուայի մէջ խորհրդաժողով գումարեցին «Արեւելեան խմբակցութեան» պատկանող տասներկու համայնավար կուսակցութեանց ներկայացուցիչները, որոնք հրատարակեցին միացեալ Յայտարարութիւն մը : Եուկոսլաւիոյ ներկայացուցիչն է միայն, որ մերժեց ստորագրել զայն : Միւս համայնավար կուսակցութիւնները կը հրաւիրուին ճշդել իրենց դիրքը յայտարարութեան մէջ յայտնուած մտքերուն մասին :

Երկարօրէն վերլուծելէ վերջ միջազգային կացութիւնը, յայտարարութիւնը կը շեշտէ թէ ներկայիս կ'ապրինք փոխանցման շրջան մը, որ դրամատիրութենէն կը տանի դէպի ընկերվարութիւն (այսինքն համայնավարութիւն), որուն դրօշին տակ համախմբուած են աւելի քան 950 միլիոն մարդիկ ...

« Ընկերվարութիւնն ու ազգային ազատագրութեան շարժումները մեծապէս փութացուցած են աշխարհակալութեան եւ գաղթատիրութեան քայքայումը : Շնորհիւ ընկերվարական երկիրներու աջակցութեան՝ այն երկիրները որ կը պայքարին իրենց գերիշխանութեան եւ տնտեսական անկախութեան համար, դիւրաւ ձեռք պիտի բերեն իրենց ազգային ազատութիւնն ու ընկերային յառաջդիմութիւնը » :

Ո՞վ կը հաւատայ այս գեղեցիկ խօսքերուն, երբ արդար աշխարհ գիտէ թէ ի՛նչ ամրակուռ շղթաներով «կապկապուած» են արդարեւ կոչուած քաղաքակիրթ երկիրները, որոնց ազատագրական շարժումները կարմիր բանակի հրասայլերով ու թնդանօթներով միայն կ'ողջունուին : Վկա՛յ Պերլինի, Փոզնանի եւ Պուտափեշթի ըմբոստութիւնները, առանց մոռնալու մեր «Փետրուար 18»ը :

Խօսելով դրամատիրական երկիրներու աշխատաւորներու մասին, յայտարարութիւնը տաժանելի կը գտնէ անոնց կացութիւնը ... ու «ընկերվարութեան» մէջ միայն կը տեսնէ անոնց փրկութիւնը :

« Բոլոր երկիրներու աշխատաւորներու կենսական շահը կը պահանջէ թիկունք կանգնիլ խորհրդային մեծ միութեան, եւ բոլոր ընկերվարական երկիրներուն որոնց քաղաքականութիւնը կը ձգտի ապահովելու խաղաղութիւնը ամբողջ աշխարհի մէջ եւ որոնք խաղաղութեան եւ ընկերային յառաջդիմութեան ամրոցն են » :

Յայտարարութիւնը յետոյ կը շեշտէ թէ ընկերվարական երկիրները իրենց փոխյարաբերութիւնները կը հիմնեն «կատարեալ հաւասարութեան, հողային ամբողջութեան պահպանման, քաղաքական անկախութեան եւ գերիշխանութեան, ներքին գործերուն միջամուխ չըլլալու եւ եղբայրական իրերօգնութեան սկզբունքներուն վրայ» : Սակայն կը յանձնարարէ « բուռն պայքար մղել քաղքենի ազգայնականութեան եւ ազգայնամոլութեան դէմ », որոնց հետքերը չեն կորսուած բոլորովին ... :

Աշխարհակալութեան եւ զինուորապաշտութեան դէմ ծանօթ յանկերգները կրկնելէ վերջ, Յայտարարութիւնը կը դատապարտէ «Այզընհաուըր — Տըլըսի վարդապետութիւն»ը եւ կ'ըսէ թէ Սուրիոյ, Եգիպտոսի եւ միւս արաբ երկիրներու դէմ կատարուած գրգռութեանց նպատակն է խորտակել զանոնք եւ կցկցել արաբական պետութիւնները՝ ազատութենէ եւ անկախութենէ զրկելու համար զանոնք :

« Կամ պատերազմ, կամ խաղաղ համակեցութիւն : Ա՛յս է համաշխարհային քաղաքականութեան կենսական հարցը : Խաղաղութեան ուժերը ա՛յնքան զօրաւոր են ներկայիս, որ փաստօրէն կարելի է արգիլել պատերազմը » : Փաստ՝ Եգիպտոսն ու Հունգարիան :

Յայտարարութեան վերջին մասը անգամ մը եւս կը հաստատէ Համայնավար կուսակցութեան 20րդ համագումարին թէզերը՝ խաղաղութեան պաշտպանութեան եւ ընկերվարական խաղաղ յեղափոխութեան կարելիութեան մասին :

Ու կը հրաւիրէ դրամատիրական երկիրներու բանուոր դասակարգը, որ « ժողովրդական ճակատ » կազմելով կամ ուրիշ ձեւով ձեռք առնէ իշխանութիւնը «խաղաղ միջոցներով », առանց քաղաքային պատերազմի : Սակայն եթէ «շահագործող դասակարգերը» բռնի միջոցի դիմեն ժողովուրդին դէմ, այն ատեն ոչ-խաղաղ միջոցներով պէտք է հասնիլ «ընկերվարութեան » :

Եզրակացութեան մէջ, յայտարարութիւնը անհրաժեշտ կը նկատէ գործակցութիւնը համայնավար եւ ընկերվարական կուսակցութեանց միջեւ :

« Խաղաղութեան կոչ » մըն ալ հրատարակած են 64 համայնավար կուսակցութեանց ներկայացուցիչները, որոնք նոյնպէս խորհրդաժողով գումարած են Մոսկուայի մէջ Նոյեմբեր 16 – 19 :

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԿԱՅԵԱՌ - ՄԱՔՄԻԼԸՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

ԱՆԳԼԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՕՐ ՄԸ ԵՒՍ ՓԱՐԻԶ ՄՆԱՑ

Ինչպէս գրած էինք, Անգլիոյ Վարչապետը Բ. օր Փարիզ հասաւ, խորհրդակցելու համար Ֆելիքս Կայեարի հետ : Հակառակ անոր, որ անգլիական պատուիրակութիւնը՝ Մաքմիլընի գլխաւորութեամբ, նոյն օրը Լոնտոն պիտի վերադառնար, օր մը եւս մնաց Փարիզ. Երկուշաբթի խորհրդակցութիւնները չէին վերջացած : Երեքշաբթի առտու երկու երկիրներու ներկայացուցիչները կրկին հանդիպեցան իրարու՝ հաշտութիւնը վերստեղծելու համար :

Անգլիական դեսպանատունը Բ. օր հացկերոյթ մը տուած էր՝ երկու Վարչապետներուն համար : Ոստիկանական կարեւոր ուժեր պաշարած էին դեսպանատունը՝ առաջքն առնելու համար որեւէ հականգլիական ցոյցի : Դեսպանատան մէջ ճաշի ընթացքին խօսակցութիւնները կը շօշափէին մասնաւորաբար Ատլանտեան Ուխտը :

Համաձայն պաշտօնական աղբիւրներու երկու վարչապետներու տարակարծութեանց գլխաւոր պատճառը Թունուզի յանձնուած անգլեւամերիկեան զէնքերն են :

Դէպք մը որ կրնայ տկարացնել Ատլանտեան Ուխտը՝ ինչպէս ըսին Ֆրանսացիները :

(Շարունակութիւնը կարդալ ·Դ· էջ)

Օրը Օրին

ՄՇԱԿՈՅԹԻՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Ամէն առիթով կը շեշտուի թէ Ազգի մը յաւիտենականութեան պատճառը իր մշակոյթն է : Հայը դիմացած է դարերով որովհետեւ բողիկ ժողովուրդ մը չէր ան : Իր հին օրերու քաղաքակրթութեան եւ մշակոյթին վրայէն սահած անցած են վանտալներու արշաւանքները . ջարդ, աւեր, Լենկթիմուր, Ճինկիզխան, Համիտ եւ կամ Իթիհատ :

Տուժած ենք թիւով եւ տնտեսութեամբ, բայց կորուստէ փրկուած ենք մեր գիրով ու դպրութեամբ :

Մեր հետքը ջնջել ուզած են, թրքական Հայաստանէն վանք, եկեղեցի, դպրոց, մատենադարան մաքրած սրբած են եւ ոտարոպիկ մեզ ցրուած են եօթն աշխարհի եօթանասունը եօթը երկիրներու մէջ :

Դամոկլեան սուրը, ուծացման եւ այլասերման, կախուած է մեր գլխուն վերեւ :

Բայց մեր հաւատքը, մեր ժողովուրդին յաւիտենականութիւնը, չէ պարտուած :

Վստահ ենք որ դարձեալ պիտի յաղթենք, եւ ապրինք :

Ահա նոր բողբոջներ աւերակներուն մէջէն ծլած : Դպրոց ամենայետին գիւղին մէջ, ամբողջ գաղթաշխարհին ծովերէ ծով տարածութեան վրայ : Հարիւր հազարաւոր մանուկներ Պարսկաստանէն մինչեւ Գալիֆորնիա : Ճեմարաններ, երկրորդական վարժարաններ, դպրեվանքեր, մատենադարաններ, մամուլ, օրաթերթ թէ պարբերաթերթ – հանդէսներ, հոյակապ եկեղեցիներ, հանրային փառայեղ շէնքեր, եւ գիրքե՛ր, գիրքե՛ր ու գիրքեր :

Ահա ժողովուրդի մը ապրելու եւ տեւելու յենարանը, ահա մշակոյթի կայծեր որոնք մեզ յաւիտենական կը դարձնեն : Ահա հայ ժողովուրդին, դիմանալու գաղտնիքը : Կրնանք մեր գլուխը բարձր բռնել եւ ասպարէզ կարդալ ուրիշ 14 միլիոնոց ժողովուրդի մը, որուն 750·000 ք. քիլ. տարածութեան վրայ այնքան դպրոց եւ աշակերտութիւն չկայ թերեւս, որքան մեր միութեար եւ տասն անգամ կոտորակուած ժողովուրդին մէջ :

Պէտք է պահել այս թանկագին աւանդը, պէտք է կերակրել, սնուցանել, պարարտացնել մեր մշակոյթը պահող հողն ու հունտը : Մէկը իր մտքով, ուրիշ մը իր դրամով եւ երրորդը իր վաստակով :

Գիրք մը, թերթ մը, դպրոց մը, Մշակոյթ – Շէնքին հիմնաքարերն են :

Ամէն մէկս պէտք է քար մը աւելի դընենք այդ հիմը ամրացնելու համար :

ՆՈՃԻ

ՄԱՐՈՔԻ ԹԱԳԱՒՈՐԸ ԱՅԶԸՆՀԱՈՒԸՐԻ ՄՕՏ

Մարոքի Թագաւորը՝ Մուհամմէտ Ե. Երկուշաբթի կէսօրէ վերջ հասաւ Ուաշինկթըն : Նախագահ Այզընհաուըր անձնապէս գացած էր օդակայան՝ դիմաւորելու համար զայն : Արտաքին Նախարար Տըլըս եւ քաղաքական այլ դէմքեր նմանապէս գացած էին դիմաւորելու Թագաւորը, մինչ թնդանօթի 21 հարուածներ կ'ողջունէին անոր ժամանումը՝ Ամերիկա :

Օդակայանէն մինչեւ Սպիտակ Տուն Թագաւորն ու Նախագահը խանդավառութեամբ ողջունուեցան հասարակութեան կողմէ : Թագաւորին կ'ընկերանային Մարոքի Արտաքին եւ Պատերազմական նախարարները :

Իրիկուան՝ Նախագահ Այզընհաուըր պաշտօնական հացկերոյթ մը տուաւ՝ Սպիտակ Տան մէջ :

Կիսապաշտօնական խորհրդակցութիւնները սկսած են արդէն՝ հացկերոյթի ընթացքին : Այսօր կէսօրէ վերջ պաշտօնական երկրորդ հանդիպումը պիտի ըլլայ Թագաւորին եւ Նախագահին մէջ :

Այս հանդիպումին գլխաւոր առանցքը կը կազմեն երկու երկիրներու գործակցութիւնը եւ Մարոքի մէջ հաստատուելիք ամերիկեան պատերազմական խարիսխները :

Այնպէս կը կարծուի, թէ Մուհամմէտ Ե. պիտի համաձայնի եւ Միացեալ Նահանգներ զինուորական խարիսխ մը պիտի հաստատեն Մարոքի մէջ, շարունակելով տնտեսական օժանդակութիւնը : Պիտի օգտագործուի նաեւ Թանժէի ձայնասփիւռը՝ հակահամայնավար քարոզչութեան համար :

ՖՐԱՆՍԱՅԻ տարուան գրական առաջին մրցանակը՝ Ֆեմինա, տրուեցաւ Քրիստիան Մեկրէի՝ «Մենութեան քաղաքներ» վէպին համար :

ԼԵՀԱՍՏԱՆԻ Խորհրդարանին վեց անդամներէն բաղկացած պատուիրակութիւն մը այսօր Լոնտոն կը հասնի :

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԵՐՄԱՆԻՈՅ մէջ Խ. Միութիւն պիտի հաստատէ հեռավար (Թելեկիտէ) հրթիռներու կայան մը :

ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔ

ՀԱՄԸՐՇՈԼՏ ՅՈՐԴԱՆԱՆ ԿԵՐԹԱՅ

ՄԱԿի ընդհանուր քարտուղար Տագ Համըրշոլտ հեռագրով հաղորդեց յորդանանեան կառավարութեան, թէ Ամման պիտի երթար՝ տեղւոյն վրայ ուսումնասիրելու համար կացութիւնը :

Իսրայէլի հետ Յորդանանի ունեցած վերջին միջադէպերը ստիպած են Համըրշոլտը որ այս որոշումը տայ : Այս ուղղութեամբ ան պիտի երթայ Ամման եւ Միջին – Արեւելքի քանի մը այլ երկիրները հանդիպելէ վերջ, Դեկտեմբեր ութին պիտի վերադառնայ Նիւ Եորք :

Մինչ այս մինչ այն նոր միջադէպեր պատահեցան յորդանանեւիսրայէլեան սահմանին վրայ : Սուրիացիք ալ բազմաթիւ առիթներով մտած են Իսրայէլ եւ կրակ բացած՝ կառքերու վրայ :

Յորդանանի գլխաւոր պաշտպանը՝ Միջին Արեւելքի մէջ, կը մնայ Արաբիա : Սէուտական բանբեր մը անգամ մը եւս յայտարարեց, թէ Արաբիա պիտի պաշտպանէ Յորդանանը, երբ Իսրայէլ յարձակում գործէ անոր վրայ : Հակառակ անոր, որ տարակարծութիւններ կան արաբական պետութեանց միջեւ, Արաբիա կը յայտարարէ թէ Իսրայէլ հասարակաց թշնամի մըն է եւ անոր առջեւ բոլոր Արաբները պիտի միանան :

Իսրայէլի զինուորական բանբերը կը յայտարարէ թէ Սուրիացիք Գալիլիա մտած ու կրակ բացած են Հրեաներու վրայ : Սուրիացի զինուորներ յաջորդաբար երեք անգամ կրկնած են իրենց յարձակումները : Իսրայէլի համաձայն՝ Հրեաները զոհ չեն տուած :

× Տէր Զօրի մէջ բողոքի ցոյց մը եղած է Սուրիոյ վարած համայնավարական քաղաքականութեան դէմ : Ոստիկանութիւնը միջամտած է եւ բախում մը եղած, որուն հետեւանքով սպայ մը եւ 4 քաղաքացիներ սպաննուած են՝ Ամմանի ձայնասփիւռին համաձայն :

ՓԱՐԻԶԻ մէջ յաջորդաբար երեք անգամ Հիւս. Ափրիկէցիներ կրակ բանալով սպաննեցին չորս Ալժերիացիներ եւ վիրաւորեցին ութ ուրիշներ :

ՓՈՔՐ ԱՍԻՈՅ ՃԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՃԱՄԲԱՆԵՐԸ

(ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ՄԸ)

Հայոց, աւելի քան ուրիշ ազգերու, ծանօթ պէտք է ըլլայ Մերձաւոր Արեւելքին կարեւոր դերը պատմութեանմէջ: Եթէ անցեալին «լոյսը եկած է արեւելքէն», ներկայիս՝ միջազգային քաղաքական պայքարը կը տարուի Մերձաւոր Արեւելքին մէջ: Ու եթէ օր մը այս քաղաքական հակամարտութիւնը փոխուի եւ ստեղծուի պատերազմական դրութիւն՝ հաւանաբար ռազմական գործողութեանց մեծագոյն մասը պիտի կատարուի Մերձաւոր Արեւելքին մէջ :

Անցեալ պատերազմին կը թուէր թէ առանցքի պետութիւններու ընդհանուր ծրագիրն էր՝ Գերմանիան արեւմուտքէն, իսկ Ճափոնը արեւելքէն, հանդիպիլ Հնդկաստանի մէջ: Եւրոպայէն Հնդկաստան երթալու համար ցամաքային միակ ճամբան կ'անցնի Փոքր Ասիոյ մէջէն, այսինքն՝ Կովկասէն Միջագետք եւ Պարսկաստան, կամ Հարաւային Թուրքիայէն :

Գերմանացիք հաւանաբար պիտի ջանային մէկ կամ թերեւս երկու ճամբաներ գործածել՝ կեդրոնանալով Պարսկաստանի վրայ, ապա ուղղուելով դէպի Հնդկաստան :

Արեւելեան մտայնութեամբ ճակատագրին վերագրելով ամէն բան, կրնանք ըսել «ինչ որ պիտի ըլլայ, պիտի ըլլայ»: Սակայն, պետութիւնները ընդհանրապէս այդ սկզբունքով չեն շարժիր: Եթէ դէպքերը տարբեր դասաւորուէին՝ Գերմանացիք հաւանաբար պիտի նախաձեռնէին ռազմական յարձակողականի մը ուղղակի Փոքր Ասիոյ մէջ եւ պիտի նետէին իրենց մարզուած գունդերը այդ հողամասին պատերազմի դաշտերը, ուր անցեալին վճռուած է ոչ միայն ազգերու՝ այլեւ ամբողջ քաղաքակրթութիւններու ճակատագիրը :

Գաղտնիք չէ որ այսօր Միացեալ Ազգերը հսկայածաւալ պատրաստութիւններ կը տեսնեն պաշտպանողական ճակատի մը հիմերը դնելու Կովկասի սահմանէն մինչեւ Պարսից Ծոցը: Այնտեղ թերեւս տրուի ապագայ պայքարի մը վերջնական վճիռը :

×

Արդ՝ ակնարկ մը նետենք պատմութեան էջերուն եւ տեսնենք թէ ի՞նչ ռազմագիտական ազդեցութիւն ունեցած է Փոքր Ասիան իր աշխարհագրական դիրքով :

Կը տեսնենք որ Մեծն Տիգրան ջախջախիչ պարտութենէ մը ետքը Պոմպէոսի զօրքէն, ստիպուեցաւ հռովմէական պահակազօրք ընդունիլ Արտաշատի մէջ: Հռոմ Փոքր Ասիոյ մէջ իր քաղաքականութեան բազմաթիւ փոփոխութեանց ընթացքին՝ մէկ սկզբունքով աչքի կը զարնէ, այն է՝ Հայաստան պէտք է միշտ Հռոմի հսկողութեան տակ ըլլար: Նոյն քաղաքականութիւնը կը ջանային անոնք գործադրել Անդրկովկասի մէջ: Իպերիոյ (Վրաստան եւ Շիրվան) թագաւորն ալ խիստ հսկողութեան տակ էր. գինակից կը կոչուէր բայց իրողութեան մէջ ճորտի դիրքի մէջ էր: Հռոմայեցիք իրենց պահակազօրքը տեղաւորած էին Երեւանի դաշտին մէջ: Իպերիոյ մէջ Հռոմ ապահոված էր Արմաստիկայի բերդը, ուսկից կը հսկէին Կուր գետի հովիտին եւ Տաբէկի անցքին :

Հետեւեալ հարցումը անխուսափելի է. — Ինչո՞ւ այսքան հսկողութիւն այդ երկիրներու վրայ, այսինքն՝ Հայկական Բարձրաւանդակին եւ Արաքս ու Կուր գետերու հովիտներուն: Ինչո՞ւ զրկել բազմաթիւ բանակներ եւ զօրավարներ այդ գերիշխանութիւնը ապահովելու համար :

Հռոմի նպատակը անփառութիւն չէր: Հռոմ սովորութիւն չունէր զինուոր եւ դրամ վատնելու լոկ իր փառքը շատցնելու համար, ինչ որ կ'ապացուցանէ իր պաշտպանողական քաղաքականութիւնը Հռենոսի եւ Դանուբի սահմաններուն վրայ: Պատճառը զինուորական անհրաժեշտութիւնն էր: Մոմզէն ասոր բացատրութիւնը կուտայ ըսելով թէ Հայաստան իր դիրքով, զինուորական տեսակէտէ, դուռ մըն էր որ կը բացուէր երկու մեծ պետութեան հողամասերուն վրայ (Հռոմ եւ Պարթեւստան) :

×

Հռոմայեցւոց յարձակումներէն Պարթեւաց կամ Սասանեանց վրայ՝ միայն երկուքը կատարուած են այն ճամբայով որ կը տանի Հայկական Բարձրաւանդակէն դէպի Արաքս գետը եւ անկէ դէպի պարսկական Ատրպատական (Անտոնիոսի արշաւանքը 36 թուականին Քրիստոսէ առաջ, եւ Սեւերիանոս Աղեքսանդրի արշաւանքը 232ին): Բոլոր միւս հռոմէական բանակները Տիգրիսի վրայ քալած են հիւսիսային Միջագետքի ճամբով: Իսկ Պարթեւները մտած են հռոմէական սահմաններէն ներս այն ճամբաներէն, որ կը գտնուին Մալաթիոյ հարաւային կողմը :

Կարելի է գիտել (ինչպէս կը յիշեցնէ Ֆրոնդոյ) որ Տրայիանոս Եփրատի եւ Տիգրիսի վրայ մաքսատուններ հիմնեց, տիրելէ յետոյ Միջագետքի, Ասորեստանի եւ Բաբելաստանի նոր գաւառներուն :

Կ'ենթադրուի թէ նման մաքսատուն մը կը պահէր նաեւ Արաքս գետի վրայ, հաւանաբար Արտաշատի մէջ: Պարզ է որ խիստ կարեւոր էր այդ մաքսատան դիրքը: Դէպի Արեւմուտք կ'երկարէր կարեւոր ճամբան, որ կ'ընթանար Հայկական Բարձրաւանդակէն դէպի Կարին եւ Իլիճա, Եփրատին վրայ, եւ ապա դէպի Անատոլիա, ապա ալ հիւսիս՝ դէպի Տրապիզոն կամ դէպի Արեւմտեան Փոքր Ասիա :

Ըստ Տակիտոսի՝ այս ճամբով էր որ զօրավար Կորբուլոն Սեւ Ծովէն պաշար զրկեց իր բանակներուն: Այս ճամբով էր նաեւ, որ Տրայիանոս Հայաստան արշաւեց 114 թուականին :

Արտաշատէն դէպի հարաւ — արեւելք՝ այս մեծ պողոտան կ'ընթանար Արաքսի հովիտէն, ներկայ երկաթուղւոյ գծով, ինչպէս կը յիշէ Միլլէր իր գրքին մէջ: Այդ պողոտային մէկ ճիւղը կը հետեւէր, ինչպէս բնիկ, Արաքսի ընթացքին եւ կ'երթար մինչեւ Կասպից Ծով, իսկ միւս ճիւղը կ'երթար Եկբատան — Համադան, ուսկից կը սկսէր Խորասանի գիծը, որ կ'երթար Կասպից Դռնէն մինչեւ Հնդկաստան եւ Չինաստան :

Եկբատանի եւ արեւմտեան աշխարհի միջեւ միայն երկու ճանապարհներ կան, որովհետեւ Հակկարի եւ Զակրոսի լեռնաշղթաները պատնէշ կը ներկայանան Իրանեան Բարձրաւանդակին եւ Տիգրիսի հովիտին միջեւ: Այս երկու ճանապարհներէն մին կ'երթար Զակրոսի անցքէն՝ Խանաղինի մօտ, հետեւելով վերին Տիալա գետին: Իսկ միւս ճամբան կը հետեւէր Արաքս գետին՝ անցնելով Հայաստանի մէջէն :

Առաջին ճամբան Պարթեւաց հսկողութեան ներքեւ էր. Տրայիանոս եւ Սեւերոս ջանացին տիրապետել Տիգրիսի հովիտին: Իսկ երկրորդ ճամբան կը պատկանէր այն պետութեան որ կ'իշխէր Արտաշատին եւ այն բարձրաւանդակին, որ կը տարածուի դէպի Արեւմուտք: Այս պողոտային Հռոմէացիք չէին կրնար հսկել: Յորչափ Պարթեւացիք կը տիրէին Երկբատանի, անոնք, այսինքն Պարթեւները՝ կրնային առեւտուրը դարձնել Խանաղինի ճամբով եւ այսպիսով անկարելի դիրքի մէջ ձգել այն ճանապարհը որ կը տանէր դէպի Արտաշատ :

Ասոր հակառակ՝ Իպերիա կը ներկայանար հաղորդակցութեան ապահով գիծ մը Արեւելքի հետ: Ասիկա վաճառականութեան ճանապարհ մըն էր, ուր կը տիրապետէին ոչ Պարթեւը եւ ոչ Պարսիկը: Նոյնիսկ Քրիստոսէ երեք դար առաջ Անտիոքոս Ա.ի հրամանաւ Պատրոկլէս, պտտելով Կասպից Ծովու շրջանը, տեսած էր առեւտուրի կարեւոր ճամբայ մը, որ կ'երթար հիւսիսային Հնդկաստանէն մինչեւ Օքսոս գետը եւ ապա նաւակով կը շարունակուէր մինչեւ Կասպից Ծով :

Նաւով ապրանք կը տարուէր Կասպից Ծովէն մինչեւ Կուր գետը եւ ապա, Թիֆլիսի ճամբով, մինչեւ Սեւ Ծով: Այս տեղեկութիւնը կը գտնուի Ստրաբոնի «Աշխարհագրութեան» մէջ :

Պոմպէոս, որ հիմնադիրն էր այն քաղաքականութեան թէ Հայաստան պէտք է հռոմէական իշխանութեան ներքեւ ըլլար, ինքն ալ հետաքրքրուեցաւ վերոյիշեալ ճամբով: Ան կը հաւատար որ կարաւան մը կրնար եօթը օրէն երթալ մինչեւ Օքսոս գետը: Ասկէ, ինչպէս կ'ըսէ Պլինոս, նաւակով կարելի էր ապրանք գրկել մինչեւ Կասպից Ծով, յետոյ՝ Կուր գետէն վեր երթալով մինչեւ այնպիսի տեղ մը, ուսկից մինչեւ Սեւ Ծովը ըլլար միայն հինգ օրուան ճամբորդութիւն մը:

Այսպէս՝ կը տեսնենք որ Օքսոս գետի հովիտը վաճառականութեան կարեւոր գիծ մըն էր: Այդ ճամբան կը մտնէր արեւմտեան աշխարհին՝ Կասպից Ծովու եւ Անդրկովկասի միջոցաւ: Հռոմայեցիք տիրելով այն պարանոցին, որ կը գտնուի Կասպից եւ Սեւ ծովերու միջեւ, տիրացան նաեւ այս կարեւոր ճամբուն :

Ե. ԼԱԶԻՆԵԱՆ

(Մնացեալը յաջորդով)

“ԱՆԴԱՍՏԱՆ”ԻՆ ԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԽՄԲ.— Կը հրատարակենք նաեւ այն ճառը, զոր կարդաց «Անդաստան»ի երեկոյթին մէջ՝ պարբերականին խմբագիր-տնօրէնը ·—

Արտակարգ կորով ու գիտակից խանդավառութիւն կ'ենթադրէ այն աշխատանքը, որուն լծուած ըլլալու դժուարութիւնը ունինք այս պահուս: Կ'ըսեն թէ Հայը խելացի է ու ճարպիկ: Բայց ի՞նչ կը նշանակէ խելացի ու ճարպիկ ըլլալ դարու մը մէջ, ուր գիտութեան ու հոգեկան ստեղծագործութեան անկորնչելի արժէքները են միայն որ կը բնորոշեն ազգի մը կամ հաւաքականութեան մը իսկական դիմագիծը :

Մենք տեսանք թէ նիւթական ճոխութիւններէն աւելի՝ Նարեկացիի մը կամ Շնորհալիի մը հոգեկան փարոսները կը ճեղքեն դարերու մշուշը եւ կը ճառագայթեն մինչեւ այսօր, մեր սահմաններէն ալ անդին, հիացումի ու յարգանքի կանչելով արդի մտածող ու յառաջադէմ մարդկութիւնը :

Ու այսպէս, գաղութահայ մեր կեանքի ինքնապաշտպանութեան միակ պատուաւոր հարստութիւնն է մեր մշակոյթը :

Հայ մշակոյթը ապրած է ու կը շարունակէ ապրիլ, հակառակ Հայոց պատմութեան անողոք ճակատագրին: Այսօր ան կ'ապրի մեր հայրենիքին մէջ վերելքի մեծ շրջան մը, ու կը ծաղկի նոյնպէս ի սփիւռս աշխարհի, մեր ցրուած աշխատաւորներուն անշահախնդիր ճիգերով :

Այդ դժուարին ու հոյակապ ճիգը, ազնիւ բարեկամներ, պէտք ունի բոլորիս աշխատակցութեան: Հայ նորահաս երիտասարդութիւնը չի կրնար սէր ու յարգանք ցոյց տալ ցեղի մը հանդէպ, որ իրն է, որ կը ճանչնուի միայն իբրեւ ճարպիկ ցեղ: Այդ երիտասարդութիւնը պիտի մնայ Հայ, հպարտ պիտի ըլլայ իր ծնունդով, եթէ գիտակցի իր ինքնուրոյն մշակոյթին անկորնչելի ու պատուաբեր արժէքին: Ուստի պէտք է իրեն ցոյց տալ ոչ թէ ցեղին ճարպիկութիւնը, այլ ստեղծագործական ժառանգութիւնները եւ

ՅՈՒՇԵՐ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԱՍԻՆ

(1902 — 1906 Թ. Թ.)

Հազար ինը հարիւր երկու թուականին ես նոր էի ընդունուել Էջմիածնի Գէորգեան Ճեմարանը :

Ըստ սովորութեան, բոլոր նոր ընդունուածները պէտք է ենթարկուէին նաեւ ձայնափորձութեան՝ երգեցիկ խմբի մէջ ընդունուելու համար :

Պէտք է ասել, որ Ճեմարան ընդունուելը այնքան էլ հեշտ չէր այն ժամանակ. ամէն կողմից, թէ Ռուսաստանից (Կովկասից) եւ թէ արտասահմանից գալիս էին հայ պատանիներ Ճեմարանում սովորելու համար: Բնական է, որ դիմողների թիւը մի քանի անգամ աւելի էր լինում ամէն տարի, քան ընդունուածների թիւը: Ձայնաւորներին գերադասութիւն էին տալիս քննութեան ժամանակ այն հասկանալի պատճառով, որ Ճեմարանը աւարտողները կամ հոգեւորական էին դառնում եւ կամ ուսուցիչ — մանկավարժ հայկական դպրոցների համար: Երկու դէպքում էլ անհրաժեշտ էր երաժշտական կրթութիւնը, յատկապէս երգեցողութեան ուսմունքը, որ դրուած էր Ճեմարանում շատ լուրջ հիմքերի վրայ, մանաւանդ Կոմիտաս վարդապետի օրով: Բացի հայկական եւ եւրոպական ձայնանիշներով երաժշտութեան դասերից՝ Ճեմարանը ունէր քառաձայն երգեցիկ խումբ, որ ելոյթներ էր ունենում տօնական հանդէսների ժամանակ թէ Ճեմարանում եւ թէ Էջմիածնի Մայր Տաճարում :

Ահա այդ խմբի մէջ ընդունուելու համար Ճեմարանի հանդիսասրահում նշանակուած էր նորեկների ձայնափորձը: Ճեմարանի երկրորդ յարկի միջանցքում, հանդէսների դահլիճի մուտքի առաջ հաւաքուել էին մօտ երեսուն հոգի նոր ընդունուածներ, որոնց մէկ — մէկ ներս էին կանչում ձայնը փորձելու համար :

Հերթը հասաւ ինձ, ներս մտայ: Դաշնամուրի առաջ նստած էր Կոմիտաս վարդապետը, իսկ մի քիչ հեռու, ցուցակը ձեռքին, կանգնած էր վերակացու Հ. Գրիգորեանը :

— Ո՞րտեղացի ես, — հարցրեց Կոմիտաս վարդապետը :

— Զանգեզուրցի, Խնձորեսկ գիւղացի, — համարձակ պատասխանեցի ես :

— Ապրես: Երգել գիտե՞ս :

— Այո, հայր սուրբ, գիտեմ :

— Հապա մի երգիր տեսնեմ. որը լաւ գիտես՝ այն երգիր :

— « Զայն տուր, ով ծովակ»ը երգեմ :

— Երգիր, երգիր :

Ու երգեցի այնպէս, ինչպէս սովորել էի գիւղում պատահական երգողներից, հարսանիքների կամ խնջոյքների ժամանակ: Երգելուց յետոյ անհամբեր սպասում էի իմ «յաղթական» ընդունելութեանը: Բայց Կոմիտաս վարդապետը մի պահ ուղիղ հայեացքով դիտելով ինձ, մի երկար «հըմ» արեց, ապա հարցրեց .

— Գիւղում շա՞տ ես երգել :

— Այո, հայր սուրբ, — աւելի ընկճուած տրամադրութեամբ պատասխանեցի ես :

— Ձայնդ փչացրել ես, երեւի զուռնաչիների հետ ես երգել :

— Այո, հարսանիքներում :

— Եւ գինի, օղի էլ խմել, չէ՞: Ա՛յ դու զուռնաչի: Հիմա գնա, մի ուրիշ անգամ կը կանչեմ :— Ու աւելացրեց .— Երկու շաբաթ ոչ պանիր, ոչ ընկոյզ, ոչ էլ թթու կծու բաներ չուտես եւ ոչ էլ բաց օդում երգես, հասկացա՞ր, դէ գնա :

Ինչպէս ասում են՝ « խորտակուած » յոյսերով դուրս եկայ դահլիճից ու միացայ երգեցիկ խմբի մէջ չընդունուածների խմբին: Իսկ ընդունուածները մնացին դահլիճում ձայնափորձութիւնների համար :

Պէտք է ասել, որ երգեցիկ խմբի անդամ լինելը մեծ պարծանք էր Ճեմարանի ուսանողի համար, որովհետեւ երգիչը յատուկ պատիւ ու յարգանք ունէր շրջապատում եւ վայելում էր Ճեմարանի վարչութեան համակրանքը: Երգիչները գտնւում էին Կոմիտաս վարդապետի յատուկ հոգատարութեան ներքոյ :

Անցաւ մօտ մի ամիս: Երգեցիկ խմբի ամէն անդամուայ հաւաքոյթը խորը յուզում էր իմ սիրտը եւ պատանեկան մտածումներով փոթորկում իմ հոգին :

Մի օր էլ իմ դասընկերներից Սուրէն Տէր Գրիգորեանը յայտնեց ինձ, որ Կոմիտաս վարդապետը հարցրել է իմ մասին եւ պատուիրել, որ միասին գնանք իրեն մօտ :

Շաբաթ օր էր: Երեկոյեան ժամերգութիւնից յետոյ, աշնան արեւմուտի շողերը դեռ գուրգուրում էին Կոմիտաս վարդապետի պարտէզի բազմերանգ ծաղիկներն ու ծառերը: Նա նստած պարտէզում՝ իր ձեռքով շինած տաղաւարի մուտքի մօտ դրած գրասեղանի առաջ գրում էր, երբ ես եւ Սուրէնը ակնածանքով ներս մտանք պարտէզը եւ կանգ առանք մի տասը քայլ հեռաւորութեան վրայ :

— Հը՛, զուռնաչիներ, եկե՞լ էք, — նըկատելով մեզ, ասաց նա :

— Եկէք նստէք, հիմա ես կը վերջացնեմ :

Երկար չսպասեցինք: Վերջացնելով աշխատանքը, Կոմիտաս վարդապետը դարձաւ մեզ եւ հարցրեց .

Ս. ԲԱՂԻՐԵԱՆ

(1 Շար.)



ԿՈՒՅՏԻ

Ա.ԱՐ.

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ

— Ես ինչ գիտեմ, ասում է Կույտին, ես միայն գիտեմ, որ ինձ ոչ ոք չի սիրում, ոչ ոք ինձ չի հարցնում, ոչ ոք ինձ չի հարգում, ոչ ոք ինձ չի ուզում, ոչ ոք ինձ չի ընդունում, ոչ ոք ինձ չի ճանաչում, ոչ ոք ինձ չի հասկանում, ոչ ոք ինձ չի գնահատ

Ընդհանուր ձեւով ղաղտնի կը պահուին կայեանի եւ Մաքմիլլնի խօսակցութիւններր բայց, ինչպէս կ'երեւի, համաձայնութեան եզր մը դժուար թէ գտնուի :

Անցեալ Ուրբաթ Մաքմիլըն յայտարարեց արդէն թէ Ամերիկայի եւ Անգլիոյ յանձնուած զէնքերը օգտակար են արեւմտեան պետութեանց համար, մէջն րլլալով Ֆրանսան :

Ատլանտեան Ուխտին մէջ ստեղծուելիք անգլեւամերիկեան ղեկավարութեան մը հաւանականութիւնը տակաւին կը գրաղեցնէր մտքերը : Անգլիոյ Արտաքին Նախարարը մի անգամ ընդ միշտ հերքեց այդ լուրերը : Այս ուղղութեամբ կատարեալ համաձայնութիւն կը տիրէ :

Անկախ երկու վարչապետներէն, Արտաքին Նախարար Լոյտ եւ Մորիս Ֆոր խորհրդակցութիւններ պիտի ունենան Միջին Արեւելքի հրատապ հարցերուն շուրջ : Պիտի քննուի, յատկապէս անգլեւեգիպտական ու ֆրանքեւեգիպտական խորհրդակցութեանց արդիւնքը :

ՓԻՆՕ – ՖՈՆ ՊՐԵՆԹԱՆՕ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Ինչպէս գրած էինք, Նիւ Եորքի օդակայանին մէջ Արեւմտեան Գերմանիոյ Արտաքին Նախարար Ֆոն Պրենթանօ եւ Ֆրանսայի Արտաքին Նախարար Փինօ կարճատեւ խորհրդակցութիւն մը ունեցան :

Ծանօթ է որ Ֆրանսա եւ Գերմանիա նոյն մակարդակի վրայ կը գտնուին՝ Ատլանտեան Ուխտին մէջ : Երկուքն ալ զօրաւոր պետութիւններ են, սակայն հիւլէական կամ ջրածին – ռումբեր չունին, ինչպէս՝ Ամերիկա եւ Անգլիա :

Թունուզի հարցը վերջերս եկաւ ցոյց տալ, թէ Ֆրանսա միայն Գերմանիոյ բարեկամութեան վրայ հաւատք կրնայ ունենալ :

Այս տեսակէտէն երկու Արտաքին նախարարներու տեսակցութիւնը շատ կարեւոր կը նկատուի : 45 վայրկեան տեւած այս խօսակցութիւններուն ընթացքին, Ֆոն Պրենթանօ Փինոյի հաղորդած է նաեւ Տըլըսի հետ իր ունեցած տեսակցութեան արդիւնքը :

Այնպէս կը թուի, թէ Ատլանտեան Ուխտի յառաջիկայ ժողովին մէջ Գերմանիա եւ Ֆրանսա իրարու թիկունք պիտի կանգնին, ճակատելու համար անգլեւամերիկեան ազդեցութեան դէմ :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՖՐԱՆՍԱՅԻ գիտուններու պատուիրակութիւն մը, որ Փերէնի գլխաւորութեամբ Մոսկուա գացած էր, այցելած է Տուպնայի հիւլէական կեդրոնը :

ՓԵՇՏԱՅԻ մէջ անցեալ տարուան հունգարական ապստամբութեան մասնակցողներէն մէկն ալ դնդահակարուեցաւ «հակայեղափոխականներուն» օգնած րլլալու մեղադրանքով :

ՄՈՍԿՈՒԱՅԻ մէջ Խրուշչեւ ճառ մը խօսելով յայտնեց թէ խորհրդային նաւատորմիղը զինուած է արդիական ամէն տեսակի զէնքերով :

ՈՒՈՇԻՆԿԹԸՆԻ մէջ դեմոկրատ 6 երեսփոխաններ նամակ մը յանձնեցին Նախագահ Այզընհաուըրի, որպէսզի ընդունի «գագաթ»ներու ժողով մը գումարելու խորհրդային առաջարկը :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Տէր եւ Տիկին Մարտիրոս եւ Շնորհիկ Փենիրճէմէզեան կը ծանուցանեն թէ այս կիրակի առաւօտ, Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի իրենց հօր՝ Սիմոն Աղապալեանի մահուան տարելիցին եւ մօրաքրոջ Տիկին Գոհար Վտարանդիի մահուան քառասունքին առթիւ : Կը հրաւիրուին ներկայ գտնուիլ ողբացեալներուն յիշատակը յարգողները :

×

Կեսարիոյ եւ շրջակայքի հայրենակիցներու փափաքին համաձայն, 1895 Նոյեմբեր 18 եւ 1896ի Կեսարիոյ եւ շրջակայքի նահատակներուն, 1915ի Կեսարիոյ մէջ կախաղան բարձրացած 53 մարտիրոսներուն, ընդհ. տեղահանութեան շրջանի նահատակներուն, ինչպէս նաեւ բազմավաստակ Առաջնորդ Տէր Տրդատ Արք. Պալեանի եւ նահատակ Խորէն եպիսկ. Պէհրիկեանի հոգւոց յիշատակին, հոգեհանգիստ պիտի կատարուի, այս կիրակի օր, Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ մէջ : Կը հրաւիրուին Կեսարիոյ եւ շրջաններու հայրենակիցները :

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Տէր եւ Տիկին Կարապետ Ճանիկեան իրենց խորին շնորհակալութիւնները կը յայտնեն բոլոր անոնց որոնք իրենց ներկայութեամբ կամ հեռագրով խնդակցութիւնները յայտնեցին իրենց որդւոյն՝ ՍԵՊՈՒՀԻ ընդ Օր. ՀԵՂԻՆԷ ՏԷՐՏԷՐԵԱՆԻ ամուսնութեան առթիւ :

Այս ուրախ առթիւ կ'ընեն հետեւեալ նուէրները .— Փարիզի Մշակոյթի տան հինգ հազար ֆրանք, «Յառաջ»ի բաւդատաճման, «Հայ – Բոյժ»ի բարգաւաճման, եւ Սերաստիոյ «Մուրատ» Ռափայէլեան Ուսումնասէր – րացի երկու հազարական ֆրանք :

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

× Ֆ. Կ. Խաչի Պուլ. Օտտոյի մասնաճիւղը ցաւակցութիւն կը յայտնէ Տէր եւ Տիկին Ասլան Թօնպուլեանի եւ Տէր եւ Տիկին Մելիքեանի իրենց սիրելի մօր մահուան առթիւ :

× Վարչութիւնս շնորհակալութեամբ ստացած է Տէր եւ Տիկին Աշոտ Յակոբեանէ հազար ֆրանք փոխան ծաղկեպսակի, Այրի Տիկին Հոփսիմէ Թօնպուլեանի մահուան առթիւ :

Նոյնպէս վարչութիւնս ստացաւ Տէր եւ Տիկին Մարտիրոս Մատինեանէ, եւ ընկերուհի Սաթենիք Գափրիէլեանէ հինգ հարիւրական ֆր. Պ. Գարեգին Գաղանճեանի մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի :

Այս առթիւ Տէր եւ Տիկին Մարտիրոս Մատինեան կը նուիրեն հազար ֆրանք «Յառաջ»ի :

ԴԵԿՏԵՄԲԵՐ 15ԻՆ

« ՍԻՓԱՆ – ԿՈՄԻՏԱՍ»Ի
ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ՝

SALONS DES AMBASSADEURS

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԼՍԱՐԱՆ

Հերթական դասախօսութիւնը այս չորեքշաբթի գիշեր, ժամը 21ին, Քատէի սրահը : Կը խօսի՝ Օր. ԺԻՒԼԻԷԹ ԱԻԵՏԻՍԵԱՆ : Նիւթ՝ «Ակնարկ մը Հայոց Թատրոնի պատմութեան վրայ» : Կը խնդրուի ճշդապահ ըլլալ :

ՏԱՐԵԿԱՆ ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Մարսէյլի Ամասիոյ Հայր. Միութեան
Շաբաթ, 7 Դեկտ. ժամը 9էն մինչեւ լոյս,
Ալհամպրայի շքեղ սրահներուն մէջ
340 Պուլվ. Շավ,

avec Robert Gonzalez et son Orchestre

Հաճելի անակնկալներ եւ լաւագոյն մթնոլորտ :

Մուտք 500 ֆրանք :

Ապահովել սեղանները կանխաւ. Տիկին Արփինէ Շէ Վէբէր, 34 բիւ Թափի Վէր, Պ. Յար. Զէքէմեան, հեռաձայնել Փրատօ 78·61, Պ. Տիգրան Զօրիքեան. 5 Ավրնիւ Քամիլ Փէլըթան :

ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Լիոնի Եկեղեցասէր Երիտ. Միութիւնը, Լիոնի եկեղեցւոյ շինութեան ի նպաստ պարահանդէս մը կազմակերպած է, Դեկտեմբեր մէկին, ժամը 16էն մինչեւ կէս գիշեր, Թէթ տ'Օրի Շալէ տիւ Փարք ի շըքեղ սրահներուն մէջ :

ԿԸ ՓՆՏՌՈՒԻՆ

× Հայաստանէն Սիրանոյշ Պահատուրեան կը փնտռէ իր մօրեղբայրը Յարութիւն Թօփալեան, որ սակէ քանի մը տարիներ առաջ կը բնակի եղեր Բիւ տէ Վիլըկրանժ, 30 էմփաս Ս. 12, Լէ Լիլա, (Սէն) :

× Դերճանի գիւղերէն Գարաղուլաքցի Եաղուբ Պապոյեան կը փնտռէ Նազէն, Միսաք, Սեդրակ եւ Կիւլօ Պապոյեանները :

Այս փնտռուող հետեւեալ անձերու հասցէները գիտցողներէն կը խնդրուի տեղեկացնել Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ դիւանատունը, 15 Բիւ Ժան Կուժօն, Փարիզ (8) :

Imprimé sur les presses du journal HARATCH
17, Rue Bleue, 17 — PARIS (9e)

Ֆ. ԿԱՊ. ԽԱՉԻ Փարիզի մասնաճիւղին տարեկան պարահանդէսը 28 Դեկտեմբեր, Շաբաթ կէսօրէ վերջ ժամը չորսէն մինչեւ կէս գիշեր, Օթէլ Լիւթէսիայի սրահներուն մէջ :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Սեբաստիոյ Նահանգային Մուրատ Ռափայէլեան Ուսումնասիրաց Միութիւնը շնորհակալութեամբ ստացած է Պ. Օզանեանէ երկու հազար ֆրանք, փոխան ծաղկեպսակի, Բարսեղ Փիլիկեանի մահուան առթիւ :

ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԵԱՆ ՕՐԸ ԱՌՆՈՒՎԻԼԻ ՄԷՋ

Առնուվիլի Առաքինազարդ Քոյրերը կը տօնեն Անարատ Յղութեան Օրը, կիրակի, 8 Դեկտեմբերին :

Այս առթիւ տեղի կ'ունենայ հանդիսաւոր պատարագ տեղւոյս Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, առաւօտեան ժամը 11ին :

Յետ պատարագի կազմակերպուած է ճաշ մը նախկին հաւատարիմ սանուհիներուն եւ իրենց փոքրիկներուն համար :

Փարիզի եւ արուարձաններու հին աշակերտուհիներէն անոնք որ կը փափաքին ներկայ ըլլալ այս հանդիսութեան, բարեհաճին երկտողով մը իմաց տալ կամ հեռաձայնել՝ Սէօր Արմէնիէն, 73 Ավընիւ Հանրի Պարպիւս, Առնուվիլ լէ Կոնէս : Հեռաձայն 179 Առնուվիլ :

ՑՈՒՑԱՏԵՏՐ

ՓԱՐԻԶ.— Հ. Յ. Դ. Րաֆֆի խումբի ժողովը այս ուրբաթ Րեժանի սրաճարանը : Ժամը 21ին : Ներկայ կ'ըլլայ Շրջ. կոմիտէի ներկայացուցիչը :

ՎԻԷՆ.— Հ. Յ. Դ. «Անի» կոմիտէի ընկերական ընդհ. ժողովը այս Շաբաթ, ժամը 20·30ին «Համօ Օհանջանեան» սրահին մէջ : Բոլոր ընկերներու ներկայութիւնը անհրաժեշտ է :

ՊԱՆԵԷՕ – ՔԱՇԱՆ.— Հ. Յ. Դ. «Արծիւ» ենթակոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս հինգշաբթի, ժամը 20·30ին ընկեր Բաբթամի բնակարանը, 95 Ավրնիւ Արիսթիտ Պրիան, Քաշան : Ներկայ կ'ըլլայ Շրջ. կոմիտէի ներկայացուցիչը :

ՓԱՐԻԶ.— Հ. Յ. Դ. Ուսանողական Ռուբէն խումբի ժողովը այսօր Զորեքշաբթի ժամը 9ին, Բիւ Պլէօ, թիւ 17 :

Ֆ. Կ. ԽԱՉԻ Պանեէօ Քաշանի մասնաճիւղի ընդհ. ժողովը, այս շաբաթ, ժամը 17ին, ընկերուհի Տիկին Եօժէնի Խանչէրեանի բնակարանը, 9, բիւ Տէփրէ, Պանեէօ : Բոլոր ընկերուհիներու ներկայութիւնը անհրաժեշտ է :

ՇԱՒԻԼԻ Կրօն. Ընկերակցութեան բացառիկ ընդհ. ժողովը այս Շաբաթ, ժամը ճիշդ 21ին, նորակառոյց դպրոցի սրահին մէջ : Օրակարգ.— Եկեղեցւոյ օծման առթիւ վերջնական կարգադրութիւններ :

ՄԵԾ ԵՒ ՇՔԵՂ ԵՐԵԿՈՅԹ

Կիրակի, 1 Դեկտեմբեր, ժամը 3ին, Կրընոպլի մէջ, Բիւ Ժէի սրահը
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ Հ. Յ. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
Կը նախագահէ ընկեր Գ. ՓԱՓԱԶԵԱՆ (Փարիզ)
Կը խօսի ընկեր Ժ. ՄԻՐԻՃԵԱՆ (Մարսէյլ)
Մասնակցութեամբ Փարիզի եւ իր շրջաններու, Կեդր. Ֆրանսայի եւ Մարսէյլի մասնաճիւղերուն :
Գեղարուեստական բացառիկ յայտագիր
Հանդիսութենէն ետք, ընկերական խրախճանք եւ պար մինչեւ 2 :
Մուտք՝ 100 ֆրանք :

ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՐԵՐՈՒ ԵՒ ՆՈՒԱԳԻ ԲԱՑԱՌԻԿ ԵՐԵԿՈՅ
12, Դեկտեմբեր, Հինգշաբթի ժամը 8·45ին

THEATRE DE PARIS, 15, Rue Blanche, Métro : Trinité ou Blanche

ԱԼԻՍ ՊՕՅԱՃԵԱՆ
Կը պարէ ու կը ղեկավարէ իր պատրաստած երկսեռ պարախումբը
Մասնակցութեամբ նուագախումբի զոր կը ղեկավարէ
ԱՐԱ ՊԱՐԹԵՒԵԱՆ
Տոմսերու գիներն են 800, 600, 500, 400 եւ 300 ֆրանք
Ստանալու համար դիմել՝
Etabl. O. B 83, Rue d'Aboukir, Paris - Tél. CEN. 48-69 եւ ներկայացման օրը թատրոնին կիշէն :

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԾԱԳՈՅՆ ԳՐԱՏՈՒՆԸ
ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱՐԵՒԵԼԱԳԻՏԱԿԱՆ ԳՐՔԵՐ՝
— ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ —
ՁՈՒ ՄԹԵՐՔ ՀԱՅԵՐԷՆ ԳՐՔԵՐՈՒ՝ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ
ԿԸ ԳՆԷ ԵՒ ԿԸ ՓՈԽԱՆԱԿԷ ՀԱՅԵՐԷՆ ԳՐՔԵՐ

LIBRAIRIE H. SAMUELIAN
51, RUE MONSIEUR-LE-PRINCE - TÉL. : DAN. 88-65
C. C. Postal : Paris 1278-35

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
1958Ի "ԳՈՅԱՄԱՐՏ" ՕՐԱՑՈՅՑ-ԱԼՊՈՄԸ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Յ. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ՄԱՐՍԷՅԼԻ ՇՐՋԱՆԻ
ԸՆՏԻՐ ԹՈՒՂԹՈՎ 14 ՄԵԾԱԴԻՐ ԷՋԵՐ
Շքեղ նկարներ, մեծ մասը անտիպ : Գրական եւ պատմական նիւթերով նոխ բովանդակութիւն
— ԳԵՂԱԶԱՐԴ ԵՒ ԴՈՒՆԱՒՈՐ ԿՈՂՔ —
Բացառիկ խնամքով եւ ճաշակով պատրաստուած այս օրացոյց–ալպոմը պիտի կազմէ զարդը՝ ամէն Հայ տան :
ԳԻՆ 500 ՖՐԱՆՔ
Այժմէն ապահովեցէք ձեր օրինակը
Փարիզի համար դիմել՝ LIBRAIRIE H. SAMUELIAN, 51, Rue Monsieur-le-Prince, PARIS - 6e

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925 — Tél. : PRO. 86-60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. PARIS 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամս. 1600

Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք : Հատը 12 ֆր.

ՀԻՆԳՇԱԲԹԻ 28 ՆՈԵՄԲԵՐ

JEUDI 28 NOVEMBRE 1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8654 — 33e ANNEE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3855

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՖՐԱՆՍԱ ԵՒ ԱՓՐԻԿԷ

—o—

Արմատական կուսակցութեան համագումարին մէջ պարզուած տեսարանը անդամ մը եւս ակնյայտացուց թէ Ալժերիոյ խնդիրը սկսած է ջղայնացնել Ֆրանսայի հանրային կարծիքը :

Բոլորն ալ կ'ուզեն, որ օր առաջ վերջ գտնէ Ալժերիոյ պատերազմը :

Քաղաքական անատոյդ վիճակը, արտաքին երկիրներու խլրտումները, Միացեալ Ազգերու կազմակերպութեան մէջ տեսնուած եռուզեռը, Ամերիկայի և Անգլիոյ, ինչպէս նաեւ բազմաթիւ չէզոք երկիրներու Ֆրանսայի հանդէպ բռնած վերապահ դիրքը եւ ելմտական – տնտեսական աննախընթաց ապդնապը կապուած են Ալժերիոյ հարցին հետ :

Ընկերվարական Միջազգայինի համագումարը եւս անցեալ Յուլիսին իր օրով կարգին վրայ դրաւ այդ յաւուռ խնդիրը եւ որոշեց պատուիրակութիւն մը ղրկել՝ տեղւոյն վրայ քննութիւններ կատարելու համար : Այնտեղ ալ կը տիրէր չզոքի վիճակ մը եւ մանաւանդ Ֆրանսայի բարեկամ չէզոք երկիրներու պատուիրակները վերապահ կը յայտնէին, որ արագ լուծում մը արուի ալժերիական վէճին՝ երկու կողմին համար ալ պատուաբեր եւ ընդունելի պայմաններով :

Ֆրանսայի ընկերվարական կուսակցութեան մէջ եւս կարեւոր փոքրամասնութիւն մը կոչնակից է անյապաղ բանակցութիւններ կատարելու եւ ելքի մը յանգելու :

Մարոքի Թագաւորին եւ Թունուզի Հանրապետութեան Նախագահին միացեալ առաջարկը բուռն վէճի առարկայ դարձաւ Ազգային Համագումարին մէջ : Ի վերջոյ յաղթեց տեսակէտը ընդդիմադիրներու պահին Մենդէս–Ֆրանսի, որ կը պահանջէր բանակցիլ Մարոքի եւ Թունուզի հետ, ուսումնասիրելու համար այն միջոցները զորս անհրաժեշտ է ձեռք առնել, որպէսզի կարգադրուին Ֆրանսայի եւ Հիւսիսային Ափրիկէի երկիրներուն միջեւ ներկայիս գոյութիւն ունեցող բոլոր վէճերն ու անհամաձայնութիւնները : Որպէսզի նոր եւ հաստատուն հիմերու վրայ դրուի Ֆրանքեւափրիկեան գործակցութիւնը եւ Ֆրանսա վերականգնի քաղաքական, տնտեսական, ընկերային եւ միջազգային մարզերուն մէջ :

Ֆրանսայի համար կենսական նշանակութիւն ունի Ալժերիոյ պահպանումը : Իսկ Ալժերիոյ ապդայնականները կը թուի թէ մեղմացուցած են իրենց անհաչտ ընթացքը : Ներկայիս «դերիչխանութիւն» կը տիրանչին, առանց նախապայման դնելու «անկախութեան ճանաչումը», ինչ որ յարդ կը դժուարացնէր հարցին լուծումը :

Խորհրդարանին կը մնայ քուէարկել կառավարութեան պատրաստած «հիմնական – օրէնքը», որ որոշ ինքնավարութիւն կը շնորհէ Ալժերիոյ : Կ'երաշխաւորէ երկրին բոլոր բնակիչներուն իրաւունքներու հաւասարութիւնը : Գոհացում կուտայ կողմերուն : Մանաւանդ կ'ապահովէ Ալժերիացիներու բարեկամութիւնը :

Ֆրանսա պէտք ունի Հիւսիսային Ափրիկէի երկիրներու բարեկամութեան : Մարոքն ու Թունուզը ա'յնքան բան կը պարտին այս երկրին՝ իրենց վերելքին համար : Ֆրանսա նաեւ երկար տարիներէ ի վեր քաղաքակրթական մեծ աշխատանք կը տանի Ափրիկէի հասարակածային ու արեւմտեան շրջանին մէջ, ուր միլիոնաւոր Սեւամորթներ կ'ապրին :

« Ֆրանսական Միութիւն»ը բնական չարունակութիւնն է մայր – հայրենիքին : Մէկը առանց միւսին չի կրնար ապրիլ :

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԱՅԶԸՆՀԱՒՈՒԸՐ ՀԻՒԱՆԴ

ՆԱԽԱԴԱՀԸ ՈՒՂԵՂԻ ԹԵԹԵՒ ՏԱԳՆԱՊ ՄԸ ԱՆՑՈՒՑ

Ուաշինկթընէն կը հաղորդուի թէ Նախագահ Այզընհաուըր պատահարի հետեւանքով հիւանդացած է : Սպիտակ Տան պաշտօնական յայտարարութեան համաձայն՝ Նախագահին ուղեղին ձախ կողմը պտնուող փոքր երակներէն մէկը խզուած է, որուն պատճառով խօսելու դժուարութիւն ունի :

Պաշտօնական հաղորդագրութիւն մը հրապարակուեցաւ՝ առորագրուած նախագահին անձնական բժիշկին եւ Ուոլթըր Ռիտ զինուորական հիւանդանոցին բժշկապետին կողմէ : Ահազանգ այդ զեկոյցը : — Բշ· օր կէսօրէ վերջ ժամը մէկին, օդակայանին մէջ Մարոքի Թագաւորը պիտի հրաժեշտ տար Նախագահը Սպիտակ Տան վերադարձաւ՝ Տիկին Այզընհաուըրին եւ բժիշկին յայտնեց թէ պզպտոց – թենէ կը տառապէր· յետոյ, իր սենեակը անցնելով քնացաւ :

*Ժամը 14·40ին, քիչ մը հանդստանալէ վերջ Նախագահը իր գրասենեակը գնաց, սակայն չկարենալով աշխատիլ՝ վերադարձաւ սենեակը : Անմիջապէս մանդարձաւ սենեակը : Անմիջապէս մանդարձաւ սենեակը : Անմիջապէս մանդ

ՓՈՔՐ ԱՍԻՈՅ ՋԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՁԱՄԲԱՆԵՐԸ

(ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ՄԸ)

(Բ. եւ վերջին մաս)

Տասնեւիններորդ դարուն ընթացքին՝ Հնդկաստան տանող այս ցամաքային ճամբաները անցան Ռուսիոյ ձեռքը: Սկսելով 1801ին Ռուսիա իբրեն կայեց վը – րաստանի թագաւորութիւնը: Անդրկով – կասի մէջ իր սահմանները տարածեց ի կորուստ Տաճկաստանի եւ Պարսկաստա – նի՝ մինչեւ որ 1829ին տիրացաւ Փոթիին (Սեւ Ծովու վրայ):

Ռուսիոյ սահմանները կը տարածուէին դէպի արեւելք եւ դէպի հարաւ մինչեւ Արաքս եւ մինչեւ Կուր գետին բերանը: Ռուսիա 1878ին կատարելապէս տիրացաւ այդ կարեւոր պարանոցին (Կասպից եւ Սեւ Ծովերու միջեւ), երբ իբրեն միացուց Պաթումը: Վերջապէս 1907ին ռուս – անգլիական համաձայնութեան կարգա – դրութեամբ, Ռուսիոյ հսկողութեան ներ – քեւ անցաւ հիւսիսային Պարսկաստանը, ինչպէս նաեւ այն ճամբան որ կ'երթայ Թեհրանէն մինչեւ Աֆղանիստանի սահ – մանը:

Ռուսիոյ այս տարածման ընթացքին բազմաթիւ երկաթուղիներ չինուեցան: Թիֆլիսէն Ալեքսանդրապոլի չոգեկառքի դիծը չարունակուեցաւ Երեւանէն ան – դին՝ Արաքսի հովիտէն վար, հասնելով մինչեւ Ջուլֆա, Պարսկաստանի սահմա – նին վրայ:

1914ին այդ դիծը չարունակուեցաւ մինչեւ Թաւրիզ:

Մինչ այս՝ Ռուսիա կը ծրագրէր ուրիշ ճամբայ մը Հնդկաստան երթալու, այ – սինքն՝ հին կարաւանի ճամբան կասպից Ծովէն Ոքսոս գետին հովիտը, ատկէ ալ Հինդու – Քուշ լեռները եւ դէպի Քապուլ եւ Հնդկաստան:

1869ին Ռուսերը կասպից Ծովու վրայ կրասնովոտսկ քաղաքը ամրացուցին: 1881ին տիրացան Ներկայ Անդրկասպեան չրջանին: 1884ին՝ Մերվ քաղաքին:

Ռուսական տիրապետութիւնը կը տա – րածուէր մինչեւ Ոքսոս գետը: Այս ծա – ւալման հետեւանքով դարձեալ երկաթու – ղիներ չինուեցան: Անդրկասպեան դիծը սկսան չինել 1880ին ու մինչեւ Մերվ չա – րունակուեցաւ 1886ին: 1895ին ուրիշ ճիւղ մը չինուեցաւ Մերվէն Կուշքա՝ Աֆղա – նիստանի սահմաններուն վրայ:

Այս չոգեկառքի դիծը, Ռուսերուն կող – մէ չինուած, Անգլիացիք կը նկատէին իբր կարեւոր յառաջացում Հնդկաստանի վրայ: Լորտ Քըրզըն իր գրքին մէջ ման – րամասնութեամբ կը պարզէ Անգլիացւոց այս վախը:

Ցայտնի է Անգլիացւոց բռնած քաղա – քականութիւնը՝ վտարել ռուսական ազ – դեցութիւնը Հնդկաստանէն:

Անգլիա ըմբռնած էր թէ որքան դիւրին է Հնդկաստանի վրայ քալելը: Պաթումէն Պագու գացող երկաթուղիով կարելի էր չորս կամ հինգ օրէն գօրք փոխադրել Ծ – ռեսայէն Մերվ: Այս գծին վերջին կա – յանը, Կուշքա, միայն 75 մղոն է Հէրա – թէն:

Այսպէս Ռուսիա ապահոված էր Հնդ – կաստան երթալու հիւսիսային ճամբան, որ Կուշքայէն կը տանի դէպի Հէրաթ եւ ատկէ Քապուլ դէպի արեւելք, կամ Քան – տահար դէպի հարաւ – արեւելք: Հէրա – թէն Քապուլ հինգ հարիւր մղոն է, իսկ Հէրաթէն Քանտահար 389 մղոն է (ըստ Պէտէքէր):

Ուրիշ ճամբայ մը կը սկսի Զարջուիէն, ուր չոգեկառքի դիծը կ'անցնի Ոքսոսը եւ Ոքսոսէն վեր՝ նաւով մինչեւ Քիլիֆ, ատկէ Բահլի ճամբով կ'անցնի Հինդու – Քուշը եւ կ'երթայ մինչեւ Քապուլ: Քի – լիֆէն Քապուլ, Պակարայի ճամբով, 380 մղոն է: Ասիկա մօտաւորապէս վաճառա – կանութեան հին ճամբան է: Քապուլէն Փէշաւար (Փունճապի) միայն 172 մղոն է:

Անգլիոյ եւ Պարսկաստանի միջեւ կըն – քուած դաշինքը զօրացուց Անգլիոյ դիրքը Հէրաթէն դէպի արեւմուտք մինչեւ Ա – րաքս գետը, որ ըսել է մինչեւ Հայաս – տանի սահմանը: Այսպիսով՝ Անգլիա ա – պահովեց հիւսիսային Պարսկաստանէն անցնող Հնդկաստանի ճամբան:

Այս ճամբան կապուած է արեւմտեան աշխարհին հետ միայն երկու դիծերով: Մին՝ Զակրոսի անցքէն, որ սկսելով Հա – մադանէն կ'անցնի Խանաքինէն դէպի Տիգրիսի հովիտը եւ կ'երթայ մինչեւ Պաղտատի երկաթուղին: Իսկ միւս դիծը կ'անցնի Հայաստանէն եւ կ'երթայ դէպի Սեւ Ծով, այսինքն՝ դէպի Պաթում կամ Տրապիզոն, եւ կամ կ'անցնի Հայկական Բարձրաւանդակէն դէպի Անատոլու եւ Կոստանդնուպոլիս:

Անգլիա տիրելով Միջագետքին՝ կը հս – կէր Զակրոսի անցքին: Ռուսիա կը հսկէ Հայաստանին եւ հետեւաբար, ինչպէս անցեալին՝ Հռոմայեցիք, այսօր Ռու – սիա իր ձեռքին տակ ունի տնտեսապէս եւ ռազմապէս կարեւոր ճամբայ մը, որ դեր կը խաղայ մեծ պետութիւններու բռնած դիրքին եւ քաղաքականութեան վրայ Փոքր Ասիոյ մէջ:

Մօտաւոր անցեալին թէ Գերմանիա – յի՛ք, թէ Ռուսերը, եւ թէ Անգլիացիք նկա – տի առած էին այս ճամբաներուն կարեւո – րութիւնը:

Որեւէ պարագայի տակ, այսօր մեծ պետութիւնները անտարակոյս այս ճամ – բաները նկատի կ'առնեն: Թերեւս անդամ մը եւս այդ հնադարեան պողոտաները պիտի ղան արդի Բաճնոփոնի, Լուկուլ – լոսի, Պոմպէոսի զօրքերուն ծանր քայ – լերը:

Ե. ԼԱԶԻՆԵԱՆ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԴԷՄՔԵՐ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԵՒՈՒՄԵԱՆ

Արեւելահայ Թատրոնը երեք Յովհան – նէսներ է ունեցած, երեքն ալ մէկը միւ – սէն լուսաշող, մէկը միւսէն հրաշապա – տում, մէկը միւսէն չոլշողուն:

Անոնցմէ երկուքը՝ Յովհաննէս Աբէլ – եան եւ Յովհաննէս Զարիֆեան իրենց յորդահոսան տաղանդով տարիներ շա – րունակ ծառայած են հայ բեմին, արե – ւելեան թէ արեւմտեան հատուածներուն մէջ, հասցուցած են սերունդներ եւ հնչե – ցուցած են հայ մեծասքանչը Կովկասի, Ռուսաստանի, Պարսկաստանի մէջ եւ այ – լուր, մինչեւ հեռաւոր անկիւնները ըն – դարձակածաւալ Օսմանեան Կայսրու – թեան:

Երրորդը, սակայն, Յովհաննէս Սե – ւումեան հայ ժողովուրդի արեւելեան թէ արեւմտեան բեմական աշխարհին մէջ ե – զած է բացառիկ դէմք մը:

Ո՛չ միայն տաղանդաւոր մեկնաբանու – թեամբ մը իր դերասանական բարդ տիպարներու, ո՛չ մի – այն նրբին ու խորաթափանց դերասան, Յովհաննէս Սեւումեան եղած է նաեւ հայ թատերական արուեստի տեսաբան մը:

Ծնած էր Ադուլիս՝ 1882ին:

Իր թատերական գործունէութիւնը սկ – կիզբ առած է 1900ական թուականներէն, սակայն իր դիրքը արեւելահայ թատրո – նին մէջ-տիրական կը դառնայ այն օրէն, երբ դերասանը կը կարդայ Թիֆլիսի Տրամաթիքական Ընկերութեան, 1913 – 1914ի թատերաշրջանին համար: Այս մեծ խումբին մաս կը կազմէին հայ բեմի աստղերը՝ տիկիններ Ագամեան, Արաքս, Արմենեան, Արուսեակ, Օլգա Գուլազեան, Յասմիկ, Սիրանուշ, Պ. Պ. Արմենեան, Բերոյեան, Զարիֆեան, Մամիկոնեան, Մինասեան Մանուէլեան, ինչպէս նաեւ Պօ – ղոս նոր հրաւիրուած վահրամ Փափազ – եան:

Խումբին խաղացանկը ճոխ էր: Հոն կ'երեւէին ի միջի այլոց, Կէօթէի Ֆաուս – տը, Մոլիէրի Տոն – Ժուանը, Շիլլերի Մարի Սթիւարթը, Շէյքսփիրի Վենետիկի վաճառականը, Սոֆոկլէսի Անտիգոնէն, Թոլսթոյի Լուսաւորութեան պտուղները, Տիւմայի Քինը, եւայլն:

Այդ թուականներուն Թիֆլիսի Հայ Տր – ամատիքական ընկերութիւնը մեծ ու ե – անդուն աշխատանքի էր լծուած հայ ինքնուրոյն թատրոնի մը ստեղծման ի նպաստ:

Այս բանին համար, սակայն, հարկ էր որ ընկերութեան դեկավար շրջանակները նուիրուէին հայ բեմական ուժերու պատ – րաստութեան գործին, եւ այդ իսկ պատ – ճառով էր որ այդ ընկերութիւնը դերու – սոյցի պաշտօնը կը յանձնէր Յովհաննէս Սեւումեանի:

Յովհաննէս Սեւումեան ընդարձակ հմ – տութիւն ունէր այդ ասպարէզին մէջ:

Մշակուած միտք, ակէ ընդհանուր պարզացման, մեծանուն արուեստագէտը թատերական արուեստին կը մօտենար դիտական ճամբաներով, փիլիսոփայական հակումներով, միանգամ ընդ միշտ ժըխ – տելով այն վարկածը՝ թէ թատրոնը մի – այն ու միայն հաճոյքի ու ժամանցի վայր մըն է: Այդ իսկ պատճառով ալ մեր այս դարուն սկիզբը լսինք թէ Սեւումեան հայ թատերական արուեստի տեսաբանն էր:

1908 Յունուարին, Յովհաննէս Սեւում – եան, տեսնելով Արեւելահայ թատրոնի ոչ այնքան բազմալի վիճակը, հայ բե – մական դործիչներու համագումարի մը կազմութիւնը առաջարկելով, ուզած է բարելաւել հայ թատրոնի քայքայուելու մօտ եղող վիճակը:

Սակայն իր ջանքերը ապարդիւն են ան – ցած եւ կարելի չէ եղած այդ համագու – մարը կազմել, ուրեմն պիտի կարզա – դրուէին չատ մը կենսական հարցեր:

Անհանչ արուեստագէտը բեմով, մա – մուլով, եւ ուրիշ զանազան միջոցներով իր կարելին ըրած է այդ ուղղութեամբ, կարդացած է ընդարձակ դեկուցափրներ նուիրուած ընդհանրապէս թատրոնի եւ մասնաւորապէս հայ թատրոնի ուսումնա – սիրութեան, անոր սխալներուն եւ ան – հրաժեշտ բարեփոխումներուն:

Գաղափար մը տալու համար Յովհան – նէս Սեւումեանի թատերական խոր հաս – կացողութեան մասին, ստորեւ կ'արտա – դրեմ հատուած մը այն ուսումնասիրու – թենէն, զոր մեծանուն արուեստագէտը ստորագրած է 1914ին Դ. Վարուժանի եւ Ց. Ճ. Սիրունիի աշխատակցութեամբ Պոլսոյ մէջ հրատարակուող «Նաւասարդ» դրական եւ դեղարուեստական տարեգիր – քին մէջ. —

« Ապարդիւն կ'անցնէն թատրոնի վե – րածնութեան համար գործադրուած բոլոր ջանքերը, եթէ թատրոնը զուրկ է առողջ խաղացանկէ եւ դեղարուեստական ոչ – ժխէօրութենէ:

« Ես կ'ուզեմ ծանրանալ նախ՝ մեր թատրոնի ցանկալի խաղացանկի, ապա մեզ համար ցանկալի մէկ քանի նորու – թիւններու եւ խաղացանկ կազմելու սխ – եմի ու մէկ քանի ուրիշ դեխնիկական սխալներու վրայ:

« Խաղացանկի հարցը այսպէս պէտք է դնել. նախ՝ ինֆինուրոյն թատերախաղեր, որոնց առաջ դալուն ջանք պէտք չէ խնա – յել եւ ապա՝ թարգմանական թատերա – խաղեր: Ենթադրենք որ մեր տրամադրու – թեան տակ են՝ դասական կատակերդու – թիւններ, ողբերդութիւններ, րոմանթիք տրամներ, բարքի կատակերդութիւններ, առաջներ, մելոտրամներ, պատմական բիւհաներ, եւայլն:

« Գլխաւոր խնդիրն է այդ բոլորէն ըն – տրել յարմարագոյնը, առողջ թատերա – խաղեր, չենթարկուելով մօտայի թուսա – ւորիչ պղտիցութեան եւ առեղծել առողջ թատերական արուեստին կը մօտենար դիտական ճամբաներով, փիլիսոփայական հակումներով, միանգամ ընդ միշտ ժըխ – տելով այն վարկածը՝ թէ թատրոնը մի – այն ու միայն հաճոյքի ու ժամանցի վայր մըն է: Այդ իսկ պատճառով ալ մեր այս դարուն սկիզբը լսինք թէ Սեւումեան հայ թատերական արուեստի տեսաբանն էր:

1908 Յունուարին, Յովհաննէս Սեւում – եան, տեսնելով Արեւելահայ թատրոնի ոչ այնքան բազմալի վիճակը, հայ բե – մական դործիչներու համագումարի մը կազմութիւնը առաջարկելով, ուզած է բարելաւել հայ թատրոնի քայքայուելու մօտ եղող վիճակը:

Սակայն իր ջանքերը ապարդիւն են ան – ցած եւ կարելի չէ եղած այդ համագու – մարը կազմել, ուրեմն պիտի կարզա – դրուէին չատ մը կենսական հարցեր:

Անհանչ արուեստագէտը բեմով, մա – մուլով, եւ ուրիշ զանազան միջոցներով իր կարելին ըրած է այդ ուղղութեամբ, կարդացած է ընդարձակ դեկուցափրներ նուիրուած ընդհանրապէս թատրոնի եւ մասնաւորապէս հայ թատրոնի ուսումնա – սիրութեան, անոր սխալներուն եւ ան – հրաժեշտ բարեփոխումներուն:

Գաղափար մը տալու համար Յովհան – նէս Սեւումեանի թատերական խոր հաս – կացողութեան մասին, ստորեւ կ'արտա – դրեմ հատուած մը այն ուսումնասիրու – թենէն, զոր մեծանուն արուեստագէտը ստորագրած է 1914ին Դ. Վարուժանի եւ Ց. Ճ. Սիրունիի աշխատակցութեամբ Պոլսոյ մէջ հրատարակուող «Նաւասարդ» դրական եւ դեղարուեստական տարեգիր – քին մէջ. —

« Ապարդիւն կ'անցնէն թատրոնի վե – րածնութեան համար գործադրուած բոլոր ջանքերը, եթէ թատրոնը զուրկ է առողջ խաղացանկէ եւ դեղարուեստական ոչ – ժխէօրութենէ:

« Ես կ'ուզեմ ծանրանալ նախ՝ մեր թատրոնի ցանկալի խաղացանկի, ապա մեզ համար ցանկալի մէկ քանի նորու – թիւններու եւ խաղացանկ կազմելու սխ – եմի ու մէկ քանի ուրիշ դեխնիկական սխալներու վրայ:

« Խաղացանկի հարցը այսպէս պէտք է դնել. նախ՝ ինֆինուրոյն թատերախաղեր, որոնց առաջ դալուն ջանք պէտք չէ խնա – յել եւ ապա՝ թարգմանական թատերա – խաղեր: Ենթադրենք որ մեր տրամադրու – թեան տակ են՝ դասական կատակերդու – թիւններ, ողբերդութիւններ, րոմանթիք տրամներ, բարքի կատակերդութիւններ, առաջներ, մելոտրամներ, պատմական բիւհաներ, եւայլն:

« Գլխաւոր խնդիրն է այդ բոլորէն ըն – տրել յարմարագոյնը, առողջ թատերա – խաղեր, չենթարկուելով մօտայի թուսա – ւորիչ պղտիցութեան եւ առեղծել առողջ

ՅՈՒՇԵՐ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԱՍԻՆ

(1902 — 1906 Թ. Թ.)

— Էն ո՞վ էր երէկ դիշեր երդում լճի ափին: Ջուռնալիներ, չե՞մ ասել, թէ բայ օդում չերգէք:

Մենք զարմացանք, որ Նա իր սենեակում նստած, համարեա կէս քիլոմեթր հեռաւորութեան վրայ, կարողացել էր ի – մանալ որտե՞ղ են երդում եւ ո՞վքեր են երդում: Մենք չկարողացանք ծածկել մեր յանցանքը ու խոստովանեցինք ճշմարտու – թիւնը:

— Ձայնդ սկսուել է մաքրուել եւ զոյնը առել դալ,— դառնալով դէպի ինձ ասաց Կոմիտաս վարդապետը եւ աւելացրեց.

— Պատուիրածներս կատարո՞ւմ ես այդ՞:

— Այո, հայր սուրբ, կատարում եմ: Ոչ միայն ազի կծու բաներ չեմ ուտում, այլ վախենում եմ քաղցրն էլ ուտել, — քաշուելով պատասխանեցի ես:

— Հա՛ հա՛ հա՛, — իրեն յատուկ վա – րակիչ ծիծաղից յետոյ աւելացրեց.— Այ չատ ապրես, այդպէս էլ կը չարունա – կես, իսկ վաղուանից կը սկսես չաճախել մեր փորձերին: Հիմա սպասէք, ձեղ տղոյով հեռաբարեմ:

Այս ասելով, տեղից վեր կացաւ, որ տաղաւարից խաղողը բերի: Մենք արագ ոտքի ելանք եւ չնորհակալութիւն յայտ – նեցինք ու ներողութիւն խնդրեցինք, որ չենք կարող մնալ, որովհետեւ չուտով «սերտողութեան ղանդը» կը տան եւ մենք կարող ենք ուչանալ, ու «թեւեր ա – ռած», ուրախացած, հեռացանք:

×

Միջահասակից քիչ բարձր, վայելուչ կազմուածքով, նուրբ դիմագծերով, խարտեաշ աչքերով, խոհուն հայեացքով, կլորաձեւ, ճաղատ դլխով, կարճամազ մօրուսով մի մարդ էր այդ ժամանակ Կոմիտաս վարդապետը: Քայլում էր ու – շիղ կեցուածքով, աչխոյժ, առանց այս ու այն կողմ նայելու: Խօսում էր դգաց – ուած տոնով, հակիրճ, թեթեւ հումորով թաւ, դուրեկան, կրծքի մախմուր ձայ – նով:

Համապատասխան իր հոդեւոր կոչմա – նը՝ Կոմիտաս վարդապետը դուրսը, պաշ – տօնական ժամերին, հագնում էր սեւ ոչխմ, գլուխը ծածկում վեղարով, իսկ բնակարանում՝ թեթեւ, կաթնագոյն բե – հեզայ սենեկազդեստ, առանց գլխարկի: Սենեկազդեստի երկու կողմից էլ ունէր ծոցագրպաններ, ուր միշտ կային սրա – ծայր մատիտն ու ծոցատետրը, նշումնե – րի եւ գրառումների համար:

Կոմիտաս վարդապետն ունէր աչխա – տանքային ռեժիմ: Ջբօսնում էր օրուայ խաղաղ ժամերին, երբ քիչ էր լինում չարժումը դուրսը, կամ վաղ առաւօտեան ու երեկոյեան խաղաղ ժամերին, միշտ էլ համարեա մենակ: Ամբողջ 4 – 5 տարուայ ընթացքում ես չեմ յիչում մի դէպք, որ նա դբօսանքի դուրս եկած լինէր որեւէ միաբանի հետ, ինչպէս անում էին էջ – միածնի միւս միաբանները: Աւելի չատ սիրում էր դրուցել ձեմարանի աչակերտ – ների հետ:

Հանդիսաւոր կամ կիրակի օրերին, երբ Մայր Տաճարում վերջանում էր արարո – դութիւնը եւ հարիւրաւոր մարդիկ դնում էին Ներսիսեան լճի ափին դբօսնելու, ո – րոնց թիւում եւ չատ միաբաններ, նա, ընդհակառակն, իր քայլերն ուղղում էր դէպի բնակարանը չառաջադիմու – թեամբ: Նա չէր սիրում խոնուած հաս – րակութիւնը եւ խուսափում էր նրանից, դերադասելով մենակութիւնը:

Կոմիտաս վարդապետը վայելում էր ամբողջ ուսանողութեան սէրն ու հա – մակրանքը: Բոլորը, մեծ թէ փոքր, ա – ռանձին պատիւանքով էին խօսում նրա մասին: Այդ բանի պատճառը նրա բարե – հոգ բնաւորութիւնն էր, խոհուն ընթաց – քը, պարզ ու արտակին վերաբերմունքը դէպի չրջապատը:

×

Էջմիածնի Մայր Տաճարի հիւսիսային բակի արեւելքից — արեւմուտք ամբողջ երկարութեամբ կառուցուած էին միա – րանների հնադարեան խուցերը, մեկ – րանները: Այդ մենարաններում էին ապրում սարկաւագները, աբեղաները եւ վարդապետները: Մենարանների եռեւը հնադարեան, բարձր պարիսպներով պա – տած վանքի դբօսայդին էր: Մենարան խուցերի արեւմտեան կողմը վերջանում էր բարձր պարապարտղերով: Այդ մա – սում դեռ պահպանում էին հինաւուրց Վաղարչապատ բերդաքաղաքի արտաքին եւ ներքին պարիսպները: Արտաքին բեր – դապարիսպը վերջանում էր վանքի ար – տաքին դարբասով, որը բացւում էր ք – աղքի կենտրոնական հրապարակի վրայ: Այդ դարբասով մտնելով արտաքին դա – հլիճը, մօտ հարիւր քայլ դնալով պէտք էր անցնել Տրդատայ դռնով եւ ապա մտնել վանքի բակը: Հիւսիսային կողմից այ – դ պարիսպները, որոնց վերջն էր ար – տաքին մեծ դարբասը, հարաւից վանա – լան խուցերի չարքը, արեւմուտքից Տր – դատայ դրան պարիսպը, արեւելեան կող – մից ներքին բերդապարապից մնացած մի բարձր բուրդ պարիսպում էին իրենց մէջ մօտ 250 քառակուսի մեթր տարածու – թիւն, բոլորովին անտեսանելի դրսի կող – մից: Պարիսպներով պարփակուած այդ անտեսանելի բակը, միայն մի նեղ, այն էր վերնածածկած, մուտք ունէր վանքի բակի կողմից, խուցերի արանքով:

Ս. ԲԱՂԻՐԵԱՆ

(2 Շար.)

ԿՅՑԸՐ

ԺԸ.

ԵՐԿԱՉ

Ո՛չ։ Ես ինչ որ տեսա չատ տարօրինակ էր, ինչ որ լսեցի չատ զարմանալի, ինչ որ զգացի չատ տարօրինակ, ինչ որ տեսնելիքս կանխագուշակեցին ինձ՝ ես ոչինչ տեսայ, ոչինչ լսեցի, ոչինչ զգացի, ոչինչ տեսնելիք ունեցայ։ Ես միայն ձեռքիս մեջ գտնվող մի թուղթ կարդացի, որ ինձ տրված էր ինչ-որ մեկի կողմից, որ ես չգիտեի, թե ով է։ Ես միայն գիտեի, որ ինձ ուղարկել է Ցիտիշոնը։ Ես ինչ որ կարդացի, ինչ որ լսեցի, ինչ որ տեսա, ինչ որ զգացի, ինչ որ տեսնելիքս ունեցայ, ամենը ինձ համար մի մեծ առեղծված էր, որ ես ոչ կարող էի լուծել, ոչ ալ հասկանալ։ Ես միայն գիտեի, որ ինձ ուղարկել է Ցիտիշոնը, որ ես ինչ որ կարդացի, ինչ որ լսեցի, ինչ որ տեսա, ինչ որ զգացի, ինչ որ տեսնելիքս ունեցայ, ամենը Ցիտիշոնի կամքով էր, որ ես ոչ կարող էի լուծել, ոչ ալ հասկանալ։ Ես միայն գիտեի, որ Ցիտիշոնը ինձ ուղարկել է Ալեքսանդրիա, որ ես ինչ որ կարդացի, ինչ որ լսեցի, ինչ որ տեսա, ինչ որ զգացի, ինչ որ տեսնելիքս ունեցայ, ամենը Ալեքսանդրիայի մեջ էր, որ ես ոչ կարող էի լուծել, ոչ ալ հասկանալ։ Ես միայն գիտեի, որ Ալեքսանդրիայի մեջ ինձ համար մի մեծ առեղծված կար, որ ես ոչ կարող էի լուծել, ոչ ալ հասկանալ։ Ես միայն գիտեի, որ

Ինչպէս կը տեսնուի լուրջ աղդարարութիւն մըն է ասիկա, որ կը հակասէ Հոկտեմբեր 29ին Մոսկուայի Թրքական դեսպանատան մէջ խորհրդային ղեկավարներու կատարած յայտարարութեանց :

× Խ. Միութիւնը անգամ մը եւս Լիբանանին առաջարկեց տնտեսական օժանդակութիւն ընել, կը հաղորդեն Պէյրութէն: Առաջարկը, որ քանի մը ամիս առաջ եղած էր, նորոգուած է Պէյրութի խորհրդային դեսպանին կողմէ, որ տեսակցութիւն մը ունեցած է Վարչապետ Սոլհի հետ :

× Եգիպտոսի կառավարութիւնը Չեխոսլովաքիայէն քսան միլիոն փրանքի օժանդակութիւն մը պիտի ստանայ:

× Իսրայէլեան սահմաններուն վրայ նոր միջադէպեր պատահեցան կրկին : Սուրիական հողամասէն կրակ բացուած է հրեայ գործաւորներու վրայ : Իսրայելցի զինուորները պատասխանած են. դոհ չկայ :

Միւս կողմէ յորդանանեւիսրայէլեան սահմանին վրայ, Յորդանանցիք կրակ բացած են հրեայ զինուորներու խմբակի մը վրայ. իսրայէլացի զինուոր մը ծանրօրէն վիրաւորուած է, կը հաղորդեն Թէլ Ավիվէն: Յորդանանցի զինուորներ սահմանը անցնելով Իսրայէլի մէջ բնակող արաբ մը փախցուցած են. Հրեայ զինուորները դէպքին վայրը եկած են քննութիւն մը բանալու համար, սակայն ետ մղուած՝ ինքնագործ զէնքերու հարուածներէն :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՄՈՍԿՈՒԱՅԻ ձայնասփիւռը յայտնեց, թէ այսուհետեւ կիրակի եւ տօնական օրերը աշակերտներուն պարտականութիւններ պիտի չտրուին, նկատելով որ ծանրաբեռնուած են անոնց դպրոցական աշխատանքները:

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ արձակեցին առանց օդաչուի ռմբակոծիչ մը եւս՝ «Սը– նարք», որ ժամական հազար քիլոմեթր արագութեամբ սլացաւ անհունին մէջ. տարողութիւնը՝ հինգ հազար քիլոմեթր:

ԼԻՒՔՍԷՄՊՈՒՐԿԻ Խորհրդարանը երեք համայնավարներու դէմ 46 ձայնով վաւերացուց Եւրաթոմի եւ Հասարակաց Շուկայի ծրագիրը :

ԻՖՆԻԻ մէջ (Մարոք) սպանական ուժերը զսպած են ապստամբները եւ կացութեան տէր են ներկայիս: Սպանիայէն կարեւոր ուժեր օգնութեան դացած են Իֆնիի զօրամասին :

ԱՆԳԼԻՈՅ Արտաքին նախարարութեան քարտուղարներէն մէկը յայտարարեց, թէ Թունուզ սթերլինով պիտի վճարէ իր ստացած զէնքերուն գինը :

ՖՐԱՆՍԱՅԻ Փէ տէ գ'Օրփեվրի մրցանակը (հարիւր հազար փրանք) յատկացուեցաւ կոյրի մը՝ Լուի Թոմա՝ գրած դաղտնի ոստիկանական վէպին՝ «Ապրիլեան Թոյն»:

ԱՏԼԱՆՏԵԱՆ ՈՒԽՏԻ ընդհանուր քարտուղար Սփաք Լոնտոն գնաց, ուր պիտի մնայ կարճ ժամանակի մը համար :

ՄՈՍԿՈՒԱՅԻ քաղաքապետութեան փոխնախագահը Փարիզ եկաւ եւ այցելութիւն մը տուաւ «Փարիզեան խմբակցութեան» նախագահ՝ Լեվէքի :

ՔԱՄԸՐՈՒՆԻ մէջ երեւան ելաւ համայնավար կուսակցութեան գաղտնի մասնաճիւղ մը :

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

ԼԻՈՆ.— Լիոնի Ազգ. Միութեան վարչութիւնս, իր խորին վշտակցութիւնը կը յայտնէ, լիոնահայ ծանօթ եւ անձնուէր ազգայիններէն Վ. Թաղւոր Այվազեանի անակնկալ եւ դառնաղէտ մահուան առթիւ Այրի Տիկին Այվազեանի, ընտանեկան պարագաներուն եւ ինչպէս իր գաղափարի ընկերներուն :

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՑԿԵՐՈՅԹԸ ՄԱՐՍԷՅԼ

8 Դեկտեմբեր, Կիրակի ամբողջ օրը, Պոմոնի Ս. Սահակ եկեղեցւոյ սրահին մէջ :

Հայկական համասամ կերակուրներ, նուագ, երգ, արտասանութիւն եւ ուրախ մթնոլորտ :

Ճաշագին 1000 փրանք :

Տեղերը ապահովել Համազգայինի անդամներուն մօտ :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Կեսարիոյ եւ շրջակայքի հայրենակիցներու փափաքին համաձայն, 1895 Նոյեմբեր 18 եւ 1896ի Կեսարիոյ եւ շրջակայքի նահատակներուն, 1915ի Կեսարիոյ մէջ կախաղան բարձրացած 53 մարտիրոսներուն, ընդհ. տեղահանութեան շրջանի նահատակներուն, ինչպէս նաեւ բազմավաստակ Առաջնորդ Տէր Տրդատ Արք. Պալեանի եւ նահատակ Խորէն եպիսկ. Պէհրիկեանի հոգւոց յիշատակին, հոգեհանգիստ պիտի կատարուի, այս կիրակի օր, Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ մէջ: Կը հրաւիրուին Կեսարիոյ եւ շրջաններու հայրենակիցները:

×

Տէր եւ Տիկին Արամ Փորեայեան, Օր. Լիւսի Փորեայեան, Օր. Ժանէթ Զաթըլեան, Տէր եւ Տիկին Գրիգոր Շահմիրեան, Տիկին Արթիւր Շահմիրեան, Տէր եւ Տիկին Կարապետ Պալեան, Տէր եւ Տիկին Գրիգոր Գասպարեան, Տէր եւ Տիկին Ժագ Շիրվանեան, Դանիէլեան, Ինճէեան եւ Շահինեան ընտանիքները (Հայաստան), կը ծանուցանեն թէ այս կիրակի հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի տարաբախտ հարիւրապետ՝

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՓՈՐԵԱՅԵԱՆԻ

կսկծալի մահուան քառասունքին առթիւ, Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ մէջ: Կը հրաւիրուին հանգուցեալին յիշատակը յարգողները եւ Նախկին Մարտիկներու Միութիւնը :

ՆՈՒԱԳԱՀԱՆԴԷՍ ՊՈՄՈՆԻ ՄԷՋ

Մարսէյլի Լիսէ Միզիֆալի աշակերտներէն պատանի ջութակահարներ՝

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԻՇԽԱՆԵԱՆ

եւ ՀՐԱՅՐ ԳԻՐՃԵԱՆ

կուտան իրենց առաջին նուագահանդէսը, Պոմոնի դպրոցի սրահին մէջ, այս շաբաթ ժամը ճիշդ 21·15ին, ղեկավարութեամբ իրենց ուսուցչին՝ Պ. Յ. Քիւրքճեանի :

Դաշնակով կ'ընկերակցի Օր. Լիլի Գազանճեան (Լիսէ Միւզիքալէն Ա. մրցանակաւոր): Պիտի նուագուին դասական եւ արդիական ընտիր կտորներ, ինչպէս նաեւ Ա. Խաչատուրեանի, Ա. Սպենդիարեանի եւ Կոմիտաս վարդապետի լաւագոյն էջերէն :

ՄՈՒՏՔԸ բոլորովին ԱԶԱՏ է, որեւէ ծախսերու մասնակցութիւն չկայ :

ԼԻՈՆ.— Տէր եւ Տիկին Յակոբ – Վարսենիկ Ղազարեան (Ժուան լէ Փէն) Լիոն իրենց այցելութեան առիթով, եկեղեցւոյ շինութեան կը նուիրեն հինգ հազար Փր.:

Պ. Ժորժ Մաս, Պ. Ս. Փափազեանի մահուան առթիւ, եկեղեցւոյ շինութեան կը նուիրէ հինգ հազար փրանք :



Նոր կատարելագործում կօշիկի կրունկներու պատրաստութեան մէջ

Առաջին հայ հաստատութիւնը որ յաջողած է մաթիէռ փլասթիքի եւ ալիւմինիոմի միացումով շինել անբեկ (էնքասապլը) եւ ճկուն կօշիկի կրունկներ ամէն բարձրութեամբ :

Դիմել՝

VANPLAST

(ՎԱՆԼԵԱՆ)

7, RUE GODOT DE MAUROY

Tél. : OPE. 01-08

Առաւօտները հեռաձայնել՝ ITA 33-38

ՄԵԾ ԵՒ ՇՔԵՂ ԵՐԵԿՈՅԹ

Կիրակի, 1 Դեկտեմբեր, ժամը 3ին, Կրընոպլի մէջ, Րիւ Ժէի սրահը

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ Հ. Յ. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Կը նախագահէ ընկեր Գ. ՓԱՓԱԶԵԱՆ (Փարիզ)

Կը խօսի ընկեր Ժ. ՄԻՐԻՃԵԱՆ (Մարսէյլ)

Մասնակցութեամբ Փարիզի եւ իր շրջաններու, Կեդր. Ֆրանսայի եւ Մարսէյլի մասնաճիւղերուն :

Գեղարուեստական բացառիկ յայտագիր

Հանդիսութենէն ետք, ընկերական խրախճանք եւ պար մինչեւ 2 :

Մուտք՝ 100 Փրանք :

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Եկեղեցիին վարչութիւնը Պ. Մուրատ Տէմիրճեանէ շնորհակալութեամբ ստացած է տասը հազար փրանք, նուէր նորակերտ Զարխափանի խորանին, իր ողբացեալ ծնողքին եւ քրոջ յիշատակին կատարուած հոգեհանգիստին առիթով :

Ս. ԹԱԴԷՈՍ ԵԿԵՂԵՑԻ

Ալֆորվիլի Ս. Թադէոս եկեղեցւոյ Թաղականութիւնը կը յայտարարէ թէ այս կիրակի Ս. Թադէոս եւ Բարթողիմէոս եկեղեցւոյ տօնախմբութեան առթիւ հանդիսաւոր Ս. պատարագ եւ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի եկեղեցւոյ հիմնադիր բարերարներու, ինչպէս նաեւ բազմարդիւն Առաջնորդ Գերաշնորհ

ՏԷՐ ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊՍ. ՊԱԼԱՔԵԱՆԻ

Եկեղեցւոյ կնքամայր Օր. Նունիկ Տէր Ղեւոնդեանի եւ համայն Թաղիս հին եւ նոր ննջեցելոց հոգւոց համար :

Այս առթիւ պիտի պատարագէ եւ քարոզէ Թաղիս հովիւը հոգե. Տէր Ներսէս Խաչիկեր քհնյ.: Երգեցողութիւնը պիտի կատարէ Ս. Եկեղեցւոյս երկսեռ դպրաց դասը, ղեկավարութեամբ Օր. Սիւզան Պօյաճեանի :

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻՆ

Նիմէն Տիկին Վառվառեան երկու հազար Փրանք կը նուիրէ Կարմիր Խաչի դարմանատան, իր ամուսնոյն ապաքինման առթիւ: (Ստանալ «Յառաջ»էն):

ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Լիոնի Եկեղեցասէր Երիտ. Միութիւնը, Լիոնի եկեղեցւոյ շինութեան ի նպաստ պարահանդէս մը կազմակերպած է, Դեկտեմբեր մէկին, ժամը 16էն մինչեւ կէս գիշեր, Թէթ տ'Օրի Շալէ տիւ Փարքի շըքեղ սրահներուն մէջ :

LE CLUB

DANCING

51, Rue Grignan, MARSEILLE

Tél. FE 27-66

Լաւագոյն ընդունելութիւն վերապահուած է հայկական կազմակերպութեանց եւ հայ ընտանիքներուն սրահը վարձելու համար :

Երեկոյթ, պարահանդէս, նշանտուք, ամուսնութիւն եւայլն:

Տնօրինութիւն՝ ԷՏԻ ԹՈՒՐՆԷԼ

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՓԱՐԻԶ.— Հ. Յ. Դ. Րաֆֆի խումբի ժողովը այս ուրբաթ՝ 8եժանի սրահարանը: ժամը 21ին: Ներկայ կ'ըլլայ Շրջ. կոմիտէի ներկայացուցիչը :

ՎԻԷՆ.— Հ. Յ. Դ. «Անի» կոմիտէի ընկերական ընդհ. ժողովը այս Շաբաթ, ժամը 20·30ին «Համօ Օհանջանեան» սրահին մէջ: Բոլոր ընկերներու ներկայութիւնը անհրաժեշտ է :

ՊԱՆԵԼՕ – ՔԱՇԱՆ.— Հ. Յ. Դ. «Արծիւ» ենթակոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս հինգշաբթի, ժամը 20·30ին ընկեր Բարթամի բընակարանը, 95 Ավընիւ Արիսթիտ Պրիան, Քաշան: Ներկայ կ'ըլլայ Շրջ. կոմիտէի ներկայացուցիչը :

ՓԱՐԻԶ.— Հ. Յ. Դ. Ուսանողական Րուբէն խումբի ժողովը այսօր Չորեքշաբթի ժամը 9ին, Րիւ Պլէօ, թիւ 17 :

ԿՐԸՆՈՊԼԸ.— Հ. Յ. Դ. Եօթնեղբայրեան կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բոլոր ընկերները այս շաբաթ, ժամը 20·30ին, սովորական հաւաքատեղին : Անհրաժեշտ է բոլորին ներկայութիւնը : Լանսէյի, Ռընոժի ընկերները պէտք է ներկայ գտնուին նոյն ժողովին:

ՓԱՐԻԶ.—Հ. Յ. Դ. Ագըիւր – Սերոբ – Մ. Եօթնեղբայրեան խումբի ժողովը այս Շաբաթ, ժամը 20·30ին, սովորական հաւաքատեղին: Կարեւոր օրակարգ: Ներկայ կ'ըլլայ Շրջ. Կոմիտէի ներկայացուցիչը :

ՄԱՐՍԷՅԼԻ Շրջ. կոմիտէն ժողովի կը հրաւիրէ.—

ՀԱՄԱԶԱՍՊ խումբը այս Շաբաթ իրիկուն ժամը 21ին :

ԱԿՆՈՒՆԻ ենթակոմիտէն այս Շաբաթ իրիկուն, ժամը 21ին:

Ն. ԴՈՒՄԱՆ խումբը, այս կիրակի կէսօրէ վերջ ժամը 15·30ին:

Այս ժողովները տեղի կ'ունենան սովորական հաւաքատեղիները:

Ներկայ կ'ըլլան Շրջ. Կոմիտէի ներկայացուցիչները :

Ֆ. Կ. ԽԱՉԻ Պանեօ Քաշանի մասնաճիւղի ընդհ. ժողովը, այս շաբաթ, ժամը 17ին, ընկերուհի Տիկին Լօժէնի Խանչէրեանի բնակարանը, 9, րիւ Տէփրէ, Պանեօ: Բոլոր ընկերուհիներու ներկայութիւնը անհրաժեշտ է :

ՇԱՒԻԼԻ Կրօն. Ընկերակցութեան բացառիկ ընդհ. ժողովը այս Շաբաթ, ժամը ճիշդ 21ին, նորակառոյց դպրոցի սրահին մէջ: Օրակարգ.— Եկեղեցւոյ օծման առթիւ վերջնական կարգադրութիւններ :

Imprimé sur les presses du journal HARATCH

17, Rue Bleue, 17 — PARIS (9e)

BAINS DE VAPEUR

4 bis, Rue de la Pierre-Levée — Paris - 11e

OBE. 12-51

MÉTRO : RÉPUBLIQUE, OBERKAMPF ET PARMENTIER

ԵՐԵՔ ՍՐԱՀ ՇՈԳԻԻ ԼՈԳԱՆՔԻ

(SUDATION ET FUMIGATION)

Մասաժ, Օքսիժենօթերափի, ձեռքերու եւ ոտքերու խնամք (մանիւքիւր – փետիւքիւր) քուափիւր, սուէն տը պօթէ, փիսին:

BAR - RESTAURANT

Բաց օրեր.—

ԿԻՆԵՐՈՒՆ		ԱՅՐԵՐՈՒՆ	
Ուրբաթ	ժամը 11էն 23	Հինգշաբթի	ժամը 17էն 23
Երկուշաբթի	ժամը 11էն 23	Շաբաթ	ժամը 9էն 23
Չորեքշաբթի	ժամը 11էն 23	Կիրակի	ժամը 8էն12

ՀԱՅԵՐԷՆ ԿԸ ԽՕՍԻՆՔ

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925 — Tél. : PRO. 86-60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. PARIS 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամս. 1600

Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք : Հատը 12 ֆր.

ՈՒՐԲԱԹ
29
ՆՈԵՄԲԵՐ
VENDREDI
29 NOVEMBRE
1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8055 — 33e ANNEE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3856

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՁՄՈՌՆԱ՛ՆՔ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

1920ի գարնան գարնան պաշտպիը կրնքուած էր բոլշեւիկեան Ռուսիոյ եւ քեմալականներու մէջեւ :

Այն չէրջանին, երբ Անգլիոյ նշանաւոր վարչապետը Լոյտ Ճորճ «աւազակ» մակդիրը կուտար Մուսթաֆա Քեմալի, Լէնինն ձեռքի տակէ կ'օժանդակէր անոր զրահով, զէնքով ու ռազմամթերքով : Զէ՞ որ երկուքն ալ կը կռուէին արեւմուտքի « դրամատիրական », «աշխարհակալ » պետութեանց դէմ : Ուրեմն այդ կէտին վրայ միջազգայնական բոլշեւիկներու եւ ազգայնական (միլլի) Թուրքերու շահերը կը նոյնանային :

Եւ միայն չէ՞ որ Խորհրդայինները Թուրք մըն էր : Ի՞նչպէս կարելի էր երբեք կանացնել «համաշխարհային յեղափոխութիւն»ը եւ մանաւանդ արտէն հարուածել բոլշեւիզմի սիրելի թշնամի Մեծն Բրիտանիան, առանց Թուրքերու օժանդակութեան, որոնց միջոցաւ խորհրդային ցանցին մէջ պիտի առնուէին Հնդկաստանի հարիւր յիսուն միլիոն իսլամներն ու ամբողջ արաբական աշխարհը :

Ուրեմն ապահովելէ վերջ Մոսկուայի պայմանի ակնկալութիւնը, Քեմալիմ Քարասկէքերի զօրագունդերը 1920 Սեպտեմբեր 24ին յարձակեցան Հայաստանի Հանրապետութեան վրայ, որ մէկ կողմէ ապի – տալի պատերազմի մը բացած անհաւասար վէրքերը կը զարմանէր անհնարին ճիգերով, միւս կողմէ խաղաղեցնելով երկրի այլացեղ տարրերը եւ ապահովելով ներ – քին սահմանները՝ հարեւաններու ոտնձգութեանց դէմ :

Արդարացնելու համար թրքական յարձակումը, Անատոլուի Գործակալութիւնը՝ նոր՝ թէեւ քիչ մը ուշ՝ Հոկտեմբեր 23ին հետեւեալ «լուսաբանութիւններ»ը կուտար «համաշխարհային հանրային կարծիքին» :

« Հայաստանի Հանրապետութեան հաստատումէն վերջ երեւանի կառավարութիւնը իրեն նպատակ դրած էր ոչնչացնել կամ գաղթելու ստիպել այն Թուրքերը, որոնք հաստատուեր էին երկրին մէջ եւ կը կազմէին Հանրապետութեան ամբողջ ազգաբնակութեան կէսը : Այդ բաղաձա – կանութիւնը, որ կը հետապնդուէր յա – մառութեամբ եւ որոշ կանոնաւոր ծրա – գրով, կը ձգտէր մեծցնել ազգային հողը՝ հաստատելով եկուոր փախստական Հա – յերը այն տեղերը, որոնք ազատ մնացած էին Թուրքերու մահուան կամ փախուս – տին պատճառով » :

Ցետոյ կ'աւելցնէր թէ՝ համաձայն պաշտօնական վիճակագրական տուեալ – ներու, «մինչեւ 1919ի վերջը միայն Հա – յաստանի սահմաններուն մէջ այրուած են 199 թրքական գիւղեր, որոնց 135·000ի հասնող բնակչութիւնը մեծ մասամբ կո – տորուած է ...» :

«Դաշնակիները այդքանով չբաւակա – նանալով», մանր են Ատրբէյճան եւ Ղա – րաբաղի նահանգին մէջ այրեր են մօտ 20 Թուրք գիւղեր՝ կոտորելով ամբողջ ազ – գաբնակութիւնը :

Բոլշեւիկները «արդիւնաւէտ» աչխա – տանք կատարեր էին երիտասարդ Հայաս – տանի բանակին մէջ՝ իրենց Թուռնուր քարոզութիւններով, — «Մուսթաֆա եղ – բայրդ է գալիս » :

Այս ճակատագրական կռիւներէն առաջ, անոնք սին խոստումներով քնացուցեր էին Հայաստանի կառավարութիւնը : Մոսկուայէն ձեռնունայն ճամբու դրեր էին Լեւոն Շանթի պատուիրակութիւնը՝ խոստա – նալով երեւանի մէջ չարունակել բանակ – ցութիւնները Կրէմլինի լիազօր Լըզրանի հետ :

Շատ թարմ է պատմութիւնը : Աւելորդ են մեկնութիւնները :

Լըզրան եկաւ երեւան՝ պարզապէս ըս – տորագրելու համար անկախ Հայաստանի Հանրապետութեան մահազդիրը՝ 2 Դեկ – տեմբեր 1920ին. «Հայաստանը յայտա – րարում է անկախ սոցիալիստական խորհրդային հանրապետութիւն » :

Թուրքերու « Միլլի » դիւանագէտներն ու բոլշեւիկներու կարմիր զօրագունդերը ձեռք ձեռքի տուած հայ ժողովուրդին «պարզեւեցին» «անկախ» սոցիալիստական Խ. Հանրապետութիւն :

Տակաւին 37 տարի վերջ ալ այդ «անկախ»ին կը զլանան Հայաստան անուններ եւ զայն կը կոչեն Հայկական սոցիալիստական սովետական ռեսպուբլիկա, չորս բառով, երեք օտար :

Թիզ մը հող չեն ուզեցուցած «Դաշ – նակիներուն» ձգած սահմաններուն վրայ : Զէն կրցած սրբագրել նոյնիսկ ներքին սահմանները :

« Նոյեմբեր 29»ին առթիւ ուզեցինք քիչ մը թարմացնել յիշողութիւնները : Զմոռ – նալու համար պատմութիւնը :

ՀՐԱՆՏ – ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԱԼԺԵՐիոյ ՀԱՐՑԸ ՄԱԿ-Ի ԱՌՋԵՒ

ՑԱՌԱԶԻԿԱՑ ՏԱՐՈՒՄՆ ՊԻՏԻ ՑԵՏԱԶՈՒԻ

Ալժերիոյ հարցին քննութիւնը սկսաւ ՄԱԿի առջեւ : Ֆրանսայի Արտաքին Նա – խարար Փինօ քաղաքական յանձնախումբին ուղղելով իր խօսքը, բաւ թէ այդ հարցին չուրջ Ֆրանսա ունի իր տեսակէտը եւ պատրաստ է պաշտպանել զայն : Փինօ ՄԱԿի ներկայացուցիչներուն յիշեցուց նաեւ, որ Ալժերիոյ մէջ ազգային ըմբոստութիւն մը չկայ օտար ճնշումի մը դէմ, այլ՝ քաղաքական փոքրամասնութեան մը կողմէ ձեռք առնուած միջոցներ են, որոնք ծանօթ են իրենց ահաբեկչութեամբ : Այդ չարժումը վաղուց ձախողած պիտի բլլար, եթէ կարգ մը երկիր – ներ զէնքերով, զրամով, զեկավարու – թեամբ եւ ապաստաններով չօդնէին ա – նոր : Եթէ ճիշդ է որ ալժերիական հարցը միջազգային մտահոգութեան առարկայ է՝ իր նմանին մէջ առաջինը պիտի բլլայ ան... :

Մէկ ու կէս ժամ տեւած իր ճառին մէջ, Արտաքին Նախարար Փինօ չէշտեց, թէ Ֆրանսա հետեւած է միշտ խաղաղասիրական իր ծրագիրին, որ միաժամանակ ՄԱԿի ծրագիրն է : զինադադար, ընտրութիւն, խորհրդակցութիւն : Այս տեսակէտէն զինադադարի մը համար Ֆրանսայի բոլոր աշխատանքները բախեցան Ազատագրական Ճակատի ընդդիմութեան : Ֆրանսա բնաջոգջ չի տար նաեւ Մարոքի թագաւորին եւ Թունուզի Նախագահին մի – ջամտութեան առաջարկին : Բայց աստի, Ազատագր. Ճակատը Ալժերիոյ ժողովուրդին հարազատ ներկայացուցիչը չի կրնար բլլալ, քանի որ սպանութիւններով միայն կը փորձէ կարզադրել իր հաշիւ – ները :

Արտաքին Նախարարը յարձակումի անցնելով պատասխանեց Եգիպտոսի Նախագահ Նասէրին՝ դիպատոս. — 1954 Դեկտեմբեր մէկին Գահիրէէն հրահանգուեցաւ Օրէնի ա – պստամբութիւնը : Գահիրէի մէջ էր, որ կազմուեցաւ Ազատագր. Ճակատը, եւ – դիպատական իշխանութեանց թելադրու – թեամբ եւ նիւթական օժանդակութեամբ : Գալով Մարոք եւ Թունուզի, բաւ Փինօ, կը հաւատանք թէ այս երկու երկիրներու կառավարութիւնները կը փափաքին որ խռովութիւնները վերջնական Ալժերիոյ մէջ, դժբախտաբար սակայն անոնց օ – ժանդակութիւնը՝ ըմբոստներուն, հակա – դիր արդիւնքի մը կը յանգի :

Ֆրանսայի Արտաքին Նախարարը իր խօսքը վերջացուց, յայտնելով թէ ներ – կայիս Ալժերիոյ մէջ ընկերային, քաղաք – ական ու վարչական բարենորոգումներ կը կատարուին . եղրակացութիւն. — Այս պարագային մէջ ի՞նչ է ձեր պարտակա – նութիւնը. եւ, յատակօրէն կը տեսնեմ զայն : Ձղել՝ որ Ֆրանսա չարունակէ խա – զաղ լուծումներ գտնել, ժողովրդավարական սկզբունքներով, ինչ որ կը վայե – լէ :

Նախարարին ճառէն ետք, որոշուեցաւ հարցին չուրջ բացուելիք վիճաբանութիւնները ձգել ուրբաթ օրուան : Մինչ կողմէ, լատին – ամերիկեան երկիրներու պատգամաւորները կը պատրաստեն առաջարկ մը՝ վիճաբանութիւնները յատկացուելիք տարուան ձգելու համար :

ԱՋԳ. ԺՈՂՈՎԻՆ ՄԷՋ

Դէ. օր, կէսօրէ վերջ, վարչապետ կայեատ Ազգ. Ժողովին վստահութեան հարց դրաւ՝ Ալժերիոյ Հիմնական Օրէնքին վաւերացման համար : Քուէարկութիւնը պիտի բլլայ այսօր, սակայն կարելի չէ, որ դրական պիտի բլլայ, այլ՝ կայեատի ը – նելիք յայտարարութիւնը : Ապահովա – բար, վարչապետը պիտի խօսի Մարոքի եւ Թունուզի միջամտութեան առաջարկին վրայ. հակառակ անոր, որ Հիւս. Ափրիկէի երկու երկիրներուն առաջարկը եղած է «բարի նպատակ»ով՝ Ֆրանսայի պատասխանը ժխտական պիտի բլլայ :

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏԱՆ

Պ. Մկրտիչ Տուտուեանի, Վիճէնի (Ֆ. անդամ) 3·000

ԱՏԼԱՆՏեԱՆ ՈՒԽՏԻ ԺՈՂՈՎԸ

ՆԻՒՍԸՆ ՓԱՐԻԶ ՊԻՏԻ ԳԱՅ

Ատլանտեան Ուխտի բնդհանուր քարտուղար Սփաք անդամ երկիրներու ներ – կայացուցիչներու ժողով մը գումարեց, վերջնականապէս որոշում մը տալու համար :

Չհաւատալ անոր, որ Նախագահ Այզընհաուերի հիւանդութիւնը լուրջ պատճառն է, որ ժողովը յետաձգուի, քանի որ Միացեալ Նահանգներու Նախագահն ալ փարիզ պիտի գար, 15 երկիրներու ներկայացուցիչները կը փափաքին որ ժողովը գումարուի որոշուած թուականին :

Ֆրանսայի քաղաքական շրջանակներուն կարծիքը այն է, թէ պէտք է հետեւիլ մեծամասնութեան տեսակէտին : Այսուհանդերձ, փարիզի մէջ կը մտածեն թէ Ամերիկա կրնայ մասնակցիլ նաեւ ուրիշ ներկայացուցչով մը, փոխանակ՝ Այզընհաուերի : Այս է նաեւ կարծիքը Ատլանտեան Ուխտի անդամ կարեւոր երկիրներուն. ինչպէս՝ Անգլիա, Արեւմտեան Գերմանիա եւ մանաւանդ Իտալիա :

Այս ուղղութեամբ Միացեալ Նահանգ – ներու Արտաքին նախարարութեան բան – բերը յայտարարեց, թէ հակառակ անոր որ Նախագահ Այզընհաուերը պիտի չկա – րենայ մասնակցիլ Փարիզի ժողովին, Ատլանտեան Ուխտի երկիրները կրնան գումարել զայն Դեկտեմբերի մէջ : Այս պարագային՝ ամերիկեան պատուիրակութիւնը պիտի զեկավարէ փոխ – նախագահ Նիքսըն : Կրնայ բլլալ նաեւ, որ Նախագահ Այզընհաուերն ալ մասնակցի Փարիզի ժողովին, եթէ մինչեւ այդ թուականը ճամբորդելու ի վիճակի բլլայ :

Այս ձեւով, բոլոր երկիրներն ալ համաձայն են, որ ժողովը տեղի ունենայ, առանց վայրի ու թուականի փոփոխութեան :

Այժմ պարապայի մէջ, այսօր յայտնի պիտի բլլայ վերջնական որոշումը, որ պիտի տրուի Փարիզի մէջ :

ՄԻՋԻՆ ԱՐեՒԵԼՔ

ԼիբԱՆԱՆԵՒՈՒՐիԱԿԱՆ ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹիՒՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒի

Դամասկոսի «Ալ Ալամ» թերթին համաձայն սուրիական իշխանութիւնները լիբանանի ապահովութեան անօրէնը ան – րագաթալի տարի նկատած են իրենց հա – պամասին վրայ՝ ներքին ապահովութեան համար : Թերթը կը զրէ, թէ Լիբանանի ապահովութեան անօրէնը իր հոդամասին վրայ կը պաշտպանէ տարրներ՝ որոնք զէմ են Սուրիոյ եւ անոր անուններ մաս կը կազմէ անոնց՝ որոնք դաւադրութիւն մը սարքած էին Սուրիոյ դէմ :

Մինչ Դամասկոսի կառավարութիւնը թշնամական դիրք կը բռնէ Պէյրութի դէմ, որ օդնութիւն կը ստանայ Միացեալ Նահանգներէն, լիբանանեան Խորհրդա – րանին մէջ Արտաքին նախարար Մալիք քանի մը ամիս առաջուան ամերիկեան զինուորական օժանդակութիւնը յիշելով, յայտարարեց. — Միացեալ Նահանգներ պատրաստ են զինելու մեր բոլոր բանդակները եւ զոհացում տալ անոնց՝ պայմաններու ներած չափով. պիտի աշխատին նաեւ, որ տարրեր երկիրներէ ալ օգնութիւն ստանանք :

Արտաքին նախարարը յայտնեց նաեւ, թէ կարելիութիւններ կան նոյնիսկ՝ Լիբանանի մէջ հաստատելու պաշտպանութեան ամէնէն արդիական կայաններ, որոնք իրականացած են պիտութեան յաոջդիմութեամբ.—յոյս ունի՛ որ երկար տեւն պիտի չսպասենք այդեւս՝ հեռաւար (թէլէկիտ) հրթիռներ ունենալու համար, աւելցուց Մալիք :

× Թրնեւի մէջ կը չարունակուին Ֆը – րանքեւեպրատական տնտեսական ու եղ – ծական գործակցութեան խորհրդակցութիւնները : Ֆրանսական պատուիրակութեան նախագահը յայտարարեց, թէ կրելի եղած էր համաձայնութիւն գոյացնել՝ կարգ մը կէտերու վրայ : Կը սպասուի որ ընդհանուր համաձայնութիւն մը գոյանայ՝ նկատելով որ բոլոր հարցերը իրարու կապուած են :

× Սուրիոյ Արտաքին նախարար Պր – քար յայտարարեց որ, թէեւ Թրքական դրդռութիւնները զղալպէս նուազած են, սակայն սահմանապահներուն վրայ Թուրք զինուորներու համախմբումը միշտ վը – տանգ մը կը ներկայացնէ Սուրիոյ համար : Եթէ այսպէս չարունակուի՝ Դա – մասկոս կրնայ նորոգել իր բողոքը՝ ՄԱԿի մէջ :

Միւս կողմէ, Յորդանանի վրայ եթէ իսրայէլեան յարձակում մը բլլայ՝ Սուրիա եւ արաբական միւս երկիրները անմիջապէս օգնութեան պիտի հասնին Սամանի, աւելցուց Սալահ Պիթար :

× Լոնտոնի Խորհրդարանին մէջ Արտաքին նախարարութեան ներկայացուցիչը յայտարարեց, թէ անգլիական կառավարութիւնը համաձայնութիւն չէ կրցած գոյացնել եմէնի զահաժառանգ իշխանին հետ : Հետեւաբար՝ Անգլիա – եմէն խորհրդակցութիւնները արդիւնքի մը չեն հասած :

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ կառավարութիւնը նախատեսուած զումարին վրայ երկու միլիառ տոլարի յաւելեալ պիւտճէ մը քուէարկեց՝ հեռաւար (թէլէկիտ) հրթիռներու պատրաստութեան համար :

ՖՐԱՆՍԱՑի համայնավար կուսակցութեան ընդհանուր քարտուղար Թորէզ, որ Մոսկուա զացած էր, վերադարձի ճամբուն վրայ հանդիպած է Արեւելեան Գերմանիա եւ խորհրդակցութիւն մը ունեցած՝ Նախագահ Իւլպրիխտի հետ, որ միաժամանակ ընդհանուր քարտուղարն է Գերմանիոյ համայնավար կուսակցութեան :

ՕՐՈՒԱՆ ՇԱՐԺՈՒՄԻՆ ՀԵՏ

ՌՈՒԲԼԻՆ, ՏՈԼԱՐԸ ԵՒ ԱՐԱԲՆԵՐԸ

ԽՄԲ.— Նիւ Եորք Հերալտի թղթակիցը, Ճօ Ալէքս Մորիս, գրած է հետեւեալ շահեկան յօդուածը, զոր կը թարգմանենք ամբողջութեամբ :

Միջին Արեւելքի տիրապետութեան համար մղուած պաղ պատերազմը առաջ կը տարուի Յորդանանի ու անոր դրացի Սուրիոյ մէջ: Ռազմագիտական եւ քաղաքագիտական նշանակութեամբ ... [illegible] եւ քաղաքականապէս աշխարհի համար հետաքրքրական ... [illegible]

Միջին Արեւելքի տիրապետութեան համար մղուած պաղ պատերազմը առաջ կը տարուի Յորդանանի ու անոր դրացի Սուրիոյ մէջ: Ռազմագիտական եւ քաղաքագիտական հակառակ կողմն հաւանական է որ ճշդուի այս երկիրներուն մէջ շարունակուող պայքարին վերջաւորութեան, ուր եւ, ըլլա՛յ Մ. Նահանգները, ըլլա՛յ Խ. Միութիւնը ոգի ի բոին կը պաշտպանեն գոյութիւն ունեցող վարչակարգերը:

Յարգ, կարելի է ըսել որ կէտերու առաւելութիւնը Ռուսերուն կողմն է, մասամբ որովհետեւ այս վերջիններու Միջին Արեւելեան կրօնքի քաղաքականութիւնը մեծ հմայք կը վայելէ անմեղ Արաբներուն մօտ, բայց մանաւանդ որովհետեւ Մ. Նահանգները կը վարանին նուազագոյնէն քիչ մը աւելի տնտեսական ու զինուորական օժանդակութիւն հասցնելու բարեկամ կառավարութեանց, առոր հետեւանքով, ո՛չ միայն նոր դաշնակիցներ չեն կրնար ճարել երկրագունդի այս մասին մէջ, այլ նաեւ որոշ պաղութիւն մը կը յառաջացնեն արդէն իսկ Մ. Նահանգներու կառքին լծուած պետութիւններու արտին մէջ:

×

Այս պաղ պատերազմին հակասութիւններուն ամէնէն ցայտուն օրինակները կը հանդիսանան Սուրիան եւ Յորդանանը: Ռուսերը Սուրիան զինեցին մինչեւ ատամներուն ծայրը, յաճախորդ դառնալով սուրիական յաւելեալ բերքին, զոր արեւմտեան շուկաները չէին կրնար գնել՝ ամերիկեան յաւելեալ արտադրութեանց տրմբինկի գիներուն պատճառով: Միւս կողմէ, Ռուսերը Սուրիոյ առաջարկեցին փոխանակութեան մը հիման վրայ դրըուած տնտեսական բարգաւաճման ծրագիր մը, որ գոնէ արտաքնապէս շատ աւելի հրապուրիչ ու շահաբեր կը նկատուի քան ամերիկեան Զորրորդ Կէտի (Փոյնթ Ֆոր) եւ Համաշխարհային Դրամատան տնտեսական օգնութեան ծրագիրները:

Անդին, Յորդանանի մէջ, ամերիկեան կառավարութիւնը թէեւ քսան միլիոն տոլարի օգնութիւն մը յանձն առած է մինչեւ 1958 Յունիս 30, բանակին կազմակերպութեան համար որոշուած 10 միլիոն տոլարին առընթեր, բայց ոչ մէկ հաւաստիք տուած է տարեկան առնուազն երեսուն միլիոն տոլարի պէտք ունեցող Յորդանանին, որ այս օգնութիւնը տեւական պիտի ըլլայ: Իսկ Զորրորդ Կէտի օգնութեան ծրագիրը, որ Յորդանանի մէջ գործադրուիլ սկսած է վեց ամիսէ ի վեր, անբաւական է: Յորդանան Զորրորդ Կէտէն կը պահանջէ 15 միլիոն տոլար եւս, սակայն Ամերիկացի պատասխանատու շրջանակներու համաձայն այդ գումարը 11 միլիոնը պիտի չանցնի՝ լաւագոյն պարագային:

Մինչդեռ եթէ սուրիական եօթնամեայ տնտեսական ծրագիրը առանց արգելքի իրագործուի, տարեկան 25 միլիոն տոլարի գումար մը ստացած պիտի ըլլան Ռուսերէն՝ որպէս թէքնիք օժանդակութիւն: Այս թիւը սուրիական տնտեսական բարգաւաճման պիւտճէին մէկ երրորդը կը ներկայացնէ. Սուրիացիները կը յուսան մնացեալ երկու երրորդը իրենց միջոցներով ապահովել: Շատ մը Սուրիացիներ կը կասկածին թէ կառավարութիւնը պիտի կարենայ տարեկան յիսուն միլիոն տոլար գոյացնել. սակայն համոզուած են թէ Ռուսերը պիտի չթերանան իրենց յանձնառութեանց մէջ, փաստելու համար թէ Խ. Միութիւնը անշահախնդիր կերպով օգնելու պատրաստ է Միջին Արեւելեան երկիրներուն:

×

Ասոր որպէս հակասութիւն, Յորդանանի վերելքը եւ տնտեսական կազմակերպութիւնը հետեւողական ծրագրի մը կապուած չեն, մասամբ՝ որովհետեւ եզերին նիւթական պայմանները շատ համեստ են, բայց առաւելապէս որովհետեւ Ամերիկան իր օգնութիւնը կաթիլ-կաթիլ կը հայթէ:

Մանաւանդ նկատուած է, որ Սուրիոյ մէջ խորհրդային օգնութեան ու Յորդանանի մէջ ամերիկեան օգնութեան այս բաղդատականը միայն տնտեսական ու նիւթական մարզին մէջ պահեցինք, որովհետեւ Միջին Արեւելքի ժողովուրդներն ու կառավարութիւնները ամերիկեան ու խորհրդային մրցակցութեան այս երեւոյթով է որ առաւելապէս շահագրգռուած են: Թուրքիայէն մինչեւ Փաքիստան երկիր մը չկայ, որ իր բարգաւաճման ծրագիրներուն համար նիւթական արտաքին օժանդակութեան կարիք չունենայ: Դրամը միշտ գերակշիռ արժէք ունեցած է Միջին Արեւելքի մէջ, եւ տակաւին կը շարունակէ ունենալ:

Ահա թէ ինչու բոլոր աչքերը յառած կը մնան Դամասկոսի եւ Ամմանի վրայ, հակառակ անոր որ արաբական աշխարհի քաղաքական ու քարոզչական կեդրոնը կը շարունակէ մնալ Գահիրէն:

Ռուսերը, հակառակ Եգիպտոսի հանդէպ կատարած իրենց սիրոյ արտայայտութիւններուն, շատ աւելի խնամք կը տանին Սուրիոյ, եւ այս՝ բազմաթիւ պատճառներով: Պատճառներէն գլխաւորը այն է, որ նախագահ Նասր զօրաւոր անհատականութիւն մըն է եւ անդառնալիօրէն՝ հակահամայնավար. Եգիպտոսի համայնավարները կը պահէ խիստ հսկողութեան ներքեւ ու կ'ըսուի թէ մեծապէս մտահոգ է ռուսեւսուրիական մտերմութեան հետեւանքներուն մասին:

Մինչդեռ Սուրիոյ մէջ Նասր մը չկայ եւ երկիրը կը գտնուի զինուորականներու եւ քաղաքագէտներու խմբակի մը կառավարութեան ներքեւ. բոլորն ալ իրենց օրինակը կ'ուզեն առնել Նասրէն, սակայն անոր անհատականութիւնը ունեցող մարդ չկայ մէջերնին: Այս խմբակին անդամներուն տեսակէտները կը տարբերին ռուսեւսուրիական յարաճուն մտերմութեան մասին, եւ ճիշդ այս կէտին մէջ է որ Ռուսերը կ'ուզեն իրենց բախտը փնտռել:

Քաղաքական տեսակէտէն, Սուրիան սիրաշահելու քաղաքականութեան սկիզբը կուգայ այն օրէն երբ Խ. Միութիւն կոնակ դարձուց Իսրայէլի ու հանդիսացաւ պաղեստինցի գաղթականներու պաշտպան ախոյեանը. հարց մը, որ շատ մօտէն կը հետաքրքրէ արաբական բոլոր երկիրները եւ կը ներկայանայ որպէս Միջին Արեւելքի ամէնէն հրատապ խնդիրներէն մին: Միւս կողմէ, Ռուսերու «հակա-գաղթարական» քարոզչութիւնը, շատ հետաքրքրական առեւտրական համաձայնութիւններու եւ զինուորական օգնութեանց առընթեր, արաբական երկիրներու մէջ այն տպաւորութիւնը կը ձգէ թէ համայնավարութիւնը անմեղ սկզբունք մըն է, իսկ խորհրդային գաղթատիրութիւն ըսուած բանը գոյութիւն չունի:

Միեւնոյն ժամանակ, Արեւմտեան երկիրներն ալ իրենց բոլոր կարելին ըրին բարեկամ մնացած Արաբներու թշնամութիւնն ու հակառակութիւնը շահելու համար: Մ. Նահանգները ձախորդ կերպով կ'ուզեն պահել թէ՛ Իսրայէլի եւ թէ՛ Արաբական աշխարհի բարեկամութիւնը. իսկ անգլեւֆրանսական յարձակումը Սուէզի վրայ, կրնար դառնալ բաժակը յորդեցնող վերջին կաթիլը. սակայն այդպէս չեղաւ. Սուէզի դէպքէն քանի մը ամիս վերջ Միջին արեւելեան երկիրներու մեծ մասը ոգեւորութեամբ ընդառաջ գացին Այզընհաուըրի Վարդապետութեան դիմակին տակ ծածկուած տոլարի կանչին:

Աշխարհի ոչ մէկ կողմը դրամը այնքան արժէք կը ներկայացնէ, որքան Միջին Արեւելքի մէջ: Դրամով է որ ամբոխները ոտքի կ'ելլեն այնտեղ, կուռ բեմբասացներ կը ճարուին, մամուլը կը գնուի: Այնքան ատեն որ Սէուտական դրամը կանգնած էր Եգիպտոսի ու Յորդանանի պաղեստինցի գաղթականներուն ետին, գաղթականները կը տիրապետէին քաղաքական կեանքին: Հիմա, որ Սէուտական Արաբիոյ ու բանակին ետին կանգնած է ամերիկեան դրամը, գաղթականները (գոնէ առժամաբար) հանդարտած են:

Հակառակ արեւմտեան պետութեանց բոլոր սխալներուն, Միջին Արեւելքը տակաւին խորհրդայնացած չէ: Բայց եթէ Մ. Նահանգները կորսնցնեն Սուրիոյ ու Յորդանանի մէջ պաղ պատերազմը, որ անհաւանական չէ եթէ Ուաշինկթընի մէջ վերաքննութեան չենթարկուի Յորդանանի տեւական օժանդակութեան հարցը, այն ժամանակ Ռուսերը շահած պիտի ըլլան ամբողջ Միջին Արեւելքի վերջնական տիրապետութեան համար մղուած պայքարին առաջին բաունտը: Միջին Արեւելեան շատ մը երկիրներ ուշի ուշով եւ թերեւս ալ նախանձով կը նային Սուրիոյ. կը նային նաեւ դէպի Ուաշինկթըն, տեսնելու համար թէ «Ընքըլ Սէմ» պիտի բարձրացնէ՞ աճուրդը:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԴԷՄՔԵՐ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԵՒՈՒՄԵԱՆ

(Բ. եւ վերջին մաս)

Ըսինք թէ Սեւումեան եղած է նաեւ տաղանդաւոր ու անզուգական մեկնարկող մը:

Արդարեւ, բազմաթիւ են եղած իր այն դերերը, որոնց մէջ մրցակից չէ ունեցած մեծանուն արուեստագէտը:

Կովկասէն մինչեւ Պոլիս, Յովհաննէս Սեւումեան հռչակի տիրացած է: Իր խաղարկէտ դերերը Սեւումեան կը պատկերացնէր միշտ այլազան, հեռու միօրինակութենէ:

Պոլսոյ մէջ, 1914ին, կէօթէի Ֆաուստին մէջ Սեւումեանի մարմնաւորած Մեֆիստոֆէլին մասին խօսելով, ահա թէ ի՞նչ կը գրէ Մերուժան Պարսամեան իր «Ծանթ» գրական եւ գեղարուեստական հանդէսին մէջ (15 Ապրիլ 1914).—

«...Սեւումեան եղաւ երկրաւոր Մեֆիստոֆէլ մը, ներկայացնելով Սատանան, իր ամէնէն նուրբ չարութեան եւ գիւային հոգեբանութեան մէջ: Սեւումեան տաղանդաւոր դերասան մըն է: Բեմին գիտութեան ծանօթ է կատարելապէս: Կը մտնէ իր ներկայացուցած տիպարներուն մորթին մէջ: Այսպէս «Հին Աստուածներու» վանահայրը եղող Սեւումեանը՝ Մեֆիստոֆէլը ներկայացնող Սեւումեանը չէ: Եւ այսպէս, ամէն խաղերու համար...»:

Վանահայր (Հին Աստուածներ), Կրասման (Թագաւորը), Ուրիէլ (Ուրիէլ Ակոստա), Ֆլորիս (Անյայտ կինը) եւ մանաւանդ Յո՞ Երթաս մէջ Պետրոնիուսի դերը կը մնան կոթողային գործերը մեծանուն արուեստագէտին:

Մինչեւ այսօր տակաւին կը հնչեն անուշ մեղեդիի մը նման.—

«Ողջո՜յն քեզ, աստուածային Դերսետես, ինչպէ՞ս են քու այն խոցերը, որ դու ստացար Դրոյայում, եւ ի՞նչ է անում այժմ Ողիսեսը՝ Եղիսեան դաշտերում...»:

«Հռովմայեցինե՜ր, քաղաքացինե՜ր»:

ՅՈՒՇԵՐ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԱՍԻՆ

(1902 — 1906 Թ. Թ.)

———o———

Այդ բակի արեւելեան անկիւնում կար մի երկյարկանի, պատշգամով համեստ բնակարան, ծաղկապարտէզով: Այդտեղ էր ապրում Կոմիտաս վարդապետը: Միաբաններից ոչ ոք այդպէս մեկուսացած առանձնաբնակարան չունէր: Խրիմեան Հայրիկի յատուկ հոգատարութեան հետեւանքով, Կոմիտաս վարդապետին տրուած էին բոլոր հնարաւորութիւնները աշխատելու համար: Բնակարանն ու պարտէզը չէին երեւում գետնի վրայից: Բարձր պարիսպների ամփոփ գրկում, հեռու էր դրսի աղմուկից եւ հասարակութեան հայեացքից:

Բնակարանը բաղկացած էր վարի եւ վերի սենեակներից: Վարինը ցախատունն էր եւ սպասաւորի կայարանը, իսկ վերեւում ապրում ու աշխատում էր ինքը: Վերեւի սենեակը բաղկացած էր ննջարանից ու աշխատանքի սենեակից: Այստեղ էր դրուած պզդային բարերար Ման...աչեանից նուէր ստացած դաշնամուրը: ...ակի կահաւորութիւնը համեստ, պարզ ու վերին աստիճանի մաքուր էր: Պատերից կախուած դիմանկարներից յիշում եմ Բեթհովէնի, Շոպէնի, Չայկովսկու, Բախի, Եկմալեանի, Յ. Թումանեանի, Խ. Աբովեանի, Մեսրոպ Մաշտոցի ու Խրիմեան Հայրիկի դիմանկարները: Գրասեղանի վրայ դրուած լուսանկարներից յիշում եմ իրեն՝ Կոմիտասի եւ դերասան Աբելեանի լուսանկարները միասին, Արշակ Չօպանեանի հետ էլ առանձին՝ նկարուած արտասահմանում: Կային եւ ուրիշ լուսանկարներ: Բացի լուսանկարներից, գրասեղանի վրայ կար մի ալպոմ, որի մէջ զետեղուած էին հայկական զանազան զարդերի տիպիկ տարազով կանանց, աղջկանց, տղամարդկանց նկարներ եւ Գ. Բաշինջաղեանի Անիի աւերակների տեսարաններից բացիկներ: Գրքերի յատուկ պահարանի փոխարէն, յիշում եմ կարմիր փայտից դրակալը, որի աստիճաններում դարսուած էին բաւական գիրքեր եւ երաժշտական տետրեր, մատեաններ: Աշխատանքի սենեակը միաժամանակ ծառայում էր որպէս ընդունարան: Այդտեղ էլ նախաճաշում եւ թէյում էր Հայր Կոմիտասը:

Բակը ներկայացնում էր իրենից արեւելեան հեքեաթների մէջ նկարագրուած մի չնաշխարհիկ պարտէզ – ծաղկանոց: Մէջտեղը սրբատաշ քարերով սալայատակած մի աւազան, ալրիւրաջրի շատրուանով, որի մէջ խաղում էին փոքրիկ ձկնիկներ: Աւազանի չորս բոլորը բազմաւէտ, բազմերանգ ծաղիկների թմբիկներ ու մարգեր, իսկ պարտէզի արեւմտեան ծայրում՝ երկու նռնենի, երկու ծիրանի եւ մէկ տանձենի ծառեր, Կոմիտասի ձեռքով տնկուած: Հիւսիսային ու հարաւային կողմերում վարդաթփերի շարքերն էին, իսկ արեւելեան մասում, ուր բնակարանն էր, նրա դիմացը, պարտէզի ծայրում, մանրաթերթիկ հոտաւէտ վարդաթփերով շրջապատուած մի տաղաւար, ուր դրուած էր մի փայտէ թախտ մաքուր սաւանով ծածկած, թախտի վրայ մի փոքրիկ գլխաբարձ, դիմացն էլ մի փոքրիկ գրասեղան: Տարուայ տաք եղանակներին Կոմիտաս վարդապետը այստեղ էր անցկացնում օրուայ մեծ մասը: Պարտէզ-ծաղկանոցի կեդրոնական տարածութիւնը բռնում էին բազմապիսի ծաղիկները. մախմուրաթերթ արքայական վարդը, պարսկական նարգիզը, եգիպտական շուշանը, հնդկական կակտուսը, հայկական մեխակը եւ այլ ծաղիկներ զարդարում էին պարտէզը եւ զարձնում մի հրմայիչ բուրաստան: Եւ այդ պատահական չէր. Կոմիտասը սիրում էր ծառ ու ծաղկունքը, նրա հոգին ու սիրտը խօսում էին բնութեան հրաշալիքների հետ. մայրական հոգատարութեամբ նա խնամում, գուրգուրում էր ամէն մի ծաղիկ իր պարտէզում: Ամէն մի ծաղիկ մի հոգի էր նրա համար, ամէն ծաղկի մէջ իմաստ էր գտնում նա: Երգ ու ծաղիկ — ահա նրա ստեղծագործութեան էութիւնը:

×

Ճեմարանի երկրորդ դասարանումն ենք: Դասի զանգը տուել են եւ վերակացու Հ. Գրիգորեանը շտապեցնում է աշակերտներին դասարան գնալու: Մեր դասարանում երաժշտութեան – երգեցողութեան դաս է. անհամբեր սպասում ենք դասատուին: Մտնում է Կոմիտաս վարդապետը, իրեն յատուկ լրջութեամբ, աշխոյժ քայլերով մօտենում է ամբիոնին եւ մի պահ հայեացք գցելով ոտքի ելած դասարանի վրայ, մեղմ ձայնով ասում է.

— Նստէք:

Անշշուկ նստում ենք բոլորս: Կոմիտաս վարդապետը բաց է անում մատեանը ու ...տանից ստուգում կատարելու կանչում է:

— Տէր Գրիգորեան Սուրէն: Ի՞նչ էք պատրաստել այսօրուայ դասի համար:

— Մոկաց Միրզէն» երգել ձայնանիշ...րով, — պատասխանում է Սուրէնը ոտքի կանգնելով:

— Հապա երգիր:

Սուրէնը, որ երաժշտութեան մէջ ուժեղ աշակերտներից էր, համարձակ ու անսխալ երգում է դասը:

— Շատ ապրես, նստիր, — ասում է նա, եւ գնահատական նշանակում:

Ս. ԲԱՂԻՐԵԱՆ

(3 Շար.)

«Այրէ՛ր, սպանէ՛ր, ջարդէ՛ր, խողխողէ՛ր, բայց մի՛ գրէ՛ր Կեսար, այս թող լինի քեզ Արքիդեր Ելէկանդրիայի վերջին խրատը ...»:

Երկու հազար տարի առաջ, Պետրոնիուս՝ Հռովմայեցի բանաստեղծ - տրիբունը այսպէս կ'ըսէր արիւն կզակ Ներոնին:

Պետրոնիուս «Իշխան վայելչութեան» մակդիրը ունէր: Հռովմայեցիները այդպէս կը կոչէին զինքը:

Երկու հազար տարիներ ետք, հայ բեմին վրայ անզուգական Յովհաննէս Սեւումեանը կը վերակենդանացնէր Հռովմայեցի տրիբունին տիպարը, դառնալով իր կարգին հայ բեմերու «իշխան վայելչութեան»ը:

×

Առաջին Աշխարհամարտի զինադադարին, Յովհաննէս Սեւումեան մասնաւոր պաշտօնով եկաւ Պոլիս:

Հայաստանի նորահաստատ հանրապետութիւնը պաշտօն յանձնած էր անոր երթալ Պոլիս եւ հոն թատերական նոր կադրեր պատրաստելու աշխատանքին լծուիլ:

Եւ իրաւ, մեծանուն արուեստագէտը այդ ուղղութեամբ մեծ աշխատանք թափեց: Սարքեց հրապարակային դասախօսութիւններ, որոնց ընթացքին լայն բացատրութիւններ տուաւ ճշմարիտ թատերական արուեստի մասին, ակնրախ օրինակներով զանազանելով գռեհիկն ու գեղարուեստականը:

Այս առթիւ, խիստ յատկանշական են հետեւեալ տողերը, զորս այդ շրջանին, Փրթի - Շանի թատրոնին մէջ խօսած իր մէկ ճառէն կ'ամփոփեմ.—

«... Շատ յաճախ չտարբերելով գեղարուեստական - էսթէթիքական ուժեղ տպաւորութիւնը գռեհիկ, կոպիտ տպաւորութիւններէն, կը սովորինք ականատես ըլլալ այնպիսի տեսարաններու, որոնք հանդիսականի էսթէթիքական զգացմունքները միայն կարող են վիրաւորել: Եթէ բեմի վրայ զոմէշ մը մորթեն, համոզուած եմ որ շատ չատերի վրայ այդ բանը կարող է մի սարսափելի տպաւորութիւն գործել, շատերը, նոյնիսկ, կարող են ուշաթափուել: Բայց ի՞նչ, միթէ ա՞յդ կ'ըլլայ գեղարուեստ: Ինչո՞ւ մորթել խեղճ զոմէշը: Ես դերասաններ եմ տեսել, նոյնիսկ առաջնակարգ, անուն հանած դերասաններ, որոնք բեմի վրայ թունաւորման — մահուան տեսարաններ ներկայացնելիս այնպէս էն ինկեր, երկարել, նորից կուչ եկել, խռխռացել, կրկին երկարել, նորից ոլորուել, գետինը ճանկռտել, յանկարծ ոտքի կանգնել, գլուխը թափահարել եւ ամբողջ հասակով չրխկացել, յատակին փռուել ու վերջապէս մեռե՛լ...»:

Իր նոր պաշտօնին կիրարկման ձեռնարկած է Սեւումեան, ընդգրկելով իր այս առողջ տեսակէտներու գործադրութեան եղանակը:

Առաջին ակնարկով իսկ Յովհաննէս Սեւումեան Պոլսոյ թատերական շրջանակներուն մէջ նկատած է ուժեր եւ անոնցմով աշխատելով երեւան հանած է իսկական արժէքներ:

Անոնցմէ մէկն է Հրաչեայ Ներսիսեանը, որ այսօր Հայաստանի մէջ «Սունդուկեան» պետական թատրոնի առաջնակարգ դերասանն է եւ արդարօրէն կը կրէ ժողովրդային վաստակաւոր դերասանի պատուաբեր տիտղոսը:

Արդեօք Հրաչեայ Ներսիսեան, երբ այսօր իր լամբակին վրայ արդարհպարտութեամբ մը կը կրէ պատուանշան մը, երբ եւ իցէ կ'անդրադառնա՞յ թէ այդ յաջողութիւնը ձեռք բերած է ո՛չ միայն շնորհիւ իր անժխտելի տաղանդին, այլ եւ նաեւ շնորհիւ այն Մեծ Մարդուն որ կը կոչուէր Յովհաննէս Սեւումեան եւ որ առաջին մէկ օրէն առաջնորդած է իր դողդոջ քայլերը ...

Միայն այսքա՞ն: Տակաւին կայ մեր օրերու անզուգական դերասանը՝ Վահրամ Փափազեան, որ նոյնպէս մեծապէ՛ս օգտուած է զմայլելի դերուսոյցին խորհուրդներէն, երբ սկսնակ ու երիտասարդ դերասան, առաջին անգամ ոտքը դրած է Թիֆլիզի թատերական շրջանակներէն ներս:

Աւելորդ է ըսել թէ, Վահրամ Փափազեան այսօր բոլորովին մոռցած է այդ պարագան, վասն զի իր «Յետադարձ Ակնարկ» հատորին մէջ երբ կը խօսի Սեւումեանի մասին, այդ նկատմամբ բափինքեան լռութիւն մը կը պահէ...

×

Դժբախտաբար Յովհաննէս Սեւումեանի գործը կիսատ մնաց:

Զարաչուք հիւանդութիւն մը զգետնեց զինքը: Իր փխրուն ու պաղպուն առողջութիւնը չկրցաւ տոկալ այն մտային եւ ֆիզիքական սպառիչ աշխատանքին, որուն լծուած էր անզուգական արուեստագէտը:

Երկար ատեն հիւանդ պառկեցաւ Մեծ Կղզիի մէջ:

Ո՛չ մէկ բան խնայուեցաւ զինքը փրկելու համար անողոք ցաւին ճիրաններէն:

Սակայն, անօգո՜ւտ ...

Ու չար օր մը, հայ բեմերու «Իշխան Վայելչութեան»ը, հայ թատերական արուեստի անխոնջ տեսաբանը փակեց իր աչքերը հայրենիքէն հեռու, օտար հողի վրայ:

Սակայն երկար ժամանակ օտար հողը չծածկեց իր հէք մարմինը:

Որովհետեւ, ողբացեալ արուեստագէտը բախտը ունեցած էր իր կեանքը կապելու եւ իրեն կողակից ընտրելու արժանաւոր հայուհի մը՝ Օր. Լիւսի Խանտանեան, որ շուտով դարձաւ հայ բեմերու շնորհալի եւ արժէքաւոր դերասանուհին՝ Լիւսի Սեւումեան:

Տիկին Լիւսի Սեւումեան իր մեծանուն ամուսնոյն աճիւնները փոխադրեց Թիֆլիզ, ուր այժմ կը հանգչի Խանտանեաններու ընտանեկան դամբարանին մէջ:

Եւ իր յաւիտենական քունին մէջ վըստահ եմ որ անոր հոգին կը խայտայ հիմա տեսնելով որ իր երազած թատրոնը գոյութիւն ունի այսօր այն հողին վրայ, ուրտեղ իր ամբողջ կեանքի ընթացքին՝ այդ նպատակին համար աշխատեցաւ ու տքնեցաւ Յովհաննէս Սեւումեան:

ԱՐՏԱՇԷՍ ԶՄԲԷԹԵԱՆ

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ

ՍԵԲԱՍՏԻՈՅ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ՄՈՒՐԱՏ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՑԻ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԸ

Իսիի Խրիմեան սրահին մէջ, Նոյեմբեր 24ին, տեղի ունեցաւ Սեբաստիոյ Մուրատ Ուսումնասիրացի ընդհ. ժողովը, ի ներկայութեան անդամներու մեծամասնութեան:

Միութեան ատենապետ Արմենակ Միքայէլեան քանի մը խօսքով բացուած յայտարարեց ժողովը եւ խօսք տուաւ ընդհ. քարտուղար հայրենակից Յակոբեանին որ ամփոփ կերպով տուաւ կեդր. վարչութեան ութ տարուան աշխատանքին նիւթական եւ բարոյական համարատուութիւնը ու մասնաճիւղերու տարած գովելի գործունէութիւնը:

Ծանրացաւ Մարսիլիոյ, Տէսինի եւ Ավինեոնի մասնաճիւղերուն խիստ արդիւնաւէտ գործունէութեան վրայ, մասնաւորաբար Ավինեոն՝ որ հակառակ վերջերս կազմուած ըլլալուն իր անմիջական գործունէութեամբ ունեցաւ հայերէնի դասընթացք մը, այսպէսով ընդառաջ երթալով մեր ընդհանուր նպատակին, սերունդի փրկութեան գործին:

Պ. Յակոբեան խօսեցաւ նաեւ Ամերիկայի Սեբաստիացիներու Վերաշինաց Միութեան մասին, յիշելով անոնց բերած օժանդակութիւնը 1953էն սկսեալ տարեկան 250 տոլարի գումար մը, որ թէեւ 1955ին առժամապէս դադրած էր, սակայն յոյս յայտնեց որ կեդր. վարչութեան կրկնակի դիմումները անպատասխանի պիտի չմնան եւ աւելի կարեւոր գումար մը պիտի ստանան իրենց քոյր կազմակերպութենէն: Ընդհ. քարտուղարը իր խօսքը վերջացուց խանդավառ եւ յուսալից խօսքերով Միութեան ապագային մասին: Կոչ ընելով լայն չափով օգնել անոր ազգօգուտ գործին:

Հայրենակից Միրիճան Շիրվանեան կարդաց Պատգմ. ժողովի ատենագրութիւնը, յիշելով անոր կարեւոր մասերը միութեան ինը տարուան գործունէութեան վերաբերեալ:

Մարսիլիոյ մասնաճիւղը ունեցած է ընդհ. մուտք 740·021 ֆրանք, ելք՝ 696·325, որուն 435·000ը ղրկած է կեդր. վարչութեան: Տէսինի մասնաճիւղը, մինչեւ պատգամաւորական ժողով մուտքը ունեցած է 278·470 ֆրանք, ելքը 178214 ֆրանք, որմէ կեդր. վարչութեան ղրկուած է 140·000 ֆրանք:

Կեդր. վարչութեան ընդհանուր մուտքը եղած է իր կազմութեան թուականէն մինչեւ Պատգմ. ժողով 2·260·117 ֆրանք եւ ելք՝ 2·043·786 ֆրանք:

Այս գեղեցիկ արդիւնքը մեծ գոհունակութեամբ արժանացաւ ջերմ ծափերու: Ընտրութեան անցնելէ առաջ հայրենակից Եզօ Մինասեան կարդաց իր պատրաստած գեղեցիկ մէկ ծրագիրը Միութեան յառաջիկայ գործունէութեան համար, զայն աւելի օգտաշատ եւ արդիւնաւոր դարձնելու համար:

Կեդր. վարչութեան ընտրութեան անցնելով հետեւեալ հայրենակիցները ձայներու մեծամասնութեամբ ընտրուեցան, Յակոբ Յակոբեան, Միրիճան Շիրվանեան, Յարութիւն Շիրվանեան, Եզօ Մինասեան, Նշան Հայթայեան, Նշան Դարբինեան, Յովհ. Ղազարեան, Լութֆիկ Քաշըքէմանեան, Տիկին Յարութիւնեան եւ Տիկին Փէշտիմալճեան:

Ժողովականները շնորհաւորեցին նորընտիր վարչութիւնը, յաջողութիւն մաղթելով անոնց յառաջիկայ գործունէութեան համար:

ՄԻՐԻՃԱՆ ՇԻՐՎԱՆԵԱՆ

ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ

Գ. ԲԱՐԱՂԱՄԵԱՆԻ մահուան քառասունքին առթիւ հոգեհանգիստ կատարուած է Աթէնքի Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ: Պատարագէն վերջ Առաջնորդական Տեղապահը վեր առած է հանգուցեալին ազգանուէր գործունէութիւնը՝ յունահայ գաղութին մէջ:

ԸՆԿ. Ա. ԳԱՓԱՔԵԱՆ որ Պէյրութէն Ամերիկա գացած էր, Պոսթընէն Ֆրէզնօ անցնելով այցելած է «Ասպարէզ»ի խմբագրատունը եւ տուած՝ շարք մը բանախօսութիւններ:

Հ. Յ. Դ. «Օր»ուան տօնակատարութիւնը տեղի ունեցած է Ֆիքսի (Յունաստան) մէջ, խուռներամ բազմութեան մը ներկայութեան եւ խանդավառ մթնոլորտի մէջ: Նախագահած է ընկեր Զ. Զաքարեան. խօսած է ընկեր Գ. Լազեան:

ԹԵՀՐԱՆԻ մէջ Դեկտեմբեր մէկին տեղի պիտի ունենայ Թեհրանի Հայ Կանանց Բարեգործական Ընկերութեան յիսնամեայ գործունէութեան յոբելեանը՝ մասնակցութեամբ գաղութին կրթական թէ մշակութային բոլոր մարմիններուն:

ՋԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Առջի իրիկուն Փարիզի ամերիկեան դեսպանատան առջեւ ցոյցեր տեղի ունեցան աջակողմեան խմբակցութեանց կողմէ: Ցուցարարները մօտ ժամ մը Քոնքորտի հրապարակին վրայ կռիւներ ստեղծեցին Ամերիկայի եւ Անգլիոյ դէմ ալ պոռալով: Ապա փորձեցին յարձակիլ «Էքսփրէս»ի (մենտեսեան) խմբագրատան վրայ:

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (63)

ԿԱՅԾԵՐ

ԺԹ.

ԵՐԱԶ

Ինչպէս մի թեթեւ փետուր ես տարուում էի պղտոր հոսանքի հետ ... կատաղի ալիքները շատ անգամ խորասոյզ էին անում ինձ դէպի յատակը, շատ անգամ դուրս հանում ... կրկին տեսնում էի սիրելի պատկերները սարսափած եւ գունաթափ երեսներով ...: Աշխատում էի ափին մօտենալ, հնարք չէր լինում, իմ թեւքերի ուժը հետզհետէ թուլանում էր, եւ ես խեղդուելու մօտ էի ...: Ես կանչում էի Կարոյին, Ասլանին եւ Սաքոյին, որ նրանք ազատեն ինձ. բայց երբ աչքս դարձրի դէպի հոսանքի ընթացքը, տեսայ, նրանք էլ տարուբերւում էին ալիքների մէջ ...:

Յանկարծ յայտնուեցան երկու կերպարանքներ, որոնք ձեռքները մեկնած, աշխատում էին ազատել ինձ, նրանցից մէկը տխուր էր դէմքով եւ աչքերումը արտասուք կար, միւսն ուրախ եւ պայծառ էր երեսով եւ հրեղէն աչքեր ունէր: Ինձ երեւաց թէ նրանք երկու հրեշտակներ էին, որոնք իջան երկնքից. իսկ յետոյ ճանաչեցի՝ մէկը Սօնան էր, միւսը՝ Մարօն, յետոյ, երբ ես թաղուեցայ ջրի տակ եւ միւս անգամ դուրս չեկայ ...:

Երբ ես զարթեցայ Կարօն կանգնած էր իմ մօտ.

— Դու հիւանդ ես, Ֆարհատ, ասաց նա խռոված կերպով: Քո երեսը մեռելի գոյն է ստացել, դու այնպէս սարսափելի բաներ էիր խօսում քնիդ մէջ ...:

Ես պատասխանեցի, թէ քունս անհանգիստ էր, եւ ես ոչ բոլորովին առողջ եմ զգում ինձ. գլուխս սաստիկ ցաւում է, անդամներս ջարդւում են, որպէս թէ ամբողջ մարմինս սանդի մէջ ծեծած լինէին:

Կարօն յայտնեց ինձ, թէ իրանք պէտք է գնան Բարթուղիմէոս առաքեալի վանքը «մի գործի» համար եւ կը վերադառնան միւս օրը երեկոյեան, եւ խորհուրդ տուեց ինձ մնալ ծերունի սրբազանի տանը, աւելացնելով թէ գիշերը տաղաւարից դուրս բացօթեայ քնելով, մրսած կը լինեմ, պատուիրեց տաք բան խմել եւ քրտնել, որով շուտով կ'անցնէր տկարութիւնը:

Երբ նրանք նստեցին ձիանքը, կամենում էին հեռանալ, Սաքօն մօտեցաւ ինձ, եւ խուլ ձայնով ասաց.

— Գնա տուն, բախտաւոր, գեղեցիկ Մարօն կը բժշկէ քեզ ...:

Ի.

ԱՇԽԱՏԱՆՔ ԵՒ ՀՈՂ

Արեւը նոր սկսեց ծագել:

Հասօն տագնապում չէր. տղերքը գնալուց յետոյ ես մենակ մնացի այնտեղ: Ի՞նչ անեմ, ո՞ւր գնամ: Գնամ տուն, հին բարեկամիս տունը, այնտեղ «Մարօն կը բժշկէ ինձ ...»: Ոչ, չեմ գնայ, Մարօն թող չտեսնէ, որ իմ առողջութիւնը վատ է, նա փափուկ սիրտ ունի, նա լաց կը լինի ...: Ոչ, գնամ մի փոքր ման գալու, գուցէ վաղորդեան օդը կը կազդուրէ ինձ:

Առաւօտեան ցօղը դեռ չէր բարձրացել խոտերից, եւ արեգակի առաջին ճառագայթները խաղալով մարգարտեայ կաթիլների հետ, արտափայլում էին ծիածանի գոյներով: Օդը տոգորուած փափուկ խոնաւութեամբ, հովացնում էր իմ բորբոքուած երեսը: Հեռաւոր լեռները դեռ պատած էին ճերմակ ու թափանցիկ մշուշով:

Իմ թուլացած անդամները բաւականին զուարթացան վաղորդեան հովութիւնից, բայց տակաւին սիրտս խռովութեան մէջ էր: Ես գնում էի լուռ եւ մտախոհ կերպով. ո՞ւր էի գնում, ինքս չէի իմանում, միայն մի բան ինձ քաշում էր հեռու մարդկային բնակութիւնից: Գիշերուայ երազն ամենեւին դուրս չէր գալիս իմ մտքից. նոյն զարհուրելի տեսարանները ներկայանում էին իմ երեւակայութեան մէջ: Ի՞նչ էր նշանակում այն սարսափելի հեղեղատը: Ի՞նչ էր նշանակում պղտոր ալիքների այնպէս փրփրելով, գոռալով, կատաղի հոսանքը, որ տանում էր իր հետ այնքան անբախտ զոհեր, որոնց թւում գտնւում էին եւ այն անձինքը, որոնք այնքան մօտ եւ սիրելի էին իմ սրտին ...: Վերջապէս ի՞նչ էր նշանակում Սօնայի եւ Մարոյի իմ օգնութեանը հասնելը. միթէ՞ նրանց ձեռքումն էր իմ փրկութիւնը, միթէ՞ նրանք կարողացան ազատել ինձ:— Ոչ, մինչեւ նրանց հասնելը, ես արդէն ջրի խորքումն էի, այն սառն եւ թաց գերեզմանի մէջ թաղուած ...:

Միթէ՞ մեր կեանքը մի այսպիսի երազ չէր ... միթէ՞ մեզ եւս իր հետ չէր տանում աշխարհային հոսանքը իր կատաղի ալեկոծութեան մէջ ...:

Ես գնում էի մի հովիտի միջով, ուր մշակուած դաշտերը խոստանում էին առատ հունձք. մի տեղ դեռ նոր էին վարում հողը, մի տեղ ցանում էին, միւս տեղ արածացնում էին ոչխարների հօտերը, մի խօսքով, որ կողմ եւ նայում էի, եռ էր գալիս աշխատութիւն, ամէն ինչ շարժողութեան մէջ էր, ամէն տեղ երեւում էր կեանք եւ գործունէութիւն: Այո, «ծոյլ չէ այդ ժողովուրդը ...» յիշեցի Կարոյի խօսքերը, եւ մի այդպիսի ժողովուրդը անբախտ է ...:

ՐԱՖՖԻ

(Շար.)

ՏՈՂԱԿՈՒՏԳԻՇ

ՏԱՐԵ ԱՐՎԻՆ Մարտիրոսի, Օր· Լիլի փոքրիկ Ջուլիէթին, Տիկ· Տիկին Թերզեան եւ Տիկին Գեղամ Մելքոնեան, Տիկին Շուշանիկ Ալեքսանեան, Տիկին Վարդուհի Ալեքսանեան, Տիկին Ռուբինա Ալեքսանեան, Տիկին Ռոզա Ալեքսանեան, Տիկին Հրանուշ Ալեքսանեան, Տիկին Ռոզա Ալեքսանեան, Տիկին Ռոզա Ալեքսանեան, Տիկին Ռոզա

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN

Rédaction - Administration : 32, Rue de Trévise, Paris 9e

Fondé en 1925 — Tél.: PRO. 86-60

R. C. Seine 57 A 2731 — C. C. P. PARIS 15069-82

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա եւ գաղութներ, տարեկան 3000 ֆր. վեցամս. 1600

Արտասահման՝ տարեկան 3500 ֆրանք : Հատը 12 ֆր.

ՇԱԲԱԹ 30 ՆՈՅԵՄԲԵՐ

SAMEDI 30 NOVEMBRE 1957

33ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8056 — 33e ANNEE — Fondateur : SCHAVARCH MISSAKIAN — ՆՈՐ ՇՐՋԱՆ, 13ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 3857

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԿՈՂՄՆ ԱՇԽԱՐՀԻ

Զինուոր պատերազմը, որ վերջերս դադրած ըլլալու երեւոյթն ունէր, սկըսած է կրկին բուռն հանգամանք առնել Մերձաւոր Արեւելքի մէջ :

Խորհրդային Միութեան վարչապետը Բուլկանին երկրորդ անգամ ըլլալով Նոյեմբեր 25ին նամակ մը ուղղեց Ատնան Մէնտերէսի, զգուշացնելու համար Թուրքերը, որ կրակի հետ չխաղան Սուրիոյ սահմանագլուխին վրայ :

Դամասկոսի կառավարութիւնը մէկ ամիս պայմանաժամ տուաւ Անգարայի վարիչներուն՝ ետ քաշելու համար ամխնեբէ ի վեր իր սահմանին վրայ համախմբուած Թուրք զինուորական ուժերը : Ո՛չ ոք կը հաւատայ Թուրքիոյ «խաղաղասիրական» հաւաստիքներուն, հակառակ Մէնտէրէսի 30 Սեպտեմբերի յուշագրին՝ իբրեւ պատասխան Բուլկանինի առաջին նամակին :

Միւս կողմէ Մոսկուայի Գերագոյն Խորհուրդի պաշտօնաթերթ «Իզվեստիա»ն ալ կը յարձակի Թէլ - Ավիվի կառավարութեան վրայ, ամբաստանելով զայն, որ արեւմուտքի դրամատիրական պետութիւնները Թուրքիոյ փոխարէն Իսրայէլը գործիք կ'ուզեն դարձնել՝ յարձակելու համար արաբական աշխարհին վրայ :

Այս հրատարակութեան յաջորդ օրն իսկ ծանր միջադէպեր պատահեցան Սուրիոյ եւ Իսրայէլի սահմանագլուխին վրայ : Պէն Կուրիոնի դահլիճը մտահոգութեան մատնուած է այս առթիւ, մանաւանդ որ միւս դրացիներուն մօտ ալ խլրտումներ կը նշմարուին :

Իր կարգին Յորդանան կը գանգատի Իսրայէլացիներէն, որ պարբերաբար սահմանագլխային ոտնձգութիւններ կը կատարեն :

Իսկ Իսրայէլ նոյն ամբաստանութիւնը կ'ուղղէ Յորդանանի դէմ :

Հրէական թերթ մը նոյնիսկ կը մատնանշէ, որ իրաքեան զօրագունդեր կը համախմբուին Յորդանանի սահմանագլուխին վրայ, պատրաստ ներս մտնելու՝ պաշտպանելու համար Հիւսէյին Թագաւորը :

Եգիպտոս կը շարունակէ իր յարձակումները այս վերջինին դէմ : Նոյնիսկ կ'ամբաստանէ Յորդանանի կառավարութիւնը, որ գաղտնի բանակցութիւններ կը վարէ Իսրայէլի հետ՝ արաբ գաղթականներու խնդիրը կարգադրելու համար :

Կարծողներ կան, որ այս ամբաստանութիւնը ջրելու կը ծառայեն Յորդանանի սահմանապահ զինուորներու ստեղծած փոքրիկ միջադէպերը Իսրայէլի հետ :

Այս վերջինը դիմած է Անգլիոյ, Ֆրանսայի եւ Մ. Նահանգներու դեսպաններուն, խնդրելով որ միջամտեն՝ Յորդանանի հետ իր վէճերը կարգադրելու համար :

Իսկ Սէուտի Արաբիոյ կառավարութիւնը կը յայտնէ, որ ինք առաջինը պիտի ըլլայ օգնութեան փութալու Յորդանանի, եթէ անիկա յարձակումի ենթարկուի Իսրայէլի կողմէ :

Վերջապէս Յորդանանի կառավարութիւնը դիմած է Միացեալ Ազգերու Կազմակերպութեան՝ խնդրելով իր պաշտօնէն հանել զօրավար Պայրըն Լիրին, որ Պաղեստինի զինադադարին վրայ հսկող «դիտող»ներու փոխ - նախագահն է :

ՄԱԿի ընդհանուր քարտուղար Համըրշէօլտ սոխղադաբար կը մեկնի Ամման՝ Յորդանանի կառավարութեան բողոքը քննելու համար : Այս առիթէն օգտուելով, անիկա պիտի այցելէ նաեւ Մերձաւոր Արեւելքի միւս մայրաքաղաքները, ուր պաղ պատերազմը տաքնալու նշաններ ցոյց կուտայ :

Իսրայէլի սահմանագլուխին յորդանանեան եւ սէուտեան պահակախումբերը հրաման ստացած են պատրաստ գտնուիլ ամէն պատահականութեան դէմ : Արձակուրդի արտօնութիւնները ջնջուած են :

Այս բոլոր երեւոյթները ցոյց կուտան թէ կացութիւնը շատ փայլուն չէ արեւելեան կողմն աշխարհի :

Ամէնէն յատկանշականն է Բուլկանինի նոր ազդարարութիւնը Թուրքիոյ : Կրեմլինի իշխանաւորը կը շեշտէ թէ «Խորհրդային Միութիւնը ո՛չ մէկ գաղտնի դաշնագիր կնքած է արաբական երկիրներէն որեւէ մէկուն հետ, մէջն ըլլալով Սուրիան, սակայն օգնած է եւ պիտի օգնէ Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկիրներուն՝ յանուն անկախութեան եւ ընդդէմ գաղթատիրութեան անոնց մղած պայքարին մէջ» :

Ու կ'աւելցնէ թէ «կը գնահատէ Թուրքիոյ բարեկամութիւնը», *սակայն ատոր սիրոյն չուզեր հրաժարիլ պաշտպանելէ արաբական երկիրները, որոնք անկախութեան կը ձգտին : Վերջացնելով, խորհրդային վարչապետը պատրաստակամութիւն կը յայտնէ* «բոլոր կարելիութիւնները օգտագործել՝ բարելաւելու համար թուրքեւխորհրդային յարաբերութիւնները» :

Սպառնալիքէն վերջ փաղաքշանք :

Բուլկանին Թող չզարմանայ, եթէ այս անգամ Մէնտէրէս աւելի յոխորտ լեզուով պատասխանէ իր նամակին :

ՀՐԱՆՏ - ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԱՏԼԱՆՏԵԱՆ ՈՒԽՏԻՆ ԺՈՂՈՎԸ ՊԻՏԻ ԳՈՒՄԱՐՈՒԻ

ՆԻՔՍԸՆ՝ ԱՅԶԸՆՀԱՈՒԸՐԻ ՓՈԽԱՆՈՐԴ

Ատլանտեան Ուխտին հերթական ժողովը, որ գումարուելու Փարիզի մէջ, որուն որ 15 երկիրներու կառավարութեանց ներկայացուցիչներուն ժողովը գումարուի առանց թուականի եւ վայրի փոփոխութեան, ինչպէս նախատեսուած էր :

Լրագրողի մը հարցումին պատասխանելով, կազմակերպութեան ընդհանուր քարտուղար Սփաք հաստատեց որ Դեկտեմբերի ժողովին պիտի մասնակցին կառավարութեանց ղեկավարները :

Նախագահ Այզընհաուըրի առողջական վիճակը սկսած է բարելաւուիլ : Եւ. օր եկեղեցի գացած է «Թէնխսկիվինկ Տէյ»ի առիթով : Մինչեւ իսկ, Սպիտակ Տունէն կը հասկցնեն, թէ Նախագահը կրնայ ներկայ ըլլալ նաեւ Փարիզի ժողովին, թէեւ այս ուղղութեամբ տակաւին յստակ որոշում մը չէ տրուած : Ամէն պարագայի մէջ Ատլանտեան Ուխտի ժողովին ամերիկեան պատուիրակութիւնը պիտի ղեկավարէ փոխ - նախագահ Նիքսըն :

Ժողովին պատրաստութիւնները սկսած են արդէն : Սփաքի ներկայութեամբ գումարուած հերթական նիստէն ետք, հրապարակուեցաւ պաշտօնական զեկոյց մը, որ յայտնելէ ետք թէ խոր ցաւով իմացուած է Նախագահ Այզընհաուըրի հիւանդութիւնը, Խորհուրդը որոշեց ժողովին թուականը անփոփոխ պահել : Լաւագոյն մաղթանքներ կ'ընէ Նախագահին ապաքինման համար եւ գոհունակութեամբ կը դիմաւորէ Նիքսընի պատուիրակութիւնը :

Խ. Միութենէն, Խրուշչեւ, Վորոշիլով եւ Բուլկանին հեռագիրներ ղրկած են Այզընհաուըրի, արագ ապաքինում մաղթելով անոր :

Միւս կողմէ, Եւրոպական Միութեան զինուորական յանձնախումբը ժողով մը գումարեց, իր կարգին քննելու համար զէնքերու արտադրութիւնը հասարակաց հսկողութեան տակ դնելու հարցը : Յանձնախումբը պէտք է բանաձեւէ այն պահանջքները, որ պիտի ներկայացուին Դեկտեմբեր 16ի Փարիզի ժողովին :

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԳԵՐՄԱՆԻԱ

Ինչպէս Ատլանտեան բոլոր երկիրները՝ Արեւմտեան Գերմանիան ալ շահագրգռուած է այս ժողովին արդիւնքներով : Պոննի պաշտօնական շրջանակներուն կարծիքը այն է, թէ Դեկտեմբեր 16ի համագումարին ոչ մէկ որոշում պիտի տրուի եւրոպական երկիրներու մէջ ամերիկեան հեռաւոր (Թէլէկիտէ) հրթիռներու կայաններ եւ հիւլէական պահեստի կեդրոններ հաստատելու հարցերուն շուրջ : Այս տեսակէտը ունի նաեւ Ատլանտեան Ուխտի հերթական նիստերը գումարող խորհուրդը, նկատելով որ նման հրթիռներ երկու տարիէն առաջ չեն կրնար տրուիլ եւրոպական երկիրներուն : Դեկտեմբերի ժողովը պիտի յատկացուի Արեւմուտքի միասնականութեան ուժեղացման՝ խորհրդային աշխարհին դէմ զօրաւոր դիրք մը ունենալու համար :

Արեւմտեան Գերմանիոյ կառավարութիւնը պիտի առաջարկէ, որ անդամ երկիրներու մէջ քաղաքական յաճախակի խորհրդակցութիւններ ըլլան, որպէսզի Թունուզի յանձնուած զէնքերուն նման նոր տագնապներ չծագին : Կարեւոր առաջարկներ կը նախատեսուին՝ Պոննի կառավարութեան կողմէ :

Գերմանական մամուլը արձագանգ կը հանդիսանայ նաեւ այն գաղափարին՝ որ Ալժերիոյ հարցը պէտք է քննուի Ատլանտեան Ուխտի յառաջիկայ ժողովին մէջ :

Միւս կողմէ, խորհրդային մամուլը, յատկապէս «Փրաւտա» Ատլանտեան Ուխտին մէջ ծագած տագնապը յիշելով, կ'աւելցնէ թէ Արեւմտեան Գերմանիոյ ղեկավարները եռուն գործունէութեան մէջ են եւ այս տագնապէն օգտուելով կ'ուզեն իրենց դիրքը զօրացնել :

ՖՐԱՆՍԱ ՄԵՐԺԵՑ ԶԷՆՔ ՏԱԼ ԵՄԷՆԻ

ՄԱՔՄԻԼԸՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Անգլեւֆրանսական բարեկամութիւնը հետզհետէ աւելի ամուր հիմերու վրայ կը դրուի : Անցի օր, անգլիական կառավարութիւնը հաստատեց այն լուրութիւնը, թէ Ֆրանսա մերժեց զէնք տալ Եմէնի, որ այս ուղղութեամբ դիմում մը կատարած էր, Թունուզի ստացած անգլեւամերիկեան զէնքերէն վերջ : Փարիզ առարկած է, թէ այդ զէնքերը յետագային կրնան գործածուիլ Ատէնի մէջ գտնուող անգլիացի զինուորներուն դէմ : Լոնտոն հաստատեց նաեւ այն լուրը, որ Ֆրանսա Եմէնի դիմումը հաղորդած է անգլիական կառավարութեան եւ այդ ուղղութեամբ խորհրդակցած :

Միւս կողմէ, Վարչապետ Մաքմիլըն անգլիական Խորհրդարանին առջեւ յայտարարեց.— Մեր կարծիքը այն է, թէ ալժերիական հարցին լուծումը պէտք է գտնուի եւ անոր պատասխանատուութիւնը յանձնուի Ֆրանսայի :

Վարչապետը աւելցուց նաեւ, թէ կայսեր հետ ունեցած խորհրդակցութիւններուն ընթացքին քննուած է Հիւս. Ափրիկէի կացութիւնը, Թունուզի յանձնուած զէնքերու պարագան, Ատլանտեան Ուխտի յառաջիկայ ժողովը ու Եւրոպայի մէջ ազատ առեւտուրի խնդիրը :

Երկու Վարչապետները համաձայն գտնուած են Ատլանտեան Ուխտի յառաջիկայ ժողովին մէջ իրենց որդեգրելիք ուղղութեան :

Մաքմիլըն չեշտեց յատկապէս .— Ոչ մէկ ապահովութիւն տուի՝ որ նոր զէնքեր պիտի չտանք Թունուզի : Այդ ապահովութիւնը տալու իրաւունք ալ չունէի : Խոստացայ սակայն, որ նման պարագայի մը՝ պիտի խորհրդակցինք Ֆրանսայի հետ : Փարիզի մեր աշխատանքներուն նպատակն էր՝ երկու երկիրներու գործակցութիւնը :

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԱՐԿԸ

Հնդկաստանի Վարչապետ Նեհրու Միացեալ Նահանգներու եւ Խ. Միութեան ղեկավարներուն առաջարկ մը ըրաւ, որպէսզի վերջ մը դնեն զրահին եւ հիւլէական ռումբերու փորձերուն եւ համաձայնութիւն մը գոյացնեն՝ զինաթափութեան համար. — պաղ պատերազմը կը սպառնայ վերածուիլ տաք պատերազմի եւ նոր զէնքերով քաղաքակրթութիւնը կործանելու վտանգին ենթակայ է : Կը մտածեմ թէ Ամերիկա եւ Ռուսիա կրնան լուծել այս տագնապը, աւելցուց ան :

Վարչապետ Նեհրու չըսաւ թէ ի՛նչ է պատճառը այս առաջարկին : Բաներ մը յայտնեց թէ Նեհրուի յայտարարութիւնը պիտի յանձնուի Նոր - Տելհիի բոլոր դեսպանատուներուն :

Հակառակ անոր, որ Հնդկաստանի Վարչապետին առաջարկը ուշադրութիւն գրաւած է, յստակ չէ տակաւին, թէ ի՛նչ բան կ'ուզէ. Ռուզինկթըն — Մոսկուա ուղղակի խորհրդակցութի՞ւն եւ համաձայնութի՞ւն, թէ նոր ժողով մը :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՍՊԱՆԻՈՅ *Պատերազմական նախարարութիւնը կը հաղորդէ, թէ Իֆնիի միջադէպերուն հետեւանքով սպաննուած են սպանացի հինգ զինուորներ, մինչ ապստամբները մեծ վնասներ կրած են : Միւս կողմէ, Ռապաթի «Ալ Ալամ» թերթը կը գրէ, թէ Սպանացիները տուած են յիսուն զոհ, 65 վիրաւոր եւ 45 բանտարկեալ : Ոչ մէկ թիւ՝ Մարոքցիներու տուած զոհերուն համար :*

ԱՆԳԼԻՈՅ *Խորհրդարանին մէջ Արտաքին նախարար Լոյտ յայտարարեց, թէ Մեծն Բրիտանիոյ մէջ խարսխած ամերիկեան օդային ուժերը հիւլէական ռումբեր ստացած են : Այս լուրը երկու օրէ ի վեր խռովութիւն մը ստեղծած է անգլիական բոլոր շրջանակներու մէջ :*

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԵՐՄԱՆԻՈՅ *մէջ Լայփցիկի ատեանը հինգ տարուան բանտարկութեան դատապարտեց պատուելի մը՝ «Հակայեղափոխական գործունէութեան» մեղադրանքով :*

ՓԵՇՏԱՅԻ *մէջ նոր «հակայեղափոխական» մը գնդակահարուեցաւ, կը գրեն Հունգարիոյ թերթերը :*

ՄԱԿի *ընդհանուր քարտուղար Համըրշէօլտ այսօր կը մեկնի Պէյրութ, ուրկէ պիտի անցնի Ամման : Համըրշէօլտ կը մտածէ նաեւ Դամասկոս հանդիպիլ :*

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ *Խորհրդարանը 13ի դէմ* 37 *ձայնով վստահութիւն յայտնեց Սամի Սոլհի կառավարութեան : Երեք հոգի ձեռնպահ մնացին :*

ԱՄԵՐԻԿԱ *այսօր պիտի արձակէ «Ատլաս» միջերկրային հրթիռը : Միւս կողմէ կը յայտարարուի թէ միջերկրային* թհոր *եւ* ժիւփիթէր *հրթիռներու արտադրութիւնը արտօնուած է :*

ՖՐԱՆՍԱՅԻ *Հանրապետութեան Նախագահ Քոթի իր մօտ ընդունելով խորհրդակցութիւն մը ունեցաւ Փարիզի լիբանանեան դեսպան Տաուքի հետ :*

ՖՐԱՆՍԱՅԻ *ընկերվարական կուսակցութեան Ազգ. Խորհուրդը Դեկտեմբեր* 14 - 15*ին պիտի գումարէ նոր ժողով մը :*

ԵՈՒԿՈՍԼԱՒԻՈՅ *համայնավար կուսակցութեան ղեկավար կազմին մէջ կարեւոր փոփոխութիւններ պիտի ըլլան, կը հաղորդեն Ուաշինկթընի դիւանագիտական շրջանակները :*

ՖՐԱՆՍԱԿԱՆ *հիւլէական առաջին ռումբին փորձը պիտի ըլլայ* 1958*ի գարնան, կը գրեն տեղական թերթերը :*

ՍԱԿԱՐԱՆ (*Նոյեմբեր* 28) .— *Ձոյլ ոսկի* 580.000, *նափոլէոն* 4240, *զուից.* 4060, *անգլ.* 5080, *քսան տոլարնոց* 20.520, *Թղթադրամ* (*զուգահեռական շուկայ*) *սթերլին* 1310, *տոլար* 501, *զուից.* 120, *պելժ.* 9.45, *լիր* 0.80, *փեսեթա* 8.20 :

ԻՐԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Քանըչորս տարիներէ ի վեր, Ամերիկահայ Ազգային Թեմի բոլոր փորձերը՝ բանաւոր եղանակով լուծելու ծանօթ տագնապը, վերականգնելու եկեղեցական միասնականութիւնը եւ բնականոն յարաբերութիւնները վերահաստատելու Մայր Աթոռին հետ, դժբախտաբար, ոչ մէկ դրական արդիւնքի յանգեցան :

Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը, քաղաքական միջամտութիւններով առաջնորդուած, անտեսեց Ամերիկահայ Ազգային Երեսփոխանական Ժողովէն ընտրուած կեդրոնական Վարչութիւնը եւ իր հովանաւորութեան տակ առաւ ապօրինի փոքրամասնութեան կազմած կեդրոնական Վարչութիւնը :

Էջմիածինը, իր որդեգրած այս ընթացքով, փաստօրէն աւելի եւս սրեց վէճերն ու տարակարծութիւնները, միաժամանակ անկարելի դարձնելով հայ ժողովուրդի եւ եկեղեցւոյ գերագոյն շահերուն նպաստող որեւէ համաձայնութիւն :

Անհրաժեշտ է ընդգծել միշտ, որ Էջմիածնի բարեհաճ գործակցութեամբ ստեղծուած այս նոր բարդութիւններու դէմ, Ամերիկահայ Ազգային Թեմին կապուած չուրջ հարիւր հազար մեր հայրե-նակիցները պահեցին իրենց հանդարտ եւ պաղարիւն կեցուածքը :

Անոնք՝ բողոքելով հանդերձ, Մայր Աթոռի իրենց հանդէպ որդեգրած անարդար եւ քմահաճ վերաբերմունքին դէմ, մնացին միշտ կապուած Էջմիածնին՝ ընդունելով անոր Գերագոյն Հեղինակութիւնը, ի հոգեւորս :

Մեր միշտ պարտաճանաչ, հայրենասէր եւ եկեղեցասէր հայրենակիցները, աննախընթաց խանդավառութեամբ լծուեցան եկեղեցաշինութեան գործին եւ ի դին մեծ ու կրկնուող անսահման զոհողութիւններուն՝ բազմապատկեցին եկեղեցիներու թիւը :

Այս իրողութիւնները, նոյնպէս նկատի չառնուեցան Էջմիածնի կողմէն : Ան մնաց միշտ անտարբեր, իր Հոգեւոր Հեղինակութեան ապաւինող հարիւր հազարաւոր հաւատացեալներու բոլոր խնդրանքներուն, բայց մանաւանդ, կրօնական պահանջներուն հանդէպ :

Աւելին ըլլալով, Էջմիածնի հոգեւոր իշխանաւորները արդիւնքը իրենց թեմերու մեծ եւ փոքր հոգեւորականներուն պաշտօնավարելու Ամերիկահայ Ազգային Թեմին կապուած եկեղեցիներու մէջ : Արդիւնքաբեր ստիպողական պարագաներուն անդամ որեւէ կրօնական արարողութիւն կատարել, (թաղում, մկրտութիւն, պսակ եւայլն) :

Առանց մանրամասնութիւններու մէջ մտնելու, այս մէկ քանի փաստերն իսկ բաւական են ցոյց տալու, որ Էջմիածինը այս դժբախտ պատմութեան սկիզբէն իսկ հրապարակ եկաւ ոչ իբրեւ Հայաստան-եայց Առաքելական Եկեղեցւոյ Հոգեւոր Գերագոյն Հեղինակութիւն, այլ իբրեւ fաղաքական օրգան մը : Եւ թող ներուի մեզի, եթէ ըսենք, թէ լաղրուած եւ հակակշռուած համայնավար իշխանութիւններու կողմէ :

Այլապէս, անհնար է ենթադրել, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը հնարաւորութիւն չունէր բանաւոր եւ դրական եղանակով լուծում մը գտնել իր առջեւ դրուած խնդիրներուն : Անհնար է ենթադրել, որ հայ հոգեւորական իշխանաւորները, որոնք իրենց պարտականութիւնը կը նկատեն ծառայելու միայն եւ բացառաբար հայ եկեղեցիին եւ ժողովուրդին կարողութիւն չունենալին չափելու իրենց արարքի ծանրութիւնը :

Աւելորդ եւ անխմաստ փորձ մը պիտի ըլլայ իրականութիւնը քօղարկել յանուն « բարոյական » նկատումներու, երբ բարոյական ոչ մէկ օրէնք կը թոյլատրէ ոտնակոխ ընել հարիւր հազարաւոր հաւատացեալներու արդար իրաւունքները :

Վերջին հաշուով, Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան համար միակ արդարացուցիչ բացատրութիւնը այն կրնայ ըլլալ որ ան՝ անկարող էր, խիմակի չէր, ոչբարոյապէս եւ ոչ փիլիքապէս դէմ գնելու իր վրայ կատարուած ճնշումներուն ...

Այս պայմաններուն մէջ, ի՞նչ կրնար ընել Ամերիկահայ Ազգային Թեմի Կեդրոնական Վարչութիւնը՝ բաւարարելու համար դին իշխանութեան կոչող հարիւր հազար հաւատացեալներու կրօնական պահանջները :

Թեթեւութեամբ, կիրքով եւ ծուռ համոզումներով չէր, որ վճռուեցաւ այս ծանրակշիռ հարցը :

Ամերիկահայ Ազգային Երեսփոխանական Ժողովը, 1957 Փետր. 23–24 իր նիստին մէջ, հանդամանօրէն քննութեան առնելով 1933էն յետոյ կատարուած բոլոր փորձերը, կը հաստատէր. —

« ... 1933էն ի վեր անցնող 24 տարի-ներու ընթացքին՝ վասն Հայաստանեայց Եկեղեցւոյ միասնականութեան, մեր Թեմին կողմէ Էջմիածնայ Սուրբ Աթոռին ուղղուած բազմաթիւ դիմումներն ու խնդրանքները եւ Ամերիկայի մէջ, իր կողմէ նշանակուած եւ լիազօրուած պատուիրակներուն հետ կատարուած բանակցութիւնները եւ մեր պիջումները ո՛չ մէկ դրական արդիւնքի յանգեցան » :

Որեւէ նոր փորձ, պիտի նշանակէր պատրանքներու եռեւէն իյնալ :

« Այնքան աւելն որ Սուրբ Էջմիածինը կը գտնուի խորհրդային բռնակալութեան տակ — որ կը ձգտի արտասահմանի մէջ, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին դարձնելու գործիք իր քաղաքական նպատակները հետապնդելու համար — ոչ միայն Ամերիկահայ Ազգային Թեմին, այլ նաեւ ամբողջ Ամերիկայի Հայութեան համար, անկարելի կը դառնայ ամէն տեսակ յարաբերութիւն Էջմիածնի հետ, մինչեւ որ Մայր Աթոռը ազատագրուի կոմունիստական լուծէն եւ ազատ ու անկախ կերպով կարենայ գործել իր հոգեւոր առաքելութեան սահմանին մէջ, ինչպէս որ կը գործեն միւս Մայր Աթոռները, որոնք ազատ են եւ անկախ :

*Ամերիկահայ Ազգային Թեմի Կեդրոնական Վարչութիւնը, իր կարգին, կը շարունակէ հաւատալ, որ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին, իր ունեցած հոգեւոր ներուժով, կրնայ եւ պարտի ծառայել իբրեւ միացնող օղակ Մայր Աթոռին եւ Սփիւռքի հայութեան միջեւ, եթէ ոչ այսօր, գոնէ վաղը, երբ Էջմիածինը ազատագրուի կոմունիստական լուծէն եւ ազատ ու անկախ կերպով կարենայ գործել իր հոգեւոր առաքելութեան սահմանին մէջ

ԿՈՅԾԵՐ

Ի.

ԱՐՄԱՏԱԾԸ ԻՐ ՀՈՂՆ

Ցաւերէն յետոյ սիրելի պապիկը մը ինչպէս ամէն ամառ, նոյնպէս ալ այս տարի գացած էր իր հարազատ գիւղը, ուր ծնած էր եւ մանկութեան տարիները անցուցած էր։

Ինչպէս միշտ, այս անգամ ալ ան ուրախ էր գիւղ երթալուն համար։ Ամէն առաւօտ կանուխ կ՚արթննար եւ կ՚երթար դաշտ, ուր կը հսկէր իր ցորենի արտերուն, որոնք հասունցած էին արդէն։

Ամէն անգամ որ ան գիւղ կ՚երթար, իր հետ կը տանէր իր թոռնիկները, որոնք ամէնքն ալ կը սիրէին պապիկը։ Ամէնէն շատ սիրողը Արմատն էր։ Ան ամէնէն մեծն էր եղբայրներուն մէջ։ Ինը տարեկան էր։ Ամէնէն խելացին ալ ան էր։ Ամէնէն շատ ան էր որ կը հետաքրքրուէր գիւղական կեանքով։ Ամէնէն շատ ան էր որ կը սիրէր հողը։

Ամէն անգամ որ պապիկը գիւղ կ՚երթար, Արմատը կ՚ըսէր անոր.

— Ես ալ քեզի հետ պիտի գամ։

Պապիկը կ՚ըսէր.

— Ես ալ կ՚ուզեմ որ դուն գաս, բայց մայրիկդ չի՞ թողուր։

Արմատը կ՚ըսէր.

— Մայրիկս ալ պիտի գայ։

Եւ այդպէս ալ եղաւ։ Արմատին մայրը ինքն ալ գիւղացի էր։ Ան ալ կ՚ուզէր որ իր զաւակները գիւղ երթան։ Ուստի ամուսինը եւ զաւակները ճամբեց գիւղ։

Ինքը չկրցաւ երթալ, որովհետեւ շատ աշխատանք ունէր։ Ան ուզեց որ ամուսինը եւ զաւակները հանգիստ անցընեն իրենց ամառը։

Արմատը շատ ուրախ էր։ Ան կ՚ուզէր որ գիւղ երթան ինքնաշարժով։ Ինքնաշարժով ճամբորդելը շատ հաճելի էր։ Ան կ՚ուզէր որ ինքնաշարժով երթան, որովհետեւ ճամբան կրնար տեսնել ամէն տեսակ բաներ։ Ան կրնար տեսնել ամէն տեսակ կենդանիներ։ Ան կրնար տեսնել ամէն տեսակ ծառեր։ Ան կրնար տեսնել ամէն տեսակ ծաղիկներ։

Ան կ՚ուզէր որ ինքնաշարժով երթան, որովհետեւ ինքնաշարժով ճամբորդելը շատ հաճելի էր։

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Կեսարիոյ եւ շրջակայքի հայրենակիցներու փափաքին համաձայն, 1895 Նոյեմբեր 18 եւ 1896ի Կեսարիոյ եւ շրջակայքի նահատակներուն, 1915ի Կեսարիոյ մէջ կախաղան բարձրացած 53 մարտիրոսներուն, ընդհ. տեղահանութեան շրջանի նահատակներուն, ինչպէս նաեւ բազմավաստակ Առաջնորդ Տէր Տրդատ Արք.՝ Պալեանի եւ նահատակ Խօսրով եպիսկ. Պէհրիկեանի հոգւոց յիշատակին, հոգեհանգիստ պիտի կատարուի, այս կիրակի օր, Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ մէջ: Կը հրաւիրուին Կեսարիոյ եւ շրջաններու հայրենակիցները:

×

Այրի Տիկին Ալիս Սէմէրճեան եւ զաւակը Արամ կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի այս կիրակի առաւօտ Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին իրենց ամուսնոյն եւ հօր՝ ՅԱԿՈԲ ՍԷՄԷՐՃԵԱՆԻ ինչպէս նաեւ իրենց հօր եւ մեծ հօր՝ Սերովբէ Պախթիկարեանի եւ Պախթիարեան եւ Սէմէրճեան համայն ննջեցելոց հոգւոյն ի յիշատակ:

Կը հրաւիրուին ողբացեալին յիշատակը յարգողները:

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Վարչութիւնը կը ծանուցանէ թէ այս Կիրակի առաւօտ հանդիսաւոր հոգեհանգիստ պիտի կատարուի՝

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ

մահուան յիսնամեակին առթիւ: Բացառիկ երգեցողութիւն երկսեռ երգչախումբին կողմէ:

Կը խօսին Պ. Պ. ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ եւ Վ. ՊԱՆՏԻԿԵԱՆ:

×

Եկեղեցիին վարչութիւնը կը ծանուցանէ թէ՝ իր հիմնած հայերէն լեզուի եւ հայրենագիտութեան դասընթացքը վերսկսած է, դասախօսութեամբ ձեռնհաս ուսուցիչի մը, Բարեգործականի սրահին մէջ, ինչպէս նախորդ տարիներ, 19ա, Րիւ Վանթիւր, ժամը 19–21, ամէն երեքշաբթի եւ ուրբաթ: Ծնողները կը հրաւիրուին օգտուիլ առիթէն՝ արձանագրելով երկու սեռէ եւ ամէն տարիքէ իրենց զաւակները, դասերու պահերուն:

Ս. ԹԱԴԷՈՍ ԵԿԵՂԵՑԻ

Սէնթ Անթուանի Ս. Թադէոս եկեղեցւոյ Թաղականութիւնը կը յայտարարէ թէ այս կիրակի Ս. Թադէոս եւ Բարթողիմէոս եկեղեցւոյ տօնախմբութեան առթիւ հանդիսաւոր Ս. պատարագ եւ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի եկեղեցւոյ հիմնադիր բարերարներու, ինչպէս նաեւ բազմարդիւն Առաջնորդ Գերաշնորհ

ՏԷՐ ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊՍ. ՊԱԼԱՔԵԱՆԻ

Եկեղեցւոյ կնքամայր Օր. Նունիկ Տէր Ղեւոնդեանի եւ համայն Թաղիս հին եւ նոր ննջեցելոց հոգւոց համար:

Այս առթիւ պիտի պատարագէ եւ քարոզէ Թաղիս հովիւր հովիւ Տէր Ներսէս Խաչակիր քհնյ.: Երգեցողութիւնը պիտի կատարէ Ս. Եկեղեցւոյս երկսեռ դպրաց դասը, ղեկավարութեամբ Օր. Սիւզան Պօյաճեանի:

ՍՏԻՊՈՂԱԿԱՆ

Կը փնտռուի մէկ կամ երկու սենեակ, խոհանոցով վարձու, Փարիզի մէջ կամ արուարձանները:

Դիմել Թերթիս վարչութեան:

ԳՆՈՒՄ ԵՒ ՎԱՃԱՌՈՒՄ

Ցարկաբաժին, խանութ, հող, շէնք, ընդունելութիւն եւ խորհուրդներ՝ Հայու մը կողմէ

ԱՄԷՆ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

AGENCE LEVET

9, Boulevard des Italiens, PARIS 2e

Téléphone : RIC. 36-75

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կապ. Խաչի Վիէնի վարչութիւնը շնորհակալութեամբ ստացած է ընկեր եւ ընկերուհի Պ. Մուրատեանէ հազար ֆրանք, փոխան ծաղկեպսակի, Այրի Տիկին Մարիամ Մահագեանի կսկծալի մահուան առթիւ:

ՆՈՒԱԳԱՀԱՆԴԷՍ ՊՈՄՈՆԻ ՄԷՋ

Մարսէյլի Լիսէ Միւզիքալի աշակերտներէն պատանի ջութակահարներ՝

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԻՇԽԱՆԵԱՆ

եւ ՀՐԱՅՐ ԳԼՃԵԱՆ

կուտան իրենց առաջին նուագահանդէսը, Պոմոնի գպրոցի սրահին մէջ, այս շաբաթ ժամը ճիշդ 21·15ին, ղեկավարութեամբ իրենց ուսուցչին՝ Պ. Յ. Քիւրքճեանի:

Դաշնակով կ'ընկերակցի Օր. Լիլի Գազանճեան (Լիսէ Միւզիքալէն Ա. մրցանակաւոր): Պիտի նուագուին դասական եւ արդիական ընտիր կտորներ, ինչպէս նաեւ Ա. Խաչատուրեանի, Ա. Սպենդիարեանի եւ Կոմիտաս վարդապետի լաւագոյն էջերէն:

ՄՈՒՏՔԸ բոլորովին ԱԶԱՏ է, որեւէ ծախսերու մասնակցութիւն չկայ:

ՏԱՐԵԿԱՆ ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Մարսէյլի Ամասիոյ Հայր. Միութեան Շաբաթ, 7 Դեկտ. ժամը 9էն մինչեւ լոյս, Ալհամպրայի շքեղ սրահներուն մէջ 340 Պուլվ. Շավ,

avec Robert Gonzalez et son Orchestre

Հաճելի անակնկալներ եւ լաւագոյն մթնոլորտ:

Մուտք 500 ֆրանք:

Ապահովել սեղանները կանխաւ. Տիկին Արփինէ Շէ Վէբէր, 34 րիւ Թափի Վէր, Պ. Յար. Չէքէմեան, հեռաձայնել Փրատօ 78·61, Պ. Տիգրան Զօրիքեան. 5 Ավընիւ Քամիլ Փէլըթան:

ՄԵԾ ԵՒ ՇՔԵՂ ՑԵՐԵԿՈՅԹ

Կիրակի, 1 Դեկտեմբեր, ժամը 3ին, Կրընօպլի մէջ, Րիւ Ժէի սրահը

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ Հ. Յ. Դ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Կը նախագահէ ընկեր Գ. ՓԱՓԱԶԵԱՆ (Փարիզ)

Կը խօսի ընկեր Ժ. ՄԻՐԻՃԵԱՆ (Մարսէյլ)

Մասնակցութեամբ Փարիզի եւ իր շրջաններու, Կեդր. Ֆրանսայի եւ Մարսէյլի մասնաճիւղերուն:

Գեղարուեստական բացառիկ յայտագիր

Հանդիսութենէն ետք, ընկերական խրախճանք եւ պար:

Մուտք՝ 100 ֆրանք:

ՇԱՒԻԼԻ ԵԿԵՂԵՑԻ

Շաւիլի Կրօն. Ընկերակցութեան վարչութիւնը եւ Երէտ. Եկեղեցաշէն յանձնախումբը կը ծանուցանեն թէ Դեկտ. 15ին, կիրակի օր տեղի պիտի ունենայ նորակառոյց եկեղեցւոյ օծումը եւ անդրանիկ Ս. պատարագը ձեռամբ կաթողիկոսական պատուիրակ՝ եւ Փարիզի Առաջնորդ ԳԵՐ. ՏԷՐ ՍԵՐՈՎԲԷ ԵՊԻՍԿ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ:

Սկիզբ ժամերգութեան ժամը 8, օծում ժամը 10, Ս. պատարագ 10·30:

Կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուրդը: Յաւարտ Ս. պատարագի կազմակերպուած է ճաշ մը Վերսայլ Օթէլ տը Ֆրանսի շքեղ սրահին մէջ (Փլաս տ'Արմ, րիւ Քոլպէր):

Այս ճաշին մասնակցիլ փափաքողներէն կը խնդրուի արձանագրուիլ մինչեւ Դեկտեմբեր վեց եւ ստանալ սեղանակիցի մասնաւոր քարթը, (ճաշագին 3000 Ֆր):

Վերոյիշեալ թուականէն վերջ ոչ մէկ արձանագրութիւն պիտի ընդունուի:

Արձանագրութեան համար դիմել Փարիզի եկեղեցւոյ դիւանատունը,

Պ. Հրաչ Զուլաքեանի՝

14, Rue Maréhal Foch Viroflay

Պ. Ջաւէն Յովհաննէսեանի

31, Rue de Général Léclerc, Versailles

կամ

ASSOCIATION CULTUELLE DES ARMÉNIENS DE CHAVILLE

C. C. P. Paris 14827-18

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՎԻԷՆ.— Հ. Յ. Դ. «Անի» կոմիտէի ընկերական ընդհ. ժողովը այս Շաբաթ, ժամը 20·30ին «Համօ Օհանջանեան» սըրահին մէջ: Բոլոր ընկերներու ներկայութիւնը անհրաժեշտ է:

ԿՐԸՆՈՊԼԸ.— Հ. Յ. Դ. Եօթնեղբայրեան կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բոլոր ընկերները այս շաբաթ, ժամը 20·30ին, սովորական հաւաքատեղին: Անհրաժեշտ է բոլորին ներկայութիւնը: Լանսէյի, Ռընամի ընկերները պէտք է ներկայ գտնուին նոյն ժողովին:

ՓԱՐԻԶ.—Հ. Յ. Դ. Ալֆորվիլ – Սեւրոյ – Մ. Եօթնեղբայրեան խումբի ժողովը այս Շաբաթ, ժամը 20·30ին, սովորական հաւաքատեղին: Կարեւոր օրակարգ: Ներկայ կ'ըլլայ Շրջ. Կոմիտէի ներկայացուցիչը:

ՄԱՐՍԷՅԼԻ Շրջ. կոմիտէն ժողովի կը հրաւիրէ.—

ՀԱՄԱԶԱՍՊ խումբը այս Շաբաթ իրիկուն ժամը 21ին:

ԱԿՆՈՒՆԻ ենթակոմիտէն այս Շաբաթ իրիկուն, ժամը 21ին:

Ն. ԴՈՒՄԱՆ խումբը, այս կիրակի կէսօրէ վերջ ժամը 15·30ին:

Այս ժողովները տեղի կ'ունենան սովորական հաւաքատեղիները:

Ներկայ կ'ըլլան Շրջ. Կոմիտէի ներկայացուցիչները:

Ֆ. Կ. ԽԱՉԻ Պանեօ Բաշանի մասնաճիւղի ընդհ. ժողովը, այս շաբաթ, ժամը 17ին, ընկերուհի Տիկին Լօժէնի Խանչէրեանի բնակարանը, 9, րիւ Տէփրէ, Պանեօ: Բոլոր ընկերուհիներու ներկայութիւնը անհրաժեշտ է:

ՇԱՒԻԼԻ Կրօն. Ընկերակցութեան բացառիկ ընդհ. ժողովը այս Շաբաթ, ժամը ճիշդ 21ին, նորակառոյց դպրոցի սըրահին մէջ: Օրակարգ.— Եկեղեցւոյ օծման առթիւ վերջնական կարգադրութիւններ:

ՍԵՒՐԱՍՏԻՈՅ Նահանգային Միութեան Ուսումնասիրաց վարչական ժողովը այս կիրակի առաւօտ, ժամը 10·30ին Իսիի Խրիմեան սրահին մէջ: Մասնաւոր հրաւէր չի ղրկուիր:

ՏԱՐԵԿԱՆ ՇՔԵՂ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

ՍԻՓԱՆ-ԿՈՄԻՏԱՍ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ

ԿԻՐԱԿԻ, 15 ԴԵԿՏԵՄԲԵՐ ԺԱՄԸ 16էն 23

SALONS DES AMBASSADEURS (Champs - Elysées)

ORCHESTRE BACHICHA

Սեղանները ապահովել՝ հեռաձայնելով Պ. Արմանի Սանթրալ 36·23:

ՄՈՒՏՔ 500 ՖՐԱՆՔ

ԾՐԱՐՆԵՐ ԿԸ ՂՐԿՈՒԻՆ ԱՆԳԼԻՈՅ ՃԱՄԲՈՎ ԴԷՊԻ Խ. ՄԻՈՒԹԻՒՆ, ՄԷՋՆ ԸԼԼԱԼՈՎ ՊԱԼԹԵԱՆ ԵՐԿԻՐՆԵՐԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Մասնաւոր արտօնութիւնը որ տրուած է մեզի ֆրանսական կառավարութեան կողմէ, մեզի թոյլ կուտայ պատասխանելու մեր բազմաթիւ յաճախորդներուն որոնք կը փափաքին ծրարներ ղրկել Հայաստան

ՏՕՆԵՐԸ ԿԸ ՄՕՏԵՆԱՆ

ՄՏԱԾԵՑԷՔ ՁԵՐ ԱԶԳԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԵՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ

Իրենց մեծ հաճոյք պատճառած կ'ըլլաք ղրկելով, հիմակուընէ, մեր սահմանած վերնագիր-ծրարներէն մէկը, որոնք պատրաստուած են մեծ խնամքով: Մեր բոլոր ապրանքները վաւերականօրէն անգլիական են:

ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ ԾՐԱՐ – 20·000 ՖՐԱՆՔ

Վերարկու-կերպաս 2 մեթր 75
Հագուստի կերպաս 2 մեթր 75
աստառ 4 մեթր
2 զոյգ նայլըն գուլպայ
2 ֆոմպինէզոն նայլըն
2 վարտիք նայլըն

ԱՅՐ ՄԱՐԴՈՑ ՀԱՄԱՐ – 20·000 ՖՐԱՆՔ

3 մեթր կերպաս հագուստի
3 մեթր փոփըլին շապիկի համար
1 ներքին ճերմակեղէն (մայօ տը քոր եւ մէկ էնթերլոք (վարտիկ)
2 զոյգ բուրդէ գուլպայ
1 զոյգ պոքս կօշիկ

ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ – 30·000 ՖՐԱՆՔ

2 մ. 75 բուրդէ թաւիշ վերարկուի համար
3 մեթր աստառ
2 մ. 75 զուտ բուրդէ կերպաս հագուստի համար
1 բուրդէ ֆառտիկան
1 զոյգ նայլըն գուլպայ
1 շալ բուրդէ (110×110)
6 թաշկինակ

ԱՅՐ ՄԱՐԴՈՑ ՀԱՄԱՐ – 30·000 ՖՐԱՆՔ

3 մեթր կերպաս զգեստի համար
3 մեթր աստառ
1 զուտ բուրդէ փուլ-օվըր
1 զոյգ կօշիկ պոքս
1 ներքնազգեստ (մայօ տը քոր եւ էնթերլոք)
3 մեթր փոփըլին շապիկի
1 զոյգ բուրդէ գուլպայ

ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ – 40·000 ՖՐԱՆՔ

2 մ. 75 թաւիշ բուրդ վերարկուի համար
2 մ. 75 զուտ բուրդ, թայյէօրի համար
5 մեթր աստառ
1 ֆառտիկան զուտ բուրդ
1 փլէտ էքոսէ 160×160
2 զոյգ նայլըն գուլպայ
1 բուրդէ շալ 110×110

ԱՅՐ ՄԱՐԴՈՑ ՀԱՄԱՐ – 40·000 ՖՐԱՆՔ

3 մեթր կերպաս Փենիէհագուստի համար
2 մ. 75 զուտ բուրդէ կերպաս փարտըսիւի համար
5 մեթր աստառ սաթէն
1 փուլօվէր զուտ բուրդ
1 զոյգ գուլպայ զուտ բուրդ

ՇԱՏ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԱԾ ԳԻՆԵՐ որոնց մէջ՝ մաքս, ապահովագրութիւն, առաքման ծախսեր եւ ամէն տուրք

—— ՍՏԱՅՈՂԸ ՎՃԱՐԵԼԻՔ ՉՈՒՆԻ ——

Կարելիութիւն կայ ձեր ընտրութեամբ ծրարներ կազմել մեր ցուցակին ապրանքներով՝ ԺԱՄԱՑՈՅՑ, ԴԵՂ, ՃԵՐՄԱԿԵՂԷՆ ամէն տեսակի ՀԱԳՈՒՍՏԵՂԷՆ եւ ՀԻՒՍՈՒԱԾԵՂԷՆ

ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՑՈՒՑԱԿԸ՝ ՁՐԻ

SICOMEX

MÉTRO MADELEINE OU CONCORDE

20, RUE ROYALE, PARIS 8e

TÉL : OPE. 67-77

C. C. P. PARIS 11964-43

Imprimé sur les presses du journal HARATCH
17, Rue Bleue, 17 — PARIS (9e)